



Գիրքը լոյս է տեսել
ԳԱԼՈՒՍԿ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ
հաստատութեան աջակցութեամբ



MATENADARAN
REPUBLIC OF ARMENIA – MASHTOTS INSTITUTE of ANCIENT MANUSCRIPTS

**GENERAL CATALOGUE OF ARMENIAN MANUSCRIPTS
OF THE MASHTOTS MATENADARAN**

VOLUME VIII
Manuscripts 2401-2700

Edited by:
GEVORG TER-VARDANEAN

Indexes by:
VARDAN DEVRIKEAN

«NAIRI» PUBLISHING HOUSE
YEREVAN - 2013



“МАТЕНАДАРАН”
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАШТОЦА

ГЕНЕРАЛЬНЫЙ КАТАЛОГ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ
МАТЕНАДАРАНА ИМЕНИ МАШТОЦА

ТОМ VIII
Рукописи 2401-2700

Под редакцией:
ГЕВОРГА ТЕР-ВАРДАНЕАНА

Указатели
ВАРДАНА ДЕВРИКЕАНА

ИЗДАТЕЛЬСТВО «НАИРИ»
ЕРЕВАН - 2013



«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ՀԱՏՈՐ
Ը.

Ձեռագիրք 2401-2700

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ՝
ԳԵՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆԻ
ՑԱՆԿԵՐԸ ԿԱԶՄԵՑ՝
ՎԱՐԴԱՆ ԴԵԻՐԻԿԵԱՆ

«ՆԱՅԻՐԻ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹԻՒՆ
ԵՐԵՒԱՆ – 2013

Տպագրում է Մաշտոցի անուան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 09

ԳՄԴ 76.11

Մ 239

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի.
Մ 239 – Հտ. Ը., Եր.: «Նայիրի», 2013. 1562 էջ:

*Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց /Մատենադարան, Մաշտոցի անուան հին ձեռագրերի ինստիտուտ:
Հտ. Ը., Եր.: «Նայիրի», հրատ., 2013:*

Հտ. Ը. Խմբագրութեամբ՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, 2013:

Մաշտոցեան Մատենադարանի Հայերէն ձեռագրերի Մայր ցուցակի Ը. հատորի մէջ նկարագրուած ձեռագրերի քանակը կրկին 300 է՝ Հ^մ 2401-2700: Այստեղ արդէն սկսուած է յայտնի «Գէորգեան հաւաքածուի» կամ «Նոր ժողովածուի» ձեռագրերի ներկայացումը. իսկ հաւաքածուի գոյացման հիմքում Գէորգ Դ. կաթողիկոսի ջանքերն են, որոնց շնորհիւ յետագայ հնարաւոր կորստից փրկուելով էջմիածնի մատենադարան են մտել եւ հայագիտութեանն ի սպաս դրուել հիմնականում Մայր Աթոռի որոշ միաբանների պատկանած արժէքաւոր շատ ձեռագրեր: Այս հատորով սկսուած է միջնադարագիտական մեծ կարեւորութիւն ունեցող այդ ձեռագիր արժէքների ամբողջական բացայայտումը, որով եւ ապահովուում է նրանց առաւել լայն գիտական գործածութիւնը:

ՀՏԴ 09

ԳՄԴ 76.11

ISBN 978-5-550-01733-3

© Մատենադարան, Մաշտոցի անուան հին ձեռագրերի ինստիտուտ, 2013:

© «Նայիրի», հրատ. ՓԲԸ, 2013:

ՄԱՇՏՈՑԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԱՅՐ ՅՈՒՑԱԿԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ

Մեր ժողովրդի գլխավոր ձեռագրապահոցի՝ Մաշտոցեան Մատենադարանի Հայերէն ձեռագրերի Մայր ցուցակի այս հատորի մէջ նկարագրուած միաւորների քանակը կրկին 300 է՝ ² 2401-2700: Այստեղ, ըստ էութեան, սկսում է յայտնի «Գէորգեան հաւաքածուի» կամ «Ժողովածուի» ձեռագրերի ներկայացումը¹: Անուանումն իսկ ցոյց է տալիս, որ նրա գոյացման աւելուքում Գէորգ Գ. Մեծագործը կաթողիկոսն է, գիտէնք, որ երբ նա 1866 թ. Մայիսի «21ին Յինանց վեցերորդ կիրակիին մեծաշուք հանդիսով ստանում է կաթողիկոսական օծումը»², օծման հանդէսի ժամանակ նուէր է ստանում նաեւ ձեռագրեր, որոնք Գանիէլ վ. Շահնազարեանի կազմած եւ «Կարենեան» անունով տպագիր ցուցակով յայտնի շարքի մէջ շէն մուծում, այլ գրանցում են մէկով սկսուող նոր համարակալումով: Ձեռագրեր ժողովելու ուղղութեամբ Գէորգ Գ. կաթողիկոսի կատարած կարեւոր մի քայլը հրապարակումն էր թեմերի եւ վիճակների առաջնորդներին ու հոգեւոր պետերին ուղղուած շրջաբերական կոնդակների, որոնցով հրահանգում էր վանքերից, եկեղեցիներից եւ անհատ մարդկանցից արժէքաւոր ձեռագրեր հաւաքել եւ ուղարկել էջմիածնի մատենադարան⁴:

Սակայն «Ձեռագրական գանձերը կորստից փրկելու եւ էջմիածնի գրատունը նորանոր արժէքներով հարստացնելու ուղղութեամբ առանձին նշանակութիւն ունեցաւ հայ եկեղեցու հնաւանդ այն սովորութեան վերականգնումը, ըստ որի կուսակրօն հոգեւորականի ողջ ունեցուածքը՝ մահուանից յետոյ ժառանգութիւն էր մնում այն վանքին, որի միաբանն էր նա»⁵: Այս ձեռնարկմանը հաւատարիմ կաթողիկոսն իր ձեռագիր եւ տպագիր գրքերի անձնական հաւաքածուն դեռեւս իր կեանքի օրօք կտակեց էջմիածնի մատենադարանին. «Գէորգեան» հաւաքածուի մէջ արձանագրուած 52 ձեռագիր Գէորգ Գ. կաթողիկոսի աւանդն են:

Եթէ եկեղեցիների եւ անհատ մարդկանց պատկա-

նած ձեռագրերը հիմնականում ծիսական բովանդակութիւն են ունենում, ըստ այդմ եւ՝ բնագրական-բանասիրական առումով պակաս արժէքաւոր են, ապա վանքերին եւ ուսումնական («գրոց-բրոց») վանականներին պատկանած մատենաները, որպէս կանոն, ընտրովի ժողովուած են լինում բանիմաց եւ գիտական հետաքրքրութիւններ ունեցող ընթերցողների կողմից, առաւել յաճախ՝ ուսումնագիտական որոշակի նպատակով: Ահա այս հանգամանքի շնորհիւ «Գէորգեան» հաւաքածուն, քիչ բացառութիւններով, բաղկացած է գիտական առաջնակարգ արժէք ունեցող ձեռագրերից:

Յիշատակման արժանի առաջին արժէքաւոր ձեռագրախումբը, որ Գէորգ Գ. կաթողիկոսի տեւական եւ յամառ ջանքերի շնորհիւ 1869 թ. մուծուել է մատենադարան, Տայքի եւ Տիփսիսի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու (մահ. 1856 թ., Ախալցխայում) ընտիր հաւաքածուն էր՝ այսօր Մաշտոցեան Մատենադարանում պահպանուող՝ մեծ մասամբ եզակի արժէք ունեցող 93 ձեռագիր: Յատկանշանական է, որ այս մատենաների զգալի մասը Կարապետ արքեպս-ր, երբեմն՝ վերադարձնելու խոստումով, հաւաքած է եղել Մուշի, Բաղէշի, Կարնոյ եւ յարակից շրջանների վանքերից ու եկեղեցիներից, բայց յետոյ՝ Կարնոյ գաղթի ժամանակ հետը տարել է Ախալցխա:

Այստեղ եւ այս առիթով, նաեւ՝ տասնեակ հազարաւոր հայերէն ձեռագրեր կորստեան մատնած բազմակուլ եղեռնի դարադարձի նախօրէին լիովին տեղին է վերարտադրում-վերարծարծումը ուշագրաւ եւ շատ բան ասող մի յիշատակարանի, որ ժամանակին հրապարակել է երջանկայիշատակ Օննիկ Եգանեանը.

Նշանաւոր Մշոյ ճառընտրի մի էջի լուսանցում Առաքելոց վանքի միաբան Մամբրէ վ. Մամիկոնեանը 1870 թ. գրել է. «Կարապետ եպիսկոպոս Կարնոյ եւ ի վերջոյ եպիսկոպոս Ախալցխայու վիճակի, յամի Տեառն 1833 զմի ոմն վարդապետաց իւրոց առաքէ ի վանս Ղազարու, եւ ի մատենադարանէ վանիցս զգրչագիր մատենանս զայսոսիկ, զորոց գանունսն նշանակեմ աստ՝ ի ստորեւ, ի պատճառս օրինակելոյ կամ տպագրութեամբ ի լոյս հասարակաց հանելոյ տանէ, խոստանալով ետս դարձուցանել. եւ ստեալ խոստման իւրում, ոչ դարձուցանէ: Քանզի ըստ պատմելոյ հոցոց վանքցի Յովհաննէս ձերունի վարդապետի՝ միաբանի սրբոյ ուխտիս, այս Կարապետ եպիսկոպոս նախ քան զգալն Ռուսաց յաշխարհս Տարօնոյ, գայ ի սուրբ վանս եւ տեսանէ զհազարաւոր մատենանս զայսոսիկ, եւ ապա զկնի քանի ամաց առաքեալ տանէ առ ինքն, որք են այսոքիկ՝ գիրք ինն»⁶.

¹ Նախորդ է. հատորի մէջ արդէն կան մեր այս երկրորդ մեծ ձեռագրախումբի տասնութ միաւորի (² 2383-2400) նկարագրութիւնները:

² Տէս Մ. Օրմանեան, Ազգապատում. հայ ուղղափառ եկեղեցու պատմութիւնը, յարակից ազգային պարագաներով պատմուած, Գ. հատոր, յօդուած 2765:

³ Հաւաքածուի մասին մանրամասն տէս Օ. Եգանեան, Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները.- Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, ներածութիւնը՝ Օ. Եգանեանի, խմբագրութեամբ՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, 1965, էջ 50-72:

⁴ Նոյն տեղում, էջ 51:

⁵ Մանրամասները՝ նոյն տեղում:

⁶ Թուարկած բոլոր ձեռագրերն այժմ Մատենադարանում են.

1. Դաշանց գիրք [Հ^մ 2748].
2. Տաղարան հին եւ երկար խազերով [Հ^մ 3403].
3. Խորենացի (Պատմութիւն Հայոց) [Հ^մ 2865].
4. Տօնապատճառ [Հ^մ 3082].
4. Ներսիսի Ատեանաբանութիւն (Լամբրօնացւոյն) [Հ^մ 2488].
6. Ղուկասու մեկնիչ (Աւետարանին) [Հ^մ 2417].
7. Պօղոսի (Թղթոց) մեկնիչ [Հ^մ 2691].
8. Եւս Ղուկասու մեկնիչ (բայց հեղինակն անյայտ) [Հ^մ 2600].
9. Յայտնութեան մեկնիչ (հեղինակն դարձեալ անյայտ) [Հ^մ 2420].

Ի գրեանցս յայսցանէ, զորոց ստեալ խոստման իւրում, յափշտակէ ի վանացս Կարապետ եպիսկոպոս, առաւել ընդ կորուստ օրինակին Մովսիսի Խորենացւոյ, Դաշանց թղթոյն, անյայտ Մեկնութիւն Ղուկասու Աւետարանի եւ Մեկնութիւն Յայտնութեան ցաւեալ մորմոքեցայ, մանաւանդ ընդ երկուցն առաջնոց՝ այն է Մովսիսի Խորենացւոյ Պատմութեան հին օրինակին եւ Դաշանց թղթոյն, որ յայտ է թէ ի հնագոյն եւ հաւատարիմ օրինակէ պահեալ լինի ի մատենադարանին վանացս, զորոց զգիւտէ պարտ է ինձ Մամբրէ վարդապետի Մամիկոնեանս, եւ ես հօր վանացս Յովհաննէս վարդապետի Մուրատեան, զհետ լինել տեղեկանալ, թէ ո՞ր արդեօք մնացեալ իցէ ետ վախճանի Կարապետ եպիսկոպոսի, եւ վերջապէս ի ձեռն բերել զհազարապետ ձեռագիրս: Յայմի 1870, նոյեմբերի 14, ի վանս Ղազարու»⁷:

Նոր բան ասել պէտք չէ. կրկնենք նոյն Օ. Եգանեանի եզրակացութիւնը. «Չգիտենք, չիշատակագիրը հետագայում կարողացա՞ւ իմանալ, թէ որտեղ են գտնուում վերոյիշեալ ձեռագրերը, բայց վստահ ենք, որ եթէ այսօր կարողանար իմանալ, թէ վանքում մնացած հարիւրաւոր մատենաների նման եղեռնի զոհը չեն դարձել, այլ ապահով պահուում են Մաշտոցի սրբալոյս անունը կրող Մատենադարանում, այսպանելու փոխարէն՝ կօրհնէր «յափշտակիչ» Բագրատունու յիշատակը»⁸:

Սա լաւագոյն օրինակն է ցոյց տալու համար, որ Մայր ցուցակի այս եւ յաջորդելիք հատորներում նկարագրուած «Գէոգեան» հաւաքածուի ձեռագրերի մեծ մասը նոյն եղեռնի եւ այլ պատահմունքների զոհը դառնալուց փրկուել է ժթ. դ. երկրորդ կէսի եւ Ի. դ. սկզբի մեր հոգեւորական եւ աշխարհական մտաւորականների հետեւողական ջանքերի գնով⁹: Իսկ ձեռա-

ամէն մէկին վերաբերող տողի վերջում փակագծերի մէջ նշել ենք նրանց ներկայ համարները, որ պարզել է Օ. Եգանեանը (միայն Յրգինը վրիպմամբ գրել էր 2864, ուղղել ենք՝ 2865, որ այժմ եւս Խորենացու Պատմութեան յայտնի հնագոյն օրինակն է):

⁷ Մատենադարան, ձեռ. Հ^մ 7729, 292բ:

⁸ Օ. Եգանեան, Կարապետ արքեպս. Բագրատունու հայերէն ձեռագրերի հաւաքածուն. - Էջմիածին, 1971/թ., էջ 60:

⁹ Օ. Եգանեան, Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները, էջ 67-77 թուարկուած են թէ՛ Գէորգ Դ. եւ նրա յաջորդ Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսների եւ թէ՛ Կարապետ

գրերի ունեցած գիտական եւ ընդհանրապէս մշակութային արժէքները յստակ երեւում են հատորիս թէ՛ նկարագրութիւններով¹⁰ եւ թէ՛ բազմահմուտ վարդան Դեւրիկեանի կազմած ցանկերով:

* * *

Հատորիս ձեռագրերի առաջին նկարագրութիւններն արել են՝

Ձեռ. Հ^մ 2401-2500 - Գեղամ Բագալեան.

Ձեռ. Հ^մ 2501-2557, 2559-2628, 2630-2638, 2640-2651, 2681-2694, 2696-2699 - Անդրանիկ Զէյթունեան¹¹.
 Հ^մ 2653-2657, 2659-2675 - Վահրամ Զիթունի:

Գուցէ վրիպմամբ հնում չարուած ձեռագրերը նորերս նկարագրել են՝

Ձեռ. Հ^մ 2558 - Տաթևիկ Մանուկեան.

Ձեռ. Հ^մ 2629 - Դաւիթ Ղազարեան.

Ձեռ. Հ^մ 2639, 2652, 2658, 2695, 2700 - Արամ Դիլանեան:

Այսուհանդերձ, Հ^մ 2484, 2676-2680 ձեռագրերի նկարագրութիւնները պատրաստող(ներ)ի անունն անյայտ է¹²:

Ձեռագրերի երկրորդ նկարագրութիւնները (սկզբնականների սրբագրում-ճշգրտումը) արել են՝

Հ^մ 2401-2450 - Արմինէ Մելքունեան եւ Լուսինէ Թումանեան.

Հ^մ 2451-2500- Լուսինէ Թումանեան¹³.

Հ^մ 2501-2550 - Դաւիթ Ղազարեան.

Հ^մ 2551-2600 - Տաթևիկ Մանուկեան.

Հ^մ 2601-2650 - Գայիանէ Խաչատրեան.

Հ^մ 2651-2675 - Քնար Յարութիւնեան.

Հ^մ 2676-2700 - Յասմիկ Իրիցեան:

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

Բագրատունի, Դանիէլ Շահնագարեան, Սարգիս Ջալալեան, Մեսրոպ Սմբատեանց, Մեսրոպ Տէր-Մովսիսեան արքեպիսկոպոսների, Եփրէմ Ալթունեան վարդապետի եւ շատ ուրիշների ժառանգած՝ տասնեակ ձեռագրեր ամփոփող հաւաքածուների համարաշարերը:

¹⁰ Միայն ասենք, որ այստեղ նկարագրուած է նաեւ թղթի վրայ գրուած հայերէն հնագոյն՝ 981 թ. գրուած ժողովածուն՝ ձեռ. Հ^մ 2679, որ նոյնպէս Կ. արքեպս. Բագրատունու հաւաքածուի մասն է:

¹¹ Նկարագրած է եղել Հ^մ 2501-2800 երեքհարիւրեակը, բայց արած աշխատանքի լրիւ չի պահպանուել, ուստի ձեռագրերի զգալի մասն ի նորոյ է նկարագրուել:

¹² Հնարաւոր վրիպումների համար ներողամտութիւն ենք հայցում. նախորդ պատասխանատուներից ուղենիշներ չենք ստացել, ուստի թուարկում արել ենք ըստ Ձեռագրատան սպասարկման մատենաների:

¹³ Հ^մ 2401, 2442, 2448, 2455, 2458, 2475, 2485 ձեռագրերի տոմարական նիւթերի նկարագրութիւններն արուել են Գրիգոր Բրուտեանի, իսկ Հ^մ 2485 ձեռագրի երաժշտական նիւթերը՝ Արուսեակ Թամրազեանի հետ խորհրդակցելով:

2401


Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Յ

ՅՈՎՀԱՆՆԱՎԱՆՔ

ԳՐԻՉ՝ Յովաննէս արդլ.:

Թեթ՝ 278. չգրած՝ 1բ-2բ, 3բ-4բ, 267ա: ՊՐԱԿ՝ 4+16+Ա-ԻԱx12 (Ձ 14, ԺԱ 16): ՆԻԻԹ՝ թուղթ, արեւելեան: ՄԵՏՈՒԹԻԻՆ՝ 11x8,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (7,5x5): ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 10ա): ՏՈՂ՝ 13-18: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի. կապիչներով, միջուկը տախտակ, աստուար կանաչ մետաքս. լուսանցակողերը՝ կարմիր:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ – Մոտք յերուսաղեմ 155բ: Ճ ա տ ա գ ա ռ դ՝ 5ա, 79ա, 122բ, 182ա: Լ ու ս ա ն գ ա գ ա ռ դ՝ բուսական, թռչնային (156ա, 268ա), տանառ (36ա): Զ ա ռ դ ա զ ի ռ՝ թռչնագիր, հանգուցագիր: Գ ո յ ն ե ռ՝ կարմիր, կապոյտ, դեղին, նարնջի, սև:



Նմուշ 10ա

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Տօնական կամ Մարգարէների ճաշոց (վրացերէն): ԺԳ.-ԺԳ. դդ.: 2 (Ա.-Բ) + 2 (Գ.-Դ): Ստացուած 21x14,5 չափի ամբողջական մէկ թերթի ընդլայնակի ձայնով-երկտակումով եւ ընդերկայնակի կիսումով: Մագաղաթ, 10,5x7,4, նուսխուրի, միասին (10x10, 10x8. սկզբնապէ՛ երկսին), տող՝ 13 (Ա.Բ), 10 (Գ.Դ): Կարդալ՝ Աա, Բբ, Դդ, Գա, Բա, Աբ, Գբ, Դա (ըստ՝ Պ. Մուսաղեանի):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի եզրերը եւ մէջքը մաշուած, դոնակն ընկած. յետագայ վերակազմութեան ժամանակ մամուլները տեղաշարժուած՝ ԺԳ-ԻԱ (թ. 21-116), Ա-ԺԳ (թ. 117-278), լուսանցներում խոնատութեան եւ ցեցի հետեւ (թ. 244-7 եւ այլն):

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. 5ա-78բ [Մասն ժամագրոց]

1. 5ա-7ա [Երգ ասացեալ ի պաշտաման գիշերոյ] – Յիշեսցուք ի գիշերի... եւ զմեծ զոգորմութիւն... Ալէլուիա:

2. 7ա-9բ [Կանոնագրուիւք կարգաւ ըստ ուր ձայնիցն] – Դատեա՛, Տէր, զայնոսիկ... Դասք լուսեղէն... քո սուրբ գալուստ:

3. 10աբ [Կանոնագրուիւք Բուն Բարեկենդանին եւ Նոր Կիրակիին] – Աւրհնեա՛ անձն իմ... ի պասկել ըզսուրբըս քո:

4. 10բ-8ա Թագաւորք ապաշխարութեան – Բշ. Թագաւոր յաւիտեան... որ մոլորեցայ ի հօտէ՛... խառնիլ ի հաւտ քո:

5. 18ա-22ա Թագաւոր[ք] մարտիրոսաց – ԱԿ. Զոգորմութիւն քո, Տէր... օրհնել Սուրբ զերրորդութիւն:

6. 22ա-3ա Սըրբոյն Ստեփանոսի եւ ասագ տօնեցուն – Այսօր դասք հըր[եշ]տակացն... Այսօր դասք:

7. 23ա-33ա Ալելուիա գիշերուան կարգաւ – Ալէլուիա, ալէլուիա: Ողորմութեամբ Տեառն... Ոչ են բանք... խօսք նոցա:

ՌՃԺԳ. – 1664

8. 33ա-58ա [Աւետարանք բժշկութեան, իւղաբերից, տանառի, հանգստեան] – ա. 33ա-4ա եւ մինչդեռ անցանէր... (Մտթ. Թ. 27-34): բ. 34ա-6ա Յայնժամ թողեալ Յիսուսի զժողովուրդս... (Մտթ. ԺԳ. 36-52): գ. 36ա-8ա եւ յորժամ եկեսցէ... (Մտթ. ԻԵ. 31 - ԻԶ. 2): դ. 38ա-40ա եւ յերեկոյի շաբաթուն... (Մտթ. ԻԸ. 1-20): ե. 40ա-1ա Մինչդեռ նա զայն խօսէր... (Մրկ. Ե. 35-43): զ. 41ա-2ա եւ ասէր. Այսպէս է արքայութիւն... (Մրկ. Դ. 26-34): է. 42աբ Զգոյշ եղերո՛ւք... (ԺԳ. 33-37): ը. 42բ-4ա եւ իբրեւ երեկոյ եղեւ... (ԺԵ. 42 - ԺԶ. 8): թ. 44ա-5բ եւ էշ ի Կապիառնաում... (ՂԿ. Դ. 31-42): ժ. 45բ-8ա Մի՛ երկնչիր, հօտ փոքրիկ... (ՂԿ. ԺԲ. 32-48): ժա. 48աբ Զգոյշ լէ՛րո՛ւք անձանց... (ՂԿ. ԻԱ. 34-38): ժբ. 48բ-50բ եւ ահա այր մի... (ԻԳ. 50 - ԻԴ. 12): ժգ. 50բ-2ա Յետ այսորիկ տօն էր հրէից... (Յվհ. Ե. 1-18): ժդ. 52ա-3բ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա... (Յվհ. Ե. 19-30): ժե. 54ա-5բ Ամէն, ամէն ասեմ ձեզ. ո՛չ է ծառայ մեծ... (Յվհ. ԺԳ. 16-30): ժզ. 55բ-8ա Յետ այսորիկ այղաշեաց... (Յվհ. ԺԹ. 38 - Ի. 18):

9. 58ա-60բ Կանոն այլ օրհներոյ – եւ ասի սաղմոս. Աստուած, ոգորմեա՛ մեզ... Ընթերցուած յեսայեա մարգարէէ. Այսպէս ասէ Տէր... եղիցի մեզ ի սրբութիւն, ի քաւութիւն... Գ. հետ կրկնեա՛յ:

10. 60բ-78բ [Ժամամտաւ ըստ կարգի ատուց պահոց եւ տօնից տէրունականաց եւ ամենայն արքոց պահոց] – Բշ. Գշ. Եշ. Որ ի Հարէ առաքեցար... Յարեաւ փառաց թագաւոր... մեծ աւետիս:

Բ. 79ա-102բ [Կանոն արքոյ Պատարագին]

Տե՛ս ձեռ. 2385, 101ա-45բ. 1/79ա-83ա: 2/83ա-91ա: 3/91ա-102բ: 4/շք (միաւորները համառօտումներով են եւ առանց գլխաբաժանումների):

Գ. 102բ-10բ [Տաղք]

ա. 102բ-3ա Տաղք Յարութեան («Գրիգոր») – Գոչէր հրեշտակն ի վիմին / Վասն յարութեան Յիսուսին... Փութացեալ առաքելոցըն գովեալ, / ԶՅիսուս տեսի յարուցեալ:

բ. 103աբ [Տաղ Յարութեան] – Յարեաւ յաւուր երրորդին, / Գոչէր հրեշտակն ի վիմին... Տեսին եւ հաւատացին, / Քրիստոս Աստուած կենդանին:

գ. 103բ-4ա [Տաղ արքոյ խային. ձեռ. 423, 239աբ] – Այսօր եղեւ գալ դըշխոյին՝ / Մօրն արքաին ինքնակալին... եւ նա զբտաւ ըզփայտ խաչին, / Որ էր թաղեալ ներ քաղաքին:

դ. 104աբ [Գրիգորի նարեկացոյ մեղեդիկ. ձեռ. 423, 76բ-7ա] – Սեւ եմ գեղեցիկ, դուստր եւայի... ի մայր մըտանեմ:

ե. 105աբ [Տաղ Յարութեան] – Դասքըն հրեական / էին պահապան... Տեսեալ զվարշամակն եւ ըզկտան / Ի մարմնոյն ունայն:

զ. 105բ-6ա [Տաղ Ծննդեան] – Ծաղիկ պայծառ ծովային / Եւ մարգարիտ մեծագին... Ճանապարհիդ որ եկիր, / Երկինք յայտնեալ ի յերկիր:

է. 106ա-7ա [Տաղ Սուրբ Աստուածածին] – Խընկի ծառի նըման ես / Պտուղ դու քաղցրահամ ես... Վարդի նըման գուն պտղոյն / Լուծիչ ես Աստուածածին:

ը. 107աբ [Տաղ աշխարհամատրան] – Ուրախ լեր հարսն ի յերկրէ, / Բերկրեայ դըշխոյ յաշխարհէ... Ջրեզ աղաչեմք սուրբ կոյս անբիծ, / Բարեխօսեա՛ մեր ազգիս:

թ. 107բ-8ա [Տաղ ազնիւ յԱռաքել Երիցու. ձեռ. 2649, 225ա] – Այսոր նոր տօնիւս ցընծայ եկեղեցի... արհնեալ գալուստ քո, Տէ՛ր՝ սսեն:

ժ. 108աբ [Տաղ Յարութեան, ի Սրիկ Կոստանդէ] («Կոստա») – Կանա[ն]ցըն կանխեալ եկին, / Ի գերեզման զիւզս անոյշ բերին... Աշակերտեալք աւետարանեցէք / Ըզյարութիւնըն Տեառն:

ժա. 109ա-10ա [Տաղ Տեառնընդառաջին] – Քրիստոս՝ փառաց թագաւորն / այսոր եկեալ յընծայումն... Լո՛յժ ըզկապանս մեր մեղաց / Եւ ազատեա՛ յանցանաց:

ժբ. 110աբ [Տաղ Քառասնաւեալ Գալստեան Տեառն ի տաճարն] – Այսոր Երուսաղէմ ցընծայ / Եւ զուարճացեալ պայծառանայ... Մաքրութեան անկարօղին, / Մաքուր ընծայս մատուցանին:

Կ. 111ա-2բ [Դարագլուխ] – ՅԱդամայ մինչեւ ի ջրհեղեղն... ի Մահմետայ երեւիլն են ամբ ՌժԿ. (615):

Ե. ա. 113ա-5բ [Շարականք] – Երկնաւոր հաւտ ընտրեալ... Գշ. Երկնաւոր փեսայ... Դշ. Սըրբուհի Մարիամ... Եշ. Առաքեալք Աստուծոյ... Ջշ. Պարունակեալ պահէին...

բ. 115բ-6ա [Տաղ Անառակ որդոյն] – Հետեւեցայ անառակին ի հեռաբնակ...

գ. 116բ Շարական Կիրակմտի – Դկ. Ստղ. Անըսկիզբն Աստուած... վասն որոյ եւ մե՛// (Թափուած):

Ձ. 117ա-245բ [Տօնացոյց]

Տե՛ս ձեռ. 2441, Յա-196ա. 1/117ա-22ա: 2/122բ-47ա: 3/147ա-81բ: 4/182ա-211ա: 5/211ա-8բ: 6/218բ-6բ: 7/226բ-39բ: 8/239բ-45բ:

է. 245բ-8ա [Խրատք ժամատեղեաց]

ա. 245բ-6բ Արարեալ եւ սահմանեալ սուրբ վարդապետին թումայի Մեծփեցոյս Ի պայծառայութիւն մանկանց եկեղեցոյ՝ Խրատ յաղագս պաշտման եկեղեցեաց Հայաստանեաց – Ձի այսպէս լիցի կարգ... նոքա կարդան անպատճառ:

բ. 246բ-7ա Յաղագս հսկման գիշերային պաշտմանց – [Ե]ր[բ] առաջի կանոնն երան[եալն] լինի... փոխն գի՛տ եւ կարգա՛// (մի քանի բառ ցեցակեր):

գ. 247ա-8ա Խրատք Իւրաքերից աւետարանացն

եւ Հանգստեան եւ Բժշկութեան – Յորժամ վասն ի վերուստ... ի Դուկաս է՛Բ., ՃՄԱ., ՄՄԸ., ի Յովհաննէս՝ Ի. ՃԳ.:

Ը. 248ա-60բ Քաղու[ած]ք շարականի կարգաւ – ԳԿ. Երգեցէ՛ք որդի[ք] Սիոնի... (260բ-6ա տե՛ս Բ. ժբ.):

Թ. ա. 260բ-1ա [Հրաժարումն] – Հրաժարիմք ի սատանայէ... բ. 261ա-3ա [Դաւանութիւն հաւատոյ] – Խոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սրտիւ զՀայր... գ. 263բ-6բ [Զղշումն] – Մեղայ ամենասուրբ Երրորդութեան... Ողորմեսցի քեզ, մարդ:

ժ. 266բ [Շարականք] – Յր. Լուսապայծառ հրեշտակին... Հբ. Համբարձէք իշխանք...

ժԱ. ա. 267բ [Աղիւսակ] Ամիսք եւ տօմարք հայոց – Նաւասարդի... Աւելեաց (նշուած են հայոց ամիսների կրկնակները, կիսակները եւ ամսամուտերը՝ ըստ եօթներեակների):

բ. 267բ [Բացատրութիւն աղիւսակի] – Ամսոյն եւ եօթներեկովն ի ներս մո՛ւտ, կա՛լ զեօթներեկն... գտանես զօր ամսամտին անսխալ:

գ. 268ա-77ա [Պատճէն տօմարի հայոց] – Կրկնակ ամսոց այսպէս արա՛. կա՛լ զնաւասարդի ամսին Լ. (30) եւ էրթ է. ... էթէ դար է, ձախակողման դասուն է, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն, ամէն:

Ի տարբերութիւն այլ խմբագրութիւնների ունի որոշ լրացուցիչ հատուածներ, օրինակ՝ ժամանոններ, ձայնագիտ են):

ժԱ. ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ժէ. դ.

Յա [Գրիգորի Նարեկացոյ Տաղ Ծննդեան] – Աշքըն ծով ի ծով ծիծաղախիտ ծաւալանայր... նըմա գնէր փողից եղանակեմ նըմա// (Թերի):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

102բ ՈՎ սուրբ սպասաւորք անմահ պատարագին, զմեղուցեալ Յովաննէս արեղայն յիշեցէ՛ք, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն:

112ա Իսկ ի Քրիստոսէ մինչեւ ցայժմ որ |112բ| ըզթուղթս գրեցի, լինին ամբ ՌՈԿէ. (1667) ըստ հայկական թուարբերութեանն, քանզի ՌժԺԿ. (1665) էր թուականն, ԻԸ. օր պակաս, զի շեւ եւս մտեալ էաք յամիսն Նաւասարդի, այլ անաէն ի Հրոտից՝ յեօթներքորդում աւուրն կացաք ի շորեքշաբաթոջ:

181բ ՈՎ սուրբ տօնասէ[ր]ք, յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղուցեալ Յովաննէս սուտանուն արեղայս, որ արտակուստ միայն երեւիմ կեղծաւոր, եւ ի ներքուստ լի եմ անառակութեամբ եւ շար|182ա|ութեամբ, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն[ն]:

277ա Փա՛ռք համագոյ եւ միասնական երից անձնաւորութեանց եւ միակի աստուածութեանն՝ Հօր եւ Որդոյ եւ ամենագոր Սուրբ Հոգոյն, որ եւ փառաւորի Երրորդութիւն ամենայն եղանակացս՝ անսպառ եւ անվաղճան, [ժ]ամանակաւ եւ անսահման յաւիտենիւ, անկէտ եւ անգրաւ, յաւիտեանս յաւիտենից. ամէն: Եւ

արդ, ես՝ մեղուցեալ եւ անպիտան ծառայակիցս ձեր, իբրեւ տեսի թէ ոչ գոյ փրկութիւն վիրատրեալ հոգոյս իմոյ, զմտաւ ածի զբան մեծի մարգարէին Եսայեայ, թէ՛ Երանի, որ ու|277թ|նիցի զաւակ ի Սիօն եւ յիշատակ Երուսաղէմ (Ես. Ա. 9), եւ զհրամանս Տեառն, թէ՛ Արարէ՛ք ձեզ քսակ առանց հնանալոյ (Ղկ. ԺԲ. 33), եւ թէ՛ Գանձեցէ՛ք ձեզ գանձ ի յերկինս (Մթ. 2. 20): Վասն որոյ ես, չարեօք լցեալս եւ մեղօք զեղխեալս, ծոլս եւ պղերգի ի բարեգործութիւնս, արագս եւ փոյթս ի չարագործութիւնս, սուտանուն Յովանէս եւեթէ անուն արեղայ, եւ գործով ունայն եւ թափուր, յօժարեցայ գաղափարել զգիրքս տխեղծ մատամբ եւ անվարժ մտօք՝ զերկոսինս զայս[ո]սիկ. նախ՝ զԵսայեան եւ զՏօնացոյցն, ի թուաբերութեանս հայոց ի ՌձժԳ. (1664), ի հայրապետութեան Սուրբ Էջմիածնա տեառն Յակոբա Ջուղայեցոյ եւ առաջնորդութեան սուրբ ուխտիս Յովհաննու վանից վերոյգրեալ |278ա| սրբազան վարդապետին Յօհաննիսի՝ աշակերտի մեծին քաջ բարունապետին Ջաֆարեա Վաղարշապատեցոյ: Արդ, Տէ՛ր իմ Յիսուս, զի թէպէտ ո՛չ է ընդունիլի քեզ զվաստակն իմ եւ ո՛չ է ի պէտս, ըստ այնմ՝ Ո՛չ ուտեմ ես զմիս զուարակաց քոց (Սղմ. ԽԹ. 13), եւ թէ՛ Ո՛չ ընդունիմ ի տանէ քումմէ՛ զուարակս (Սղմ. ԽԹ. 9), եւ թէ՛ Իւզ մեղաւորի մի՛ օձցէ զզլուխ իմ (Սղմ. ՃԻ. 5), եւ թէ՛ Նաշի՛հ ձեր անընդունելի են ինձ: Արդ, սակս մարգասիրութեան քո ընկա՛լ սա որպէս լոմայս այրուցն կամ որպէս ոստ մի

յուռոց, կամ որպէս հատ մի յողկուզաց: Եւ դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս միաբան սուրբ ուխտիս Յովհաննէս բարունապետն, զՍարգիս վարդապետն, տէր Յովհաննէսն, տէր Գրիգորն, զՎար|278բ|դան սարկաւազն՝ հանդերձ առհասարակ սարկաւազունք եւ// (4 բառ շնջած), եւ զիս՝ մոլորեալ եւ թշուառացեալ սուտանուն Յովհաննէս արեղայն, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսս. ամէն: Եւ դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ սիրելիք, յիշեցէ՛ք ի Քրիստոս զհանգուցեալ ծընօղսն իմ՝ զհայրն իմ՝ Գրիգորն, զմայր իմ՝ Մարիանն, եւ զքոյրն իմ՝ Մամարն, եւ զհորուն իմ՝ զԲարսեղն, եւ զմօրուն իմ՝ Թիրամնդն, եւ զհոգեւոր պապն իմ՝ Յակոբ, Էջմիածնայ դռնապանն, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսս. ամէն: Ո՛վ սուրբ ընթերցօղք եւ օրինակողք, ով ոք որ հանդիպիք սմա, թողութիւն շնորհէցէ՛ք վասն վատ գրութեան եւ սղալութեան սորա:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (Երիցս), 2ա «Յիսուսի Քրիստոսի ծառայ Գրիգոր եպիսկոպոս: Թվին ՌձժԲ. (1663)»:


ԳՐՉԱՓՈՐՉ՝ 1ա Մախիմիանոսի, Ամդիբոսի, Դեմետրիոսի, Կոստանդիանոսի, Մարտեանոս, Անտոնիոս եւ Յովանէս. ամենայնի օրհնեա, ար: 162թ էս տեւորը զդառապանս իմ եւ զցաւս իմ հսկիմս: 205թ Տուի ես՝ զպապայ էնօն՝:

ՆՇՈՒՄ՝ Ա. կազմաստառին փակցուած թղթին. «ՌձժԳ.-1664, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2402

Ժ Ա Մ Ա Գ Ի Ր Ք Ա Տ Ե Ն Ի

ԹԵՐԹ՝ 212. չգրուած 199ա: ՊՐԱԿ՝ Ա-ԻԲX10 (Ա. 12, Ժ 9, ԻԲ 1): ՆԻԻԹ՝ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 10x7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միսպին, երկսին (26աբ, 56ա-63ա. 7.5x5): ԳԻՐ՝ բոլորգիր (անուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 19: ԿԱԶՄ՝ սեւ լաթ, մէջը՝ սեւ կաշի, միջուկ ստուարաթուղթ, աստառը թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1(Ա.) + 1(Բ), սպիտակ թուղթ (ԺԹ. դ.), մասն կազմաստառի:



Նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ – Իսաիք մարգարէ՝ 5թ, Խաչելուքին՝ 27ա, Մանկունն ի հնոցին՝ 46թ, Սուրբ Երոբողոսին՝ 110թ, Խորհրդաւոր ընթրիք՝ 154թ, Պատարագ՝ 199թ: Լ ու ս ա ն ց ա - յ ի ն . Սուրբ՝ 1ա, 3ա, 11ա, հրեշտակ՝ 205ա, Յեսայի ծառը՝ 6ա, Արեգակ՝ 15թ, Աստուածածինը մանկան հետ՝ 17ա, Կախաւած Յուդա՝ 26թ, Բժշկութիւնք Քրիստոսի՝ 28թ, 32թ, 35ա, 95ա, 96թ, 130թ, Յովհաննէս Աւետարանիչ՝ 56ա, Դուկաս՝ 58ա, Մարկոս՝ 60ա, Մատթոս՝ 61ա, Հովիւ՝ 70ա, Կոյր՝ 71ա, Աբրահամ՝ 145թ, Ներսէս Շնորհալի՝ 193թ: Կ ի ս ա խ ո ռ ա մ ի 6ա: Ճ ա կ ա տ ա - զ ա ռ դ՝ 47ա, 99ա, 111ա, 139թ, 158թ, 182ա, 200ա: Զ ա ռ դ ա - զ ի ռ՝ թղթագիր, համագուցափր: Գ ո յ ն ե ռ՝ կարմիր, կանաչ, կապոյտ, վարդագոյն, դեղին, սպիտակ, նարնջի, շագանակագոյն, սեւ, մարմնագոյն, գորշ, ոսկի:

ԺԷ. դար

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը ԺԹ. դարի. վերջից պակասաւոր, լուսանցներով խոնաւութեան հետեւ, մանրանկարների ներկերը խոնաւութեան պատճառով արտատպում հանդիպակաց էջերին, լուսանցակողերը գունաթափ, սեւացած:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

1ա-212թ [Ժամագիրք Հայաստանեայց սուրբ եկեղեցոյ]

ՏԵ՛ս ձեռ. 435, 4ա-156թ. 1. ա/1ա: բ/1ա-3ա: գ/3ա-5ա: դ/5ա: 2-3/չիք: 4. ա/6ա-45թ: բ/46ա-98թ: գ/99ա-110ա: դ/110ա (վերնագիր), 111ա-6թ: ե/116թ-21ա: զ/121ա-34ա: է/134ա-58ա: ը/158ա-81թ (չիք՝ «Օրհնեցից զՏէր յամենայն ժամ... »): թ/181թ-212թ «... որ կերակրեցեր ըզմեզ անմա»// (շար. թափուած):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

Պհայնկ Աս. (1890 թ., շղագիր) Նուէր Միմաս քահանայի Տէր-Պետրոսեանց ի Մատենադարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, ի 6 Նոյեմբեր 1890 ամի:

ՆՇՈՒՄ՝ պհայնկ Աս «Հ^{որ} 430», «ԺԷ. Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:


2403

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Յ
(հայատառ դիպոկերէն)

ԻՂՈՎ

ԳՐԻՉ՝ Միսն արկ. Մուրաւ օղլու: ՄՍԱՅՈՂ՝ բան Վարդան, բաննա Զօֆիէա:

ԹԵՐԹ՝ 211: ՊՐԱԿ՝ Զ-ԼԲx8 (Զ, ԺԸ 7, ԼԲ 5): ՆԻԻԹ՝ թուրք, լուսագծերով: ՄԵՏՈՒԹԻԻՆ՝ 13,5x9,1: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (10x6): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ 2ա): ՏՈՂ՝ 15: ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշի, միջուկը տախտակ, աստաղը ծաղկաւոր գործուած (Ի. դ.). լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 (Ա-Բ) + 2 (Գ-Դ), դեղին թուրք (Ի. դ.):



նմուշ 2ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ՝ - Լ ու ս ա ն ց ա յ ի ն. Քրիստոս՝ 40բ, Սուրբ Հոգի՝ 52ա: Լ ու ս ա ն ց ա զ ա ռ դ ՝ բուսական, գաւաթ, կանթեղ (31բ), խաչ (39բ), տանաւ (50բ, 129բ): Զ ա ռ դ ա զ ի ռ ՝ թոչնագիր, հանգուցագիր, մարդագիր (38ա): Գ ո յ ն ե ռ ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, շագանակագոյն:

ՎԻՃԱԿ՝ բարաւ. Ի. դ. նորագուած, վերակազմուած. սկզբից եւ վերջից պակասաւոր, լուսանցներում խոնամութեան նեւեր, փոփոխ պատռուածներ, տեղ-տեղ կարկատուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1. 1ա-62ա [Պատարագամատոյց] /// Եկեալքս, դադարչա - Քելկանլար պարլամբզ արի կաթուղիկէ...

2. 62ա-75բ [Խոստովանութիւնք]. Խօղիսա խօստովանութիւն արմնու մէնիմ...

3. 75բ-139ա, 159ա-160ա, 163բ-211բ [Ժամագիրք]. Խօղիսա հարվախղ քերալի ատամ օղլանլարընա... - էյատամ սօվուչի պիչիմ տա... Եագըլըլարտան խուղիա/// (Թափուած):

4. ա. 139ա-49բ Խօղիսա Եփրեմ ճրգնատրուանկ Խորին Ասորիինիկ - |139բ| Պիչե էրնիկ գօգնուանկ պուրուխիսը օլումն...

բ. 149բ-58բ Եփրեմ ճրգնատրուանկ Խորին Ասորի - Մէնե ազըլըտա արգանիսիգ խուղուանկէնիկ...

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

154բ-5ա (ստ. լս., կապոյտով) Ո՛հ, ո՛հ, ո՛հ, խօլում չիրիր, Եագովում սիզկա յիշատակ խալըր: Շուքուր Եառաթուչիկա (Թրգմ.՝ «Ո՛հ, ո՛հ, ո՛հ, ձեռքս չկայ, գրածս ձեզ յիշատակ թող մնայ. շնորհակալութիւն»):

160բ Հայպա՛թ պիրլիքքատա պիրլանկան Արի Երրորդութիւնկա, Ազակա պաշլամականկայ, օղուկա թօղկանկայ ադատան թէնսիգ աւալնէքի մէնկիլիքդան դէր կովսուզտա պաշլանմական: Արի ճանըր ախքանըր ադատան զամանբզ տադէր կովսուզ ուչ պօյ դուկալ-

ՌՀԵ. - 1626

տա պիր դարպիեադ այլըրըմական, հայպաթտա Եէր օբմախ ադա օղու պրի ճանկա հարի |161ա|տա հարքեզ մէնկի մէնկիլ. ամէն: Դուկալանտը Ալըլը պիդիքի թվականքնըն էրմէնի հիսապընա ՌՀԵ.սինտա (1626), մայիսըն ԻԹ.ուստայ (29), բատըլաճըլընա Նէմիչ ուլուսունուն Ուչունչի Զիկմոնմուն, կաթուղիկուսուխունա Յաբեթական ճընսընըն էլմիեաթիմին աթուունտա տէր Մեքիսէթ կաթուղիկունուն, խայսիքի պուզամանտա քէդի խարղըլըր պիլա քէլտի խուլթու Իլով շահարընա|161բ| Ե. ախպաշ պիլա, Բ հաբեթա պիլա թվականքնըն ՌՀԵ.սինտա (1626), խայսի ուլու սօվուչուք պիլա, պարչա քահանայըլի տա սարկաւագլար պիլա. տա ժողովուրդ պարը իկիդար պիլայ խարչիսընա շըլըր խաբու էդդիլար: Եագըլտը պու պիդիք շահարընա բատշահընկ Իլովտա խօլու աշրա Եագըլըլ Միսն սարկաւագ Մուրաւ-օղլու, Զամուշա շահարընտան, խօղիսասընա|162ա| մէնկարմախընա պարոն [3]կալըրչա՝ Շեշով Երեսիոխանըն օղլունա՝ բան Վարդանըն, խըզընա՝ բաննա Զօֆիէա, խայսիքի ուլու սօվուք տա հաւաս պիլա, Եագտըրտը քէնտինա պու ալըլը պիդիքի յիշատակ քէնտինա մէնկիլիքքա, խայսիքի Պիչ Թէնկրի պէրկայ քօբըլլարկատէթ խուլլանմայ Եախշի սաղըլըսոյ տա ադասընա, անասընա ուզախ օմուր տա Եախշի սաղըլը պու ալըլը|162բ| պիդիքի տա այդքանըն աշրա. ամէն: Էվէթ, մէն արգանիմիգ խօլարմէն, քի Եամանլամա կալսիգ ուլուլուխունա տա Եանկըլըլընա Եագովումուն, գէրա պու խաբաբէտի խուլաթըմ, խօլարմէն խօլունուգ Պիչ թէնկրիտան, քի պէրկայ մանկա Եագըլարըմա պօշաթըլի տա խուղիսարըլմախ: Ա՛ Պիչ Թէնկրի, խայսիքի ճօմարտ բատշահը քէնտի Եախշիլըլ պէրկա|163ա| նընտա, պէրկայ սիզկայ պարչա դուրու Եախշիլըլընա տա խուղիսարըլմախը, պարչա դուրու փորձանքարտան տա Եագըլարընկըզտան տա մէնի ունուգմանկըզ քէնտի ալըլըլընըզկա պիր Հայր մեր պիլա, քի պէրկայ Պիչ Թէնկրի սիզկա տա մանկա պու տունեատայ տա օլտունեատա ճան դիրլիքին մէնկի մէնկիլիք. ամէն:

Թրգմն. Վերա Սահակեանի. 160բ «Փառք միասնական եւ անբաժանելի Սուրբ Երրորդութեան. Երբ մենք մեր աղօթքը սկսեցինք, Երեսան կամաց կամաց սկսեց ծնուել, ծնունդից յետոյ նա սկսում է իր քայլերը (Երեսի գրքի ծնունդի մասին է): Սուրբ Հոգու այդչափ շնորհները թող առանց ժամանակների բաշխուեն բոլորին: Փառաւորեալին երկիր ենք պագանում. այս տղան Սուրբ Հոգու շնորհն է. |161ա| թող բոլորին շնորհուի

յաւիտեանս յաւիտենից. ամէն: Աղօթքներ են, Աղօթագրքի գրութեան թուականն է հայոց տոմարով ՌՀէ. (1626), մայիսի 29: Ռուս ազգի (նեմիշ) Զիլմունտ երոտրը եւ թոռանիստ էջմիածնում Մելիսեդ կաթողիկոսը, ով հաբեթական տոհմից էր սերուած, այս ժամանակ, շնայած խորը ծերութեան, մեծ ուրախութեամբ այցելեցին Իլով քաղաք: 1626 թ. այս նշեալ մարդկանց՝ արդէն |161թ| սպիտակամորուս, արեղաներով եւ բոլոր քահանաներով եւ սարկաւագներով հանդերձ, ուրախութեամբ դիմաւորելու ելաւ ժողովուրդը, որոնց մէջ կային նաեւ երիտասարդներ ու անփորձներ: Այս գիրքը գրի է առնուել փաղիշահանիստ Իլով քաղաքում, ձեռամբ Միսն սարկաւագ Մուրաւ օղովի, ով Զամուշա քաղաքից էր: Գրուել է երեսփոխան |162ա| Յակոբշա Շեքովի որդի պարոն Վարդանի դուստր օրիորդ Զօֆիայի յատուկ օգնութեամբ եւ օժանդակութեամբ: Վերոյիշեալ անձինք գրել տուեցին գիրքը որպէս իրենց համար յաւիտենական յիշատակ: Տէր Աստուած, երկար տարիներ նրանց, թող առողջ գոր-

ծածեն, ի յիշատակ եւ երկար կեանք մայրերին ու պապերին: Թող առողջութիւն պարգեւի այս Աղօթագիրքը. |162թ| այսքանը. ամէն. Այո՛, փափագս եմ յայտնում, որ իմ թերութիւնների ու մեղքերիս համար գիրս դառնայ մեղանշական, որ դուք բարեխօս լինէք, քանզի այսքան էր իմ ձեռքերի կարողութիւնը: Յառնում եմ ձեռքերս առ Աստված. Տէր, մեղքերիս թողութիւն տո՛ւր. Տէր Աստուած, այս վայելուչ փաղիշահին իրեն վայելուչ |163ա| տարբեր տեսակ փորձութիւններից ու մեղքերից ազատի՛ր: Ինձ մի՛ մոռացէք ձեր աղօթքների մէջ մէկ հատ Հայր մերով թող որ Տէր Աստուած փրկի ձեզ եւ բոլորին այս աշխարհում, եւ հանդերձեալ աշխարհում թող հոգին յարութիւն առնի, յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

ՆԿԱՐԱՓՈՐՉ՝ 158թ (ծաղիկ), 185թ (բուսական զարդածեւ):

ԳՐՁԱՓՈՐՉ՝ 10ա Իշիդ, 31թ սօվո, 187ա դուրսուլարուսդում մէնիմ դանըխարը, 208ա ճանըմ մէնիմ (թրգմ.՝ «Իմ սիրելի»), 211թ շար 3 շարէք եւ կէս:


2404

Մ Ա Շ Տ Ո Յ Ձ Ե Ռ Ա Յ


ԱԻԵՏԱՐԱՆՈՅ

ԳՐԻԶ՝ Գայիանէ: ՄԵԿԵՆԱՍ՝ Պարոնց Զանում: ՍՍԱՅՈՂ՝ Մարտիրոս Բեյ.:

ԹԵՐԹ՝ 294-7 (տե՛ս Պահպանակ). չգրուած՝ 1թ, 99թ-102ա, 155թ-Ցա, 290ա-1ա: ՊՐԱԿ՝ 1+ու-ԻԲx12 (ե 28, է կրկն., ԺԱ. 9, ԺԹ 16, Ի, ԻԱ. 14, ԻԲ 2)+6: ՆԻԻԹ՝ թուղթ, արեւելեան (ԺԹ. դ. յաւելում, կապոյտ՝ թ. 1, 53-9, 66-74, 90-101, 151-8, 240-86, 289-94): ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 11x9: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (9x6): ԳԻՐ՝ բոլորգիր, նոտրգիր՝ յաւելագրողի (53ա-9թ, 66ա-74թ, 90ա-101թ, 151ա-8ա, 240ա-86թ. նմուշ՝ 3ա, 1ա): ՏՈՂ՝ 17, 14՝ յաւելագրողի: ԿԱԶՄ՝ դրոշմագաղղ շագանակագոյն կաշի, միջուկը տախտակ, աստաղը կապոյտ թուղթ (մասն պահպանակի, Բ. փեղկինը՝ համարակալում՝ թ. 294). լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1 (1) + 6 (289-94. 294ը՝ փակցուած Բ փեղկին), կապոյտ թուղթ, լուսագծերով, կարուած անելի մեծ թղթերից, 291թ-2ա, 293ա-4ա՝ զանազան գրութիւններով:



Նմուշ 1ա



Նմուշ 3ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Կ ի ս ա ի յ ո Ր ա ն ՝ 6ա: Ճ ա կ ա – տ ա զ ա Ր դ ՝ 102թ, 127ա, 159ա: Լ ու ս ա ն գ ա զ ա Ր դ ՝ բուսական, թռչնային, յուշկապարիկ (45ա, 138ա), տանաւ (201թ): Չ ա Ր դ ա զ ի Ր՝ թռչնագիր, հանգուցագիր, ձկնային (142ա): Գ ո յ ն ե Ր՝ կարմիր, վարդագոյն, կապոյտ, նարնջի, շագանակագոյն:

ՌՂ. – 1641

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի եզրերը եւ մէջի կային թեթեակի մաշուած. 1823 թ. Խաչատուր դպիրը նորոգել է եւ թելին լրացրել, լուսանցներում խոնաւութեան հետեւեալ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. 1ա-239թ Գիրք, որ կոչի Մաշտոց՝ արարեալ սրբոյն Մեսրոպայ հայրապետի, որ եւ ասի Մաշտոց, եւ այլոց խարսխաց եկեղեցոյ՝ սրբոց հայրապետաց, որ պարունակէ յինքեան զվեցեպին խորհուրդ սրբոյ եկեղեցոյ, բաց ի ձեռնադրութենէ եւ ի թղմանէ Բահանայից (խորագիրը՝ 1823 թ. լրացնողի):

1. ա. 2ա-5թ Աւգնեա Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ: Կանոն եւ խրատ Մկրտութեան, արարեալ է Բաշիմաստ վարդապետացն առաջնոցն, նախ՝ մեծին Մեսրոպայ Մաշտոցն կոչեցեալ, եւ յետ նորա՝ մեծն Գրիգոր Տաթեւացին, եւ Յովանէա Երզրնկեցին, եւ Գրիգոր Մերե[ն]ցն Դաթագին, զոր ըստ խորհրդոցն կարգեցին զարարողութիւն սորա – Չոր պարտ է ուսանել ամենայն քահանայիցն... զիւղն աւժութեան եւ զշուրն մըրկրտութեան:

բ. 6ա-26թ Սկիզբն Մկրտութեան – Աւրնեալ Հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ. եւ կարգայ՝ զաղաւթս. Տէր Աստուած մեր, Աստուած բարերար, որ զվրիպեալս եւ զհեռացեալս... արժանաւորեա՛ զսա փառաւոր յարութեանդ, զմուտ եւ զելս սորա պահեա՛ ի ձեռն Տեառն մերոյ... վայել է փառք:

2. 27ա-9ա Կանոն, յորժամ Խ.օրեալ լինիցի մանուկն – Առնու մայրն եւ մանկաբարձն զտղայն... եւ

ասէ գաղօթս. Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ յաւուրս
Խ.Նս (40) ըստ օրինացն եկիր ի տաճարն... զի զքեզ
աւրհնեն ամենայն զուարթունք երկնից. եւ քեզ վայել է
փառք, իշխանութիւն:

3. 29բ-33ա Կանոն եւ կարգ հարսանեաց նշան
օրհնելոյ – Ասեն շարական... Ընթերցուած յԱռակաց.
Որդիեակ, եթէ իմաստուն լցի... եւ լրումն հրամանի քո՝
յաճախել եւ բազմանալ եւ լնուլ գերկիր... այժմ եւ միշտ:

4. 33բ-8բ Կանոն հանդերձ արհնելոյ – Առնու
քահանայն զխաչն... եւ ապա ասէ շարական ԳՁ. Խա-
չայնշան գրողմամբ, նշանաւ պարգեւական... մի՛ իշ-
խեսցէ մերձենալ ի սա շար աղանդ դիւաց կամ կա-
խարդաց... եւ Քրիստոսի փառք յաւիտեանս:

5. 39ա-52ա Կանոն Պսակ արհնելոյ ամենայն
բրիստոնէից – Բայց գիտելի է, զի զսկիզբն պսակին
նշանակէ... Ընթերցուած ի Մըննդոց. եւ ասաց Աս-
տուած՝ Արասցուք մարդ ըստ պատկեւ մերում... զի
հեռացի սատանայ ի միջոյ սոցա. եւ քեզ հանցուք
զաւրհնութիւն եւ զփառս Հար:

6. 52բ-6բ Կանոն Պսակ վերացուցանելոյն – Սաղ-
մոս՝ Լո՛ւր դուստր... եւ ասէ գաղօթս. Տէր Աստուած
ամենակալ... եւ տայ նոցա զբաժակն՝ ասելով. Օրհնու-
թիւն, գոհութիւն եւ փառք... Հայր մեր, որ յերկինս
(53ա-6բ՝ լրացնողի):

7. 56բ-60ա Կանոն Երկրորդ Պսակի – Քահանայն
բերէ զնոսա յեկեղեցին... եւ ապա ասէ գաղօթս. Տէր
Աստուած մեր, որ ի հրեշտակաց... լիցին արժանաւորք
առաքինական գործոց... Հայր մեր, որ յերկինս (56բ-
9բ՝ լրացնողի, 60ա՝ հատուած հին գրուածից):

8. 60ա-5բ Կանոն Հաղորդ տալոյ – Առնու քահա-
նայն զմասն եւ խաչ առաջի... եւ ասէ գաղաւթս. Աւրհ-
նեալ ես, Տէր Աստուած ամենակալ... առ ի գտանել
մեզ զողորմութիւն առաջի ահաւոր բեմբին ի մասի
ժառանգութեամբ Յիսուսի Քրիստոսի... իշխանութիւն
եւ զաւրութիւն:

9. 65բ-115բ Կանոն համօրէն ննջեցելոց առ Քրիս-
տոս – Ասեն սաղմոս Մ... Եսայեայ 38.10. Ես ասացի ի
վերանալ յինէն... եւ առաջնորդեալ հասոյ յանճառ երկ-
նից յարքայութիւնդ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, ընդ
որում քեզ, Հօր եւ [Սուրբ Հոգւոյ] (66ա-74բ, 90ա-99ա՝
լրացնողի):

ա. 90բ-2ա Գանձ համօրէն ննջեցելոց («Առաւել») –
Այսօր էհաս հրաման Արարչէն, / Մահու հրաւեր մարմ-
նոյս հողեղէն... Բարեխօս լեր առ Տէր Աստուած, / Վասն
եղբօրս որ այսօր նընջեաց... Չանձինս ողորմեաց մեզ:

բ. 92ա-4ա Ողբ համօրէն ննջեցելոց՝ («ի Նաղաշ
Եպիսկոպոսն»). ձեռ. 424, 342ա] – Արարիչն արարա-
ծոց մեզ բարկացաւ, / Քաղցր բնութիւն աստուածա-
յին մեզ դառնացաւ... եւ քեզ ամէնքս երկրրպագեմք,
կո՛յս Տիրածին:

գ. 94ա-5ա Գանձ ի վերայ փոքր տղայոց – Նայիմ,
ողբամ ծընօղ տըղայիս / Վա՛յ եւ եղո՛ւկ ասեմ իմ ան-
ձինս... Արդ, Տէ՛ր ընկա՛լ զնընջեցեալ տըղայս, / հանգո՛
ի դասըս լուսեղինացդ, աղա[չեմ], լո՛ւր, Տէ՛ր, եւ ողոր-
մեա՛յ:

դ. 95ա-6բ Գանձ ի վերայ մանկանց՝ ի Պաղտա-
սար Գպրէ («Պաղտար») – Պայծառագոյն որդեակ՛ իմ
սիրուն, / Տիպ եւ նըման ծագման արեւուն... Արդ, Տէ՛ր,
ընկա՛լ զնընջեցեալ ծառայս, / եւ բերկրեցո՛ ի փառս
յարակայս... Լո՛ւր, Տէ՛ր, եւ ողորմեա՛յ:

ե. 96բ-9ա Ողբ ի վերայ դարիպ ննջեցելոց՝ («Նա-
ղաշի ասացեալ»). ձեռ. 2398, 183բ] – Ղարիպին
կեանքն է լալի ողբերգական, / Գառն ու լեղի, լի
տրտմութեամբ ի նեղ զընդան... մէկ մի չեկաւ անդ ի
թաղումըն զարիպին:

զ. 102բ-7բ [Գանձ թաղման] («Մանվելս») –
Մինդ ի յէ[ն], Բանդ ի սկզբանէ, / Յորժամ ծագիս փա-
ռաւք ի յերկրէ... Ինձ դուք պաշար պատարգ դրէ՛ք, / 'ւ
ի շար դիւացն զիս թափեցէ՛ք:

է. 107բ-10ա Ողբ ննջեցելոց – Ո՛վ քահանայք եւ
վարդապետքն աստուածաբան, / եւ ժողովուրդք հաւա-
տացեալք ամենեքեան... եւ հաւատովս վերանամ յերկ-
նից խորան:

10. 115բ-23ա [Այգոյն] – Այգոյն գան ի գերեզմանն...
Պաւղոսի առաքելոյն ի Գաղաթացոց թղթէ. Այլ մեք
պարտիմք... Տէ՛ր, նորոգեա՛ զմարմին խոնարհութեան
մերոյ անըստեղծ փառաց քոց... Հայր մեր, որ յերկինս:

ա. 117ա-9բ Աղապք արքայն Բարսեղի հայրա-
պետի – Գոհանամք զքէն, Տէ՛ր, Հա՛յր Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի, որ այցելեք... եւ մխիթարեա՛յ հոգով
եւ մարմնով, զի արժանի լիցուք փառաւորել զՀայր եւ
զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ, այժմ եւ միշտ:

11. 123բ-6բ Կանոնովն ետարն աւուրն – Երթա[ն]
ի գերեզմանն... Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ. Այս-
պէս ասէ Տէր՝ Հոգի յինէն էլցէ... զի դու ես, Տէ՛ր, դա-
տաւոր կենդանեաց եւ մեռելոց... վայել է փառք, իշ-
խանութիւն եւ պատիւ:

12. 126բ-37բ Կանոն եւ կարգ Տղայաթաղին –
Տո՛ւր ինձ՝ Ողորմեա՛ ինձ... եւ ապա ասէ գաղօթս. Աս-
տուած յաւիտեանական եւ թագաւորական... նորոգեսցի
սա արագաթոռիլ թեւաւք ընդ յառաջ Տեառն յաւուս,
զուարթ երեսաւք փառաւորելով զանմահ թագաւորու-
թիւնդ Հար եւ Որդոյ, Հոգւոյ:

13. 137բ-41բ Այգոյն է – Գայն ի գերեզմանն... Ըն-
թերցուած յԱռակաց. Բայց հոգիք արդարոց... այլ մեք
մխիթ[ար]եսցուք վասն միւսանգամ կենդանութեան եւ
յարութեամբ... վայել է փառք, իշ[խանութիւն]:

14. 141բ-4բ [Կանոն ետարն աւուրն] – Իսկ ի եւթն
աւրն երթան ի գերեզմանն... Ընթերցուած յԱռակաց.
Արդարքն յաւիտեան կացցեն... եւ փառաւորեն զգա-
լուատ քո յաշխարհս... փառաւորել զՀայր եւ զՈրդի:

15. 144բ-50բ Կանոնովն Հոգեհանգիստ առնելոյ կամ պատարագելոյ – Ասեն սաղմոս ի թիւ... Ընթերցուած յԱռակաց. Պատուեա՛ զՏէր... սա եղիցի մեզ կերողաց ի սրբութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց... անդադար գոհանալով փառաւորեմք:

16. ա. 150բ Կանոնովն Տեառնական արհնելոյ – Ածեն զնուիրեալսն ի դուռն եկեղեցոյն... եւ ասեն սաղմոս՝ Երանի, որում/// (շար. թափուած, 151ա-2բ՝ լրացնողի): բ. 151ա-2բ Կանոն Աղ արհնելոյ – Աստուած, ողորմեա՛ մեզ... եղիցի մեզ ի սրբութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց... անդադար փառաւորեսցուք զՀայր:

17. 153ա-5ա Օրհնութիւն Հատի Պատարագի կամ սեղանոյ մատաղի – Օրհնեցէ՛ք զՏէր, ամենայն ազի՛նք ... զի դու ես կեանք անվախճան եւ երանութիւն ամենայն մարդոց... Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի (153ա-5ա՝ լրացնողի):

18. 158բ-80բ Կանոն Զուր արհնելոյ – Յետ պատարագին երթան ի ջուրնարհնէք... Ընթերցուած յ[եղից]. եւ խաղացոց Մովսէս զորդիսն Իսրայիղի... եւ ապա արկանէ զսուրբ մեռոնն ի ջուրն... խաղաղութեամբ ի տունս իւրեանց արհնեալ Տեառն:

ա. 169ա-79բ Արհնութիւն Զրի, զոր ասացեալ է Բարսեղի Կեսարու սուրբ հայրապետին – Արհնեալ ես, Տէր Աստուած ամենակալ... եւ անուն քո կարդացուք զմեծ եւ զփառաւորեալ եւ զսքանչելի... Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

19. 181ա-200բ Կանոն Ոսնալուսին – Երեկոյին յետ Պատարագին... եւ ասէ զքարոզս զայս. եւ ես գոհութիւն եւ փառաբանութիւն... եւ արժանաւորեա՛ մեզ մաքուր հոգւով հանդիպիլ քեզ... միշտ եւ յաւիտեան:

20. 201ա-16բ Կանոնովն Նաւակատեաց պղծեալ տանարին ի յանարինաց, եւ թէ սեղան եւ շարժեալ իցէ՛ վերջստին հաստատեսցեն – Մտանէ եպիսկոպոսն... Աղալթք. Որ ունիս իշխանութիւն... եւ քաւեսցես զմեզս ժողովրդեան քում... զոր ետուր հարցն նոցայ:

21. 217ա-8բ Կանոն սկի ի մաղզըման արհնելոյ – Սաղմոս՝ Տէր հովեսցէ զիս... եւ ասէ զաղաւթս. Արհնեալ, Տէր Աստուած... եւ ապա տեառնագրէ սուրբ խաչին ասելով... յանուն Հար եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

22. 219ա-26բ Կանոն աւագան օրհնելոյ – Ունի սկիզբն փրկութեան... եւ ասէ զաղաւթ. Տէր Աստուած մեծ եւ փառաւորեալ... եւ ազատեսցին ի ծառայութենէ մեղաց սատանային... փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգի:

23. 226բ-8ա Կանոն արհնութեան զգետուց սրբութեան եկեղեցոյ – Զոր ինչ որ լինի... եւ եպիսկոպոսն ասէ զաղաւթս. Տէր Աստուած ամենակալ, ահաւոր եւ բարձրացեալ... առ զսակաւս ի նիւթականացս... այժմ եւ:

24. 228աբ Կանոն խունկ արհնելոյ – Ի վեր ունե-

լով քահանայն ասէ զաղաւթս. Ամենակալ Տէր Աստուած... այլ պարգեւեա՛ զմեզ շնորհն Հոգւոյդ Սրբոյ... փառք եւ իշխանութիւն եւ պատիւ, այժմ:

25. 228բ-9բ Կանոն արհնութեան նորագերտ զրոց – Տանին յեկեղեցին... եւ ասէ զաղաւթս. Արհնեալ ես, Տէր Աստուած մեր, որ ետուր մեզ զպատուիրանս... դու եղիցիս մեզ Աստուած... վայել է փառք, իշխանութիւն:

26. 229բ-32բ Կանոն զարմախ սերմանեաց եւ զղեղս արհնելոյ – Սաղմոս կցուրդ... Ընթերցուած յԱռակաց. Պատուեա՛ զՏէր... եւ մեք յանարատ ձեռաց քոց առեալ պարգեւս բարութեան... միշտ եւ յաւիտեանս:

27. 233ա-4ա Կանոն պղծեալ կերակրոց, թէ ո՛ր տէ ի քրիստոնէից տանկազն կամ ի զոհից հրէից կամ հեթանոսաց – Ասեն սաղմոս Ծէ... եւ եպիսկոպոսն ասէ զաղաւթս. Տէր Աստուած մեր, որ սուրբ ես... եւ բնութեամբ անօրինացն ճաշակեաց... փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի [եւ զՍուրբ Հոգի]:

28. 234բ-9բ Կանոն եւ աղալթ՝ յորժամ առ հիւանդս երթան, այսպէս արասցեն – Ասեն սաղմոս... Աւետարան Մաթէոսի. եւ մտեալ ի Կափառնայումն... եւ ասէ զաղաւթս. Տէր ամենակալ, Աստուած արարիչ... եւ հեռի արա՛ զսատանայ... այժմ եւ միշտ:

Ստ. լս. ներում կանոնների համառոտ անուանումները:

Բ. 239բ-86բ Կարգ եւ կանոն հանգստեան ննջեցելոց գերեզմանի օրհնութեան՝ կարգաւ շարական ըստ ուրբն ձայնիցն, հանդերձ Աւետարանօքն իւրեանց – Շարական ԱԶ ասա՛ հանգստեան. Ձայն արկեալ կենարարին... Քարոզ Սուրբ խաչիւս, աղօթք Պահպանեա՛, Հայր մեր, որ յերկինս (240ա-86բ՝ լրացնողի):

Գ. [Գրութիւնի հաշատուր դպրի՝ ի վերայ Պանպանակի, 1823 թ.. կարգալ՝ 294ա-291ա] – «/// եղեւ փոքրիշատէ իմանալն իմ ըստուգաբանութեան նորին: Խնդրեմ այսուհետեւ շառնել զայսպիսի գրութիւն յիմ վերա... »: 293բ-292ա «/// ի բարեմիտ կացութեամբ յամառեցեալ աւագագոյն եղբօր իմոյ, գերիմաց տիրացու Խաչատուրիդ, ողջոյն... », 293ա «/// շատով կարգեցաք չորրեակ նիւթով... »:

ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

200բ ՈՎ սուրբ ընթերցաւ, յորժամ առնես զՈսնալուսին՝ եւ զանպիտան գիրիչս յիշել աղաչեմ, եւ Աստուած զմեզ յիշէ իւր միւսանգամ գալըստեանն. ամէն:

287ա Փա՛ռք ամենասուրբ Երրորդութեանն՝ Հար եւ Որդո եւ Հոգւոյն Սրբո. ամէն: Փա՛ռք ապեն[ի]ազ բարերարին, որ ետ կարողութիւն տկար անձինս իմոյ հասանել այսմ աւարտ գրոյս՝ Մաշտոց կոչեցելոյ: Արդ, գրեցաւ զսա ձեռամբ փծոյն եւ անիմաստ գրչի՛ |.: |. |||.: |. |||: |.: («Գայանէ») կոչեցելոյ, ի յերկիրն Աղբւանից, ի գեաւաղաքաղաքն Աւետարանոց, ընդ հովանեաւ Սուրբ եկեղեցոյս Յարութիւն կոչեցելոյ, ի թվա-

բերութեան հայոց տաւվմարի Ռ. եւ Դ. երրորդի (1641) ամի, եւ յիշխանութեան Պարսից Փոքր շահ Ապագին, եւ ի կաթողիկոսութեան Էջմիածնի տեառն Փիլիպոսի, եւ |287թ| Աղվանից տեառն Գիրիգորի, եւ հայրապետութիւն մերոյ գաւառի Յոհանէս եպիսկոպոսի: Արդ, երեսս անկեալ աղաչեմ զամենեսեանսդ՝ որք հանդիպիք սմա կարգալով կամ արինակելով, յիշեսջիք ի մաքրաշփալ աղաւթս ձեր, զի թերեւս թողութեան արժանացոյց սրբիլ աղտոյ եւ թարախո եւ որգնալից վիրաց, եւ գերծանիլ ի բազմաբեռն շարեաց, թեթեանալ եւ դասիլ ընդ աշխատողսն բարեաց: Դարձեալ աղաչեմ զձեզ յիշել ի յաղաւթս ձե[ր] գըրրտնաջան եւ բազմաերախտ եւ զքաղց[ր]ագութ հոգեւոր հայրն |288ա| իմ տէր Առաքելն, որ բազում աշխատութեամբ սնուց զիս խրատու եւ ուսմամբ Սուրբ գրոց, ընդ նմին եւ զհարազատ քոյրն իմ՝ զհոգեւոր ծնողն Հրոփսիմէն, որ մանկութեամբ դաստիարակեաց զիս, եւ հասարակ միաբանք սուրբ ուխտին, զոր Տէր Աստուած անփորձ եւ սասան պահեսցէ մինչ ի խորին ծերութեան. ամէն:

288ա (Ստացողի) Կամաւ անեղին, ես՝ Պարոնց Զանումս, առա զսուրբ գիրքս, որ կոչի Մաշտոց, ի արդար վաստակոց իմոց, ետու ի ձեռն Մարտիրոս քահանային՝ յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց, հօրն իմոյ՝ Պապին եւ մօրն՝ Մանպուպին, եւ կողակցին իմոյ՝ |288բ| Շահումին, եւ որդոց եւ դստերաց իմոց եւ ամենայն արեան մերձատրաց: Ով ոք հանդիպիք սմա կարգալով կամ օրինակելով, յիշեսջիք զիս յաղաւթս ձեր եւ ողորմի ասացէ՛ք ինձ, նոյն ողորմի լիցի ձեզ. ամէն: Դարձեալ՝ ով ոք զայս գիրքս ի ձեռաց տէր Մարտիրոսին առնուլ կամենա, եթէ՛ որդոց իմոց, եթէ՛ աւտարաց, երեսաց Տեառն անկեալ լիցի արհել դատաստանին. ամէն:

Տե՛ս ժէ. դ. յիշ-ք, Գ., էջ 14:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 1ա (1823 թ., շղագրանման նոտրգիր, սկ. տե՛ս խորագիրը՝ 1ա) Զոր ի յառաջմէ գրեալ յումեմնէ գծա-

գրողէ Աղուանցոյ, բայց թերի եւ անկատար, իսկ այժմ գրութեամբ լրացեալ եւ վերստին նորոգեալ յումեմնէ նուաստ դպրէ Աղուանցոյ՝ Խաչատուր կոչեցելոյ:

2ա (շղագիր) Տէր Խաչատուր Գիրգորեան:

155ա Զվերստին նորոգող գրքոյս՝ զամենամեղ տրուպ Խաչատուր դպիրս, յիշեա՛ ի Տէր:

289ա Արդ, վերստին նորոգեցաւ Մաշտոց կոչեցեալ գիրքս ձեռամբ յետին եւ փժուն, նուաստ Խաչատուր դպիր Աղուանցոյ, ի ՌՄՂԲ. (1823) թվին, ի հայրապետութեան տեառն Եփրեմի սրբազան սուրբ կաթողիկոսի Ամենայն Հայոց, եւ առաջնորդութեան սրբազան Սարգսի արհիեպիսկոպոսի, ի Զաքարդ գաւառի, ի դրան սուրբ ուխտին՝ Իննմասն կոչեցելոյ: |289բ| Քանզի տեսանելով մեր զպիտանացու գիրքս զայս, եւ զաշխատանս գրողի սորին, յիրաւի ցաւեցեալ մեր զբազում ցաւս, զի կայր անկեալ ի ձեռս անշքաց, եւ անպատիւ եղեալ: Եւ մեր զայս նկատեալ, ի վեր առաք, եւ զթերին սորին նորոգ գրութեամբ լցուցաք, որպէս բունքն լիովին, նոյնպէս եւ սա շունի պակասութիւն: Վասն որոյ աղաչեմ զհանդիպողսդ՝ յիշել զի[ս]՝ վերոյիշեալ անարժան իբր տիրացու Խաչատուրս ի մաքուր մաղթանս ձեր՝ հանդերձ իմայնովքն, եւ դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի՝ Տեառն մերոյ. ամէն:

2. Կագմի Ա. փեղկին փակցուած տպագիր պիտակի վրայ. «Նորին վեհափառութեան տեառն տեառն Գեորգայ Գ.ի՝ երկնապարգեւ հայրապետի եւ պաշտպանի հայկեան մատենագրութեան, նուէր ի խոնարհ ծառայէ Համազասպ քահանայէ Տէր-Աւետիքեանց: Հ՞մ՝ 14-13, 14 Սեպտեմբերի 1880 ամի, ի Շուշի»:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1բ, 155ա, 282բ, 289բ «Քրիստոսի ծառայ տիրացու Խաչատուր, 1823»:

ԳՐԶԱՓՈՐԶ՝ 52ա. ստ. լս. «Սուրբ խաչիւս աղ՛. պահպանիչ եւ յոյս. Հայր մեր որ յեր՛»՝

ՆՇՈՒՄ՝ Ա. կազմաստառին փակցուած թղթին. «ՌՂ. - 1641, Մ[եարոյ] եպ[իսկոպո]ս»:


2405

Մ Ա Շ Տ Ո Յ Ձ Ե Ռ Ա Յ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Գրի՞՞ եղիպար:

Թերթ՝ 179. շգրուած՝ 1բ, 3ա: ՊՐԱԿ՝ Ա-ԺԶx12 (Ա. 13, Գ չիք, ԺԶ 10): Նիտի՞ մագաղաք: ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 12x8,8: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (8,5x5,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 38ա): ՏՈՂ՝ 17: ԿԱԶՄ՝ դրոշմագաղ շագանակագոյն կաշի, դռնակով, միջուկը տախտակ. աստառը կապոյտ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 (Ա-Բ), մագաղաք (վերջից):



Նմուշ 38ա

ՌՂԵ. - 1646

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ - Կ ի ս ա խ ո Ր ա ն ՝ 4ա: Լ ու ս ա ն - ց ա գ ա Ր դ ՝ բուսական, կենդանական, թռչնային, խաչ (134բ): Զ ա Ր դ ա գ ի Ր ՝ թռչնագիր, ձկնագիր (4ա), հանգուցագիր: Գ ո յ - ն ե Ր ՝ կարմիր, կապոյտ, նարնջի, շագանակագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի եզրերը՝ մաշուած. միջից եւ վերջից պակասատու, լուսանցներում խոնաւութեան նեւեր, տեղ-տեղ՝ գունաթափ, պհպ. Ա.՝ մեծ մասամբ պատռուած, լուսանցակողերը գունաթափուած:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1ա (խորագիր՝ ձեռամբ Մեարոյ եպս. Սմբատեանցի) Մաշտոց ֆանանայի. գրեալ ի թուփն հայոց ՌՂԵ.

(=Ե., 1646), ի Տիգրանակերտ քաղաքի, ընդ ձեռն եղիազար գրչի:

2ա [Յանկ մատենիս] – Ա. Վասն Մկրտություն... ԺԹ. Վասն սկիհ եւ մաղզման արհնելոյ:

1. 2բ-25ա Ա. Կանովն մկրտութեան – Յորժամ քրիստոնեա առնեն, նախ չէ պարտ յեկեղեցի թողուլ... եւ քահանայն ասէ զաղօթս. Տէր Աստուած մեր, Աստուած բարերար... որք մկրտեցան եւ լուսաւորեցան. եւ ետուր զսրբութիւն քո:

2. 26ա-40բ [Բ. Վասն Պսակ առնելոյ. ցանկից] – (սկ. թափուած) /// եւ եղիցին երկոքեան ի մարմին մի... փոխէ յաջ կողմ փեսային:

26ա Վր. լս., յետագայի գրչութեամբ. «Թերթք պսակին պակասէ»:

3. 40բ-2ա Գ. [Վասն Պսակ վերացնելոյ. ցանկից] – Իսկ յետ է. աւուրն ի Ը.ն լինի վերացումն թագին... եւ ասէ զաղաւթս. Տէր Աստուած մեր, որ յամենայն ժամ... եւ յար Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... պատիւ, այժմ:

4. 42բ-8ա Գ. Կանոն Հաղորդ տալոյ – Առնու քահանայն զփրկական խորհուրդն... եւ ասէ քահանայն զաղաւթս. Տէր Աստուած ամենակալ, ամենագութ... առ ի գտանել մեզ զողորմութիւն առաջի քո:

5. 48ա-79բ Ե. Կանոն, յորժամ զամենայն ննջեցեալսն ի Քրիստոս յուրարկեն – Ասեն սաղմոս Ծ.՝ Ողորմեա՛ ինձ, Աստուած... եւ քահանայն ասէ զաղաւթս. Աստուած յաւիտենական, անսկիզբն, անեղ... ասեն Հայր մեր եւ զնան խաղաղութեամբ:

6. 80ա-7բ Զ. Կանովն Երկրորդ աւուրն. Այգալացն – Երթան ի գերեզմանն եւ սկսանին շարական ԴԿ... Պաւղոսի առաքելոյ թեսաղոնիկեցոց. Այլ մեք պարտեմք գոհանալ... ըստ անեղծ փառաց քոց, Քրիստոս Աստուած մեր... այժմ:

7. 87բ-91բ Է. Կանովն Է. աւուրն, եւ ԺԵ.ին, ամսոյն եւ տարելցին, եւ յամենայն կիրակմտի – Գան ի գերեզման ննջեցելոցն... Ընթերցուած Յիսայայ մարգարէէ. Այսպէս ասէ Տէր... մեզ արժանի արա՛ յարազուարճ բերկրանաւք արհնել զքեզ... այժմ:

8. 92ա-107բ Ը. Կանոն ամենայն վախճանեալ տղայի – Որժամ ամենից ի վայր լինի, ասեն սաղմոս... եւ ասէ զաղաւթս. Սո՛ւրբ ես, Տէր Աստուած մեր... սրաթոխ թեւաւք ընդ առաջ Տեառն յաւր... այժմ:

9. 107բ-11բ Թ. Կանովն Երկրորդ աւուրն – Այգոն գան ի գերեզմանն եւ ասեն սաղմոս... Ընթերցուած Յիսայայ մարգարէէ. Զի ի Տեառնէ եղիցի դարձ արդարոց... եւ ամենայն ընտրելոցն ի Քրիստոս Յիսուս... փառք, իշխանութիւն:

10. 111բ-9ա Ժ. Կանովն Ոգեհանգիստ առնելոյ եւ կամ պատարագ մտելոյ – Ասի սաղմոս՝ Երանի, որում թողութիւն... եւ ասէ զաղաւթս. Որ դատաւորդ ես կենդանեաց... Գ. անգամ կրկնեա՛. Յիշեա՛, Տէր, ողորմութեամբ:

11. ա. 119ա-29բ ԺԱ. Կանովն Տեառնակամի արհնելոյ – Աձեն զխոստացեալն եւ զնուիրեալն... եւ ասէ զաղաւթս. Արհնեալ ես, Տէ՛ր Աստուած ամենակալ... հատուցանել ըստ գործոց իւրաքանչիւրոց. եւ քեզ վայել է:

բ. 129բ-30ա Արհնութիւն աղի – Արհնեալ ես, Տէ՛ր Աստուած ամենակալ... Արհնեա՛, Տէ՛ր, ողորմեա՛:

12. 130ա-4ա ԺԲ. Արհնութիւն Հատի պատարագի – Գոհանամք եւ փառաւորեմք զքեզ... ի փրկութիւն անձանց մերոց, բարեխաւուրեամք ամենայն սրբոց... զՍուրբ Հոգին:

13. 134ա-53ա ԺԳ. Կանովն Խաչ արհնելոյ – Տանին յեկեղեցին եւ լուանան նախ ջրով, եւ ապա՝ գինով... Ընթերցուած յԱռակաց. Երանեալ է այր, որ եգիտ... եւ կատարեա՛ զաղօթս աղաչանաց սոցա եւ արժանաւորեա՛ փառաւորել... այժմ:

14. 153ա-71բ ԺԴ. Կանովն Զուր արհնելոյ – Յաւուր Յայտնութեան Տեառն մերոյ... Ընթերցուած յԵղից. եւ խաղացոց Մովսէս զորդիսն Իսրայիլի... զի նախատօնակ է Յովհաննու Մկրտչին:

15. 171բ-4բ ԺԵ. Կանովն զԵրմանիս, եւ զարմտիս, եւ զՂեշս արհնելոյ – Սաղմոս. Հովիտք բազում... Ընթերցուած յԱռակաց. Պատուեա՛ զՏէր ի քոց արդար վաստակոց... մեծապէս պարգեւս բարութեան... Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյ:

16. 174բ-6բ ԺԶ. Կանովն խաղող եւ հնձան արհնելոյ – Սաղմոս. Քեզ վայել է... եւ ասէ զաղաւթս. Արհնեալ ես, մարդասէ՛ր Աստուած... զի հասեալ են հունձք:

17. 176բ-7բ ԺԷ. Կանովն մրգաց արհնելոյ – Ասեն սաղմոս. Ի կարգալ իմում... եւ ասէ զաղաւթս. Արհնեալ ես, Տէ՛ր Աստուած... ըստ իւրաքանչիւր պիտոյից... զՀայր եւ:

18. 178աբ ԺԸ. Կանովն հանդերձ եւ զգեստ արհնելոյ – Տանին յեկեղեցին... եւ եպիսկոպոսն ասէ զաղօթս. Տէր Աստուած բարձրեալ... ի հանդերձելումն զողորմութիւն քո մեծ... զՀայր:

19. 178բ-9ա ԺԹ. Կանովն սկիհ եւ մաղզման արհնելոյ – Բերեն յեկեղեցին... եւ եպիսկոպոսն ասէ զաղօթս. Արհնեալ ես, Տէ՛ր Աստուած մեր... եւ մեզ արժանի արա՛ պաշտել զքեզ... այժմ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

179բ Փա՛ղք ամենասուրբ երրորդութեան եւ միասնական տէրութեան եւ ինքնիշխան թագաւորութեան՝ Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. այժմ եւ յանեզր հանդերձալ յաւիտենին. ամէն: Որոյ ամենակարող զօրութեամբ նորին եղեւ սկիզբն սուրբ գրոցս, որ կոչի Մաշտոց, եւ ողորմութեամբ նորին էառ զլրումն եւ զկատարումն: Արդ, եղեւ աւարտ լրման սորա ըստ հայկազեան տուժարիս ՌՂԵ. (1646) ամի, ի քաղաքս Տիգրանակերտ, որ եւ Համիթ վերակոչի, ընդ հովանեաւ Սրբոյն

Կիրակոսի, եւ յօրն նորա՝ Յուդիաայի, ձեռամբ գառածեալ, անարհեստ, սուտ եւ փուտ գրչի՝ Եղիազարի // (Թափուած):

Տէս ԺԷ. դ. 117-ք, Գ. էջ 212:

ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 3բ (1882 թ., շղագիր) Զայս Մաշտոց նուիրեցի մեծի գրատան Սուրբ Էջմիածնի ի 1 Յունվարի 1882 ամի, ի հայրապետութեան Ամենայն Հայոց Տ[եառն]

Տ[եառն] Գեորգայ Գ. մեծագործ եւ ազգասէր կաթողիկոսի: Մետրովբ եպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի (նման՝ 25բ):

2. 3բ (Սահակ վ. Ամատունու ձեռքով, ԺԹ. դ., շղագիր) Եթէ չէ քո գողացեալ զսա ի Մատենադարանէ, ընդունիմ եւ ես զնուէր քո սուրբ:

3. 25բ (ստ. լս., ԺԹ. դ., շղագիր) Կիրբ եւ լսիրը: ՆՇՈՒՄ 1ա «Հ^ր 518»:


2406

ՄԱՇՏՈՅ ԶԵՌԱՑ


ԿԱՅԱ

ՄՏԱՅՈՂ՝ Միջայի առց.:

Թերթ՝ 130. չգրուած՝ 3բ: ՊՐԱԿ՝ 2+Ա-Ժx12 (Գ, Ը 13)+6: ՆԻԻԹ՝ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 8,2x5,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (6,5x3,5): ԳԻՐ՝ նոտրգիր (յակագրողի՝ 1ա-3ա, 91աբ, 112բ, 124ա-30բ. նմուշ՝ 7ա, 126բ): ՏՈՂ՝ 19: ԿԱԶՄ՝ դրոշմագաղղ շաղանակագոյն կաշի, իւրամանչիւր փեղկին 1 իաշ (Ա. փեղկինը՝ կանաչ ակով), միջովը տախտակ, աստաղը կապոյտ կտու. լուսանցակողերը՝ կարմիր:



նմուշ 7ա



նմուշ 126բ

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻԻՆ – ձ ա կ ա տ ա գ ա ռ դ՝ 5ա: Լ ու լ - ս ա ն ց ա գ ա ռ դ՝ բուսական: Զ ա ռ դ ա գ ի ռ՝ հանգուցագիր: Գ ո յ ն ե ռ՝ կարմիր, վարդագոյն, կապոյտ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի եզրերը թեթեւակի մաշուած, մէջքի կաշին բայխյուած, թափուած, կապիչներն՝ ընկած, լուսանցակողերը գունաթափ. լուսանցներում խոնաւոյթեան հետեւ, վերջին թերթերին՝ փոքրիկ պատռուածներ, տեղ-տեղ գիրը ջնջուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

– 4ա [Յանն մատենիս] – Ա. Կանովն մկրտութիւն առնելոյ... Ի. Երկրորդ պսակ առնելոյ:

1. 4բ-20ա Ա. Կանովն մկրտութիւն առնելոյ – Նախ ասեն. Արհնեալ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ... Եւ քահանայն ասէ զաղօթս զայս. Տէ՛ր Աստուած մեր, Աստուած՝ բարերար, որ զվրիպեալսն եւ զհեռացեալս... Քարոզ Սուրբ խաչիւս: Աղօթք Պահպանեա՛:

2. 20բ-1ա Բ. Կանովն նշան աւրհնելոյ – Զամենայն զգողութեամբ հարցաքննէ քահանայն զկողմ յազգականութեան... Սուրբ խաչիւս, Պահպանիչ:

3. 21ա-32բ [Գ. Պսակ առնելոյ. ցանկից] – Եւ առնու քահանայն զփեսայն եւ երթայ ի տուն հարսինն... Ընթերձուած ի Մննդոց. Եւ ասաց Աստուած. Արասցողք մարդ ըստ պատկերի մերում...:

ՌՃՂԳ. – 1745

ա. 32աբ Տաղ ի վերայ թագաւորի – Ամենազօր Տէ՛ր, թագաւոր թագաւորաց / Թագաւորիս մեր զգեցո՛հանդերձ փառաց... Եւ զքահանայս ժողովրդեամբըս միաբան մաքրեա՛ յաղտից... Հօրն լուսոյ եւ Քրիստոսի, Հոգւոյն Սրբոյ, ամենազօր թագաւորի:

4. 33աբ Գ. Պսակվերացին է – Եւ աւուրն երրորդի վերացուցանէ քահանայն զպսակն... Եւ ասէ զաղօթս զայս. Տէ՛ր Աստուած ամենակալ... զի կացցեն ամբիձք եւ անարատք յայսմ աշխարհիս... այժմ եւ:

իե. 240բ-6ա ԻԵ. [Բան]. Բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յայն հանգիստ... [Լուծումն]. Ամենայն իրաց ժամանակ է... ժառանգդ լինել ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որում վայել է փառք, իշի՞:

իզ. 246բ-51ա ԻԶ. [Բան]. Եւ էր ոմն աշակերտ յեփ[եսոսի] վկայեալ յամենայն եղբարց... [Լուծումն]. Ի պատհանէ անկմանն Ադամայ... եւ այնմ կենացն հաղորդս լիցո՛ք. շնորհօք եւ մարդաս՞, որով եւ ընդ Հ՞:

Իէ. 251բ-9բ Իէ. [Բան]. Եւ ասէր Պաւղոս[ւ]. Պարտ էր չարչարիլ... [Լուծումն]. Ճշմարիտ վարդապետի յատկութիւն է... եւ հայեսցում ի նա ուղիղ հաւատով եւ կենդանացում հոգով ի փառս Հօր իւրոյ եւ Հոգւոյն Սրբոյ, որով եւ ընդ որում յամենայնի յափտեանս փառաւորեսցի Տէր մեր. ամէն:

Իբ. 259բ-65բ ԻԲ. [Բան]. Եւ էլ Պաւղոս[ւ] եւ երեկ գհացն... [Լուծումն]. Քանզի սահմանեցաւ յեկեղեցիս Աստուծոյ... [ար]ժանի եղիցում փառաւորել զՀայր եւ զՌդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յա՛մ:

Իթ. 265բ-73բ ԻԹ. [Բան]. Եւ ի[ջ]եալ ի Հրէ[ա]ստանի մարգարէ ոմն, անուն Ագաբոս... [Լուծումն]. Գիտութիւն Սուրբ Գրոց... ժառանգորդս արասցէ Քրիստոսի Յիսուսի Տերամբ մերով, որով եւ ընդ որ՛ Հ՛ միան՛:

Լ. 273բ-9բ Լ. [Բան]. Ե[ւ] յետ ամսոց երից եկն Բահանայապանն հանդերձ հար[տ]արախօսաւ Տերտեղոսաւ... [Լուծումն]. Թագաւորին երկու իրս հարկ է լինել... եւ արժանի արասցէ երկնից արհայնութեանն ի Քրիստոս Յիսուս, որ է արհնեալ յ՛:

Լա. 280ա-6ա ԼԱ. [Բան]. Իբրեւ հրամայեցաւ մեզ նաւել յԻտալիա... [Լուծումն]. Երանելին Պաւղոս[ու] գրէ... եւ խոստացեալ բարեացն ժառանգորդ լից[ոմ] ի Քրիստոս] Յիսուս Տէր մեր, որով եւ ընդ որում Հար... ամէն:

286բ Ի սպառել ազգիս հայկազեան եւ ի[ր] վերջին դարուն սառուցեալ ոգոց տարածամ կ[որու]սելոց մեծի եւ փոքու եւ ի ստարասուզեալ դասուն քահանայական եւ ի հարեալ ժանեաց բանասարկուին, յամս թուին ՊԿ. (1411), ի բռնակալութեան ազգին թորգոմեան, որ յետին գազան հանդիպեալ դանիելականն, որ ուտէր եւ մանրէր զիւրան եւ զատարան, ո՛չ յայտնի գոլով առաջնորդին եւ հնազանդին, այլ հաւասարեալ կորստեամբ եւ շարեաւք առաւելեալ, որ եւ յիշել ետ զառաջին շարիսն Թամուր կոչեցեալ Կաղին եւ ի նոյն վտանգի գորով յետոյ ամենայնի հարեալ զՎատնի արեան դաշտն եւ կալաւ զտէր նորա եւ սպան զթագաւորն վրաց Կոստանդին եւ զբազումս գերի վարեալ յայսմ դառնութեան ժամանակիս, եւ՛ նուաստ եւ խեղդամահ ի մեղս Մաթէ[ոս] յետնեալս յիմաստից եւ տգէտս ի գիտնականաց եւ մնացեալս որբ ի յիմ հարազատագոյն հարանց հոգեկանաց եւ մարմնականաց, որ եւ յայսմ ամի եղեւ զբաւ կենաց մեծ բաբունոյն իմոյ Գրիգորի՛ յիշատակին մեծի հօրն Յոհանու Ռոռունեցոյ, որոյ սուգն պաշարեաց զիս եւ ետ մոռանալ զառաւրեայ կենցաղս, վասն որոյ տատանեալ կենօք ձեռնարկեցի հաւաքել զբանս սուրբ հօրն մերոյ Ոսկեբերանի եւ Եփրեմի: [Եւ] զոր ինչ պարգեւեաց Հոգին Սուրբ, ի խնդրոյ հարազատ եւ սիրեցեալ եղբար մերոյ Յակոբայ վարդապետի, յորոյ սիրոյ հարեալ, յա[ն]ձն առի զմեծ աշխատանքս զայս, որ ոչ էր իմ կարողութիւն, այլ ի չգոյէ առն, եւ ի հասեալ ժամու անտէրունջ գոլով եւ ի

խնդրոյ սրբազան եղբօրն մերոյ սկսայ շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ եւ ողորմութեամբ նորին կատարեցի:

Արդ, աղաչեմ զհանդիպողս սուրբ գանձիս, մտադիրութեամբ ընթեռնու եւ զաւելորդն կշռել եւ պակասութեանն ներել, զի ոչ միայն զիւրն հոգացաք Աստուծով, այլ եւ զնմանակից բանին, որ ի հոմանունութենէ յայլ եւ յայլ գրոց առնթեր միմեանց եղի՛ առ ի դիւրագիւտ լինել աղքատ մանկանց իմոց եւ բեմբասացութիւնս եւ ի [կ]արգ զրուցաց հրապարակաց բանին: Եւ այս՛ դառն եւ տաժանելի կրիւք, քանզի ոչ ունէի զարժանաւորութիւն Հոգւոյն, որ դիւրաւ մտածէի, այլ ժտելով եւ շարչարանք |287ա| տկարս ոգոյ ի լոյսէ ած Աստուած Հոգին առ ի լցուցանել զփափագող սորին, վասն որոյ աղաչեմ խնդրել զթողութիւն բազմավէպ յանցան[աց] իմոց՝ [թ]երեւս իջցէ աղաւթք մաղթանաց եւ ողորմութիւն փրկչին ի շարաւալի ոգիս իմ եւ լուսացէ զաղտ հնութեան մեղօք մեռելոյս, եւ արժանացուցէ ողորմութեամբ [մաս]ին սրբոց եւ կարգեա[ց]է ընդ յետին մշակաց[ն]: Այլ եւ երջանիկ հօրն մեր[ոյ Սար]գիս վարդ[ապետի]ն յիշատակ ի սմա եղիցի, զի պատճառ եղեւ մերոյս գծա[գ]րութեանն, քանզի նա կանխաւ համառօտեալ էր զսա, եւ մեք նորին [շ]աղագն հետեւեցաք: Այլ եւ անմե[ղ]ադիր լինել աղաչ[ե]մ, զի դառնութիւն ժամանակի[ս] եւ աղճատանք շար խորհրդոց շփոթեալ աղտեղացուցին զհոգի եւ զմարմին իմ, մանաւանդ՝ ծուլութիւն անգութ եւ անհնազանդ աշակերտաց վիրաւորեցին զիս, եւ յաւէտ վիշտք ի սուտ եղբարց, որք անհրաժեշտ վատթարութեամբ դառնացուցին զիս, վասն որոյ եւ ոչ կարացի զբովանդակն մակազրել, այլ զսակաւս ի բազմաց գրեցի առ ի յիշատակ մանկանցդ եկեղեացդ Հայաստանեայց, վասն որոյ գրեսչիք զյիշատակութիւնս իմ ի վերջք գրոցս, որք գաղափարէք, զի եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոս յափտենական կենաւք: Եւ որ յաշաղենն եւ հակառակինն, առցեն զնոյնն, զոր եւ արարինն, իսկ կատարողք աղաչանաց մերոց արհնեալ լիջին ի Քրիստոս Յիսուս Տէր մեր:

Այլ եւ սովորութիւն է բնական մերոյս ազինս յաւտար ազգաց իմաստից բանին ցանկալ եւ որոնել, թէեւ կարի յետնոց է արարեալ եւ զնոյն ընթեռնու եւ զիւրոյ հօր թէեւ կարի մեծացէ աշխատեալ ոչ ընդունել, վասն որոյ աղաչեմ մի՛ զանմտութիւնս այս ի գործածել, այլ ընդ աւտարացն եւ զքոյսս սիր[ել եւ] մեծարել եւ կամակար մտաւք ընթեռնու, [զի լիցի] ձեզ թերեւս հասանել յափտենական գիտ[ութեանցն], մտանել յանգրաւական գիտութիւնն ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որ է արհնեալ ընդ Հօր իւրում եւ Սուրբ Հոգոյն այժմ եւ մ՛:

Տե՛ս ժե. դ. յիշ-ք, Լ., էջ 119-21:

Գ. 287բ-94ա Նորին Մաթէ[ոսի] աշ[ակերտի] ներ-

բողեան ողբերգաբար ոգեալ ի թաղումն երջանիկ
 րաբունապետինն Գրի[գոր]ի, ընդ նմին եւ յիշատա-
 կել [գողը]ս լալեաց կոտորածին, որ ի Վրաց տուն, ի
 Փայտակարան քաղաքի, քանզի պատկեր աւուրցն մի
 դիպեցաւ, մանաւանդ ի հրաշագեղն Կարապետ եղ-
 բայր իւր — Ո՞վ տայր զմ[ա]հ իմ փոխանակ մահու քո...
 [ձոյ]ածուի եւ խաւարային բանդէս ի յիւր սքանչելի
 լ[ոյս]: Եւ մեք, ձեաւք հանդերձ փառաորեսցուք զՀայր
 եւ զՈրդի եւ զՍուրբ] Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւ՛:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ. ԺԸ. դար, նոտագիր

ա. 1բ-2բ հրատ հոգէջան, գոր ասացեալ է սրբոցն
 Աստուծոյ — Արար Աստուած զմարդն հոգի եւ մար-
 մին... եւ գանձս անվնաս ի թշնամոյն:

*Մարդու զգայարանների եւ անդամների դերերի մասին՝
 ալլաբանորէն:*

բ. 74ա Պատմութիւն խոզի ի պէտս մարդկան —
 Արդ, խոզն է դեղ ամէն ցաւի... եւ թողդի կոշի (Ընդա-
 մենը 5 տող):

ՅԵՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄՆԱԿԻ

73ա Տէս Բովանդակութիւն. 73աբ, 286բ-7ա

153բ Զաշխատող բանին եւ զգծող զՄաթէ[ոս] սու-
 տանուն մոնագնս աղաչեմ յիշել ի Տէր եւ անմեղադիր
 լինել, զի այսչափ կարացի:

Տէս ԺԳ. դ. յիշ-բ, էջ 592:

ՅԵՇԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

3բ (բոլորգիր, ժՁ դ.) Զվերջին ստացող քաղուածոյ
 Աւետարանին Դուկասու Ծայրեցի Յոհանէս վարդա-

պետս յիշատակ հոգոյ իմոյ եւ կրկնակի ծնողացն իմոց
 եւ բազմերախտ ուսուցչին իմոյ Յոհանէս մեծ րաբու-
 նապետին: Որք հանդիբիք ի սմայ, լի բերան Աստուած
 ողորմի ասացէ՛ք, եւ Աստուած զձեզ ողորմեսցի իւր
 միւսանգամ գալստեանն. ամէն:

ՅՁբ (նոտրգիր, 1718 թ.) Պատճառ գրոյս այս է, որ
 Ռեճիկ. (1718) թվին, մարտի Ե., Լուսնի ԺԳ., Լուսինն
 խաւարեցաւ մինչեւ երեք ժամն: Այնպէս զարհուրելի
 եղեւ, որ մարդ երեսն չկարէր նայիլ, վերայ գալիքն Ա-
 ստուած գիտէ: Ծրեցաւ/// (անուներ ջնջած) վարդա-
 պետէ:

ԳՐՁԱՓՈՐՁ 1ա (նոտրգիր) «Եղաւ եաղօք եթալ
 գիրիչայփորձ: Ի սկզբանէ արար Աստուած զերկիսն եւ
 զերկի եւ երկ: արգ ծառ ար հառաչհառմասթ: Ես հաւա-
 տամ ամէնայսուրբ: Եսայիս գ»: 294բ (բոլորգիր) «Ես
 ասացի զարմանալ»: «Աւերեցաւ աթ»: «Հաստատու-
 թիւն իմ լէ՛ր, Տէր եւ յուս փրկութեան, որ շար»: 295ա
 (նոտրգիր) «Իմաստոս/// զօգուս/// ըստ Տեառն/// զաշ-
 խարհս շահ/// ց/// ենն իւր տուժեսցի սէր յիս պտղեալ
 մարմին մեղքն թողացուցեալ»: «Աբգ Եսայիս գիր»:

ՆԿԱՐԱՓՈՐՁ 294բ ճակատագարդ:


ՆՇՈՒՄ՝ 1ա՝ «2^ր 2519» (սեւ մատիտով), «ԺԵ.,
 Մ[ետրոյ] եպ[իսկոպո]ս»: 16ա (ստ. լս.) «2519ից»
 (սեւ մատիտով), Գա-ին սոսնձուած թղթի վրայ, մեքե-
 նագիր. «Վերակազմուած է հին ու նոր կաշիների միա-
 ցումով: Գլխ. վերականգնիչ՝ Ա. Խաչատրեան, Երեւան,
 196[1-]»:

2520

Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

ՁԾԵ. — 1306

ԳՐԻՁ, ՄՏԱՅՈՂ՝ Յոհանէս Երզնկայեցի:
 ԹԵՐԹ՝ 344+1 (կրկն՝ թ. 80). չգրուած՝ 12աբ: ՊՐԱԿ՝ 12+Ա-
 ԻԸx12 (ԻԱ 9, ԻԲ 10, ԻԳ 14, ԻԴ 13): ՆԻԻԹ՝ թուրք: ՄԵՄՈՒԹԻՒՆ՝
 16,8x12,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (13,7-14x9,5): ԳԻՐ՝ բոլորգիր
 (նմուշ՝ 51ա): ՏՈՂ՝ 26 (1գ-291բ), 28 (292ա-344բ): ԿԱԶՄ՝ դրոշ-
 մագարդ շագանակագոյն կաշի, դոնակով, միջուկը տախտակ,
 աստառը վանդակագարդ կտաւ, դոնակինը՝ կապոյտ կտաւ. լու-
 սանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1 (Գ) սկզբից, չգրուած
 թուրք. լուսագծերով:




Նմուշ 51ա


ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ — զձանկարային. ճ ա կ ա տ ա -
 գ ա ր դ՝ 1ա, 13ա, 256ա: Լ ու ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական,
 թոչնային: Զ ա ր դ ա գ ի ր՝ բուսական, հանգուցագիր, թոչնա-
 գիր: Գ ո յ ն ե ՚ կ արմիր:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ — 2 (Ա-Բ.) + 2 (Գ-Ե.): Ա.Բ.՝ ճաշոց:
 Ստացուած ընդլայնակի հատուած, եզրահատուած մէկ թերթի
 երկայնակի ծայրումով: ԺԱ. դար: Մագաղաթ, 16,3x23, երկսին

([30]x19,5), տող՝ 10 (պէտք է լինի 23), բոլորգիծ երկաթագիր
 (նմուշ՝ Բա): Ճաշոց. [Մեծի կիրակիի Զատիկին. Հինգշաբաթի
 աւ. Թուրք սրբոյ առաքելոյն Յակոբայ Կաթողիկէ Ա. 18-27, Սաղ-
 մոս, Մատթէոս Ե. 6-7]: Կարդալ՝ Բա, Աբ, Աա, Բբ. «Կամեցեալ
 ծնաւ զմեզ... առ ի բարկանալ: Զի/// Զի եթէ ոք լաւալ... Իսկ որ
 յառեալ/// [կրանա]տրոսի[ւն]ն: [Կր]անատրոսիւն սուրբ...
 զանձն [յաշխար]նէ: Ա[լիդ]իա. Սաղմ./// Երանի որ փաղցեալ... որ
 սուրբ են սրտիւք, զի///»: ԴԵ. Աւետարան ըստ Մարկոսի Ը. 17-32:
 Ստացուած մէկ թերթի ընդլայնակի ծայրումով եւ եզրահատումով
 (գրադաշար վնասուած): Ժ. դար: Մագաղաթ (23,7x16,2), երկ-
 սին ([28]x[18]), տող. 17 (պէտք է լինի 21), բոլորգիծ երկա-
 րագիր (նմուշ՝ Դա): Կարդալ՝ Դբ, Եա, Դա, Եբ՝ «[տակա]լին ոչ
 իմանայք [եւ] ոչ յիշէք... եւ համարձակ զբանն խաւս[եցալ]»:



Նմուշ Բա



Նմուշ Դա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին եզրամաշ, երկուական կապիչներն ու գամերն ընկած, ք. 12 եւ 23՝ հիմքից մասամբ պոկուած, ք. 1, 329-44, պատտօրիկ-պահպանակներին եւ աստառներին ցեցի անցներ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. 1ա-11բ Համառօտ տեսութիւն Յովհաննու Աւետարանին՝ տէր Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի – [Բան]. Ի սկզբանէ էր Բանն... [Լուծումն]. Բան ասի Որդին Աստուծոյ... որ յառաջ քան զյաւիտեանս պատմէ ասելով. Ի սկզբան՝:

Բ. 13ա-255բ [Նանայի Աստուծոյ Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին]

– 13ա-8ա Առաջաբանութիւն Յոհաննու Աւետարանին – Ոչինչ ըզձալի գօլ, քան զսիրելեացն... զայն դնէ սկիզբն բանին ասելով. Ի սկզբանէ էր Բ[անն]:

ա. 18ա-143բ [Հատած Ա.] Սրբոյն Նանայի Աստուծոյ վարդապետի Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին – [Բան]. Ի սկզբանէ էր Բանն: [Լուծումն]. Պարտ է մեզ յիսկզբան ճառիցս նկատել... քարկոծել եւս խնդրէք:

– 139ա-43բ [Յորդորակ] – Ով սիրելիք, ապաքէն լուայք... Այլ եւ Սմբատ Բագրատունի եւ Մարեմ Սիւնեաց տիկին, որ զգիրս սուրբ թարգմանեալ հրամայեցին, գնոյն հայցեն յիշել եւ Տէր Յիսուս. յիշողացդ ողորմեսցի:

Բնագրիս «Առաջաբանութիւն»ը (13ա-8ա) եւ «Վերջաբան-յիշատակարան» բնորոշելի մասը (141ա-3բ) տե՛ս ստորեւ:

բ. 144ա-55բ Նորին սրբոյն Նանայի հատած երկրորդ – [Բան]. էր ոմն հիւանդ Ղազարոս... [Լուծումն]. Սովորութիւն իսկ է, որոց բունն հարեալ են... բերել պատմութիւն անշափութեան իրացն եղելոց:

– 254բ-5բ [Յորդորակ] – Յորժամ ձմեռնական ժամանակին... զի հպելով յաջակողմանն դասսն արժանաւորեսցուք վերառաքել փառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ:

Երկրորդ հատուածը բաժանուած է երկու մասի, երկրորդ մասը վերնագրուած է. «Սրբոյն ի յարութիւն Տեառն: Հատած երրորդ գրոց»: Հմմտ. Նանայի Աստուծոյ վարդապետի Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին, Քանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց, է., Վենետիկ, Ս. Ղազար, 1920, էջ 1-441:

13ա (Թ. դ. կէս) [Առաջաբանութիւն] – Ոչ ինչ ըզձալի գօլ, քան զսիրելեացն լցուցանել զիզձս տենչանաց եւ այնու առաւել հաստատել զաստուածային սիրոյն շաղկապութիւն եւ զանչափ շահաւետութիւն, որ անդի լինիցին յինքն ձգել ըստ պատուիրանին, թէ՛ Սէր

ծածկէ զբազմութիւն մեղաց: Իսկ եթէ զանձեռնարկելի իր է, բունն հարեալ իցէ սիրելոյն զխնդրոյ, տե՛ս որքան տարակուսանս եւ թախիժ իւրում սիրողին վերայ ածէ: Զի եթէ ոմն ի հնդկային վախսն ակնարկէ՝ իւրում սիրելոյն ուղղաւորել առ գիւտ ճաճանչաւոր տալազիոնին կամ իջանել ի ծովային խորսն, ընդ այնքան կուտակեալ կոհակաց ծովասաստ թանձրամած ջուրցն խտութեան, առ ի գիւտ պատուական մարգարտին, իսկ նորա տրամեալ առ բնական վայրսն, ուր գիւտ տալազիոնին իցէ, սակա ապառաժ բոխասէր ափափայլցն: Եւ այլ ոմն ոչ բերելով զարհեստ ուղղական արհեստին առ ծովային ջրոցն վրդովելոցն, զիջումն գործել, ո՛չ ապաքէն հնարս ոչ փոքունս յանձին բերէ այնուհետեւ լուծանել զմեղադրութիւն իւրոյ սիրելոյն, եւ ի ձեռն սերտ |13բ| սիրոյն համարձակապէս առ պատճառն մատչելով յայտնէ զտկարութիւն անձին, եւ գեղեցիկ հաւանութեամբ նահանջեալ ճողոպրէ զինքն առանց իրիք մեղադրանաց յանձեռնարկելի խնդրոյն:

Իսկ արդ, եթէ առ գիւտ ստորեւ կացեալ տարրական նիւթոցն այնքան դժուարին՝ սակս յոքնակի պիտոյից տաժանմանցն, զիա՛րդ դու յինէն պահանջես զերկնային զբարձրագոյն եւ զանհասանելի իրէ զգիւտ, զոր ոչ լայնութիւն երկրի եւ կամ խորութիւն ծովու միայն ընդմիջեալ ունի, այլ գերագոյն իսկ տարրական բնութեանս անցեալ կա, որ եւ ոչ իմացմամբ մեք՝ թանձրունքս մտաւք եւ ի վայր քարշեալքս խորհրդովքս, կարեմք նկատել, քան թէ իրագործութեամբ բացայայտել:

Արդ, այսօրիկ թէպէտ եւ ինձ յոյժ ծանուծք են եւ անձեռնարկելիք, այլ քեզ ախորժեմ բաղբանականս դրուատել, որ այդքան յոքնահանձարս գտար ի յետին ժամանակի առ խուզմունս իմաստիցն խորս, որ անհետազօտելիքն ասացան ի վսամամիտ գերահրաշիցն: Ոչ զիմս անմաքուր իմաստիցս, ապա պարտակեալ խոկացեալ, որ եւ յոյժ անվայելուչ էր իմոյս լրբանաց ի վեր տարրանալ առ այդքան բարձրագոյն եւ երկնային իրողութիւնս, այլ զի ոչ գտի հնարս ինչ անփոյթ առնել զքոռոյգ յօժարութիւն, որ այդքան պատուես զիմաստութիւն, մինչեւ յաղքատաց եւ ի ներգեւելոցս եւս որսալ ախորժես, նման որոց զթագաւորական ծիրանիսն ստանալ փափագեն, ի գազանաց վայրենեաց որսան զշահաւոր պատուականութիւնն: Իսկ ոմանք յայլ իմն տկարագո|14ա|ւնիցն, յորդանց զագրացելոց հարըստանան, յորոց մետակք[ս]ն յառաջ գան, որում ոչ անհմուտ եւ զքոյգ գիտեմ ճոխութիւն, զոր յաստիսս բաղարկեալ ունիս հայրենական պերճանաւք յղփացեալ: Այլ ինձ ոչ փոքր ինչ յաւակնելի էր յայդքան ձկտել ի բարձրութիւն ամենեւին ստորանկելոյս, որ ոչ գիտուն մտօք եւ ոչ բանաչարական արհեստիւ կոխ: Այլ եւ ոչ արժանաւոր ըստ տուչութեան ձրից Հոգւոյն, զօր բազմագան հոսանօք շնորհացն եհեղ ի ստորնայնոցս

շահ: Այլ ըստ ոչ մաքրութեան եւս ողորմելի ոմն եւ վարակեալ մեղացն շխթայիւք, որ եւ ոչ յերկնից բարձրութիւնն եմ արժանաւոր նայել, քան եթէ զբնակելոյն ի վերայ երկնի ճառել ինչ: Զի մեղացն ծանրութիւնն, ըստ մարգարէին ձայնի, բարձրագոյն է, քան զգլուխ իմ, որով ի վայր հակեալ կամ, ըստ արժանի պատժապարտութեանս ընճեալ: Այլ եւ զի՞նչ արդեօք յայսցանէ առ հրաժարունն իրագործութեան օգտեցայց: Զի եթէ ի ձեռն սիրոյ յատուկ ժամանեալ էր այդքան անձեռնարկելի խնդիր, թերեւս գոյր հնար ճողոպրելով ի բաց փախչել, այլ դու ընդ սիրոյն հանգամանս եւ զիշխանական հրամանսդ շարահարեցեր: Վասն որոյ եւ ոչ գտի հնարս ինչ պատճառելով ըստ նախկի գաղափարութեան հրաժարել եւ ի բաց դառնալ սակս անձին տկարութեան: Վասն զի ի ձեռն սիրոյն մտերմաբար աղերսեցեր աստուածահաճոյական վարուք, ո՛վ տէր Սմբատ Բագրատունի: Իսկ առնթեր եւ զիշխանական հրամանդ ի վերայ ածեր, բառնալով յինէն զճողոպրելոյն հնարս, ոչ գանձին իմոյ տկ|14բ|արութիւն առ այդքան բարձրագոյն խնդիր խոկացար եւ ոչ դարձեալ անմաքրութեամբս իմով վերաբերել յայսքան մաքրագոյն իմաստս, լրբութիւն ինձ վարկար, բառնալով ինձ բեռինս յոյժ ծանունս եւ դժուարակիրս: Եւ ահա յաջ եւ յահեակ նայելով եւ ոչ մատուցանէ օգնականութիւն ըստ աւետարանական բանին: Վասն որոյ բազում աղաչանս առ քո[յ]ոյ տէրութեանդ արկանեմ, առ հրաժարումն այդքան ծանրագոյն իրագործութենէ եւ անշահ եւ անազուտ եղեալ ի քո[յ]ոյդ ներող լսողութենէդ. ապաւինեալ աստանօր բուռն հարից զշնորհաց Սուրբ Հոգւոյն, որ տայն առատապէս եւ ոչ նախատէ:

Եւ արդ, պատմեցուք զարինակ խնդրոյս, թերեւս ի ձեռն աղօթից լսողացդ առաւելապէս հասցէ ինձ օգնականութիւն ի վերին շնորհացն: Քանզի այր ոմն, սարկաւագապետ գոլով, Նանայ անուանեալ, յոյժ հմուտ եւ վարժ ասորի դպրութեան, ստացօղ բոլորիցն առաքինութեան, պարկեշտ վարուք, մաքուր առ ամենայն մարմնական հեշտութիւնս, աղբերաբար ընկալեալ զշնորհս վարդապետութեան ի Հոգւոյն Սրբոյ ուղղափառ հաւատոյն, որ ի Քրիստոս: Որ եւ յանդիմանեալ զոմն եռետիկոս, զայր պերճաբան եւ իմաստասէր, վանեալ հալածական առնէր յաշխարհէս Հայաստանեայց, որ երբեմն խոտորնակս ուսուցանէր, յերկուս բաժանելով զՔրիստոսի անբաժ միաւորութիւնն, որ յետ անքակ եւ անշիոթ մարմնաւորութեանն, եւս հաստատէ վերատին զնոյն ուղղափառ, որ ի Քրիստոս դաւանութիւնն, մի յերկուս բնութեանց խոստովանել, զաստուածականսն բնութեամբ, իսկ |15ա| զնուաստականսն կամաւոր յանձնառութեամբ: Զնա թախանձեալ մեծին Բագրատոս, որ ի տանէն Բագրատունեայց, այր յոյժ զբարձրագոյնս ստացեալ զանուն, որ եւ պետ իշխանաց երբեմն ի բարբարոս ազգէն հագարացոց

անուանեալ, որպէս թէ այնու առաւել պատուի գնա արժանաւոր վարկուցեալ, գորոյ եւ զանցս անցիցն յիրում տեղուշն փոքր ինչ յիշատակեցուք: Եւ զի՞նչ արդեօք իցէ օրինակ խնդրոյն, ստանալ նմա զմեկնութիւն սրբոյ Աւետարանին Յոնաննու, որոյ փոյթ ի մտի եղեալ վաղվաղակի ի ձեռն ուժգին պահոց եւ աղօթից, ջան ոչ փոքր յանձին բերէ շրջագայութեամբ երից ամաց, յաճեալ ընդ անապատս յերկրին Միջագետաց, ուր եւ յուսայր իսկ զգիւտ գրոյ ուղղափառ վարդապետացն, եւ հանդիպեալ խնդրոյն առաջնորդութեամբ վերին խնամոցն, շարադրէ համառօտաբար ի բազմաց հաւաքելով մի ըստ միոջէ ոճով զՄեկնութիւն Յոնաննու սրբոյ Աւետարանին՝ փոխաբերելով յասորի լեզուոյն ի հագարական լեզու: Իսկ յորժամ ըմբռնեալ լինէր ի հագարական ազգէն մեծն եւ երեւելին այն իշխանն Հայոց վսամամիտն, որ եւ զբովանդակն յանձին բերէր ունել զգիտութիւն, որ ի Քրիստոս հաւատոցն, որ եւ նախանձ ո՛չ փոքրագոյն վասն Քրիստոսի միշտ յանձին կրէր, կշտամբել եւ յանդիմանել զհերձուածողացն դասս: Ոչ ինչ արութիւն քաջութեան այնուհետեւ ըստ արժանի իւրոյ մեծութեանն երեւցոյց, այլ երագապէս ի վայր հոլովեալ յաստուածային բարձրագոյն հաւատոցն, զոր ունէր, գլորեցաւ վաղվաղակի ի վիճ անկանգնելի կորչատեանն, եւ ի բաց ընկեն|15բ|լով զգրոշմ ուխտի ճշմարիտ հաւատոցն, սուգ անհնարին բոլոր աշխարհիս Հայաստանեայց հասուցանէր, թէպէտ եւ հրբշտակացաւ ի լսելիս մեր ի խորութեան սրտին հաստատուն պահելով զճշմարիտ հաւատոյս դաւանութիւնս:

Յայնմ ժամանակի ի ձեռն պատահման իմն գանձ գրոյս հասեալ լինի առ տէր Սմբատ Բագրատունի, զոր ընկալեալ խնդութեամբ մեծաւ, հրամայէ փութով ի հագարացուցն ի հայկական վերաբերել լեզու, ոչ ինչ ներելով իմոյ տկարութեանս: Այլ զոր մեծն այն հոռտորն, կատարեալ յարուեստս եւ ի մակացութիւնս, այնքան ջան յանձին բերելով տաժանեցաւ: Ո՛վ ոք ոչ զիմն աղարտեցէ յանդգնութիւն, մտաբերել անգամ յայսքան բարձրագոյն խորհուրդս: Զորոյ եւ ոչ զառաքինութիւն առնն պարտ է, որ յետ այնորիկ գործեցաւ, անյիշատակ թողուլ, այլ իբր ի նկարագրի փոքր ինչ ցուցանել զնորայն ճգնութիւն, ոչ իբրեւ ներբողելով դրուատել, զի եւ ոչ բազմութիւն յոյժ իմաստասիրաց ի մի վայր գումարելոց կարող են բան ըստ նորա արժանաւորութեանն հատուցանել հանդիսի, այլ միայն դոյզն ինչ բանիւք պատմութիւնս ինչ թելադրել՝ առ ի գիտութիւն լսողաց:

Սա ըմբռնեալ եղեւ ի մերում իսկ ժամանակի ի հագարական ազգացն վասն նախանձու, որ ի նմանէ բազմափայլ վարդապետութեանն եւ ներհակս միշտ առադրելոյն, զնանի ի բանդի հանդերձ որդւովք իւրովք, որով[ք] բազում անգամ բանս հրապարականս առաջի արկեալ՝ հանդերձ յոքնազան պարգեւօք, ոչ ինչ խո-

նարհեցողք զանխոնարհելի խորհուրդս մտացն, որ ի Քրիստոս: Դարձեալ յայլ տեսակ հնարից բերեալք լինէին, սպառնմամբ |16ա| բանդից եւ կապանաց եւ պէսպէս տանջանաց, այլ ոչ ինչ զանգիտելով երբէք զիջանէր ի բարձրագոյն հաւատոցն՝ որ ի Քրիստոս, եւ մնացեալ ի բանդի անդ բազում ժամանակս, ո՛չ միայն զինքն ամբողջ պահելով յանբիծ հաւատսն, այլ եւ բազմաց լինի առիթ փրկութեան, աներկեղաբար միշտ պահելով զարգելանաւորսն ի բանդին, ուսուցանելով եւ հաստատելով ի հաւատս ամենասուրբ Երրորդութեանն:

Եւ յետ այսորիկ այսպէս եղելոյ՝ հասեալ լինի գանձ գրոյս այսորիկ առ Մարեմ Բագրատունի Սիւնեաց տիկին ի ձեռն Աշոտոյ հաւր իւրոյ, մեծ եւ երեւելի տեսառն Բագրատունոյ իշխանաց իշխանի: Իսկ երանուհոյս Սիւնեաց տիկնուջ փոյթ ի մտի եղեալ, վաղվազակի հրամայեաց երկիցս անգամ փոխաբերել ի հայկական լեզու՝ առաջնորդութեամբ վերին խնամոցն: Յարդարէ համառօտաբար զաստուածային բարձրագոյն հաւատս՝ վերագոյն ունելով ըստ իւրում քաղցր եւ յոյժ գովելի բարոյիցն, որ հասարակաբար ունէր առ ամենայն մարդիկ զխնամս իւրոյ սիրելի Քրիստոսի սուրբ մտացն, մանաւանդ թէ միամիտ հաւատոցն, որ ի Քրիստոս. պահպանեալ լինի ի վերին խնամոցն անվրդով առ ի յօգնականութիւն չորից ուստերաց, զոր ոչ պատկառեմ սիրող Քրիստոսի անուանել եւ կենդանի վկայ, որ այնքան ժամանակս երբ յանձին գժուժկալութիւն, որ ի Քրիստոս հաւատոցն: Եւ սորա այսպիսի եղելոյ մի՛ ոք զմեզ յայսմ վայրի բամբասիցէ իբրեւ աւելագործուկ ինչ, խառնելով զմերս ընդ նորայն ջան, կամեցեալ իբրեւ օտարացուցանել կամ աղարտել ինչ, այլ զի մի՛ անկատար եւ պակաս վարդապետի փառք յաշակերտէն լինել, |16բ| փոքր ինչ ներեսցեն մեզ լսաւդք, եւ ըստ իմաստասէր բժշկացն, որք ի ձեռն երակացն գիտացեն զախտին պատճառսն, հնարին այնուհետեւ առ բուժումնն: Այսպէս պարտ է ձեզ մտաց աշօք նայել ի ճառս, յոր մտաք, եւ եթէ իցէ ինչ արատ, բժշկել իբրեւ զհոգեկան անդամս, եւ միակամութեամբ սիրոյ օժանդակել հոգեկան սիրոյն շաղկապութեամբ, եւ անընդմիջաբար սիրելութեամբ ի բաց տանել զմախանս թունաւորս եւ երկրաւորս, եւ միացեալք սիրով նոր ի Քրիստոս, կալցո՛ւք առ միմեանս, եւ ասօղս եւ լսօղքո՛՞ որպէս լոյս առ աչս, եւ բարբառ առ լսելիս, եւ հոտ առ հոտոտելիս: Եւ եթէ իցէ ինչ արատ տկարութեան բանից, հոետորական բանիւ սերտել եւ պայծառացուցանել, եւ որպէս ջերմութիւն հրոյ, զի զցրտութիւն ի մարմնոյն հալածելով եւ զուարթութեամբ զգոյն պատկերին զգեցուցանէ, այսպէս եւ դուք ընդ ջերմեռանդն սիրով եւ աստուածային հրոյ կայծակամբք մխեալք, աներկեւան բերելով ի մէջ զսրբութեան սէրն, ուր ո՛չ նախանձ եւ ո՛չ ատելութիւն, ո՛չ յանդգնութիւն

այլովքն հանդերձ, եւ սիրոյն յիշատակաւ զբազմութիւն մեղացն շնջեսցուք ըստ պատուիրանին՝ եթէ. Աէր ծածկէ զբազմութիւն մեղաց, եւ մատուցեալք միամիտք միախորհուրդք, ասօղս եւ լսօղքդ առ աստուածային ճառիցս գիտելութիւնս, զի զուգապէս օգտեսցուք, զի աղիւ Հոգւոյն Սրբոյ շնորհաց համեմեսցին ճաշակելիք մերոց մտացս, որ եւ զբանն համեմէ, եւ զհոգին սրբէ, եւ զմիտսն լուսաւորէ:

Ապա եթէ ոք ի պարսաւադիտացն ի վերայ մեր ընթ|17ա|ացեալ, խտտորնակս ինչ խորհեսցի հակառակելով, մեք անփոյթ արասցուք զներհակս, առ նոսա արտաճառելով, ըստ պատուիրանին դայեկեալք, ոչ յանդգնեալ այլովքն հանդերձ, այլ միայն զՀոգւոյն Սրբոյ ձրից վերառաքել գոհութիւն, որ եւ առիթն իսկ է փոխաբերութեան բառիցն յինքն ապաւինելոց, ըստ Պօղոսի ձայնին, եթէ այլում թարգմանութիւնք լեզուաց: Եւ զանց արարեալ զվնասակարօքն, յառաջիկայսն ճեպեսցուք, վասն որոյ եւ ի գործ զբանս արկաք եւ դուզնաքեա ինչ վասն աւետարանչացն շարադրեսցուք զորպիսութիւն ճառիցն, որքան հասու կարեն լինել միտքս մեր, եւ այնպէս ճանապարհորդեալ անմոլար, եկեսցուք ի մեկնութիւն սրբոյ Աւետարանին Յովհաննու: Վասն Մատթէոսի եւ Մարկոսի եւ Դուկայ բազումք կանխեալ ասացին յիւրաքանչիւր տեղիս, իսկ վասն Յովհաննու, զոր եւ ի գործ արկաք զբանս, ասասցուք, որ ինչ միանգամ կարեւորն է:

Սա զամենայն ժամանակս իւրոյ առաքելութեանն առանց գրոյ քարոզէր զԱւետարանն, իսկ իբրեւ կարգեցան երեք աւետարանքն եւ գրեցան եւ հասին առ նա, որպէս ասի բանն, ընդունելի եղեն նմա, եւ վկայեաց եթէ ճշմարիտ գրեցան, այլ պակաս է ի նոցանէ՛ որ ինչ միանգամ գործեցանն, իսկ զբան վարդապետութեանն Քրիստոսի, զոր եւ մեք կարող եմք գիտել, եթէ երեք աւետարանիչքն յետ ըմբռնելոյն Յովհաննու Մկրտչի ի բանդ, որ ինչ գործեցաւ ի Տեառնէ, գրեցին, որ եւ ցուցանի սկիզբն ճառից նոցա, եթէ յետ քառասուն աւուր իբրեւ պահեաց Տէրն եւ զփորձապետն յաղթահարեաց, սկիզբն |17բ| արարին պատմութեանն իրեանց, ըստ Մատթէոսի գրելոյն, եթէ յորժամ լուան, եթէ կալան զՅովհաննէս, փոխեցաւ ի Հրեաստանէ ի Գալիլեա, իսկ Մարկոս եթէ յետ մատնելոյն Յովհաննու, եկն Յիսուս ի Գալիլեա, իսկ Դուկաս կանխեալ գրեաց. Հերովդէս, ասէ, ի վերայ ամենայն շարեացն, զոր գործեաց, յաւել եւս ունել զՅովհաննէս եւ եզ ի բանդի: Ուստի եւ աղաչեցին զՅովհաննէս առաքեալն, եթէ այն ժամանակ, որ թողաւ յայլոց աւետարանչացն, որ գործեցան ի Տեառնէ, տացէ նոցա գրով, որ նախ քան զմատնելն Յովհաննու ի բանդ, եղեն ի Քրիստոսէ հրաշագործութիւնքն, զոր եւ գրեացն իսկ Յովհաննէս: Զայս արար, ասէ, սկիզբն

նշանաց Յիսուս ի Կանա Գալիլեացոց եւ յայտնեաց զփառս իւր՝ ցուցանելով զայն գոլ առաջին հրաշագործութիւն: Եւ ապա երբեմն յիշատակեաց զՅովհաննէս յիւրում Աւետարանին, զոր ինչ գործեցաւ նախ քան զմատնելն Յովաննու ի բանդ: Իսկ երեք աւետարանիչքն, որ ինչ զկնի մատնելոյն Յովաննու ի բանդ գործեցաւ ի Քրիստոսէ, գրեցին: Այլ վասն է՛ր արդեօք Յովհաննէս լուէ ի դպրութենէ, որ վասն ծնընդեան փրկչին մերոյ ըստ մարմնոյ: Այլ քանզի Մատթէոս եւ Ղուկաս կանխեալ յառաջագոյն գրեցին զայն, իսկ սա սկսաւ գրել վասն աստուածութեանն նորա: Նա եւ չորրորդ գոլով աւետարանչացն, ո՛չ առանց բարձրագոյն խորհրդոյ իցէ, զի ոմանք ըստ չորեքժագեան գոլով արարածոց, ուր պարտ էր համասփիւռ քարոզիլ Աւետարանն արքայութեան, նոյնպիսի թուով, ասացին, պարտ էր եւ աւետարանացն գոլ, որք ընդ ամենայն տիեզերս էին աւետարանելոց զբանն կենաց: Իսկ ոմանց հաճոյ |18ա| թուեցաւ ըստ չորից մշտահոս գետոցն յադենական յաղբերէն յառաջախաղաց եղեալ՝ առ տիեզերաց ոռոգումն, եւ սոցա գոլով նմանապէս թուով ուռճացեալք ի կենդանական աղբերէն՝ ոռոգանել զպաւքացեալ միտս մարդկային բնութեանս: Իրաւապէս չորրորդ աւետարանիչս, իբրեւ յՈգւոյ Աստուծոյ պահեալ նմա զայս բարձրագոյն խորհուրդ, իբրեւ առաւել առաքելոյ, որ եւ Որդի Որոտման ի Տեառնէ կոչեցաւ, սակս զերկնայինս որոտալոյն, առ ընդոստուցանել եւ բանալ զմիտս մարդկային բնութեանս, զայն դնէ սկիզբն բանին՝ ասելով. *Ի սկզբանէ էր Բ[անն]:*

141ա (Թ. դ. կէս) [Վերջաբան-յիշատակարան] – Եւ վասն զի ձրիւք Հոգւոյն Սրբոյ աւարտեալ զլիաւորեցաք զաստուածախօս ճառիցս բացատրութիւնս, ժամ է այսուհետեւ լուսաւորագոյնս շուրջ փայլեցուցանել զաւետարանութեան բան առ սուրբ կաթողիկէ եկեղեցի, ըստ մարգարէին ձայնի. *Լուսաւորեա՛, լուսաւորեա՛, Երուսաղէ՛մ, զի հասեալ է լոյս քո, եւ դարձեալ լոյս պատուիրանն մակադրի, ըստ տեսողին՝ Պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան աչաց:* Հաճոյ թուեցաւ մեզ լուսաւորական բանիւ զաւետաւոր բանին ընծայաբերութիւն հնչեցուցանել առ սուրբ կաթողիկէ եկեղեցի, զի եթէ որ ի ձեռն իւրոց ծառայից ձրեաց երբեմն աշխարհի զպատգամս, լոյս զնա մակ[ան]ուանէ, որքան վճիտ եւ զուտ եւ անստուեր լոյս պարտիմք անուանել զլուսոյն այնորիկ պատուիրանն, զոր Յովհաննէս գոչէր. էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէր զամենայն մարդ, որ զալոց էր յաշխարհ, զորմէ ինքն՝ փրկիչն, ի վերայ իւր առ ի մեր վարդապետութիւն պիտառէ ասելով. *Ես եմ լոյս եւ ճշմարտութիւն եւ կեանք:* Եւ քանզի ըստ արփիափայլ աստուածական բանիցս, անհետագօտելի ճառիցս, յաճախագոյնս լոյս տուաք բանին, զոր այժմ բացատրութեամբ վերին շնորհացն օժանդակելով, տրամաբանութեամբ տարրորշեալ,

յստակագոյնս զաստուածական խորոցն անհետագօտելի զիմաստս բացայայտեցաք:

|141բ| Հաճոյ թուեցաւ մեզ դոյզն ինչ դրուատել զշնորհս կաթողիկէ եկեղեցւոյ, թէպէտ եւ այնոքիկ ոչ հանդիսաւորք եւ պերճք ըստ արժանաւորութեան, այլ ըստ այրոյն այնորիկ աղքատութեան ընկալեալ զերկուս լուծայնս ի Քրիստոսի գանձանակն, եւ զիմս հանգոյն նմին ընկալցիս դուզնաբեա բանից դրուատանս ի չքաւորական մտացս: Ո՛վ հարսն Քրիստոսի եւ մայր հաւատացելոց սուրբ կաթողիկէ եկեղեցի, թերեւ այնպէս համարձակեալ մերոյ աղքատութեանս ընծայաբերութիւն զբանս աւարտիցեմք: Ո՛վ յոքնապարգեւ եւ բազմերջանիկ, ամենահրաշափառ եւ երանութեամբ ծաղկեալ, մայր եւ դաստիարակ դաւանողաց եռանձնեա եւ եզակա աստուածութեանն, վասն զի ի քեզ զլիաւորի պարծանք լրութեան ուղիղ հաւատոցն, ի քեզ դաստիարակին մանկունք ընթհանուր ուղղափառութեան եւ սերտին ի հաւատս, ի քեզ ցանկ զենանի Որդին Աստուծոյ, որ միանգամ զենաւ ի փրկութիւն աշխարհի, ի քեզ ցանկ բաշխի մարմին եւ արիւն Տեառն ի քաւութիւն եւ ի թողութիւն սեռի մարդկան, ի քեզ վեցթեւեան սերովբէքն միշտ զեռահիւսակ սրբասացութիւնսն անյայտաբար ձայնիւ գեղգեղէն Որդւոյն Աստուծոյ, ի քեզ միաւորեալ երկնայնոցն ընդ երկրայինս՝ ցանկ փառաւորեն զէակն Աստուած, որ գունակ ի ծնընդեանն: Քեւ երախայք վերջստին ծնընդեամբ որդիք Աստուծոյ յորչորչին, շնորհիւ քեւ մկրտեալքն ի ստոր բնակութենէս վերաթեւեալք զերամբառնան ի տեղի անգելոց հրեշտակաց, քեւ կղերիկոսացն պճնեալ[ք] միշտ ճոխ|142ա|անան հոյլք, քեւ եպիսկոպոսունք զուարճացեալք բերկրին, քեւ քահանայք պարծեալք պարկեշտանան ի պատուին, քեւ սարկաւագունք զգօնանան արժանապէս սպասաւորելով, քեւ ճգնաւորք ժուժկալեալք ճգնին առաքինաբար, քեւ վարժապետք ճոխացեալք հրատարակեն զաստուածաբանութիւն, քեւ հերձուածողք ընկճեալ խորտակին, քեւ անպատուեալ յամօթ լինի Բելիար, քեւ բազմամեղքն ապաշխարութեամբ ազատին ի ծառայութենէ մեղաց, քեւ հրաժարելոցն յաշխարհէ կատարեն զյիշատակս, եւ զազատութիւն ստանան ոգիքն:

Արդ, որ այսքանս եւ բիւր բարութեանց առիթ, ո՞վ ոք ըստ արժանաւորութեանցն բաւականացի հատուցանել քեզ հանդիսաւոր բան, ընկալ՛ եւ այժմ զթաժաբար եւ զիմս աղքատութեան ընծայաբերութիւն, ո՞վ եկեղեցի Հայաստանեաց, ոչ յերկրէ եւ ի ծովէ կոհական նիւթոյ ոսկի կամ ականս պատուականս, որ գունակ մովսիսական խորանին, եւ ոչ ի Լիբանանէ փայտս նոճս կամ հանդերձս ականախիտս, փափուկս եւ երեւելիս ապականացուս, որ գունակ սողոմոնեան տաճարին, այլ ընծայ անապական եւ անկապտելի զանազան երկնային շահաւետութեամբ գերապայժառ շահիւք

առկեցեալք, այլ եւ սպառազինութիւն անյաղթելի հաւատացելոց, ո՛չ պարիսպ պղնձի ըստ մարգարէին ձայնի շուրջանակի ձեռակերտելով, այլ հրեղէն անմատչելի պարսպաւ պարփակեալ, եւ ոչ սին երկաթի ըստ տեսանողին, այլ բոց՝ 142բ| եղէն սուր սերովբէի ի քեզ կացուցանելով պահպանակ, եւ ոչ զինուորականս զանգիտողս մահկանացուս, այլ քերովբէական անքթթելի եւ անմահական գումարտակս, լինել միջնապարիսպ ի մէջ քո գառանցն եւ գայլոց: Եւ ո՛ր արդեօք իցի կրողի գայսքան գորութիւն, զոր մեր յոյժ չքաւորութիւնս եկն բերել քեզ սուրբ եկեղեցի Հայաստան աշխարհիս, եթէ ոչ փեսային քո եւ հասարակաց տեառնականդ, զոր ոչ խորեալ թաքուցի գունակ շար եւ վատ ծառայ[ի]ն, այլ արկանելով առ սեղանաւորս՝ հոգեկան շահավաճառութեանցն գործեցի ըստ իմում կարի, զարհուրեալ ի սպառնալեացն սաստիկութեանէ, որ առ շար եւ վատ ծառայն, զի զառակաւորսն եւ զխորինսն եւ զհրացմամբ առկեցեալսն, բացայայտս եւ տարրորշս զաստուածական ճառիցս վարդապետութիւն եկի բերել քում լրութեան ընծայ հրաշափառ եւ գերապայծառ, զոր արձանացուցեալ յաշտարակս քո ցանկ դաստիարակին մանգունք, որով սերտեալք յուղղափառութեան հաւատս զհրեւոսաճողացն վանեն զչարափառութեանցն մոլորութիւնսն, զգիւցն փախուցանեն զդասս, զպակաւնացուն, որ ի դրախտին զգեցան: Մերկանան զմաշկն, զանապական եւ զլուսաւորն, յորմէ մերկացան, վերջստին զգեհուն պատմուճան, զպաքումն աղենական աղբերն Տեառն արեամբն աղենականին զովացուցանեն, զբաղցն, որ ի դրախտին, Տեառն դրախտին մարմնով վայելեալք զմայլին: Եւ եւ պսակ եռահիւսական անթառամ ի գլուխ քո բերելով փարթամացուցանէ |143ա| եւ պարագրեալ ընդ վերին արքունեան մտիցն բարձրախմբիցն բաղդատէ: Սակա որոյ անգանելով առաջի քո, ո՛վ սուրբ եկեղեցի, իբրեւ ընդ միոյ ընդ քեզ խօսեցայց, վարձատրեա՛ւ եւ զիմոյ չքաւորութեանս տաժանմունս առ փոխաբերութիւն աստուածային ճառիցս, ի խորթ բառիցն ի քոց որդւոց շնորհաց փոխաբերելով լեզու: Վասն որոյ աճապարեալ անհանգիստ վեհ երագութեամբ ընթացիւք ի մտաց ասպարիսի աւարտել գլխաւորեցի զաստուածազարդ բանից հանգամանս յաւուրն եկաւորութեան փեսային քո եւ հասարակաց կեցուցչին, ի Բեթանիայ եկաւորեալ առ ի կենագործել զՂազար, ուստի եւ զպաղատանս առաջի քո արկանելով, հայցել առ ի նոյն կեցուցչէն Քրիստոսէ, զի եւ զիմ զհնացեալ զմեռելութիւն մեղացն ընդ Ղազարու նորոգեացէ, եւ որ զնորայն հրամայեաց լուծանել զկապանս, եւ զիմ պարաւանդս տոռանց մեղացն շխթայիցն խզեացէ, առաքելով յազատութիւն մեղաց, զի առ վաղիւ եւ ես ընդ մանգանցն Երայեցոց ելից, ընդ առաջ նորա ոչ ոստօք ձիթենեաց եւ արմաւենօք, այլ եւ

յոքնապայծառ տառիցս երկնային տնկոց ոստս յաւէտս անմահական պտղովք առբերելով, մատուցից ի փառս ամենասուրբ Երր[որդութեանն]:

Ձի ես՝ յետին յուսումնասիրաց, մանաւազ թարմմանաց, ի ձեռն աստուածային սիրոյն աղաչեմ զհայրապետս եւ զքահանայս, զճգնաւորս եւ զվարդապետս, միանգամայն եւ զբոլոր ուխտ սուրբ եկեղեցւոյ, ի վերձանել զգեղեցկազան աստուածաբանական ճառիցս բացատրութիւն, |143բ| յիշեալք զիս ի դպրութիւն կենաց, այլ եւ որ յօրինակ գծագրութեան առնուցու ոք զաստուածախօս ճառիցս մեկնութիւն, մաղթեսջիք յողորմածէն Աստուծոյ ասպրեցուցանել զիս ի հրահոսան գետոցն ահեղ աւուրն արդար հատուցմանն, յորում սպառնա հուրն անշէջ գունակ ինձ մեղաւորաց: Այլ առնթեր գրեացն զյիշատակ բանիցս այսոցիկ առ ի յիշատակ իմոյ յոքնամեղ անձին, իսկ եթե ոք արհամարհելով անփոյթ արասցէ, ընդ ամենեցուն նա տացէ համար ի դատաստանին, յորոց շահաւոր յիշատակաց զրկեաց գտարամերժեալ անձն իմ ի հանդերձեալ կենացն:

Այլ եւ Սմբատ Բագրատունի եւ Մարեմ Սիւնեաց տիկին, որ զգիրս սուրբ թարգմանեալ հրամայեցին, զնոյն հայցեն յիշել. եւ Տէր Յիսուս յիշողացդ ողորմեցի:

Մեկնութեան «Առաջաբանութիւն»ը եւ «Վերջաբան-յիշատակարան»ն այս ձեռագրից (13ա-18ա եւ 141ա-143բ) առել եւ տպագրել է Յովս. Յիշ-ք, էջ 59-67, 67-72. ուր տես նաեւ բնագրիս վերաբերող մանրամասն մատենագիտութիւնը: Իսկ էջ 72 «Այստեղ յիշատակուած անձնաւորութիւնները՝ Բագրատ Բագրատունի, Ք. դարի երեսնական թուականներին, իսկ Սմբատ Բագրատունի, որ եւ հոստովանող կոչեցաւ, վախճանուել է 857 թուին. Աշոտ Բագրատունի իշխանաց իշխան եւ ապա՝ թագաւոր: Մարեմ Բագրատունի՝ Աշոտ թագաւորի դուստրը՝ Սիւնեաց տիկին, Վասակ Քարուն իշխանի կինը: Ժամանակագրական մանրամասնութիւնները տես ն. Արունց, Պատմական ուսումնասիրութիւններ, 1948, էր. 86 եւ շար.»:

Գ. 256ա-343ա [Անդրէասի Կապպադովկացոյ Մեկնութիւն Յայտնութեանն Յովհաննու]

Տէ՛ս ձեռ. 1161, 79բ-168բ: Յիշակ./343ա-4ա (նման ձեռ. 2516, 240ա-1բ): Նխդր./256բ-7բ: Գլուխք./257բ-9ա: Ներածութ./259ա-62ա: ա/262ա-5ա: բ/265ա-7ա: գ/267ա-8ա: դ/268բ-9ա: ե/269ա-70ա: զ/270ա-1բ: յ/271բ-2բ: լ/272բ-3բ: թ/273բ-5ա: ժ/275բ-8ա: ժա/278ա-9ա: ժբ/279-80ա: ժգ/280ա-1ա: ժդ/281աբ: ժե/281բ-2բ: ժզ/282բ-3ա: ժլ/283աբ: ժր/283բ-5ա: ժք/285ա-7ա: ի/287ա-8բ: իա/288բ-90ա: իբ/290աբ: իգ/290բ: իդ/290բ-1ա: իե/291աբ: իզ/291բ-3բ: իլ/293բ-5ա: իր/295ա-6ա: իք/296ա-7ա: լ/297ա-8ա: լա/298աբ: լբ/298բ-9ա: լգ/299ա-302ա: լդ/302ա-6ա: լե/306ա-7ա: լզ/307ա-8ա: լլ/308ա-9բ: լր/309բ-10ա: լր/310ա-1ա: լս/311աբ: լաա/311բ: լաբ/311բ-2բ: լազ/312բ-3ա: լադ/313ա-4ա: լաե/314ա-5բ: լազ/315բ: լալ/315բ-6ա: լաբ/316աբ: լաք/317ա: ժ/317աբ: ժա/317բ-8բ: ժբ/318բ-9բ: ժգ/319բ-20բ: ժդ/320բ-23ա: ժե/323ա-6ա: ժզ/326աբ: ժլ/326բ-7բ: ժր/327բ-8բ: ժք/328բ-9բ: կ/329բ-30բ: կա/330բ-1ա: կբ/331աբ: կգ/331բ-2բ: կդ/332բ-4ա: կե/334աբ: կզ/334բ-5բ: կլ/335բ-9բ: կր/339բ-40բ: կք/340բ-1ա: կլ/341աբ: կաա/341բ-2ա: կբ/342ա-3ա:

²⁰ 1161 ձեռ-ի համեմատ ունի շնչին տարբերութիւններ:

– 343ա Յիշատակ տառիս գտողի՝ տեառն Ներսիսի գերահռչակ վարդապետի, գոր գտեալ ի մեծն Անտիոք, գրեաց զսա ի լուսաւորութիւն հոգւոց. ես՝ Ներսէս, նուաստ ի Քրիստոս եւ տարտամս յուսումնասիրաց, վերջին եւ նուաղեալ ժամանակի ծնունդ, յընթեռնուլն գՅայտնութիւնն Յոնաննու, տագնապէի յանձին |343բ| իմ առ ի յոչ գիտել զլուծումն բանից սքանչելեաց, եւ այսր անդր խուզելով զմեկնութիւն նորին ի մերս բարբառ ոչ գտի, յետ որոյ եհաս ինձ ընթանալ ի մեծն Անտիոք եւ շրջելով յոր անդ վանորայք հոռոմոց եւ ֆուանկաց, այս տենչումն բորբոքէր ի միտս իմ, ուստի եւ քննեալ գտի ի գրեանս հռչակաւոր ուխտի Սրբոյն Պօղոսի ի քաղաքի անդ զՄեկնութիւն Յայտնութեանս ի լուսալարտ բարբառ, եւ ի նոյն գիր, որով վարին ֆուանկք, Բ. մեկնչաց արարեալ, եւ փափաքելով թարգմանել՝ ոչ գտի զոք, որ յայնմ բարբառոյ ի հայս կարէր յեղաշրջել: Ապա ելեալ արտաքոյ քաղաքին ի սուրբ լեառնն, որ ի հիւսիսոյ կողմ անդր՝ ի մի վանորէիցն հոռոմոց, որում անուն էր Բեթիաւս, առ ոմն արգելական միայնակեաց, որոյ անուն Բասիլ, կնքեալ գտի զցանկալին ի հելլենացի բարբառ եւ ի գիր, ուղղաբան եւ վայելուչ, ոչ լեալ էր Աթանասի պատրիարգի նորին քաղաքի, եւ խնդրեալ աղաչանօք ի բարէմիտ առնէն, առեալ փութացայ գրովքն ի հայրապետական աթոռն՝ առ տէրն իմ եւ կաթողիկոս սուրբ Գրիգորիոս, գոր ծանուցեալ՝ ուրախ եղեւ յոյժ եւ հրամայեաց թարգմանել ի ձեռն մետրապոլիտն յԵրապոլսի Կոստանդէայ, որ անդ ի ներքոյ սրբոյ հայրապետին հովանոյ հագչէր: Եւ սկսեալ օգնականութեամբն Աստուծոյ եւ սրբոյ Տեառնն՝ նա ի թարգմանել, եւ ես ի գրել, վերընծայեցաք եկեղեցւոյ Հայաստանեաց ուսումնասէր մանկանց, զայս սքանչելի եւ աստուածային Յայտնութեանս Մեկնութիւն: Աղաչեմ զընթերցողսդ եւ իմաստութեան զսիրողսդ՝ յիմանալ զխորս իմաստիցն Աստուծոյ քննութեամբ զհայրապետն Հայոց զտէրն իմ զԳրիգոր զբարէմիտն եւ զբարէսէրն եւ զառիթն |344ա| թարգմանութեանս եւ զհրամայող մաղթեցէ՛ք Քրիստոսի յաստիս խաղաղութեամբ պահել եւ ի հանդերձեալն սրբոց իւրոց երկնից արքայութիւնն ժառանգակից ընդունել: Այլ եւ զԿոստանդին մետրապոլիտն, որ թարգմանեաց, եւ զԲասիլ կրօնաւոր, որ զօրինակս ետ, Քրիստոս ողորմութեանն իւրոյ արժանացուցէ աղօթիւք ձեր:

Թարգմանեցաւ աստուածային Յայտնութեանս Մեկնութիւն ի թուիս հայոց ՈԻԸ. (1129), սուրբ եւ հայրապետական աթոռն, որ կոչի Հոռոմիլլա, շրջապատեալ յաղենական աղբերէն Եփրատայ, որ մատակարարէ բնակչացն զամենայն մարմնական պիտոյս խնամօքն ամենայն, ընդ հովանեաւ աստուածընկալ Նշանին Վանկոյ եւ այլ սքանչելի սրբոցն, որ հանգուցեալ են անդր ի փառս Աստուծոյ: Իսկ սրբաբանեցաւ ի նշանագրութեանէն քերդողական արհեստիւ ի յապահով անապատս

Սուրբ Գեորգ, ի մէջ լերինս Տօրոսի, որ է ի գահ Կիլիկոյ, եւ ի սկիզբն Պանփիղեայ, ձեռամբ նուաստ եպիսկոպոսի նորին մայրաքաղաքի Տարսունի տառապելոյս Ներսիսի, շնորհօք եւ ողորմութեամբն Քրիստոսի, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Հմմտ. Ն. Վ. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 268-71:

ՅԵՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

44բ Զգծող յիշեսջիք:
 143բ Կարգիս եւ գանձն իմ եղկելի
 եւ մեղսաներկ արհեստ գրչի,
 Զոր եւ մատամբ ծրագրեցի
 ես՝ Յոհ[աննէս] աղքատ ոգի,
 Տառապանօք թանձրագունի,
 Կարօտութեամբ անպատմելի,
 Սակայն փափաք յոյժ տենչալի
 եւ ախորժանք անքննելի,
 Զիս յորդորեաց յայս գործ իրի՝
 Զսա շարել ի քարտիսի,
 Զի յայս տեղիքս, յորում էի,
 էր դպրութիւն հրաշալի,
 եւ ես՝ կարօտ այսրմ տառի,
 Զի յիւր տեղին սա հասանի,
 Շտապեցա յաւէտ կարի,
 Բայց իւր տեղոջն ոչ հասուցի,
 Զի եկն եհաս ի կարգի
 Ընթեռնելոյ ի հանդիսի.
 Տակաւ կիսով շափ է թերի
 Հանգէտ գոլով սա աւարտի:
 Զոր աղաչեմք՝ որք հանդիպի,
 Աստուածախօս այս մատենի,
 Յիշման գոլով զմեզ արժանի
 Զենման Գառինըն առաջի
 եւ մաղթանք աղբերսալի
 Խոշորութեանս ներելի:

Տէս ԺԲ. դ. յիշ-ք, էջ 43-4:

177բ Վայ զգրկեալս:

227բ Աւաղ գերւոյս:

236ա Ով ընթերցողք տառիս եւ աստուածային մարգարանիս, յիշեսջիք զեղկելի գրիչս Յոհ[աննէս] կարօտ բանի, նա եւ զծնօղան մեր եւ զեղբարսն՝ զհոգեւորսն, որ բանին են պատճառ ծննդեան, որ ծնան զմեզ յերկն հոգեւոր, եւ զմարմնոյն ըստ արեան փոխանորդութեան եւ ազգակցութեան եւ զայս յիշումն առաջի սխրալի եւ մեծ խորհրդոյ, եւ դուք՝ յիշօղքդ զմեզ սեռն սրտիւ եւ կատարեալ կամօք յիշեալ յիշիք ի նոյն ի նմանէ, առ որ եւ զմեզ յիշատակէք հանդիսի, որ եւ ի ձէնջ եւ ի մէնջ անդադար փառաբանի օրհնեալն ի բնաւս:

242բ Երանի է սորա, եւ աղէտ է ինձ:

255բ Ով դիտականքդ խոհեմագոյնք եւ վսամք առ բանին տեսութիւն, բաղձացողք ի սկզբանն եւ կարօտ մնացողք առ վախճանն, զուգակից ձերում տենչանաց եւ զիմս վարկջիք թախանձումն, այլ այսմ ըղձութեան անջրպետ տարամեկնումն է, անմարմնոյն ի մարմնոյս:

344ա Գարձեալ յիշեսջիք ի Քրիստոս եւ զիս՝ զտարժանեալ մեղսաներկ ոգիս, զնուաստս Յոհ[աննէս] եզընկայեցի սպասաւոր բանի, որ հարեալ ցանկութեամբ սիրոյ ի փափա՛հ սորին, գրեցի իմով իսկ տխեղծ մատամբս, ի մխիթարութիւն վշտացեալ հոգւոյ իմոյ եւ ի վարժ կրթութեան երկասէր անձին բանասիրի եւ ի յիշատակ արձանի հոգւոյ իմոյ եւ ամենայն նախնեաց՝ փոխեցելոց ի Քրիստոս արեան մերձաւորաց եւ համօրէն ամենայն երախտաւորաց՝ հոգեւորաց եւ մարմնաւորաց, զի դուք յիշեսջիք ի Քրիստոսէ Աստուծոյ յուսոյն մերոյ օրհնելոյն յաւ՛:

Գրեցաւ ի թվին 20Ե. (1306), ի քսան եւ ինն մարտի ամսոյ:

Տե՛ս ԺԳ. դ. յիշ-ք, էջ 44:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

344բ (Բոլորգիր, ԺԵ. դ., շուրջ 1406 թ.) Մվ վեհանձինք եւ պանծալի,

Միշտ ձեռնարկօղբ գործոց բարի,
Յորժամ յառեալ հանդիպիք այսմ տառի,
Յիշման արարէ՛ք զիս արժանի՝
Առ Յիսուս գթած փրկիչն ամենայնի
Եւ միշտ առատն ի տուրս բարի՝
Ձֆրա Մխիթարիչս խնդրող բանի,
Ձվերջին ստացօղ գրոցս հրաշալի,
Ձփծուն տաճապեալս եւ ողորմելի,
Ձծոյլ յամառեալս եւ հեղգալի,
Ձտարտամ մեռեալս մեղօք ի լի,
Ձկարօտս աղօթից եւ գործոց բարի,

Ակն ունողիս ձերոյդ շնորհի,
Կարկառ ձեռօք ցանկ բաղձալի,
Ձի արժանաւոր հետեւողքա Քրիստոսի,
Ձիր ինձ շնորհէք դուք պտղալի,
Եւ որպէս կամիք եւ խնդրէք սիրօվ ի լի,
Ձնոյնն պարգեւեսցէ ձեզ փրկիչն ամենայնի:

Տե՛ս ԺԵ. դ. յիշ-ք, Ա., էջ 62. այստեղ էջ 61, ծ.՝ «Յրա Մխիթարիչը կամ Մխիթար Ապարանեցին գործել է 1360-1410 թթ. ընթացքում», ուստի «Նրա կողմից գրուած կամ նրա անուան յիշատակութեամբ այս եւ միւս յիշատակագրութիւնները տեղադրուած ենք Մխիթարիչ գրչի կողմից 1406 թ. Մակուում գրուած յիշատակարանին առընթեր... »:

344բ (բոլորգիր գունաթափ, մասամբ քերած-չնչած, ԺՁ. դար) Ի թվին// ին ես Գասբար վարդապետս// զլուեա// աչսպէս// Ժ.// Ե. բրթ՝ (Շ) կորեկ խանլոջոց (Շ) Ձ. բրթ՝ (Շ) // ուչոցի Ապտլին, Ա.// Ժամանակաց տան, բայց դուչրչոյ եւ խոտը կեցեց// պատարագն է, զտարնցոց պարտքն է: Ե.// զատու բար, որ այն// տարոյ տալքն նոցա:

ԳՐՁԱՓՈՂՁ 344բ. «Երթժիլ»: Եա. «Յայսմ աւուր յիշատակ է Սողոմնի եւ: Յայսմ աւուր յիշա»:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ Գա Բոլորջի, կենտրոնում երկգլխանի թագակիր արծիւ, ճանկերում իշխանութեան խորհրդանիշներ՝ կարճ գաւազան եւ խաչապսակ գունդ, «[Αχαλιβιχσκοῦ] γραδσκοῦ πολυ[γυαυ]»:

ՆՇՈՒՄ՝ Կազմի մէջքին սոսնձուած երկշերտ թուղթ. առաջինի չժածկուած մասում. «//Միւնեաց եպիսկոպոսի եւ նանայի Ասորւոյ», երկրորդին. «Նանայ վարդապետի Ասոր[ւոյ] Մեկնո[թ]իւն Յովհաննու Աւետարանին, քաղուածոյ (3)»: Գա՝ «Ստեփ. եպիսկոպի Միւնաց Մեկն. Ասոր. Յովհաննու» (սեւ մատիտով), «Հ^մ 209», «83» (չնչած), «187/2520», «20Ե. - 1306, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2521


ՄԵՍՐՈՊ ԳԱՆՁԱԿԵՅԻ, ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ՊԱՏՃԱՌԱՅ ԳՐՈՅՆ

ԹԱՄՈՆ. – 1761

ԹԻՐԹ՝ 70 (գրչի էջակալում՝ Բ-Գձ., իմա՝ ձԺԱ., որ է 2բ-68ա). չգրուած՝ 1բ, 68բ: ՊՐԱԿ՝ Ա-Թx8 (Ա. 7, Ձ 9, Ը 6): ՆԻԻԹ՝ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ անընկալելի: ՄԵՍՈՒԹԻԻՆ՝ 17,1x 10,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (13,7-14,3x8-8,5): ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 16ա): ՏՈՂ՝ 23-26: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի, միջուկը ստուարաթուղթ, աստաղը կապոյտ թուղթ (ԺԹ. դար): ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1 (Ա) + 2 (Բ-Գ), ԺԹ. դար՝ աւելացուած նորոգման ժամանակ, կապոյտ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եզրահատման պատճառով անընկալելի, Ա՝ մաս կազմաստաթի:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻԻՆ – ձ ա կ ա տ ա զ ա ռ դ՝ 2ա: Ձ ա ռ - դ ա գ ի ռ՝ բուսական, հանգուցազիր, թոյնագիր: Գ ո յ ն ե ռ՝ կարմիր, կապոյտ, սև:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ք. 7՝ հիսից անջատ, ԺԹ. դարում կապոյտ թղթով կարկատած-նորոգած:



Նշում 16ա

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

2ա-70բ Համառօտ մեկնութիւն գրոցն, որ կոչի Պատմառաց, ի տառապեալ Մետրօպալ Կանցեցոյ Աղուանից

ա. 2ա-3բ Ա. Առաբկութիւն առաջնեւորդ սեռի եւ տեսակի – Ամենայն պատճառ նախկին է... ըստ որում ասաց եւ բայցայայտեցաք:

բ. 3բ-6ա Բ. Յաղագս գոլոյն, որ ի վեր է քան գլխափտենականութիւն: Առարկութիւն երկրորդ – Ամենայն գոլն վերնագոյն... բազում տարբերութիւն ունի, գորս ոչ ունի:

գ. 6ա-8ա Գ. Ազնուական հոգի աստ զբնական – Հոգին կոչէ մարդոյ... իմացական զօրութեամբ կառավարող է էութեան իւրոյ:

դ. 8ա-11ա Դ. Յաղագս նախկին գոլոյն է, որ է արթոն դասին: Առարկութիւն չորրորդ – Առաջին յարարածոց է գոլն... եւ ոչ այլ ինչ, եւ այլն նմա անտեսէ (°):

ե. 11ա-14ա Ե. Յաղակս սեռից եւ տեսակաց: Առարկութիւն հինգերորդ – Իմացութիւն վերնագոյնք... ոչ ունի ներգործութեամբ զանազանութիւնս տեսակաց:

զ. 14ա-6բ Զ. Յաղագս անհատութիւն Աստուծոյ: Առարկութիւն Բ. (°) վեցերորդ – Պատճառ նախկին գեր ի վերոյ է... ըստ կերպոյն կերպի՝ որպէս ցուցաւ:

է. 16բ-20ա Է. Յաղագս թէ հրեշտակ անմարմին են: Առարկութիւն է.երկրորդ – Իմացութիւն է գոյացութիւն... սեռականագոյն է, անփոփոխ է:

ը. 20ա-2բ Ը. Դարձեալ վասն հրեշտակաց եւ սեռից եւ տեսակաց: Առարկութիւն ութներորդ – Ամենայն իմացութիւն է գիղէ... զանմարմնաւոր մարդիկս աշխարհի:

թ. 22բ-5բ Թ. Յաղագս իմացութեան, որ է հրեշտակաց: Առարկութիւն Թ. – Ամենայն իմացութեան հաստատութիւն... ի վերայ այլ արարածոց:

ժ. 25բ-7բ Ժ. Յաղագս ստորաստութեանց եւ ենթակաից: Առարկութիւն ժ.եր<թ>որդ – Ամենայն իմացութիւն է, զի տեսակօք... եւ ոչ բոլորն, որում կարէ ընդունիլ:

ժա. 28աբ ժԱ. Յաղագս մշտնջենաւորաց եւ փոփոխականաց: Առարկութիւն մետասաներորդ – Ամենայն իմացութիւն իմանայ... կարելի է մեկնել ի վերայ եւ հրեշտակաց եւ մարդկան:

ժբ. 28բ-31ա ժԲ. Յաղագս ստորոկութեանց եւ ենթակաից: Առարկութիւն երկուսասաներորդ – Առաջինս ամենից ոմանք... եւ կերպիւ մի բաժան:

ժգ. 31ա-2ա ժԳ. Յաղագս ըստորութեանց եւ ենթակաից: Առարկութիւն Գ.ժ.աներորդ – Ամենայն իմացութիւն իմանայ գէութիւն... եւ պատահմունքն է համանգամայն յինքն:

ժդ. 32ա-4ա ժԺ. Յաղագս հոգոյն մարդոյ: Առարկութիւն չորեքտասաներորդ – Յամենա[յ]ն մարդոյ... եւ եր[բ]եմն ըստ բանականին. եւ այլն նմանապէս:

ժե. 34բ-6ա ժԵ. Յաղագս դարձեալ բանական հոգոյ: Առարկութիւն Ե.ժ.անի – Ամենայն գիտող, որ գիտէ... Հոգոյն, որով կառուարի եւ գործէ զիր ինչ:

ժզ. 36ա-8բ ժԶ. Յաղագս զանազանութեան: Առարկութիւն Զ.ժ.երորդ – Ամենայն զօրութիւնք... միջնորդութեամբ հրեշտակաց:

ժէ. 38բ-9բ ժԷ. Յաղագս ըստորոգութեանց եւ ենթակաից: Առարկութիւն է. եւ ժ.երորդ – Ամենայն զօրութիւն միացեալ է... նոյնպէս ընդհանուրքն իմ աղագաւ:

ժը. 40ա-2ա ժԸ. Յաղագս զանազան պատճառաց: Առարկութիւն Ը. եւ ժ.երորդ – Ամենայն գոյնք ունին գէութիւն... ո՛չ ապականի եւ ո՛չ աւերեալ լինի:

ժթ. 57բ-9բ ժԹ. Յաղագս հրեշտակաց եւ հոգոց եւ մարմնոց: Առարկութիւն ինն եւ տասներորդ – Ի մէջ իմացութեանց ոմն է աստուածային... իմացականն յիմացականէ եւ այլն:

ի. 59բ-62բ, 48ա Ի. Յաղագս նախկին պատճառին: Առարկութիւն քսաներորդ – Պատճառն նախկին կառավարէ զամենայն արարածս... ոմանք յաւէտ եւ ոմանք նուազք. եւ այլն:

իա. 48ա-9ա ԻԱ. Յաղագս դարձեալ նախկին պատճառին: Առարկութիւն ԻԱ.երորդ – Նախկին հարուստ է ինքեամբ... մարմնաւորք պիտոյից եւ աղքատք:

իբ. 49ա-50բ ԻԲ. Յաղագս դարձեալ նախկին պատճառին: Առարկութիւն ԻԲ.երորդ. Ստորոգութեանց եւ ենթակաից – Պատճառն նախկին է գեր ի վերոյ... նախկին պատճառ եւ գեր ի վերոյ:

իգ. 51ա-2բ ԻԳ. Յաղագս առաջին քսանաւայտեւորութեան հրեշտակաց: Առարկութիւն ԻԳ.երորդ – Ամենայն իմացութիւն աստուածային գիտէ զիրս... եւ ապա հրեշտակաց, որ է իմացութեանց:

իդ. 52բ-4ա ԻԴ. Յաղագս ստորոգութեանց եւ ենթակաից: Առարկութիւն ԻԴ.երորդ – Պատճառ նախկին յամենայն էութիւնս... եւ միանայ ի նմայ, որպէս ասացաւ կարգաւ:

իե. 54ա-6ա ԻԵ. Յաղագս անմարմին գոյացութեան: Առարկութիւն ԻԵ.երորդ – Գոյացութիւն իմացեալք իմանալիք... այլ յանփոփոխ եւ անապական պատճառ:

իզ. 56ա-7բ ԻԶ. Յաղագս ինքնակալ եւ անապական գոյացութեան: Առարկութիւն ԻԶ.երորդ – Ամենայն գոյացութիւն ինքնակալ... գիտութիւն մասնաւորաց, որք ի ներքոյ իւրոյ:

իէ. 42աբ ԻԷ. Յաղագս մարմնական գոյացութեան: Առարկութիւն ԻԷ.երորդ. – Ամենայն գոյացութիւն՝ ապականելի եւ ոչ մշտնջենաւոր... այլ է նա ինքնակալ գոյացութիւն:

իը. 42բ-4ա ԻԸ. Յաղագս դարձեալ անմարմին գոյացութեան: Առարկութիւն ԻԸ.երորդ – Ամենայն գոյացութիւն կաշուն էութեամբ իւրով է պարզ... ոչ է ընդունակ ապականութեան. որպէս ցուցաւ:

իթ. 44բ-5ա ԻԹ. Յաղագս թէ անփոփոխն ոչ ընդ ժամանակաւ: Առարկութիւն ԻԹ.երորդ – Ամենայն գոյացութիւն պարզ ինքնակալ... քան զժամանակաւորք էութիւնս մարմնական:

լ. 45ա-7բ, 63ա-65բ Լ. Յաղագս մշտնջենաւոր գոյացութեանց եւ ժամանակաց: Առարկութիւն Լ.երորդ

– Ամենայն գոյացութիւն ըստեղծեալք ի ժամանակի... իսկ անհատկն միայն պատճառելիք:

լա. 65բ-8ա ԼԱ. Յաղագս ստորագութեանց եւ ենթակայից: Առաւկութիւն ԼԱ. երորդ – Ի մէջ իրին, որոյ գոյացութիւն... ըստ որում բացայայտեցար:

լբ. 68ա-70բ ԼԲ. Յաղագս կամ ստորակրութեանց եւ ենթակայից: Առաւկութիւն ԼԲ. երորդ – Ամենայն /// (չշարունակուած) – Քանզի եթէ լինիցի գոյացութիւն... այլ է բնութեամբ նմայ, որպէս ցուցար փոքր ի շատէ. եւ Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ փառք եւ գոհութիւն յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Ձի գրուած 68ա էջի կէսը եւ 68բ ամբողջ էջը: ԺԸ. գլխից յետոյ որոշ գլուխներ գրուած են խառն դասաւորութեամբ (տե՛ս վերը՝ գլուխների նկարագրութեան կարգը):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1ա Օգնեա՛ շոգի Աստուած.

Յերկիրնս ըզբեզ անլուելի բարեբանեն ըմբ վերին, Ամենասուրբ հոգեւից մայր առգաւանին միածնին, Առ որ եւ ես բազկատարած երգ օրհնութեան շնորեմ, Առնուլ ի գիրկդ յորդոր սիրով, է՛ մայր գթած, աղաչե[մ],

Սատար լեր ինձ՝ ապիկարիս, յանգ բերկրեցո՛ եղևելի[ւ],

Արփիաղէտ լուսոյ դիմացդ արժանացո՛ ռամ հոգիս,

Սրբեա՛ զհոգիս, ուղղեա՛ յերկիրնս՝ և իսեա յերամս ընեականս,

Բերկրեալ սրտիւ, կեցեալ հոգւով ուրախալից յաւիտեանս,

Սրօբէական նուիրեցիր մեծագոյն փառս արարչին, Բամեալ հայոց ի ԹԱՄՈՆ. (1210+ 551= 1761) թիւ,

Առ որ ծրեցաւ մտացածին,

Ի շուրջ մեղաց փրկօղ տապան,

Մեղաց բարձօղ նշան նոյեան,

Փրկող նշան անկար խորա[ն],

Տապան նոյեան, խորան Մովսեան,

Սափոր ոսկի՝ և աղբիւր բարի,

Ոսկի բուրվառ,

Յազգի կանանց միայն օրհնեալ,

Կանանց պարծանք պսակ գովեալ,

Միայն պսակ յէիցս ընտրեալ,

Օրհնեալ, գովեալ, ընտրեալ, ցուցեալ դու լեալ:

Չա Օգնեա՛, Սուրբ շո՛գի, եւ հասո՛ յաւարտ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

70բ (ԺԸ. դ.) Պատճառաց գիրքս ինն տետր է, շԲ. թուղթ: (ԺԺ. դ-ի այլ ձեռքով)՝ Համար տետրակիս Թ.ն:

Պահպանակ Աա (ԺԺ. դար) Сія книга принадле- житъ (այլ ձեռքով, մատիտով) Го[с]поди ну маіору фонъ Аумбергу.

ԳՐԶԱՓՈՂՁ՝ Կազմատառ Ա, Բ, Պահպանակ Աա, Աբ, Բա, Բբ. Ռուսերէն զանազան տառեր, հաշիւներ:

ՆՇՈՒՄ՝ Կազմի մէջքին սոսնձուած թղթին. «Մետրոբ քահանայի Գանձակեցւոյ Մեկնութիւն պատճառաց»: Աա՝ «ԺԸ., Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2522


ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՅԻ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՅ

ԺԳ. դար, ՋՁ. – 1457


ԳԻՐՁ՝ Առաւել Սիւնցի (Ա. 14ա-84բ, 97ա-156բ, 181ա-215բ, 217ա-39բ), Մատթէոս (Բ. 1ա-13բ, 85ա-96բ, 157ա-80բ, 216, 240ա-336բ):

ԹԵՐԹ՝ 339: ՊՐԱԿ՝ Ա-ԻԸx12+3: ՆԻԻԹ՝ թուղթ, թ. 1-13, 85-96, 157-80, 216, 240-336՝ այլ թուղթ, անկացրած 1457 թ., թ. 337-9՝ այլ թուղթ, անկացրած 1598 թ.: ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 16,5x13,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (13x11): ԳԻՐ՝ բոլորգիր (Ա մաս. նմուշ՝ 51ա), նոտրգիր (Բ մաս. նմուշ՝ 166ա): ՏՈՂ՝ 22 (1ա-328բ, 335ա-6բ), 21(329ա-34բ): ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի, դոնակով, աստաղը կապոյտ կտաւ. լուսանցակողեր՝ կարմիր:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – գծանկարային. Ճ ա կ ա տ ա - գ ա ղ՝ 122բ (անաւարտ): Լ ու ս ն գ ա գ ա ղ՝ բոսական: Չ ա ղ ա գ ի ղ՝ բոսական, հանգուցագիր: Գ ո յ ն ե ղ՝ կարմիր, սե:




Նմուշ 51ա



Նմուշ 166ա

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան Մատթէոսի, ԻՁ. 64-74 (ԱԲ), Աւետարան Մարկոսի, Գ. 35 - Գ. 11 (ԳԿ): 2 (Ա-Բ)+2 (Գ-Դ), նոյն ձեռագրից. ստացրած մէկական թերթի յայնակի ծալումով եւ եզրահաստումով, որից բնագիրը մասամբ վնասուած: Թ. դ.: Մագաղաթ, ԱԲ՝ 25,1x15,5, ԳԿ՝ 24,5x15,5-15,7, երկսիւն ([26x16,2]), տող՝ 15 (պէտք է լինէր 17) բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Աա). ԱԲ՝ կարդալ՝ Բբ, Աա, Բա, Աբ՝ «եւ եկեալ ընդ ամպս... [ն]զովել՝ եղնուլ եւ ա» (Մտթ. ԻՁ. 64-74): ԳԿ՝ կարդալ՝ Գբ, Դա, Դա, Դբ՝ «Ձի որ առնիցէ զկամսն Աստուծոյ... բայց նոցա որ ա[ր]տաքինն են ամե[նայն]» (Մրկ. Գ. 35-Գ. 11):



Նմուշ Աա

ՎիճԱԿ՝ բաւարար. կազմը եզրամաշ, մէջքի կաշին Ա. փեղկից անջատուած, երկու կապիչները եւ մէկ գամն ընկած. խոնաւորին տեսած, թուղթը գունափոխուած, մի շարք թերթերի վրայ ցեցի անցկեր. նորոգուած հնում եւ Բ. դարում. նկարագրութեան ժամանակ Գ. պրակի առաջին թերթը, որ համարակալուած էր որպէս 14րդ. դրուց իր ճիշտ տեղում եւ այժմ 25րդ է:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. 1ա-336բ Սուրբ եւ ամեներջանիկ վարդապետին Վարդանայ [Արեւելցույ] Մեկնիչ Սաղմոսաց լուսաւոր եւ համառուաւ

Տէ՛ս ձեռ. 1119, 1ա-304ա. Մասն նխորդ./չիք: Յիշատ./չիք: Նխորդ./1ա-13ա: 1/13ա-50ա: Նխորդ./50ա: 2/50բ-85ա: Նխորդ./85ա: 3/85ա-122ա: Նխորդ./122աբ: 4/122բ-53բ: Նխորդ./154ա: 5/154ա-89ա: Նխորդ./189ա: 6/189բ-224բ: Նխորդ./224բ: 7/225ա-64բ: Նախորդ./264բ-5ա: 8/265բ-330ա: Յիշատ./330աբ: 9/330բ-6ա:

Լուսանցներում կան աղբիւրների անուններ, սրբազրու-
թիւններ: Տպ. տէ՛ս Մեկնութիւն Սաղմոսաց Գաւթի... մեծին
Վարդանայ Բարձրբերդցույ... Յամի Տեառն 1797... Ի յԱժդար-
խան, 520 էջ:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ա. (1598 թ., նոտրգիր) 337ա-9ա Գովասանութիւն Սաղմոսի յԱռաքել վարդապետէ ասացեալ («Ի վարդապետէն Առաքելէ վասն Գէորգ քահանայ») – Իմանալի այս բուրաստան, / Երգս ի Հոգւոյն աստուածական... Եւ ոչ ասեն, այլ մըրափին, / Փակեն զդուռն առագաստին:

Տէ՛ս Մ. Պոտորեան, Առաքել Սիւնեցի եւ իւր քերթուածնե-
րը: Վեներտիկ, 1914, էջ 310-6, որի համեմատ ունի տարբերու-
թիւններ:

Բ. 339գ (ԺԸ դ., նոտրգիր) [Քաղուածք ի Ե. գլխոյն Մատթէի Աւետարանին] – Եւ տեսեալ զժողովուրդն... փառք քեզ Տէր Աստուած մեր:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

50ա (Առաքել Սիւնեցու, ԺԳ. դար)

Զգծող գրոցս՝ զնուաստ ոգի տէր Առաքեալ Սիւ-
նեաց յիշեցէք ի Քրիստոս:

Տէ՛ս ԺԵ. դ. յիշ-ք, Բ., էջ 83:

336բ (Մատթէոս գրչի, 1457 թ.) Հնդ որս երեւեալ ազքանազ[ե]ան ազգիս ի տանէ Թորգոմա փառք եւ պարծանք Այրարատեան գաւառիս եւ իբրեւ զարեգակն փայլէր յաշխարհի սքանչելի այլն Աստուծոյ եւ մեծանուն հոգետորն Վարդան վարդապետն՝ վարժելով զբազումս ի կրթասիրաց ի գիտութիւն Աստուածաշունչ կտակարանաց, երեւելին ի գիտնականս, այլ եւ յոյժ ըղձալի փափագմամբ մեկնեալ զՍաղմոսս աստուածահօրն Դաւթի, թողու գանձ անհամեմատ սուրբ եկեղեցոյ, եւ ինքն առ անձկալին Յիսուս վերափոխի, որոյ յիշատակն արհնութեամբ լիցի, եւ աղօթք նորա եւ սերմն խրատու անպակաս ի սուրբ եկեղեցոյ՝ մինչեւ ի կատարած աշխարհի եւ ի գալն Աստուծոյն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, եւ ինքն Հայրն ամենակալ, Որդին միածին եւ առատաբաշխ Սուրբ Հոգին յամենայնի արհնեալ յաւիտեանս յա[ւիտ] ենից:

Զանարժանս յիշատակի,
Սուտակասպաս մեռեալ ոգի,
Զմեղաւք լցեալս յամենայնի,
Նա եւ ժառանգ սատանայի:
Ո՛վ ընթերցողք այսմ տառի,
Վերաբերողք ի սմայն գանձի,
Զգրիչ Մատթէոս փանաք ոգի
Յիշել յաղօթս ձեր բարի:
Թվին ԶԶ. (1457):

Տէ՛ս ԺԵ. դ. յիշ-ք, Բ., էջ 83:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

339ա (Ա. յաւելագրողի, 1598 թ., նոտրգիր) Ո՛վ պատահողք անուշահամ եւ ախորժ տաղիս եւ ներբողե-
նի Սաղմոսիս, յիշեցէք միով Տէր ողորմեայիւ զմեղա-
պարտ Յակոբ էրէցս, եւ Աստուած զձեզ յիշէ յօրն անե-
րեկին. ամէն: Գրեցաւ թվին Ռեւէ. (1598) եւ եղաւ ի Սաղմոսի Մեկնիչին յետոյ յիշատակ դուզն:

153բ (Նոտրգիր, ԺԸ. դ.) Զնչաձ՝ անընթեռնելի:

ՆԿԱՐԱՓՈՐԶ՝ Գա՝ բուսական լուսանցազարդ:

ՆՇՈՒՄ՝ Կազմի մէջքին ստանձած թղթին. «Վարդան վանական վարդապետի Մեկնութիւն սաղմոսաց. (2)»: Աս.՝ «ԶԶ. - 1457. Մ[ատրոպ] եպ[իսկոպոս]»:


2523

Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

ԺԳ. դար

ԳՐԻԶ՝ Գրիգորիս: ԿԱԶՄՈՂ՝ Սարգիս Բեյ:
ԹԵՐԹ՝ 235. չգրուած՝ 66բ: ՊՐԱԿ՝ Խ-Կ*x12 (ԽԲ 11, ԾԲ 10, ԾԶ, ԾԹ 8, Կ 5)+1: ՆԻԻԹ՝ թուղթ, թ. 335՝ այլ, լուսագծերով (ԺԷ դ.): ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 16,8x12,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (14x10): ԳԻՐ՝ բո-
լորգիր (նմուշ՝ 139ա): ՏՈՂ՝ 27-29: ԿԱԶՄ՝ դրոշմագարոյ շագանա-
կազոյն կաշի, դոնակով, միջուկը տախտակ, աստառը կապոյտ
կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր:


* Վերակազմողը նշանակել է նոր պրակահամարներ՝ Ա-ԻԱ, նաեւ՝ թերթակալել է բոլոր պրակների առաջին վեց թերթերը՝ Ա-Զ, Է-ԺԲ... ձժԻ-ձժԶ:



Նմուշ 139ա

տարանիս, զոր ամենասուրբ Հոգին հանգչելով յերանելի աւետարանիչսն՝ ընդ համասփիւռ ոլորտս տիեզերաց լոյս շահացուցին, իսկ ի լինելութեան արարածոց, յորժամ Բանն Հար բղխեցոյց յարարչագործն յեղէմայ չորս առաջս գետոց՝ զչորս կողմանս երկրի պարարելով, որ բերէր արինակ զաւետաբեր չորս առաջս Աւետարանիս, վասն զի բղխելով ի կենդանի աղբերէն Քրիստոսի զբանաւոր բարունակս. այսինքն՝ զբառանիւթեան զմարդիկ երկնաւոր այգեգործին ի ծաղկաւետ լիութիւն եւ ի |304ա| պատղածնութիւն ուրախութեանն կազմեցին: Նման են սոքա քառանկիրն աշխարհիս, իսկ զի չորս չորեքկերպեան աթոռոցն զի՞նչ ասացից, զի են ի նոսա չորս դէմն՝ Մար[դ]ոյ, Առիւծոյ, Յլոյ, Արծուոյ: Մատթէոս ի դէմն մարդոյ, Մարկոս ի դէմն առիւծոյ, Դուկաս ի դէմն ցլոյ, Յովհաննէս ի դէմն արծուոյ սրաթեւ, արագաթոխ ի բարձունս ելանէ եւ զանճառն ճառէ, եւ իւրաքանչիւր զմարմնաւորութիւնն Քրիստոսի գուշակեն: Քանզի եւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս զքառանիւթեա մարմին նախաստեղծին զգեցեալ՝ երկրորդ Ադամ զինքն անուանելով, բեւեռեցաւ ի վերայ քառաթեւ խաչին, զԱրեգակն խաւարեցոյց, զԼուսինն յարին դարձոյց, զերկիր շարժեաց, զվէմս պատուեաց, զմեռեալն արտաք[ս] վերածեաց, զգժոխս աւերեաց, զարգելեալսն ազատեաց: Զհպարտացեալ գոռոզն զԲելիար կապեաց, յարեաւ սքանչելապէս յաւուր երրորդի, եւ յարոյց ընդ իւր զապականեալ մարմինն Ադամայ, եւ մեզ՝ հաւատացելոցս խրախոյս տալով, ասէ՛ քաջալերեցար՝ ո՛ւր, զի ես յաղթեցի աշխարհի, եւ առ ծնաւոյն իւր հրաշալի մարմ|304բ|նովն, եւ հրաւիրեաց զմեզ յիւր արքայութիւնն, առաքեաց զմխիթարիչ Սուրբ Հոգին յառաքեալսն, եւ հրեղէն լեզուաւ զարդարեաց նոքաւ զհաւատացեալքս ի սուրբ Երրորդութիւնն, որում ամենեքեան արժանի լիցուք շնորհաւ եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն: Գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ նուաստ եւ յետին գրչի՝ Նիկողոսի մեղապարտի, ունայնագործ Մելանաւորի, ի թուաբերութեանս աւքանագեան եւ աբեթական տաւմարի ՌՃԵ. (1656) եւ ըստ թուոյ շրջանի Ժ. շրջան անցեալ, եւ ըստ նորումս շրջանի Զ. եւ Ե.ն մտեալ, եւ ի գալստենէ կենարարին ՌՈՄԷ. (1657), եւ ստոյգ եւ յնտիր արինակէ, եւս առաւել համաբայիցն, զի գաղափար սորին շնորհեաց մեզ աննախանձաբար քաջ րաբունապետն Մինաս Բաբերդացի, ի յաշխարհիս Հոնաց եւ ի յերկիրս Արիւմի եւ յոյակապ եւ ի հոչակաւոր քաղաքիս, որ կոչի Կաֆայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սրբոյն Սարգսի Զատավարին եւ որդոյն նորա Մարտիրոսին եւ այլ բազ|305ա|մահաւաք սրբոց, ի հայրապետութեանն Հայոց տեառն Յակոբայ եւ յեպիսկոպոսութեան ամենայն հիւսուսական կողմանց

տէր Գրիգորի՝ արհնեալ քահանայապետի, զոր տէր Քրիստոս պահեսցէ ի կամս ողորմութեան իւրոյ. ամէն:

Ի յայսմ ժամանակ]ի գրեցաւ ամենագովելի եւ գերահռչակելի, գերակատար եւ գերապանծ, գեղապաճոյճ եւ յոճնատենչ, լուսայիղճ եւ աստուածապաշտում սուրբ Աւետարանս չորեքճառագայթեան, ճշմարիտ աստուածախաւսութիւն, վսեմական աստուածաբանութիւն, անգիւտագործ եւ անհամեմատ ծայրածաւալ եւ ծայրագոյն վիպասանութեամբ, ի կայէ կատարոյ բարձրագունէ, յամենազար եւ յամենիմաստ տրւութենէ Հոգւոյն Սրբոյ առլցեալ ի հարաշարժ աղբերէն, ի հրածորանն հոսմանէ արբեալ բղխումն շնորհաց չորիցն աւետարանչաց՝ քառաբղխիցն սրբոց աստուածակիր արանցն ընտրելոց, շարադասեալ բացափայլ արտաճառութեամբ, բարձրաբարբառ աւետարանութեամբ: Յաղագս Բանին Աստուծոյ միածնին Հար մարմնաւոր ծննդեանն եւ մկրտութեանն եւ ամե|305բ|նայն տնարինական տնտեսութեանն, զոր ի յերկրի կատարեաց Աստուածն բան, յաղագս փրկութեան ազգի մարդկան ընդ չորեքճագեան տիեզերս տպաւորել յամենայն հաւատացելոց անձինս ճշմարիտ երկրպագուաց սրբոյ Երրորդութեանն, եւ յաղագս առ ի Հարէ անսկիզբն եւ անժամանակ ծննդեանն, որով զուարճանան անգրաւ ուրախութեամբ երկնայինքն եւ երկրաւորքս՝ փառաւորելով զհամագոյ սուրբ Երրորդութիւնն այժմ եւ յաւիտեանս. ամէն:

Ճրագ անլոյս, լոյս նսեմացեալ, աղ անհամ, համեմ դառնացեալ յառաջ կոչեցեալ, յետոց կարգ դասեալ, զխաչ Տեառն բարձրեալ, հետոցն ոչ շուեալ, հետոցն հետեւեալ, շաւղաց մոլորեալ, սրբութիւն ստացեալ, ախտիւ շաղախեալ, Հոգի Սուրբ առեալ, զմարմին մեծարեալ, յաստիճան կոչեալ, անարժան գտեալ Յովանէս անուամբ ի քաղաքէն Կողոնիւռ եկեալ, եւ սնեալ յաշխարհն Հայոց ի քաղաքն Կաֆայ, եւ կոչեցեալ ի կարգ իրիցութեան ի վերայ գեղաքաղաքին Պաղչասարայի: Եւ յետ Ե. ամ անցելոյ, որ |306ա| հայոց թիւն ՌՁԳ. (1634) էր, եղեւ ծոազատիկ հոռոմոց եւ եղեւ գժտութիւն ի մէջ հայոց եւ հոռոմոց. վասն որոյ քանտեալ աւերեցին զեկեղեցին հայոց: Նոյն պատճառ ի նոյն ամին Յովանէս երէց թողեալ գտունն եւ զհասկն եւ գժողովուրդն Աստուծոյ յանձնեալ, եկն ի Կաֆայ քաղաք՝ ուխտ եղեալ երթալ յԵրուսաղէմ, զոր միաբանեալ ի մի խորհուրդ դօրալաթաւորք Կաֆայու միջնորդ արկանելով գտէր Սարգիս վարդապետն յԵրուսաղէմի, որ եւ բազում անգամ գաղտնի եւ յայտնի խրատեալ ասէր, եւ հազիւ հաւանեցուցանէր մնալ բնակիլ ի վանք Սուրբ Աստուածածնին, որ ասի Նոր Երեշխաւուր, եւ յետ հաւանութեան կամացն, եկեալ յաջորդ Սուրխաթոյ արքեպիսկոպոսական եւ մեծահաղէս ժողով արարեալ ի քաղաքն Կաֆայ՝ ի Սուրբ Սարգիս

եկեղեցին: Որք էին երեսփոխանք խոճայ Պէնկլին, խոճայ Մարն, խոճայ Եպաչին, մահդեսի Մինասն եւ այլ ամենայն ազատք եւ ուսմիկք, միաբանեալ ետուն զբանալի Աստուածածնի վանիցն: Եւ յետ սակաւ աւուրց ի նոյն ամի հոկտեմբեր ամսոյն ժե. (15) սկիզբն արարին սուրբ վանից |306բ| Աստուածածնի վերստին նորոգել, եւ ըստ կարեացն աւգնութիւն արարեալ Յովաննէս երէց արդեամբք եւ ջանիւ աշխատանաւք, եւ զանձն եւս տուեալ ի ծառայութիւն Սուրբ Աստուածածնի՝ ընդ իւր ունելով զգեստ պայծառ եւ մեծագին եւ զարդ բազում ի պայծառութիւն սուրբ եկեղեցոյ: Եւ ի թվականիս ՌՃԳ. (1655) ամին ճանապարհ արարեալ յԵրուսաղէմ կատարել զուխտն, եւ դարձեալ եկն ի վանս իւր՝ ընդ իւր ունելով մասն ի սուրբ փրկչէն, եւ ի սոյն ամի սիրով եւ փափաքանաւք եւ սրտաջան յաւժարութեամբ եւ քաջահաւատ յուսով եւ քրիստոսասէր բաղձանօք ետ գրել սուրբ Աւետարանս ի փրկութիւն կենաց իւրոց եւ ի լուսաւորութիւն հոգւոյ իւրոյ՝ յիշատակ իւր եւ ծնողաց եւ եղբարց եւ ամենայն զարմից, զանձ յաւիտենական եւ անկապոյտ ճոխութիւն ի պայծառութիւն սրբոյ եկեղեցոյ եւ յուրախութիւն ուխտի մանկանց նազելի մար մերոյ նոր Սիրվինի:

Արդ, աղաչեմ զսրբազան եւ զաստուածամերձ դասս քահանայիցդ, որք ընթեռնուք եւ լուսաւորեսցիք, յիշեսցիք ի մաքրափայլ եւ ի սրբամատոյց յաղաւթս ձեր |307ա| զվերոյգրեալ զՅովաննէս երեցն եւ զհայրն իւր՝ զՄուրատն, եւ զմայրն՝ Կիլիսէրն, եւ զիրիցակինն՝ Զինճին, եւ զեղբարքն իւր՝ զՄիասարն եւ զՀարանտոնն, որ փոխեցան ի տիս մանկութեան իւրեանց յաշխարհն կենդանեաց, եւ զկենդանի եղբայրն իւր՝ զՊետ-

րոս, եւ զգոուստրն՝ զԹագունին, եւ զամենայն արեան մերձակայքն իւր՝ զհարեղբայրն՝ զմահդեսի Եվրէնն, եւ զմեծ հաւ[ւր]ն՝ զմահդեսի Պետրոսն, եւ զհաւ[ւր]նն իւր՝ զԵանգլետէն, եւ զմեծ հարեղբայրն իւր՝ զմահդեսի Պաւլոսն, եւ զորդին իւր՝ զմահդեսի Գրիգորն, եւ զկենակիցն իւր՝ զՇահգաւտէն, եւ զգոուստրն իւր՝ զՓաշան, եւ զթոռն՝ զՆիկողոսն, որ եւ շնորհաւք Սուրբ Հոգւոյն առնէ զամենայն արուեստս դժուարինս եւ անհնարինս արագ եւ ճարտար ի գրչութիւն եւ ի դեղագործութիւն ըստ այնմ: Թէ ի Հոգւոյն տուեալ են ումեմն բան իմաստութեան, այլում բան գիտութեան, շնորհս լեզուաց եւ այլն: Եւ սմա տուեալ են շնորհս ձեռաց՝ կատարել գիտութեամբ, առնել զամենայն որ եւ սուրբ Աւետարանս գրեաց եւ ոս|307բ|կեզաւծ պատկերօք զարդարեաց, կապեաց եւ կազմեաց եւ շրջապատն արծաթազարդ արիւնեաց, զգիրն եւ զտուփ, զկերպն եւ զձեւն պատկերացն ինքնին արարեալ ըստ աստուածատուր բազմարուեստ շնորհացն, որպէս եւ յայտնի իսկ է սուրբ Աւետարանիս:

Արդ, որք հանդիպիք սմա՝ ընթեռնելով կամ զաղափար առնելով, յիշեսցիք զվերոյգրեալքս ի սմա, եւ դուք՝ յիշողիդ եւ յիշեցեալքս առհասարակ վայելեսցուք զպատրաստեալն ի Տեառնէ զանսպառ ուրախութիւնն ի Քրիստոսէ աստուծոյ մերմէ, որ է արհնեալ յաւիտեանս. ամէն:

Հայր մեր, որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո՛:

Տէս ժե. Գ. յԷ-ք, Գ., էջ 713-5:

ՆՇՈՒՄ Աս՝ «2534/Հ^{որ} 367», «ՌՃԵ. - 1656. Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2535


Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ժԶ. դար

Թերթ՝ 326+3 (կրկն.՝ ք. 1, 86, 235). չգրուած՝ 1աք, 100աք, 168ա-9բ, 254աք, 324ա-6բ: ՊՐԱԿ՝ Ա-ԻԷx12+1+4 (Բ, Գ 14, ԺԳ, ԺԸ 10): ՆԻԻԹ՝ մագաղաք, ք. 323-6՝ թուրք, լուսագծերով եւ լուսարդշմով՝ երկու շրջանակ, մէկի մէջ՝ խաչ (աւելացուած ժե. դարում), եզրահատման պատճառով ընկալուում է մասամբ: ՄԵՍՈՒԹԻԻՆ՝ 16,8x11,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն (11,5x7,5): ԳԻՐ՝ բոլագիր (նմուշ՝ 12ա): ՏՈՂ՝ 19-22: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի, դոնակով, միջուկը տախտակ. աստաղը վարդագոյն մետախ. լուսանցակողերը՝ կարմիր:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ – Կ ի ս ա ի ո ռ ա ն՝ 1գ, 101ա, 170ա, 255ա: Լ ու ս ա ն ց ա զ ա ռ դ՝ թոչուն, բուսական (նաեւ մարդադէմ), վարդեակ, տանաւ, ծառ, յուշկապարիկ, աշտանակ (212ա): Զ ա ռ դ ա գ ի ռ՝ թոչնագիր, կենդանագիր, բուսական: Գ ո յ ն ե ղ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, նարնջի, սեւ, վարդագոյն (լուսանցագարդերի եւ զարդագրերի մի մասը գծանկարային են):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը եզրամաշ, մէջքի կաշին պատուած, երկուական կապիչներն ու փայտէ գամերը, դոնակի աստառն ընկած, ք. 232, 239, 243՝ բնական անցքեր:



Նմուշ 12ա

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1. 1գ-9բ Աւետարան Մատթէոսի:
2. 98ա Նախադրութիւն, 98բ-9բ Գլուխք, 101ա-66բ Աւետարան Մարկոսի, 166բ Թելադրութիւն:
3. 166բ Նախադրութիւն, 167աբ Գլուխք, 170ա-253ա Աւետարան Դովասու:
4. 253բ Գլուխք: 255ա-322ա Աւետարան Յովհաննու:

Ունի լուսանցային համաբարբառ՝ 2-5 տող:

Բ. Ուսանաւորք

166բ Այս Մարկոս ասի առիւծ
 Զի սիգաճեմէ չէ գրծուած:
 Երազ յորասայս ըմբռնէ բուծ.
 Սոյն հարթ արար զբանս իւր հրծուծ:
 253բ Այս Ղուկասու եզն ասացին,
 Որպէս նա իսկ հերկէ զգետին,
 Կրկին անխոնջ վասն պտղին
 Սոյնպէս յերկար են բանք սորին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

322ա Փառք եւ պատիւ Հօրն անծնին, / աներբ,
 անեղ իսկականին, / եւ միածին նրա Բանին, / անճառ
 ծննդեանն հայրենին, / եւ Սուրբ Հոգոյն միշտ փառակ-
 ցին, / ամենառատ պարգեւատուին, / միող բնութեանն
 աստուածային, / մի տէրութեանն եւ միշտ էին, / գերա-
 կատար երիցն անձին, / կատարողի արարածին, / յան-
 ցեալն յայժմուս յապագային /եւ յանսպառ յաւիտենին
 յաւիտեանս. ամէն:

Իսկ չորից ակետարանացն խորհուրդ բազմօրինակ
 իմն ցուցմամբ տեսանի, զի ոմանք ասեն, թէ չորից
 Աւել 322բ|տար[ան]ացն են չորք անկիւնք արարածոց՝
 Արեւելք, Արեւմուտք, Հիւսիս եւ Հարաւ: Պարտ էր հա-
 մասփիւռ քարոզել զԱւետարանն: Իսկ ոմանց հաճոյ
 թուեցաւ ըստ չորից մշտահոս գետոցն յադենական աղ-
 բերէն յառաջ խաղացեալ՝ առ ի տիեզերաց ոգանումն՝
 Փիսոն, Գեհոն, Տիգրիս եւ Եփրատէս՝ թրւով ուռճա-
 տեալք ի կենդանական աղբերէն ոռոգանել զպատա-
 քեալ միտս մարդկան: Նոյն օրինակ ըստ տեսութեան
 եզեկիւնելի քառակերպեան աթոռոյն՝ Մարդ, Առիւծ, Եզն
 եւ Արծիւ, զանմարմնոցն Տէր տեսանելով բազմեալ ի
 փառացն աթոռ իմանալի ցուցմամբ, զինամս բոլոր
 բնութեանս զակն արկումն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳՈՅԻ

323ա (որպէս շարունակութիւն նախորդի, այլ ձեռ-
 քով, ժէ. դար) Որ առ աստուածապէս եւ տիրաբար
 նշանակէ զիւնելն առ ի հողածինս, հոգեղինացն անմա-
 հից զմահկանացու առնու հաղորդս, եւս ի գերակա-
 տար հանել ի փառս: Վասն զի փառաց թագաւորն
 Քրիստոս զմերս առեալ բնութիւն, յինքեան միացոյց
 յաստուածութեան, ուսուցանելով մի Որդի, դաւանելով
 յԱստուծոյ Հարէ եւ ի Մարիամայ սուրբ կուսէն անճառ
 միութեամբ/// (շարունակուած):

323ա (իբր շարունակութիւն նախորդի, ժժ. դարի
 վերջ, Մեսրոպ արքեպս. Սմբատեանի ձեռքով) Որպէս
 առեալ ի սոյն Աւետարանէ հարք սուրբք, մեկնիչք
 ուսուցանեն մեզ գրուածովք իւրեանց: |323բ| Արդ,
 գրեցաւ Աւետարանս ի փառս աստուծոյ Յիսուսի Քրիս-
 տոսի, ի թվին մարմնառութեան փրկչին Յիսուսի
 ՌեճկԳ. (1563) եւ ի թվիս հայկական ՌժԲ. (1563) ի
 հայրապետութեան ազգիս հայոց տեառն Յակովբայ, ի
 մայրաքաղաքն Հայոց եւ հնութեանն պարծանքն Նա-
 խիջեաւն, ընդ հովանեաւ Սուրբ Վարդան եկեղեցոյ
 Աստապատայ, ընդ ձեռն մեղսամած Մեսրոպ վար-
 դապետի՝ խոնարհ ծառայի Սուրբ Վարդանայ:

Այս «յիշատակարան»ը գրուած է Մեսրոպ եպս. Սմբա-
 տեանցի ձեռքով, յետագայում ակելացրած թղթի թերթի վրայ,
 որ գրուած է բուն գրչի յիշատակարանի պատմական մասը
 պարունակող մագաղաթէ թերթի փոխարէն, առ այս 323բ էջի
 ստ. լս ժժ. դ. վջ. շղագրով կայ «Կեղծիք Մեսրոպ եպիսկոպոսի
 Սմբատեան»: Ըստ այդմ նրա նշանակած գրչութեան թուա-
 կանը «ՌժԲ. – 1563» եւ վայրը «Նախիջեան» խնդրական են:

ՆՇՈՒՄ՝ Կազմի մէջքին սոսնձած թղթին՝ «12»: Կազ-
 մաստառ Ա.ին սոսնձուած թղթին՝ «2535/2^ր 373»,
 «ժէ., Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:

2536


Ա. Ի Ե Տ Ա. Ր Ա Ն

[ԿԱՏԱ]

ՌՁԶ. – 1657

ԳՐԻԶ, ԾԱԳԿՈՂ ՆԻԿՈՂՈՍ [ՄԵԼԱՆԱՏՐ]: ՄՏԱՅՈՂ ՄԻՆԱ ՄԵՅ:
 ԹԵՐԹ՝ 318. չգրուած՝ 1բ-3ա, 8բ, 155ա, 248ա-9ա: ՊՐԱԿ՝
 1x10+Ա-ԻԶx12 (ժԵ, ԻԶ 10): ՆԻԻԹ՝ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝
 16,5x12: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն (11,5x9): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝
 69ա): ՏՈՂ՝ 22: ԿԱԶՄ՝ մանուշակագոյն մովաթ, մէջքը՝ շագանա-
 կագոյն դրոշմագարդ կաշի, միջուկը ստուարաթուղթ. աստաղը
 կանաչ թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր (ժժ. դարի): ՊԱՀՊԱ-
 ՆԱԿ՝ 1+1, կանաչ թուղթ, մաս կազմաստառի, Աբ եւ Բա էջերին
 սոսնձուած սպիտակ թուղթ:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Մատթէոս՝ 11բ, Մարկոս՝ 98բ,
 Ղուկաս՝ 155բ, Յովհաննէս եւ Պրոխորոն՝ 249բ: Խ ո Ր ա ն ՝ 3բ,
 4ա, 4բ, 5ա, 5բ, 6ա, 6բ, 7ա, 7բ, 8ա: Կ ի ս ա խ ո Ր ա ն ՝ 12ա,
 99ա, 156ա, 250ա: Լ ու ս ա ն գ ա զ ա Ր ղ՝ վարդեակ, թոշուն,
 տանաւ, բուսական, բուսական՝ մարդու դէմքով (251ա): Զ ա Ր -
 ղ ա զ ի Ր՝ թոշնագիր, բուսական, հանգուցային: Գ ո յ ն ե Ր՝ կար-
 միր, կապոյտ, կանաչ, վարդագոյն, նարնջի, մանուշակագոյն,
 շագանակագոյն, սպիտակ, սեւ, ոսկի:



Նմուշ 69ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը եզրամաշ, պահպանակ Բ.՝ հիմքից
 անշատ, ք. 257, 281, 315՝ բնական անցքեր, ակետարանիչների
 եւ անուանաթերթերի մանրանկարների ներկերը փոքր ինչ վնա-
 սուած, մասնատրապէս՝ Յովհաննէս եւ Պրոխորոն նկարչ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1. 3բ-4ա Թուղթ եւերեալ:
2. 4բ-8ա Համարաբարտ (Կանոն Ա-Ժ.):

3. 9ա Համաձայնություն նախասացեալ գլխոցս:

4. 9աբ Նախադրություն, 9բ-11ա Գլուխք, 12ա-96ա Աւետարան Մատթեոսի:

5. 96բ Նախադրություն, 97ա-8ա Գլուխք, 99ա-151բ Աւետարան Մարկոսի (150բ-1բ «Յարուցեալ Յիսուս»):

6. 152աբ Նախադրություն, 152բ-4բ Գլուխք, 156ա-246ա Աւետարան Լուկասու:

7. 246բ-7ա Նախադրություն, 247աբ Գլուխք, 250ա-317ա Աւետարան Յովհաննու:

Ունի լուսանցային համաբարբառ՝ 2-7տող:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

317բ Փառք ամենասուրբ Երրորդութեանն՝ Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Որ տայ զաւրութիւն յինքն հայեցողաց՝ ի ներհակ եկամտիցն պարսպել զանձինս եւ բնաւորական արարչադիրն հետեւել սահմանի, որով զբնաւորական շարժումն իմաստապէս մարթ է յաւրինել, աստուածային սիրովն ուղերձել եւ սիրալիր համբուրիւ զսեփհականն ողջունել զկեանս. յար ի գլուխն ըստ իմաստնոյն հայեցմամբ, ըստ որում եւ այժմոյս հոգւոյն ակամբ նայեցեալ յաստուծայինսն: Այսինքն՝ ի հրաման գլխոյն մերոյ ու Աստուծոյ, որ ասէ, թէ՛ Զամենայն զոր ինչ ունէր, երթեալ վաճառեաց եւ գնեաց զայն մարգարիտ: Եւ դարձեալ, թէ՛ Մի՛ գանձէք ձեզ զգանձ յերկրի, այլ յերկինս, որ ոչ ցեց ուտէ եւ ոչ ուտիճ |318ա| ապականէ: Եւ ըստ Սողոմոնի զասացեալն, թէ՛ Լաւ է զվաճառն զայն գտանել, քան զգանձս ոսկոյ եւ արծաթոյ: Եւ թէ՛ Երանի, որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընդանի յերուսաղէմ վերին, որ եւ ստացան զսուրբ Աւետարանս զայս՝ զանանց գանձարանս եւ զաստուածունակ ճեմարանս, որ է թագ պարծանաց եւ պսակ փառաց սրբոյ եկեղեցոյ, նա եւ ամենայն սրբոց առաքելոց եւ մարգարէից, հայրապետաց եւ բազմաշարժար մարտիրոսաց: Վասն զի արեգակնապէս լուսաւորէ զընթացնոր հաւատացեալքս:

Արդ, այսմ աստուածային եւ հոգեւոր գանձուցս եւ անշիջանելի լապտերացս եւ ամենագով գերահրաշ պարգեւիս ցանկացաւդ եղեալ աստուածասէր եւ առաքինի վարուք լցեալ սրբազան քահանայս՝ տէր Մինաս մահապահն, հանդերձ որդւովն իւրով՝ տէր Քրիստոս-

տուրիւ, եւ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց՝ յիշատակ հոգւոյ եւ |318բ| իւր ծնողացն՝ հօրն՝ Ուրուպիին, եւ մօրն՝ Ախպիբային, եւ կողակցին՝ Ալամ իրիցկնոջն, որոցն՝ տէր Քրիստոստուրինն՝ եւ Ուրուպիին, դստերացն՝ Եպիստոմիային եւ Ալիկիլին եւ ամենայն արեան մերձալորաց]. եւ ետ ի դրունս Սուրբ Աստուածածնի, որոց լիցի սա առ ամենեցուն պատճառ փրկութեան եւ առաջնորդ երկնաշու ճանապարհին:

Արդ, եղեւ զբաւ զրչութեան սորա ի թվականիս հայոց ՌՃԶ. (1657), ի հայրապետութեան տեառն Յակոբայ եւ Եպիսկոպոսութեան ամենայն հիւսիսական կողմանց տէր Գրիգոր արհնեալ քահանայապետի, զոր Տէր Աստուած պահեցէ ի կամս ողորմութեան իւրոյ, ի մայրաքաղաքն [Կաֆայ] («Կաֆայ» բառը ջնջած, տեղը գրած «Պօլիս») ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սրբոյն Սարգսի Զաւրավարին, ձեռամբ Նիկողոս ոմն անարժանի:

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք զսա եւ լուսաւորիք կամ արինակէք, յիշեսչիք ի Քրիստոսս զառաջասացեալ պատուական/// (Թափուած):

ԺԹ. դարի կէսի ձեռքով ստորին լուսանցում աւելացրած. «անձինսն, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն»:

Տէս ԺԷ. դ. յիշ-ք, Գ., էջ 761-2:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1ա (շինծու բոլորգիր եւ նոտրգիր, ԺԹ. դար) Աւետարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, գրեալ յամի տեառն 1655, որ ի թուին հայոց ՌՃԶ., ձեռամբ Նիկողայոս դար:

ՆՇՈՒՄ՝ Կազմի մէջքին սոսնձած կանաչ թղթին «18», որի տակից երեւացող սպիտակ թղթին՝ «11»: Կազմաստառ Ա.՝ «2536/2^{րդ} 379»: Պհպ. Ա.ա.ին սոսնձած թղթին (ճնշադրոշմով. բոլորակ, կենտրոնում երկգլխանի արծիւ., «Всеросійск N° Д Т. 6 Вѣс-тавска», «ՌՃԶ., Մ[ետրոպ] եպ[իսկոպոս]»), «Ի սեպհական ձեռագրոց Գէորգ Գ. կաթողիկոսի՝ հանեալ ի պահարանէ, որ ի «Ծաղկած ալվան»ի Վեհարանի»:

2537

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն


ԱՐԱՆԻՇՇ*

ԳրիՉ՝ Կարապետ արդ: ԾԱՂԿՈՂ՝ Ղարայ՝: ՍՏԱՅՈՂ՝ Յոհաննէս վրդ.:
Թեթ՝ 294-6+1 (տե՛ս Պահպանակ, կրկն.՝ թ. 74). չգրուած՝ 1ա-6ա, 74դ, 96ա, 290բ-4բ: ՊՐԱԿ Ա+ԻԳx12 (Ձ 10+1, ԺԱ 10)+4: ՆԻԻԹ՝ թուղթ, թ. 289-92՝ այլ թուղթ: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 18x13,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկպիւն (14x10): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 87ա): ՏՈՂ՝ 19-28 (19՝ 7ա-64բ, 75ա-123բ, 133ա-55ա, 21՝ 65ա-74բ, 124ա-31բ,

ՌԺԷ. – 1568

169ա-288բ), խառն՝ 21-27՝ 155բ-68բ, 20՝ 289ա-90ա, 25-28՝ 132աբ): ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի, դոնակով, միջովը տախտակ, աստառը կապոյտ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 4 (թ. 1-4) + 2 (թ. 293-4), թուղթ, չգրուած:
ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻԻՆ – Մաաթէս՝ 6բ, Մարկոս՝ 96բ, Ղուկաս՝ 152բ, Յովաննէս եւ Պրոխորոն՝ 228բ: Կ ի ս ա խ ո ս ա ն ՝ 7ա, 97ա, 153ա, 229ա (կիսախորանում շրջանակների մէջ,

կենտրոնում Յիսուս Քրիստոս, կողքերին՝ Յովհաննան և Յակոբ առաքելայի: Լ ու ս ա ն ց ա յ ի ն . Յարուցեալ Մարիամ՝ 156ա, Սրնգահար հովիւ՝ 158բ, Յովսէփ Արիամաթացի՝ 282ա: Լ ու ս ա ն ց ա զ ա Ր Ղ՝ բուսական, թռչուն, տանաւ, յուշկապարիկ, վարդեակ, ծառ: Ջ ա Ր Ղ ա զ ի Ր՝ թռչնագիր, բուսական, կենդանագիր, հանգուցագիր: Գ ո յ ն ե Ր՝ կարմիր, կապոյտ, դեղին, կանաչ, նարնջի, վարդագոյն, մանուշակագոյն, սպիտակ, շագանակագոյն, սև:



Նմուշ 87ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, մետաղէ խաչը, ստորին կապիչը և գամերն ընկած, մէջի կաշի պատուած, դոնակի կաշուից պահպանուած 6x4սմ հատուած՝ վերին արտաքին մասից. 74դ մէկուկէ սիւնակ գրուած, վրան թուղթ փակցրած, որը նորոգման ժամանակ հետացուել է բայց բնագրի պակաս չկայ. նորոգուած 2004 թ.՝ լրացուել են խիստ ցեցակեր մասերը, նաեւ՝ հիմնականում ստորին յուսանցների թափուած մասերը:

*Վկուներս երկում, որ Արցախ աշխարհում է (հմմտ ձեռ. 4181, որ նոյն տարում գրել է նոյն Կարապետ արեղան):

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1. 7ա-95բ Աւետարան Մատթէոսի:
2. 97ա-151բ Աւետարան Մարկոսի (151բ «Յարուցեալ Յիսուս»՝ սկզբից թերի, սկ.՝ «Իսկ յետոյ մինչդեռ բազմեալ էին... », *ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ 1636 թ.*):
3. 153ա-227բ Աւետարան Դովասու:
4. 229ա-87բ Աւետարան Յովհաննանու (287աբ «Իրբ կնոջն շնացելոյ»):

ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

228ա (գրչի) և զգծաւղ սուրբ Աւետարանիս Կարապետ սոսկանունն արեղայ յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ. ամէն:

287բ Փառք ամենասուրբ երրորդութեան՝ Հար և Որդոյ և Հոգոյն Սրբոյ այժմ և անգրաւ յաւիտեանս յաւիտենին. ամէն: Արդ, արհնեալ և Քրիստոսն Աստուած մեր, ստեղծող և արարիչ համայգոյից արարածոց քոց, Որդի՛ Աստուծոյ կենդանոյ և կենդանարար, միածինդ և մարդասէր Աստուած, ի քէն սարսեալ դողան իման|288ա|ան(=լ)ի զարուսթիւնք, սրբասնեալ Աստուածն բոլորից, սուրբ, սուրբ, սուրբ, Տէ՛ր Աստուած սաբաո՛վդ, լի են ամենայն արարածք փառաւք քո: Դո՛ւ, Տէ՛ր տերանց և Աստուած աստուծոց, լրման ժամանակաց վասն մերոյ փրկութեան կամաւ Հար և հաճութեամբ Սուրբ Հոգոյդ խոնարեցաւ յերկնից, և մարմնացար ամէնարհնեալ սուրբ կոյս Աստուածածնին Մարիամա, և դատապարտեցեր զմեղս մեր ի մարմնի՛ ի քուն, խաչեցար և յարեար, զգժոխս աւերեցեր, զհոգիսն ազատեցեր, համբարձար փառաւք յերկինս, և միւսանգամ գալոց ևս՝ դատել զերկոյտասան ազգն Իսրայէլի:

Նովին բարէխաւսութեամբ սուրբ Աստուածածնին ազատեա՛ զհոգի գծողի սուրբ Աւետարանիս մեղապարտ գրչի՛ սոսկանունն Կարապետ արեղի և անարժանի. ամէն:

Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ ոգնայմեղ և փծուն գրչի՛ Կարապետ |288բ| արեղայի անարժանի, և գործաւքս եմ շարաւք ի լի: Ով [յ]ոյս [յ]արութեան ունի, լի բերանով և բոլոր հաւատով ողորմի ասի, և ինքն Աստուծոյ տեսոյն արժան լինի:

Գրեցաւ սուրբ Աւետարանս ի գաւղս Արախիշ, ի դունն Սուրբ Աստուածածնին, ի դառն և ի նեղ ժամանակի, ազգս հայոց փախուցեալ և ցրիւցան կային ի վերա աշխարհիս: Աւմ (=արդ), գրեցաւ սուրբ Աւետարանս ի հայրապետութեանն տեառն Յոհաննիսի, ե[լ]-ղանութեան Մահայմատի Խուտայքանդայ փաթշահին, ի թուականիս հայոց Ռփէ. (1568), ի նեղութեան ժամանակի:

Աւաման փաշէն երեկ, էառ ըզՇարուանն, Ամիր Համգայ Իմիրզէն երեկ՝ զնոքայ ցրիւցան արար, և զթաթար խանն ձեռնաշկալ արար, տարաւ ի Ղազախն:

96բ (ծաղկողի. Մարկոսի մանրանկարի մատեանի բացուածքին) Ղարայ:

289ա (ստացողի) Փառք ամենասուրբ երրորդութեան՝ Հար և Որդոյ և Հոգոյն Սրբոյ, անզըրաւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Արդ, արհնեալ, գովեալ, բարեբանեալ և ի սուրբս հանգուցեալ և ամենայն լեզաւք բարեբանեալ. ամէն: Սովորութիւն է աստուածային արանց միշտ և հանապազ խոկալ աստուածային պատուիրանս, ի տուէ և ի գիշերի միշտ զվերինն խորհել, ուր Քրիստոս նստի ընդ ջառէ Աստուծոյ: Եւ վասն բազում պատճառի բազումք փափա՛խն ջերմեռանդ սիրով և զղձալի ցանկութեամբ արդունս և գործս կատարել:

Նախ՝ վասն յաւիտենական և անմահ կենացն զանցաւորս արհամարհեն և զայն ստանան կեանս, որ մնացական է, որպէս ասէ Տէրն. երթա՛յք, գործեցէք զմի՛ զկորըստական կերակուրն, այլ զկերակուրն, որ մնա ի կեանսն յաւիտենական: |289բ| երկրորդ՝ զի հրամաէ Տէրն. Փանձեցէ՛ք ձեզ գանձ ի յերկինս, ուր ո՛չ ցեց և ուտիչ ապականեն, և ո՛չ գողք ական հատանեն, գրեմք զգիրքս, որ զամենայն գանձ և զամենայն աւետիք ի յինքն պարունակեալ ունի. նախ զվերին իմաստութիւն, և ապա զամենայն սքանչեւագործութիւն, որ ի սմայ: երրորդ՝ վասն անջինջ յիշատակութեան առաջի Աստուծոյ, որպէս ասէ մարգարէն. երանի, որ ունիցի զաւակ ի Սիոն և ընդանեակք յերուսաղեմ: Չորրորդ՝ վասն քօութեան և թողութեան մեղաց մերոց բարէխաւս առ Աստուած, որպէս ասէ մարգարէն. Ջմեղս քո ողորմութեամբ քաւեսցես, և զանարէնութիւնս քո՛ տրաւք տնանկաց. ըստ այսմ արիւնակի փափա՛եալ

եղեւ աստուածահին սուրբ Աւետարանիս աստուածասէր եւ պատուական, հեզահոգի եւ աղաւթարար, բարէսէր եւ խօտակրաւ[ն] ճգն[290] ազգաց եւ ողորմած՝ նման Աբրաամու հարն հաւատոյ եւ երջանիկ տիեզերալոյս վարդապետն Յոհաննէս՝ շահ անշիշանելի եւ վէմն հաւատ[ոյ], որ ստացաւ զսա հալար արդեանց եւ արդար վաստակոց իւրոց՝ յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնաւոց իւրոց. հայրն՝ Մելիսեայ, եւ մայրն՝ Փիանդէն, եւ ամենայն արեան մերձաւորքն եւ եղբարք՝ տէր Թռ[ւ]մէն, Միւրգէն, տէր ընդատակէն, եւ քուէրքն՝ Փիանդէն, Խանաթրան, Նազուն, եւ զհանգուցեալ եղբարն՝ Ուլուխանն, եւ ամենայն արեան մերձաւորքն յիշեցէ՛ք լի բերան եւ Աստուած ողորմի ասացէ՛ք, ձեզ եւ մեզ ողորմեսց[ի] իւր միւսանգամ գալստեան. ամէն:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

152ա (բոլորգիր, 1636 թ.) Յիսուսի Քրիստոսի նուաստ ծառայ Ֆրայ Օգոստինոս արքեպիսկոպոս Նախիչեան յերկրէն եկի Հանիթարխան, այս սուրբ Աւետարանիս օրինակն գրեցի, բազում սխալանք գտայ ի սմայ, եւս առաւել՝ վերոգրեալ յետի փոխս վասն համբարձման, զոր եւ մեք գրեցաք յիշատակ մեր: Որք հանդիպիք ի սմայ կարգալով, վասն սիրուն Քրիստոսի յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղօթս ձեր: Յիշողն յիշեալ լիջի ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: Գրեցաւ թվին մարդեղովեան Տեառն մերո Յիսուսի ՌՈՂՁ. (1636), հոգտէմբեր է.:

Տէս ժէ. դ. յիշ-ք, Բ., էջ 645:

ՆՇՈՒՄ՝ Կազմաստառ Ա.ին սոսնձած թղթին «Հ^մր 380/2537», «Ռժէ. - 1568. Մ[եւրոպ] եպ[իսկոպո]ս»:

2538

Ա. Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ԺԳ. դար

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

1. 2բ-51բ Աւետարան Մատթէոսի (սկ. թերի (պակասում է կէս տող). «/// եւ որդոյ Աբրամաու...)
2. 53ա-82բ Աւետարան Մարկոսի:
3. 84ա-136ա Աւետարան Դուկասու:
4. 137ա-77ա Աւետարան Յովհաննոս:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

177բ Փառք ամենասուրբ Երրորդովեանն Հար եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ՝ (շարունակուած):

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

136ա (բոլորգիր, 1410 թ.) Նուաստ եւ ներգեւեալ ոգի Ստեփաննոս Լալուկ վարդապետս Թավրէժեցիս տուի զայս Աւետարանս Շ. (500) դահեկան, որ էլ մարդոյ հաղ ու դավէ հետ Աբրահամ արեղին չկայ, Աւետարանս իւրն հաղ ու մուլք է: Ով որ խօսի կամ դավէ առնէ, դատի յԱստուծոյ եւ ամենայն սրբոց նորայ:


Ի թվին ՊԾԹ. (1410), յԱրաց ժԹ. (19), մայիս ԻԶ. (26) գրեցաւ հաստատ բանս Աստուծով:

Վերջում ոճաւորուած կապգիր, որի մէջ զանազաների է գուցէ «նԱՂԱՐ»:

Տէս ժե. դ. յիշ-ք, Ա., էջ 109:

177բ (բոլորգիր, 1580 թ., որպէս շարունակովին գրչի անաւարտ յիշատակարանի) Կաման Աստուծոյ եւ՝ Մարկոս քահանայս, առի զսուրբ Աւետարանս ի հալալ ընչից իմոց՝ յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց՝ հարն իմո Մարտիրոս քահանային, եւ մօր իմոյ՝ Եղիսապետին, եւ Բեկիխաթունին, եւ եղբարց իմոց՝ Յոհաննին, որ հանգուցեալ է ի Քրիստոս, եւ Սարգիսին, եւ որդոյն իմ՝ Ումիտին, եւ եղբորորդոյն իմոյ՝ Դուրա-


Թերթ՝ 178. չգրուած՝ 1աբ, 52ա, 83ա, 178բ: ՊՐԱԿ՝ Ա-ժեx12 (է, ժե 11): Նիւթ՝ թուղք: ՄԵՄՈՒԹԻՆՆ 17x12,2: ԳՐՈՒԹԻՆՆ՝ երկսին (13-13,5x9,5-10,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 27ա): ՏՈՂ՝ 25-27: ԿԱԶՄ՝ դրոշմագաղ շագանակագոյն կաշի, միջուկը տախտակ, աստառը վարդագոյն կտաւ. լուսանցակողեր՝ կարմիր:



Նմուշ 27ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՆՆ – Մատթէոս՝ 2ա, Մարկոս՝ 52բ, Դուկաս՝ 83բ, Յովհաննէս եւ Պրոխորոն՝ 136բ: Կ ի ս ա խ ո Ր ա ն՝ 2բ, 53ա, 84ա, 137ա: Ձ ա Ր դ ա գ ի Ր՝ կենդանագիր, մարդագիր: Գ ո յ ն Ր՝ կարմիր, կապոյտ, դեղին, կանաչ, նարնջի, վարդագոյն, մանուշակագոյն, սպիտակ, շագանակագոյն, մոխրագոյն, սեւ, ոսկի:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Առ Կորնթացիս Բ. թուղք, Գ. 14 – Ե. 5: 1 (Ա), սկզբից, ստացուած 1 թերթի եզրահատումով: ԺԱ. դ.: Մագաղաթ, 16,5x12,3, երկսին (16,5x12,3), տող՝ 13 (պետք է լինի 19 կամ 20), բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Աբ): Կարդալ՝ Աբ, Աա. «Յիսուս, եւ զմեզ րնդ Յիսուսի յարուցէ... զաներեւոյթսն. զի երեւելիս/// [տան]ար շինուածոյս մերոյ քակտեսցի... որ ետ մեզ զանհաւ[ւ]ատեալ հոգւոյն»:



Նմուշ Աբ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի մէջի կաշին ամբողջովին, դոնալը, երկուական կապիչներն ու գամերն րնկած, կաշին խիստ մաշտած, արտաքին ստորին անկիւններն րնկած (նաե՛ւ Բ. փեղկի միջուկ-տախտակը). պատուած Մատթէոս եւ Դուկաս ւսետարանիչների նկարներ եւ Մատթէոսի անուանաթերթը՝ ք. 2 (գրեթէ լրիւ), նաեւ ք. 83 (պահպանուած է ստորին կտորը մասը), ներկերի մի մասը խունացած, թափուած (յատկապէս 134բ), թուղթը փոքր ինչ բամբակացած, ստորին արտաքին լուսանգր վնասուած. լուսանցակողերը գունաթափ:

թին, այլ եւ կողակցին իմոց՝ Սուրբանին, եւ մեծ պապին իմոյ աշեղ Մարթնին: Որք հանդիպիք սմա, կարդալով կամ արիւնակով կամ միայն տեսանելով, յիշեալիք զվերոյգրեալսն՝ զՄարկոս քահանայն եւ զԿերսն ամենայն, եւ ուղիղ սրտով Աստուած ողորմի ասացէ՛ք նոցա, եւ Աստուածն ամենայնի, որ առատ է ի տուրս բարեաց, ձեզ ողորմի աստ եւ ի հանդերձելումն. ամէն: Թիւիս հայոց Ռիթ: (1580): Մ՛վ եղբայրք, թէ մէկ ողորմի ինձ ասէք, խիստ լաւ է, Աստուած ձեզ ողորմի ամէն:

178ա (բոլորգիր, ԺԶ. դար՝ 1580ից յետոյ) Կաման Աստուծոյ Կոստանդ մահապատիս առայ սուրբ Աւետարանս ի հալալ ընչից իմոց՝ իմ կամաւորութեամբ, եւ տվի իմ հոգոյ որդոյն՝ տէր Ռատակիսին: Ո՛չ ազգոյ, ո՛չ աւտարականի, այլ մարդոյ բան չկայ: Ետ եւ առաջ ինչ մարդ որ տաւոյ անէ՛ ՅձժԺ. (318) հայրապետաց նգոված է եւ մասն ընդ Յուդայի առցէ Աստուծոյ դատաստանին:

Ես՝ Կոստանդ մահապատիս, լուսարար Եղիշէի Սուրբ Առաքելոյն եւ տվեալ եմ Աւետարանիս գինն առաջի Աստուծոյ տէր Մարկոսին ԺԲ. մառչիլ, Ա. ֆեթակ: Ետոյ տաւոյ արաւ, տվի Ե. խոն բիրինձ, Ա. շուխայ, էլ մին ֆեթակ: Սուրբ Երեզ Մանկունքն վկայ է, Իգնատիոս եպիսկոպոս վկայ է, տէր Ակ[ոբ]ն վկայ է, Ոսկան եպիսկոպոս վկայ է: Ինչ մարդ որ այլ եւ այլ խաւսէ, դատի Տէր:

Տէս ԺԵ. դ. յիշ-ք, Գ., էջ 504:


ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 178ա՝ ոճաւորուած բազմանկիւն. «Աստուծոյ Ոսկան եպիսկոպոս ծառայ Յ[խոսախ] Քրիստոսի»:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին սոսնձած թղթին «22», Ա. կազմաստառին սոսնձած թղթին. «Ի մատենից Յովսէփ վարդապետի Փինաշեանց», «2538/2^ր 383», «ՊԾԹ. — 1410-ից առաջ, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:


2539

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ԿՈՐԵՍ գիւղ (Չագաձորի՝ Բ.)
ԳՐԻԶ՝ Անանուն (3ա-132բ), Յոհան (134ա-262բ):
ԹԵՐԹ՝ 265. չգրուած 1աբ.դ-2ա, 82բ-3ա, 133ա, 205բ, 263ա-5բ: ՊՐԱԿ՝ Ա-ԺԱ.Մ12+Ա-ԺԱ.Մ12 (է 13): ՆԻԹ՝ թուրք: ՄԵՍՈՒԹԻԻՆ 19-19.3x13: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկխիւն (13-14x9): ԳԻՐ բոլորագիր (նմուշ՝ 73ա, 147ա): ՏՈՂ 22: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի, Ա. փեղկին պղնձէ խաչ, Բ. փեղկին՝ փլաֆ. դոնակով, միջուկը տախտակ. աստառը կապոյտ կտաւ. լուսանցակրերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1 (Ա., սկ.), չգրուած թուրք:



Նմուշ 73ա



Նմուշ 147ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ – Մատթնս՝ 2բ, Մարկոս՝ 83բ, Դուկաս՝ 133բ, Յովհաննէս եւ Պրոխորոն՝ 206բ. յ ու ս ա ն ց ա յ ի ն . Սուրբ Հոգի՝ 218ա: Կ ի ս ա խ ո Ր ա ն ՝ 3ա, 84ա, 134ա, 207ա: Լ ո ս ա ն ց ա զ ա Ր դ ՝ թոչուն, բուսական, ծառ, տանաք, խաչ, յուշկապարիկ: Ջ ա Ր դ ա զ ի Ր՝ բուսական, թոչնագիր, հանգուցագիր: Գ ո յ ն ե Ր՝ կարմիր, կապոյտ, դեղին, կանաչ, նարնջի, վարդագոյն (գունափոխուած), սպիտակ, շագանակագոյն, սեւ:
ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին եգրամաշ, երեւական կապիշներն ու գամերն ընկած. ք. 1, 207, 262-5՝ շեռագատուած երկփեղկուած, ք. 175ի վերին մասը հիմքից անջատ, ք. 206՝ մի այլ ձեւագրից է՝ ա. երեսին վարժագրական բնոյթի բնագրի մասն է, իսկ ք. 176ն օգտագործուել է Յովհաննէս աւետարանչի նկարը նկարելու համար:

ՌձԻԿ., ՌձԻԷ. – 1675, 1678

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

1. 3ա-82ա Աւետարան Մատթէոսի:
2. 84ա-132ա Աւետարան Մարկոսի (131բ-2ա «Յարուցեալ Յիսուս»), 132բ Նախադրութիւն:
3. 134ա-205ա Աւետարան Դուկասու: 205ա Նախադրութիւն:
4. 207ա-60բ Աւետարան Յովհաննու: Բ. Ոտանաւոր.
205ա Այս Դուկասու եզն ասացին,
Որպէս նա իսկ հերկէ զգետին,
Կրկին անխոնջ վասն պտղին
Սոյնպէս յերկար են բանք սորին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

96բ (Անանուն գրչի, ստ. լս.) Յիշեցէ՛ք ի Քրիստոս Լէլիխանն, որ այս աղուհացից Վիրապի շաբաթ օրս վաղձանեցաւ, թվին ՌձԻԿ. (1675):

144բ (Յոհան գրչի, ստ. լս.) Վա՛յ, ավա՛ղ խոշոր թղթիս ձեռնէն:

218ա (ստ. լս.) Աւետարան ըստ պաշտաման կարդա՛յ եւ զՅոհան գրիչս յիշեա՛ւ:

260բ Փառք եզակի, եռահիւսակ դաւանութեանն, ապենիազին, կատարեալ եւ անսահմանելի Աստուծոյ Հօր, Աստուծոյ Որդւոյ, Աստուծոյ Հոգւոյ. շնորհիւ Տեառն ամենակալի եւ նորին օգնականութեամբ աւարտեցաւ եռահրաշ եւ հոգիազարդ Աւետարանս, զոր էր շաղկապեալ երանեալ աւետարանչացն՝ ըստ բազմերանկ գունոց ի մի ոստայն ընկենալով հան|261ա|ճար, զոր արուեստակեալ անուշոցաց ծաղկանց՝ իւր եփեցական

կազմութեամբ, որ ըստ հոգւոյն յատկութեամբ իմանալի գանազան որակութեամբք գաղափարելով ըստ յոքունց արփիացելոցն դասակցութեանց՝ առ ի եկեղեցւոյ յարմարումն յօդիւ խաղաղութեամբ գլխոյն պատշաճեալ, զի յայսմանէ կատարելութիւնն՝ չորք Աւետարանք ի բազում պատճառէ. չորքեկերպեան կենդանիք՝ մարդ, առիւծ, ցուլ, արծիւ. չորք նիւթք աշխարհիս՝ հող, ջուր, հուր, օդ՝ հակառակք անհաշտելիք եւ սիրելիք անքակտելիք. չորք <չորք> գիր անան նորորդութեանն՝ Հայր, Որդի, Հոգի. չորք գետք բլրիսեալք ի դրախտէն՝ Փիտոն, Գիհօն, Տիգրիս, Եփրատ. չորս անկիւնս եւ եղջերք սեղանուոյն. չորք դէմք խաչին, եւ այլ բազում պատճառս, յորս գաղափարի չորքեան աւետարանիչքս: Զի թէպետ ի բազում բանք ի սոսա երեւին ներհակք միմեանց, այլ քաջ ճշմարիտք եւ յոյժ միաբանք միմեանց:

|261բ| Արդ գրեցաւ Մաթէոս ի խնդրելոյ հրէից հաւատացելոցն, որք էին յԵրուսաղէմ, զկնի Ը. ամի համբառնելոյ փրկչին ի լեզոյ յերայեցի յԵրուսաղէմ քաղաքի, զոր առեալ Թօմայի քարոզէ Հնդկաց, եւ Բարդուղիմէոս ի Դելմաստանի եւ Ամրանայ եւ ամենայն արեւելից: Իսկ Մարկոս գրէ ի հրամանէ Պետրոսի Վիմի վարդապետին իւրոյ Աղէքսանդր քաղաքի ի լեզու եգիպտացի, զկնի ԺԱ. (11) ամի, եւ աւետարանէ յերթոյն եւ ի Կիւրիակա, եւ լուսաւորէ զաւեմուտս: Իսկ Լուկաս յառաջագոյն աշակերտ գողով Գալիլանոսի բժշկապետի, որ եւ ինքն է արուեստի բժիշկ, յետոյ աշակերտի սրբոյն Պօղոսի, որ եւ հրամանաւ իսկ նորս գրէ, զկնի ԺԸ. (18) ամի ի լեզու հոռոմայեցի յԱնտիոք քաղաքի, եւ քարոզէ ի Բիւթանիա եւ յամենայն Մակեդոնիա:

Իսկ Յովհաննէս՝ որդի Զեբեթիայ, որդի որոտման, որդի սուրբ Կուսին, զվերինն որոտալով աւետէ եւ աւետարանէ, զկնի <Ժ> ԾԳ. (53) ամի |262ա| գրէ յնփե-

տա քաղաք եւ լուսաւորէ զամենայն առիս: Արդ, Աւետարան կոչի, որ պատմէ մեզ գեղեալ բարութիւնս, զխաղաղութիւն, զոր եղեւ հրեշտակաց եւ մարդկան, զբակտումն բռնութենէ թշնամոյն կենաց մերոց, զաւերումն դժոխոց, զազատութիւն հոգւոց, զընդ աշմէ Աստուծոյ նստել բնութեան մարդկութեանս: Ուստի եւ տեսեալ զսորա անճառ փրկագործութեան խորհուրդ, պատուական (10 տող չգրած):

Արդ, գրեցաւ սուրբ կենսաբեր սուրբ Աւետարանս ձեռամբ սուտանուն Յոհա[ն] (անունը ջնջած, ապա կէս տող չգրած), ի թրւաբերութեանս հայոց ՌՃ. եւ ԻԷ. (1678), եւ իշխանութիւնն տաճկաց շահ Սոլէյմանին եւ ի հայրապետութեանն էջմիածնէա հեգահոգի քաջ բաբունապետին տեսուն Յակօբայ, եւ առաջնորդութեանն |362բ| ըստ Թադէի Յովհաննէս արհեստիսկոպոսի, ի յերկիրս Չագածորի՝ ի գեօղս, որ կոչի Կորես, ընդ հովանեաւ Սուրբ Գրիգորիս եւ Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Մարտիրոսիս եւ Սուրբ Յակօբիս, զի սոքայ են մեզ բարեխօս:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

262բ (անարուեստ նոտրգիր, 1678 թ.) Որք անդիպիք սմայ կարգալով կամ օրօնակելով, յիշեցէ[ք] զվերայգրայս. գիրեցեալ թիվին ՌՃԻԷ. (1678): Արդ, յիշեցէք զբարիմիտ եւ հեգահոգի գտէր Պարսեղ քա[հ]նայս, որ բազում փափականէքայ ստացաւ ըստորք (= զսուրբ) Ավատարանս ի հալալ հնջից իմո՞՞ իշատակ հոգոյ իմոյ եւ հարն իմ՝ Վարդան, եւ մարն իմ՝ Խաթուն, եւ կենայեաց (= կողակից) իմ՝ Կուզեալ (= Գոզալ):


ՆՇՈՒՄ՝ Ա. կազմաստառին սոսնձած թղթին «2539/2^ր 385», «ՌՃԻԷ. - 1678. Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»: 1գ «Հնծայեալ Յուսիկ վարդապետի Մովսեսեան»:

2540

Ե Ի Ա Գ Ր Ի Վ Ա Ր Ք Ե Ի Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ք

ՄՏԱՅՈՂ՝ Տիրատու:

Թերթ՝ 163: ՊՐԱԿ՝ Ա.-ԺԳx12 (Ա. 8, ԺԳ 11): ՆԻԻԹ՝ թուղք: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 15,9-16,3x11,2-12,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (13-13,5x 8,5-9): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 58ա): ՏՈՂ՝ 20-22: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի (Ա.) եւ սեւ լաթ (Բ. եւ մէջք), միջուկը տախտակ (Ա.) եւ ստուարաթուղթ (Բ.). աստառը կանաչ մետախ (Ա.) եւ թուղթ (Բ.): ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 (Ա.-Բ.) + 1 (Գ.), թուղթ, լուսագծերով. անելացուած նորոգման ժամանակ:



Նմուշ 58ա

ԺԳ. դար

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – ձ ա կ ա տ ա գ ա ռ դ՝ 1ա: Լ ու ս ա ն ց ա գ ա ռ դ՝ բուսական: Զ ա ռ դ ա գ ի ռ՝ թոչնագիր, համագուցագիր: Գ ո յ ն ե ռ՝ կարմիր, կապոյտ, վարդագոյն, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը եղել է խիստ փայլալուծ, Ի. դ. նորոգուել է Ա. փեղկի հին կաշին օգտագործելով, երկուական կապիչներն ու գամերն ընկած, թ. 1-2՝ ցեցի անցրէր:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

1ա-163ա [Վարբ եւ մատենագրութիւնք Եագրեալ Պոնտացայ]

1. 1ա-6ա [Վարբ Եագրեալ երանելոյ] – ի բազում իրս, ով սիրելիք... ի վերա այսոցն շարութեան:

2.ա. 6ա-8ա Եւագրեա Նշանակ յեզեկիելէ – Իմանամք զմարդն զբանական... յառաջագոյն երեմիայի մարգարէի:

բ. 8ա-12ա Նորին Եւագրեա Վասն հանդերձից սուրբ հարց – Քանզի յառաջագոյն յղեցեր դու առ իս... ի վերին յաւրան երեւեալ:

գ. 12ա-20բ Վասն ութ խորհրդոց – [2] միտս մոլորականս գետեղեցուցանեն ընթերցուածք... եւ ի զնին մատուցեալ հաստատեալ ունին բազում անգամ:

դ. 20բ-1ա Վասն այնորիկ, որ ընդ քունս ցն[որֆ] անց[անեն] – Յորժամ ընդ քունն ցնորիցն... գթոյ հաստատել մարթ է:

ե. 21բ-2բ Վասն հաստատութեան, որ մերձ է յանախատութիւն – Երկուս գիտեմ զոգուց խաղաղութեամբ... մի՛ տեսցէ զարուսթիւնս:

զ. 22բ-8ա Վասն Նշանակացն անցատրութեան – Ի ժամանակի իբրեւ միտքն առանց զբաղմանց... որ աճեցուցանէ զմեզ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. նմա փառք եւ զարուսթիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

է. 28ա-35բ Նորին Եւագրեա Գիտնաւոր եւ արդիւնօր – Գործնականք ճառից խելամուտ լիցին... որ ձեռամբն եկեալ իցէ:

ը. 35բ-57բ Նորին Եւագրեայ – [Ա]ռաջին լուսաւոր պատերազմացն... առաւել եւս պատրաստեալ գրգռէ:

թ. 57բ-67ա Վասն ընդունելութեան – Եթէ յատարութիւն զնայցես... եւ ծագեսցի լոյսն աղաւթից:

ժ. 67ա-71բ Վասն պաշտաման – Յորժամ կենաց կցորդ եղբարս... եւ ներքին գեղովն խեղզամահ սատակիցիս:

ժա. 71բ-9ա Նորին Եւագրէ – Ժառանգորդք Աստուծոյ, լուարո՛ւք զպատգամս Աստուծոյ... եւ մի՛ մոռանայցէք զանձն իմ տառապեալ ի ժամ աղաւթիցն:

ժբ. 79ա-81ա Եւագրեա բան խրատու – Զերախայրիս կալոյ իմոյ... արհնեալ Սուրբ Երրորդութիւնն:

ժգ. 81ա-2բ Նորին Եւագրեայ – Եթէ ունիցիս ընդ քեւ եղբարս... եւ ի կուսէ վասն մեր ծնաւ յնգուոյ Սրբոյ կատարեալ:

ժդ. 83ա-6ա Հաւատք որ ի Նիկիայ – Հաւատամք ի մի Աստուած... զանձն քո կերակրեսչիր:

ժե. 86ա-7ա Նորին Եւագրեա Առ Մարտիրոսսն – Զնահատական Քրիստոսի... բնակեցայց ես յարկս քո, Տէր, յաւիտեան:

ժզ. 87աբ Վասն յարութեան – Յարութեանն Քրիստոսի երկիր պագցուք... զոր արհնէն հրեշտակք, եկա՛յք երկիր պագանեսցուք նմա. ամէն:

ժէ. 87բ-93բ Ըառ Ք[րի]ստեայ – Աստուծոյ արժանի այն է... զչափ առեալ գտանիցի:

Արտ. լս. գրչից՝ «Ասացեալ երանելոյն Սեքեստեայ ճգնաւորի վասն ամենայն անցաւոր եւ սուտ կենցաղոյս»:

3. 93բ-163ա Եւագրիոս ընդդէմ պատասխանի ի Գրոց Սրբոց

ա. 93բ-6ա Առ դեան, որ փորձենն զմեզ. Աւգնեա՛, Քրիստո՛ս, – [Ո]ր ի ներքոյ երկնից... եւ հարքն սուրբքն մեզ պատմեցին:

բ. 196ա-104ա Առ խորհուրդն որկորստութեան – [Ա]ռ խորհուրդն, որ առանց վաստակոյ եւ պահոց... յաղթեաց աշխարհի հաւատովքն: Արհնեալ է Աստուած, որ ետ մեզ յաղթութիւն ի վերա խորհրդոցն որկորստութեան:

գ. 104ա-13բ Առ խորհուրդն պոռնկութեան – [Խ]որհուրդքն պոռնկութեան ի ներքս ի մտի... պահել ի կորուստս: Արհնեալ է Տէր, որ ետ մեզ յաղթութիւն ի վերա խորհրդոցն պոռնկութեան:

դ. 113բ-22ա Առ խորհուրդն արծաթախրութեան – [Ա]ռ դեւն, որ խոստանա ինձ... արդեամբ եւ ճշմարտութեամբ: Արհնեալ է Աստուած, որ ետ մեզ յաղթութիւն ի վերա խորհրդոցն արծաթախրութեան:

ե. 122ա-32բ Առ խորհուրդն տրտմութեան – Առ անձն, որ համարիցին... բայց միայն Տէր Աստուած արհնեսչիք ի սիրտս մեր: Արհնեալ է Աստուած, որ ետ մեզ յաղթութիւն ի վերա խորհրդոցն տրտմութեան:

զ. 132բ-40բ Առ խորհուրդն սրտնութեան – Առ անձն, որ ոչ գիտիցէ... զոր ոչն տեսանէ: Արհնեալ է Աստուած, որ ետ մեզ յաղթութիւն ի վերա խորհրդոցն սրտնութեան:

է. 141ա-9ա [Առ խորհուրդն ձանձրութեան] – Առ խորհուրդն ձանձրութեան, [ո]ր գործել ձեռաքն խորշիցի... զոր խոստացաւ սիրելեաց իւրոց: Արհնեալ է Քրիստոս, որ ետ մեզ յաղթութիւն ի վերա խորհրդոցն ձանձրութեան:

ը. 149ա-54բ Առ խորհուրդ[ս] ամբարհաւան նորափառութեան – [Ա]ռ ամբարհաւան նորափառ խորհուրդն... ոչ գոյ սէրն Աստուծոյ ի նմա: Արհնեալ է Աստուած, որ ետ մեզ յաղթութիւն ի վերա խորհրդոցն նորափառութեան:

թ. 154բ-63ա Առ խորհուրդն ամբարտաւանութեան – [Ա]ռ դեւն ամբարտաւանութեան... եւ զարութիւն եւ իշխանութիւն յաւիտեան եւ այժմիկ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն, ամէն:

ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

140բ Յիշէ զմեղաւորս:

ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

163ա (բոլորգիր, ԺՒ. դ.) Զամենատառապեալս ի բարեաց եւ զբազմահարուստս շարեաւք, զեղկելի անձնս՝ նուաստ Տիրաւոր պիտակ անուամբ վարդապետ յորշորջեալ՝ զստացաւդ աստուածաին տառիցս, զծնաւուսն իմ եւ զհարազատս եւ զամենայն երախտաւորս մեր ըստ հոգո եւ ըստ մարմնո յիշեցէք ի մաքրափայլ յաղաթս ձեր, ո՛վ խոհեմամիտ ընթերցողք, աղաչեմ:

163բ (բոլորգիր, 1439 թ.) Այլ եւ զվերջին ստացաւ լուսաւոր Պատերազմիս եւագրեայ գՅովսէփի կրանաւոր եւ զհոգեւոր համշիրակ եղբայրն իւր՝ գՅոհանէս կրօնաւոր, աղաչեմ յիշել ի Տէր, եւ յօժար կամօք Աստուած ողորմի ասել, եւ դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի. ամէն: Ի թվին ՊԶԸ. (1439) գնեաց զգիրքս ի հալալ արդեանց իւրոց յիշատակ բարի իւրն եւ ծնողաց իւրոց, Տէր Աստուած վայելել տացէ բազում ժամանակօք. ամէն:

Տէս ԺԵ. դ. յիշ-բ, Ա., էջ 503:

163բ (բոլորգիր, ԺԵ. դար) Ես՝ Յովսէփ այբեղայս [բա]շխեցի զայս գիրքս տէր Սուբիասին՝ իմ հոգեւոր եղբաւրն. եւ է սա սեփական նմայ, եւ այլ ոք ոչ ունի իշխանութիւն ի վերայ սորա, բայց ի տէր Սուբիասէն:

Հարիւրաւոր սա անուանի, / Ընդդէմ դիւաց պատերազմի: / Ով ոք սորա հետեւեսցի, / Յաղթէ շարին սատանաի, / Արիանայ ընդդէմ շարի, / Յաղթէ ութիցս

խորըրհդի, / Այս եւ զէնք սատանաի, / Ընդ մեզ սոքաւք միշտ մարտընչի: / Եւագրիոս հայրն բարի / Յաղթեաց ութիցս խորհրդի / Եղեալ զսա սահման բարի / Բոլոր ազգիս քրիստոնէի:

Տէս ԺԵ. դ. յիշ-բ, Ա., էջ 503:

1ա (նոտրգիր, ԺԸ դ.) Տէր Սամօէ:

52ա, 87ա (ստ. լս., շղագիր, ԺԹ դ., ջնշած) Գրիգոր վարդապետին է:


ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 163բ. անընթեռնելի, հաւանաբար 163բ էջի յիշատակարանի հեղինակ Յովսէփ արեղայինն է:

ՆՇՈՒՄ՝ Կազմի Ա. փեղկին սոսնձուած թղթին «Բանք եւագրի Վասն խնդրոց եւ գործոց մարդկան», այլ ձեռքով վրան գրած «10բ»: Ա. կազմաստառին սոսնձած թղթին «2^ր 387/2540», «ՊԶԸ. – 1439-ց առաջ, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս», «Առաքեալ յԱստրախան քաղաքէ»:

2541

Գ Ա Ն Ձ Ա Ր Ա Ն Ե Ի Տ Ա Ղ Ա Ր Ա Ն

ԹԵՐԹ՝ 254: ՊՐԱԿ՝ Ա-ԻԲx12 (Ա, Ժէ 9, ԺԵ, ԻԱ 11, ԻԲ 10): ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵՄՈՒԹԻԻՆ 16,1x12,5-13: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (12,5x9,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 33ա): ՏՈՂ՝ 15: ԿԱԶՄ՝ դրշուագարդ շագանակագոյն կաշի, դռնակով, միջուկը տախտակ, աստառը կարմիր կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1 (Ա., վշ.), չգրուած թուղթ:



Նմուշ 33ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ – Կ ի ս ա խ ո ռ ա ն Յա: Ճ ա կ ա ա զ ա ռ դ՝ 79ա, 198ա: Լ ու ս ա ն ց ա զ ա ռ դ՝ բուսական, տանաւ, թռչուն, ծառ, սափոր, խաչ, վարդեակ, յուշկապարիկ: Զ ա ռ դ ա զ ի ռ՝ բուսական, հանգուցագիր: Գ ո յ ն ե ռ՝ կարմիր, կապոյտ, վարդագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւար. կազմի կաշին եգրամաշ, ցեցի անցներով, դռնակի վերին արտափին եզրը, երկուական կապիչներն ու փայտէ գամերն ընկած, 1ա՝ ամբողջութեամբ, եւ 2ա՝ մասամբ խունացած, թ. 1-2, 104, 175-6՝ ստորին արտափին եզրերն ընկած, 1 թերթ ընկած թ. 165-6ի միջեւ, վերջից թերի:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Թ Ի Ի Ն

Ա. 1ա-197բ [Գանձարան]

– 1ա-2բ Այս ինչ, որ հաւաքեալ կայ ի ամայ, այս է – Ա. Ծնընդեանն Տեառն... Ծ. մեռել թաղի:

1. 3ա-6բ [Ա. Գանձ ծննդեան եւ Յայտնութեան. ձեռ. 423, 6բ] («Մկրտիչ») – Մաքուր եւ անբիծ...

2. 6բ-11ա Բ. Գանձ ծննդեան երկրորդ ատուրն («Ռաչատուր») – Խընդահրաւէր երգաւք նագելի...

ԺԵ. դար

3. 11ա-5ա Գ. Գանձ ծընընդեանն Տեառն երրորդ ատուրն («Ռաչատուր») – Խընդա, մայր Տեառն Յիսուսի...

4. 15ա-8ա Գ. Գանձ Յովհաննու Մրկրտչի («Մկրտիչ») – Մեծապայծառ փառաւք պանծալի...

5. 18ա-23ա Ե. Գանձ Անտոնի Անապատականին («Ռաչատուր») – Խրատ մարդասիրին...

6. 23ա-6ա Զ. Գանձ Տեառնընդառային («Մկրտիչ») – Միանական սուրբ Երրորդութիւն...

7. 26ա-30բ Է. Գանձ սրբոյն Սարգսի զաւրավարին («Մկրտիչ») – Մեծապայծառ փառաւք...

8. 30բ-4բ Ը. Գանձ սրբոց հայրապետացն ԳձԺԸ.ից (318) [ի] Նիկի[ի]ա («Ռաչատուր») – Խորհուրդ զաւրութեան, անեղութեան...

9. 34բ-9ա Թ. Գանձ Թէոդորոսի զաւրավարին («Ռաչատուր») – Խընդայհրաւէր մանկունք Սիոնի...

10. 39ա-42ա Ժ. Գանձ երրորդ կիրակէն յանառակ որդին («Մկրտիչ») – Մեծ եւ ահեղ խորհուրդ տիրական, անձառ, անհաս...

11. 42ա-5ա ԺԱ. Գանձ չորրորդ կիրակէն [էն] ի մեծատու[նն] եւ ի Ղազա[ր] («Մկրտիչ») – Մեծ եւ ահեղ խորհուրդ տիրական, որ նորոգեաց զաշխարհս...

12. 45ա-8բ ԺԲ. Գանձ սրբոց փառասնիցն, որք ի Սեբա[ստի]ա («Մկրտիչ») – Մեծ եւ հրգար անմահից արքայ...

13. 48բ-52ա ԺԳ. Գանձ հինգ[երորդ] կիրակին Աղուհացից («Մկրտիչ») – Մեծ եւ ահեղ խորհուրդ անեղին...

14. 52ա-6ա ժԳ. Գանձ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին («Մկրտիչ») – Մեծ եւ հրգար թագաւոր անմահ...

15. 56ա-60ա ժԵ. Գանձ Ղազարու յարութեան («Խաչատուր») – Խորհուրդ յառաջ քան...

16. 60ա-3բ ժԶ. Գանձ Մաղ[կ]ազարդին («Խաչատուր») – Խընդայ, Սիովն, խորան խորհրդոյ...

17. 63բ-6բ ժԷ. Գանձ Մեծի չորեքշաբթուն («Մկրտիչ») – Մեծ եւ ահեղ խորհուրդ անեղին...

18. 66բ-9բ [ժԸ.] Գանձ Աւագ հինգշաբթուն («Մկրտիչ») – Մեծ եւ ահեղ խորհուրդ ահագին...

19. 69բ-75բ ժԹ. Գանձ Մեծի ուրբաթուն («Խաչատուր») – Խորհուրդն, որ ծածկեալ էր յազգաց...

20. 75բ-8բ Ի. Գանձ Մեծի շաբաթի քաղմանն Տեառն («Մկրտիչ») – Մեծ եւ ահեղ խորհուրդ սոսկալի...

21. 79ա-82ա ԻԱ. Գանձ Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի («Մկրտիչ») – Մեծապայծառ ձայն ուրախալի...

22. 82բ-8ա ԻԲ. Գանձ Յարութեանն Տեառն երկրորդ ատուրն («Խաչատուր») – Խնամք խորհրդոյն, գութ արարչական...

23. 88ա-92բ ԻԳ. Գանձ Յարութեան Տեառն երրորդ ատուրն («Խաչատուր») – Խորհուրդ հրաւիրմամբ կամու արարչին...

24. 92բ-5բ ԻԴ. Գանձ Յարութեան Տեառն չորրորդ ատուր («Մկրտիչ») – Մարդասիրութեամբ Որդիդ միածին...

25. 95բ-9բ ԻԵ. Գանձ աւետեաց Աստուածածնին («Խաչատուր») – Խընդութեան ձայն բարբառ...

26. 99բ-103բ ԻԶ. Գանձ համբարձմանն Տեառն («Մկրտիչ») – Մեծ եւ հրգար տանիս ահագին...

27. 103բ-8ա ԻԷ. Գանձ Հոգւոյն գալլատեանն Տեառն («Մկրտիչ») – Մեծ եւ հրգար Հոգի...

28. 108բ-12ա ԻԸ. Գանձ եկեղեցոյ, ի տէր Մկրտիչ վարդապետէ («Մկրտիչ») – Մաքրափայլ տաճար տիրական...

29. 112ա-5ա ԻԹ. Գանձ Վարդավաթին, ի տէր Մրկրտիչ վարդապետէ («Մկրտիչ») – Մեծ եւ ահեղ խորհուրդ մեզ յայտնեալ...

30. 115ա-20ա Լ. Գանձ փոխ[մ]ան ատուր Աստուածածնին («Մկրտիչ») – Մեծապայծառ, հրակերպ, լուսածին...

31. 120ա-4բ ԼԱ. Գանձ երկրորդ ատուրն («Խաչատուր») – Խոնարհեալ Որդին միածին...

32. 124բ-8ա ԼԲ. Գանձ Սուրբ խաչին Քրիստոսի, ի տէր Մկրտիչ վարդապետէ («Մկրտիչ») – Մեծապայծառ ակրն պատուական...

33. 128ա-33ա [ԼԳ.] Գանձ Վարագայ խաչին («Խաչատուր») – Խաչըն կենաց նըշան յաղթութեան...

34. 133ա-7ա ԼԴ. Գանձ Գիւտ խաչին («Խաչատուր») – Խաչի քո, Քրիստոս, երկիր պագանեմք...

35. 137ա-41ա ԼԵ. Գանձ Գէորգեա Զաւարավարին («Խաչատուր») – Խընդահրաւէր մանգունք Սիովնի...

36. 141ա-5ա ԼԶ. Գանձ հրեշտակապետացն Գարի[ելի] («Մկրտիչ») – Մեծ եւ ահեղ խորհուրդ հրաշական...

37. 145ա-50բ ԼԷ. Գանձ համարէն առաւելոցն Քրիստոսի («Խաչատուր») – Խորհուրդ ազգաց քո մարդեղութեանդ...

38. 150բ-3բ ԼԸ. Գանձ սուրբ մարգարէից («Մկրտիչ») – Մեծ եւ ահեղ անուն հրաշալի...

39. 153բ-6բ ԼԹ. Գանձ սրբոց մարտիրոսացն («Մկրտիչ») – Մեծապայծառ փառաւր զարդարեալ...

40. 156բ-60ա Խ. Գանձ Յոհաննու Ոսկէբերանին («Խաչատուր») – Խաչաշարչար խաչելոյն վըկայ...

41. 160ա-4ա ԽԱ. Գանձ սրբոյն Նիկաւայոսի հայ[րապետի] («Մկրտիչ») – Մեծ եւ հրգար անուն հրաշալի...

42. 164ա-7ա ԽԲ. Գանձ սրբոյն Յակովբայ Մծբնա («Մկր[տ]իչ») – Մեծահըռչակ անուն գովելի... եւ կենաց բանիւ լուսաւորէ// | 166ա| որ հաւք զարդարեալ...

Մէկ թերթ ընկած ընդմէջ թ. 165-6ի, ուստի եւ գանձս միջին մասում թերի է:

43. 167բ-73ա ԽԳ. Գանձ Դաւթայ մարգարէ[ի] եւ Յակոբա առ[աւելոյ] («Խաչատուր») – Խորհուրդ անքընին, անճառ, անհասին...

44. 173ա-7բ ԽԴ. (=ԽԴ.) Գանձ սրբոյն Ստեփաննոսի («Մկրտիչ») – Մեծ եւ հրգար անմահ թագաւոր...

45. 177բ-81բ ԽԵ. Գանձ սուրբ առաւելոց Պետրոսի եւ Պօղ[ոսի] («Մկրտիչ») – Մեծ եւ ահեղ խորհրդոյ Փըրկչին...

46. 181բ-5ա ԽԶ. Գանձ սուրբ առաւելոցն Յոհաննու եւ Յակոբայ («Խաչատուր») – Խորք անքընին, անճառ, անհասին...

47. 185ա-8բ ԽԷ. Գանձ սրբոյն Բարսեղի Կեսարու («Խաչատուր») – Խաչաբարձ եւ պետ պանծալի...

48. 189ա-92բ [ԽԸ.] Գանձ հասարակաց գիշերապաշտման («Առաւել») – Անտանելիդ երկնի եւ երկրի...

49. 192բ-7բ [ԽԹ.] Գանձ մետելայթաղին ասայ («Մանվել») – Մինդ ի յէէն, բանդ որ ի Հաւրէ...

Բ. 198ա-254բ [Տաղարան]

1. 198ա-9ա [Նէրսիսի Շնորհալոյ] Տաղ ծննդեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի – Այսար աւետեաց Գաբրիէլի լրումն... ըզփառս ի բարձունս: ք. 199բ-200ա Փոխ. [Ներսեսի Շնորհալոյ Յորդորակ] («Ներսիսի է այս երգ») – Նոր ծաղիկ բըղխէ այսար... սուրբ Երրորդութեանդ փառք յաւիտեանս. ամէն:

2. 200ա-3ա [Գրիգորի Նարեկացույ. ձեռ. 425, 94ա] Տաղ ծընընդեանն առաջի աուրն – Աւետիս մեծ խորհրդոյ... երգեմք միշտ՝ Քրիստոս արհնեալ է յաւիտեանս: Բ. 203աբ Փոխ. [Սրկան Կոստանդինի՛ Տաղ] («Կոստանդին») – Կոյսն ի յայրին Բեդգէմ մանուկ ծընանէր... այժմ եւ անվաղճան, յաւէտ յաւիտեանս. ամէն:

3. 204ա-5ա Տաղ ծընդեանն Տեառն երկրորդ աուր[ւն] – Այսար ի սկզբբանն բանն... հովիւքն երգեն նրմայ փառք ի բարձունս: Բ. 205ա-6բ Փոխ. Մայր Աստուծոյ Մարիամ... որում պատիւ սրբասաց:

4. 206բ-7բ Տաղ ծնընդեան Տեառն երրորդ աուրն – Աստուծոյ կրկնազարդ գոյից ստեղծողն... փառքս տացուք այժմ յաւիտեանս: Բ. 207բ-8ա Փոխ. – Անճառ բանին բարձրելոյ... փառք ի բարձունս երգէին:

5. 208բ-10բ [Ներսէսի Շնորհալոյ] Տաղ Յովաննու Մկրտչի («Ա-Ք») – Անմարմնոցն հրեղինաց... հայցմամբ առ Տէր: Բ. 210բ-1բ Փոխ. – Ի բանդէն մաղթէ... եւ էակից հոգոյդ, ընդ որում արհնեալ ես միշտ, այժմ եւ յաւիտեանս. ամէն:

6. 211բ-3ա Տաղ քառասնաւուրեա գալըստեանն – Այսար ցընծայ էրուսաղէմ... զի քեզ իսկ վայել է փառք, պատիւ եւ գոհութիւն: Բ. 213ա-4ա [Փոխ] – Քրիստոս փառաց թագաւորն այսար եկեալ... քեզ երգեմք միշտ ըզփառս այժմ, յաւիտեանս, հանապազ:

7. 214ա-5ա Տաղ Սրբոյն Սարգսի զաւրավարին, Սրկան – Պարծանք հանդիսից խմբից... վասըն գթութեան կամացն: Բ. 215ա-6ա Փոխ – Վրկայից հանդիսից հրաշալի... երգաւդին խընդրեցէ՛ք:

8. 216աբ Տաղ սրբոյն Քէոպոսի զաւրավարին – Յայս հանդիսաւոր... զարհնութիւն եւ զփառս ի յօւի[տ]եանս. ամէն: Բ. 216բ-7ա [Փոխ] – Ի զինուորական դասէն... երգեմք զփառս ի բարձունս:

9. 217ա-8բ [Գրիգորի Նարեկացույ] Տաղ սրբոց քառասնիցն («Գրիգորի երգս այս») – Գունդք սուրբ վրկայիցն... երկայնամիտ Տէր, փառք քեզ: Բ. 218բ-9ա Փոխ. («Քառասուն») – Քրիստոս փառաց թագաւոր... նոյն ընդ նոսին քեզ երգեմք. փառք եւ պատիւ յաւիտեանս:

10. 219բ-21ա Տաղ սրբոցն. Գրիգորի Լուսաւորչին – Գրիգորիոս առաքինի հրակող... Աստուած ի մէնջ արհնի: Բ. 221ա-2ա Փոխ – Յայն իմանալի հրաշիցն... ա՛ռ զմեր գոհութեան նըւերս, տո՛ւր երրորդութեանդ ի փառս. այժմ եւ յաւիտեանս. ամէն:

11. 222ա-4ա Տաղ Ղազարու յարութեանն («Ստեփաննոսի») – Սոսկալի զարմանս հրաշից տեսեալ... արարչագործ ձայնի: Բ. 224ա-5ա Փոխ – Չայնին զաւրութեան փըրկչին... փըրկչիդ գալուստն արհնաբանեալ լիցի:

12. 225ա-6ա Տաղ Ծաղկազարդին – Խորհուրդ հայրենի աւանդ... թագաւորին նըւէր: Բ. 226բ-7ա Փոխ

– Աստ եբրայեցոց մանկունքն... յաւէտ էութեան Հոգոյն այժմ եւ յաւիտեանս. ամէն:

13. 227ա-8ա Տաղ Աւաք չորեքշաբթին – Հիանան այսար դասքը հրեշտակաց... յաւէտ գոհութեամբ միշտ եւ յաւիտեանս: Բ. 228ա-9բ Փոխ – Որ վասըն մեր յերկնից յերկիր խոնարհեցար... ուստի յաւէտ փառաւորիս ի յաւիտեանս:

14. 230ա-1բ Տաղ Աւագ հինգշաբթին («Հ-Ա») – Հոսեալ հրեղինացըն հաւաքեալ կային... Հոգին ճշմարիտ փառք յաւիտեանս. ամէն: Բ. 231բ-2ա Փոխ – Ընդ երեկոյս հասեալ ժամու... Քրիստոս արհնեալ է յաւիտեանս:

15. 232բ-3բ Տաղ Աւագ ուրբաթուն – Ի յուրբաթու մեծի Զատիկիս... ի յաշխարհի յայտնեալ: Բ. 232բ-4բ Փոխ – Շնորհաւք Սըբբոյ Հոգոյն... Քրիստոս արհնեալ է յաւիտեանս:

16. 234բ-5բ Տաղ Մեծի շաբթուն – Այսար է շաբաթ... եւ պայծառացոյց զեկեղեցիս հեթանոսաց: Բ. 235բ-6բ Փոխ – Ընդ որս եւ մանկունք... ըզՀայր եւ զՈրդի, Հոգովն յաւիտեանս. ամէն:

17. 236բ-8ա [Ներսէսի Շնորհալոյ] Տաղ փոխման Աստուածամին – Այսար Գաբրիէլ հրեշտակապետն... կուսական տանիս՝ երրորդութեանըն փառք: Բ. 238ա-40ա Փոխ [Նորին] – Անարատ տաճար եւ առագաստ լուսոյ... փառս վերերգել երրորդութեանըն միշտ:

18. 240աբ [Գրիգորի Նարեկացույ] Տաղ խաչին Քրիստոսի – Ես ձայն զառեւծուն ասեմ... զամուրս, որ ունի: Բ. 240բ Փոխ – Սեփական սիւն պատուական... յելս եւ ի մուսս պահապան:

19. 240բ-2ա Տաղ սրբոյն Գէորգեա զաւրավարին («Ս Գէորգեա ա») – Սըբբոյն սըբբութիւն տացուք... եւ փառքս տալ Տեառն կամաց:

20. 242բ-4բ [Ներսէսի Շնորհալոյ] Տաղ առաքելոցն Քրիստոսի («Ա-Ք») – Առաքելք Աստուածորդոյն... յառատաձիր պարգեւաւղէն:

21. 244բ-6ա Տաղ սրբոց մարգարէիցն – Աստուածային խորոցն անճառ... պատիւ անուան այժմ եւ հանապազ եւ յաւիտանս յաւիտենից:

22. 246ա-7ա [Ներսէսի Շնորհալոյ] Տաղ յարութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի («Ներսէս») – Նոր ձայն աւետեաց հրեշտակապետն... զպտուղ առաջին ունէր տալ նըմին: Բ. 247բ-8բ Փոխ. [Նորին] («Ներսէսի») – Նոր ծաղիկ պայծառ ցուցաւ... տո՛ւք արհնութիւն յարուցելոյն փառք յաւիտեանս:

23. 248բ-50ա Տաղ յարութեանն – Ով քաղցրաձայնեալ քաղցրախաւսէր... փառաց թագաւոր, քեզ վայել է պատիւ ընդ Հար եւ Հոգոյն այժմ, յաւիտեանս. ամէն: Բ. 250ա-1բ Փոխ («Կաթողիկոս Հայոց») – Կանայքն արտասուաւք լային զբարձաւղն արտասուաց... զյարուցեալն ի մեռելոց արհնեմք ընդ Հար յաւիտեանս:

24. 251բ-2բ [Մինասայ սարկաւագի] Տաղ յա-
րու[թեան] – Այսար նոր արեւ հարեալ... արհնեալ է
յաւիտեանս Քրիստոսաւ: բ. 252բ-3ա Փոխ [Ներսէսի
Շնորհալոյ Տաղ] («Ներսէսի երգ») – Նըստեալ կա-
նայքն ողբային... Փառք յարութեան փրկողին:

25. 253աբ Տաղ համբարձմանն Տեառն («Ստե-
փանոսի է») – Սոսկալի ահիւ պակեան հոյքք բո-
ցեղինաց խրմբիցն... զխորհուրդըն ծածկեալ յազգաց:
բ. 253բ-4բ [Փոխ] – Ես խաւսիմ զարդարութիւն... եւ
անճառ երանութեան առնել զմեզ հաղորդ/// (շար.
թափուած):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

78բ Աղաչեմ, զսուրբ վայելաւոր, սուրբ Յարու-
թեանն Քրիստոսի Աստուծոյ մերո յիշել զամենայն մե-
ղաց զծնաւոյս զՍամնել (բառս գրուած է եղծուած
անուան փոխարէն) յիշել ի Քրիստոս, եւ Աստուած զա-
մենեսեան արժանի արասցէ իւր սուրբ յարութեանն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

197բ (բողորգիր ժԶ. դ.) Ես՝ Լեացի սուտանուն
Կիրակոս արեղայս գրեցի այս մարմն[ն] օրոք/// [յիշա-
տակ՝] շարի սերմանող ոչ զբարի///:

1ա (շղագիր, 1891 թ.) Սուրբ էջմիածնի մատենա-
դարանին նուէր Եր[ուանդ] Լայալեանից. 1891, օգոս-
տոսի 24 յԱղէքսանդրապոլ:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ Աս.՝ (երիցս) ութանկիւն, վերին մա-
սում հրեշտակ, տակը՝ «Քրիստոսի ծառայ Դերենիկ (՝)
վարդապետ///»: Քառանկիւն. «Ղուկաս վարդապետ»:
Վեց անգամ վատ դրոշմուած, ութանկիւն. «Քրիստոսի
ծառայ Սահակ (՝)»:

ՆՇՈՒՄ՝ Կազմի Ա. փեղկին սոսնձած թղթին «3.
Գանձարան»: Ա. կազմաստառին սոսնձած թղթին «Հ^ր
409/2541», «Ժե., Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:


2542

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Յ

ԱՆԿՈՒՆԵԱՅ ՎԱՆԲ

ԳՐԻԶ՝ Զաֆար արդ: ԿԱԶՄՈՂ՝ Մեյխեդեկ (1624 թ.): ԹՈՒՂՈՒ
ԿՈՒՅՈՂ՝ Մարկոս:


ԹԵՐԹ՝ 161+3 (կրկն. բ. 1՝ երիցս, բ. 131. 1ա-գ. 131գո): ՊՐԱԿ
Գ-ԺԶԽ12 (Գ 8): ՆԻԻԹ՝ բոլոյք, բ. 1գդ, 44-46, 51-53՝ այլ բոլոյք,
աւելացած նորոգման ժամանակ: ՄԵՄՈՒԹԻԻՆՆ 17,2x13,5:
ԳՐՈՒԹԻԻՆՆ՝ միասին (14,5x10,5): ԳԻԴ՝ բոլորգիր (նմուշ՝ 92ա).
(1գդ, 44-46, 51-53 թերթեր՝ 1624 թ.): ՏՈՂ՝ 21-25: ԿԱԶՄ՝ դրոշ-
մագար շագանակագոյն կաշի, դոնակով, միջուկը տախտակ,
սասառը սպիտակ կտաւ. լուսանցակողեր՝ կապոյտ (գու-
ննարափ):



Նմուշ 92ա

ՄԱՆԴԱՆԿԱՐԶՈՒԹԻՆՆ – Զ ա ռ դ ա գ ի ռ՝ հանգուցազիր, բու-
սական, թռչնագիր: Գ ո յ ն ե ռ՝ կարմիր, վարդագոյն:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Ճաշոց: 1 (վերջում), ստացուած
ընդլայնակի հատուած մէկ թերթից: ԺԱ. դ.: Մագաղաթ, 13,5x
16,8, երկսիւն (12x14), ուղղագիծ երկաթագիր (նմուշ՝ Աս), տող՝
13: Ճաշոց. Կարդալ՝ Աբ. Աս. [Յունուարի Ե. Յայտնութեան Տե-
առն մերոյ Յիսուսի. Կանոն շուր արհնելոյ. Ընթերցուած Ե. յեզե-
կիելի մարգարէ, ԽԵ. 7-12, Պաղոսի առաքելոյն ի Կորնթացոց
Ա. թղթոյն ընթերցուած, Ժ. 1-3, Աւետարան ըստ Մարթոսի, Գ.
13-15]. «անդ իմում, եւ անա յափն գետոյն ծառատունգ բա-
զում... ցշուրցն եղից, եւ բժշկեալ[ցէ]/// կենդանացին յորոյ վե-
րայ... մի՛ սրբեսցին, այդ յայդս մա[տնեսցին]/// կերակուր, եւ ելի
նոցս ի սրբութիւն... ամենեկին զնոյն հո[գեառ]/// Յայնժամ գայ
Յիսուս ի Գաղիլիա... վայել է մեզ լնուլ զամենայն արդարու-
[թիւն]»:



Նմուշ Աս

ՋԻԵ. – 1476

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին եգրամաշ, երեքական կա-
պիւնեռն ու զամերն ընկած, սկզբի թերթեր բամբակացած, բ.
1գդ, 44-46, 51-53՝ անելացուած վերակազմման ժամանակ, բնա-
ունայն է եւ աստ մնալոց է, լաւ համարեցա, որ զկնի փոխման իմոյ յաստեացս փոխանակ ոսկո |443ա| եւ արծաթոյ եւ այլ գոյից, ստացուածք գրեանք գտանին, քան զայլ ինչ, զի գիրքն՝ եթէ՛ յաւազակաց գողացի, եթէ՛ յայլազգեաց յափշտակի, եթէ՛ այլ ոք առնու, եթէ՛ գնով եւ եթէ՛ անգին, ընդ որ երթա եւ շրջագաի, դարձեալ ի վանք եւ յեկեղեցի ժողովի՝ ընդ ձեռամբ եպիսկոպոսի, քահանայի, սարկաւագի եւ կրանաւորի եւ մնացէ անջինջ յիշատակ: Եւ եղև զրաւ գրչութեանս յաշխարհիս Կիլիկիայ, ի յանապատս Դրագարկ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Թորոսի եւ այլ սրբոցս: Արդ, գրեցաւ սա ի թուականիս հա[յ]ոց ՉեԳ. (1294), ի հայրապետութեան տեառն Գրիգորի հեզի եւ հեղինակի եւ իմաստասիրի, եւ ի թագաւորութեանն Հեթմոյ բարեպաշտի եւ աստուածասիրի եւ յոյժ հետորականի եւ գիտնականի Հին եւ Նոր կտակարանաց. եւ ի վերա այսոցիկ առաքինասէր վարիւք կացեալ յերիտասարդական հասակին աղաւթիւք, պահաւք, գետնաշխատութեամբ, տքնութեամբ, հսկմամբ եւ այլ բարութն ողորմած, աղքատասէր, մարդասէր, անխակալ, անյիշաչար, քաղցր եւ հեզ առ ամենեսեան, որբոց եւ այրեաց խնամիչ եւ դարմանիչ, յիշատակ նորա արհնութեամբ [եղիցի]: Եւ եղև սկիզբն գրելոյ սորա յայնմ ամի, յորժամ եկն անաւրէն սուլաանն Եգիպտոսի բազում զաւրաւք եւ անթիւ հեծելաւք ի վեր|443բ|ա անառիկ դղելին եւ հայրապետական թիոռոյն Հոռոմկլաին, եւ պաշարեալ զնա բազում պատնիշաւք եւ բազում հեծելաւք եւ հետեակաւք, եւ ընդմբաքար կանկնեաց ի նմա թուով երեսուն եւ հինգ՝ ընդ մեծ եւ ընդ փոքր, եւ ձեծէին զպարիսպ բերդին քարիւ եւ ի ներքս ի բերդն ձգէին քարինս մեծամեծս եւ փոքունս, եւ ձգէին նետս ի նոսա եւ սպանանէին զմարդ եւ զանասուն, եւ էր ի մեծ վտանկի եւ ի նեղութեան եւ ի տարակուսի քաղաքն այն յանաւրէն ազգէն հագարացոց, եւ ոչ ոք մտանէր եւ ելանէր առ նոսա, զի յամենայն կողմանց պաշարեալ էին զքաղաքն զայն, եւ ոչ ուստեք հասաներ աւգնական նոցա, այլ միայն առ բարձրեալն Աստուած աղաղակէին, գոչէին, արտասուէին արք եւ կանայք, ծեր եւ տղայք, երիտասարդք եւ կուսանք, թերեւս ողորմեցի մարդասէրն Աստուած եւ փրկեցէ ի ձեռաց անաւրինաց, եւ ոչ լուաւ նոցա Աստուած, ըստ այնմ, թէ՛ Յորժամ համբառնայցէք զձեռս ձեր ի վեր, դարձուցից զերեսս իմ ի ձէնչ, եւ դարձեալ՝ Ձի՞նչ աւզուտ է գալ բողոքել ձեր առ իս, եւ ինձ՝ ոչ լսել ձեզ: Եւ այսպէս անբարկանալին Աստուած, որ յամենայնի գթածն է եւ ողորմած, վասն բազում մեղաց մերոց եւ ծովացեալ անաւրէնութեանց, զոր գործէաք, էած ի |444ա| վերա մեր զգաւազան բարկութեան արդարադատ իրաւանց իւրոց եւ խրատեաց զմեզ հայրական գթովք, եւ մատնեաց զհոյակապ եւ

զհռչակաւոր, զանառիկ դղեակն զԿլայն եւ զաթոռն հայրապետութեան ի ձեռս անարէն գոռոզին եւ բազմազուլիս վիշապին՝ արքային եգիպտացոց, եւ արար սպանումն եւ գերութիւն մեծ եւ աւեր սաստիկ, եւ զբազումս ի սուր սուսերի մաշեցին, եւ ո՛չ եղեւ համար եւ թիւ գերելոցն եւ կոտորելոցն: Եվ ո՛վ ոք բաւական իցէ պատմել զեկեղեցեաց աւերումն, զսուրբ սեղանոց կործանումն եւ զանաւթոց եւ զսպասուց սրբութեանց տաճարաց Աստուծոյ զափշտակութիւն, զսպանումն քահանայից, զգերութիւն սարկաւագաց, զխայտառականս կուսանաց, զանարգանս ամուսնացելոցն, զի ո՛չ ակն առնուին յալեաց ծերոց, եւ ո՛չ խնակին ի մանկութիւն երիտասարդաց, եւ ո՛չ ողորմեցան արդար տղաոց, այլ ի սուր եւ ի մահ եւ ի գերութիւն մատնեցան, եւ ի վերապսորիկ՝ հրով այրեցին զքաղաքն, եւ զհայրապետն մեր՝ զտէր Ստեփանոս հանդերձ եպիսկոպոսաւք եւ քահանայիւք եւ սարկաւագաւք եւ բազում ժողովրդովք, արամբք եւ կանամբք եւ մանկտովք ի գերութիւն վարեցին յաշխարհն եգիպտացոց:

Արդ, աղաչեմ |444բ| զամենեսեան, վասն սիրոյն Քրիստոսի, զի որք աւկտիք ի սմանէ կամ ընդարինակէք, զաշխատողս սորա՝ զՔարսելո նուաստ երաժիշտ եւ զծնողս իւր եւ զազգաստոհմն իւր յիշեսջիք ի Քրիստոս եւ խոշորութիւնս եւ սխալանացս, որ ի սմա, անմեղադիր լերո՛ւք, զի ախմար էի, պակասամիտ, այլ յաւժարութիւն իմ եւ սէր ստիպեաց զիս սկսանիլ, եւ բազում աշխատութեամբ գրեցի: Արդ, որպէս եւ է, սիրով ընկալարո՛ւք եւ թողութիւն մեղաց խնդրեցէ՛ք ի Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն, որ զմեզ սրտի մտաւք յիշէ, աւրհնի յԱստուծոյ, յիշեսջիք եւ զբարէպաշտ վաճառականն զՍարգիս, որ յայսմ ամի հանգեաւ ի Քրիստոս, յիշատակ նորա աւրհնութեամբ [եղիցի]:

1294 թ. Բարսեղ երաժիշտը աւարտել է ձեռագիրը եւ գրել յիշատակարանը. 1299 թ. ձեռագիրը տարուել է Տարօնի Առաքելոց վանք, ուր Թորոսը վերջին երկու թերթը եւ յիշատակարանը փոխել է, ինքն է գրել եւ աւելացրել է իր յիշատակարանը, տե՛ս ԺԳ. դ. յիշ-ք, էջ 729-32 (590):

2. 177ա (ստացողի) Տէ՛ր Աստուած, ողորմեա՛ց ստացողի գրոյս եւ իւրոցն եւ ամենայն հաւատացելոց. ամէն (նման՝ 210ա, 219բ, 244բ, 260բ, 297բ):

180ա Տէ՛ր Աստուած, ողորմեա՛ց ստացողի գրոցս Բարսղի եւ ծնողաց իւրոց եւ եղբարց եւ ամենայն հաւատացելոց. ամմէն (նման՝ 215բ, 228բ, 270ա, 287բ, 399ա, 412բ):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 441բ (1299 թ., բոլորգիր) Ստացաւդ մատենիս զարհիպիսկոպոսն զտէր Աբրահամ եւ զծնաւզան իւր յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր, աղաչեմ, ով մանկունք նոր Սիոնի, յիշեսջիք եւ զեղկելիս զԹորոս, զոր սակաւ նորոգեցի, զի եւ դուք յիշեալ յիշիք առաջի Աստուծոյ բարեաւ նորին խնամոց. ամէն:

444բ ես՝ տէր Աբրահամս, տրուպս յորդիս եկեղեցոյ, հարկ եղեւ գնալ ինձ յերկիրն Կիլիկեոյ, ի տեսութիւն սրբազան կաթողիկոսին՝ տեառն Գրիգորիսի, եւ հանդիպեցա այսմ աստուածաբն տառիս. եւ ի վաղուց հետէ ցանգացող եղէ այսմ աստուածախաւս մատենիս, ստացա զսա գանձ պատուական եւ յիշատակ հոգոյ եւ ի վարժումն մանկանց եկեղեցոյ, եւ բերի զսա |445ա| յաստուածահաճ ուխտս մեր, ի գաւառս Տարաւնոյ, ի դուռն Սուրբ Առաքելոցս, որ կոչի Ղազարոս վանք, եւ լցի՛ զոր պակասէր եւ ետու կազմել ի թուականութիւնս Չեմ. (1299): Արդ, աղաչեմ զմանգունս եկեղեցո ես՝ թարմատարս տէր Աբրահամ, որք հանդիպիք այսմ տառի, մեղաց թողութիւն խնդրեցէ՛ք մեզ եւ մերոցն ամենայնի, եւ մի՛ ոք իշխեսցէ հանել զսա ի Սուրբ Առաքելոցս, եւ որ որ յանդգնի հանել, պատժի յԱստուծոյ եւ ի Սուրբ Առաքելոցս, եւ ի մէնջ: Ընդ նմին եւ զԱռաքել կազմող գրոյս յիշեսջիք յաղաւթս աղաչեմ:

Տե՛ս ԺԳ. դ. յիշ-ք, էջ 854-5 (689):

2. 1ա (1522 թ., անարուեստ բոլորգիր) Զբեմուրատս զԳոհարմելէֆն յիշեցէ՛ք ի Քրիստոս, եւ որ զիս յիշէ, [ար]ժանի արասցէ, Քրիստոս զինքն յիշի չիւր ողորմութեամբ, գրեցաւ ի թվին ԶՀԱ. (1522): Փա՛ռք:

3. 1ա (ԺԶ. դ., նոտրգիր) Զփափաճող գրոցս եւ զնդունող Հոգով Սուրբ տառիս Խաչատուր [քահանայն] յիշեցէ՛ք ի Քրիստոս, եւ որ զմեզ [յիշ]ման արժանի [արասցէ] մի՛ յիշեսցի յանուն նորա/// ԻԹ: Հ: Ի: է: Ճ: Զ: Ա///:

ԳՐԶԱՓՈՐՁ 1ա՝ «Հաշտարար սուրբ քր[իստոնե]այք, յորժամ ամբա[ռնայք զձեռս ձեր]»:

ԿԵՔԱԳՐՈՇՄ՝ 2ա բոլորակ, մէջտեղում թագապսակ զինանշան)՝ “Πεϋ. Αχαλιϋιχσϋοϋ ϋραδσϋοϋ πολυϋιϋ”:

ՆՇՈՒՄ՝ 1ա՝ «Հ^մ 20, 2588, ԶեԳ. – 1294, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս», 2ա՝ «Հ^մ 176/15», կազմի մէջքին՝ «ներս. կամբ. Ատենաբանութիւն (2)»:


2589

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն


ԳՐԻԶ՝ Սարգիս սարկաւագ: ԾԱՂԿՈՂ՝ Հայրապետ ֆիյ.: ՍՍԱ-ՅՈՂ՝ Կոստանդին ֆիյ.:

ՈՒԹ. – 1200
 ԹԵՐԹ՝ 338: ՊՐԱԿ՝ 1-31x12 (1, 8, 12, 13, 16, 26՝ 11, 2, 6, 29՝ 10, 9, 11՝ 7, 15՝ 6, 17, 31՝ 13, 25, 27՝ 8): ՆԻԻԹ՝ մագաղաք: ՄԵ-

ՄՈՒԹԻԻՆ՝ 23,3x19: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսին (19,5x14,5): ԳԻՐ՝ ուղղագիծ երկաթագիր (նմուշ՝ 195ա), 2բ-3բ, 265բ՝ բոլորգիր՝ ժե. դ. (նմուշ՝ 3ա): ՏՈՂ՝ 19-21: ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշի, միջուկը տախտակ, աստառը շագանակագոյն մետախ. լուսանցակը՝ դերձ կապոյա: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա-Գ + Գ-Ձ, չգրուած թուղթ (Ա-Գ, ԵՁ)՝ լուսագծերով եւ լուսադրոշմով՝ «RMBCR» (Գ, Գ):



նմուշ 3ա



նմուշ 195ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՆ՝ – Մարթնա՝ 1բ, Մարկոս՝ 97բ: Կ ի - ս ա խ ու ռ ա ն ՝ 2ա, 98ա, 158ա, 265ա: Լ ու ս ա ն ց ա զ ա ռ դ՝ բուսական, բոլորակներ: Ձ ա ռ դ ա զ ի ռ՝ թոչնագիր, հանգուցագիր, մարդագիր: Գ ո յ ն ե ռ՝ կարմիր, կապոյա, կանաչ, մանուշակագոյն, շագանակագոյն, սուկի, սեւ, սպիտակ:

ՎԻՃԱԿ՝ բաւարա. Մարկոսի նկարը աղաւաղուած, գունաթափուած, մագաղաթը չորացածութիւնից կծկուած, խոր եզրահատումից լուսանցազարդերը վնասուած, լուսանցակողերի կապոյտը թափուած. կազմը եւ Ա-Բ, Ե-Ձ պահպանակները Ի. դ. ի, ք. 2-3 եւ 265՝ ընկած թերթերի փոխարէն ժե. դ. ի լրացումներ են, ըստ այսմ՝ 2ա էջի կիսախորանը եւս ժե. դարի է, ք. 11-2ի եւ 111-2ի միջեւ 2ական, ք. 87-8ի, 113-4ի, 137-8ի, 271-2ի, 279-80ի, 280-1ի, 287-8ի միջեւ 1ական թերթ կտրած-հանած, ք. 15-6ի, 119-20ի, 268-9ի, 314-5ի միջեւ 1ական, 116-7ի միջեւ 2, 336-7ի միջեւ 4 թերթ ընկած, որոշ թերթեր սխալ տեղադրուած. ք. 113բ պէտք է լինի 17-8ի միջեւ, կարդայ 17բ, 113ա, 113ա, 18ա. ք. 124բ՝ 122-3ի, 298բ՝ 113-4ի, 315բ՝ 323-4ի, 324բ՝ 314-5ի, 336բ՝ 333-4ի միջեւ:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1. 2ա-96բ, 113բ-ա Աւետարան Մարթնայի (չիբ՝ Ե. 5-23, Ձ. 15-25, ԻՁ. 49-59):
2. 98ա-157բ, 298աբ Աւետարան Մարկոսի (չիբ՝ Գ. 40 - Ե. 21, Ե. 32-41, Ձ. 35-56, է. 30 - Ը. 3, ԺԲ. 7-17):
3. 158ա-264բ Աւետարան Դովաւաու:
4. 265ա-338ա Աւետարան Յովհաննու (չիբ՝ Ա. 42-51, Գ. 5-17, Ե. 16-24, Ե. 33-44, է. 3-14, Ի. 4 - ԻԱ. 15):

Ստ. լս-ներում ունի համաբարբառ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 338ա ///ի ծն/// ժամանակի սովոյ եւ ///:
2. 1բ (ծաղկողի. նկարի մէջ) [Քրիստոս Աստուած] ողորմեա՛ ստացողի [սո]րա Կո[ստա]նտն[ի], զի մեծաւ ջանիւ եւ սերտ սիրով ետ գրել զսա ի վայելուծման ձին իւրոյ եւ ի բարէխաւսութիւն մեղաց իւրո[ց]:
3. 338ա (ստացողի) [Շնորհիւ բարեա]րին Աստուծոյ, որ զարացուցանէ զանգարս եւ կանգնէ զանկեալս եւ ի յոյս բարեաց աճէ զլուսահատեալս, որ եւ զիս՝ զանարժանս արժանի արար հասանել յաւարտ

գրոյս: Քանզի ես՝ Կոստանդին քահանայ՝ տրուպս եւ անարժանս, ներողութեամբն Աստուծոյ ցանկացայ եւ խնդրեցի զմեծագին մարգարիտս զայս ըստ բանին Տեառն եւ վաճառեցի զամենայն |338բ| զկեանս իմ՝ ստանալ զսա յողքատ եւ ի դառնաբեր ժամանակիս բազում ջանիւ եւ խանդաղակաթ սիրով, զի թեպետ եւ ոչ գոյին ինչք պատրաստականք ըստ մեծամեծ նիւթիցս, սակայն սէր աստուածային փափագմանս մոռացումն արար յոչ կարեմն, քաջալերեաց եւ առատապէս շնորհեաց ծախս սուրբ Աւետարանիս, զոր սկսեալ սարկաւազին Սարգսի գրով աւարտեաց, ծաղկեցաւ երանկաւք ի ձեռն Հայրապետ քահանայի, ի թուակա-նութեանս հայոց Ոսթ. (1200), ի թագաւորութեանն Յունաց Անկէլոսի, ի գիտապետութեանն Հայոց տէր Գրիգորիսի Ապիրատ անուն կոչեցեալ, յերեքտասան ամի առման Երուսաղէմի, եւ յերրորդումն ամի թագաւորութեանն Հայոց Լեւովնի բարեպաշտի, ի բունակալութեանն այլասեռիցս Ուզնաւանին: Ես՝ Կոստանդին/// (վերջը թափուած):

«Ի թուականութեանն հայոց Ոսթ. (1200), ի թագաւորութեանն Յունաց Անկէլոսի, ի գիտապետութեանն հայոց Տէր Գրիգորիսի Ապիրատ անուն կոչեցեալ, երեքտասան ամի առմանն Երուսաղէմի եւ յերրորդումն ամի թագաւորութեանն հայոց Լեւովնի բարեպաշտի» մասը ժԲ. գ. ի ձեռքով կրկնօրինակած ՊՏԿ. Գա-ին:

Տէս Ե-ԺԲ. գ. ի. յիշ-բ, էջ 307, 2^ր 307:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 1ա (Ժէ. դ., բոլորգիր) ես՝ Մարտիրոս քահանայս, որդի Հայրապետին, որ տվի զսուրբ Աւետարանս ի գեղն ի Քեհրան, ի դուռն Սուրբ Լուսատուչիս՝ յիշատակ ինձ եւ ծնաւոյց իմոց: Ով ոք հակառակի սուրբ Աւետարանիս՝ ծախելով կամ գողնալով կամ տանելով, մասն զՅուդայի առցէ: Կարգացո՛ղք սուրբ Աւետարանիս, զմեզ յիշեցէ՛ք միով Տէր ողորմայիւ, եւ Աստուած զձեզ յիշէ ի յիւր միւսանգամ գալուստն, զԱմէնն հրեշտակքն ասասցեն եւ զեղիցին՝ մէնք:
2. 97ա (Ժէ. դ., նոտրգիր) Քրիստոս Աստուած արհնէ զխոջայ Յոսովանես մոռղղասին զՔրդատանին, որ ստացաւ զսուրբ Աւետարանս ի ձեռաց այլագաց՝ յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց, հա[ւ]րն իւրոյ՝ <եւ մ՝ Թումային եւ մար իւրոյ՝ Ամբ<ամբ>արին եւ եղբարն իւր՝ Ստեփանոսին եւ արա մերձաւորաց. ամէն:

Յաջորդում է ժԲ. գ-ի 7 տողանոց մի այլ յիշատակարան, որ գրեթէ լիովին ջնջուած է, կարդացում են առանձին տառեր:

3. 158ա (Ժէ. դ., նոտրգիր) ես՝ մմ գ աա տո ոռ եբ ոռ («Ներսէս») խառն՝ փոխարինագիր եւ գումարագիր ծածկագրութեամբ) վարդապետ գրեցի առաջին: Ոսթ. (1200):

4. 249բ (Ժէ. դ., բոլորգիր, ստ. լս.) Քրիստոս Աստուած ողորմի ի խոջայ Յոսովէս մոռղղասուն, որ ստա-

ցաւ զԱւետար[անս ի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց եւ] արա մերձաւորաց իւրոց՝ հաւր իւրոյ՝ Թումանին եւ մաւր իւրոյ՝ Ամբարին եւ եղբար իւրոյ՝ Ստեփանոսին եւ կենս[ն] (շար. եղբարհատած-կտրած):

5. 1ա (ԺԹ. դ., շղագիր) Յամի Տեառն 1148 գրեցաւ սուրբ Աւետարան:

6. 2ա (ԺԹ. դ., շղագիր) Արդուբեանց Վասիլին է:

ՆՇՈՒՄ՝ պհպ. Աա՝ «2589», պհպ. Գա՝ «Հ^ր 25, 2589, ՈՆԹ. - 1200», ներդիր թերթ (վերջում) «Իե. 25. 5.

Աւետարան – Ի սկզբան Մատթէոսի Աւետարանին են բոլորագիր, ութածալ, երկաթագիր, ի տեղիս-տեղիս ծաղկազարդ գրեալ ի վերայ մագաղաթի, ի հայրապետութեան հայոց տէր Գրիգորիսի Ապիրատ կոչեցելոյ, ի թագաւորութեան հայոց Լեւոնի, ստացող գրոցն է Կոստանդին քահանայ, նկարողն է Հայրապետ քահանայ, Սարգիս սարկաւազ, ի վերջն ունի յիշատակարան, ՈՆԹ. (1200), կաշեկազմ»:


2590

Ա. Ի Ե Տ Ա Ր Ա Ն


ԳՈՂԹՆ

ԳՐԻՉ՝ Անանուն (թ. 3-37, 61-95, 207-65), Եփրեմ ԲԲ. (թ. 38-60, 96-203, 266-71): ԾԱՂԿՈՂ՝ անանուն, Եփրեմ գրիչը: ՄՍԱՅՈՂ՝ Յովհաննէս ԲԲ.:

ԹԵՐԹ՝ 273. չգրուած՝ 1ա-2ա, 41բ, 83բ-85ա, 130բ-1ա, 204ա-6ա, 272ա-3բ: ՊՐԱԿ՝ 1+Ա-ԻԳx12 (ե 11, է 10, Ը, ԺԱ, ԺԸ 13, ԻԳ 8): ՆԻԻԹ՝ թուղթ, մագաղաթ (թ. 86, 131, 208): ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 23x17,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (15.5x12, 16.5x12): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 90ա, 146ա): ՏՈՂ՝ 21-24: ԿԱԶՄ՝ շագանակագոյն դրոշմագարդ կաշի, միջուկը տախտակ, աստաղը դրոշմագարդ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա., թ. 1 + ԲԳ, չգրուած թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմներով՝ թագ, աստղ, կիսալուսին, սիւրս, խաղող, «T D»:



նմուշ 90ա



նմուշ 146ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ – Մատթէոս՝ 2բ, Մարկոս՝ 85բ, Ղուկաս՝ 131բ, Յովհաննէս եւ Պրոխորոն՝ 206բ: Կ ի ս ա խ ո ռ ա ն Ն՝ 3ա, 86ա, 132ա, 207ա: Լ ու ս ա ն ց ա զ ա ռ դ՝ բուսական, տանար, խաչ, թոչուն: Ջ ա ռ դ ա զ ի ռ՝ մարդագիր, թոչնագիր, կենդանագիր, հանգուցագիր: Գ ո յ ն ե ռ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, սեւ, սպիտակ, նարնջի, մանուշակագոյն, շագանակագոյն, ոսկի:

Աւետարանիչների նկարները, կիսախորանները տարբեր ծաղկողների ու ոճի գործեր են: Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս աւետարանիչների նկարները յաւելուած-ներդիր են (տե՛ս Պրակ եւ Նիւթ):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, Ա. փեղկի կոտողերը եւ զամերից մէկն ընկած, լուսանցակողերի կարմիր թափուած, թերթերը հիմքի կարից թուլացած, կան աղտոտուածութեան հետեւ, հիմքերի եւ եզրերի մաշուածները նորագուած-կարկատուած ԺԹ. դ.ում՝ Եփրեմ գրիչը լրացրել է նախկինում գրուած եւ անյայտ պատճառով թերի մնացած ձեռագիրը:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1. 3ա-83ա Աւետարան Մատթէոսի:

ԺԷ. դար, ՌՃՄԷ. – 1708

2. 86ա-128ա Աւետարան Մարկոսի (127բ-8ա Յարուցեալ Յիսուս):

3. 128բ-30ա Գլուխք: 130ա Նախադրութիւն: 132ա-202ա Աւետարան Ղուկասու:

4. 202բ Նախադրութիւն: 203աբ Յանկ գլխոց: 207ա-69բ Աւետարան Յովհաննոս:

Ստ. լս. ունի համաբարբառներ, եզրային լս.՝ գլխանիշ համարներ:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

270ա Փա՛ռք, պատիւ եւ գոհութեամբ երկրպագութիւն ամէնառատ, ամէնիմաստ, ամենազօր, ամենողորմ Հօր բարերարի եւ մարդասիրի, Որդւոյն միածնի եւ կենսատուի եւ Սուրբ Հոգւոյն նախախնամողի զամենայն արարածըս, այժմ եւ անգրաւ յաւիտեանս յաւիտենիւ. ամէն: Բարւոյ ամենայն ոք ցանկայ, ոմանք մասանց, եւ այլք՝ բոլորին, աստուածայնոյն աստուածասէրքն, եւ բանայ զաշս ներքին մարդոյ՝ գիտել եւ ճանաչել զգիրակործան եւ զապականելի կենցաղոյս վայելս, թէ՛ ընդ գտանելն արագ ունի եւ զեղծումն, իսկ որոց բաց եւ յըստակ ունիցին զմտացն աշս՝ եւ լուստեսակ զհոգւոյն տեսարանս գանձեն անձանց իւրեանց անճողոպրելի շահս, որ միշտ է եւ զրաւ ունի զկայ ընդ Աստուծոյ եւ ոչ ական հատանի ի վնասակար գողոց, ուստի եւ |270բ| շառաւիղն քահանայի զտէր Յովաննէս սրբանուէր քահանայ ստացաւ զայս մատեանս աստուածային՝ յիշատակ իւր եւ ծնողացն իւրոց՝ հօրն Մարութայ քահանային եւ մօրն՝ Եւային, եւ եղբարցն՝ Թեանին եւ Սարգսին եւ ամուսնոյն իւրոյ՝ Հազարվարդին եւ որդոցն՝ Մարութային եւ Պօղոսին եւ դուստրն՝ Գուլվարդն եւ թոռն՝ Խաչիկն, որ է որդի Մարութին: Դարձեալ յիշեցէ՛ք զտէր Յովաննէսն եւ զեղբարսն իւր՝ զԹեանն հանգուցեալ, այլեւ զՍարգիսն եւ կողակիցն իւր՝ զԹագուհին եւ որդին իւր՝ զԳրիգորն: Դարձեալ յիշեցէ՛ք զքեռքն իւր՝ զՄատթէոսն եւ զՅանազանն եւ վարդապետն՝ տէր Սարգիսն եւ որդին՝ Վարդանն եւ դուստր՝ Մարիամն: Դարձեալ յիշեցէ՛ք զտէր Յովաննէսն եւ զկարգակից քահանայսն՝

տէր Միխայլէն, տէր Մարտիրոսն, տէր Ստեփանն՝ այս մեծ եկեղեցոյ՝ Սուրբ Աստուածածնի քահանայքն, նաեւ Սուրբ Սարգսի եկեղեցոյ |271ա| քահանայքն՝ տէր Յակոբն, տէր Պօղոսն, տէր Վարդանն, տէր Ստեփանն եւ զսարկաւազունն եւ զբարեպաշտօն ժողովուրդան յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք: Նաեւ եւս յիշեցէք զտէր Յովաննէսն, որ ստացաւ զսուրբ Աւետարանս եւ ետ վախճման յիշատակ ի դուռն Սուրբ Աստուածածնին, եւ ո՛չ որ ջանայ հանել զսա ի դրանէ սորին: Եւ էր ի ժամանակս հայրապետութեան տեառն Աղէքսանդրի սրբազան կաթողիկոսի եւ առաջնորդութեան Սրբոյ աթոռոյն Թումայի առաքելոյն տեառն Յոնաննու եւ այցելուի երկրիս Գողթնեաց: Դարձեալ


աղաչեմ զմանկունսդ նորոյ Սիօնի՝ որք հանդիպիք սմա կարգալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սորին՝ զտէր Յովաննէսն եւ զգծող սորին՝ զԵփրեմ մեղսամած քահանայս, որ Բ. գլուխ սուրբ Աւետարանիս գծագրեցինք հանդերձ ծաղկով եւ երկաթագրով եւ համարագրով, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք: |271բ| Եղեւ զրաւ զրչութեան սորա ի թվին հայոց ՌՃԾԷ. (1708), եւ յամսեանն սեպտեմբերի ժե. (15):

ՆՇՈՒՄ՝ 1ա՝ «27, 2^ր 2590, ՌՃԾԷ. – 1708ից առաջ, Մ[ետրոյ] եպ[իսկոպո]ս», կազմի մէջքին. «Աւետարան (7)»:

2591

Հ Օ Ա Ն Պ Ա Թ Ի Ս Ս Ա Պ Օ Ռ Թ Ա, Բ Ն Ա Զ Ա Ն Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԹԵՐԹ՝ 143+1 (կրկն.՝ բ. 1, գրչի էջակալում 1-71, որ է՝ 1գ-36ա). չգրուած՝ 1բ, 69ա-70բ, 103բ-5բ, 131բ, 139բ-ժ: ՊՐԱԿ՝ Ա-Զx12 (ե 10)+1+Ա-Գx12 (Բ 10) + Ա-Գx10 (Գ 9): ՆԻԻԹ՝ թուղթ, լուսադրոշմներով՝ «St Pons», «GIOVANNI CHECCHI» եւ խեցեգարդ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 24,5x19: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (17x13): ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1գ): ՏՈՂ՝ 30: ԿԱԶՄ՝ ծաղկաթուղթ, մկշբ, Ա, Բ փեղկերի հիմնամասերը եւ անկիւնները՝ կաշի, միջուկը ստուարաթուղթ. աստաղը թուղթ. լուսանցակողերը՝ դեղին: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա (սկ.) սպիտակ չգրուած թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ «VG»:



Նմուշ 1գ

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻԻՆ – Զ ա ռ դ ա գ ի ռ՝ հանգուցագիր: Գ ո յ ն՝ սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը մաշուած, Բ. փեղկի ստորին արտաքին եզրը բռնուած, թրուայնութեան հետեւանով որոշ էջերի գիրը արտացոլուած հակառակ երեսներին:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1գ-139ա [Ճօան Պարխատա Պօտրա, Բնագանցութիւն]

– 1գ-2բ Նախերգանք – Բնագանցութեան մեծապէս գհետ էին նախնի իմաստասէրք... ճանպարհ քաջադէպ հորդէ մեզ հասանել յերկրորդին ծանօթութեան:

1. 2բ-68բ Բնագանցութեան առաջին մասն. Հոգէբանութիւն – Հոգեբանութիւնդ անուն ծագեալ ի բառիցդ հոգի եւ բան...

1. 3ա-14բ Պրակ Ա. Յաղագս բնութեան հոգոյ – Հոգի բառի իմանամբ գէական խորհուն...

ա. 3բ-7ա Գլուխ Ա. Պարզութիւն հոգոյ – Ի նոյն իսկ ի բնութենէ խորհելոյ... որ է ասել միանգամայն եւ պարզ եւ բաղադրեալ:

ԺԹ. դար

բ. 7բ-9ա Գլուխ Բ. Յաղագս անմահութեան հոգոյ – Ի պարզութենէ հոգոյ հարկի հետեւի... ըստ պատկերի իւրում եւ ըստ նմանութեան:

գ. 9ա-14բ Գլուխ Գ. Սկիզբն եւ գոյութիւն հոգոյ – Որչափ քաջածանօթք եմք պարզութեան եւ անմահութեան հոգոյ... տպաւորեալ եւս իցէ ի մեզ զգաղափարս գունոց (յօդուածք Ա-Գ):

2. 14բ-68բ Պրակ Բ. Զօրութիւնք եւ ներգործութիւնք հոգոյ – Ի բանականն արուեստի խուն ինչ նշանակեցար...

ա. 14բ-23բ Գլուխ Ա. Զգայութիւն – Արդէն իսկ լրի ի բանական արհեստին... եւ ըմբռնուծս գիմանալն զարտաքին տպաւորութիւնս (յօդուածք Ա-2):

բ. 23բ-8ա Գլուխ Բ. Զօրութիւն մտազելոյ – Ասացար ի բանական արհեստին... զորմէ յայլուր ժամ լիցի մեզ խօսիլ (յօդուածք Ա-Բ):

գ. 28ա-37ա Գլուխ Գ. Յիշողութիւն – Անօգուտ էր մարդոյ զօրութիւն զգալոյ եւ խորհելոյ... որպէս տեսցուք ի բարոյականն իմաստասիրութեան (յօդուածք Ա-Գ):

դ. 37ա-44ա Գլուխ Դ. Կամք – Կամքն է զօրութիւն հոգոյ... եւ ընտրել զմին յաւէտ, քան զմիւսն (յօդուածք Ա-Ե):

ե. 44բ-6ա Գլուխ Ե. Ներգործութիւն – Ներգործութիւնն ընդհանրապէս բովանդակէ յինքեան... եւ ստոյգ յայտնութիւն բազմապատիկ փորձովք:

զ. 46ա-8բ Գլուխ Զ. Գործք ծագեալք ի նախակարգեալ զօրութեանց – Յառաջին գիրս բանական արհեստին... եւ աշարջութեամբ կալովն ի վերլուծութիւնս (յօդուածք Ա-Բ):

է. 48բ-51բ Գլուխ Է. Ունակութիւն եւ ազդումն բնաւորական – Ի նախընթաց գլուխդ տեսար... բնածինս դնել ի սարդումն:

ը. 51բ-4բ Գլուխ Ը. Քուն, երագբ, քնախօսութիւնք, քնաշրջութիւնք, գառանցանք եւ մոլեգնութիւնք – Միաւորեմ գայս ամենայն ի մի եւեթ գլուխ... որպէս թէ կատարելապէս ի մտի իցեն (յօդուածք՝ Ա-Գ):

թ. 54բ-6ա Գլուխ Թ. Բովանդակութիւն պրակիս – Առ ի դոյզն բանս ամփոփել գցայս վայր... մինչեւ ցայսօր մեծաւ մասամբ յանհատութեան ծածկեալք առ ի մէնջ:

ժ. 56ա-9բ Յաւերուած. Յաղագս հոգոյ անբանից – Զոր օրինակ ի տեսանելոյ յայլ մարդիկ... զոր պարգեւեաց նոցա:

ժա. 59բ-68բ Ծանօթութիւնք հոգեբանութեան, որ եղեալքն յետ թուանչանաց կրկին գաւազանաձեւ գծիւք // հեղինակին են, իսկ առանց նշանաց եղեալքն ի մէնջ յաւերան – 1. Բացատրութիւն այսր կարծեաց... որ կատարի ի տասն ժամս եւ ի քանի մի վայրկեանս:

II. 71ա-103ա Բնագանցութեան մասն Բ. Էակաբանութիւն կամ վերլուծութիւն գաղափարաց եւ ծանօթութեանց, որ ի վերայ էակաց – էակաբանութիւնն, որ նշանակէ ճառ կամ բան գէակաց...

1. 71բ-80ա Պրակ Ա. Սկիզբն գաղափարաց եւ ծանօթութեանց, որ յաղագս բնութեան եւ հանգամանաց մարմնեղէն գոյութեանց – Աչ ոք երկբայեացի, թէ միայն զգայութիւնք են միջոցք...

ա. 72ա-3բ Գլուխ Ա. Թէ զիա՞րդ հասանէ հոգին ի ծանօթութիւն գոյութեան մարմնոյ – Բոնտիլեաքայ կազմեալ արձան մի... որպէս ի մօտոյ ունիմք տեսանել:

բ. 73բ-5ա Գլուխ Բ. Թէ զիա՞րդ ստանամք գաղափարս ձեռոյ եւ հեռաւորութեան մարմնոյ – Զառաջին սովորեալք ընդ բանալ գաշան... կրկին գոլով պատկերաց յերկուս աչս տպացելոյ:

գ. 75ա-6ա Գլուխ Գ. Զիա՞րդ իրք յիւրեանց բնական դիրս տեսանեն... կրկին գոլով պատկերաց յերկուսին աչսն նկարելոց – Թէ պատկերք իրաց գլխի վայր նկարին... մասն մի եւեթ տեսանի:

դ. 76աբ Գլուխ Դ. Զիա՞րդ լինի որոշել գմարմին եւ ուտուցիկ, կորնթարդ եւ գոգաւոր – Պատկեր մարմնոյ իրիք, թէ հարթ իցէ... կարէ եղծանել վկայութիւն շօշափելեաց:

ե. 76բ-7ա Գլուխ Ե. Թէ զիա՞րդ շօշափելիք եւ տեսանելիք ուտուցանեն այլոց զգայութեանց նանաչել գոյիս մարմնոյ, եւ զիա՞րդ զգայութիւնս մեր յայնուսիկ ածեմք հայեցեալ իբր ի հանգամանս մարմնոյ – Շօշափելիք ուտուցանեն գտեսանելիս... ուր զգունոց սովորաբար լոկ ըմբռնմունս ունիմք:

զ. 77աբ Գլուխ Զ. Թէ զիա՞րդ հասանէ մանուկն ի ծանօթութիւն զգայարանաց իւրոց եւ զիւրաբանչիւրոցն զգացմունս ի նոսա ածէ եւ նոֆօֆ վարի յորոշել գնորանոր իրս – Այլ ծանօթութիւն, յոր հոգին ժամանէ... զորմէ ժամ է արդ խօսիլ:

է. 78աբ Գլուխ Է. Զիա՞րդ ստանան մանկունք գգաղափարս տարածութեան եւ կարծութեան – Առաջին գաղափար տարածութեան առանց երկբայութեան ծագէ ի շօշափելեաց... յայնժամ հուսկ յետոյ ձեւանայ ճշգրիտ ծանօթութիւն կարծութեան:

ը. 78բ-9ա Գլուխ Ը. Ուստի՞ ծագէ գաղափար մարմնոյ եւ էական եւ ճշգրիտ հանգամանաց նորս որոշումն ի պատահականաց եւ յերեւութականաց – Գաղափարք տարածութեան եւ պնդութեան... արժանապէս այս հանգամանք կոչեցան ճշմարիտք:

թ. 79բ-80ա Գլուխ Թ. Ծանօթութիւնք հանգամանաց, ստորոգելեաց, եղանակի... եւ նիւթոյ, հոգոյ եւ ոգոյ – Բառքդ հանգամանք... եւ անգիտելի առին էութիւնք իրաց:

2. 80ա-103ա Պրակ Բ. Սկիզբն գաղափարաց եւ ծանօթութեանց, որ ըստ համեմատութեանց – Որպէս ի բանական արուեստին ասացաք...

ա. 80ա-4բ Գլուխ Ա. Համեմատութիւնք նմանութեան – Այն ինչ երկու կամ բազում ինչ ընդ միմեանս բաղդատին... այժմու հանգամանք նորս ընդ անցելոյն (յօդուածք Ա-Բ):

բ. 84բ-92բ Գլուխ Բ. Համեմատութիւնք համագոյութեան – Յօդ. Ա. Միջոց, շարժումն եւ ժամանակ... որք երբեմն անլուծանելիք համարեալ լինէին (յօդուածք Ա-Ա-Թ հատուածք, յօդուածք Բ Ա-Զ հատուածք):

գ. 92բ-8բ Գլուխ Գ. Համեմատութիւնք կցորդութեան – Համեմատութիւնք կցորդութեան յիւրեանս պարագրէն... եւ բարոյական կցորդութեան պատշաճին (յօդուածք Ա-Գ, յօդուած Ա Ա-է հատուածք):

դ. 99ա-103ա Գլուխ Դ. Բաղադրեալ համեմատութիւնք ինչ – Համեմատութիւնք գայս վայր խորհրդածեալք եւ զննեալք... տարերք են մարդկայնոյ երշանկութեան (յօդուածք Ա-Դ):

III. 106ա-31ա Բնագանցութեան մասն Գ. Տիեզերաբանութիւն – Տիեզերաբանութիւն յունարէն կոչի քսամոլօղիա...

ա. 106ա-9բ Գլուխ Ա. Պէսպէս վարկածք նախնի իմաստասիրաց յաղագս սկզբան աշխարհի – Խնամով իմն եւ ճիշտ բացատրութիւն... տարագիր եղել յԱթենայ (յօդուածք Ա-Գ):

բ. 109բ-12բ Գլուխ Բ. Հեբեումն կարծեացդ – Յորոց ցայս վայր ասացաւ... ըստ ճակատագիրն ի ծայրս գառանցանաց (յօդուածք Ա-Դ):

գ. 113ա-23ա Գլուխ Գ. Ճշմարիտ սկիզբն աշխարհի – Յետ նշանակելոյ զպէսպէս կարծիս... կամ սակաւն չիշխեմք որոշել ինչ (յօդուածք Ա-Դ):

դ. 123ա-6բ Գլուխ Դ. Դիւրք աշխարհի եւ ընդհանուր օրէնք ստրա – Երկարժամանակեայ դիտողութիւնք... սպախտ է բոլորովին եւ վրիպական:

ե. 127ա-9ա Գրուխ Ե. Տարեբ բաղադրութեան աշխարհի – Նախնիք սովորաբար չորս տարերս եղին... ով կարիցէ որոշակի սահմանել զայս:

զ. 129բ-31ա Գրուխ Զ. Կատարելութիւն աշխարհի եւ յաղագս ամենալատութեան – Որ միանգամ զուշ մտացն յառեսցէ յերկինս... ժպրհեսցին այդպիսում իմիք փոփոխութեան:

IV. 132ա-9ա Բնագանցութեան մասն Գ. Բնական աստուածաբանութիւն – Ազնուագոյն մասն բնազանցութեան է այն...

ա. 132ա-5ա Գրուխ Ա. Գոյութիւն Աստուծոյ – Որք յայտնի ընդհարան ընդ գոյութիւնն Աստուծոյ... որոց արժան է գոլ ի նմին յԱստուած:

բ. 135ա-9ա Գրուխ Բ. Ստորագելիք Աստուծոյ – Յօդուած Ա. Յախտեանականութիւն... եւ առ հոովմայեցիս, Պղաւտոս, Վերգիլիոս եւ Ուրատիոս (յօդուածք՝ Ա-Զ):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԹԱՐԳՄԱՆՁԻ

68բ Յիտալական լեզուէ յեղեալ ի մերս ի Յօհաննէս դպրէ Տէր Կարապետեան Պրուսացոյ:

139ա Սկիզբն թարգմանութեանս յունիսի 7 եւ վախճանն ի յուլիսի 1, յամին 1827:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 1ա (ԺԹ. դ., շղագիր) Բնագանցութիւն: Յիտալական բնագրէն ի հայ փոխեաց Յովհաննէս ս. կ. Տէրոյենց:

2. 139ա (ԺԹ. դ., շղագիր) Թարգմանեալ է ամբողջ Բնագանցութիւնն ի Յովհաննէ պատուելոյ Տէրոյենց Պրուսացոյ ի հայրենակցէ իմմէ (ստորագրութիւն՝ անընկալելի):


ՆՇՈՒՄ՝ կազմաստառ Ա՝ «Հ՞ր 44», պհպ. Ա՞՞ «Բնագանցութիւն, Հ՞ր 44/2591, 1827, Մ[ետրոպ] եպ[իսկոպոս]:»

2592

Հ Օ Ա Ն Պ Ա Թ Ի Ս Տ Ա Պ Օ Ռ Թ Ա, Բ Ն Ա Զ Ն Ն Ո Ի Թ Ի Ի Ն, Զ Ե Ռ Ն Ա Զ Ն Ն Ո Ի Թ Ի Ի Ն

ՌՃՂԶ. – 1747

Թերթ՝ 56. չգրուած՝ 1բ, 44բ, 46աբ, 56բ: ՊՐԱԿ՝ 1-5x12 (1, 5՝ 10): ՆՒԻԹ՝ թուրք, լուսագծերով: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 25x18,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (17,5x13): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 21ա): ՏՈՂ՝ 35: ԿԱԶՄ՝ տպարանային դրոշմագարդ շագանակագոյն կաշի, Ա, Բ փեղկերին բռնգով զարդարչանակ՝ մէջ բոյրակի մէջ ներգծուած վեցրեւ աստղ, միջուկը ստուարաթուրք, աստաղը դեղին թուրք. լուսանցակողերը՝ դեղին: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա-Գ + Ե-Ը՝ սպիտակ չգրուած թուրք, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եռամանիկ (պհպ. Բ. Գ, Ե, Ը):



Նմուշ 21ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ – Ճօան Պաթիստա Պօրթա՝ Յր: Մանրակար բնագրի մէջ (գծանկար) – «Զեռնագննութիւն գծիցն ձեռաց»՝ 47բ-50ա: Կ ի ս ա խ ո ռ ա ն – գ ի խ ա գ ա ռ դ՝ 4ա (կիսախորանի ներքոյ՝ վարդ), 39ա: Ճ ա կ ա տ ա գ ա ռ դ՝ 19բ, 30ա: Լ ու ս ա ն ց ա գ ա ռ դ՝ բուսական: Զ ա ռ դ ա գ ի ՚ թոչնագիր, բուսական: Գ ո յ ն ե ՚ կառմիր, կանաչ, կապոյտ, դեղին, նարնջի, վարդագոյն, մանուշակագոյն, շագանակագոյն, սեւ, սպիտակ, բրնձ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. որոշ էջերի գիրք արտացոլուած հակառակ երեսներին. ք. 4-9, 13-4, 19-20, 24, 33, 38, 43՝ թթուայնութեան հետեւանով դեղնած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. 1ա-45բ [Տիտղ.] Գիրք Բնագննութեան բոլոր մարդկային մարմնոյ, արտահանեցեալ ի Ճօան Պաթիստայէ Փօթայնոյ եւ համառօտեալ Ֆրանչիսկոս Սթէլլոյոյ, թարգմանեցեալ ի Յօհաննիս վարդապետէ Կոստանդինուպօլսեցոյ՝ ի զուարեութիւն հայկազունեաց, ըստ խնդրոյ պարօն Գասպարի՝ որդոյ խօհայ Սահրաթին, ի յիշատակ անձին իւրոյ

եւ հոգացոց ծնողաց իւրոց եւ ի վայելումն ընտանեաց նորին, ի փառս մեծագոյն Աստուծոյ

– 2ա Տրակ առ հայկազին վաճառականս – Նորածին Բնագննութիւնս առ ձեզ դիմէ, ո՛վ եղբարք իմ սիրելիք ի Քրիստոս, որպէս զի ձեօք ճոխացեալ սիրեսցի ի մէջ մերագնեաց՝ առ ի ունիլ գտեղի պարծանաց ի մէջ գրեանցն հայկազունեաց, քանզի որպէս ի յինչս տեսարք, այսպէս եւ ինչք ի տեսարս պարծին: Եւ այս՝ նախ ի փառս մեծագոյնս Աստուծոյ, երկրորդ՝ ի զուարճութիւն եւ ի հրճուանս ձեր, եւ երրորդ՝ ի վերաստացումն այցելութեանն վերնականի հայկողին իւրոյ աղագաւ, վասն որոյ ընկալարո՛ւք զսա սիրով եւ ի կիր արկէ՛ք ըստ հաճոյից ձերոց նշմարելով ուշիմպէս զիրս շահաւորս եւ օգտակարս ճառեցեալս ի սմա, քանզի ըստ իմում խոկման ի բազումս ձեզ եղելոց է պիտոյ եւ ի բազմաց ընդունելոց է զշուք խոհեմոգութեան, որովհետեւ սորին է զննելն ոչ միայն զզանազան բարուց եւ սովորութեանց, ախտից եւ մոլութեանց մարդկան եւ անասնոց, այլ եւ ընձեռելն զկերպ զսպելոյ զնոյնս, որ ամենեքեան իրաւի պիտոյանան մարդկային սովորութեան, այսինքն՝ ի յամուսնութիւնս եւ ի յընկերակցութիւնս, ի բարեկամութիւնս, ի խորհրդակցութիւնս եւ ի կառավարութիւնս անձին, հոգեկանս եւ մարմնականս, իսկ եւ ի խրախճանս եւ ի զբօսանս համեստս եւ պարկեշտս: Ողջ լերո՛ւք: Զի ձեր եմ ես ամենեցուն՝ ծառայ Յօհաննէս վարդապետ Կոստանդինուպօլսեան:

– 2բ Նախերգութիւն առ երանեալ եւ փառաւրեալ սուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն եւ առաջին հայրապետն Հայաստանեայց – Ո՛վ լուսազգեսց

հայրդ հայկազունեաց, սովորութիւն է ծառայից հաւատարմաց նուիրել տեարցն իւրեանց սեփականաց զպտուղ իւրայնոց երկանց առ ի վերաստացումն այցելութեան ուրուք փափաճեցելոյ ի բաց ձգելով զպատկառանս ծնեալս ի նուաստութեանց իւրեանց հոգեկանաց կամ մարմնականաց, որպէս զի նորք պերճացեալք դիրապէս մարթիցին ժամանել ի նպատակն վախճանական զտոյն դիտաւորութիւն ունելով, եւ իմ վերընծայեմ քում վեհանձնութեանդ զդուզնաքեայ զայս աշխատութիւնս, զոր յանձն առի ըստ խնդրոյ պարօն Գասպարի Սահրատեան, ի յիշատակ անջնջելի հոգւոյ իւրոյ եւ ամենայն ընտանեաց իւրոց ի փառս մեծագոյն Աստուծոյ, բայց քանզի տեսանեմ ի յիս ամենեւիմբ զանընդունակութիւն առ այսպիսի պաշտօն սակա տարածայնութեան իմոյս կենցաղավարութեան ի վարուց քոց սրբակրօնից եւ հրեշտակայնոց, ուստի խոնարհապէս թախանձեմ ի գթութենէ քումմէ հայրականէ վերընդունիլ զսա ի ձեռանէ հիքոյս հոգւով հեզութեան եւ բարեգթութեան անտես առնելով զտգեղութիւն իմոյ անձին եւ առատ ձեռնել ինձ զնպաստութիւն քոյոց ատենահասից բարեխօսութեանց ի տրամադրութիւն երկնային շնորհաց, եւ ազնուագործելով զայն սիրել քոյով օժանդակութեամբդ ի մէջ մերազնեաց, զի ի սոյն ներհմտացեալ միտք նոցին ոչ միայն ուշիմապէս ընտրիցէ զօգտակարս, այլ եւ խոհեմապէս փախիցի ի վնասակարից, ի գովեստ եւ ի փառս մեծագոյնս հեղինակին բնութեանց, յորում եւ յամենայնում հետեւիցի սիրով ի լրումն ըզձից քոյոց սրբութեանդ, որոյ եմ ես յախտեան անարդին ծառայ Յօհաննէս Բիզանդեան շնչին քահանայ:

ա. 3ա, 4ա-18բ Գիրք առաջին. Յաղագս թէ զիս՞րդ բնագզնով ի ձեռն նշանից երեւեցելոցն ի մարմնոջ մտածիցեն զհակամիտմունս հոգւոցն – Պրակ առաջին. Յաղագս գիտութեանց դիւցազնականաց, սնտտեաց եւ խաբէականաց... ապա ուրեմն են զօրեղք: Աւարտ առաջին հատորի գրքիս (պրակք 1-33):

– 3ա Յաղագս բնագզնութեան բոլորի մարմնոյ մարդկայնոյ եւ նորին օգտակարութեան եւ դիւցազնաբանութեան, ըստ որում ծնանի ի սկզբանց բնականաց: Նախերգութիւն գրեանն առաջնոյ – Գերյարգութիւն արհեստի բնագզնութեանն... յառաջագրեմք մեզ զայս արհեստ առ ի հռչակել:

բ. 19ա-29բ Գիրք երկրորդ. Յաղագս յատուկ նշանից եւ բաժանման բաղադրութեան մարդկային մարմնոյ – Պրակ առաջին. Յաղագս գըլխոյ... եղնկունք կարմրանշոյք նշանակեն զբարեխառնութիւն, եւ հետեւապէս՝ զբարեսիրութիւն (պրակք 1-16):

– 19ա Նախերգութիւն գրեանն երկրորդի – Գրեցաք մինչեւ ցարդ, թէ... յերեսս բացայայտիցեն:

գ. 29բ-38բ Գիրք երրորդ. Յաղագս համագումարման նշանաց մարմնոյ մարդկայնոյ – Պրակ առաջին.

Յաղագս զօրութեանց եւ մոլութեանց հոգւոյն... եթէ իցէ ընծախակողման ծնկան, նշանակէ զբեղմնաւորութիւն (պրակք 1-18):

– 29բ Նախերգութիւն գրեանն երրորդի – Ճառեցաք յանցեալ գրեանն... զի որ գրէնն ընթանայցէ կարգաւորապէս:

դ. 38բ-44ա Գիրք չորրորդ. Յաղագս կերպից եւ եղանակաց, որովք մտածնիցելոց եւ ճանաչելոց մտոց եւ այլոց ախտից, մոլութեանց եւ վատթարութեանց դեղք եւ սպեղանիք պատրաստիլ կարեն – Պրակ առաջին. Յաղագս, թէ որպէս անգէտ ոք կարիցէ լինիլ գիտուն եւ խոհեմ... ի կիր արկցէ զգեղս եւ զսպեղանիս, վերոյգրեցեալս ըստ եղանակի ուսուցելոյ: Վերջ բնագզնութեան (պրակք 1-18):

– 38բ Նախերգութիւն գրեանն չորրորդի – Ապացուցաք ի գրեանս նախասացեալս... ըստ այսմ եւ մեք սկսեցուք ձառելն առաջ եղելում գրեանս հանդերձ տերամբ:

– 45աբ Յանկ գրոց Բնագզնութեան – Գիրք առաջին. Յաղագս գիտութեանց դիւցազնականաց, սնտտեաց եւ խաբէականաց... Յաղագս թէ որպէս լիրբ ոք կարիցէ լինիլ ամօթխած: Վախճան ցանկի բնագզնութեան:

Հմմտ. ձեռ. 4286, 5ա-113բ:

Բ. 47ա-56ա Ձեռնագզնութիւն բնական, թարգմանեցեալ ի նոյնոյ հեղինակէ

– 47ա Նախերգութիւն գրգոյս – Գերյարգելի արհեստն ձեռնագզնութեան... որք ծնանիլ կարեն ի գծիցն յայնցանէ:

ա. 47բ-51բ Ընձեռնաւած առաջին. Յաղագս բնական ձեռնագզնութեան եւ բնութեան եւ պատճառաց գծիցն ձեռաց – Գլուխ առաջին. Ձեռն բաժանին հասարակապէս յերիս մասունս... ի սոցանէ սկսանին ձեռնագզնուք նախաձառել զիրաց բանականաց (գլուխք 1-24):

բ. 52ա-5բ Ընձեռնաւած երկրորդ. Յաղագս գուշակութեան հիմնեցելոյ ի գիծս ձեռաց – Գլուխ առաջին. Յաղագս կանոնից ձեռնագզնուաց... եւ օժանդակ լինին որսորդք, ձկնորսք, սուրհանդակք, կառավարք, ծովայինք եւ ջրավարժք, հիւանդք, գիճայինք, թէ ամուսնացեալք: Վերջ (գլուխք 1-23):

– 56ա Յանկ գրոցս Ձեռնագզնութեան – Յաղագս բաժանման ձեռաց... Յաղագս բնութեան մոլորակաց: Աւարտ ցանկին Ձեռնագզնութեան:

ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Տէս տիտղոսաթերթ 1ա:

56ա Յամի Տեառն 1747 եւ ի յամսեանն փետրվարի ժԱ.ումն:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ Պհպ. Աս. սեւ թանաքով բողբոջակ՝ մէջտեղում թագապսակ գինանշան. “Πεγ. Αχαλυβιχ-σκού γραδσκού πολυμύι”:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին՝ «Բնագննութիւն (2)», պհպ. Աս՝ «Հ^մ 157, 54, Հ^մ 46/2592, 1747 թ., ԺԸ., Մ[ետ-րոպ] եպ[իսկոպոս]»:


2593

Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

ԵՐԶՆԿԱ՝Յ

ԳՐԻԶ՝ Կարապետ երէց: ՄՍՏՅՈՂ՝ պրն. Ֆոանկ:

ԹԵՐԹ՝ 236+1 (կրկն.) թ. 1. յետագայի թերթակալում գ-մէ., որ է՝ 1-235, էջակալում՝ Ն-ՆՅ, որ է՝ 1ա-128ա). չգրուած՝ 1աբ, 232բ: ՊՐԱԿ՝ Ա-Իx12 (Ա 11, Ի 10): ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵՏԻԹԻԻՆ՝ 24,5x17: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (18x12): ԳԻԲ՝ բոլորգիր (մնուչ՝ 46ա): ՏՈՂ՝ 21-2: ԿԱԶՄ՝ շագանակագոյն դրոշմագառ կաշի, միջուկը տախտակ. աստաղը կապոյտ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա.Բ + Գ.Գ՝ չգրուած թուղթ:



Նմուշ 46ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կիսա խորան՝ 31ա, 185ա: ձ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 1գ, 1դ, 24բ, 180ա: Լ ու ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական, թռչուն, տանաւ: Զ ա ր դ ա գ ի ր՝ թռչնագիր, մարդաղէմ: Գ ո յ ն ե ր՝ շագանակագոյն, վարդագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. խոնարսեան հետեւանով լուսանցագարդերի ներկը թափուած, թերթեր խոնացած, ներկը տարածուած գրադաշտերին, վերջին թերթերը փայլալուծ, թափուած, որի պատճառով բնագիրը թերի, լրացուած Ի. դ.ի նորոգման թղթով, Ի. դ. նաեւ վերակազմուած է հին եւ նոր կաշիների միակցումով, հին կազմաստաղով:

Բ Ո Վ Ա Ն Գ Ի Կ Ո Ւ Թ Ի Ն

Ա. 1գ-179բ [Մխիթարայ Գօշի Գիրք դատաստանի]

Տէ՛ս ձեռն. 485, 1ա-183բ: Նխդր./1ա-24ա: Յանկ/24բ-30բ: ա/31ա-3բ: բ/33բ-40բ: գ/40բ-2ա: դ/42ա-5ա: է/45ա-6ա: զ/46ա-7ա: յ/47ա-8ա: լ/48աբ: խ/48բ-9ա: ժ/49ա: ժա/49աբ: ժբ/49բ-50ա: ժգ/50ա: ժդ/50ա-1ա: ժե/51ա-2ա: ժզ/52աբ: ժկ/52բ: ժլ/52բ-3ա: ժր/53ա: ի/53աբ: իա/53բ: իբ/53բ-4ա: իգ/54ա: իդ/54ա: իե/54աբ: իզ/54բ-5ա: իլ/55ա: իը/55աբ: իթ/55բ-6ա: իվ/56աբ: լա/56բ-7ա: լբ/57աբ: լգ/57բ: լդ/57բ-8ա: լե/58ա: լզ/58աբ: լէ/58բ-9ա: լը/59աբ: լր/59բ-60բ: լա/60բ-1ա: լալ/61ա: լաբ/61բ: լագ/61բ-2ա: լադ/62ա: լաե/62աբ: լազ/62բ-3ա: լալ/63ա: լաը/63բ: լաթ/63բ-4ա: ձ/64ա: ձա/64աբ: ձբ/64բ-5ա: ձգ/65ա: ձդ/65աբ: ձե/65բ-6ա: ձզ/66ա: ձէ/66աբ: ձը/66բ-7ա: ձթ/67ա: կ/67ա: կա/67աբ: կբ/67բ-8ա: կգ/68ա: կդ/68աբ: կե/68բ-9բ: կզ/69բ: կէ/69բ-70ա: կը/70ա: կթ/70աբ: կ/70բ: հա/70բ-1ա: հբ/71աբ: հգ/71բ: հդ/71բ-2ա: հե/72ա: հզ/72աբ: հե/72բ-3ա: հը/73աբ: հթ/73բ-4ա: ճ/74ա: ճա/74աբ: ճբ/74բ-5բ: ճգ/75բ-6ա: ճդ/76աբ: ճե/76բ: ճզ/76բ-7բ: ճէ/77բ: ճը/77բ-8բ: ճթ/78բ: դ/78բ-9բ: դա/79բ-80ա: դբ/80աբ: դգ/80բ: դդ/80բ-1ա: դե/81աբ: դզ/81բ: դէ/81բ-2ա: դը/82աբ: դր/82բ: ճ/82բ-3ա: հա/83ա-5ա: հբ/85ա-7բ: հգ/87բ-8բ: հդ/88բ-90ա: հե/90աբ: հզ/90բ-1ա: հէ/91աբ: հը/91բ-2ա: հթ/92աբ: հժ/92բ-3ա: հժա/93աբ: հժբ/93բ-4բ: հժգ/94բ-5ա: հժդ/95ա: հժե/95բ: հժզ/95բ: հժէ/95բ-6բ: հժը/96բ-7ա: հժթ/97ա: հը/97աբ: հիա/97բ: հիբ/97բ-8բ: հիգ/98բ: հիդ/98բ-9ա: հիե/99աբ:

ՉԾԹ. – 1303

հիզ/99բ: հիէ/99բ-100ա: հիը/100ա: հիթ/100աբ: հլ/100բ: հլա/100բ: հլբ/100բ-1ա: հլգ/101աբ: հլդ/101բ-2ա: հլէ/102ա: հլզ/102աբ: հլէ/102բ-3բ: հլը/103բ-4ա: հլթ/104աբ: հլա/104բ: հլաա/104բ-5ա: հլաբ/105աբ: հլազ/105բ-6ա: հլալ/106աբ: հլաե/106բ-7ա: հլազ/107ա-8ա: հլալ/108ա: հլաը/108աբ: հլաթ/108բ: հժ/108բ-9ա: հժա/109աբ: հժբ/109բ: հժգ/109բ-10ա: հժդ/110աբ: հժե/110բ: հժզ/110բ-1ա: հժէ/111ա-2ա: հժը/112աբ: հժթ/112բ-3ա: հլ/113աբ: հլա/113բ: հլբ/113բ: հլգ/113բ-4ա: հլդ/114ա: հլէ/114աբ: հլզ/114բ-5ա: հլլ/115աբ: հլը/115բ: հլթ/115բ-6ա: հլե/116աբ: հլա/116բ: հլբ/116բ-7ա: հլզ/117ա-8ա: հլդ/118ա: հլե/118ա: հլզ/118բ: հլլ/118բ: հլթ/118բ-9ա: հժ/119ա-20ա: հժա/120աբ: հժբ/120բ-1բ: հժգ/121բ-2ա: հժդ/122ա-3ա: հժէ/123ա-4ա: հժզ/124ա: հժլ/124աբ: հժը/124բ-5ա: հժթ/125ա: հլ/125ա-6բ: հլա/126բ: հլբ/126բ-7ա: հլզ/127ա: հլդ/127աբ: հլէ/127բ-8բ: հլզ/128բ-9բ: հլլ/129բ-30ա: հլը/130ա-1ա: հլթ/131ա: մ/131աբ: մա/131բ-2բ: մբ/132բ: մգ/132բ-3բ: մդ/133բ-4ա: մե/134աբ: մզ/134բ-5ա: մլ/135ա-6բ: մը/136բ-7ա: մթ/137ա-8ա: մժ/138ա: մժա/138աբ: մժբ/138բ-41բ: մժգ/141բ-5ա: մժդ/145ա: մժէ/145աբ: մժզ/145բ-6ա: մժլ/146աբ: մժը/146բ-7ա: մժթ/147ա-8ա: մի/148ա: միա/148աբ: միբ/148բ-9ա: միգ/149աբ: միդ/149բ-50ա: միե/150ա-62բ: միզ/162բ-3ա: միլ/163աբ: միը/163բ-4բ: միթ/164բ-5ա: մլ/165աբ: մլա/165բ-6բ: մլբ/166բ-7բ: մլզ/167բ-9ա: մլդ/169աբ: մլէ/169բ-70ա: մլզ/170աբ: մլլ/170բ-1ա: մլը/171աբ: մլթ/171բ-2ա: մլա/172աբ: մլաա/172բ-3բ: մլաբ/173բ: մլազ/173բ-4բ: մլալ/174բ-5ա: մլաե/175աբ: մլազ/175բ-6բ: մլալ/176բ-7ա: մլաը/177աբ: մլաթ/178ա: մժ/178ա-9բ: մժա/179բ:

Լուսանցներում կան նոյնաբնույթի այլ կանոնների համարների լղումներ: Տէ՛ս Մխիթար Գօշ, Գիրք դատաստանի, Երեւան, 1975, էջ 281-416 (Գ խմբագրութիւն). ձեռն. ն, նկարագրութիւնը էջ ձժ:

Բ. 180ա-230բ [Քաղաքական արհմատչութիւն]

1. 180ա-219բ Գիր նոմոսի եւ դատաստանաց, գոր սահմանեայ են աստուածային առաքեալին եւ հայրապետին [=Աւրէլի յաղթող թագաւորաց]

Տէ՛ս ձեռն. 488, 87ա-103ա: Յանկ/180ա-4բ: Նխդր./185ա-6բ: ա/186բ-7ա: բ/187աբ: գ/187բ-8ա: դ/188աբ: է/188բ-9ա: զ/189աբ: յ/189բ: լ/189բ-90ա: խ/190ա: ժ/190ա: ժա/190ա: ժբ/190աբ: ժգ/190բ-1ա: ժդ/191ա: ժե/191ա-2ա: ժզ/192ա: ժկ/192ա: ժլ/192աբ: ժր/192բ: ի/192բ: իա/192բ-3ա: իբ/193ա: իգ/193ա: իդ/193բ: իե/193բ: իզ/193բ: իլ/193բ-4ա: իթ/194ա (համարակալուած է. որի հետեւանքով համարակալումը տարբեր): յ/194ա: յա/194բ: յբ/194բ: յգ/194բ-5ա: յդ/195ա: յե/195աբ: յզ/195բ: յէ/195բ-6ա: յը/196աբ: յթ/196բ: յա/196բ-7ա: յաա/197աբ: յաբ/197բ: յազ/197բ-8ա: յալ/198աբ: յաե/198բ: յազ/198բ: յալ/199ա: յաը/199ա: յաթ/199ա: ժ/199աբ: ժա/199բ-200ա: ժբ/200աբ: ժգ/200բ-1ա: ժդ/201աբ: ժե/201բ: ժզ/201բ-2ա: ժէ/202ա: ժը/202բ: ժթ/202բ: կ/202բ: կա/202բ-3ա: կբ/203ա: կգ/203ա: կդ/203աբ: կէ/203բ: կզ/203բ:

խ. 228բ Զանդրանիկս որդոց քոց ինձ տայցես...

խա. 228բ եւ զմիս գազանաբեկին...

խբ. 228բ եւ համբաւ սուտ մի՛ ընդունիցիս...

Տէ՛ս ձեռ. 488, 78ա:

խգ. 228բ-9ա Մի՛ յաւժարեսցի ընդ բազումս ի շարիս...

խդ. 229ա եւ մի՛ ողորմեսցիս տնանկին...

խե. 229ա եւ եթէ պատահեսցես եզին թշնամոյ քո...

խզ. 229ա եւ եթէ տեսանիցես զգրաստ ընկերի քո...

խէ. 229ա Մի՛ խոտորեցուցես զիրաւունս տնանկի...

խը. 229ա Յամենայն ի զուր բանէ...

խթ. 229ա եւ կաշառ մի՛ առնուցու...

ծ. 229ա եւ զպանդուխտն մի՛ նեղիցես...

2. 229ա-30բ Աւրէնք Ղեւտական գրոց

ա. 229աբ Մարդ ոք մարդ ամենայն...

Տէ՛ս ձեռ. 488, 82ա:

բ. 229բ Զառականս հարս քո եւ զառականս մարս քո...

գ. 229բ Զառականս կնոջ հարս քո...

դ. 229բ Զառականս քեռ քո թէ առ ի հարէ...

ե. 229բ Զառականս դստեր, դստեր քո...

Տէ՛ս ձեռ. 488, 82ա:

զ. 229բ Զառականս զդստեր կնոջ հարս քո...

Տէ՛ս ձեռ. 488, 82բ:

է. 229բ Զառականս հարսաքեռ քո մի՛ յայտնեսցես...

Տէ՛ս ձեռ. 488, 82ա:

ը. 229բ Զառականս մայրաքեռ քո մի՛ յայտնեսցես...

թ. 229բ Զառականս հարեղբար քո մի՛ յայտնեսցես...

ժ. 229բ Զառականս նոյ քո մի՛ յայտնեսցես...

ժա. 230ա Զառականս կնոջ եղբար քո մի՛ յայտնեսցես...

ժբ. 230ա Զառականս կնոջ եւ դստեր նորա մի՛ յայտնեսցես...

ժգ. 230ա Կին առ քերբ իւրով մի՛ առնուցու նախանձ...

Տէ՛ս ձեռ. 488, 82բ:

ժդ. 230ա եւ առ կին դաշտանի պղծութեան իւրոյ...

ժե. 230ա եւ ի կին ընկերի քո մի՛ տայցես զարուսթիւն...

ժզ. 230ա եւ ի սերմանէ քումմէ մի՛ տացես ծառայել իշխանի...

ժէ. 230ա եւ ընդ արուի մի՛ մտանիցես զմուտ կանացի...

ժը. 230ա եւ յամենայն անասուն ո՛չ տացես զարուսթիւն սերման քո...

ժր. 230աբ եւ կին մի՛ կայցէ առաջի ամենայն անասնոյ...

ի. 230բ եւ ի հնձել հնձաւոյց ձերոց զհունձս երկրին ձերո մի՛ սպառիցէք...

իա. 230բ Մի՛ գողանայցէք եւ մի՛ ստիցէք եւ զրպարտիցէք...

Տէ՛ս ձեռ. 488, 83բ-4ա:

իբ. 230բ Մի՛ զրկիցես զընկեր քո եւ մի՛ յափշտակեսցես...

իգ. 230բ Զհամրն մի՛ զգուցիցես եւ առաջի կուրին...

իդ. 230բ եւ անիրաւութիւն ի դատաստանի մի՛ առնիցէք...

Տէ՛ս ձեռ. 488, 80ա:

Գ. 233ա-6բ Խրատ հոգեւոր՝ ի նուաստ Յոհաննիս-սէ Եզնկեցտ – Արար Աստուած զմարդն հոգի եւ մարմին... Թէպէտ այլ ամէն տեղ լաւ լինի, նոյն// (վերջը թերի՛ թերթեր թափուած):

ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

30բ Զմեղուցեալ գծողս աղաչեմ՝ զԿարապետ երէցս յիշել ի Տէր:

179բ Զմեղապարտ գծողս՝ զԿարապետ երէցս աղաչեմ յիշել ի Տէր:

184բ Փ՛ ոք մարդասիրութեանն Աստուծոյ. ամէն: եւ յամենայն արարածոց. ամէն:

231ա [3]անուն Հաւրն էականի, Որդոյն միածնի եւ ամենասուրբ Հոգւոյն [ձեռ]ն արարի գրել եւ ողորմութեամբ ամենախնամ մարդ[եղութեան] կատարեցի զգիրքս իրաւանց եւ դատաստանի, որ// մաւս գիր գեղեցկայարմար, քնար քաղցրախաւս, բուրաս]տանք բազմերանկ ծաղկաք, ազգի ազգի վկա[յութեամբք ի Հնիցն առեալ եւ Նոր կտակարանաւ շար[ագրեալ] եւ իբրեւ զոսկի մարգարտի հիւսեալ աւետարանական] զարուսթեամբ եւ մարգարէական վկայիք եւ առ[աքելա]կան կանոնաւ զբանս Աստուածաշունչ գրոց յիմաստից եւ ի խրատ հոգոյ եւ մարմնոյ, եւ որպէս բայցայտ եւ պ[արզա]բար երեւին տեսակք ընթացից սորա մարմնապէս ա// նաբար ծածկեալ ունի զյարմարումն ի հոգէկան// որպէս կաթն ծնաւոյցն ծնիցեալոցն, նոյնպէս եւ բանք [իմաս]տնոց պարզամիտ արանց, իբրեւ ատամամք կակղե[լով] փափկացուցանեն զզրժուարիմաց խորախորհուրդ պատգամն շ// [նոր]ոգեն զանձանաւթն եւ ընդանի բնութեան փո[խեն] եւ մատուցանեն հասարակաց մարդկան ի պէտս լսողութեան, եւ որպէս իմաստուն ճարտարապետ հիմն արկեալ եւ կշեռս եղեալ եւ ուղիղ լարիք շինեալ հիմն հաստատուն եւ ցանկ շուրջանակի փակեալ, զի մի՛ ոք յանրազամաց խորխտալով ի դուռն անմտութեան վազս |231բ| առնելով յար[ձա]կեսցի ի վերա ոմանց յանիրաւութիւնս ի շարախաւսութիւն, ի զրկումն եւ ի շարայբանութիւն// ոսա ի յուղեղ ճանապարհաց եւ լինել արինակ գայ// զբազումս, այլ իբրեւ սանձս երկաթի եղեալ, ի բերա[ն]ի արանց: Գրեցաւ գիրքս այս

խրատ անր// ոմանց չիրաւունս եւ ոմանց ի սաստ եւ ի յանդի[մանութիւն], եւ մեր հայեցեալ ի բանս աւգտութեան սորա չ// է ես նուաստք Ֆռանկ եւ ետու զսա գրել// եւ ի կրթութիւն ուման տկար անձին իմոյ եւ ի սբաղ[ան]աց իմոց եւ ի պատճառ սգաստութեան ճանաչել եւ// անթիւ համարս երախտեաց իմոյ արարչին եւ կար// [յա]րաժամ մատուցանել զգոհաբանութիւն գերագ// եաց, այլ եւ ի յիշատակ ինձ եւ զաւակաց իմոց եւ յա// իմ յաշխարհէ եւ ծնողացն իմոց՝ պարոն Կարա[պետ]իւն եւ պարոն Բնձկուն եւ նախնե[աց իմոց հ]անգուցելոց ի Քրիստոս: Արդ, գրեցաւ սայ ի մայրաքաղա[քս Եզնկա՞յ], ընդ հովանեաւ կաթողիկէ եկեղեցոյ, ձեռամբ [Կարապետ ք]ահանայի, ի թվիս հայոց 20Թ. (1303), ի հայրապետութեան [տէր] Գրիգորիոսի եւ յառաջնորդութեան Եզնկայիս տէր Ներսիսի [եւ ի թ]ագաւորութեան Հեթմոյ աստուածասիրի եւ բարեպաշտի եւ ի ժամանակս աշխարհակալ եւ մեծ դանին Ղազանին: Արդ, աղաչեմք զամենեսեան |232ա| որ ոք հանդիպեսցի սմա ընթերցման կամ արինակով, [յիշ]ել [աղա]թիւք զստացող սորա զպարոն Ֆռանկ եւ խնդ[րել] յերկարամեա կեանք ի Քրիստոսէ՛ իւր եւ ծընընդոց իւրոց սրբասնունդ զաւակաց եւ ազանց, եւ ծնողացն իւրոց՝ հանգուցելոցն [ի Քրիստոս] խնդրել քաւութիւն եւ թողութիւն յանցանաց. եւ յիշողք[դ յիշեալ] լիջիք յողորմութիւնն Աստուծոյ, որ է արհնեալ յաւիտեանս. ամէն:

Տէս ԺԿ. դ. յիշ-ք, էջ 18-9, 2^ր 20:

230-1, 231-2ի թերթերի միջեւ մուծուած է քառակուսի ստուերագծումներով մէկական թերթ-ներդիր, վրաներն ընդօրինակուած են յիշատակարանների վնասուած տողերը, իսկ սկզբում կայ այս. «Սիրելի՛ ընթերցող, միւս թերթի վերայ գրուած թանկագին մատենիս հնամաշ յիշատակարանը իսպառ չեղծուելու համար, նրա կազմի մօտից պատահողութեամբ տեղերը, այսպէս եւ շատ հնամաշ տեղեր ամենայն զգուշութեամբ կարկատելէն յետոյ ի պաշտպանութիւն 20Թ. (1303) թուին գրուած խղճալի յիշատակարանին, մածուցի որպէս այս թուղթը, այսպէս եւ յիշատակարանին յաշորող թուղթը, գրելով նրա վերայ դէմ առ դէմ յիշատակարանից նրա ամենակարեւոր մասերը, որոնք նոյնպէս հազուագիտ մատենիս տարաբաղտ գրչի անուան պէս եղծուելու մօտ են: Այսպէս էլ նշանակեցի եւ եղծած ընթերձուածները, որչափ կարողացայ որոշել եւ կարդալ: 20 փետ. 1896, մատենադարանապետ Սահակ վարդապետ Ամատունի Օշականցի»:


ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1բ (ԺԼ. դ., նոտրգիր) Յայս գիրքըս Բ. օսկի է գինը: ԳՐԶԱՓՈՐԶ՝ 1ա՝ «Նախադրութիւն դատասառ»:
 ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա բոլորակ՝ մէջտեղում թագապսակ գինանշան՝ «Πεχ. Αχαυεихскоу градскоу полаяуи», 1դ ութանկիւն. «ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ / ՌՅ. (1851)»:
 ՆՇՈՒՄ՝ պհպ. Աա՝ «2593», 1ա՝ «Հ՞ 164/80, Հ՞ 50/2593, 20Թ. – 1303, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս», պհպ. Դա՝ «Վերակազմուած է հին եւ նոր կաշիների միացումով, հին կազմաստառով: Գլխաւոր վերականգնիչ՝ Ա. Խաչատրեան, Երեւան, 1964 թ.»:


2594

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Յ

ԳՐԻԶ՝ Յարութիւն, Անանուն (124բ-8բ):
 ԹԵՐԹ՝ 205. չգրուած՝ 69բ, 129աբ: ՊՐԱԿ՝ 1-11x12 (1՝ 11, 6՝ 10)+Ա-էx12 (Ա 10, է 6): ՆԻԻԹ՝ թուրք: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 26x20 (թ. 1-128), 26x19,5 (թ. 129-205): ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն (19x14): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 30ա), 124բ-8բ (նմուշ՝ 128ա): ՏՈՎ՝ 50, 49-50 (124բ-8բ): ԿԱԶՄ՝ ծաղկաթուղթ, մէջի՛ր՝ կարմիր կաշի, միջուկը ստուարաթուղթ, աստառը թուրք. լուսանցակողեր՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ, սպիտակ չգրուած թուրք, մասն կազմաստառի:



նմուշ 30ա



նմուշ 128ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ – Կ ի ս ա ի ո Ր ա ն՝ 1ա, 130ա: Ճ ա լ ա տ ա զ ա Ր դ՝ 1բ, 15ա, 31բ, 60ա, 70ա, 70բ: Լ ու ս ա ն ՝ ց ա զ ա Ր դ՝ բոսական, թռչուն: Զ ա Ր դ ա գ ի Ր՝ հանգուցագիր,

ԺԶ. դար
 թռչնագիր, մաղաղիմ, կենդանագիր: Գոյներ՝ կարմիր, կապույտ, վաղազոյն, նարնջի:
 ՎիճԱԿ՝ բաւարար. լուսանցակողեր գունաթափուած, կեղտոտուած, գրեթէ բոլոր թերթերին խոնամութեան հետեւ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. 1ա-15ա Դիոննեսայ եպիսկոպոսի Աթենացոյ Յաղագս երկնային Բահանայապետութեանցն [թրգմ. Ստ. Սիւնեցի եւ Դավիթ]

Տէ՛ս ձեռ. 49, 2ա-74բ: [Յանկ]/1աբ (ա. միւտորը՝ չիք):
 ա/1բ-2բ: բ/2բ-4բ: գ/4բ-5ա: դ/5ա-6ա: ե/6աբ: զ/6բ: յ/6բ-8բ:
 ը/8բ-9բ: թ/9բ-10բ: ժ/10բ: ժա/10բ-1ա: ժբ/11ա: ժգ/11ա-2բ:
 ժդ/12բ-3ա: ժե/13ա-5ա:

Բ. 15ա-31բ [Դիոննիսայ Արիսպագացոյ] Այս ինչ է Յաղագս եկեղեցականին Բահանայապետութեան [թրգմ. Ստ. Սիւնեցի եւ Դավիթ]

Տէ՛ս ձեռ. 49, 74բ-158ա: [Յանկ]/15ա: ա/15ա-6բ: բ/16բ-9ա (խորագիրը տարբեր՝ Յաղագս իմաստութիւնն կատարմանց): գ/16ա-22բ: դ/22բ-5բ: ե/25բ-6բ: զ/26բ-7բ: յ/27բ-8բ: ը/28բ-31բ:

Գ. 31բ-60ա Քահանայակցի Տիմոթիայ ի Դիոննիսայ Բահանայէ Յաղագս աստուածայնոյն անուանց

Տե՛ս ձեռ. 49, 159ա-296ա: [3անկ]/31բ: ա/31բ-5բ: ք/35բ-8բ: զ/38բ-9բ: ղ/39բ-49բ: և/49բ-52ա: զ/52աբ: և/52բ-4ա: ը/54ա-5բ: ք/55բ-7ա: ժ/57աբ: ժա/57բ-9ա: ժբ/59աբ: ժգ/59բ-60ա:

Դ. 60ա-2ա Սրբոյն Դիոնէսիոսի Արիսպագացո եպիսկոպոսի Աթենացոց առ սուրբն Տիմոթէոս եպիսկոպոս Եփեսացոց՝ Յաղագս խորհրդականի աստուածաբանութեանն

Տե՛ս ձեռ. 49, 296ա-303բ: [3անկ]/60աբ: ա/60բ-1ա: ք/61ա: զ/61աբ: ղ/61բ: և/61բ-2ա:

Ե. 62ա-9ա Կատարեցան թուղթ առ Տիմոթէոս սրբոյն Դիոնէսիոսի Արիսպագացոյ եպիսկոպոսի Աթենացոյ Թուղթ զանազանն

Տե՛ս ձեռ. 49, 303բ-37ա: [3անկ]/62ա: ա/62ա: ք/62ա: զ/62աբ: ղ/62բ: և/62բ: զ/62բ-3ա: և/63աբ: ը/63բ-6ա: ք/66ա-7բ: ժ/67բ-8ա: ժա/68աբ: ժբ/68բ-9ա: Յշտկրն թրգմ./69ա:

Զ. 70ա-128բ [Բարթողիմէոսի Մարաղացոյ] Գիրք յաղագս վեցօրեայ գործոց արարչութեան առաջին առտ

Տե՛ս ձեռ. 1659, 1ա-350ա: Յանկ/չիբ: [Երեմիք]/70աբ: 1. ա/70բ-8բ: ք/78բ-84ա (իբրեւ առանձին գլուխ նախորդից գատուած չէ): 2/84ա-91ա: 3/91ա-4ա: 4/94ա-101ա: 5/101ա-2բ: 6/102բ-12ա: 7/112ա-3բ: 8/113բ-28բ (իբրեւ առանձին գլուխ նախորդից գատուած չէ, վերջը չգրուած զի որք երբեմն էին գռեհիկք եւ տգէտք//): Յշտկ. թրգմ./չիբ:

Լս. ներում գլխահամարներ, ստորաբաժանման թուեր, յետագայ գրչութեամբ՝ յանկում-սրբագրումներ:

Է. 130ա-40բ [Կիրոյի Աղէֆսանդրացոյ Գիրք պարայմանց]

Տե՛ս ձեռ. 115, 175ա-206բ: Յանկ/չիբ: ա/130աբ (սկ. չիբ՝ //ալլ յաւէտ զիրէ ի մեքէ...): ք/130բ: զ/130բ-1ա: ղ/131ա: և/131ա: զ/131աբ: և/131բ: ը/131բ-2ա: ք/132ա: ժ/132ա: ժա/132աբ: ժբ/132բ-3բ: ժգ/133բ-4ա: ժդ/134ա: ժե/134աբ (իբրեւ առանձին գլուխ նախորդից գատուած չէ): ժզ/134բ: ժկ/134բ-5ա: ժլ/135ա: ժմ/135աբ: ի/135բ-6ա: իա/136աբ: իբ/136բ-7ա: իգ/137աբ: իդ/137բ-8ա: իե/138ա-9ա: իզ/139ա-40բ:

Ը. 140բ-98ա [Թուղթ եւ ճառք Կիրոյի Աղէֆսանդրացոյ]

Տե՛ս ձեռ. 115, 206բ-400բ: ա/140բ-1բ: ք/141բ-4ա: զ/144ա-5ա: ղ/145ա-9ա: և/149ա-50ա: զ/150ա-4ա: և/154աբ: ը/154բ-5բ: ք/155բ-6բ: ժ/156բ-9բ: ժա/159բ-69ա: ժբ/169ա-71բ: ժգ/171բ-87բ: ժդ/187բ-9ա: ժե/189ա-90բ: ժզ/190բ-3ա: ժկ/193ա-4ա: ժլ/194ա-5ա: ժմ/195ա-8ա: ի/204ա-5բ: իա-իբ/չիբ: Յշտկ. թրգմ./չիբ:

Թ. 198ա-203ա Սրբոյն Թէոդոսի եպիսկոպոսի Անկիրեա Խօսք յառտ ծնընդեան փրկչին մերոյ եւ Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, յոր ի կուսէն ծնաւ, եւ եթէ Աստուած է ծնեալն՝ մարդ եղեալ ահանչելեօք եւ ոչ փոխադրութեամբ եւ եթէ միեւնոյն է, եւ այն եւ զայս ասացեալ եւ ոչ խորհրդով անջատեալ

Տե՛ս ձեռ. 115, 383բ-98բ: ա/198ա-201ա: ք/201ա-3ա:

Ժ. 203բ-4ա Սրբոյն Կիպրիանոսի եպիսկոպոսի Ափրիկեցոյ Քարաագին Բաղաբի դիտողի եւ վկայի, յորմէ եւ յաղագս Ողորմածութեան ճառէն – Բագուծք եւ մեծամեծք են, եղբարք սիրելիք, աստուածային բարեգործութիւնքն... գրեցչիք եւ զբանս զայսոսիկ առ յիշատակ բարեխօսութեան առ Քրիստոս, զի գրեալ եղիչիք եւ դուք ի դպրութեան կենաց:

ՅԵՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

69ա Փրկչին փա՛ռք եւ մեղօք լի Յարութեան գրչի յիշատակ:

70բ Աստուա՛ծ, քո սուրբ ծնօղի բարեխօսութեամբդ հասո՛յ ի յաւարտ գրիս անձանձիր եւ անվրդով, եւ քեզ փառս վերառաքեմք այժմ եւ անգրաւ յաւիտեանս. ամէն:

ՅԵՇԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 12բ (ԺԸ. դ., նոտրգիր, ստ. լս.) Ես՝ տէր Մինասի որդի տիրացու ըՍտեփանս գրեցի. ամէն:

2. 205բ (ԺԹ. դ., շղագիր) Մեզ, որք արդեօք կամք ի հաւատս եւ այսպիսի սպասեմք անսուտ խօստօղին օրհնեալ Աս[տ]ված յաւիտեանս. ամէն:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 2ա, 5ա, 19ա, 21ա, 23ա, 32ա, 34ա, 38ա, 40ա, 47ա, 48ա, 55ա, 57ա, 65ա, 68ա, 70ա, 72ա, 74ա, 84ա, 87ա, 95ա, 97ա, 98ա, 103ա, 106ա, 107ա, 104ա, 113ա, 118ա, 125ա, 127ա՝ ստ. աջ անկիւնում, սեւ թանաքով ոճաւորուած բոլորակ՝ «ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՕՆ/ՕՓՐԻՍՍ ԹՎ. Ո՛ՂԵ. (1646): 69ա, 130ա՝ սեւ թանաքով քառանկիւն՝ «ԹԱԹԻՈՍ / ԱՌԱՔՅԱԼ ԹՎ. ՌՃՁ. (1731)»:

ՆԿԱՐՉԱՓՈՐՉ՝ 12բ լուսանցազարդ՝ թշուրն:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին՝ «Լուծմունք»// ի քահանայապետութեանց Դիոնէսիոսեայ, (4)», պհպ. Աս՝ «Հ՛մբ 73/2594, Ժէ., Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2595

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Յ


ԿՈՍՏԱՆԳՆՈՒԳՈՒԼԻՍ

ԳՐԻՉ՝ Բարբիոն: ԱՍՏՅՈՂ՝ Իսահակ վրդ. Գեղամացի: ԹԵՐԹ՝ 284-2 (տե՛ս Պանկայանակ. Գրչի էջակալում 2-477, որ է՝ 3բ-241ա, 1-79, որ է՝ 242ա-281ա). չգրուած՝ 1աբ, 2բ, 281բ-4բ: ՊՐԱԿ՝ Ա-Իx12+Ա-Գx12 (Գ 6): ՆԻԻԹ՝ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոյնով՝ եռամակիկ, բուսական, եռաչափական պատկերներ եւ «CEV»: ՄԵՏՈՒԹԻԻՆ՝ 26x19: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն (18x12,5), միասիւն՝ 2ա, 3ա, 237ա-8բ, 240ա, 241բ, 280բ-1ա (20x13): ԳԻՐ՝

ՌՄԼԵ.-ՌՄԼՁ. – 1786-1787

նոտրգիր (նմուշ՝ 183ա): ՏՈՂ՝ 39-41: ԿԱԶՄ՝ շագանակագոյն դրոշմագարդ կաշի, միջուկը տախտակ, աստառը թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1 (թ. 1) + 1 (թ. 284), սպիտակ չգրուած թուղթ, մասն կազմաստառի:

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՆ – Կ ի ս ա ի ս ռ ա ն ճ՝ Յա: Լ ու ս ա ն - գ ա զ ա ռ դ՝ բուսական (Յա): Գ ո յ ն ե ռ՝ կարմիր, կանաչ, կապոյտ, դեղին, նարնջի, մանուշակագոյն, սեւ սպիտակ:



Նմուշ 183ա

ՎիճԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

2ա-280ա (Տիտղ.) Գիրք Փիլոնի Իմաստասիրի Երայեցոյ, որ ունի յինքեան լրապէս գեօթնեսին գիրս նորին, այսինքն՝ Ա. զԼինելութեանն, Բ. գոր Երեւեցան, Գ. գոր յԵլսն, Դ. գնախախնամութեանն, Ե. զԿեանք իմաստնոցն, այսինքն՝ Նահապետացն, Զ. զԱյլաբանութիւնն, Է. զՀեստայցն, զկնի որոց գոյ եւ Լուծումն գեղեցիկ ի յեօթնեսին գիրս սորին ի դժուարիմաց բանսն, յումնէ գոյն անյայտ, զի ոչ գոյր ի խորագիրս օրինակին անուն լուծողին, այլ լուծողն ո եւ իցէ ոչ ըստ դոյն վերոյգրեցեալ կարգիդ դասէ գեօթնեսին գիրսն, այլ յառաջ Նախախնամութեան գրոցն զնէ զլուծումնս, ապա Լինելութեանն, ապա Ելիցն, ապա այնմ թէ, որ Երեւեցաւ (որ է բան չորրորդ ի վերայ երից բանից Լինելութեան գրոցն), ապա Այլաբանութեանն, ապա Նահապետացն եւ ապա Հեստայցն եւ ի վերջն բնաբանին, նախ քան զԼուծումնսն գոյ եւ ի Յովհաննիսէ սարկաւազ վարդապետէ բան վասն Անկիւնատր թոսց՝ գեղեցիկ իմն իւրատիւք եւ աղիասկօք:

Ա. 3ա-92ա Փիլովնի [Երայեցոյ] Այնոցիկ, որ ի Լինելութեանն խնդրոց եւ լուծմանց

ա. 3ա-17բ Բան առաջին. Ընդէ՛ր գաշաւահարարութիւն ընդ միտ ածելով եւ հաշուելով ասէ. Այս գիր լինելութեան երկնի եւ երկրի, յորժամ եղեւ (Ա-Ճ.) – Զյորժամ եղեն անորոշելի եւ անպարոյր... քանզի Աստուծոյ դատաստանն ընտրութեան հաստատագոյն միայն է:

բ. 17բ-35բ Բան երկրորդ. Զի՞նչ է նոյի կազմածն (Ա-ԶԲ.) – Զտապանակս գայս եթէ կամիցի որք... փափագէ վարս անասնաբար ընդ անուանս հաւասարել ախտիւք շարութեանց:

գ. 35բ-50բ Բան երրորդ. Զի՞նչ է եւ եւ տէր Աստուած քո, որ հանի գեղ յերկրէն Քաղղէացոց, մինչ զի տալ քեզ գերկիրս գայս ժառանգել (Ա-ԿԲ.) – Ճառիդ յայտնոյ, գայն որ ի կարծիս... առ որս դիմեալ հանգչի ամենայն առաքինութիւն:

դ. 50բ-92ա Բան չորրորդ. Ընդէ՛ր ասէ՛ եւ երեւցաւ Տէր Աստուած Աբրահամու ի կաղնուցն Մամբրէի, յորժամ նստէր ի ջերմոջ ատուրն, առ ի դուրս խորանի իւրոյ եւ համբարձ գաչս իւր (Ա-ՄԽԵ.) – Ճառդ յայտնագոյն գոլ թուի ինձ... որոց սքանչելատեսիլ է եւ տեսիլն եւ տեսնալի:

ե. 92բ-116բ Փիլովնի [Երայեցոյ] Այնոցիկ, որ յԵլսն է խնդրոց եւ լուծմանց

ա. 92բ-7բ [Բան առաջին]. Ամիսս այս ձեզ

սկիզբն ամսոց: Առաջին է յամիսս տարւոյ (Ա-ԻԳ.) – Ի գարնանային հասարակօրութենէ... բայց կատարեալ բարի եւ ոչ միոյ ի սոցանէ յետոյ հասանել:

բ. 98ա-116բ Զի՞նչ է, եթէ գձեռին գործին արկեր ի վերա նորա, եւ պղծեալ է. Բան երկրորդ (Ա-ՃԻԳ.) – Որք ի բնութիւնն ձեռնն արկեալ իշխեն... եւ զարտատիպ կնիքն, զտեսակ տեսակացն:

գ. 116բ-22ա [Փիլովնի Երայեցոյ] Յաղագս Բահանայիցն (Ա-ԺԲ.) – Տո՛հմք են ազգին երկոտասան... յաղագս կենդանի անասնոցն, որք ի ճահէն ի պատարագս:

դ. 122ա-6բ Փիլովնի [Երայեցոյ] Յաղագս բազմին իրաց – Վայելչապէս կարծեմ եւ արժանապէս... իսկ այնոցիկ, որք ի կարգ էին Աստուծոյ կարգեցան եւ անմահ կեանս կենաք:

ե. 126բ-38ա Փիլովնի [Երայեցոյ] Յաղագս տասն բանիցն – Էր երբեմն ժամանակ... իսկ որք ընդ նովա սպասաւորքն են պատերազմաց, իշխանք են առաջնորդութեան:

զ. 138ա-42ա [Փիլովնի Երայեցոյ] Յաղագս Ոչ շնայցես – Զի կարծեմ ամենայն ուրեք... եւ կամ հատուցանել պատուհաս, հատցէ ատեանն ի վերայ նորա:

է. 142ա-9ա [Փիլովնի Երայեցոյ] Առանց պատրաստութեան ի Սամիսովն – Արդ, իբրեւ [ի] յորձանաց գիջութեան... այլ ոչ վայելէր այսպիսի անշնորհակալութեան կցորդ երեւել արգարոյն:

ը. 149ա-157ա Փիլովնի [Երայեցոյ] Յաղագս Յովնանու – Այնոցիկ, որք զմարգարէսն ընթեռնուն... զի երբեմն զողնն թօթափեալ զկորիսայինսն կենդանւոյն ծածկեաց:

թ. 157ա-8բ Փիլովնի [Երայեցոյ] Յաղագս զԱստուած ի բարեգործութեան հուր ծախօղ անուանել ի տեսլեան երից մանկանցն, որ առ Աբրահամ, յորժամ նստէր ի մէջօրէին, եւ համբարձեալ գաչս ետես – Քանզի այն, որ համեմատեալ են... զորս ունի ի մահկանացուի բնութենէս եղեալ:

ժ. 158բ Փիլովնի [Երայեցոյ] Յաղագս յառաջախնամութեան առ Աղէֆանդրոս

ա. 158բ-68ա Բան առաջին – Յորժամ զյաղագս նախախնամութեան բանդ կամէի քննութեամբ հարցանել... եւ շարութեանց քակտիչ է առաքինութիւն յանձնիշխանութեան բարուցն զքակտումն առնուլ կարացեալ:

բ. 168ա-83ա Բան երկրորդ – Այգ դեռես խորին է... այլ վաղվաղակի այսրէն գամ:

ժԱ. 183բ-95բ Փիլովնի [Երայեցոյ] Յաղագս բան ունել եւ անասուն կենդանեացոյ – Յիշեա՛ գերիկեան բանսն...

– 195բ [Յիշատակարան թարգմանչի կամ մեկնչի] – Մեծիմաստն Փիլոն իսրայէլացի գորով, այլ ոչ երեւի թէ յորոց ցեղից յԺ.անիցն իցէ, զի ցիր ու ցան եղեն ի գերշաց անտի ընդ ժամանակս ժամանակս,

զի թէպէտ եւ դարձան յաւուրս Կիրոսի եւ Դարեհի եւ Արտաշէսի Զօրաբարելի, եզրասաւ եւ Նէմիւ, սակայն ի թագաւորելն Անաիոբայ, յաւուրս մակաբայեցոցն վերստին ցիր եւ ցան եղեն կէսք ի Լիբաստան եւ յԱղէքսանդր եգիպտոսի եւ այլք յայլ կողմանս ըստ հանդիպման եւ վասն այնորիկ խառնիխուռն շփոթէին կարգք ազգաց նոցա, ուր եւ տունս եւ ժառանգութիւնս ստանային ի գաւառսն, յոր գերեցանն, զորոց եւ պրակացն պատմութիւն ցուցանէ, զի ելանէին յԵրուսաղէմ ի գալ տօնիցն ի Պարթեաց, ի Մարաց եւ յԵփմացոց, ի Միջագետաց, ի Փոխագացոց, ի Պամփիլացոց եւ յայլոց եւս եկելոց անդր, ի մօտաւորաց եւ ի հեռաւորաց, եւ ոչք ընդ Ստեփանոսի յԱղէքսանդրիայ վիճեին, յուրով էին, որք ջատագով զինքեանս յօրինացն կարծեցուցանէին, յայնցանէ իմանի եւ սա, քանզի քաղաքապետ էր զայնու ժամանակաւ յԱղէքսանդրիայ եւ հրեշտակութեամբ շոգաւ սա ի Հոռոմ առ Գայիոս կայսր եւ դարձաւ անդրէն անարգանօք, եւ այս ի ժամանակի քարոզութեանն Պետրոսի ի Հոռոմ, զորմէ պատմէ Եւսեբիոս Պամփիլեայ:

ԺԲ. 195բ-236բ [Մեկնութիւն Փիլոնի գրոցն]

ա. 195բ-96բ Լինելութեան խնդրոց եւ լուծումն – Լինելութիւն, ասէ, զբոլոր գոյիցս եղանութիւն յԱստուծոյ... թէ գոյ նախախնամութիւն յամենայն գոյսս:

բ. 196բ-213ա Փիլոնի Կեանք իմաստնոցն, այսինքն՝ Նահապետացն – Տէրունական օրինացն ի Ե. գիրս... իսկ որպէս առ յինէն բանս եցոյց օրէնք ինքնելով եւ անգիր գիրք:

գ. 213բ-29բ Փիլոնի աստուածային օրինացն Այլարանութեան (Ա-ԻԲ.) – Եւ կատարեցան միանգամայն երկին եւ երկիր... զոր եւ ոչ մի ամենաժողով տօնք մարդկան տանել կարացին:

դ. 229բ-36բ Յաղագս Կենաց վարուց տեսակներն, այսինքն՝ Հիսեայցն – Հեսեայցն սակս խօսեցեալ... եւ զամենայն որպէս վիպասան ճշմարտաբան եւ անպարսաւ պատմաբանիչ որքան է եւս:

ԺԳ. 236բ-240ա Յովհաննու Բանանայի Յաղագս անկիւնատր թոռոց

ա. 236բ [Նախադրութիւն] – Զի ի յուսումնասէր մանկանց... իսկ եթէ ախորժեցէ որ շարժել եւս յառաջ, գիրին է ի տուեցելոցդ, որքան եւ կամեսցի:

բ. 237ա-8բ, 240ա [Թիւք անկիւնատրք] – Եռանկիւնի. Ա. Ա...

գ. 239աբ Խրատ Բուէից – Տէ՛ս, զի ի միակէ... բաւական տուաւ քեզ վասն այսոցիկ:

Ա. Աբրահամեան, Յովհաննէս Իմաստասիրի մատենագրութիւնք, Երեւան, 1956, էջ 148-157:

ԺԴ. 241բ-68ա Լուծումն Եօրնից գրոցն Փիլոնի իմաստասիրի Երբայեցոյ, որ ոչ ունի գնոյն դասն, զոր բնաբանն ունի, այլ յետ եւ յառաջ, որպէս եւ ի սկիզբն գրոցս ցուցաւ

1. 242ա-51ա Յաղագս Նախախնամութեան առ Աղէքսանդրոս: Նախադրութիւն <Բան առաջին> – Անգեղջ ի Աստուած...

ա. 242ա-4ա Լուծումն Փիլոնի գրոց Նախախնամութեան. Բան առաջին – Բան. յորժամ յաղագս... որպէս հրեշտակք եւ ի բաց բարձեալ լինի ընդ աշխարհիս մարդկան:

բ. 244ա-51ա Նախախնամութեան. Բան երկրորդ – Այգ գեռեւս որպէս առաւօտ խորին է... եւ զանասնոցն շէն ի լսելիս միապէս:

2. 251ա-7բ Փիլոնի՝ Այնոցիկ, որ ի Լինելութեան յաղագս խնդրոց եւ լուծմանց: Այս գիր Լինելութեան Յառաջաբանութիւն – Փիլոն իմաստասէր էր ազգաւ Ղեւտացի...

ա. 251բ-3բ Լուծումն Փիլոնի գրոց, որ ի Լինելութեան. Բան առաջին – Զյորժամ եղեն ոչ յայտնեաց... միթէ ամենայն մարդոյ ժամանակ ի մի առող երէկ փակեցաւ:

բ. 253բ-5բ Բան երկրորդ – Փիլոնի՝ Զի՛նչ է կազմուած Նոյի տապանին... եւ ընդ Աստուածսն կռուեցան եւ յաղթեցին:

գ. 255բ-7բ Բան երրորդ – Փիլոնի՝ Զի՛նչ է Ես եմ Տէր Աստուած քո... այլ եւ զերեք ամենի մատուցանէին պատարագ ի սեղանն:

3. 257բ-61ա Փիլոնի Նախադրութիւն Յաղագս Ելից գրոցն – Գիրքս այսքան զամենայն մատեանս...

ա. 258ա-9ա Լուծումն Փիլոնի Յաղագս Ելից գրոցն: [Բան առաջին] – Բան. Իսկ առաջին եւ սկիզբն ըստ բաղանուսութեան է ասացեալ... եւ որ ոչ յետոյ, այլ յառաջ հասանէ ի վերայ:

բ. 259ա-61ա Բան երկրորդ. Փիլոնի Յաղագս խնդրոյ եւ լուծմանց – Բան. Որք ի բնութիւնն ձեռնարկեն: Լուծումն. Զէ պարտ լրբիլ... եւ կամ յուժեքէ տիպ առնու, այլ արտաքոյ ամենեցուն մնայ:

4. 261ա-2ա Յաղագս Բանանայից – Բան. Պատիւ քաջութեանն: Լուծումն. Քաջ եւ արիութեան... որ չպանանէին զնայ վրէժառուքն:

5. 262ա-3ա Յաղագս Բագնին – Բան. Վայելչապէս կարծեմ: Լուծումն. Վայելուչ եւ արժանապէս է այս... որ զմիտս եւ զգայութիւնս աստուածացնեն ինքնասիրութեամբ իւրեանց:

6. 263ա-5ա Յաղագս Ժ. Բանիցն – Այս որիշ գիրք է... որպէս զօրավարք եւ իշխանք ի դասուց, որ զօրէնսն լքանեն:

7. 265աբ Ոչ շնայցես – Բան. Եթէ ոչ ինչ ի հրաժ.: Լուծումն. Միթէ չէ անյագ գիշութիւնն գարշ... խառնակեցաւ ընդ այլու, Գեղելայ որպէս հիւսն է:

8. 265բ-6բ Ի Սամսոն առանց պատրաստութեան – Մին որ անկարգ ի սկսանելի ճառն... էին պատերազմ, որոյ էր յարուցեալ ի վերայ նորա:

9. 266բ-7բ Յաղագս Յունանու – Բան. Այնոցիկ, որք գմարգարէսն ընթեռնուն: Լուծումն. Մարդիկ, որ կարդան գմարգարէսն... որ մատամբք վիճակ արկին:

10. 267բ-8ա Աստուած մեք հուր ծախիչ է: Ի տեսիլ երից մանկանց – Բան. քանզի այն, որ համեմատեալ են... Բան. Աստուծոյ իմանալի զօրութիւնքն... զփառս իւր ոչ կամի այլում, որ տաս եւ զանունն:

ԺԵ. 268ա-80ա [Լուծումն՝ Փիլոնի գրոցն]

1. 268ա-74ա [Լուծումն՝] Փիլոնի Այնոցիկ, որ ի Լինելութեանն խնդրոց եւ լուծմանց – 268ա Նախադրութիւն – Մեկնութիւն է ի վերայ այնոցիկ...

ա. 268ա-74ա Լուծումն՝ Փիլոնի գրոցն Լինելութեան. Բան չորս (Ա-Մեէ.) – [Բ]ան. եւ երեւեցաւ Աստուած Աբրահամու: Լուծումն. Հստ ճառին յայտնի է... զոր անհարկաւոր շար կեանք ստացաւ իւր կամօք, զոր կամի յիշել զկինն:

2. 274ա-6բ Փիլոնի Այլաբանութիւն

– 274ա Նախադրութիւն – Արտաքնոցն վարդապետքն...

ա. 274ա-6բ Լուծումն՝ Փիլոնի Այլաբանութեան – Բան. եւ կատարեցան երկինք եւ երկիր: Լուծումն. Երկինք զմիտքն ասէ... որպէս զփարաւոն մինչեւ ի վերջն զկորուստն նոցա պատմէ:

3. 276բ-8ա [Լուծումն՝ Փիլոնի Նահապետացն]

– 276բ Նախադրութիւն Փիլոնի Նահապետացն – Գովէ զառաջին արդարան...

ա. 276բ-8ա Լուծումն՝ Փիլոնի Նահապետացն – Բան. Այլ վասն զի ի սոցա են ինչ, որ աշխարհիս են մաս: Լուծումն. Սոցայ, որ ասացաք... Լուծումն. անհիւանդանալի:

4. 278բ-80ա Յաղագս Հիւսեացն

– 278բ Նախադրութիւն – Հեսսեայքն թարգմանին հոգեւոր բժիշկք...

ա. 278բ-80ա Լուծումն՝ Փիլոնի Հիւսեայցն – Բան. Զտեսութիւնն խնդութեամբ ընկալան: Լուծումն. Զտեսական առաքինութիւնն... եւ զոր ի Մովսիսի օրինացն ուսան, եւ զոր ի Հոգւոյն ընկալան:

Տէս Փիլոնի երբայցեոց, Մնացորդք ի Հայս, Վենետիկ, 1826, էջ 1-619: Փիլոնի երբայցեոց, Բանք երեք՝ չեւ ի լոյս ընծայեալք, Վենետիկ, 1822, էջ 1-172: Մատենագրութիւնք նախնեաց, Փիլոնի ճառք, Վենետիկ, 1892, էջ 5-284: Հմմտ. Գ. Գրիգորեան, «Փիլոն Ալեքսանդրացու աշխատութիւնների հայ մեկնութիւնները».- Բանբեր Մատենադարանի, հտ. 5, Երեւան, 1960, էջ 95-116:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱՆԱԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ

240բ Փա՛ռք անհասանելի, անիմանալի, անպատմելի, անպարունակելի, անվայրափակ միաբուն զօրութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն: Սկսայ մարդասիրութեամբն Աստուծոյ եւ կատարեցի նորին ողորմութեամբն զաստուա-

ծագարդ եւ զլուսաւոր տառս գերիցս երանեալ աստուածախօս եւ աստուածատես մարգարէին Մովսէսի՝ զգժուարիմաց եւ զթախանձախիտ տեսութիւնսն, զոր ոմանք ի թանձրամտաց թեթեալբար այլ իմն կարծէին եւ բաջաղէին, զոր քաջ հմուտն օրինաց, ճօրն իմաստութեամբ եւ փարթամն գիտութեամբ մեծն եւ երանելին Փիլոն տեսեալ զայս եւ վարդապետօրէն յեղանակաւ մեկնողբար յօրինմամբ պայծառ եւ լուսաւոր բանիւք եւ բայիւք ըստ ճառին եւ ըստ այլաբանութեան աստուածային հոգովն փեռեկեաց եւ ուղղեաց ճանապարհ մեկնողութեան մտից յաստուածային գիրս՝ իբր զկարապետ եւ զնախընթաց ամենեցուն, որք մխեցան ի գործ մեկնութեան, այլ եւ զհնոց կարծեցեալ իմաստասիրաց, որք զանձինս առ իմաստունս ունէին ասել ոչ գոյ նախախնամութիւն, ի դերեւս հանէ զնոցա զանմտութեան կարծիքն, նա եւ զհնոց ոմանց զառաքինութիւնս պատմէ մանրամասնաբար մի ըստ միոջէ, ի նախանձ շարժելով զմեզ եւ յուսումն յանձնառութեան, որում հիւսեայք յորջորջին, միւս եւս այլ գիրս պատմէ, որում Կեանք իմաստնոց ասի, ունակեցեալ դպրութեամբ մանրամատոց մասամբ ջամբեցուցանէ երջանկաշոկ մանկանց, որք բազմախոյզ տենչանօք առատանան լամպարափայլ յարփիազարդ ճեմարանիս, զոր կամեցայ յօրինել ի սպիտակահովիտ հիւթիս սեաւաթիւր թուով, ներարհեստիւ շարամանեալ ի լուսաւորութիւն մտաց եւ ի վարժումն մանկանց առագաստի վերին Երուսաղէմի, ըստ զանազան զարդու զարդարեալ, որ է բուրաստան անմահութեան եւ բուրէ զհոտ կենաց յուսումնասիրաց անձինս, որում խանդակաթ փափագանօք իբրեւ տեսի, անյապաղ փութով շուքափութեամբ խոշոր գրով աւարտեցի զցանկալի տառս ես՝ Վահրամ սուտանուն սարկաւազս՝ ի վայելումն ինձ եւ մխիթարութիւն հոգւոյ եւ մարմնոյ ինքնագիր երկօք ի ծոցն սնուցչի իմոյ աստուածաբնակ տաճարին Աստուածածնի եւ Սուրբ Փրկչի, յանապատիս Արմէնի: Եւ թէպէտ եւ տկար եւս էի ի գլխոյ, մինչ գրէ, թէ յոգիս ապաստան եղեալ եւ յոգնեալ, սակայն ամենակալ ձեռամբն Աստուծոյ օժանդակեալ հազիւ հազ, տագնապաւ իմն հասի յաւարտ ողորմելովն Տեառն, որոյ ի մեղուցեալ անձնէս բերապատիկ գոհութիւն եւ երկրպագութիւն, եւ վասն ժամանակիս անհանդուրժել վրդովմանցս եւ խուճապ տագնապիս, զոր եհաս ի վերայ մեր յազգէն Իսմայելացեոց եւ յափշտակեաց զյռթի եւ զպարարտ մասն երկրիս մերոյ, ի թուականիս հայոց Չեէ. (1298), որում եղեւ զրաւ գրոցս, եւ բազումք անկան ի սուր սուսերի եւ ի գերութիւն վասն խրատելոյ զմեզ Տեառն, եւ մեք ոչ խրատեալք, այլ հաւատք պակասեալք, եւ ամբարշտութիւն զօրացեալ, արդարութիւն հեռացեալ, եւ անօրէնութիւն բազմացեալ, սէր եղծեալ, եւ անգթութիւն ծաղկեալ, բարիք գօսացեալ, եւ շար արմատացեալ, Աստուած վաճառեալ, եւ ազահու-

Թիւն թագաւորեալ, եկեղեցիք քակեալք, եւ քահանայք խողխողեալք, վանուրայք ապականեալք, եւ միանձունք ցրուեալք, մանկունք գերեալք, եւ աղչուունք վաճառեալք ի ձեռաց անօրինաց: Արդ, զորպիսի շարաշշուկ եւ բազմավորով ծանր աղէտի աւուրս ես ունայնացեալ |241ա| եւ յոյժ խաւարածառանգս եւ պարապնդեալս մեղօք Վահրամ սարկաւագս մարթացից ճառել զթշուառութիւնս, զոր տէր Յիսուս ընդարձակուամն արասցէ: Նա եւ առ ապագայսդ հանդիպօղս եւ ընթերցօղս կամ գաղափարօղս մաղթանք բարւոյ յիշման արժանաւորել զհոգեւոր հայրն իմ եւ զուսուցիչ, որ իբրեւ զհուր մաքրէ զիմ զմարմնական ախորժակս՝ յաստուածայինսն յորդորելով հանապազ աննախանձաբար զՍտեփաննոս Գոյնէրիցանց, եւս եւ զծնօղսն իմ աղաչեմ արտասուալից հառաչմամբ յիշել ի մաքրափայլ յաղօթս ձեր, վասն զի սովոր է ամենողորմ Աստուած այլում աղաչանօք այլում ողորմել, զի վասն յիշման աշխատեցայ ի սա: Եւ որ յիշէ ողորմելով, յիշեալ լիցի յաներեկ աւուրն առաջի Քրիստոսի, ուր բանք սպառին, եւ գործք թագաւորին: Եւս եւ զկոկող քարտիսիս զՊետրոս կրօնաւոր եւ զԿոստանդին սարկաւագ աղաչեմ յիշել, որ աշխատեցան ի սա:

Ձեռագրիս եւ այս յիշատակարանի գաղափար օրինակն է երուսաղէմի Ա. Յակոբեանց 2^ր 333 ձեռագիրք, որի նկարագրութիւնն է Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Բ., Կազմեց Նորայր եպս. Պողարեան, երուսաղէմ, 1967, էջ 208-11, որից (էջ 209-10) այս յիշ-նն առել եւ սպել է ԺԳ. դ-ի յիշ-ք, էջ 837-8, 2^ր 674:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. (Գրչի) 241ա Ուրեմն յետին նօտար Բրաբիոն աղախինս եւս աղաչեմ յիշել զիս ի սուրբ յաղօթս ձեր, զի ի ՌՄԼԵ. (1786) թուականիս, նոյեմբերի 21 օրինակեցի ի վերոգրեցելոցս գրեցեալ օրինակէ՝ անջինչ պահելով զյիշատակարանս նախագրեցեալ նօտարաց:

280ա Հեղինակն մատենիս գաղափարեալ էր ի գաղափարէ ի էձնէ. (1298) թուականի գրեցելոյ Արամէնի անապատոջ, բայց թուականն գաղափարեցման եւ անունն գաղափարողին ոչ էր գրեալ: Եւ երեւէին ի տեղիս տեղիս գոլ գրչասխալանք, բայց սակս խրթնութեան բառիցն եւ բանից ոչ համարձակեցայ ուղիղ թուեալն ինձ գրելոյ ձեռնամուխ լինիլ, այլ ըստ օրինակին եւ ըստ գաղափարին գրեցի, որպէս յայտնի է յերեսս 343, 344, 348, 360, 361 եւ այլ բազում տեղիս, եւ յետ գրելոյ իմոյ դէմ առ դէմ ընդ եղբօրն իմոյ եւ վարժչին Մատթէ դպրին ընթերցայ: Եւ արդ, ի հանդիպիլն ձեր սղալանաց գրգոյս անմեղադիր ունիլ զԲրաբիոն գրագրուհիս աղաչեմ, որ ի ՌՄԼԶ. (1787) թուականիս յունվարի 31 գրեցի:

2. 2ա (Ստացողի) Զորս ի միոջէ գեղեցկագիր տփոյ ետու օրինակել վասն իմ ի Կոստանդնուպօլիս, նուաստ Իսահակ ապարդիւն եւ բազմամեղ վարդա-

պետս Գեղամացի, որ եմ միաբան Սրբոյ եւ լուսակերտի աթոռոյս Էջմիածնի, աշակերտ եւ օրհնածին որդի տեառն Սիմէօնի երջանկափայլ գիտնական եւ սրբազան կաթողիկոսին Երեւանեցոյ՝ բազմերախտ ուսուցչի իմոյ եւ հոգեծին ծնողի, որոյ առ իս յոգնաշան երախտեացն զփոխարէնն բազմապատկապէս հատուցէ նմա Քրիստոս ի միւսանգամ գալստեանն իւրում եւ հանգուցէ ի լոյս երեսաց իւրոց ըստ ճշմարիտ եւ սուրբ հայրապետացն:

Ի հայրապետութեան տեառն Ղուկասու հոգեւորտիր եւ սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց, Կարնեցոյ, որում տացէ Տէր գերկար եւ զխաղաղական կեանս, ի պարծանս ազգիս մերոյ տառապելոյ, յորմէ եւ առաքեցեալ իսկ էի ի գործ նուիրակութեան նոյնոյ կայսերական քաղաքին, ի թուոջ փրկչին ՌՁԶէ. (1787) եւ ի մերում թուոջ ՌՄԼԶ. (1787):

241բ Արարեալ ի մերոց վարդապետաց, որպէս ցուցանէ կերպն շարադրութեան, այլ յունմէ գոլն անյայտ, զի չկայր յօրինակին անուն լուծողին, բայց զի Անկիւնաւոր թուոց խրատն, որ ի վերոգ է, Սարկաւագ Յովհաննէս վարդապետն է արարեալ, եւ ես զայն ընդ սոյն գրոցս եւ սոյն դասութեամբ ի միում տփոջ գտի, վասն որոյ թուեցաւ ինձ, թէ եւ զայս լուծմունքս նա իցէ արարեալ, քանզի եւ բանն համանման երեւի նորին շարադրութեանն, այլ թէ ի նմանէ իցէ եւ թէ ոչ, սակայն մերոց վարդապետաց երեւի արարեալ: Զոր ըստ բնաբանքն օրինակել ետու ի Կոստանդնուպօլիս ամենա նուաստ Իսահակ եպիսկոպոսս Գեղամացի, ի թուոջ փրկչին ՌՁԶէ. (1787) եւ մերում թուոջ ՌՄԼԶ. (1787):

280բ Յիշատակարան. Շնորհօք եւ ողորմութեամբ բարերարին Աստուծոյ եղեւ յանգ եւ աւարտ գրութեան գեղեցիկ եւ իմաստալից գրոցս Փիլոնի գերահանձար իմաստասիրի Երալեցոյ ի Կոստանդնուպօլիս կայսերապետն մայրաքաղաքին, ի ՌՄԼԶ. (1787) թուոջ մերում, որպէս եւ գծագրօղն իսկ յիշեալ է ի միւս կողմն թղթոյս, քանզի մինչ դեռ էի անդ ի գործ նուիրակութեան Սրբոյ աթոռոյս Էջմիածնի, բազմափափագ սիրով ետու սկիզբն առնել գրութեան սորին ի ՌՄԼԵ. (1786) թուոջ մերում, ի փետրվար ամսոջն: Եւ մինչ չեւ էր հասեալ ի կատար, եւ զգործս աւարտեցի եւ ելի անտի ի նոյն ՌՄԼԵ. (1786) թուոջն եւ ի սեպտեմբերի ԺԱ. եւ եկի ի սուրբ աթոռս ի դեկտեմբերի ԻԳ., իսկ գիրքս այս յետ ելմանս ի Պօլսոյ աւարտ առեալ գրմանն յառաջիկայ ՌՄԼԶ. (1787) թուոջն եւ ի յունվարին առաքեցեալ եղեւ աստ առ իս, որ էհաս ինձ ապրիլ ամսեանն, իսկ այժմ, որ է թիւս մեր ՌՄԼԹ. (1790), յամսեանն յուլիսի, ետու զսա կազմել ի վայելս անձին իմոյ, եւ ոչք յետ իմ վայելեսցեն: Այլ զայս աղաչեմ եւ խնդրեմ յամենեցունցդ, որք զկնի անցման մերոյ զսա վայելիցէք՝ թէ՛ իմայինք իցէք ընտանիք կամ աշակերտք, եւ թէ՛ այլ ոք,

որպէս զի ի ստանալն ձեր զսա՝ որպիսի կերպիւ եւ իցէ, եւ ի վայելելն, մի՛ օտարացուցանիցէք զսա ի Սրբոյ Աթոռոյս եւ մի՛ վաճառիցէք այլոյ ուրուք, որ շիցէ միաբան Սրբոյ Աթոռոյս, զի մի՛ տարեալ յայլս տեղիս՝ օտարացուցեն զսա ի շնորհատու մօրէս իմմէ հոգեւորէ ի Միաձնաէջ Սրբոյ Աթոռոյս, այլ ով ոք եւ ստացի զսա, աստ վայելեսցէ եւ յետ իւր անցմանն աստ թողցէ, զի մի՛ օտարացի ի սմանէ: Տեսէ՛ք ուրեմն, զի ոչ դնեմ նզովս եւ անէձս, որոց օտարացուցեն զսա աստի, որպէս ունին բազումք զայս սովորութիւն՝ դնել անէձս այնպիսեաց, այլ սիրովն Քրիստոսի աղաչեմ լսել աղերսանացս եւ կատարել, զոր եւ ի խղճմտանն ձեր թողում ահա ապաստան, քանզի հազուագիւտ իմն է գիրքս այս, եւ ես այնու մտօք զսա ստացայ, զի գտցի ի Սուրբ Աթոռոյս, թէ՛ առ կենօք իմովք եւ թէ՛ յետ իմ, ապա դուք մի՛ օտարացուցիք աստի, քանզի եւ դուք էք կաթնասուն որդիք մօրս մերոյ լուսատուի, որպէս եւ ես, ուրեմն որք յօժարակամ սիրով զաղերսանս իմ լսիցէք եւ կատարիցէք, եղիջիք վարձատրեալք յԱստուծոյ յերկակի կեանս ձեր, եւ զձեր եւս զամենայն աղերսանս

լուիցէ բարեգութն Աստուած եւ կատարեսցէ, իսկ ապա եւ զայս խնդրեմ ի սիրեցելոցդ իմոց ի Քրիստոս, զի որք վայելիցէք զանգին գանձս հոգեշահ բանիցն՝ որ |281ա| ի սմա, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զստացօղ սորին զնուաստ եւ զյոգնամեղ Իսահակ եպիսկոպոս Գեղամացի եւ զհայրն իմ տէր Իսահակ քահանայն, եւ զմայրն իմ Մահմազարն, զեղբայրն իմ զՍտեփաննոսն եւ զքորսն իմ զՆիխաբեթն եւ զՀովիւսիմն եւ զայլ եղբարս եւ զքորս իմ եւ զհամայն ազգայինս՝ զհանգուցեալս եւ զկենդանիս: Եւս առաւել յիշեսջիք ի Քրիստոս զհոգեւոր դաստիարակն եւ զուսուցիչն իմ եւ զհոգեծին ծնօղս զտէր Սիմէօն երջանկազարդ կաթողիկոսն՝ հանդերձ կրկնակի ծնողօք իւրովք եւ ամենայն ազգայնովք, եւ զայլ ամենայն երախտաւորս իմ եւ զբարերարս, եւ դուք յիշեալ լիջիք յանճառ ողորմութիւնս եւ ի գթութիւնս տեառն Աստուծոյ աստ եւ յանանց կեանսն. ամէն:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին՝ «Փիլոնի երբայեցուց (/// 30)», 1ա՝ «Հ^մ 299/2595, ՌՄԼԶ. 1787, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2596

Կ Ա Ն Ո Ն Ք


(բաղկացած է 2 տարբեր ձեռագրերից)

ԹԵՐԹ՝ 238: ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշի, միջուկը ստուարաբոլք, աստառը ծաղկաթուղք. լուսագլորեր՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա + Բ, չգրուած թուղք, մասն կազմաստաթի:

ՉԵՌԱԳԻՐ Ա.

ԺԷ. դար

ԹԵՐԹ՝ 160 (թ. 4-163, գրչի էջակալում՝ 1-91, որ է՝ 4ա-49ա): ՊՐԱԿ՝ Խ-ԾԲX12 (ԾԲ 16): ՆԻԻԹ՝ թուղք: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22,5x17,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն (17x11,6): ԳԻՐ՝ բոլորգիր (մմուշ՝ 4ա): ՏՈՂ՝ 36:



Նմուշ 4ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻԻՆ – Լ ու ի ա ն գ ա զ ա ռ ղ՝ բուսական: Զ ա ռ ղ ա զ ի ռ՝ հանգուցագիր: Գ ո յ ն ե ռ՝ կարմիր, կապոյտ, վարդագոյն:

ՎԻՉԱԿ՝ բաւարար. թ. 89-121՝ ստ. լս. խոնաւութեան նետեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

4ա-163բ [Կանոնագիր Հայոց]

ՏԵՍ՝ ձեռ. 449, 6ա-163բ: Յանկ/չիք: Շարագրութիւն կանոնաց... /չիք: 1/4ա-12բ: 2/12բ-8ա: 3/18ա-20բ: 4/20բ-6ա: 5/26ա-9ա: 6/29ա-31ա: 7/31ա-3ա: 8/33ա-5բ: 9/35բ-40ա: 10/40ա-3ա: 11/43ա-4բ: 12/44բ-9ա: 13/49ա-50ա: 14/50ա-1ա: 15/51ա-9բ: 16/59բ-60ա: ա/60ա-5ա: բ/65աբ: 17/65բ-78ա: 18/78ա-87ա: 19/87բ-8բ: 20/88բ-92բ: 21/92բ-4ա: 22/94ա-5ա: 23/95ա-7ա: 24/97ա-101բ: 25/101բ-4բ: 26/104բ-8ա: 27/ա/108աբ: բ/108բ-9ա: 28/109ա-10բ: 29/110բ-1բ: 30/111բ-2ա: 31/112ա: 32/112ա: 33/112ա-4ա: 34/114ա-7ա: 35/117ա:

9ա: 36/119ա-35բ: 37/135բ-9ա: 38/139ա-42բ: 39/142բ-5բ: 40/145բ-7ա: 41/147ա-8ա: 42/148ա-52ա: 43/152ա-3ա: 44/153աբ: 45/153բ: 46/153բ-6բ: 47/156բ-7ա: 48/157ա: 49/157աբ: 50/157բ: Ունի. 157բ ՄԱ. (51). Սրբոյն Աթնասի Մեծի. Ա. Բան – Արդ, եկալք ի բանն Եսայեայ... (համարակալումն ըստ այգմ խախտուած): 51(=ՄԲ.)/157բ-8ա (խորագիրը տարբեր «Աբրահամոսի ի Դուկայ Աւետարանին մեկնութենէ: Ա. – Թէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր...»): 52 (=ՄԳ.)/158աբ: 53 (=ՄԳ.)/158բ: 54 (=ՄԵ.)/158բ-9ա: 55 (=ՄԶ.)/159ա: 56 (=ՄԷ.)/ա/159աբ: բ/159բ-61ա:

Ձեռագիրն օգտագործուել է քննական բնագրի մէջ՝ Ա խմբի Ա ենթախումբ, տե՛ս Կանոնագիրք Հայոց, հտ. Ա., Բ., աշխ. Վ. Յակոբեանի, Երեւան, 1964, 1971, ձեռ. Ի:


Ունի նաեւ՝

– 161ա-3բ Կանոն տեառն Սիմեոնի Աղուանից կաթողիկոսի, յետ կործանմանն Ներսէսի Աղուանից կաթողիկոսի, որ վասն Քաղկեդոնին խորհելոյ եւ շփոթելոյ զԱղուանի, մերժեցաւ ձաղանօք ընդ ձեռն Եղիայի Հայոց կաթողիկոսի եւ ժողովոյն Աղուանի – Այս կանոնագրութիւն եղաւ ի Սիմոնէ Աղուանից կաթողիկոսէ... իսկ բղջախոհութիւն է կամք հեշտութեան մարմնոյ ցանկութիւն:

ՉԵՌԱԳԻՐ Բ

ԺԹ. դար

ԹԵՐԹ՝ 78 (թ. 1-3, 164-238). չգրուած՝ 1ա-3բ, 164աբ, 168աբ, 175աբ, 177բ-238բ: ՊՐԱԿ՝ 3+1-7x12 (1՝ 8, 7՝ 7): ՆԻԻԹ՝ թուղք, լուսադրոյմով՝ «УФНП, 1826»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22,5x17,4: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն (17,4x12,3): ԳԻՐ՝ շղագիր (մմուշ՝ 165ա): ՏՈՂ՝ 29-30:



նմուշ 165ա

ՎիճԱԿ՝ բաւարար.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

165ա-77ա Կանոնի յաղագս պսակի, արարեալ


2597

ՅԱԿՈԲ ԱՄԱՍԻԱՅԻ ԳԷՈՐԳԵԱՆ, ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻԻՆ ԿԱՆՈՆԱՅ

ԼԻՊՄ

ԳԻԹ՝ Յովհաննէս Նոտար: ՍՍԱՅՈՂ՝ Աբրահամ վրդ. Կ. Պոլսեցի:

ԹԵՐԹ՝ 55 (գրչի կշակալում՝ 1-33, որ է՝ Յա-19բ). չգրուած՝ 1ա-2բ, 7բ, 55աբ: ՊՐԱԿ՝ 1-7x8 (1՝ 7): ՆԻԻԹ՝ թուղթ, լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 24,8x18: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (18,5x14,5): ԳԻԹ՝ նոտագիր (նմուշ՝ 10ա): ՏՈՂ՝ 30: ԿԱԶՄ՝ ծաղկաթուղթ, եզրերը դեղին դրոշմագարդ կաշի, միջուկը ստուարաթուղթ, աստուղթ թուղթ. լուսանցակողերը՝ կապոյտ ցայտկէն: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա (վրջ.), չգրուած թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ 3 բարձրադիր գլխարկի:



նմուշ 10ա

ՎիճԱԿ բաւարար. կազմը մաշուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Յա-52բ [Յակոբայ Ամասիացոյ Գեորգեան, Հաւանօտութիւն կանոնաց]

ա. Յաբ Կանխաբանութիւն յաղագս օգտութեան կանոնագրոց եւ մանաւանդ հարկատուութեան նորին առ ամենայն հաւատացեալս, եւ առաւել եւս առ քահանայս, եւ առ եպիսկոպոսունս — Օրէնք աստուածային, որ ի մարգարէս եւ յԱւետարանս եւ յառաքեալս... ուրեմն կալարուք զհեղգս խրախոյս ձեզ առ աստուածայինսն վերաթեւել:

բ. 4ա-5ա Աստանօր յայտնին հեղինակի գրոց կանոնաց — Թիւք նոցին կանոնաց... Մխիթարայ Գօշի Դատաստանագրոց ՄԾԱ. կանոնք, յորմէ առաք ինչ ինչ մեկնութիւն յոմանս կանոնս խրթինս եւ զայլս ի վկայութիւն, 1184:

Նշուած են կանոնների հեղինակների անունները, կից նրանց ապրած ժամանակը:

գ. 5ա-6ա Ազդեցութիւն նշանակութեանց անուանց յայբութեանական կարգս, զորս կրեատ եղաք ի լուսանցս — Աբր. - Աբրահամու Մամիկոնէից եպիսկոպոսի... Փլպ. Փիլիպպոսի առաքելոյն:

դ. 8ա-53բ [Համաօտութիւն կանոնաց — Ազատ իրցին եկեղեցականք ի հարկաց, եւ թէ իշխան ոք կամի-

արքոյն Բարսղի եւ Ոսկերեանի — 1. Կանոն է այնոցիկ, որք սրբութեամբ անանին... 35. Որ արար զնա հոգեգաւակ... այլ իւրեանց թոռուքն խնամենան եւ թոռնեայքն (ունի ազգականութեան աղիւսակներ՝ 169ա, 170բ-2ա, 173աբ, 176ա-7ա):

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին՝ «Կանոնք (5)», 1ա՝ «Հ՞ր 90/2596, ժէ., Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

ՌՄԿԲ. — 1813

ցի առնուլ զհարկս ինչ ի նոցանէ, զրկեցի յօրհնութենէ] եկեղեցւոյ եւ մի՛ ոք ի քահանայից իշխեսցէ մատուցանել վասն նորա պատարագ... օր շարչարանաց Տեառն զկնի հասարակածին կատարեցի, որ յառաջ քան զհասարակածն կատարեցէ եպիսկոպոս կամ քահանայ լուծցի:

Տէս ձեռ. 2884, 11ա: Կանոնների շարակարգ այբբենական ցանկով լուսանցներում նշելով տուեալ կանոնի համապատասխան աղբիւրը:

ե. 54ա [Ի ՌՃ. (1651) թուին մերոյ Փիլիպպոս կաթողիկոսն Սուրբ] էջմիածնայ եւ Ներսէս կաթողիկոսն Սրսայ, հանդիպեալ միմեանց յԵրուսաղէմ, խորհուրդ արարեալ, ժողով արարին հանդերձ Աստուածատու պատրիարգաւ Երուսաղէմի եւ զայլ եպիսկոպոսունս կոչեալ յայլ զաւառոյ եւ հաստատեցին ժԳ. կանոնս, որք են — Ա. երկու աթոռք էջմիածնայ եւ Ստոյ սէր ունիցին առ միմեանս... ժԳ. երիցունք, որոց վախճանեալ իցէ ամուսին, եթէ իցեն վկայեալ ի պարկեշտութեան եւ իցեն ծեր եւ ունիցին մանկունս սնուցանելոյ, կացցեն յեկեղեցւոջ, ապա թէ ոչ, զնասցեն ի վանս:

զ. 54բ Զեկուցումն ի վերոյ: Յաղագս ինչ ինչ բանից գիտելի է — Յանհմուտ գրչաց ներմուծեալք... Բաւեցեալ սակաւութս, եթէ արժան դատիք, յիշեսջիք զյետնեալս ընդ ծնօղս իմ եւ ընդ համայն ընտանիս:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ

Եր Որ եմ ամենապատրաստ ընկալուլ եպերանաց գիտնոց եւ առաքիներաց, բայց խթան աքացից խորդացելոց ի խորշս խցից եւ եկեղեցեաց Յակոբ դպիր յԱմասեացի մահտեսի Գեորգեան, ի 25 սեպտեմբերի 1800 եւ ՌՄԽԹ. (1800), յԱմասիա: Իսկ ի թիւ հայոց ՌՄԾԱ. (1802), ի 20 յուլիսի գաղափարեալ յիսկ գաղափարէ ի ձեռն Կարապետ եւեթ շնչին իբր դպրի տիրացու Գեորգեան, ի յօգուտ եւ ի վայելումն իւր եւ համայն իւրայնոց, ի Միջագիւղն մայրաքաղաքի Կոստանդնուպօլսոյ:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

6բ Իսկ ի ՌՄԿԲ. (1813) թուականիս մերոյ, յունիսի ժԲ. |7ա| գաղափարեցաւ ի յերրորդ գաղափարէ նախագրեցելոյ, ի վայելումն լնայ սրբոյ անապատի միա-

բան Աբրահամ վարդապետի Կոստանդնուպոլսեցոյ, ձեռամբ Յովհաննէս նուաստ նոտարիս:


ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին՝ «Կանոնգիրք, ծաղկաբաղ», 1ա՝ «Հ՞ր 92/2597»:

2598

Կ Տ Ա Կ Ե Ր Կ Ո Տ Ա Ս Ա Ն Ն Ա Հ Ա Պ Ե Տ Ա Ց Ն Ի Ս Ր Ա Յ Ե Լ Ի

ՌՄՀԵ. – 1826

ԳՐԻՉ՝ Պետրոս դպիր: Թերթ 29+1 (կրկն՝ թ. 1, գրչի էջակալում՝ ա-ծ., որ է՝ 1գ-25բ). չգրուած՝ 1աբ, 27ա-9բ: ՊՐԱԿ՝ 1+Ա-Գ+Ճ (Գ 5): ՆԻԹ՝ թուղթ, լուսագծերով, լուսադրոյնով՝ ոճատուրուած գիւնանշան: ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 22,7x17,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (18x13): ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 17ա): ՏՈՎ՝ 29: ԿԱԶՄ՝ շագանակագոյն լաթ, մէջը եւ փեղկերի հիմնամասը՝ սեւ կաշի, միջուկը ստուարաթուղթ: աստաղը թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա + Բ, չգրուած թուղթ, մասն կազմաստաղի:



նմուշ 17ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կարերը թուլացած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1. 1գ-2բ [Ա.] Կտակ Ռուբենի առաջնոյ – Հրաման կտակի Ռուբենի, զոր պատուիրեաց որդւոց իւրոց... ուր էին հարքն իւրեանց, կատարեցաւ կտակն Ռուբենի:

2. 2բ-4ա Բ. Կտակ Շմաւոնի Վասն նախանձու – Հրաման բանից կտակի Շմաւոնի... մինչ յաւուրն ելիցն իւրեանց ի ձեռն Մովսէսի, կատարեցաւ կտակն Շմաւոնի:

3. 4ա-8ա Գ. Կտակ Ղեւեայ Վասն քանանայութեան եւ ամբարտաւանութեան – Հրաման պատասխանուց բանից Ղեւեայ... ի մէջ Աբրահամու, Սահակայ եւ Յակոբայ, կատարեցաւ կտակն Ղեւեայ:

4. 8ա-12ա Դ. Կտակ Յուդայ չորրորդ Վասն արիութեան եւ արծաթափրութեան եւ պոռնկութեան – Հրաման պատասխանուց բանիցն Յուդայի... եւ ննջեաց Յուդա ընդ հարս իւր, կատարեցաւ կտակն Յուդայի:

5. 12ա-3ա Ե. Կտակ Իսաբարայ որդոյ Յակոբայ – Հրաման պատասխանեաց բանից Իսաբարայ... եւ զօրութեամբ ննջեաց քուն յաւիտենական, կատարեցաւ կտակն Իսաբարայ:

6. 13ա-4ա Զ. Կտակ Զաբուղոնի որդոյ Յակոբայ – Հրաման պատասխանեաց բանիցն Զաբուղոնի... եւ թաղեցին զնա ընդ հարս իւր, կատարեցաւ կտակն Զաբուղոնի:

7. 14ա-6ա [Է.] Կտակ Դանայ Վասն ամբարտաւանութեան եւ առելութեան – Հրաման պատասխանեաց Դանայ... ի յերկրէ ժառանգութեան իւրեանց եւ հայրենեաց իւրեանց. կատարեցաւ կտակն Դանայ:

8. 16ա-8ա Ը. Կտակ Նեփթաղիմայ Վասն բնական բարութեան – Հրաման պատասխանեաց կտակի Նեփթաղիմայ... զոր պատուիրեաց նոցա Նեփթաղիմ հայրն իւրեանց. կատարեցաւ կտակն Նեփթաղիմայ:

9. 18ա-9բ Թ. Կտակ Գաղայ Վասն տեսութեան – Հրաման պատասխանեաց կտակի Գաղայ... եւ թաղեցին ի Քերթն. կատարումն կտակացն Գաղայ:

10. 19բ-21ա Ժ. Կտակ Ասերայ Վասն երկրիմութեան եւ առաքինութեան – Հրաման պատասխանեաց կտակի Ասերայ... եւ հանեալ զնա, թաղեցին առ հարս իւր. կատարեցաւ կտակն Ասերայ:

11. 21ա-4բ ԺԱ. Կտակ Յովսեփայ Վասն նախանձու – Հրաման կտակի պատասխանեաց Յովսեփայ... եւ ամենայն եգիպտոս առ սուզ մեծ. կատարումն կտակացն Յովսեփայ:

12. 24բ-6ա ԹԺ. Կտակ Բենիամենի երկոտասաներորդ – Հրաման կտակի Բենիամենի... եւ բնակեցան յեգիպտոս մինչեւ յօր Ելիցն իւրեանց յեգիպտոսէ. կատարումն կտակացն Բենիամենի, վերջ:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

26բ Արտահանեալ եղեն Կտակքս յայտքիկ երկոտասան նահապետաց յամի Տեառն 1826, ի ձեռագիր եւ ի մագաղաթեայ յԱստուածաշնչէ միոյ, որ էր հարիւր եօթանասուն եւ հինգ ամա յառաջ գրեալ յընտիր օրինակէ եւ ազնիւ գրով եւ զարմանալի յօրինածով պատկերաց եւ ծաղկանց զարդարեալ, բայց յինչ յինչ տեղիս սղալագիր, ուստի յա[յ]նպիսեաց ըստ կարելոյն եւ ըստ կարի մերում ուղղեցաք, յանձնելով զկատարեալ ուղղութիւնն զգօնութեան կատարելոց. եւ յորոց յանդիպինն ինդրելով յիշել զմեզ ի միտս բարիս՝ օգնել նմա Տեառն յամենայն կարիս, (այլ ձեռքով) ձեռամբ Պետրոս դպրի հանգուցեալ Տերեայ-Ստեփանեան բնիկ Անդրիանուպոլսեցոյ, ի Ֆիլիպպէ քաղաք բնակեալ:

Եթէ այս հաղորդումը ճշգրիտ համարենք, ապա՝ 1826ից 175 տարի առաջը 1651 թուականն է. այս տարում գրուած եւ ժԲ. նահապետաց կտակը պարունակող մեզ յայտնի միակ Աստուածաշունչն է Վատիկանի հայերէն Cod. Borg. Arm. 27 (olim L. II. 28) ձեռագիրը. տե՛ս Codices Armeni bybliothecae Vaticanae Borgiani, Vaticani, Barberiniani, Chisiani, Schedis Frederici Cornwallis Conybeare adhibitis

recensuit Eugenius Tisserant, Bibliothecae Vaticanae scriptor, Romae, Typis Poluglottis Vaticanis, MCMXXVII (1927), էջ 35:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

26բ (1872 թ., շղագիր) Ի գրոց հոգեւոր ծնողին իմոյ Սարգիս պատրիարքի գոլով Կտակ ներքոյ ա-

նուանեալ գիրս, ի յիշատակ հոգւոյ նորին նուիրեցի Մատենադարենի Սրբոյ Էջմիածնի, 1 ապրիլ, 1872, ի Սուրբ Էջմիածին, Գրիգորիս եպիսկոպոս Պարսկաստանի եւ Հնդկաստանի:

ՆՇՈՒՄ 1ա՝ «Հ^մ 99/2598, 1826, Մ. եպս.»:

2599

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՅԻ, ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ

ՌՆԷ. – 1628

գիրք տարեաց ///): ժգ-խա/չիք: Յշտկրն/չիք: Յշտկրն. հարցմանց Գէորգայ/չիք:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1ա Աւգնեա՛ Հոգի Աստուած եւ հասո՛ յաւարտումն, սկսիլն ի մէնչ եւ կատարումն ի քէն, Տէ՛ր իմ Յիսուս:

Յա Աւգնականութեամբն Աստուծոյ սկիզբն արաք գրոցս թվին ՌՆԷ. (1628), մարտ ամսոյ Ը., արն շաբաթ, աւգնեա՛ Հոգի Սուրբ:

48ա (ստ. լս.) Ո՛հ, արինակն անհամ, եւ գծաւղս անիմաստ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1ա (1740 թ., բոլորգիր) Դարձեալ յիշեցէք ի սուրբ աղօթս ձեր զպարոն մահտեսի Յակոբն, որ ստացաւ զսա իւր հալաբ արդեանցն եւ ետուր յիշատակ ի տէր Գրիգոր վարդապետին, որ երթայ քարոզէ եւ յիշատակէ զիւր ննչեցեալն: Դարձեալ, ո՛վ հայրք պատուականք, ով որ հանդիպիք սմա, յիշեցէք ի սուրբ աղօթս ձեր զմահտեսի Յակոբն եւ իւր ծնողքն՝ Մնացականն, զԼազարն, Մարիամին, Մարիանոսին, եւ որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ եւ մեզ ողորմի, թվին ՌՃՁԹ. (1740):

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 3բ, 33բ, 61բ, 81բ. ութանկիւն՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՅ / ՄԱՆՈՒԿ»:


ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին՝ «Գրիգորի Տաթեացոյ Հարցմանց գիրք (1.)», պհպ. Աա՛ «Հ^մ 109/2599, ՌՃՁԹ. – 1740, Մ[եւրոպ] եպ[իսկոպո]ս»:

2600

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆՁԱՅԻ, ՃԱՌՔ


ԺԲ. դար*

կապիւնեով եւ գամերով միջուկը տախտակ. աստուր մուգ կարմիր կտաւ. լուսանցակողեր՝ կարմիր:



Նմուշ 5ա

ԹԵՐԹ՝ 111+1 (կրկն.՝ ք. 37). չգրուած՝ 3բ, 110գդ: ՊՐԱԿ՝ Ա. ժx12 (ժ 4): ՆԻԹ՝ թուղթ: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 23,5x16: ԳՐՈՒԹԻՆ՝ երկպին (17x11): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 6ա): ՏՈՂ՝ 35: ԿԱԶՄ՝ դրոշմագարոյ շագանակագոյն կաշի, մէջք եւ փեղկերի հիմնամասերը՝ կարմիր կաշի, միջուկը ստուարաթուղթ. աստուղթ թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա.Բ + Գ.Գ, սպիտակ. չգրուած թուղթ:



Նմուշ 6ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՆ – Կ ի ս ա ի ո Ր ա ն՝ 4ա, 33բ: Ճ ա - կ ա տ ա զ ա Ր դ՝ 1ա, 3ա, 33ա, 61բ: Լ ու ս ա ն ց ա զ ա Ր դ՝ բուսական: Չ ա Ր դ ա զ ի Ր՝ հանգուցագիր, կենդանագիր, թռչնագիր: Գ ո յ ն ե Ր՝ կարմիր, կապոյտ, կանաչ, շագանակագոյն, վարդագոյն, մանուշակագոյն, նարնջի, սև, ոսկի:


ՎԻՃԱԿ՝ վնասուած. կազմի կաշին մաշուած, Ա. փեղկը ձեռագրից անջատ, աստուղի թուղթը պատռուած, խոնաւորինից գրեթէ բոլոր թերթերն իրար կպած եւ անջատելիս երկփեղկուած, պատռուած, պատռուած-ընկած, խոնաւորեան եւ բորբոսի հետեւ, մասամբ ցեղակեւ. բնագրի զգալի մասն անընթեռնելի:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1ա-110ա [Գրիգորի Տաթեացոյ Գիրք հարցմանց]

Տե՛ս ձեռ. 921, 3ա-367ա: [Յանկ]/1ա: Յոչբն/1բ-2բ: 1. [Յանկ առաջին հատորի]/3ա: ա/4ա-12ա: ք/12ա-3ա: զ/13բ-31բ: զ/31բ-2բ: 2. [Յանկ երկրորդ հատորի]/33աբ: Նխդր./33բ-5բ: Ե/36ա-41ա: զ/41ա-7ա: Ե/47ա-61ա: 3. [Յանկ երրորդ հատորի]/61բ: ը/62ա-72ա (անխորագիր): ք/72ա-80բ: 4. [Յանկ չորրորդ հատորի]/80բ-1ա: ժ/81ա-9բ: ժա/89բ-92բ: ժք/92բ-8բ: ժզ/98բ-106ա: ժղ/106ա-108բ: 5. [Յանկ հինգերորդ հատորի]/108բ-9ա: ժա/109ա-10ա (վերջը թափուած՝ չորրորդ այլ եւ

ՍՏԱՅՈՂ՝ Գրիգորիս Գ. կթղ.: ԹԵՐԹ՝ 256+1-1 (կրկն.՝ ք. 1, թիչք՝ 140-2). չգրուած՝ 1աբ, 256աբ: ՊՐԱԿ՝ 1-32x8 (17, 31՝ 7)+2: ՆԻԹ՝ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եռամանիկ (ք. 1-15, 254-6՝ 1677բ.): ՄԵՄՈՒԹԻՆ՝ 25,5x18,5 (ք. 16-253), 25x17 (ք. 1-15, 254-6): ԳՐՈՒԹԻՆ՝ միասին՝ ք. 16-253 (17x10,5), ք. 1-15, 254-6 (17x11): ԳԻՐ՝ ուղղագիծ երկարագիր՝ ք. 16-253 (նմուշ՝ 47ա), բոլորգիր՝ ք. 1-15, 254-6 (նմուշ՝ 5ա): ՏՈՂ՝ 20 (ք. 16-253), 25-6 (ք. 1-15, 254-6): ԿԱԶՄ՝ դրոշմագարոյ շագանակագոյն կաշի, դռնակով,



Նմուշ 47ա

* Ձեռագիրը գրուած է ԺԲ. դ.ում, 1677 թ. Ամբոբոյ վանքում պակասը յազմել եւ նորոգել է տուել Վարդան վարդապետ Բաղիշեցիին, տն՝ 255բ:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Կ ի ս ա խ ու ր ա ն՝ 26բ, 83բ, 116բ, 133ա, 181բ, 221բ, 241ա: Ճ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 1գ: Բ ա ժ ա – ն ա գ ա ր դ՝ 105բ: Լ ու ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական: Ձ ա ր – դ ա գ ի ր՝ հանգուցագիր: Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, կանաչ, վարդագոյն, սեւ, սպիտակ, ոսկի:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան Մատթէոսի, ԻԷ. 58 – ԻԸ. 2: Ժ. դ.: Ա + Բ, ստացուած 1 թերթի ընդլայնակի հատումով: Մագաղաթ, 24,5x17, երկսին (17x14), բոլորգիծ երկարագիր (նմուշ՝ Բա), տող՝ 11+8: Կարդալ՝ Աա, Բբ, Աբ, Բա՝ «[Սա] մատուցեալ առ Պիղատոս... եւ նստէր ի վերայ [նորա]»:

ՎիճԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, դոնակը կծկուած, կապիչներէից մէկն ընկած, թ. 1-15՝ եզրերը մկնակեւ, թ. 132ի ստորին կէտը պատուած-հանած, թ. 189-253ին խոնատութեան հետեւ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1գ-255բ [Գրիգորի Աստուածաբանի Նագիան-գացոյ ճառք]

ա. 1գ-10բ Ա. Գրիգորի Աստուածաբանի Ազիազու եպիսկոպոսի ասացեալ Ի յայտնութիւն Տեառն – Քրիստոս ծնեալ լինի... որքան հասանելի է կապելոցս մարմնով ի Քրիստոս Յիսուս... այժմ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

բ. 10բ-26ա Բ. Նորին Գորիգորի Աստուածաբանի Ի յայտնութիւն Տեառն – Դարձեալ իմ Յիսուս եւ դարձեալ խորհուրդ... որոց այժմ չափաւորապէս ընկալեալ եղեւ մի ճառագայթն ի միոջէ աստուածութենէն ի Քրիստոս Յիսուս, որում փառք յաւիտեանս. ամէն:

գ. 26բ-78բ Գ. Նորին Ի մըկրտութիւնն – Երէկ զպայծառ լուսաւորութեանցն զար տանեցաք... ի նոյն ինքն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

դ. 79բ-83ա Դ. Ի մկրտութիւնն նորին ի Պաւա եւ ի հեղգութիւնն – Յարութեան ար եւ սկիզբն աշոճակ... եւ որ անդ են հանգիստքն, որում փառք եւ զաւրուութիւն յաւիտեանս. ամէն:

ե. 83բ-105բ Ե. Ի Պաւա եւ յամելն նորին ի սուրբ Պաւա – Ի պահու իմում կացից... ով Հայր եւ Բան եւ Հոգի Սուրբ, վասն զի քեզ ամենայն փառք եւ պատիւ եւ զաւրուութիւն յաւիտեանս. ամէն:

զ. 105բ-16ա Զ. Ի յամենասուրբ Պաւա Աստուծոյ մերոյ Յիսուսի Քրիստոսի. նորին խաւս ի նոր կիրակէն, ի Կեսարիա, ի Կապովտկացոց, ի կատարման յիշատակի սրբոյ վկային Մամայ, քանզի ի նորում կիրակէին կատարի միշտ ի Կեսարացոց փառքին – Նաակատիք պատուեցին հին արէնք... յուրարկեալք լիցուք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում... ի փառս Աստուծոյ Հայր. ամէն:

է. 116բ-32բ է. Ի նոր կիրակէն եւ ի նաակատիս նորին ի Պենտակոստէն եւ ի Հոգին – Յաղագս տանինս դուզնաբեայ իմաստասիրեսցուք... ի ճշմարիտ ապրեցելոցն տան եւ ցնծութիւն/// (վերջը թափուած):

ը. 133ա-58բ Ը. Նորին Գրիգորի Նագա[ն]գացոյ ի Ժողովողն – Այսպէս ասէ Սողովմովն... ըստ գործոց բարեաց համանգամայն եւ վատթարաց, ի Ժողովողն:

թ. 159ա-81ա Թ. Նորին ի հայրն իւր, լոնայ եւ սգացեալ վասն հատուածոյ կարկտին – Ընդէ՞ր լուծանէք զկարգ գովելի... որ ընծայես զմեզ եւ զմերսն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք եւ զաւրուութիւն յաւիտեանս. ամէն:

ժ. 181բ-220բ Ժ. Առ հայրն իւր լոնայ եւ սգացեալ յաղագս հարուածոց կարկտին. նորին յաղագս աղփատասիրութեան – Արք եղբարք եւ աղքատակիցք... ընկալցին զմեզ ի յաւիտենական խորանս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

ժա. 221բ-40բ ԺԱ. Նորին ի Կիւպրիանոս յեպիսկոպոս եւ ի վկայ յանդաստանէ եկեալ յետ միոյ ատուր յիշատակին – Փոքր ինչ եւ Կիւպրիանոս զերծանէր ի մէնջ... որում եւ հաղորդեսցուք կատարելապէս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

ժբ. 241ա-55բ ԺԲ. Նորին Գրիգորի ի Մակարէացի վկայան – Զի՞նչ եւ Մակարէացիք... խոստովանելով եւ խոստովանեցի, փառաւորեալ եւ փառաւորեսցի, որում փառք եւ զօրութիւն յաւիտեանս. ամէն:

Հմմտ. ձեռ. 946, 1ա-305բ: Նագիանգացու ճառերի մասին տես Կ. Մուրադեան, Գրիգոր Նագիանգացին հայ մատենագրութեան մէջ, Երեւան, 1983:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

26ա (ստացողի) Զստացաւզ գրոցս զտէր Գրիգորէս Հայոց կաթողիկոս յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս (նման՝ 79ա, 83ա, 105բ, 116ա, 158բ, 181ա, 221ա, 240բ (այս էջի յիշում «Գրիգորիս» բառը դարձուած «Գորգ»):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

255բ (ստացողի) Զստացող մատենիս զհեղահոգի եւ զպատուական քաջ բարունին՝ զՎարդան վարդապետն աղաչեմ յիշել ի Տէր, որ ետ վերստին նորոգել զսա եւ զպակասն ընոյ եւ եզ յիշատակ ի դուռն Ամիրճորու Սուրբ Յովանիսին ի փրկութիւն հոգոյ իւրոյ եւ լընթերցումն հոգեւոր որոց Աբրահամ վարդապետին եւ այլոց աշակերտացն, ի թվին ՌձԻԶ. (1677), յիշեցէք ի Քրիստոս Աստուածն. ամէն:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա. բոլորակ մէջտեղում թագապսակ զինանշան՝ “Πεφ. Αχαλυβιχσκoй гρaδσκοϋ πολιτιϋι”:


ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին «Գրիգորի Աստուածաբանի ճառընտիր», 1ա՝ «Հ^մ 124/2600, Հ^ն 182/3, ԺԲ. Մ[եւրոյ] եպ[իսկոպոս]»:

2601


Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Յ

ԺԳ., ԺԷ. դարեր

ԳրիՉ՝ Հերով (Ա. 30ա-197բ), Բարաղամ (Բ. 3ա-29բ): Թերթ՝ 197: ՊՐԱԿ՝ Ա-ԻԶx8 (Ա՝ 12, Գ, Ե՝ չիք, Զ՝ 9, ԺԶ՝ 10, ԻԶ՝ 6): Նեիթ՝ թուրք, լուսագծերով (թ. 3-29): ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 24,8x17: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (20x13,7): ԳԻՐ՝ բոլորգիր (30ա-197բ, 3աբ. նմուշ՝ 33ա), նոտրգիր (3բ-29բ. նմուշ՝ 15ա): ՏՈՂ՝ 27 (3ա-29բ), 30 (30-197բ): ԿԱԶՄ՝ ԺԹ. դարի, դրոշմագարդ կաշի, Ա. փեղկին պղնձե՝ գամեր, միջուկը տախտակ, մէջքը՝ կարմիր կաշի, յետագայ նոտրգամբ (տե՛ս Վիճակ). աստուոր սպիտակ թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ, սպիտակ, չգրուած թուղթ, մաս կազմաստառի:



Նմուշ 15ա



Նմուշ 33ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – ձ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 3ա: Զ ա ր - դ ա գ ի ր՝ թռչնագիր 3ա: Գ ո յ ն ե ր՝ սեւ, կարմիր. լուսանցակողերը՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բաարար. կազմը ԺԹ. դ. նոտրգուած ծաղկաթղթով եւ կարմիր կաշուով, Ա. փեղկին պահպանուած պղնձե՝ 3 գամերը, ծաղկաթուղթը մաշուած, Բ. փեղկինը՝ մասամբ թափուած, տախտակը տեղ-տեղ տեսանելի, լուսանցակողերը՝ սեւագած, գունաթափ, Գ., Ե. պրակները՝ չիք, թ. 4-11, 30, 144՝ հիմնից մասամբ պղկուած, թ. 151՝ ստորին եզրերը վնասուած, ընկած են եղել սկզբի եւ վերջի ԺԳ. դ. գաշտեան թերթերը, Բարաղամ գրիչը վերականգնել է միայն սկզբի ընկած թերթերի բնագիրը. թերթերին խոնաւութեան եւ զամազան հետեւեւ, թ. 192-7՝ մասամբ բամբակակալած, թ. 192-3, 195-7՝ ցեցի անցեւեւ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. 3ա-29բ [Յովհաննու Երզնկացոյ Խրատ հասարակաց ֆրիստոնէից]

Տե՛ս ձեռ. 228, 71ա-108բ: Նիւ/3ա-4ա: ա/4ա-6ա: բ/6ա-8ա: գ/8ա-9ա: դ/9ա-11բ: ե/11բ-2բ: զ/12բ-3բ: յ/13բ-4ա: լ/14ա-5ա: թ/15ա-6բ: ժ/16բ-8ա: ժա/18ա-9բ: ժբ/19բ-22ա: ժգ/22ա-3բ: ժդ/23բ-4բ: ժե/24բ-6ա: ժզ/26ա-7ա: ժվ/27աբ: ժը/27բ-8ա: ժթ/28ա-9ա:

Բ. 29բ-197բ [Ճառք, Վարք, Զրոյցք]

ա. 29բ-37բ [Երանելոյ Եփրեմի ասացեալ Յաղագս Նունիացոց – Ահա հրաման հասեալ առ մարգարէն Յոնան... Ասասցուք ամենեքեան արհնութին Հաւր, արհնութին Որդոյ, արհնութին Հոգոյն Սրբոյ, Երրորդութեանն եւ մի աստուածութեան, ա[յ]ժմ եւ միշտ, եւ յաւիտեանս. ամէն:

բ. 37բ-42ա ԺԵ. Վկա[յա]բանութիւն արքայն Սարգսի Զարավարին – Այր մի էր, ուրում անուն էր Սարգսի... Ի

Քրիստոս Յիսուս, Ի Տէր մեր, ուրում վայել է փառք, Իշխանութիւն Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյն:

գ. 42ա-4ա ԺԶ. Յոհանու Ոսկիբերանին ասացեալ Վասն [ն]նջեցելոց – Ոչ կամիմ, եղբայրք, զձեզ տգէտս լինել... Զի եւ հանդերձելոց նորա բարութեանց հասանիցիմք Ի Քրիստոս Յիսուս Ի Տէր մեր, ուրում վ[այել է փառք]:

դ. 44ա-54ա ԺԷ. Բուն Բարիկենդանոյն շաբաթն աւրն յիշատակ հայրապետացն Կոստանդնուպալսի – ԶՔրիստոսի խաղաղութիւնն առբերելով մեր զարինակ բարեպաշտութեան... Որ Ի ժամանակի հնծոց ընդունելոց են Ի Քրիստոս զհաստուցումն հոգով դատաստանաւ եւ հոգով այրման:

ե. 54ա-8ա ԺԸ. Եղիշէի վարդապետի ասացեալ Ի բան Աւետարանիս. Հայր մեր – է պարզ բնութեամբ եւ առաւել ունի զբարձրութիւն... Վասն ամենեցուն եկն Ի թողութիւն մեղաց, ընդ ուրում Հաւր եւ Որդոյ, կենդանարար Սուրբ Հոգոյն վայել է փառք եւ Իշխանութիւն յաւիտեանս]. ամէն:

զ. 58բ-60բ ԺԹ. Յոհանու Ոսկիբերանի՝ Երկրորդ Կիրակէի պահոցն – Առ Ի՛ Սիրեցես զՏէր Աստուած քո... Զամենեսեան զմեզ յանուանէ սիրաց յառաջագոյն եւ Քրիստոսի փառք Ի յաւիտեանս. ամէն:

է. 60բ-4բ Ի. Երկրորդ շաբաթին Կիրակի Երուսաղեմայ հայրապետին – Միածին Որդին եւ Բանն Աստուած... եւ դադարէր հալածումն. եւ ամենեքեան արհնեին զամենասուրբ Երրորդութիւնն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ը. 64բ-9բ ԻԱ. Յոհանու Ոսկիբերանի Յաղագս անառակ ուրոյն – Հանապազ զԱստուծոյ մարդասիրութիւնն պարտիմք քարոզել... Շնորհքս սփռեալ են հոգեւորք պատմուճանին, Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյն, ա[յ]ժմ եւ յաւիտեանս]:

թ. 69բ-73ա ԻԲ. Գրիգորի Աստուածաբանի ասացեալ Յաղագս աղբատասիրութեան – Մի՛ պարծեսցի Իմաստունն Իմաստութեամբն իւր... Զի յորժամ աստի վճարիցիմք, ընկալցին զմեզ յերկնից խորանն Ի Քրիստոս Յիսուս, Ի Տէր մեր, ուրում փառք յաւիտեանս:

ժ. 73ա-6բ ԻԳ. Յոհանու Ոսկիբերանին ասացեալ Յաղագս պահոց – Բազում ինչ է, որ կրէ զքրիստոնէութիւն... Որոց լիցի ամենեց[ուն] մեզ հասանել Ի Քրիստոս Յիսուս, Ի Տէր մեր, ուրում վայել է փառք:

ժա. 76բ-83բ ԻԴ. Հինկերորդ կիրակէին. Յոհանու Ոսկիբերանին յԱւետարանի մեկնութիւն – Յայնժամ գնաց Յիսուս, ասէ... եւ սրբեալ ըստ կամաց Ի-

րոց. ընդ այսր ամենայնի գորհասցուք զԱստուծոյ, զի նմա վայել է փառք, իշխանութիւն]:

Ժբ. 83բ-8բ ԻԵ. Յոհաննու Ոսկիբերանին Ի յարութիւն Ղազարու – եւ էր ոմն հիւանդն՝ Ղազար անուն... Զժողովն շարժել կամէին, զի ի մահ մատնեցեն զնա:

Ժգ. 88բ-93բ ԻԶ. Սրբոյն Սահակայ կաթողիկոսի Վանեցու Ի յարն արմաւէնաց – Աւետարեբ եւ տիեզերական տան... եւ Սուրբ Հոգոյն մատակարի եւ պարգեւայքաշխի միշտընջենաւոր ի փառաբանութիւն յաւիտանս. ամէն:

Ժդ. 93բ-6բ ԻԷ. Երկուշաբթի մեծի. Սէւերիանոսի եպիսկոպոսին Ի թգենին, որ ցամաքեցաւ – Ակն տեսանելով ծառ ծաղկզգեստ... որ հաւատովք ծաղկեալ էր. եւ զկանս ամէնեցուն պայծառացուցանել ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որ է աւրհնեալ:

Ժե. 96բ-8բ ԻԸ. Երեւշաբթու մեծի. Յոհաննու Ոսկիբերանին Ի տասն կուսանս – Յայնժամ նման[ե]ալ լիցի արքայութիւն երկնից տասն կուսանաց... Զի ի մեր փրկութիւն եւ յընկերին ազուտ արկցուք զայն ի կիր:

Ժզ. 98բ-101ա ԻԹ. Զորեւշաբթու մեծի. Յոհաննու Ոսկիբերանին Ի մատնութիւն Տեառն – Յայնժամ չոգաւ մի ոմն յերկուտասանիցն Յուդայ Սկարիովտացի... Որոց լիցի ամենեցուն մեզ վայելալ ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր. վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ յաւիտ[եանս]. ամէն:

Ժկ. 101ա-2բ Լ. Հինգշաբթու մեծի. Զէնովբա եպիսկոպոսի ասացեալ է – Յետ խաւսեալ խաւսելոյն Յուդայի... Աւրհնութիւն Հար, որ առաքեաց զմիածին Որդին ի դատաստան ի փրկութիւն աշխարհի, ա[յ]ժմ եւ յաւիտեան. ամէն]:

Ժլ. 102բ-8բ ԼԱ. Ուրբաթու մեծի. Յոհաննու Ոսկիբերանին ի շարչարանս Տեառն – Զայս իբրեւ ասաց Յիսուս... եւ խաչի եւ մահու անոխակալութեամբ յանձն առ եւ խաչհանուացն հեզութեամբ թողութիւն տայր. դու զիա՛րդ ոչ թողուս ընկերին քո:

Ժո. 108բ-13ա ԼԲ. Եղիշէի վարդապետին ի Թաղումն. Մեծի շաբաթուն: – Եկն, ասէ, Յովսէփ Արեմաթացի... եւ արժանիս արար աւրհնել զտերութիւն Հար եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, ա[յ]ժմ եւ միշտ, յաւիտանս. ամէն:

Ի. 113ա-7բ ԼԳ. Զատկի կիրակէին. ասացեալ Յոհաննու Ոսկիբերանին – Զոգան դարձեալ առ միմ[ե]անս աշակեր[տ]քն... Զբազումք զհատուցումն բար[ե]աց առցուք յԱստուծոյ շնորհաւք Հար եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյն:

Իա. 117բ-23ա ԼԴ. Գրիգորի Աստուածաբանին Ի Նոր կիրակէ Զատկին – Նաւակատիք պատուեսցին հին աւրինաւքն... եւ հանդերձեալ բար[ե]ացն հասցուք ի Քրիստոս Յիսուս, ի Տէր, ուրում Հար եւ Հոգոյն Սրբոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ:

Իբ. 123ա-30ա ԼԸ. Դ[ի]ոնեսիոսի Արիսպաքացու եպիսկոպոսի ի փոխումն Աստուածածնին – Սուրբ կոյսն Մարիամ Աստուածածինն էր յերուսաղէմ... յաւարկեալ լիցուք ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, ուրում ամենայն փառք, պատիւ եւ զաւրութիւն, հանդերձ Սուրբ Հոգովս. ամէն:

Իգ. 130ա-2ա ԼՅ. Եպիփանու Կիպրացու ասացեալ է Յար համբարձման Տեառն – Արդ, միայն շաբաթ ցուցանէ... եւ նստաւ ընդ աշմէ մեծութեան ի բարձունս եւ զճառագայթս աստուածութեանն շնորհաց ամենեցուն, ուրում փառք յաւիտեանս. [ամէն]:

Իդ. 132ա-3բ ԼԶ. Գրիգորի Լուսաւորչին ասացեալ Յար պենդեկոստ[ե]ին – եւ ի կատարել աւուրցն... Զանգրուական զկանսն միասնական վայելեցուցանել, փառք Աստուծոյ:

Իե. 133բ-8բ ԼԷ. Վարդեվաթին. Յոհաննու Ոսկիբերանին ի Մատթեոսի Աւետարանի մեկնութիւն – Ամէն, ամէն ձեզ, զի են ոմանք... Զոր բարի հայրն իւր ուրախ առնէ ի սէր փեսային յանսպառ եւ յանվաղջան ուրախութիւնն:

Գրչի ձեռքով արուած գլխակարգութեամբ «ԼԸ.» գլուխը որուած է «ԼԳ.»ից յետոյ:

Իզ. 138բ-43ա ԼԹ. Սուրբ առաքելոյն Թումայի, որ վկայեաց ի Հնդկիկս: Յիշա՛ ի Տէր – Մտեալ երանելոյն Թումայի առաքելոյն... եւ ժողովեր անդ բազմութիւն հաւատացելոցն՝ փառաւորելով զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին, այժմ եւ միշտ:

Իկ. 143ա-5բ Խ. Յոհաննու Ոսկիբերանին ի գլխատման Յովանու Մկր[տ]չին – Յայն[մ] ժամանակի լուսա Հերովդէս... Այլ աշխարհել առաւել զյանցուցեալսն, քան եթէ անիծանել:

Իլ. 146ա-7բ ԽԱ. Պատմութիւն գլ[խ]ոյն Յովանու Մկրտչին, թէ որպէս բերաւ յԱմասիայ – Երկու ոմանք յարեւելից կուսէ... իբրեւ զառաջինն Աստուծոյ, որ զսուրբս իւր փառաւորէ, փառք յաւիտեանս. ամէն:

Իթ. 148ա-51ա ԽԲ. Կարգաւորութիւնք եկեղեցու եւ պատմութիւնք նորին – Երանելին Պողոս գրէ Հերա[յե]ցոց այ[ս]պէս ասելով... վասն այսորիկ զնոյն դասակցութիւն ցուցանէ մեզ Տէր գթութեամբ, մարդասիրութեամբ իւրով:

Ձեռ. 993, 618ա՝ լուսանցում այս բնագիրը վերագրուած է Յովհան Օձնեցուն:

Լ. 151ա-3բ ԽԳ. Կիւրդի եպիսկոպոսին ասացեալ ի Զարչ[ար]անս եւ ի խաչն Տեառն – Յորժամ զանազան թատերս մոլորութեանց... իբրեւ անդեն իսկ ի սմա տեսանելով զՈրդին Աստուծոյ՝ փառաւորելով ընդ Հար եւ Սուրբ Հոգոյն:

Լա. 153բ-5ա ԽԴ. Պատմութիւն խաչին, որ տարան ի Յերուսաղէմայ ի Սընդնպալիս եւ այս է – Ի ժամանակին, յուրում թագաւոր[ե]աց Պարսից Խոս-

րով... Եւ տաւն մեծ կատարէին զարս զայս, որ ար ԺԳ. էր սեպտեմբերի ամսոյ, ի փառս ամենասուրբ Երրորդութեան. ամէն:

լբ. 155աբ ԽԵ. Գիւտ սուրբ խաչին, զոր գաւաղշխու Հեղին՝ մայր Կոստանդիանոսի – Յամի եւթնեւտասն ամի թագաւորութեան Կոստանդիանոսի... Առաքել զմայր իւր յարեւելս, միանգամայն զարաւք բագմաւք՝ խնդրել զխաչն Քրիստոսի եւ շինել տեղի:

լգ. 155բ-9ա ԽԶ. Գիւտ խաչին յԵրուսաղէմ, ի ձեռն Կուրղի հայրապետին – եւ եղև այնուհետեւ ի ժամանակին յայնմիկ թագաւորելոյ Կոստանդիանոսի... Ձի որք յիշեն զսուրբ խաչն, հասցեն Մարիամ մասինն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, ուրում վայել է [փառք, իշխանութիւն եւ պատիւ]:

լդ. 159ա-71բ ԽԷ. Պատմութիւն Յակոբա Մեծբնա հայրապետին եւ Մարոգէի միակեցին – Մովսէս աստուածային արինաղիրն... Ձի աղաւթիւք նոցա ի սատարութիւն եւ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, ուրում վայել է [փառք, իշխանութիւն եւ պատիւ]:

լե. 172ա-8ա ԽԸ. Պատմութիւն սուրբ առաքելոյն Փիլիպոսի, թէ որպէս կատարեցաւ – Մինչդեռ էին սուրբ առաքելքն Փիլիպոս եւ Բարդուղիմէոս... Եւ բանն Աստուծոյ աճէր եւ բազմանայր՝ ըստ քարոզութեան առաքելոցն:

լզ. 178ա-85բ ԽԹ. Պատմութիւն Անդրէի առաքելոյ եւ սփանչել[ե]աց ի յերկիրն մարդակերաց – Յետ համաբառնեալոյն Տեառն յերկինս... Ձի նմ վայել է փառք եւ պատիւ, այժմ եւ յաւիտեանս. ամէն:

լէ. 185բ-94ա Մ. Պատմութիւն Անդրէի սուրբ առաքելոյ, որ ի պարտեզ եղեղացոց (= Սպարտէ Ելլադացոց) վկայեաց – Ես, եղբայրք, առաքեցայ ի Տեառնէ... Եւ զի բացցէ Յիսուս զամենեցունց զականջս՝ առ ի լսել եւ յընդունել զշնորհս պարգեւաց նորայ յաւիտանս յաւիտենից. ամէն:

լը. 194ա-7բ ՄԱ. Պատմութիւն Բարդուղիմ[ե]ոսի առաքելոյն եւ վկայ[յ]ութիւն նորայ – Բարդուղիմ[ե]ոս գլխաւոր սրբոց առաքելոց... Եւ խնդրէին ի սուրբ առաքելոյն գտանել թողութիւն մեղաց եւ խնդրել զգթութիւն Աստուծոյ (այսչափ):

Վերջը թերի՝ թերթերն ընկած լինելու պատճառով:

Գ. 1ա Յաւելագրութիւն ԺԹ. դ.ի՝ Պարսկերէն բէյթ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

- 1. 145բ (Հեթում գրչի) Բարէխաւսութեամբ մկրտչին քո, Քրիստոս Աստուած, ողորմ[ե]ա՛յ զձողիս Հեթմոյ:
- 147բ Ողորմ[ե]ա՛յ, Աստուած, զձողի սորայ:
- 171բ Քրիստոս Աստուած, բարեխաւսութեամբ սրբոյն Յակոբ[այ] եւ Մարոգէին ողորմ[ե]ա՛յ Հեթմոյ:
- 178ա Ձգձողս յիշ[ե]ա՛:

2. 19բ (Բարաղամ գրչի) Ձանպիտանս յամենայնի զԲարաղամ գձող սորին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 132բ (1587 թ., անարուեստ բոլորգիր) Ես՝ Յովէս եպիսկոպոսս ի յՈւրֆայ, նվիրակեցի թվին ՌԷԶ. (1587), մեհեկի Ե.:

2. 183բ (ԺԶ. դ., անարուեստ բոլորգիր) Ձգձող գրոցս յիշեցէք ի մաքրայփալ աղաւթս ձեր, ով ընթերձողք սուրբ:

3. 1ա (1728 թ., անարուեստ բոլորգիր) Յիսուս Քրիստոսի ծառայ տէր Բարսեղ, Պետրոս. թվին ՌՃՀԷ. (1728), Պողոս, թվին ՌՃՀԸ. (1729):

4. 2ա (1731 թ., անարուեստ նոտրգիր) Յիշատակ է սուրբ գիրքս տէր Բարսեղ քահանային եւ իւր ծնողացն Պօղոսին եւ Հովփսիմին, Սիմոնին, տէր Թորոսին եւ Սիմէոն վարդապետին եւ ամենայն արեւարու մերձաւորացն: Կարգացողացն Աստուած ողորմեսցի. ամէն: Գրեցաւ ՌՃՁ. (1731) թվոջ, ապրիլէ ամսոյն Բ, ձեռամբ Սահակ վարդապետէ, որ է երկրէն Ըորջտունի:

2ա (ԺԸ. դ., անարուեստ նոտրգիր) Յիշատակ է սուրբ գիրքս ըստէ (Ըստէփանէ՞) Բարսեղ քահանային եւ իւր ծնողոցացին՝ Պօղոսին, Հովփսիմին, Սիմոնին, տէր Թորոսին, Սիմէոնին վարդապետին եւ ամենայն արեւանավոր մերձավորաց: Կարգացողաց Աստուած ողորմիցի. ամէն: Գրեցաւ թիվ ՌՃ./// (ընշած երկու տառ): Ես գրեցի՝ Ըստէփանէ, եմ վարպետս Օհանէսի կշտին:

5. 1ա (ԺԹ. դ., անարուեստ նոտրգիր) Յիսուսի Քրիստոսի ծառայ ըՍտէփանէս, Յիսուսի Քրիստոսի ծառայ Յարօն:

6. 3ա (1848 թ., շղագիր) Ի 1848ի, 11 նոյ[եմբեր]ին յիշատակ ետ զայս գիրք Սանահնու նորակառոյց ուսումնարանին Աղապարոն Գէորգն (՞): Ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ զաւակաց:

7. 1ա (1857 թ., շղագիր) Ընթերցայ 1857 ամի, 20էն մայիսի ց15ն յունիսի: Աւետիք Սիւսկին (= Սիւսեցի՞):

8. 1բ (ԺԹ դ., շղագիր) Յարութիւն վարդապետ Աղանեան:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ Տբ ութանկիւն շրջանակ, բուսական ոճաւորմամբ, սեւ թանաքով «Յիսուսի ծառայ Միքայէլ»:

ԳՐԶԱՓՈՐԶ 1ա արգդ, 1բ՝ (նոտրգիր) «Ասլան գաւլընէ, Պօղոս Պետրոս, դատաստանաօդ, Այբըն ասէ օրինակ այ ուսուցանէ մեզ համարձակ մանուկդ: Մեզ բարեխօս լերո՛ւք սիրով առ տէր Յիսուս, աղէրսելով ի փորձանաց զմեզ փրկելով, յանշէջ հրոյն ազատելով»: 2ա՝ (նոտրգիր) «Ճառընտիր, ա բ գ... եւ օ ֆ եւ Աստուած, ձեռամբաւ, յիշատակ է տէր սուրբ գիրք»,

2բ «աբբբ, ֆֆֆ, դատաստանար, դատաստանար, ճառ գանազան ասացեալ նախահարց, ճառընտիր գիրք», 8բ՝ ԱԲԳԳ: 106բ (բոլորգիր, 132բ եւ 183բ յետագայ յիշատակագրութեան գրչութեամբ) «Այսպիսի անճառ լուան ծագում ի փրկութեան»:

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ 2բ բուսական 4 զարդանախշ:

ՆՇՈՒՄ՝ Ա. փեղկի կազմաստառին՝ «Սարգիս Զալա-լեան, Հ^մ 21», Աս՝ «Հ^մ 126/2601. Սոյն ձեռագիրը համապատասխանում է Գէորգեան հաւաքածուի Հ^մ 126ին եւ ոչ Հ^մ 125ին: Գէորգեան Հ^մ 125ը համապատասխանում է մեր Մատենադարանի Հ^մ 7314 ձեռագրին»: «ՌԼԶ.-ից առաջ, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2602

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Յ

ԺԳ. դար

Տէս Ներսէս Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 142-8:

Բ. 213բ-33բ **Խաւաթ Եւրոզինէսի*** (= Որոզինէսի), Յերգու երգոցին մեկնութիւն – Հարսնն ասէ. Համբուրեցէ զիս ի համբուրից բերանոյ իւրոյ... զի ամենայն նմա զիւրին է որպէս եւ կամի. նմա փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն:

* «Եւրոզինէս» բառից յետոյ յետագայ գրչութեամբ, սեւ թանաքով աւելացուած է «եւ Ներսեսի»:

Գ. 306բ-58բ Մեկնութիւն երգ երգոցի հոգեխառն իմաստապատում առնն Սողոմոնի, որդոյ Դաւթի, արփայի Իսրայէլի, զոր արարեալ է տեառն Գրիգորի ներանձնաւոր քահանայի [Նարեկացոյ], հոգեւոր վարժապետի որդոյ տեառն Խոսրովա, զոր քրիստոսասէր արփայն Հայոց Գուրգէն սակս իւրոյ աստուածեկեղորսեանն եւ ընթերցասիրութեանն ցանկացեալ այսմ տառի, մեծաւ աղաչանաւ խնդրեալ ետ մեկնել զառակս փեսայի եւ հարսին, որ բացայայտի մեկնութեամբ ի Քրիստոս եւ յեկեղեցի

Տէս ձեռ. 1104, 48ա-116ա. [Նախերգան]/306բ-10ա: ա/310ա-1բ: բ/311բ-58բ: Յիշ. հեղինակի/358բ (վերջը թափուած «...եւ զայն ամենայն այսպիսեաց բանից տուփականաց եւ սրտից խողտանաց///»):


ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳՈՅԻ

1. 149բ (կազմողի, ԺԵ-ԺԶ դդ., անարուեստ նոտրգիր) ՌՎ եղբայր, Դ. Թուխտ շրջես եւ ապա ընթերցի՛ր զկարգ բանիդ: Եւ երբ զայն վճարես, դարձի՛ր զզիմաց Թուխտ շրջես՝ եւ գտանես զկարգն: Եւ յորժամ Բ. Թուխտ վճարես, դարձի՛ր եւ զզիմաց Թուխտ զընթերցի՛ր, զի ի կազմելն շրջունք է եղեալ:

2. Պտուկ-պհպնկ Բա (1632 թ., անարուեստ նոտրգիր) Մեղա Աստուծոյ, յամենայն ժամ: Հաստատեց՝ եց>իր ի Տէր տէր Անդոնն, որ եկաւ քաղաքն Թվականին ՌԶԱ. (1632):


ՆՇՈՒՄ՝ Մէջքին փակցուած թերթիկին՝ «Ներս. Լամ// Մեկնութիւն//», Աս՝ «Հ^մ 140/1602, ԺԳ. դ., Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս», 9բ-10ա, 21բ-2ա, 40բ-1ա, 54բ-5ա, 73բ-4ա, 96բ-7ա, 121բ-2ա, 143բ-4ա՝ «Գրիգոր վարդապետին է»:

ԹԵՐԹ՝ 358: ՊՐԱԿ՝ Ե-ԼԵՒ12 (Ե՝ 8, Ը, ԻԲ, ԼԵ՝ 10, Թ, Ժ, ԺԵ-ԺԸ՝ 11, ԻԶ՝ 14): ՆԻԻԹ՝ թուրք: ՄԵՆՈՒԹԻԻՆ՝ 25x17: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (20,5x12,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 29ա): ՏՈՂ՝ 34, 35: ԿԱԶՄ՝ ծաղկաթուղթ, միջուկը ստուարաթուղթ, մէջը՝ կարմիր կաշի, աստուղթ թուրք: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա. + Գ, սպիտակ, չգրուած թուրք, մասն կազմաստառի:



Նմուշ 29ա

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – ձառ (՞): ԺԱ. դ.: 2 (Բ-Գ), վերջում, ստացուած մէկ թերթի ընդայնակի ծալումով. եզրահատուած բնագիրը վնասուած: Մագաղաթ, 24,6x16,8, երկսիւն (24,6x15,5), ուղղագիծ երկարագիր (Բա), տող՝ 15: Կարդալ՝ Բա-Գբ-Բբ-Գա՝ «// է վտանգ վարկս յապաղումն ոչ գմանն զինչ խոնարհեցոյց... Այլեւ այսման սոց// լեաց պտուղ եւ արմատ ա// սա բաւանդակ զբազմա// նկանցն նուիրեա// ով մարց եւ քահանայ//»:



Նմուշ Բա

ՎԻՃԱԿ՝ բարար. Ա. փեղկը մէջից մասամբ անջատուած, մէջի կաշին, ծաղկաթուղթը մաշուած, վնասուած, Ա. եւ Բ. փեղկերի եզրերը վնասուած, սկզբից եւ վերջից թերթեր ընկած, Ա-Գ. պրակներն ընկած, թերթերը մասամբ բամբակակալած, ք. 14-5, 106, 213-4, 245, 258-9, 358՝ հիմքից մասամբ պոկուած, ք. 39-57, 80-110, 205-13, պատառիկ-պահպանակը կծկուած, խոնացած, կեղտոտուած, եզրերը վնասուած, ձեռագրի կարերը թուլացած, հիմքերի մօտ կեղտոտուած, թերթերին աղտոտուածութեան գանազան հետեւեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. 1ա-306բ [Ներսիսի Լամբրոնացոյ Մեկնութիւն բանիցն Սողոմոնի]


Տէս ձեռ. 1141, 2բ-305բ. Ա/1ա-139բ: Յոջբ./չիբ: 1/1ա-139բ (սկ.՝ «սրբոցն, երկնից երկին, ուր ի պատկեր աստուածութեանն աթոռոյ կայր...», թ. 112-3-ի միջեւ մէկ թերթ ընկած, թերթի): Յիշ. հեղինակի/106ա: Բ/140ա-213բ: Յոջբ./140ա: 1/140ա-213բ: Յիշ. հեղինակի/213աբ: Գ/233բ-306բ: Յոջբ./233բ-4բ: 1/234բ-306բ: Յիշ. հեղինակի/306բ:

2603

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Յ

ԺԳ. դար (1265ից յետոյ)


ԳրիՉ՝ Զաւէնս: ՄՏԱՅՈՂ՝ Ստեփանոս, որդի Տարսայիճի: ԹԵՐԹ՝ 342+1 (կրկն.՝ ք. 276). շգրուած՝ 1ք, 343ք: ՊՐԱՎ՝ 1+Ա-ԻԹx12 (Ա, ԻԳ՝ 10, Գ՝ 11, ԻԳ՝ 20, ԻԵ՝ 3): ՆԻԻԹ՝ թուրք: ՄԵՄՈՒ-ԹԻԻՆ՝ 23,7x16,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսին (20,5x12,5): ԳԻՐ՝ բոլոր-գիր (նմուշ՝ 17ա): ՏՈՂ՝ 31: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ մուգ կարմիր կաշի, դռնակով, երեւական կապիչով եւ գամով, միջուկը տախտակ. աստաղը կապոյտ կտաւ, դռնակինը՝ դրոշմագարդ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր:



Նմուշ 17ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կ ի ս ա խ ո ռ ա ն ՝ 2ա: Ճ ա կ ա - տ ա զ ա Ր Պ՝ 49ա: Լ ու ս ա ն ց ա զ ա Ր Պ՝ բուսական (2ա): Զ ա Ր Պ ա զ ի Ր՝ թղնագիր (2ա), հանգուցագիր: Գ ո յ ն ե Ր՝ կարմիր:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան քառ Մարկոսի, Թ. 8-18: Թ. դ.: Ա+Բ: Ստացուած 1 թերթի ընդլայնակի հատումով եւ եզրահատումով: Մագաղաթ, 23,2x15, երկսին (17x12,5), բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Աք), տող՝ 6, 9: Կարդալ՝ Բք-Աա-Բա-Աք. «Բայց յորժամ որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ... Ո՛վ ազգ անհաւատ, մինչեւ յե՛րբ իցեմ ընդ ձեզ»:



Նմուշ Աք

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նախկինում եղել է խիստ փայլալուծ, յետագայում նորոգուել է վնասուած տեղերը նորից եւ գրուել, Ա. փեղկի երեք գամերից մէկը կտորուած, երեք կապիչներից մէկն ընկած, երկրորդը՝ կէսից պոկուած, մէջտեղինը՝ մաշուած, վնասուած, դռնակը վնասուած, մէջի ստորին մասի կաշին մասամբ թափուած, լուսանցակողերը գունաթափ, պատառիկ-պահպանակները կծկուած, խունացած, եզրերը վնասուած, վրան ցեցի անցեալ, պատառիկ-պահպանակ Բք-ին՝ կապիչների արտասպառած հետերը, ք. 1-16, 35-42, 315-42՝ ցեցի անցեալ, ձեռագիրը խոնավութիւն տեսած, թերթերին սնկի եւ աղտոտուածութեան զանազան հետեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. 2ա-294ք Տեսութիւն Առակաց Սողոմոնի՝ Ներսիսի եպիսկոպոսի Տարսւնի, ի թւականի հայոց ՈՒՁ. (1197) աւարտեալ

Տէ՛ս ձեռ. 1141, 2ք-305ք: Ա/2ա-157ք: Նխ/2ա-48ք: Մեկն/49ա-157ք: Յիշ. հեղինակի/127ք: Բ/158ա-224ա: Յոչք. /158ա: 1/158ա-224ա: Յիշ. հեղինակի/224ա: Գ/224ք-94ք: Յոչք./224ք-5ա: 1/225ա-94ք: Յիշ. հեղինակի/294ք:

Տէ՛ս ներսէս Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 142-8:

Բ. 295ա-341ք Հոգիապայծառ սուրբ հաւուն Վարդանա լուսատւ վարդապետի արարեալ՝ Համատաւան մեկնութիւն Երզն երգոյն, պարզ եւ դի[ւ]րահաս. աւգնեա՛ Հոգիոյ Սուրբ

– 295ա-7ա [Յառաջաբանութիւն] – Նմանեցաւ արքաութիւնն երկնից գանձի ծածկելո... եւ եկեղեցոյ հարսնացելո Աստուծոյ, որ ասէ յառաջինս այսպէս:

ա. 297ա-341ա Համբուրեցէ զիս ի համբուրից բերանո իւրոյ... եւ յամենեցուն քեզ շնորհակալութիւն, գոհութիւն, փառք եւ պատիւ եւ արհնութիւն յաւիտենից յաւիտեանս:

325ք Ստ. լսում ուղղանկիւն շրջանակի մէջ գրուած է «Մինչեւ ցալս վայր Գրիգորի Նխասցոյն է»:

– 341աք [Յիշատակարան հեղինակի] – Իսկ դու, եղբայր մեր, մշակող մորենեաց եւ աղտաղտ անբուսաբեր վայրաց, անուշ ճաշակ մեզ յարածամ... եւ ի քեզ եւ ի մեզ, եւ ի մեր երախտաւորս յամենայն, յաւիտեանս եւ յաւիտենից յաւիտեանս. ամէն:

341ք Ի թուիս ԶԺԳ. (1265) եղև մեկնութիւն Երզոյ երգոյ ի Վարդանա գիտնականի ի տիեզերալոյս եւ յիմաստուն վարդապետէ, յաստուածամերձ սուրբ ուխտս Հաղբատա, ընդ հովանեաւ Սուրբ Նշանիս փրկութեան մերոյ Հար եւ հօ(=աւ)աքողի որբութեանս մերոյ, ի պատրիարգութեան Հաոց տեսուն Կոստանդեայ եւ Հերմո պսակաւորին մերոյ եւ յարհեպիսկոպոսութեան տէր Յովանիսի, զորս խնամեցէ Քրիստոս:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

341ք Փառք Սուրբ Երրորդութեանն, համագո միութեանն եւ եռատրոհ անձնաւորութեանն այժմ եւ յանվախճ[ա]ն յաւիտեանս:

157ք Զերջանիկ եւ զհանճարեղ նորընծա սուրբ րաբունին՝ որդի մեծի իշխանին Տարսախիճին զՍտեփանոս՝ զստացիչ սուրբ գանձարանիս յիշեցէ՛ք ի Քրիստոս, եւ զհարագատան իւր՝ զէլիկումն եւ զՓախարաղալայն եւ զՉալալն պահեցէ Քրիստոս ընդ երկայն աւուրս. ամէն:

224ա Ընդ նմին եւ զզառածեալս մեղաւք զանարժան ծրիչս Զաւէնս եւ զձնողսն իմ եւ զամենայն մերձակայսն. ամէն:

294ք Աստանաւոր դարձեալ վերատրեցի գոհութիւն եւ փառք յամենայն եղական բնութեանն՝ եոիցն ի միակ բնութիւն անհատ անշատմանն եւ երբեակ եզակին, որ զիմ ազկազկ եւ փանաքի անպատու[ու]թիւնս արժանացոյց տեսանել զլրումն աստուածախաւս եւ մեղսաքաւիչ լուսաւոր տառիս:

48ք (ստացողի) Տէր աստուած տացէ իմաստութիւն եւ հանճար նորընծա սուրբ րաբունոյն՝ որդո մեծի իշխանին Տարսախիճին Ստեփանոսի եւ թողցէ զ[յ]անցանս մար իմոյ, որ եւ փոխ[եցեալ] ի Քրիստոս:

157բ (ստացողի) Աղաչեմ եւ ես՝ մեղապարտս եւ անարժան փցուն ծրիչս Զաֆնոս, խնդրել թողութիւն մեղաց իմոց:

224ա (ստացողի) Զգեղեցիկ ծաղիկն եկեղեցոյ եւ զբրիստոսապսակ նորընձա սուրբ բաբունին զՍտեփանոս յիշեցէ՛ք առաջի անարիւն զենմանն Քրիստոսի, եւ զծնողսն իւր զիշխանաց իշխանն զՏարսափնն եւ զմեծահաւատ մայր իւր զԱրուզիաթունն. ամէն:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 1ա (1513 թ., անարուեստ բոլորգիր) Ի ԶԿԲ. (1513) թվին [ե]ս՝ Կարապետ սուտանուն աբեղայ եւ սիրայկան եղբայրն մեր տէր Յոհաննէսն, ելաք ի դրանէն Վարագա Սուրբ Նըշանին եւ եկայք ի ծառայութիւնն տիեզերայլոյս վարդապետին Ղուկասի ի Սուրբ Էջմիայծնին եւ զձուակաց գիրքս դաս հրամեաց, եւ Աստուած զինքն խաղաղութեամբ պահէ ըն[դ] երկայն աւուրս. ամէն: Եւ ի հայրապետութեան տեառն Սարգսի, որ բազում երախտիք ունի ի վերայ մեր՝ քան զչափն առաւել. արարիչն Աստուած խաղաղական կենալք պահէ. ամէն:

2. 342ա (1561 թ., անարուեստ նոտրգիր) Զամալն է: Ես՝ Կարապետ եպիսկոպոսս Վարագեցի, եւ իմ ընկերաւքս տէր Յակոբ Արնըշեցին եւ տէր Յակոբ Սաղ-

մոսավանեցիւն ի միասին զգիրքս կարգացինք մաւտ Գրիգոր վարդապետն, զոր Տէր Աստուած փոխարէն զուր երկնից արքայութիւնն պարգեւէ. ամէն: Ի թվականիս հայոց Ռժ. (1561), ի յամսուս Հոռի Գ. յայսմ աւուր ուրախացեալ էինք ընկերքս ի միմիանց. ելաք ի Կարբու եւ գնացաք ի Քանաֆեռ: Խիստ սէր կայ ի մէնջ մեր. Աստուած աջողէ, որ յէս սէրս հաստատ կենանք: Այլ ով զգիրքս կարդա, Աստուած նոցա առաջնորդէ, եւ զմեզ յուր սուրբ յաղաւթքն յիշէ: Ես՝ տէր Բարսէղ, ես՝ տէր Կ[արապետ]:

3. 1ա (ժԼ. դ., անարուեստ բոլորգիր) Գիրքս Սաղմոսավանիցս է: Մարտիրոս վարդապետս տարայ անամաթ (= ամանաթ) որ գայ:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1բ սեւով շրջանակ, մէջը թագապսակ զինանշան, եզրերին՝ “Πεϋ. Αχαμυιχσκου γραδσκου πομπιμα”:

ԳՐԶԱՓՈՂՁ՝ Աա (բոլորգիր). «Որ սիրէ զխրատ ի խաղաղութեան», 1ա՝ «ծասն, անանեաց որոն», 342բ (գրած-շնչած) «ս սուտան, ցաշակերտ»:

ՆՇՈՒՄ՝ Աա՝ «Հ^մ 141/2603», 1ա՝ «ԺԳ., Մ[ետրայ] եպ[իսկոպո]ս», 1բ՝ «Հ^մ 186/4», կազմի մէջքին փակցուած թերթիկին՝ «Ներս. Լամբրոն., Մեկնութիւն առակացն Սողոմոնի (3)»:


2604

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Յ

ԱՐՄԵՆԻ ԱՆԱՊՍՏ (Ա.)

ԳՐԻԶ՝ Աւլին (Ա., 37ա-201բ), Յովանէս (Բ., 1բ-36բ, 202ա-22ա): ՍՍԱՅՈՂ՝ Երեմիա (Ա.):


ԹԵՐԹ՝ 222+9 (ենգապատիկ՝ 1ա-1ժ, կրկն՝ ք. 30. ք. 51, ք. 101, ք. 127). չգրուած՝ 1ա-գ: ՊՐԱԿ՝ 6+Ա-ԺԹx12 (Բ՝ 11, ԺԶ՝ 13, ԺԹ՝ 9): ՆԻԻԹ՝ թուղք: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 25x17: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն (20,5x12,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 17ա): ՏՈՂ՝ 38-39: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի, միջուկը տախտակ. աստառը կարմիր եւ վարդագոյն մետախ. լուսանցակողերը կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ + ԵԶ՝ դեղնասուն չգրուած թուղք:



Նմուշ 17ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ – Լ ու ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական: Գ ո յ ն ե ր՝ կարմիր:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան ըստ Ղուկասու, Ի. 34 – ԻԱ. 6: Թ. դ.: 2՝ Գ-Գ, սկզբում, ստացուած 1 թերթի ընդլայնակի ծալումով, եզրահատուած, Գբ եւ Դա երեսների թանաֆն ամբողջութեամբ թափուած: Մագաղաթ, 24,7x14,7, երկսիւն (21x11, 21x14,5), բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Դբ), տող՝ 8, 10: Կարդալ՝ Գա-Դբ-Գբ-Դա. «[Պատասխանի ետ նոցա Յիսուս՝ եւ ա]սէ. Որոյիք աշխարհիս այսորիկ... Եկեացեն աւուրք, յորս ոչ թոլոցի այլք քաւ ի քաւի վերայ, որ ոչ փակեացի]»:



Նմուշ Դբ

ԶԵԳ. – 1295, ԶԼ. – 1481

ՎԻՃԱԿ՝ բաւարա. եղել է խիստ փայլալուծ. Յովհաննէս գրիչը 1481 թ. լրացրել է սկզբի եւ վերջի (1բ-36բ, 202ա-22ա) թերթերը, որոնք, հաւանաբար այդ ժամանակ փայլալուծ կամ թափուած են եղել, պատառիկ-պահպանակները վնասուած, խումացած, ցեցակեր, լուսանցակողերը գունաթափ, ձեռագիրը խոնավութիւն տեսած, թերթերին աղտոտուածութեան զանազան հետքեր. 1964 թ.ին, նորոգուած, վերակազմուած հին ու նոր կաշիների միացումով, հին եւ նոր կազմաստառով:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. 1թ-186բ [Մեկնութիւն Հնգամատենին՝ արարեալ Վարդանայ վարդապետի Արեւելցոյ]

Տե՛ս ձեռ. 1139, 2ա-102բ. 1/1թ (խորագիր՝ Նախադրութիւն Մերնորոցն Տեսութեան սրբոյ հարն Վարդանայ առ խնդրաւուն մատենիս): ա/1թ-3բ (խորագիր՝ Ի խնդրոյ տեսան Համազասպայ եւ վարդապետին Գրիգորի Հաւաքումն մեկնութեան սրբոց հայրանց եղիշէի, Յովհաննու եւ զոր տեսանէք յանցնիրսն ի տառապեալ ոգւոյ Վարդանայ): ք/3բ-102բ: 2/102բ-3ա (խորագիր՝ Նախադրութիւն ելից): ա/103աբ (խորագիր՝ Գպրութիւն ելից): ք/103բ-142բ: 3/143ա (խորագիր՝ Ղեւտական դպրութիւն): ա/143բ-53բ: 4/153բ-4ա (խորագիր՝ Թիւք): ա/154ա-62բ: 5/162բ-3ա (խորագիր՝ Երկրորդ Արեւնք): ա/163ա-85բ: Յիշատակարան հեղինակի/185բ-6բ:

Բ. 186բ-7բ [Բառք] – Կողակ – սիւնածեւ... Եւ Լ. լայն, որ է եթանասուն:

Հնգամատենից քաղուած բառերի կամ ձէսերի բացատրութիւններ:

Գ. 188ա [Վասն Յովսէփայ] – Դանիէլի. Իսկ ընդէ՛ր ասէ սաղմոսաւղն, թէ վկայութիւն եդ Աստուած Յովսէփոս... Որպէս եւ Քրիստոս հացին կենաց զամենայն աշխարհի՛ հաւատացելոց դարմանէ եւ կեցողցանէ:

Եգիպտոսում Յովսէփի կատարած գործերի մասին:

Գ. 188բ-222ա Սրբոյն Եփրեմի Մեկնութիւն Շմուէլի
1. 188բ-209ա Գիրք Շմուէլի, որ պատմեն զԵղկանայ եւ զԵրկու կանանց նորա
– 188բ-9ա [Յանկ գրոյս] – Գիրք Շմուէլի... Գրեալ է ի Դպրութեանն Շմուէլի:

ա. 189ա-92բ [Մեկնութիւն Շմուէլի] – Եւ ի սկիզբն բանից իւրոց այսպէս ասաց: |189բ| [Ա. Այր մի] էր յԱրիմաթեմա... Զի հանդերձ առաջնորդութեամբ ժողովրդեանն եղիցի մարգարէ Տեառն:

բ. 192բ-7ա [Բ.] Եւ կարգեցաւ ճակատեցաւ ի մարտ պատերազմի Իսրայէլ... Իսկ իբրեւ անդոյրեցոյց Շաւուղի եւ անց ի նմանէն այսն շար, դարձաւ նա առաջնորդութեամբն Աստուծոյ ի տուն հար իւրոյ:

գ. 197ա-202բ [Գ.] Ի սմին ժամանակի եղեւ մարտ պատերազմի... Որ ոչ մերկեաց [զս]ուսեր իւր ի վերայ պարանոցի արքային:

դ. 202բ [Դ.] Ողբ Դաւթի վասն Շաւուղի եւ Յովնաթանու – Եւ արդ, ողբս առեալ Դաւթի... Վասն զի նոքաք յաղթէին մանկունքն ժողովրդեանն իբրեւ զինուք պատերազմի թշնամեաց իւրեանց:

ե. 202բ-5բ [Ե.] Հա[ր]ց Դաւթի ի Տեառնէ... Եւ չոգաւ Աստուած զԱբիսողոմ, եւ զերեսս արքայի նա ոչ ետես:

զ. 205բ-7բ [Զ.] Անց գնաց Աբիսողոմ ի Քերթն... Եթէ իբրեւ հաշտեցաւ Աստուած ընդ երկրի, թաղեցան ընդ Շաւուղի եւ Յովնաթանու:

է. 207բ-9ա [Ե.] Եւ սկսաւ ասել Դաւթ առաջի Տեառն... Եւ ի ձեռն պատարագացն Դաւթի արգելաւ մահն ի դառնացող ժողովրդենէ անտի: Կատարեցաւ մեկնիչն Թագաւորութիւն Սամուէլի:

2. 209ա-22ա [Եփրեմի Աստուայ] Մեկնիչ Թագաւորութեանն

– 209աբ [Յանկ գրոյս] – Դպրութիւն թագաւորաց գրէ զամս կենաց թագաւորաց... Զայստսիկ եւ որ սոցին նման են, գրեալ են ի նմա:

ա. 209բ-12ա [Ա.] [Մեկնութիւն] – Եւ ի սկիզբն մատենագրութեանն իւրոյ այսպէս ասաց. Եւ արքայն Դաւթ, ասէ, ծերացաւ... Ահա գրեալ են ի դպրութիւն պատգամաց Սողոմոնի, այսինքն՝ ի դպրութիւն առակաց նորա, որ կորեանն հրով:

բ. 212ա-8բ [Բ.] Թագաւորեցուցին ժողովուրդն զՀռոբովամ... Եւ կատարեսցի մարգարէութիւն նշխայի մարգարէի:

գ. 218բ-22ա [Գ.] Յետ այսորիկ թագաւորեցաւ Ախագիա... Եւ [իշ]ոյց ի գերութեան զժողովուրդն յուրաեան: Կատարեցաւ Մեկնութիւն թագաւորութեանն շնորհիւ Աստուծոյ:

Տես Սրբոյն Եփրեմի Մատենագրութիւնք, հտ. առաջին, Վենետիկ, 1836, էջ 351-460:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 162բ (Աւշին գրչի) ԶԵՐԵՄԻԱՅԱ ի Տէր յիշեցէ՛ք, աղաչեմ, եւ զիման ամենայն:

186բ Դարձեալ լիալիր բերանով արհնութիւն Աստուծոյ, որ արժանի արար զիմս անմաքրութիւն պիտականուն Երեմիա հետեւել բանի յանապատիս Արմենի, առ որս Գեորգեայ վարդապետի, ի թուիս հայոց Չե. (1291) եւ զկնի Դ. ամի (1295) լրմանն ցանկացաւ եղեալ նախամարգարէին Մովսէսի մարգարէութեանն Մեկնութեան, զոր արարեալ է սրբոց հարցն աստուածամերձից եւ ի մի ժողովեալ երբերջանիկ վարդապետն Վարդան: Եւ ետու գրել զսա ձեռամբ Աւշնի, ի հայրապետութեանն Հայոց տեառն Գրիգորի, [է]ւ ի թագաւորութեանն Հայոց [Հ]եթմոյ բարեպաշտի: Արդ, [յ]երեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ [գրոյ]ց եւ աւգոսիք կամ արինակէք, վասն սիրոյն Քրիստոսի յիշատակի արժանի արարէ՛ք զանարժանս զԵրեմիա եւ զձնաւղս իմ եւ զամենայն հաւատացեալս ի Քրիստոս եւ յորոց արդ[ե]ա[ն]ց ետու զսա գրել՝ կրկին աղա[չեմ] յիշատակի արժանի առնել եւ մե[ղա]ց թողութիւն հայցել ի Քրիստոսէ:

Նա եւ զսուտանուն գրողակս Աւշնն եւ զձնաւղս իմ եւ իմոցն յիշատակել աղաչեմ, եւ Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց, յիշելեացս եւ յիշողացդ առ հասարակ ողորմեսցի. ամէն:

2. 222ա (Յովանէս գրչի) Զսակաւ աշխատողս՝ զժողս զՅովանէս յիշեց[է՛ք] ի Քրիստոս: Ի թվականիս հայոց ԶԼ. (1481):

«ԶԼ.» թուականը հնարաւոր է կարգաւ նաեւ այլ կերպ, որովհետեւ այդ երկու տառերի վերին մասերը հազիւ են երեւում: Այս յիշատակարանին յաջորդում է 2 տողանոց մի այլ յիշատակարան, որը փորձել են ջնջել. դժուար է ասել՝ ու՞րն գրչի գործն է, թէ՛ յետագայի. կարգացում են միայն «Վարդախաթ[ուն] մի լի բեր[ան]» բառերը:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 1է (ԺԶ. դ., անարուեստ նոտրգիր) Ա<ա>յսոքի՛ք այսպէս լուծանի. [յոր]ժամ թագօրն հեռա<ա>նայ յ[Աստուծոյ պ]ատվիրանացն, հրամայէ զն// անդելոցըն գործել զայն, այլ մանժանդ ոչ է պարտ եւ ոչ յանձն առուլ հնազանդ մեռանել: Եւ այս յայտ է ի սրբոց մարտիրոսաց, որք ոչ հնազանդեցան հզօր թագօրաց եւ այն ոչ եղեւ նոցայ մեղադրութիւն, այլ մանժանդ պատիւ եւ երանութիւն, նոյնպէս եւ զամենայն առաջնորդաց անհնազանդութիւն: Յորժամ առաջնորդն հեռանայ յ[Աստուծոյ պատվիրանացն եւ հրամայէ գործել

զանարժանս, ոչ է պարտ հնազանդել հոգեւոր առաջնորդէ, եւ թէ մա[նօանդ] որ եւ քանզի ոմանք ի մերոց ա[ւ] աջ համարեցան զմեզ անհնազանդ լինել եպիսկոպոսիս մերոյ վա[ւ] արկ եղեւ ինձ գրել զայսպիսի[ւ] | 1բ | // որ ես՝ անպիտանս յամենայ[ւ] սոսկանուն ուրեմութան[ւ] ին իմոյ պատշաճօր հնազանդութիւն իմ, զոր ունիմ առ Տէր, արքեպիսկոպոսն ոչինչ առտաքոյ հր[ամ]անաց ի խորհուրդ սուրբ եկեղեցոյ եւ քանզի ոչ է սրբութիւն դորա առաջին եպիսկոպոսին, եւ ոչ ես անպիտանս եմ առաջին կրօնօր, աստ եւ էին այլք յառաջ քան զմեզ, այլ եւ կարծ[ւ] գրով հաստեալ դաշինս ունին ի մէջ իւրեանց եպիսկոպոս եւ քահանայք եւ ժողովուրդք եւ կրօնօրք, որ ի վանօրայս, զոր եւ կարծեմ թէ կամիցի որ լուծանել, ոչ կարէ՛ որ կողմն եւ իցէ: Եւ արդ, եթէ ասիցեմ, թէ այսպէս է աշխարհին Հայրոց յարեւելս, այլ եւ ոչ վայել է այլ աշխարհաց սովորութիւն յայլ աշխարհ՝ առնել, այլ ըստ սովորութեան կցղզոյս եւ ըս[տ] դաշանց, զոր արարեալ են ի մէջ նոցայ եպիսկոպոսք եւ քահանայք[ւ] ք եւ կրօնօրքն նոցն[ւ] մ եւ ես եպիսկոպոս[ւ] այլս[ւ] ապ[ւ] ամ[ւ] մ:

2. 222բ (1576 թ, անարուեստ նոտրգիր) Գարձեալ յիշեսչիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՍարգիս արեղան, որ ըստացաւ զայս սուրբ գիրքս ի հալալ ընչից իւրոց ի ժ. (10) ոսկի ի Սեբաստիայ եւ իբեր ի վեր յիշատակ իւր եւ ծնաւոց իւրոց հարն՝ Աղանանին, եւ մարն՝ Խելիսաթունին, եղբարցն՝ Ներսիսին եւ Խալիֆին, Էմիսաթին, փոխեցելոյ առ Քրիստոս, եւ Շաղպարին, եւ քվերցն՝ Թուրվանդին եւ Մարգարտին, եւ

քվերորդուն Վարդանէսին եւ մղտեցի Վարդիսաթունն, որ ետուր գրոցս գինն ժ. (10) շահի, եւ հարսնեացն Կուլադին եւ իւր դստերն Ինախին փոխեցեալ առ Քրիստոս: Ոչ ոք չունի հրաման ծախելոյ կամ գրաւելոյ, այլ կարդալոյ եւ արինակելոյ: Եւ ով ոք անդգնի՝ ծախէ կամ գրաւէ, աւձէն մինչեւ ի նեոն անիծեալ լիցի: Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն: Ի թվին Թ. եւ ի ԻՅ. (1576):

3. 222բ (1643 թ., անարուեստ բոլորգիր) Գարձեալ յիշեսչիք զվերջին ստացող սուրբ տառիս, որ կոչի Մեկնիչ Արարածոց զՄիխայէլ աստուածաբան վարդապետն՝ առաջնորդ Սուրբ Նախայվկային, որ ըստա[ւ] զսայ ի հալալ արդեանց եւ ետ յիշատակ անջնջելի ի դուռն Սրբոյ Նախայվկային թվին ԹԻՂ. (1643) ամին: Ով ոք ծախէ կամ գրաւէ, վերոյգրեալ նզովիցն ներքոյ լիցի: Բայց ընթերցողքն, օրինակողքն եւ օգտողքն եւ որք վայելեն, յիշեսցեն զիս միով Հայր մեղայիւ, հանդերձ ծնողօք իմով, եւ դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի:

ԳՐԶԱՓՈՐԶ Պտուկ-պահնկ Գբ՝ «աարդարս ունիցիմ զայս ունում ասաց Արիստակէս նկակ եւ Վարդան ասա»: 1գ՝ «աբգգեգէրթէքն»: 1գ՝ «Արարածոց մեկնիչ է»: 1է՝ «Ես՝ յարեւելից որ[ւ] Աստուծոյ ամ[ւ]»:

ՆՇՈՒՄ՝ կազմի Ա. փեղկին, Աա, 1ա, 1ե, 1է՝ «2604», Գա՝ «Հմբ 142/2604», Եբ՝ «Վերակազմուած է հին ու նոր կաշիների միացումով, հին եւ նոր կազմաստառով: Գլխ. վերականգնիչ՝ Ա. Խաչատրեան. Երեւան, 1964»:


2605

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵՔԵՐԱՆԻ ԵՒ ԵՓՐԵՄԻ ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ԳՈՐԾՈՅ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՄՐԳՈՒՈՒ ՎԱՆՔ (ԲԱՂԷՇ)

ԳՐԻԶ, ՍՏԱՅՈՂ՝ Բարսեղ:

Թերթ՝ 211+4 (թ. 1ա-1բ՝ չորիցս, կրկն.՝ թ. 69). չգրուած՝ 1ա-գ: ՊՐԱԿ՝ Ա-ժԸx12 (ժԸ՝ 11): ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 25x18,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին՝ 25x18,5 (Յա), երկսին (19,5x14): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 6ա): ՏՈՂ՝ 29: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի, դռնակով, երեք գամով եւ մէկ կապիչով, միջուկը տախտակ. աստառը շերտազարդ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր:




Նմուշ 6ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ – Դուկաս անտարանի՝ 2բ: Կ ի - ս ա խ ու ռ ա ն՝ 3ա: Ճ ա կ ա տ ա գ ա ռ դ՝ 1է: Լ ու ս ա ն ց ա - գ ա ռ դ՝ բուսական, թոչնային, տանաւ, խաչ, յուշկապարիկ, վարդեակ: Զ ա ռ դ ա գ ի ռ՝ հանգուցագիր, թոչնագիր: Գ ո յ - ն ե ռ՝ կարմիր:


ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՇՊԱՆԱԿ – ճառ ինչ Յաղագս Աստուծոյ: ԱԲ + ԳԻ: ԺԱ. դ.: 2 (ԱԲ) + 2 (ԳԻ)՝ ստացուած երկուսական քերթերի երկայնակի ծալումով, եզրահատուած վերելից (Ա-Բ) եւ ներքեկից

Ռեկ. – 1598

(Գ-Դ): Մագաղաթ, 25x18, միասին (ԱԲ՝ 17,7x12,5, ԳԻ՝ 21x12), ուղղագիծ երկաթագիր (նմուշ՝ Բա, Գա), տող 17, 20: Կարդալ՝ Աա-Բբ՝ «Զի ամաչեմ, եթէ շարն կայցէ մնայցէ անխոնարհելի... Երկ խաչակից եղէ Քրիստոսի, այսաւ ընդ նմա փառաւորի: Երկ ընդ նմա մեռայ», Գա-Դբ՝ «Եւ եղիցի նոյն ինքն լիտայ միանգամայն... Զի անցեալ զմայցել խախտեցեալ, որ ոչն թափի»:



Նմուշ Բա



Նմուշ Գա

ՎԻՃԱԿ՝ բարաւար. կազմի մաշուած, երկու կապիչն ընկած,

պատարիկ-պանպանակները կծկուած, լուսանցակողերը գունաբափ, ք. 17 անցք, ք. 122-3, 133-6, 158-9՝ հիմքից մասամբ պոկուած, ք. 194-211՝ ցեցի անցքեր, հիսմեքի մօտ կեղտոտուած, քերթերին աղտոտուածութեան զանազան հետքեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

1է-210ա [Յովհաննու Ոսկեբերանի եւ Եփրեմի Մեկնութիւն Գործոց առաւելոց]

Քարգմանիչ եւ համառօտող՝ Կիրակոս Դրազարկեցի:

– 1է-2ա [Գլխացանկ]. Դրօսիւնիմ Բարոյականաց [Հ]մատաւտ մեկնութեանս [Գ]ործոց առաւելոցն – Ա. Թէ ոչ է պարտ յապաղել ի մկրտութիւն... Ծն. Վասն Պաւղոսի առաքելոյ:

Յաբ Առ խնդրաւուն Համառուատիս տէր Յովհաննէս Աբաւեղբայր եւ եպիսկոպոս նահանգաց աստուածապահ դղեկին Մալեւանի եւ մասին ինչ Բարձրբերոյ, եւ նոյն տեսուչ հոչակեալ ի սուրբ ուխտին Գոնեւոյ, եւ առ հանդիպեալսն մատենիս – Ահա, ո՛վ աստուածասէր հայր իմ եւ տէր, հարկեցուցի խնդիրս քո եւ պատկառելի շուք երեսացդ... եւ զփոխարէնն կրկնապատիկ յառատապարգեւ Տեառնէն ընդունել. ամէն:

Համառօտող Կիրակոս Հռետորի առաջաբանն է:

– 4աբ Վասն վերնագրութեան Գործոց առաւելոցն – Արդ, ներելովն Աստուծոյ տեսցուք զվերնագիրս... զի ազնականութեամբն Աստուծոյ ի պատշաճաւորսն մեզ ի փոյթ պնդութեան գործոյ յարեցուց:

ա. 4բ-10բ [Ա.] Ի Գործոց առաւելոցն բուն եւ ընդարձակ մեկնութեանց սրբոցն տեսուն Եփրեմի եւ երանելոյն Յոհաննու Ոսկեբերանի այս համառուատ շարանիւտեցաւ, որպէս եւ տեսցես առընթեր բանիցն յանցնիր տեղոջ դրոշմեալ զանուանս սրբոցն, հրամանաւ տեսուն Յովհաննիսի աստուածապան ուխտին Գոնեւոյ առաջնորդի – Գործոցս առաքելոց մատենագիր է Դուկաս աւետարանիչ... Թէ ահա ողջացար, այլ մի՛ եւս մեղանչեր:

բ. 10բ-4ա Բ. [Բան]. Իսկ նոքա մատուցեալ հարցանէին... [Գործք առաքելոց, Ա. 6]: [Մեկնութիւն]. Թուի, թէ մի եւ նոյն իցեն հարցումնս այս... զի շար ոչ է էութիւն, այլ բարոյ յաւժարութեան պղերգութիւն:

գ. 14ա-8բ Գ. [Բան]. Յայնժամ դարձան յերուսաղէմ, յանուանեալ լեռնէն Ձիթենեաց [Ա. 12]: [Մեկնութիւն]. Ե՛րբ, յորժամ լուան, թէ դարձեալ գալոց է... այլ նա ոչ եւս ոչ արդեւ փութացեալ լինէր յայս ինչ:

դ. 18բ-22ա Դ. [Բան]. Եւ ի կատարել աւուրցն Պենդակոստէից... [Բ. 1]: [Մեկնութիւն]. Պենդակոստէն ըստ յունաց յիսնեբեակ ասի... որպէս եւ այժմ ի մէջ անցեալ առ խաչեցաւդն հանդիսաբանէ եւ ասէ:

ե. 22ա-5ա [Ե. Բան]. Արք հրէաստանեայք եւ որ բնակեալ էք յերուսաղէմ... [Բ. 14] Ոչ առորս |22բ| [Մեկնութիւն]. Նախարս... նա հրէիցն փութա Պետրոս հասուցանել զբանն յասելն:

զ. 25ա-8ա Զ. [Բան]. Արք իսրայէլացիք, լուարո՛ւք

զբանս զայս [Բ. 22]: [Մեկնութիւն]. Ոչ է փաղաքշանաց հանդարտագոյն խաւեալս... հաւանեցոյց զխստասիրտն, զոր եւ աստ է տեսանել:

է. 28ա-30բ Է. [Բան]. Լուեալ, ասէ, զայս, զղջացան ի սիրտս իւրեանց... Բ. [37]: [Մեկնութիւն]. Յոյժ զաւրաւոր է հեզութիւն, քան զխստութիւն... եւ լո՛ւր ահա որոց ի կարգիս:

ը. 30բ-2բ Ը. [Բան]. Պետրոս եւ Յովհաննէս ելանէին ի տաճարն... [Գ. 1]: [Մեկնութիւն]. Բազում յոյժ երեւի սոցա միաբանութիւն... ի մեծամեծան ելանել, որպէս փոքր կայծակն ի դիզանել փայտից:

թ. 33ա-7բ Թ. [Բան]. Իբրեւ ետես Պետրոս, պատասխանի ետ... [Գ. 12]: [Մեկնութիւն]. Համարձակագոյն, քան զառաջինն է այժմու հրապարակախաւսութիւնս... գոչ երդնուլ, ուստի լինի ոչ բարկանալ:

ժ. 37բ-41ա Ժ. [Բան]. Եւ մինչդեռ խաւեկին նոքա... [Գ. 1-2]: [Մեկնութիւն]. Տէ՛ս, թէ զհարդ յաճախել սքանչելեացն... ո՛չ ապաքէն ծաղու է արժանի:

ժա. 41ա-4ա ԺԱ. [Բան]. Եւ անտի արձակեալք եկին առ իւրեանցսն... [Գ. 23]: [Մեկնութիւն]. Տէ՛ս զցածուն եւ զիմաստասէր բարս առաքելոցն... վասն այնորիկ ի փոքունցն սկսայ ոչ երդնուլ:

ժբ. 44ա-7բ ԺԲ. [Բան]. Յովսէփ, որ կոչեցան Բառնաբաս... [Գ. 36]: [Մեկնութիւն]. Կրկին պիտից սակս ի մէջ բերէ*... եւ խոստացելոց բարեացն ժամանեցուք շնորհաւք կեցուցչին Քրիստոսի աւրհներկոյն յաւիտեանս. ամէն:

* «բերէ» բառի վրայ շնչելու նշան դրած եւ կողքն աւելացրած «ածէ»:

ժգ. 47բ-50բ ԺԳ. [Բան]. Յարուցեալ քահանայապետն եւ ամենայն, որ ընդ նմայ եւ աղանդն սաղուկեցուց... [Ե. 17]: [Մեկնութիւն]. Յարուցեալ, այսինքն՝ շարժեալ նախանձու... ապրեցոյց զնոսա Գամաղիէ:

ժդ. 50բ-4բ ԺԴ. [Բան]. Յարուցեալ, ասէ, ոմն ի մէջ ատենին փարիսեցի... [Ե. 34]: [Մեկնութիւն]. Սա վարդապետն Պաւղոսի է... պսակացն հասանիցեմք շնորհաւքն Քրիստոսի, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

ժե. 54բ-8ա ԺԵ. [Բան]. Ստեփաննոս, այլ լի շնորհաւք եւ զաւրութեամբ [Զ. 8]: [Մեկնութիւն]. Տեսանես, զի առ եթանսն նա էր նախապատուեալ... պսակացն հասցուք շնորհաւքն Քրիստոսի, ընդ որում Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ փառք յաւիտեանս. ամէն:

ժզ. 58ա-62բ ԺԶ. [Բան]. Եւ մինչ ոչ գոյր նորա որդի, խօսեցաւ Աստուած այսպէս... [Ե. 5-7]: [Մեկնութիւն]. Հայեա՛ց, թէ քանի՞ ամաւք յառաջ է խոստումն... վասն որոյ եկ առաքելից զբեզ:

ժէ. 62բ-6ա ԺԷ. [Բան]. Զայն Մովսէս, զոր ուրացանն եւ ասեն... [Ե. 35]: [Մեկնութիւն]. Յոյժ միաբանի իրքն Մովսէսի... զսոյն եւ մեր ուղղելով հանդերձելոց բարեացն ի փառս Քրիստոսի, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

ժը. 66ա-71բ ժԸ. [Բան]. Եւ լուեալ զայս, զայրանա-
յին ի սիրտս իւրեանց... [Է. 54]: [Մեկնութիւն]. Ահա-
ւասիկ իբրեւ պատճառս իմն առեալ լինէին... զի զթա-
գաւորն երկնից ի ձեռն եկեղեցւոյն ի տուն իւր ընդունի:

ժք. 71բ-6ա ժԹ. [Բան]. Հրեշտակ Տեառն խաւե-
ցաւ առ Փիլիպպոս... [Ը. 26-27]: [Մեկնութիւն]. Ինձ
թուի յառաքելոցն, եւ ոչ յեթանցն գոլ զսա... զոր ըստ
կարգի պատմէ աւետարանիչս:

ի. 76ա-80բ Ի. [Բան]. Եւ էր, ասէ, աշակերտ ոմն ի
Դամասկոս... [Թ. 10-11]: [Մեկնութիւն]. Բազում նշա-
նակա տայ Աստուած Անանիաի... այլ զի ոչ բարեգոր-
ծեցին, դատապարտեցան:

իա. 80բ-4բ ԻԱ. [Բան]. Իբրեւ եկն Սաւղոս յերու-
սաղէմ... [Թ. 26]: [Մեկնութիւն]. Արժան է աստանօր
տարակուսել... ի սոյն եւ մեք վստահասցուք ի շնորհս
Աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

իբ. 84բ-8բ ԻԲ. [Բան]. Այր մի էր ի Կեսարիայ,
անուն Կուռնելիոս... [Ժ. 1-2]: [Մեկնութիւն]. Այրս այս
ոչ էր հրեա... այլ մանաւանդ յետ մահու տացէ քեզ
պտուղ զկեանսն յաւիտեանից:

իգ. 88բ-92ա ԻԳ. [Բան]. Եւ ի վաղիւ անդր յարու-
ցեալ Պետրոս, գնաց ընդ նոսա... [Ժ. 23-24]: [Մեկնու-
թիւն]. Բարիոք յառաջագոյն պատուասիրեալ զարան...
զի մի՛ յանկարծադէպ ինչ վրիպակաւ տուժեցցին զմեծ
պարգեան:

իդ. 92ա-5ա ԻԴ. [Բան]. Եւ մինչդեռ խաւէր Պետրոս
զբանս զայս... [Ժ. 474]: [Մեկնութիւն]. Տէս զԱստուծոյ
տնարէնութիւնն... բացեալ եղեւ նոցա դուռն համար-
ձակութեան առ հեթանոսս քարոզելոյ, ըստ որում ասէ:

իե. 95ա-8բ ԻԵ. [Բան]. Եւ ցրուեալքն ի նեղու-
թենէն... [ԺԱ. 19]: [Մեկնութիւն]. Ոչ փոքր ինչ ուղղու-
թիւն եղեւ... որով մեք իսկ առաւել ի խրախուսեան
լինիմք ողորմութեամբն Աստուծոյ:

իզ. 98բ-103ա ԻԶ. [Բան]. Ընդ ժամանակս ընդ
այնոսիկ արկ Հերովդէ[ս] արքայ... [ԺԲ. 1-2]: [Մեկ-
նութիւն]. Ընդ ժամանակսն ընդ այն ասէ, յայտ է...
տեսանելով քո զգոռոզս եւ զանիրաւս ընդարմացեալս
քնով իբրեւ զմեռեալս:

իէ. 103բ-6ա ԻԷ. [Բան]. Իբրեւ այգ եղեւ, էր խոտովու-
թիւն ի մէջ գինուորացն... [ԺԳ. 18]: [Մեկնութիւն]. Ձի
որ ինչ եղեւն առ նա ի հրեշտակէն... առ եւ ի մաւոյ
օրինակ զժուժկալ պահասցողս, զորոց Դուկաս պատմա-
բանեալ:

իը. 106ա-8ա ԻԸ. [Բան]. Եւ նոքա առաքեալք ի
Հոգւոյն Սրբոյ իջին ի Սելեւկիայ [ԺԴ. 4]: [Մեկնու-
թիւն]. ՅԱնտիոք լինի Պաւղոս ձեռնադրեալ... եւ թէ
փառասէր էս, զաստուածահին սիրեսչի՛ր:

իթ. 108ա-12ա ԻԹ. [Բնաբան. 3] ոտն եկաց Պաւղոս
[ԺԴ. 16]: [Մեկնութիւն]. Արդ, յառաջագոյն ասացե-
լովքն... զի կատարեալ լիցուք փրկեալք ի փառս Քրիս-
տոսի:

լ. 112ա-5բ Լ. [Բան]. Իբրեւ ելին անտի, աղաչէին ի
միւտում շաբաթուն խաւսել նոցա զնոյն բանս [ԺԿ.
42]: [Մեկնութիւն]. Տեսե՛ր զհանձար բանիցն Պաւղո-
սի... որովք զլսաւոսն կարիցեմ նկարել ի պատկերն
Աստուծոյ:

լա. 115բ-9ա ԼԱ. [Բան]. Եւ լուեալ առաքելոցն
Բառնաբայ... [ԺԿ. 13-14]: [Մեկնութիւն]. Տէս զամե-
նայն ինչ ուժգնութեամբ... իբրեւ ի մոխիր թաղեա՛
զհոյրն բարկութեան, զի պսակ առցես յաղթութեան:

լբ. 119ա-22ա [Բան]. Շրջէին ժամանակս ոչ սա-
կաւս ընդ աշակերտսն [ԺԿ. 27]: [Մեկնութիւն]. Ձի
մեծ գոլով քաղաքն Անտիոք... ջանասցուք ապա լաւա-
գունին ժամանել պատուոյ:

լգ. 122ա-8ա ԼԳ. [Բան]. Եւ յետ լուելոյ նոցա պա-
տասխանի ետ Յակոբոս... [ԺԵ. 13]: [Մեկնութիւն]. է
սա եղբայրն Տեառն մերոյ... որպէս ունի պատմու-
թեանս կարգ, ըստ որում ասէ:

լդ. 128ա-33ա ԼԴ. [Բան]. Բայց Պաւղոս եւ Բառնա-
բաս շրջէին յԱնտիոք... [ԺԵ. 35]: [Մեկնութիւն]. Ոչ
վայրապար դեգերին անդ... վասն հանդերձելոցն մե-
ծամեծ խոստմանց, յորոց լիցի մեզ հասանել ի Քրիս-
տոս Յիսուս:

լե. 133ա-6բ ԼԵ. [Բան]. Եւ յաւուր շաբաթու |133բ|
առ գետափն... [ԺԶ. 13]: [Մեկնութիւն]. Տէս դարձեալ
զՊաւղոս ըստ Հրէիցն արարեալ... հայելով յարինակս
ուղղութեան, զոր ունի կարգ բանիս:

լզ. 136բ-9ա ԼԶ. Բնաբան.] Եւ ի մէջ գիշերին Պաւ-
ղոս եւ Շոդա կային յաւալութս... [ԺԶ. 25]: [Մեկնու-
թիւն]. Ձի՛նչ երբեք հաւասար լիցի անձանցս այսո-
ցիկ... լուծցուք աղաւթիւք զկապանս մեղաց մերոց:

լէ. 139բ-42բ ԼԷ. Բան.] Եւ շրջեալ ընդ Ամփիպաւիս
եւ ընդ Ապողոնիա... [ԺԷ. 1]: [Մեկնութիւն]. Դարձեալ
զփոքրագոյն քաղաքաւքն զանց առնէին... եւ բարւոյն
հաղորդեցուք:

լը. 142բ-7բ ԼԸ. [Բան]. Եւ յԱթէնս ի մնալ նոցա
Պաւղոսի զայրանայր հոգի նորա... [ԺԷ. 16]: [Մեկ-
նութիւն]. Յիրաւի զայրանայր... զի մի՛ խստութեամբ
սրտից գանձեցուք զբարկութիւն մեզ յաւուր արդար
դատողութեանն Աստուծոյ:

լթ. 147բ-51ա ԼԹ. [Բան]. Իբրեւ լուան զյարուսթիւն
մեռելոց... [ԺԷ. 32-33]: [Մեկնութիւն]. Տէս, զի նախ
մեծագոյն կրէր փորձութիւնս... այլ անարգաւոյն մա-
նաւանդ յամենեցունց պախարակի:

իւ. 151ա-4ա Խ. Բայց Պաւղոս տակաւին
մնայր աւուրս բազումս առ եղբարս [ԺԸ. 18]: [Մեկնու-
թիւն]. Վայելչապէս յետ խոտովութեանն եւ հարուածս
ընդունելոյ Սոսթէնէայ... զի սիրեցեալք լիցուք եւ այն-
պէս ուղղի եւ սիրելն եւս:

իաա. 154ա-7բ ԽԱ. [Բան]. Եւ մտեալ ի ժողովուրդն,
համարձակէր ամիսս երիս... [ԺԹ. 8]: [Մեկնութիւն].
Տեսանե՛ս, յամենայնի զանձն իւր նախ ի ներքոյ

ժողովրդոցն հրէից մրցեալ... տարցուք անարգանաց եւ մեծ, քան զդեա հանել:

Խբ. 158ա-61բ ԽԲ. [Բան]. Եւ իբրեւ եղեւ այս, եզ Պաւղոս ի մտի... [ԺԹ. 21]: [Մեկնութիւն]. Որ եւս մարդկապէս աստանար անաբուտս բարբառեալ լինի... եւ զմիւսն լի ամենայն անկարգութեամբ:

Խգ. 161բ-4բ ԽԳ. [Բան]. Եւ յետ դադարելոյ ամբոխին... [Ի. 1]: [Մեկնութիւն]. Պարտ իսկ էր լինել բազում միսթարութեան... եւ ոչ վասն նոցին աւգտի պղերգանա ինչ:

Խդ. 164բ-9ա ԽԴ. [Բան]. Ի Մելիտեա յղեալ յեփեսոս, կոչեաց զերիցունս եկեղեցւոյն... [Ի. 17-18]: [Մեկնութիւն]. Հայեաց ընդ մեծութիւն գթոց նորա... այլ զի կեցէք ի ձեռն ում եւ իցէ:

Խե. 169ա-72բ ԽԵ. [Բան]. Եւ արդ, յանձն առնեմ զձեզ Աստուծոյ... [Ի. 32]: [Մեկնութիւն]. Ջոր ինչ ի թուխթան գրելով առնէր Պաւղոս... զի եւ նորին արժանասցուք վարձուց:

Խզ. 172բ-6ա ԽԶ. [Բան]. Ի վաղիւ անդր եմուտ Պօղոս ընդ մեզ... [ԻԱ. 18-19]: [Մեկնութիւն]. Այս Յակոբոս առաջին եպիսկոպոս էր |173ա| յերուսաղէմ... այլ ինքեանք զպարտութիւն խոստովանեցան, եւ հանապազ նոյն լինի:

Խէ. 176ա-9բ ԽԷ. [Բան]. Ասէ Պաւղոս. Ես եմ այր հրեայ... [ԻԱ. 39]: [Մեկնութիւն]. Տեսանե՞ս, զի յորժամ ընդ արտաքինսն խաւսի... զի յուսացեալ բարեացն յասցուք:

Խը. 179բ-83բ ԽԸ. [Բան]. Եւ եղեւ ինձ ի դառնալն յերուսաղէմ եւ կալ յաղաթս ի տաճարին... [ԻԲ. 17-18]: [Մեկնութիւն]. Տէ՛ս, թէ որպէս անդէն ի ներքս... եւ ուղղեմք զայս, եթէ յախտից ազատք իցեմք:

Խթ. 183բ-7ա ԽԹ. [Բան]. Իբրեւ գիտաց, ասէ, Պաւղոս, եթէ մի կողմն Սաղուկեցւոց է... [ԻԳ. 6]: [Մեկնութիւն]. Դարձեալ մարդկապէս բարբառի... արդ, եւ այս պատասխանին ի նոցանէ ի բաց հատեալ եղեւ:

Ծ. 187ա-91ա Ծ. [Բան]. Եւ զարականացն ըստ հրամանին առեալ... [ԻԳ. 31-33]: [Մեկնութիւն]. Որպէս թագաւորի մեծի զարք առաջի գնալով... եւ նուազագունից իմաստասիրելով ի փառս Քրիստոսի:

Ծա. 191ա-4ա ԾԱ. [Բան]. Եւ յապաղեաց զնոսա Փեղիքս... [ԻԴ. 22]: [Մեկնութիւն]. Տեսանե՞ս, թէ որչափ լինի քննութիւն... յորմէ զգուշալի է երկիւղիւ:

Ծբ. 194ա-200ա ԾԲ. [Բան]. Իբրեւ անցին աւուրք ինչ, յայտ է ո՛չ բազումք, Ագրիպաս արքա եւ Բերինիկէ եկին ի Կեսարիա... [ԻԵ. 13-14]: [Մեկնութիւն]. Ագրիպասս այս, որ եւ Հերովդէս... որոյ եւ ոչ զմիոյ ուրուք փոյթ ինչ է նմա:

Ծգ. 200ա-4ա [ԾԳ. Բնաբան.] Յոտն եկաց արքայն եւ դատաւորն եւ Բերինիկէ... [ԻԶ. 30-32]: [Մեկնութիւն]. Տէ՛ս, թէ որպէս բազում անգամ յաղագս նորա

դատ արարեալ լինին... յայնժամ գիտացաք, թէ Մելիտինէ էր անուն կղզոյն:

Ծդ. 204ա-7ա ԾԴ. [Բան]. Բայց բարբարոսքն շնորհեցին ոչ սակաւ մարդասիրութիւն... [ԻԸ. 1-2]: [Մեկնութիւն]. Տէ՛ս, արդ, հրեայքն այնչափ նշանս տեսեալ հալածէին... ըստ որում եւ զինուորն պահապանն Պաւղոսի տեսաւ եւ վկայս եղեւ նորայոցն ամենայնի:

Ծե. 207ա-10ա ԾԵ. [Բան]. Եւ յետ երից աւուրց կոչեաց զՀրէիցն գլխաւորս [ԻԸ. 17]: [Մեկնութիւն]. Փոլթով, յետ երից աւուրց... եւ յանկասկած նաւահանգիստն հասանել եւ խոստացելոց բարութեանց սիրելեացն Աստուծոյ հանդիպել: Շնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հար եւ Հոգւոյն Սրբոյ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

– 210բ Աղերս նորոգ ստացողի եւ աշխատաւիրաբար նորոգողի բուն մեկնութեանն, յորմէ այս համառատեցաւ – Յամի վեց հազարերորդի հինգ հարիւրերորդի առաջներորդի (6501) արարածոց աշխարհի եւ ի հազարերորդի եւթանասներորդի եւթներորդի (1077) կենարարին մերոյ գալըստեանն եւ ըստ խոսրովային թուոյ հայկազանցս հինգ հարիւրերորդի քսաներորդի հինգերորդի (1076), ի թագաւորութեանն Միխայելի՝ որդւոյ Դուկծին եւ ի պատրիարքութեանն Կոզմայի երկաբնակի, ես՝ Գրիգորիս, որդի Գրիգորի Պաշխաւանոյ, ողորմութեամբ մեծին Աստուծոյ արժանացեալ աթոռոյ հաւուն իմոյ սրբոյն Գրիգորի եւ ըստ յառաջատեւեան սրբոյն Սահակայ ի սաստկացեալ սրոյ Սկիւթացւոցն հալածանաւք հասի ի պայծառաշն կայանս սրբոյն Կոստանդիանոսի եւ մեծաւ ըղձամբ հայցեալ գտի զտենչալիս յոքունց՝ զգերահարաշ Մեկնութիւն Գործոց առաքելոցն մեծին Յովհաննու Ոսկերբաւնի՝ լուսաւոր եւ ոգէշահ վարդապետութեամբ, եւ հանդիպեալ հմտագոյն հռետորին Կիրակոսի՝ յունական եւ հայկական ուսմամբն պերճացեալ, եւ առատաձեռն արգասեաւք ետու թարգմանել տենչալիս ոգւոյ իմոյ, եւ ընկալեալ սրտալիր ուրախութեամբ իբրեւ զտախտական նախամարգարէին եւ մեծաւ տաժանմամբ հատեալ զհամատարածն Լիբիայ եւ Ասիական ծոցոյն, խնամաւք Հոգւոյն հասի ի բաժինս Սեւայ՝ ի ստորոտս Տորոսի, ի հրեշտակաբնակ կայարան սրբոցն եւ գտի անդ զհոգեշնորհ գիտնականն Կիրակոս՝ որդի իմ ըստ հոգւոյ եւ աշակերտ մեծ գիտնականին Գէորգեայ փոխանորդին մեր: Եւ սորա յաւժարական մտաւք աշխատութիւն զանձամբ առեալ ըստ առատատուր Հոգւոյն պարգեւացն՝ վերստին արժարձեալ զխորթացեալ բանս հռետորին՝ յեղանակելով ի դիւրալուրս եւ յարմարականս մերոյինս ազգին: Արդ, մաղթեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ հոգիաբաւորիս պատգամացս, յիշել զիմս կաղկաղութիւնս ի Տէր սրտի մտաւք, ընդ ինեւ եւ |211ա| զաշխատաւորսն ի սմայ եւ գրել

գլխոքը յիշատակարանս ընդ սմին գրոց, յորժամ գրես-
ջիք, եւ մի՛ պակասեցուցանել, զի եւ զձեզ գրեսցէ Տէր ի
գիրն կենաց յաշխարհին կենդանեաց, որ է եւ եղիցի
արհնեալ յաւիտեանս. ամէն:

Կատարումն Մեկնութեան Գործոցս համառուտի ի
փառս Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որում
փառք յաւիտեանս. ամէն:

Ամէն գլխի վերջում իբրեւ ամփոփում, կայ «Բարոյական»
կամ «Յորդոր», լուսանցներում աղբիւրների հեղինակների յի-
շատակումներ՝ եփրեմ, Յովհան Ոսկեբերան, Ներսէս Լամբրո-
նացի, Կիրեղ, Գրիգոր Աստուածաբան, Գալիթ, Յովհան Օձնե-
ցի եւ այլն: Այս «Աղբար»ը Գրիգոր Վկայասէրի հեղինակու-
թիւնն է. տէս Ե-ԺԲ. դ-ի յիշ-ք, Հ^ր 129, էջ 108-9, որ առել է ՄՄ
Հ^ր 1315 ձեռ-ի 452ա-Յա էջերից, յիշատակել է նաեւ ՄՄ Հ^ր
2690 ձեռ-ը: Տպագր. տէս Մեկնութիւն Գործոց առաքելոց
յՈսկեբերանէ եւ յեփրեմէ, Վենետիկ, 1839:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒՓԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

211ա Փառք համագոյ է միասնական, անբաժանե-
լի Սուրբ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն
Սրբոյ, յաւիտեանս յաւիտենից. ամէն: Որ ետ կարողու-
թիւն տկար անձինս՝ Բարսեղ սոսկանուն բանի սպա-
սաւորին հասանել ի յաւարտ այսմ աստուածաշունչ
տառիս՝ Առաքելոց պրակիս, զոր մեկնեալ է սա Յո-
հաննու Ոսկեբերանին եւ սուրբ հաւրն եփրեմի, եւ
Թարգմանեալ է ի յունաց ի հայս Գրիգորի Վկայասիրի
Պալհատունոյ: Արդ, գրեցաւ սա ի մեծ թվականին
հայոց Ռեփէ. (1598), ի մայրաքաղաքս Բաղէշ, ի դուռն
Սուրբ Յովաննու Մկրտչին, որ Ամիրդօլու վանք
վերածայնի: Եւ գրեցի զսա մեղսամած մատամբ իմով
յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց՝ Ներսէս երիցուն եւ
Մըհեր Շահարկնոնցն, այլ եւ եղբարց իմոց՝ տէր
Հայրապետին եւ Մրապիոնին, եւ փոխեցելոցն առ
Քրիստոս Մուրատին եւ Մովսէսին, եւ քրւերն իմոյ
Ալամին, եւ եղբորդւոյն իմոյ Յոհաննիսին, այլ եւ
ուսուցչին իմոյ քաջ հռետորին Յովաննէս ըրաբունա-
պետին, որ մականունն Բրկուպեանց ասի՝ եղիցի յիշատակ
մատեանս այս, եւս առաւել աշակերտաց եւ հոգեւոր
որդւոց մերոց Յոհաննիսին եւ Հայրապետին եւ այ-
լոցն, որք առին գաւազան եւ ելին: Արդ, աղաչեմ զձեզ,
ո՛վ ըրաբունիք եւ աշակերտեալ մանկունք, յորժամ ըն-
թեռնուք եւ կամ արիւնակէք զՄեկնութիւն Գործոց
առաքելոցս, յիշեցէ՛ք ի սուրբ յաղօթիս ձեր զնուաստ
Բարսեղ վարդապետս եւ զամենայն ազգատոհմսն իմ,
որ եմ ի սուրբ աթոռոյն Բարդուղիմէոսի առաքելոցն, ի
նահանգէն Գաւառոյ, ի գեղջէն Կարպէլայ, ծառայ
սուրբ Աստուածածնին, բայց անդէն ամենեւին որ եմ
բնակեալ ի յահէ բռնաւ|211բ|որացն մարաց եւ յանըն-

դունակ լինելոյ յԱղբալու բիրտ եւ քրդաբարու տանու-
տէրացն, մանաւանդ ի ժամանակի մարմնասէր եւ բա-
րիատեաց առաջնորդացն: Ոչ եղեւ մեզ բնակութիւն
անդ եւ մի՛ այսուհետեւ լիցի բնաւ:

18բ Այս զգուշասջիր տեղոյս, մինչ ի յորում աւուրն
ի լուսանցն էր դրած, մեք ըստ կարգին գրեցաք, ով
ըրաբունի: Յիշեա՛ զտրուպս ի Տէր, աղաչեմ:

44ա Զծրող սուրբ տառիս՝ գԲարսեղ տրուպս ի բա-
նասիրաց յիշեա՛ ի Քրիստոս, ո՛վ սուրբ բացայայտաւ
ըրաբունի:

68բ Անմեղադիր լէ՛ր, ո՛վ սուրբ ըրաբունի, զի մթին
էր տեղիս, եւ էջն քան զչափն, անցեալ եղեւ:

Առաջին՝ աջ սիւնակի վերջում տողերն անհաւասար-
անկանոն են:

103ա Զնուաստս յիշեա՛, ով ըրաբունի:

119ա Յիշեա՛ ի Քրիստոս զտրուպս, ո՛վ ընթերցող:

139ա Ով սուրբ աղօթողք, հայցեցէ՛ք ի Տեառնէ եւ
վասն իմոց յանցանաց:

142ա Ընկա՛լ զծրագրողս, Յիսուս Աստուած իմ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳՈՅԻ

1. 211բ (ԺԸ. դ., անարուեստ նտրգիր) Յիշատակ է
Մեկնիչս Բարսեղ անարժան վարդապետիս, ի դուռն
Սրբոյն Յովաննու Կարապետին անջինջ յիշատակ:
Մի՛ ոք իշխեսցէ զսա ի սուրբ ուխտէն. եւ եթէ ոք հանել
յանդէնեցի, զիւր օգուտն ինք գիտցէ ի յաւուրն ահե-
ղին: Բայց եթէ տարցէ, շուտով բերցէ եւ հասուցէ ի
սուրբ ուխտս անպատճառ:

2. 211բ (ԺԹ. դ., շղագիր) Յիշատակ է տիրացու
Մարկոսին է Մշէցի: Այս սուրբ գիրըս գըրէցաւ Սուրբ
Ամրուոյ յունըվարի շորսին:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա. սեւով շրջանակ, մէջը թագա-
պսակ գինանշան, եզրերին՝ “Πεχ. Αχαλιεχσκου
γραδσκού πολυμου”:

ԳՐԶԱՓՈՐԶ՝ Պտուկ-պհպնկ Աա (նտրգիր եւ շղա-
գիր) «աաա... բգդ, լբլ, աբ, Լ. պանիրի Ծ. կալի, ե՛ր.
փըլայվի, ԺԸ. կալի»: 1ա՝ «իիիք, մ, չ, ի քէն մաղթէմէք,
ի քէն մաղթէմք, ի քէն մյաղթէմք, աաա...բեեեզզէլթց,
12-ական ժ, 4-ական Լ, իս, 5-ական ծ, 1գ՝ ա, այնչ, աա,
1դ՝ աբգ, 211բ՝ «որացն մարաց եւ յան, այս անդան
ճառ»:

ՆԿԱՐԱՓՈՐԶ՝ 1ա՝ մեղու, 1գ՝ մարդ:

ՆՇՈՒՄ՝ Աա՝ «Հ^ր 147/2605», 1ա՝ «Հ^ր 186/34.,
Ռեփէ.-1598, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս», կազմի մէջքին
փակցուած թերթիկին՝ «Կիրակոս վարդապետի Մեկ-
նութիւն Գործոց առաքելոց, (2-)»:

2606


Մ Խ Ի Թ Ա Ր Գ Օ Շ, Մ Ե Կ Ն Ո Ի Թ Ի Ի Ն Մ Ա Ր Գ Ա Ր Է Ն Ի Թ Ե Ա Ն Ն Ե Ր Ե Մ Ի Ա Յ

ՈՅԷ. – 1198


ԳրիՉ՝ Առաքելայ (1ա-209ա^ո), Գալիթ (209բ-56բ^ո)*: ՄՍՄ.ՅՈՂ՝ Գալիթ (գրիչը): ԿԱԶՄՈՂ՝ վարպետ Վարդան:

Թեթթ՝ 257. չգրուած՝ 1բ-2ա, 98աբ, 165աբ, 257աբ: ՊՐԱԿ՝ Ա-3x12+8 (Ժ՝ 10, Կ՝ 11): Նիեթ՝ թուղթ: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 26x17: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (19,5x12): Գի՛ր՝ ուղղագիծ երկարագիր (նմուշ՝ 18ա), բոլորգիր (տարբեր. նմուշ՝ 140ա, երբեմն՝ արեւելեան. նմուշ՝ 227ա): ՏՈՂ՝ 24-28: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի, դոնակով եւ երեք կապիչով, միջուկը տախտակ. աստառը դրոշմագարդ կտաւ, դոնակիներ՝ կապոյտ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր:


* Իրարից էապէս տարբերում են 1ա-209ա եւ 209բ-56բ գրերը: Իր կարգին, 1ա-209ա թերթերի գիրը նոյնպէս տարբերութիւններ ունի: Օրինակ՝ 1ա-16բ, 17ա-24բ, 25ա-84բ եւ այլն իրարից տարբեր են:



Նմուշ 18ա




Նմուշ 140ա



Նմուշ 227ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՆ – ճ ա կ ա տ ա գ ա ռ դ՝ 3ա (ԺԷ. դ.): Լ ու ս ա ն ց ա գ ա ռ դ՝ 206 բ (ԺԲ. դ., բուսական), 3ա (ԺԷ. դ., բուսական): Զ ա ռ դ ա գ ի Ր՝ թղնագիր (3ա, ԺԷ. դ.): Գ ո յ ն Ե Ր՝ կարմիր, կապոյտ, նարնջի, վարդագոյն:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան ըստ Մատթէոսի, ԻԳ., 24-38, ԻԶ., 22-36: Ա + Բ: Թ. դ.: Ստացուած մէկական թերթերի ընդլայնակի հատումով, եզրահատուած՝ բնագիրը վնասուած: Մագաղաթ, 25,3x17, երկսիւն (20x17), բոլորգիծ երկարագիր (նմուշ՝ Աբ), առլ՝ 9-12: Կարդալ՝ Աա-Աբ՝ «[Զի յ]արիցեն սուտ քր[իստ]ոս... Քա[ն] զ[ը]րհեղեն, ոտ[ե]ին եւ րմպեին, կան[այս] առնէին եւ ար[անց լինէին] (ԻԳ., 24-38): Կարդալ՝ Բբ-Բա՝ «Միթե ես իցեմ տէր... Որում անուն էր Գեթսամանի» (ԻԶ., 22-36): Ունի լուսանցային Համաբարբառ:



Նմուշ Աբ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին վնասուած, Ա. փեղկի 3 գամերն ընկած, դոնակի վերին մասը թափուած, պատառիկ-պահպանակները կծկուած, խումացած, կեղտոտուած, լուսանցակողերը գունաթափ, պատառիկ-պահպանակ Ա, թ. 1-13, 219-20, 233-50, 254-7՝ ցեցի անցքեր, թ. 1-12՝ կարերը թոյլացած, պատառիկ-պահպանակ Բբ-իւն՝ կապիչների արտատպուած հետքեր, հիմքերի մօտ կեղտոտուած, թերթերին խոնավութեան եւ աղտոտուածութեան զանազան հետքեր. նորոգուած ԺԷ. դ.ում,

թ. 8-9, 11, 28 եւ այլ թերթերի հիմքերը կարկառուած, նոյն ժամանակի են նաեւ լուսագծաւոր՝ թ. 2, 98, 165, 257:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ն

2բ-255ա Մեկնութիւն համառօտ Մարգարէութեանն Երեմիայի եւ նախադրութիւն նորին՝ ի Միւրթարայ վարդապետէ Գոշ կոչեցելոյ

Խորագիրը տարբեր՝ ԺԷ. դարի գրչութեամբ է:

– 3ա-4բ [Նախադրութիւն] – Հարանց ոգւոց բահին ծնընդեամբ... Եւ յաղագս արիւնակի Մարիամա սրբո կուսին:

ա. 4բ-11ա [Մեկնութիւն] – Պարտ է ժամանակաւ գիրիցագոյնն ձեզ սկսանել... ի բանս իմ առնել զնոսա:

բ. 11բ-195բ [Մեկնութիւն տեսլեան Երեմիայ] – Այժմ սկիզբն առնել ցուցանել զտեսիլ մարգարէութեան... այլ ես զանձն քո քեզ տաց, որ արժանիդ ես կենաց:

գ. 195բ-9բ Ի վերայ եգիպտոսի – [Բան]. Բանն, որ եղեւ առ Երեմիայ մարգարէ... [ԽԶ. 1-28]: [Մեկնութիւն]. Զի թէպէտ այժմ պատմէ զչարեացն... ոչ արդարացիս, այլ հաւատաւքն Քրիստոսի:

դ. 199բ-200բ Ի վերայ այլագգեաց – [Բան]. Բանն Տեառն, որ եղեւ առ Երեմիայ մարգարէ... [ԽԷ. 1-7]: [Մեկնութիւն]. Այլագգիս զհինգ քաղաքսն ծով[եզ]երեայսն կոչէ... է առ Նաբոգոդոնոսոր, զոր մնացեալ կոչէ:

ե. 200բ-5ա Ի վերայ Մովաբու – [Բան]. Այսպէս ասէ Տէր զարուսթեանց... [ԽԸ. 1-47]: [Մեկնութիւն]. Մովաբացիք էին, որք յորդոցն Ղաւտայ... զի ասաց վասն հաւատացելոց նոցա ի Քրիստոս:

զ. 205բ-6բ Ի վերայ որդոցն Ամովնա – [Բան]. Այսպէս ասէ Տէր. Մի՞թե որդիք ոչ իցեն Երուսաղէմի... [ԽԹ. 1-6]: [Մեկնութիւն]. Ամովնացիք եւ յորդոցն կոչեցան Ղաւտայ... զի գիտացես, թէ ինեւ գերեցար:

է. 206բ-8բ Ի վերայ Երովմայ – [Բան]. Այսպէս ասէ Տէր զարուսթեանց... [ԽԿ. 7-22]: [Մեկնութիւն]. Հին եւ մախանքն էր Եսաւայ հարն նոցա... զարհուրին զարարտըն Երովմայ՝ իբրեւ զկանայս յերկունս:

ը. 208բ-9ա Ի վերայ Դամասկոսի – [Բան]. 3ամաւթ եղեւ Եմաթ եւ Արփաթ... [ԽԿ. 23-27]: [Մեկնութիւն]. Մարգարեանայ եւ Դամասկոսի կործանումն... զի հրով կիզաւ հրապարակն նոցա եւ ապարանքն արքունական:

թ. 209աբ Ի վերայ Կեդարու – [Բան]. Ի վերայ տիկնոջ հանգրուանին... [ԽԿ. 28-33]: [Մեկնութիւն]. Կեդարացիք, որ են արաբացիք... զի եւ ոչ այլ ոք բնակէ:

ժ. 209բ-10բ Ի վերայ Իզամայ – [Բան]. Բանն Տեառն, որ եղեւ առ Երեմիայ մարգարէ... [ԽԹ. 34-39]: [Մեկնութիւն]. Եղամացիք ազգք են պարսկականք... զգերութիւնն նոցա ի ժամանակի բառնալոյ թագաւորութեանն Քաղզեացոց ասէ:

Ժա. 210բ-39ա Ի վերայ Բաբելացոց – [Բան]. Բանն, զոր խաւսեցաւ Տէր... [Մ. 1-5]: [Մեկնութիւն]. Մարգարէանայ եւ ի վերայ Բաբելովնի... եւ Աւետարան նորա ողորմութիւն եւ արդարութիւն շնորհ աւագանին ի նմանէ:

Ժբ. 239ա-53բ Սրբոյն Երեմիայի Ողբ – նման իմն առնէ մարգարէն այնոցիկ... զի ի չորից հողմոց արգարք ի կեանս ժողովին, եւ մեղաւորք՝ ի տանջանսն յաւիտենից:

Ժգ. 253բ-5ա Աղաթի Երեմիայի մարգարէի յետ ողբալոյ զԵրուսիմն Երուսաղէմի – [Բան]. Յիշեայ, Տէր, որ ինչ անցք անցին... [1-2]: [Մեկնութիւն]. Ի կարոտածի ողբոցս աղաթէ... զի որպէս մերժեց[եր], ասէ, եւ բարկացար, նմանապէս զթայ՛ց եւ դարձո՛ց: Կատարեցաւ Մարգարէութիւն Երեմիայ:

Լուսանցներում երբեմն կան աղբիւրների յիշատակումներ, բուն եւ յետագայ գրչութեամբ սրբագրումներ, յաւելումներ: Մեկնութեան հատուածաբաժանման արտաքին այլ յատկանիշներ չկան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 255ա (Դաւիթ գրչի) Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտենաս յաւիտենից. ամէն: Եւ գոհութիւն, որ ետ մեզ յանկել զայս ձեռնարկութիւն, որ ի վեր իսկ էր, քան զկար մեր եւ յամալթ արար զամե|255բ|նայն խափանիչս այսմ տառի եւ զաւրացոյց զտկարութիւն իմ, եւ ծագեաց ի նսեմացեալ միտս զնշոյլ լուսոյ իւրոյ աննախանձն յամենայն ի պարգեւս իւր: Եւ զի սկիզբն արարաք այսմ իրողութեան ի թուականիս Հայրոց ՈՒՋ. (1187) եւ կատարեցաք զկնի միոյ ամի: Եւ զի թէպէտ յաւժարեցաք զտիրագոյնն առնուլ զմիտս եւ հակիրճ զնել բանիւ, այլ բազմապատիկ վրիպեցաք, զի յոյժ սխալ եւ անգոյ պատահեցաք արիւնակի, եւ բազում հնչեաց ի վերայ մեր փորձութիւնք ներքոյ եւ արտաքոյ, յորմէ յողոզողեցաք մտաւք եւ տկարացաք ո՛չ միայն յ[ը]նտրութիւն սրբոյն բանիցն Յովհաննու, այլ եւ յայնոսիկ, յոր զմնացեալսն ի նմանէ համարձակեցաք լնուլ, զի բնաւիցն ոչ էր նորայն մեկնութիւն, վասն որոյ աղաչեմ զհարս եւ զեղբարս՝ թողութիւն առնել յանդգնութեան իմոյ եւ սիրով Հոգւոյն ուղղել զսխալանսն: Այլ եւ յայսմ ամի սակաւ (= սակս՞) մերոյս գործոյ առաւ քաղաքն սուրբ Երուսաղէմ ի Սալահաղդիմն կոչեցելոյ բռնաւորէ՛ յազազս բազմանալոյ մեղաց քրիստոնէից, եւ գերի վարեցաւ Նշանն սուրբ՝ հանդերձ թագաւորան եւ բազում զաւրաւք: Եւ թագաւորութիւնն Վրաց շփոթեալ կայր, զի Թաւմարն՝ դուստր Գեորգեայ թագաւորի, եթող զայրն առաջին |256ա|

[որդի թա]գաւորին Ռըզոց (= Ռուսաց) եւ ետ այլ այր յԱլանաց թագաւորութենէն՝ ի մայրենի ընտանութենէ իւրմէ Սաալան անուն, որ եւ Դաւիթ ի թագաւորելն անուանեցաւ: Եւ եղեւ այս ի հայրապետութեանն տեառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի եւ յեպիսկոպոսութեան տեառն Բարսղի հոշակաւոր ուխտիս Հաղբաւայ: Բայց գրեցաւ յանապատիս Գեաղայ, ընդ հովանեաւ Սրբոյն Գողգոթայի եւ Լուսատրչիմ Գրիգորի: Արդ, որք ընդարինակէք, անպարսաւ մտաւք յիշեսչիք զմեզ, աղաչեմ, ընդ նմին եւ զեղբարս, որ ընդ մեզ, եւ Տէր զձեզ յիշեսցէ: Եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

Տէս Յովս. յիշ-ք, էջ 521-2 (համարում է Դաւիթ գրիչը «կարծում եմ Քորայրեցին»), նաեւ Ե-ԺԲ. դդ. յիշ-ք, էջ 253:

256ա Այս յիշատակարանս Մխիթար վարդապետին է, Գոշին՝ յարմարողի զՄեկնութիւն սրբոյ կտակիս, զոր եւ ես՝ սիրող եւ համակամ եւ յորդորիչ նորին Դաւիթ, յիմումս եզի արիւնակի վասն յաւերժութեան նորայն անուան յամենայն արիւնակս, որոց ախորժելի երեւի զձել զսա: Հաւանութեամբ եւ սիրով ընկալայ եւ շնորհակալ եմ քում նագելի եւ երկիւղած պարկեշտութեան, ո՛վ պատուականդ ինձ եւ սիրող ճշմարտութեան, զի թէ եւ սուղ տարացուցիւ է յարդարեալ, բաւական է իմաստնոց յաճմունս բանից եւ յեղաշրջմանց ի նշանակս |256բ| խորհրդականս եւ զի անպարապ եղեալ իմոյս անձին ի ժամանել եւ գրողմել զսա, այլ եւ այլ ոմն տխմարաց ետու զձել եւ ապաշաւ ունիմ, թէպէտ եւ ուղղեցի յետոյ: Արդ, ոչք ընդարիւնակէք, ընդ ախմարացն զիծս զգուշութեամբ հայեցարո՛ւք եւ ուղղեցէք՝ զոր ինչ սխալ գտանի, եւ զիմդ աներկեւան ընկալարո՛ւք եւ զմեզ եւս մասնաւորեցէք աղաթից: Եւ արդ, իմումս գրութեան զայս տառ ԲԺ.ան ամ էր առմանն Երուսաղէմի, որ եւ տակաւին եւս ի ձեռս է այլազգեաց, ըստ յաճախութեան մեղաց մերոց եւ Խէ. (47) է առ Ո.ով (1198) թուականս Հայրոց: Եւ զի թէպէտ նախանձու մեծաւ վասն սրբոյ քաղաքին ելին ի կողմանցն Իտաղացոց թագաւորք եւ զաւրագուխք արիականք ընդ Թիրակ եւ ընդ մէջ Անդղատական ովկիանոսի, եւ անցին կէսք ի կողմանս Ասիացոց եւ Կիւղիկացոց, եւ այլք միջածովեալք ելին յԱղէսանուր Եգիպ[տ]ոսի եւ ովմանք յԱքաիայ ծովեզերեայ, սակայն զրաւ եղեալ ի կենաց թագաւորի նոցա ցիրեցան եղեալ զաւրքն ամենայն ընդ կրու[ն]կն դառնաին, եւ կէսք աստին մնային՝ ամրացեալք ի քաղաքսն ծովեզերեայս, մինչեւ այց արասցէ բարձրեալն ի բարձանց եւ անդրէն դար/// (շարունակուած):

Տէս Յովս. յիշ-ք, էջ 523-4. նաեւ Ե-ԺԲ. դդ. յիշ-ք, էջ 296: Յովս., էջ 524. «Գրիչը Դաւիթ Քորայրեցին է... որ մասամբ ինքն արտագրել է, եւ մասամբ «այլում տխմարաց» արտագրել տուել եւ ուղղել է Գոշ Մխիթարի Երեմիայի Մեկնութիւնը 1198 թուին»: էջերի վերին մասերի խունացած տառերը յետագայ գրչութեամբ նորոգուել են:

2. 36ա (Առաքեալ գրչի) Զտառապեալ Առաքեալս յիշեա՛ ի Քրիստոս, աղաչեմ:

Տէս Ե-ԺԲ. դդ. յիշ.-բ, էջ 296:

45բ /// աւրինակողին:

Երկտող յիշատակարան է՛ խնամքով քերուած, կարգացուած են միայն առանձին տառեր:

205ա Յիշեա՛յ զիս, Քրիստո՛ս, ի յարքայութեան քում:

230ա Քերուած յիշատակարան. կարգացուած են միայն առանձին տառեր:

ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 1ա (կազմողի, Ժէ. դ., անարուեստ բոլորգիր) Զպատճա՛// զԿարապետ սո՛// զի տեսի զայս աստուածա՛// եւ սրբեալ Երեմ՛// սեալ եւ անխն՛// սիրութեան եւ մեղ՛// խարհէ, եւ մեք կապ՛// նէր մեզ ի Քրիստոսէ պ՛// կասեալս [եր]րես անկեալ աղաչեմ՛// նշ պատուական հա՛րք եւ եղբա՛րք իմ, խնդրել ի Քրիստոսէ թողութիւն [մեզա]յ ինձ եւ իմոցն ամենայնի՛ հաւրն իմոյ Յոհաննիսի եւ մաւր՛ Եղիսաբեթ[ի], եւ եղբարցն Յովանիսի եւ Գրիգորի եւ զաւակաց նոցա. ամէն: Մանաւանդ ի ժամ սուրբ պատարագին եւ աղաւթից ձերոց եւ ամենայն գործոց բարեաց մասնաւորեցէ՛ք զմեզ եւ զառաջին աշխատողք սորա, տեսաւք եւ ընթերցաւք, վայելողք եւ աւրինակողք բոլոր հաւատով եւ հայրական գթով խնդրելով մեզաց ներումն յԱստուծոյ: Քրիստոս Աստուած ողորմի ամենայն երախտաւորաց մեր[ոց]՝ հոգեւորաց եւ մարմնաւորաց, մանաւանդ Մկրտչին՛// որ քուերն իմոյ Թարթիպալային. ամէն: Այլ եւ զեղբայր մեր զԿարապետ պատուական քահանայն եւ փիլիսոփայն յիշեցէ՛ք ի Քրիստոս Աստուած, զի շնորհեսցէ նմայ զարքայութիւնն երկնից, եւ ծնաւղաց նորին. ամէն, որ աւգնական եղեւ ի կազմել սորայ, այլ եւ նոցա, որ արարին զողորմութիւն ձեռս նորա. ամէն:

Քրիստո՛ս, Որդի՛ Աստուծոյ, քո յահաւոր եւ ի փառաւորեալ գալլստեանն ամենայն սրբոց բարեխաւսութեամբ եւ մարգարէին Երեմիայի, այլ եւ երկոտասան մարգարէիցն, ողորմեա՛ ամենայն հաւատացելոց, եւս առաւել վարպետ Վարդանին, որ սակաւ ընչիւք նորոգեաց, կազմելով զայս գիրքս, եւ զերկոտասան մարգարէիցն, որք բարեխաւս ինին նմա վասն աշխատանաց նորին. ամէն, եղիցի, եղիցի: Այլ եւ ձեզ լիցի ողորմութիւն ի Քրիստոսէ աստի եւ ի հանդերձեալն՝ ընթերցողացդ, վայելողացդ եւ լաւ պահողացդ, մանաւանդ

զմեզ յիշողաց առ Աստուած. ամէն: Աղաչեմ զձեզ, յետ ելանելոյ մեզ յանցաւորէս կենաց, առ ում եւ լիցի այս, մի՛ արգելուք ի խնդրողաց վասն ընթերցման: Նաեւ երախտաւոր ուս[անո]ղացն իմոյ՝ Մկրտիչ րաբունապետին եւ Գրիգորի քաջ քարտուղարին լիցի ողորմութիւն ի Քրիստոսէ. ամէն:

– 11ա (Ժէ. դ., անարուեստ բոլորգիր) ՉՄկրտիչ՝ րաբունապետն յիշեցէ՛ք ի Քրիստոս, որ հանճարեղ եւ կորովամիտ բանիւ զգիրքս դաս ասաց եւ զտըգէ[տ]քս լուսաւոր[եաց]:

* Այս Մկրտիչը նախորդ՝ կազմողի յիշատակարանի Մկրտիչն է:

2. 27ա (ԺԵ. դ., անարուեստ բոլորգիր) Եւ զիս՝ զանարժան Յովաննէս վարդապետս, յիշեցէ՛ք ի Քրիստոս, որ մականունն Բրգութենց կոչի, ի յերկրէն Ոստանայ:

3. 66բ (ԺԵ.-ԺԶ դդ., անարուեստ բոլորգիր) ԶԲրգութենց Յովաննէս վարդապետն յիշեցէ՛ք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէ՛ք նմայ, եւ Աստուած ձեզ ողորմի. ամէն:

4. 103ա (ԺԵ.-ԺԶ դդ., անարուեստ բոլորգիր) Յովաննէս վարդապետի մեղացն Աստուած մաքրումն տացէ:

5. 146ա (ԺԵ.-ԺԶ դդ., անարուեստ բոլորգիր) Տէր Աստուած, ողորմութիւն եւ մեղաց թողութիւն շնորհեալ Յովաննէս վարդապետին:

ԿԵՔԱԳՐՈՇՄ՝ 2ա. սեւով շրջանակ, մէջը թագապսակ զինանշան, եզրերին՝ «Πετ. Αχαλαυεακκοῦ ζραδσκοῦ πομπιου»:

ԳՐԶԱՓՈՐԶ՝ 1ա (շղագիր) «Արարած ես Աստուծոյ յարինեալ՛// փառաւոր ստեղծեր՛//», «աբգդեզըա», 1բ՝ «ձառին, արաց, զոր՛՛ եց Յովաննէս,՛// շեայ զՏէր՛// ի մեղաց», 10բ՝ «Այս այս այս ինչ ինձ էր զարմանալի ինձ շ լ ն անշականաշանց, զինչ կամիր զի ար, աշար շ, ա շշշշ», 37ա՝ «ն, բնակ», 65ա՝ «ժագագագ ես առ», 108բ՝ «թագ, զի դու հրըշակ, թագաւոր յաւիտեան, Տէր իմ, ընդ էին Հաւր, զուգական զորր ասէ համայքնակ», 191ա՝ «մեկն»:

ՆԿԱՐԱՓՈՐԶ՝ 60ա, 92աբ՝ բուսական նախշ:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած թերթիկին՝ «Գօշ Մխիթար վարդապետի Մեկնութիւն Երեմիայի մարգարէութեան», Աձ՝ «ՈՆԷ.-1198, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս», շ՞՞՞ 163/2606», 2ա՝ «Շ՞՞ 166/35»:

2607


Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

ՉԽԹ. – 1300


ԳՐԻԶ՝ Թորոս ֆեյ. (3ա-376բ, 395բ-405բ), Թումաս (376բ-95բ): ՍՐԲԱԳՐՈՂ՝ Գեորգ վրդ., Կոստանդին ֆեյ.: ՍՍՍՅՈՂ՝ Թորոս ֆեյ. (գրիչը): ԹԵՐԹ՝ 406. չգրուած՝ 1բ, 2ա, 12բ: ՊՐԱԿ՝ Ա-ԼԵՒ12 (Ա, ԼԵ՛ 10,

Բ՛ 14, Ե, ԺԵ՛ 11, ԼԱ՛ 2): ՆԻԻԹ՝ թուղթ (թ. 11-12, 49, 178-80, 406՝ լուսագծերով, ժԶ. դ., թ. 398, 405՝ մագաղաթ): ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 25,5x18,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ Երկսիւմ (3ա-326բ՝ 20,5x15), մխախն (327ա-405բ՝ 21x14,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 88ա), նուրգիր՝

11ա-2բ, 49աբ, 178ա-80բ (նմուշ՝ 49բ): ՏՈՂ՝ 31: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի, դոնակով եւ մէկ կապիչով, միջուկը տախտակ. աստառը դրոշմագարդ կտաւ, դոնակինը՝ կապոյտ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր:




նմուշ 49բ



նմուշ 88ա

ՄԱՆԻՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Լ ու ս ա ն ց ա գ ա ր դ՝ վարդակներ (109ա, 118բ, 139բ եւ այլուր): Գ ո յ ն ե ռ՝ կարմիր:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ 1. Ա.՝ սկզբում. Հին ճարտ (վրացերէն. բվնդ.՝ ըստ Բեռնար Ուտիէի): ԺԱ. դ.: Ստացումը մի գոյգ թերթի լայնակի հատումով եւ եզրահատումով՝ բնագիրը վնասուած: Մագաղաբ, 24x16,5, երկսիւն (24x16,5), նուախտի՝ բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Աա), տող՝ 18: 2. Աւետարան ըստ Յովհաննու, Ե., 14-25: Թ. դ.: 1 (Բ. վրմ.) ստացումը 1 թերթի լայնակի հատումով. եզրահատում՝ բնագիրը վնասուած: Մագաղաբ (24,5x17), երկսիւն (24x17), բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Բա), տող 11: Կարգալ՝ Բա-Բբ. «Չնա Յիսուսի տանտին... Այդ փոխեացաւ ի մահուանէ ի կեանս: [Ամէն, ամէն ասեմ ձեզ]»:



նմուշ Աա



նմուշ Բա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նախկինում եղէ է խիստ հայդայում, հասանաբար ժէ. դ. նորոգուել է բաւական կոպիտ ձեւով, եզրերը մաշուած լինելու պատճառով համարեա բոլոր թերթերը կարկատուել են, թղթի բարակ մասերը եւ կարկատուել են, կարկատանների եւ գրուած են (տե՛ս թ. 235-236), պակասող թերթերի փոխարէն աւելացուել են նորերը, վերականգնել բնագիրը, վերականգնել պրակները, այդ պատճառով որոշ թերթեր պակասում են կամ ընկել են, նաեւ՝ ետեւաւոր են (տե՛ս մասնատրապէս 244ա-303ա եւ 357ա-76բ թերթերի բնագրերը եւ Յիշատակարան յետագայի բաժինը): Կազմը մաշուած, վնասուած, 3 գամն ու 2 կապիչն ընկած, Ա. փեղկին գամերի անցքեր, դոնակը կծկուած, վերին եզրը պատռուած, պատառիկ-պահպանակներ խունացած, կծկուած, կեղտոտուած, լուսանցակողերը գունաթափ, թ. 3, 6-7, 48-50, 184-5՝ հիմքից մասամբ պոկուած, թ. 215՝ վնասուած, թ. 3-48՝ կարերը թուլացած, ձեռագիրը խոնավութիւն սեւած, հիմքերի մօտ կեղտոտուած, թերթերին աղտոտուածութեան զանազան հետքեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. 3ա-156ա [Մեկնութիւն ժամանակագրութեան, արարեալ երանելոյն խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի, եւ կարգադրեալն Մովսէսի գիտնական վարդապետի]

1. 3աբ [Յառաջարանութիւն] – Զչափ անձին ուսուցանեն մեզ աստուածային պատուիրանք... որով փառաւորի անկարատն փառաց աստուածային:

2. 3բ-4ա Յովհաննու Իմաստասիրի [Օձնեցոյ] Յաղագս գիշերային ժամուն – Ազգարարութիւն ժամահարին... ի մէջ գիշերին կենդանացաք կենարարին մերոյ յարութեամբն:

3. 4աբ Յառաջարանութիւն պատմութեանց, թէ որպէս կարգեալ է աղաթից մերոց հայցք, Ստեփանոսի Սիրնեաց եպիսկոպոսի – Յաստուածայինն ժամանեալ խաղաղութեան խորհուրդ... եւ ոչ որպէս ի դրախտին սակաւարեալք:

Երկրորդ եւ երրորդ միաւորները շկան սպագրի մէջ՝ Մեկնութիւն ժամակարգութեան, արարեալ երանելոյն խոսրովու Անձեւացոյ եպիսկոպոսի, Կ. Պոլիս, Օրթագիւղ, սպ. «Երից որդւոց Պօղոսի Արապեան Ապուլեիցուր», 1840. (Ե., 252, 1 չճ. էջ):

4. 4բ-5բ Բացայայտութիւն կարգաց եկեղեցոյ, Բարոզութեանց եւ աղաթից բաւ իւրաքանչիւր ժամուոց, երանելոյն տեառն խոսրովայ Անձեւացեաց եպիսկոպոսի – Ընդ Աստուծոյ եւ վասն Աստուծոյ խաւելով... փառք ընդ Հար եւ ընդ Սուրբ Հոգւոյն, այժմ եւ յանսպառ յաւիտեանս, եւ յաւիտեանս յաւիտենին. ամէն:

5. 5բ-9բ Քարոզ հսկման – Զարթուցեալքս ամենեքեան ի հանգստենէ քնոյս... ըստ երրորդութեանն, որում փառք յաւիտեանս. ամէն:

ա. 9բ-47ա [Աղաթք գիշերապաշտաման] – Զքէն գոհանամք, Տէ՛ր Աստուած մեր... զնոյն դնեն աւարտ, որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ [եւ յաւիտեանս. ամէն]:

Տե՛ս սպ. էջ 7-63: 10բ ստ. լս., ժԼ. դ.ի ձեռքով «Գ. Թուղթ տեղս է պակաս»:

բ. 47ա-50ա Աղաթք – [Բան]. Գոհանամք գրէն... [Լուծմունք]. Ամենայն ուրեք մեզ գոհութեան պէտք են... եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս. ամէն:

48բ ստ. լս.՝ «Մէկ Թուղթ տեղս պակաս է»: Վերջին երկու տողը կայ նաեւ 49բ էջում, որը լրացուած թերթ է:

Տպագրի համեմատ այստեղ այլ բնագիր է՝

գ. 50ա-91բ Մովսէսի Քերթոյանաւ Յերգու երից մանկանցն – Երեք մանկունքն արիւնակ էին մարդկային բնութեանս... Զի երկնից արքայութեանն արժանի լիցուք՝ փառաւորելով զՀայր եւ զՈրդի եւ զՀոգին Սուրբ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

60ա վերին լս., Ի. դ. շղագրով «Պակաս է մի թերթ», 64բ ստ. լս., գրած-շնչած «Մէկ Թուղթ տեղս պակաս»:

դ. 91բ-6բ Բ. Տեառն Յովհաննու Հայոց կաթողիկոսի՝ Եթէ զինչ խորհուրդ ունի արեւագային աղաթքն – Այս աղաթքս զմիւսանգամ գալուստն Քրիստոսի նշանակէ... ընդ որում Հար եւ Սուրբ Հոգւոյն վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ [եւ յաւիտեանս]. ամէն:

ե. 96բ-102բ Գ. Տեառն Յովհաննու Հայոց կաթողիկոսի եւ Իմաստապիտի Վասն երոտոյ ժամու աղաթիցն – Իսկ տունջեանն որոշեալ սահմանք ժամու աղաթիցն... եւ առաքինի վարուց փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՀոգի Սուրբ, այժմ եւ միշտ [եւ յաւիտեանս. ամէն]:

զ. 102բ-9ա Դ. Տեառն Յովհաննու Հայոց կաթողիկոսի Վասն Զ. ժամու աղաթ – Իսկ վեցերորդ ժամու կարգեալ աղաթքն յայտնի է... բարեացն արժանի լիցուք հասանել՝ փառաւորելով զՀայրն երկնաւոր եւ զՈրդին միածին եւ զՀոգին ճշմարիտ, այժմ եւ միշտ:

է. 109ա-18բ Ե. Տեառն Յովհաննու Հայոց կաթողիկոսի Վասն Թ. ժամու աղաթիցն – Իսկ յիններորդ ժամուն կարգեալ զաղաթն... եւ ընդ նոսին գոհանալով փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն]:

ը. 118բ-39բ Զ. Երանելոյն Խոսրովու Վասն երեկոյն ժամու – Նախքան զերեկոյն պաշտամանն... ընդ որում Հաւր, միանգամայն եւ Հոգւոյն Սրբոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ [եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն]:

թ. 139բ-56ա Է. Յաղագս խաղաղականին աղաթից – Իսկ հանգստեան ժամու աղաթքն... արժանի լիցուք փառաւորելով զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն]:

Գ-Թ. միաւորները տե՛ս Մեկնութիւն ժանկարգութեան, էջ 146-252:

156ա եւ՝ Մովսէս, մեղաւք մեռեալս, ոգի ծնունդ վերջին ժամանակի եւ սպասաւոր պիտակ բանի, կամեցայ հաւաքումն առնել սրբոցն բանից, որ վասն աղաթից եւ ժամակարգութեան արարեալ էին յառաջագոյն, եւ զիրաքանչիւր առանձնակի որոշեալսն յանցնիր տեղւոջ կարգել, այլ եւ բռնադատեալ եղէ ի սիրելի եղբարէ ումեմն Թէոդորոս՝ զթողեալսն ի մեծէն Խոսրովու զբանս աղաթից յանցնիր տեղւոջ վերլուծութեամբ դնել: Ո՛վ եղբայր, երբ զՄեկնիչն գրես, դու զաղաթնիս այլ գրէ, որ տեսնուն, մէկ ի մէկու աւգտին: Եւ իմ թէպէտ եւ հայեցեալ տեսանէի յոյժ անարժան զիս այսպիսի գործառնութեան եւ լրբութիւն մեծ զայսպիսի իրողութեանց բռն հարկանել, որ ի վեր է քան զկար եւ զարժան իմ, սակայն զմտաւ ածի, թէ եւ ձագ ազոաւոյ թէ ընդ արծուոյ եւ ընդ բազէի աւգապարիկ լինիցի, ոչ ինչ շփոթումն եղիցի, զի ամենեցունց յայտնի երեւի, թէ ազոան ազոա է, սեւաթոր մի զազրալի կենդանի եւ ամենեցունց ատելի, եւ նոյնպէս ազոա մնասցէ եւ ծանիցի, եւ քան հեղգութեամբ ի հանգիստ յաւժարել աշխատութիւնն յաւէտ է բարի, եւ իւրաքանչիւր ոք զիւր վարձ առցէ: Եւ թէպէտ եւ կամեցայ հասկաքաղ լինել ի հունձս սրբոցն, սակայն փախեա յաշխատութենէ զամենայնսն ոչ կարացեալ քննել, այլ եւ

խնայելով ի լսելիս ունկնդրաց եւ զի մնացեալքն գնոյն զարուսթիւն ունին, եւ իմ չմեղադրութիւն պահանջելով յամենեցունց ներումն խնդրեմ, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն]:

Բ. 156ա-76բ Քարոզ զիշերային ժամուն պաշտաման, զկնի՝ Տէ՛ր, եթէ շրթանցն, [Խոսրովու Անձեալացեաց եպիսկոպոսի Մեկնութիւն աղաթից, Բարոզից]– Զարթուցեալքս ամենեքեան ի հանգստենէ քնոյս... Երկրպագէ երիցս եւ երթայ խաղաղութեամբ:

176բ ստ. լս. յետագայի ձեռքով գրուած՝ «Մէկ թուղթ տեղս պակաս է»:

Այս միաւորը կամ նախորդի շարունակութիւնն է, կամ Խոսրովի բուն Մեկնութիւնն է (տե՛ս 5բ՝ սկզբատողը):

Գ. 176բ-91բ Հաւաքումն համառատ մեկնութեան սրբոյ պատարագին, զոր յառաջագոյն արարեալ է սրբոց լուսաւոր հարց – Աստուած, որ մեծն է ողորմութեամբ, անսկիզբն եւ անվախճանն... երկիր պագանելով ամենասուրբ Երրորդութեանն եւ միասնական աստուածութեանն՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ. ամէն:

177ա ստ. լս. յետագայի ձեռքով գրուած՝ «Գ. թուղթ տեղս է պակաս»:

Դ. 191բ-243ա Մեծին Խոսրովու Մեկնութիւն, զոր արարել է Բարոզին, որ յետ Աւետարանին եւ զՀաւատամքն ասելոյ – [Բան]. Եւ եւս հաւատով աղաչեսցուք... [Մեկնութիւն]. Զի հաւատք առնէ լսելի... Որ յամենայնի եւ յամենեցունց վասն ամենայնի եւս գոհաբանեալ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն]:

– 242բ-3ա Գոհացուք եւ մեք զմարդասիրէն Աստուծոյ... Հեղինակի վերջաբան-յիշատակարան, որ վերաբերում է առաւելապէս Ս. Երրորդութեանն ու Յիսուսի կեանքին:

Ե. 244ա-303ա [Յաղագս միաբանութեան հաւատոյ եւ կարգաց եկեղեցոյ]

Տե՛ս ձեռ. 500, 66բ-191բ: ա/244ա-5բ: բ/245բ-55բ: գ/255բ-6բ: դ/256բ: 62ա: ե/262ա-7բ: զ/267բ-74բ: յ/274բ-5բ: լ/275բ-80բ: զ/280բ-1ա: ժ/281աբ: ժա/281բ-2բ: ժբ/282բ-3բ: ժգ/283բ-5բ: ժդ/285բ-7ա: ժե/287աբ, 297աբ, 290աբ, 295ա: ժզ/295աբ, 291ա-3ա: ժլ/293ա-4բ, 289աբ, 296աբ, 298աբ: ժր/298բ-303ա:

Ստ. լս.-ներում ունի միաւորների խորագրերը: Յուցումներ բովանդակութեան վերաբերեալ՝ 287բ «Թ.», 288բ «Թ.», 289բ՝ «Զ. թուղթ յառաջ գնայ եւ գտնես»: 290բ Գ. թուղթ շրջէ՛, որպէս նշանն ցուցանէ: 294բ Զ. թուղթ յետ շրջէ՛ եւ գտանես: 295բ Ե. թուղթ յետ շրջէ՛ եւ գտանես, որպէս եւ նշանագրեցեալդ է: 296բ Թ. թուղթ յետ շրջէ՛ եւ գտանես: 297բ Ը. թուղթ յետ շրջէ՛ եւ գտանես:

Զ. 303ա-33բ [Թուղթ զանագանի]

ա. 303ա-27բ Թուղթ տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց, գրեալ եղբար նորին Ներսիսի եպիսկոպոսի, հրամանաւ նորին, ի Միջագետս Ասորոց կոչեցեալ նահանգին... ի խնդրոյ ուրումն աստուածաբի Սուրբ անուն իշխանի Թղկուրանն աւանի – Որ

թէպէտ եւ տէրունական հրամանն յորդորէ... ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որում փառք եւ զաւրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Տէս Ընդհանրական թուղթք Ս. Ներսիսի Շնորհալուոյ, յերուսաղէմ, 1871, էջ 240-289:

բ. 327բ-32ա ժէ. Նէրսիսի կաթողիկոսի հայոց Պատասխանի թրթոյն Յակոբայ վարդապետի Ասորոյ՝ ի մայրաքաղաքէն Մելետիոնոյ Հայոց – Ի զգալի դիտաւորութեան գրաւորական քում նամակի... ապրել ի գրծանաց, յորոց նեղիմք ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ամէն:

Տէս Ընդհանրական թուղթք, էջ 230-240:

գ. 332ա-3ա ժԸ. Թուղթ մխիթարական տեառն Նէրսիսի կաթողիկոսի՝ առ ոմն իշխան արեւելեան, վասն որոյոյ իւրոյ տարածամ վախճանելոյ – Անտես է յոյս աստուածային... արհնէք նովաւ զՏէրն անդադար:

դ. 333աբ Նորին տեառն Նէրսիսի գրեալ առ եղբարորդին իւր Ապիրատն ի Կոստանդինուպոլիս – Արեգական լուսոյ ծագման... Որպէս լինիս տեղեակ կրից ի յեկեղոցոց բնակից:

է. 303ա-54բ [Թուղթ տեառն Նէրսիսի կաթողիկոսի Հայոց՝ գրեալ ի զանազան ժամանակս առ այլեայլ անձին]

Տէս ձեռ. 500, 52ա-66ա: ա/341ա-4բ: բ/333բ-4բ: գ/334բ-5բ: դ/335բ-6ա: ե/336ա-7ա: զ/337ա-8ա: ի/338աբ: լ/338բ-9ա: զ/339ա: ժ/339ա: ժա/339բ-41ա:

Տէս Ընդհանրական թուղթք. նիւթերը մասամբ խառն՝ ա. միւսորի թուղթք գրուած է վերջում: Ունի նաեւ՝

ժբ. 344բ-8ա Նորին տեառն Նէրսիսի կաթողիկոսի գրեալ բան մխիթարութեան առ վտանգեալսն մարմնով, որք յանբարեաց ոմանց նախատեալ էղեն, զոր ծանուցին նմա գրով – Ընկալայ զգիր թախծանաց զախտացելոցոց մարմնով... առ նովաւ գնեն զարքայութիւնն երկնից ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որում փառք եւ զաւրութիւն յաւիտեանս. ամէն:

Տպ. Ընդհանրական թուղթք, էջ 289-96:

ժգ. 348ա-54բ ժԹ. Թուղթ ի Նէրսիսիէ արեւալիկոպոսէ Կիլիկեաց Տարսունի՝ պատասխանի Յուսկանն արգելական ճգնատրի... ի վերայ քահանայական կարգի եւ ժողովրդականաց ուղեղ հաւատովն, որ ի Քրիստոս – Գիր քո պատուականութեանդ, երանելի ա՛յրդ Աստուծոյ... զի փառաւորեսցի ի քեզ Հայրն երկնաւոր միածին Որդւովն եւ ամենասուրբ Հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ը. 354բ-9բ Ի. [Բնագիր գանազանք]

ա. 354բ-5ա Տեառն Եփրեմի Խորին Ասորոյ ասացեալ – Տաւնք տարեկանք, զոր կատարեն ըստ մովսէսական արինացն...

բ. 355աբ Ի Մնացորդաց յաղագս Սաղովմոնի – Վասն զի գրեաց Մովսէս...

գ. 355բ-6ա Ի Մնացորդաց մնացորդէն, զոր բազմաչան յուզմամբ հազիւ կարացի գտանէլ – Յորժամ յարոյց...

դ. 356ա-7ա Կարգաւորութիւն արհնութիւնաբեր ցուցակի, որ ունի յինքեան զժամանակի իւրաքանչիւր կարգեալ կանոնացոյ գտելիսն, թէ ո՛վ ո՛ք կամ յորմէ՛ զաւառէ հայրապետաց ժամանակն նշանակեցից, թէ ով երբ ի Հայոց աշխարհս եւ որոց հրամանաւ կարգեալ նառեցին – Յետ ճժԱ. (111) ամի սրբոյն Գրիգորի եղեւ թարգմանութիւն հայերէն լեզուիս...

ե. 357ա-9բ Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի Բան հաւատոյ եւ նորին նմանեացն – Սուրբ հաւատ ճշմարիտ... Այլ հասարակ բնութեանն հասարակութիւն յանձնաւորութեանն երեւի որոշեալ//:

Բաժանուած է Ա-Ժ հատուածների, վերջից թերի՝ թերթեր ընկած լինելու պատճառով:

Թ. 360ա-76բ [ԻԱ. Սրբոց վարդապետաց Հայոց Մովսիսի եւ Գալթի Հարցմունք ընդ երկաբնակ շարափառսն] – //աղասէ տարբերէ ապականութիւն... արհնութիւնն եւ գովութիւնն եւ փառք եւ պատիւ Հար եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն]:

363բ ստ. լս.՝ «Ով եղ[բ]այր, յերբ յայս տեղս հասնիս, ի կազմ սղալ է, Զ. տետր ու կէս յետ գնա՛, գտնուս նշանաւս»: 369բ ստ. լս.՝ «Է. տետր յառաջ համարէ՛, գտնուս: Կազմ սղալ է, այսու նշանաւս»: ԺԹ դ. գրչութեամբ վերջին երկու յիշատակութիւնների վերջում գրուած է. «Մանօթ. Վերջին կազմողն ուղղել է: Շարունակութիւն են կազմուած»: 376բ էջում կայ Գորգէն քարտուղարի յիշատակարանը. տէս ձեռ. 270, 279բ:

ժ. 376բ-91ա [Ճառք Յովհաննու Օձնեցոյ]

ա. 376բ-7ա Զհետ այլ նառերոյ ասացեալ եւ զայս Յոհան Աւանդին – Արդ, զմեզ յառաջ կոչէ առ ինքն... անհասանելի մարդեղութեան Բանին հասանել: Եւ այս մինչեւ ցայս վայր եղիցի:

բ. 377ա-91ա Նորին ընդդէմ երեսութեանաց – Յոյժ տենչալի էր ինձ եւ փափագելի... զորս ճառ խաչին քո ժողովեսցէ լինել ժառանգս արքայութեան քում: ժԱ. 391ա-7բ [Տեսիլք]

ա. 391ա-5բ Տեսիլ սուրբ վարդապետին Յոհաննէսի, որ մականունն Կոզեոն կոչի – Ի ժամանակին, յորում էր թուականն հայոց ՆՇ. (1021)... եւ խաղաղութեամբ գնացին յաշխարհն իւրեանց. եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս:

բ. 395բ-7բ Տեսիլ սրբոյն Նէրսիսի Հայոց հայրապետին, որ է թոռն Գրիգորի սուրբ Լուսաւորչին Հայոց – Պապ թագաւորն յորժամ արբոյց զբաժակն մահու... եղեւ երկիր վասն մեղաց փշաբեր, նոյնպէս եւ վասն մեղաց//:

ժԲ. 398ա-402ա [Խոստովանութիւնք]

ա. 398ա-401ա Խոստովանութիւն մեղաց եւ խայտառակութիւն անձին ինքնայաւժար կամաք եղկե-

յոյս Վարդանայ Արեւելացոյ... – Ով դուք, ընտրեա՛լք եւ պիտանիք հա՛րք... որք զաստուածաբանս միշտ արհնեմք, զքեզ ընդ նմին փառաւորեմք:

բ. 401ա-2ա Բանք խոստովանութեան յանցանաց, ասացեալ սուրբ վարդապետին Մեղրկա – Քրիստո՛ս, Որգի՛ Աստուծոյ, արարի՛չ եւ Տէ՛ր... զի եւ ես արժանի եղէց փառաւորել զամենասուրբ զԵրրորդութիւնդ՝ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

ժԳ. 402ա-5ա [Նէրսիսի Շնորհալոյ Բանք տաղաչափականք]

ա. 402ա-4բ Տեառն Ներսէսի սրբոյ տիեզերական վարդապետի եւ կաթողիկոսի Հայոց ասացեալ Յաղագս Երկնի եւ զարդոց նորա, ի դիմաց նորին բարառնաբար, ի շափ երկոտասանիցն պարգեալ ոտից, ի խնդրոյ առն բրժշկապետի եւ աստղագիտի Մխիթարայ – Իմ եղական գոյով բնութիւն եւ սկզբնական / Ի յանեղէն ձգեալ կամար անզուգական... եւ փառս տամ անեղ բնութեանս արարչական:

բ. 404բ-5ա Նորին ի խնդրոյ անուան նախագիծ [տառից տանց յորդորակ. «Մխիթար»] – Միշտ էիդ անեղ բնութիւն բնաւորեցան, / Անեղիդ [անմահութիւն հ]ետեւեցան... որ կայացաւ:

գ. 405աբ Այդում բան մաղթանաց ձայնի աղերսանաց հոգոց առ Աստուած – Աստուած անեղ անհասական, / Հայր գթութեան. ինձ ողորմեա՛... Հաւր եւ Սուրբ Հոգւոյդ, միշտ եւ յաւիտեանս. ամէն:

դ. 405բ Նորին Տաղ՛ ոգեշանք՝ ըստ նոյն// չափաբերեալ տանց (Ա-Ք) – Աստուածային բանից լսելի...// (Թափուած):

ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 27ա (Թորոս գրչի) Զհաւքն իմ, որ զնիւթս պատրաստեցին, եւ զողորմելի գերիս ծնաւդք մերովք եւ զարմիւք յիշեցէ՛ք, եւ Աստուած զձեզ յիշէ:

50ա Զհաւքն իմ եւ զմամբքն եւ զողորմելի գերիս եւ զծնողսն եւ զեղբարսն եւ զքեռ եւ զարմն յիշեցէ՛ք ի բարին Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ (նման՝ 17բ, 35բ, 109ա, 118բ, 191բ, 262ա, 293ա):

78ա Զսնուցիչն իմ զՀաաաաաի եւ զերկու Վասիլ եւ զողորմելի գերիս ծնողաւք մերովք եւ զարմիւք յիշեցէ՛ք ի Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ (նման՝ 127բ, 344բ):

91բ Զուսուցիչքն իմ զԲարսեղ եւ զԹորոս եւ զողորմելի գերիս ծնողաւք մերովք եւ զարմիւք յիշեցէ՛ք ի բարին Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ. եւ նմա փառք յաւ[իտեանս]:

139բ Զեղբայրն իմ զՆերսէս քահանայ, որ այժմ վախճանեցաւ, եւ զողորմելի գերիս ծնողաւք մերովք եւ եղբարքք եւ քեռ յիշեցէ՛ք ի բարին Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ, եւ նմա փառք:

156ա Ով եղբայր, երբ զՄեկնիչն գրես, դու զաղաւթնիս այլ գրէ՛, որ տեսնուն մէկ ի մէկու աւգտին:

168բ Որք յընթեռնուն զսա այլափոխաբանիցն պատահեցէ, մի՛ տգիտութեան վարկցի կամ անձնահաճութեան եւ մի՛ համարձակեցի յեղաշրջել բան ինչ, զի յարինակէ Մեկնութեանն տեսոն Խոսրովու ուղղեցաք, որչափ գտաք, զ՛ի նմանէ քննեալն:

176բ Տէ՛ր Յիսուս Քրիստոս Աստուած, գթա՛յ եւ ողորմութիւն շնոհեա՛ Գէորգեա վարդապետի, որ զքարոզնիս եւ զաղաւթնիս ղորդել է ի Մեկնչն մեծին Խոսրովու եւ ողոր[մեա՛յ] գերոյս Թորոսի եւ ծնողաց մերոց եւ եղբարց եւ զարմից, եւ այնոցիկ, որ յիշեն զմեզ:

196ա Արդ, բա՛ց զականջդ մտաց եւ լո՛ւր զահագին սպառնալիսն Աստուծոյ վասն ոչ երկիրիս// պատգամս Աստուծոյ կենդանոյ:

243ա Յիշատակարան. Շնորհաւք եւ առատ գթութեամբ մարդասիրին Աստուծոյ, Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այն որ վասն կամելոյ զկեանս ամենեցուն ընդարձակեալ աճեցոյց զարինակս եւ զճանապարհս փրկութեան, ըստ այլեալ բարոյից հասակաց եւ արուեստից մարդկան, այլեալ ձեւ |243բ| եւ արուեստս փրկականս, բարձրագոյնս եւ խոնարհագոյն, նրբաշափոյ եւ անդորրընթացս, յուրվաջանս եւ թէթեւախոնջս, նախապատիւս եւ երկրորդականս, զի ըստ կարի կամ յաւժարութեան այսմ կամ այլում հետեւելով որ մի՛ յուսահատ եղեալ ի դժուարութէնէն, վերջոտնեալ անհաղորդ մնացէ փրկական ճանապարհի իմիք, այլ ըստ չափոյ զարութեան կամ յաւժարութեան կամ ընդ մի կամ ընդ յորովս ի ճանապարհաց հետեւեալ ժամանեցէ փրկութեան: Յայս ամենառատ գթութիւնս Աստուծոյ հայեցեալ ես՝ մեղուցեալ ծառայս Աստուծոյ Թորոս սոսկ անուամբ քահանայ ի կրանաւորական ձեւի, քանզի տեսեալ զիս ի բարձրագոյն առաքինութեանցն շաւղաց կասեցեալ զարտուղի գնացիւք, մանաւանդ յաղթեալ ի ծանրութէնէն հողեղէն յարկիս եւ ոչ ունելով այլ ինչ տեսակ բարեաց, զմտաւ ածի, զի գոնէ այնու արինակաւ շահեցայց դոյզն ինչ մասն փրկական զտիմարութեան եւ զտկարութեան, վհատութիւնս ի բաց եղեալ, ձեռնամուխ եղէ ի գրութիւն Մեկնութեան աղաւթնոյս եւ պատարագին, զոր մեկնեալ էին սուրբ հարքն, մեծաւ աշխատութեամբ գլխաւորեալ յանկ հանի շնորհաւքն Աստուծոյ, ի յիշատակ բարւոյ ինձ եւ իմոց ծնողացն՝ ի Քրիստոս գնացելոց, եւ եղբարց իմոց, եւ քեռ եւ զարմից, որոց կենդանեացս եւ ննջեցելոցն մերոց աղաւթիւք վայելողացդ լիցի ի շնորհացն Աստուծոյ գրիլ ի կենացն Աստուծոյ մատեանսն: Եւ զայս մեծաւ թախանձանաւք խնդրեմ ի վայելողացդ՝ ի սոյն զմեզ բարւոյ յիշման արժանի արասցէ, զի եւ ինքն յիշեսցի յողորմածէն Աստուծոյ. ամէն:

Կատարեցաւ գիրս ի մեծ թուիս Չեթ. (1300), ի բազմաթշուառ ժամանակի, ի հայրապետութեան տեառն Գրիգորի եւ ի թագաւորութեանն Հայոց Հեթում: Աղաւջեմ զամենեսեան, յիշեցէք զվերոյգրեալքս եւ զամենայն հաւատացեալս ի Քրիստոս, եւ որք յիշէք, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ: Յիշեցէք եւ զԿոստանդին քահանայ, որ յղորդելն աւգնեց ինձ:

267բ Ով սուրբ հարք եւ հոգւոյ իմոյ հարազատք, յիշեցէք զտառատիպ սակաւ գրիս ի մաքրափայլ յաղաթիս ձեր:

301բ Դեղ, որ զգրոցն եղերքն պնդէ: Ջրդեղ անցո՛յ ի վերայ ու յարեւն դի՛ր, որ// որնայ, եւ զողորմելիս յիշէ, եւ Աստուած գրեց յիշէ:

303ա Ջողորմելի գերիս եւ ծնողսն իմ եւ զամենայն զարմն յիշեցէք ի բարին Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ (նման՝ 42ա, 57բ, 96բ, 327բ, 332ա, 334բ, 339ա, 376բ, 402ա):

354բ Ջողորմելի գերիս Թորոս եւ զԹումաս եւ զԿոստանդին ծնողաւք եւ եղբարբք եւ քեռք եւ ամենայն զարմիւք յիշեցէք ի Տէր, եւ Աստուած զձեզ յիշէ:

2. 395բ (Թումաս գրչի) Ջսրբասէր քահանայն զԹորոս՝ ստացաւ սուրբ տառիս եւ ըզճնաւոյն իւր, հանդերձ եղբարբն եւ քերք յիշեցէք ի բարին Քրիստոս, ընդ նոսին եւ զանիմաստ գրողս զԹումաս եւ զճնաւոյն իմ աղաւջեմ յիշել ի Տէր, եւ Աստուած ըզձեզ յիշէ. եւ նմա փառք յաւիտեանս:

Բացի 168բ, 196ա, 267բ, 303ա էջերի միաւորներից, մնացեալը տե՛ս ԺԳ. դ. յիշ. -բ, էջ 871-3:

ՅԵՆԱՍԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 120ա (ԺԵ. դ., անարուեստ բոլորգիր) Գիրքս Վարագայ է: Ձեզ վարձք է, տո՛ւք զիս ի քաղաքն ու ի գեղանն, որ կարդան: Մի՛ արգիլէք (նոյնը՝ 72ա, 96ա, 120ա, 144ա, 168ա, 215ա, 239ա):

Տե՛ս ԺԳ. դ. յիշ. -բ, էջ 873:

2. 73բ (ԺԶ. դ., անարուեստ բոլորգիր) Ոչ գիտեմ, թէ ո՞վ կոյր մտաւք զայս շորս տեղս զուղիղն քերել է, որ յետոյ յուղղափառաց եղաւ, եւ գրել է, թէ եփեսոսի

ժողովոյն է, զի եփեսոսին այն է, որ մինչ ի յայս տեղս էր, եւ այս այլ սրբոց: Եւ դու զուղիղին ասա՛, որ շմորիս:

3. 391բ (բոլորգիր, ԺԶ. դ.) Վերջին ստացող// ար Աստուած ողորմի իւր ծնողացն, իւր կողակցին եւ Բ. որդուն՝ Յակոբին եւ Մարտիրոսին եւ Բ. դստեր// կին եւ Թոխատին, Աստուած զխոտ// աւրհնէ իւր հալալ// եւ ետո զաղաւթի զՄեկնութիւն տէր Աստուած//:

Պտակ-պհպնկ Բբ (1701 թ., անարուեստ նոտրգիր) եւ՝ Գրիգորս կարգացի թվին ՌՃԾ. (1701), մարտի Ա. օր:

4. 295բ (Ժէ դ., անարուեստ նոտրգիր) Աստուած ողորմի Դիարին հոգոյն, իւր կնոջն Հերիֆաին, Ջանիպէկին, Տուտուխին, Թորոսին, Սարգսին:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 21ա. սեւով շրջանակ, մէջը թագապսակ զինանշան, եղբերին՝ “Պеч. Ахалыцхскоу грядскоу полициս”:

ԳՐԶԱՓՈՂԶ 2բ՝ «ՊՍՎ, ԶԶԱԻՃ», «Տէր Աստուած, թո՛ղ դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն», 166ա՝ «աբըսրըզճ»:

ՆՇՈՒՄ՝ Մէջքին փակցուած թերթիկին՝ «Մովսէս վարդապետի// Մեկնութիւն ժամագրոց»: 1ա (ԺԺ. դ., շղագիր) «Պակասողք: Պակաս է մի թերթ»: «Փառք ի բարձունից» տե՛ս 58ա երես: «Մեծացուցէն» ասելով մինչեւ «եւ զարք բարձանց, որ գիտակք էին»: «Եւ յամենայն ժամ» ի մի մասը, որ վերջանում է 73բ երեսի վերայ «յիշատակաւ նախնեացն գութ ածէին շաստուած» տե՛ս սորա շարունակութիւնը 76ա երեսի վերայ, բաց թողնելով երկու թերթ. «Աւրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց»: «Սուրբ Աստուածի մասին ունի այս խրատը. «Եւ երեք սրբասացութեամբ», վերջ. «մինչ հասանել շնորհաւքն Աստուծոյ մերոց» եւ այլն, որը 1840 թուի Օրթագիւղում տպուած ժամանակագրութեան մէջ չկայ: Տե՛ս թղ. 83ա-84ա»: «Հ^մ 172/2607, Չեթ.-1300, Մ[Եւրոպ] եպ[իսկոպո]ս»: 2ա՝ «Հ^մ 148/20»: 4ա (ԺԺ. դ., շղագիր) «Այս Օձնեցունն է: Տե՛ս Սիւնեցունը Հ^մ 1454, Մեկն. Ժամ., Թղ. 3ա»:

2608


Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

ՇԻՆԱՀԱՅՐ գիւղ [ՈՐՈՏՆ]

ԳՐԻԶ, ՍՏԱՅՈՂ՝ Յովհաննէն: ՍՏԱՅՈՂ՝ Արիստակէս վրդ.: ԹԵՐԹ՝ 269+1 (կրկն.՝ ք. 1). չգրուած՝ 1աբ: ՊՐԱԿ՝ Ա.-ԻԲ՝X12+3 (Ա՝ 11, ԻԱ, ԻԲ՝ 14)*: ՆԻԻԹ՝ թուրք: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 26,4x20: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսին (20x14): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 5ա): ՏՈՂ՝ 29, 31: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի դոնակով, միջուկը տախտակ. աստառը. Ա. փեղկինը կարմիր կտաւ, Բ.՝ դրոշմագարդ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր:

* Պրակներ կազմուած են ուրոյն եղանակով. համարեա բոլորը երկծալ են, առաջին եւ վերջին թերթերը հաստ են, իսկ միջինները՝ բարակ: Երբեմն հաստ են նաեւ մէջտեղի գոյգերը: Ասպէս է արուել պրակն աւելի ամուր դարձնելու համար:


ՌԶԳ. – 1635




Նմուշ 5ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ – ձ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 2ա: Լ ու - ա ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական, խաչ, տանաւ, թոշնային, յուշկապարիկ, վարդեակ: Ջ ա ր դ ա գ ի ր՝ թոշնագիր, հանգուցափր: Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, սպիտակ. լուսանցակողերը՝ կարմիր:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Ա.Բ. 1. Ա.՝ Աւետարան ըստ Յովհաննու, ԺԹ. 24-37, Աւետարան ըստ Դովասու, ԺԳ. 21-31: Ա.՝ Ժ. դ.: Ստացուած 1 թերթի ընդլայնակի հատումով: Մագաղաթ, 25,5x18,3, երկսին (20x16), բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Աա), տող 13: Կարդալ՝ Աբ-Աա. «Ում եւ ելցէ, զի լցցի գիրն... Եթէ հայեցին ի նա, որ խոցեցին (վերջագարդ)» (Յվհ. ԺԹ. 24-37): 2. Բ.՝ Ժ. դ.: Ստացուած 1 թերթի ընդլայնակի հատումով: Մագաղաթ, 25,2x20, երկսին (19,5x16), բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Բա), տող 12: Կարդալ Բա-Բբ՝ «Ն եկեալ ծառայն պատմեաց զայն... Տայցէ պատեալով ընդ այդում թագաւորի եւ ոչ նստեալ» (Ղկս., ԺԳ. 21-31):



նմուշ Աա



նմուշ Բա

ՎիճԱԿ՝ բարար. կազմի կաշին վնասուած, մաշուած, մէջի ստորին մասի կաշին մասամբ անջատուած, դռակը ծայրուած, Բ. փեղկի ստորին մասը պոկուած, վերին մասում մէջի կաշին անջատուած, պատարիկ-պահպանակներ կծկուած, խումացած, կեղտոտուած, եզրերը վնասուած, լուսանցակողերը գունաթափ, որոշ թերթերի եզրերը բամբակակալած, ք. 1-47՝ բորբոսի հետեւ, ք. 9, 33, 84, 107-110, 138, 142, 182՝ լուսանցների մեծ (հաւանաբար՝ լուսանցազարդ ունեցող) հատուածները կտրած-հանած, ք. 151՝ լուսանցազարդի մասը պատոտուած, թերթերին խոնաւութեան հետեւ, հիմքերի մօտ կեղտոտուած, ցեցակեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

– 1գ Այս ինչ կայ ի գիրս (= Յանկ) – Ա. Մեկնութիւն աղաւթից... Թ. Թուղթ դաշնաց սիրոյ եւ միաբանութեան:

ա. 2ա-170բ [Մեկնութիւն ժամակարգութեան, արարեալ երանելոյն հոսրովու Անձեացեաց եպիսկոպոսի եւ կարգադրեալն Մովսէսի գիտնական վարդապետի] – Քանզի ճանաչել անձին ուսուցանեն մեզ աստուածային պատուիրանք...

– 170աբ եւ՝ Մովսէս, մեղաւք մեռեալս, ոգի ծնունդ վերջին ժամանակի եւ սպասաւոր պիտակ բանի, կամեցայ հաւաքումն առնել սրբոցն բանից, որ վասն աղաւթից եւ ժամակարգութեան արարեալ էին յառաջագոյն եւ զիրաքանչիւր առանձնակի որոշեալսն յանցնիր տեղուշ կարգել, այլ եւ բռնադատեալ եղէ ի սիրելի եղբարէ ումեմն Թէղդորայ՝ զթողեալսն ի մեծէն հոսրովու զբանս աղաւթից յանցնիր տեղուշ վերլուծութեամբ դնել: Ո՛վ եղբայր, երբ զՄեկնիչն գրես, դու զաղաւթնիս այլ գրէ՛, որ տեսնուն, մէկ ի մէկու աւգտին: Եւ իմ թէպէտ եւ հայեցեալ տեսանէի յոյժ անարժան զիս այսպիսի |170բ| գործաւնութեան, եւ լրբութիւն մեծ զայսպիսի իրողութեանց բուռն հարկանել, որ ի վեր է, քան զկար եւ զարժանն իմ, սակայն զմտաւ ածի, թէ եւ ձագ ագոռաւոյ թէ ընդ արծուոյ եւ ընդ բազէի աւգապարիկ լինիցի, ոչ ինչ շփոթումն եղիցի, զի ամենեցունց յայտ-

նի երեւի, թէ ագոռան ագոռա է, սեւաթոր մի զագրալի կենդանի եւ ամենեցունց ատելի, եւ նոյնպէս ագոռա մնացէ եւ ծանիցի, եւ քան հեղզութեամբ ի հանգիստ յաւժարել աշխատութիւնն յաւէտ է բարի, եւ իւրաքանչիւր ոք զիւր վարձ առցէ: Եւ թէպէտ եւ կամեցա հասկաքաղ լինել ի հունձս սրբոցն եւ ճոաքաղ ի կուլթս, սակայն փախեա յաշխատութենէ զամենայնսն ոչ կարացեալ քրննել, այլ եւ խնայելով ի լսելիս ունկնդրաց եւ զի մնացեալքն զնոյն զաւրուլթիւն ունին, եւ իմ շմեղագրութիւն պահանջելով, յամենեցունց ներումն խնդրեմ ի Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն. Թ. (1.000) ամէն:

Տե՛ս եւ հմմտ. ձեռ. 1325, 2607: Տե՛ս նաեւ Մեկնութիւն ժանակագրութեան, արարեալ երանելոյն հոսրովու Անձեացւոյ եպիսկոպոսի... Կ. Պօլիս, 1840:

բ. 170բ-211բ [Յովհաննու Արեւիչեցոյ Մեկնութիւն պատարագի]

Տե՛ս ձեռ. 45, 62բ-106ա: ա/170բ-1բ: բ/171բ-211բ:

Տե՛ս Յովհաննու Արեւիչեցոյ Մեկնութիւն պատարագի, էջ-միածին, 1860, 150 էջ:

գ. 211բ-Յա Յովհաննու վարդապետին Գառնեցոյ [Ողբ] – Աստանար պիտոյ է մեզ ողբ հառաչանաց... Ընդ շարութեանն՝ զանչիշաշարութիւնն, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն:

դ. 213բ-Տբ Կարգ եւ կանոն աղաւթից, զոր խնդրեալ է ի հոգէկիր արանց, յումեմնէ միայնացեոյ արթուն եւ զուարթուն հոգոյ Գրիգորի Նարեկացոյ, որ եւ ցուցանէ Նախադրութիւն բանիս, թէ ոչ համարի զանձն արժանի այսպիսի իրի, վասն այն զառաքելոյն ի մէջ առեալ, դնէ սկզբն կանոնիս պատմութեան եւ ոգէչան խրատու – Առաքեալն Պաւղոս, անաւթն ընտրութեան... ի սէր Տեառն բեւեռեա՛ եւ աներկիւղ ննջեա՛ ի փառս նորա, որ է արհնեալ յաւիտեանս. ամէն:

ե. 218բ-21ա Թուղթ վասն կարգաց եկեղեցոյ եւ ժամուց, զոր ասացեալ է Նսայի վարդապետի [Նշեցոյ] ի խնդրոյ [219ա] վարդապետաց Սիւնեաց եւ առաջնորդաց վանորէիցն աստուածասէր կրանաւորացն – Զիմաստալեղձ եւ գովելի նամակս խնդրոյ ընկալայ... յորմէ զերծեցուցէ զմեզ Քրիստոս Աստուած մեր, եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

զ. 221ա Գրիգորիսի կաթողիկոսի [Տաղ] – Գոյ յիս գիտութիւն, բայց խամրացեալ է, / Գոյ երկիւղ բարեաց, այլ շիջանի միշտ... Թողցէ Յիսուս բազմաց, զոր պահանջեաց նա:

է. 221ա-Տա Ներբողեան կենսատու [221բ] սուրբ խաչին առ ի սրբոյ հաւելն մերմէ Դաքէ ասացեալ, տեսան Նէսսիսի կաթողիկոսին մերոյ փոխարեալ յոտանաւոր չափս եւ աստանաւ եղաւ – Բարձրացուցէ՛ք զՏէր Աստուած մեր միաբան, / Մարգարէն յառաջ ձայնեալ տայ ձեզ հրաման... պատուէ զՅիսուս ի սա փառաւ, որ է այժմ եւ ապայն, որ գալոց է:

Ը. 228բ-49ա [Գ]ովեստ բանի ներքողական բացասացութեամբ ներսէսի կաթողիկոսի Հայոց Յաղագս գերագունիցն էութեանց՝ հրեշտակապետացն սրբոց Միխայելի եւ Գաբրիելի եւ ամենայն երկնայինոց զարութեանց, զոր տաւնեն եկեղեցիք Քրիստոսի ընդ տիեզերս, համախմբեալք ուրախութեամբ, ի նոյեմբերի Ը. – Այսպէս երկրաւորս եկեղեցւոյ... երրորդութեանն երգել ըզփառս ընդ ձեզ աւէտ միշտ յաւիտեան:

Թ. 249բ-53բ Յաղագս տաւնի սրբոյ խաչին – Ամենայն բարեկամի գալուստ եւ սիրելոյ ուրախարարք են... աստուածընկալ մտացն Դաւթի ասասցուք ընդ նմա:

Ժ. 253բ-4բ [Ի Հարանց վարուց]

1. 253բ-4ա Պատմեաց ոմն մի յանապատականացն վասն առն մի <մի> մեծատան... եւ աւրհնեցին, որ զորոմութիւնն գնեաց:

2. 254ա Մի ոմն ի ծերոցն գնաց ի քաղաքն եւ մտեալ յեկեղեցին... եթէ գոհութեամբ համբերէ եւ փառաւորէ զԱստուած:

3. 254աբ Քուրմ մի կոոցն գնաց յանապատն... եւ ծերքն հաւանեցին բանի քրմին:

ԺԱ. 254բ-5ա Կիրոյի Երուսաղեմացոյ Վասն պատարագաց – Քանզի յորժամ զպատարագն մատուցանեմք... այլ զՔրիստոս գնեալ մատուցանեմք Հաւրն եւ Աստուծոյ վասն քաւութեան նոցա. նմա փառք յաւիտեանս. ամէն:

ԺԲ. 255ա-64ա [Թ]ուրք սիրոյ եւ միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի եւ սուրբ պարուն Սեդրեստրոսի եւ Տրդատ Հայոց արքայի եւ սրբոյն Գրիգորի Հայոց Լուսատուրչի – Կամաւք եւ կարողութեամբ համագոյ Սուրբ երրորդութեանն... աւանդեցաք ի ձեռն ատենադպրին Հայոց արքային մեծիմաստին Ագաթանկելոսի ի փառս Աստուծոյ. եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն, ամէն:

ԺԳ. 266ա-9բ [Ընթերցուածք]

ա. 266աբ [Աւետարան ըստ Դովասու, Բ. 8-20- եւ հովիւք էին] ի տեղուշն յայնմիկ բացաւթեագք...

բ. 266բ Յետ այսորիկ ելանեն ի հովուանէն ի սուրբ Բեդդէմ, եւ ժողովն ի ներսս ի յայրն ի մատարանն, եւ այս կանովն կատարի. Սաղմոս կց. Տէր ասաց ցիս: Ալէլուիա: Ասաց Տէր ցտէր իմ: Աւետարանն Մատթէոսի [Ա. 18-25] – [եւ] Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս...

գ. 266բ-7բ եւ յետ ընթեռնոյն զԱւետարանն ելանեն յանդէն յեկեղեցին եւ սկսանին զգալաշտօնն եւ յարեն եւ նոյն զհոսկումն եւ ընթեռնոյն [267ա] ընթերցուածք ԲԺ., եւ նախ ասի սաղմոս, կց. ՃԻԱ. Յիշեալ Տէր զդա: Ընթերցուած ի Ծննդոց սկիզբն [Ա. 1 – Բ. 5] – [Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր: եւ երկիր էր անբերելոյթ... ի վերայ երկրի, եւ մարդ չէր որ// (Թափուած թերթ ընկած):

դ. 268ա-9բ [Ընթերցուած ի Դանիելէ – Պատկեր] ին ոսկւոյ, զոր կանգնեցեր... [Գ. 12-90]

Ալիզբը թերթ թերթ ընկած լինելու պատճառով:

ե. 269բ Ապա ասի Մեծացուցէ:

ԺԴ. 269բ [Մանունն՝ ԺԸ. դ. գրչութեամբ, անարուեստ նոտրգիր]

– է ճանապարհ, որ թուի մարդկան ուղիղ, բայց կատարածն հայի յատակս դժոխոց: Ըստ նմին, եթէ արդարն հազիւ կեցցէ, իսկ մեղաւորն եւ ամբարիշտն ուր երեւեցի:

– Ի պտղոյ արդարութիւն բուսանի: Ծառ կենաց բարձին դարաժամ որդիք անօրինաց: Աստուած, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ

249բ Զանծին բարեաց ծնաւ զբանիս

Մի՛ մոռանայք տաւնողք վեհիցս

ԶՆԵՐԱՆԱ Եղբայր հայրապետիս,

Որոյ անուն տէր Գրիգորիս:

Յորմէ խնդրոյ զիջեալ ըստ իս,

Յարմարեցաւ շինուած ճառիս

Եւ եղանակ շարունակիս

Առ ի պատիւ մեծատանիս:

Արդ, յիշեսջիք ընդ Տեառն եւ զիս,

Կողք վերնոցն գովեստիս,

Եւ դուք յիշեալ առ տէրունիս

Կինիք յերկնից նորայն բարիս:

Ասացաւ եւ գրեցաւ ի ներսէսէ կաթողիկոսէ Հայոց

ի Կլայս Հոռոմական, ի թվին ՈժԱ. (1162):

Եւ զՅովսէփ յոյժ եղկելիս՝

Ըզգծաւ յայմն ճառիս,

Վատթարագոյն մեղսասիրիս

Ծանրաբեռնեալ դժոխարկիս,

Որ խաբեցայ ի կենցաղիս

Եւ գործեցի բազում չարիս,

Անգեղջ կամաւք ի յաշխարհիս

Յերես անկեալ արտասուալիս:

Ընթերցողաց այս կտակիս

Յիշման առնել զմեզ արժանիս,

Թողուլ անառակիս,

Զնիւթեալ չարիս իմ յերկրիս:

Եւ տնաւրինել ի ներկայիս

Զիրկութիւն մեղաւորիս

Եւ յաջորդել ի յապառնիս

Զճանապարհըս գովելիս,

Եւ ձեզ լիցի մասն բարիս

Ընդ սուրբս իւր եւ սիրելիս.

Ամէն, ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՐԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

264ա Փա՛ռք քեզ անսահման եւ անզուգական ա- նուն, անսկիզբն եւ անվախճան, անեղ եւ անապական,

եւ էական էութիւն, անուր, աներբ, անուստէք եւ ան-
 ժամանակ, յերիս բաժանեալ անձնաւորութիւնս եւ ի մի
 տէրութիւն եւ աստուածութիւն բովանդակեալ, անքակ
 միաւորութեամբ բաժանեալ եւ որոշեալ միաւորու-
 թեամբ, պարզ, անզնին եւ թիւ կատարեալ, ի միոյ
 պատճառէ շարժեալ եւ կնքեալ ի յերիս անեղականք,
 անսկըզբունք յառաջնմէ եւ ապա յառաջ եկեալ ի միոյն
 պատճառէ, Որդի ծննդեամբ եւ Հոգի բղխմամբ, ո՛չ
 սկսեալք եւ ո՛չ դադրեալք միակամբք, մի Տէր եւ Աս-
 տուած՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, յորմէ գոյացան
 երեւելի եւ յաներեւոյթ տարրեղէն արարածք, որում
 Հաւր անհասի եւ անծնի, եւ Որդւոյ նորա միածնի, եւ
 Սուրբ Հոգւոյն նորոգաւորի փառք եւ պատիւ գոհացա-
 կան երկրպագութեամբ յանցելում, ներկայէս եւ յայժ-
 մէս |264բ| մինչեւ յաւիտեան եւ յաւիտենից յաւի-
 տեանս. ամէն: Գրեցաւ սուրբ գիրս առ ստորոտով ի
 յերկիրն Ռուսան, ի գիւղն, որ կոչի Շինահայր, ընդ
 հովանեաւ Սուրբ Ստեփաննոսի, յառաջնորդութեան
 տեառն Փիլիպոսի, որ բարեունական գաւազանաւ եւ
 բարձրագահ իշխանութեամբ տիրէ մերում ժո-
 դովորդեան: Պահեսցէ Տէր Աստուած եւ զարացուցէ ի
 կամս իւր. ամէն: Արդ, եղև գրաւ սուրբ գանձարանիս
 յամի շրջագայութեան արամագեանս տոհմի, հայկա-
 կանս սեռի ի քսան ու մին յորեւելնի, յաւելեալ երեսուն
 ու շորս թուոյ, որ է ՌՁԿ. (1635) թՎական: Աստանաւր
 կատարեցաւ հոգիակեցոյց եւ ցանկալի դրախտս աս-
 տուածադիր ամենունակ առատութեամբ, յորմէ գնան
 գետք եւ բղխեն աղբերք անմահարարք եւ զովացու-
 ցիչք, որք առողանեն զծարաւեալ ոգիս ի սմա փափա-
 գողաց, ծառք երկնուղէչք, բարեհամբ, տիեզերաց ծա-
 դիկք եւ տունկք տենչալիք եւ ծաղկանոցք, լի անուշա-
 հոտ ծաղկաւք, երփն-երփն երանգաւք սպիտակա-
 փայլք եւ ծիրանածինք, գոյն առ գունով, որք պատ-
 րաստ են զիմանալեացն գաւառ, լայնատարած վայ-
 րաւք եւ համասփիւռ ընդարձակութեամբ, զի արդարեւ
 տարածանին երկնաքայլիցն ճեմարանք, որք թեւատա-
 րած սլացմամբ վեր առողին յեթերն վերին՝ ի լոյսն
 մշտատիւ եւ անվայրափակ, քանզի որք տիրապէս
 զստորնայնոյս քայլեցին սրբակրօնիցն գուպարք, ան-
 ցեալ գնան ընդ նրբաշաւիղն ընդ այն պողոտայ, զոր
 գունդք մարգարէիցն եւ արդարոցն երամք թեւաբու-
 սեալք հոգւոյն թեւաւք աւգապարիկ երթեւեկութեամբ,
 ջոկադասեալք ընդ ջոխրս սրբաբանողացն դասուց,
 որք հանդարտագոչ քաղցրանուագ ձայնիւ զանլռելին
 դրուատեն զարհնաբանութիւն: |265ա| Որոյ այսպիսի
 ըզձալի փարթամութեանց համահետեւեալ երանելի
 վարդապետն մեր Արիստակէս եւ ետ գձագրել ըզսա ի
 վայելումն անձին իւրոյ եւ յիշատակ ելիցն յաշխարհէս,
 քանզի պարունակեալ ունի առ ինքն զՄեկնութիւն
 աղաւթիցն բովանդակ եւ զՄեկնութիւն սուրբ պատա-

րագին եւ Խրատ վասն ժամուց եւ առանձնութեան եւ ի
 խորհուրդ սուրբ եկեղեցւոյ եւ այլ Խրատ ոգէշահք
 միանձանց եւ Պատճառ սրբոյ խաչին եւ Բարձրացու-
 ցէքն ոտանաւոր եւ Գովեստ հրեշտակապետացն եւ
 Թուղթ դաշնաց եւ միաբանութեան:

Արդ, աղաչեմ զամենեսեան մոխրամած երեսաւք,
 որ լուսաւորիք յայսմ լուսարանէ, յիշեսջիք սրտի
 մտաւք զեղկելի գծաւդ զՅովնաննէս զաւժընդակիչ եւ
 զյորդորիչ զվարպետն իմ զԱստուածատուր քահա-
 նայս եւ խոշորութեան եւ փցուն եւ ախմար եւ անար-
 հեստ գրոյս աղաչեմ շինել մեղադիր, զի այսչափ էր
 կար մեր: Եւ որ առատն է ի տալն, քան ի ճշդելն, տացէ
 ձեզ յիշողացդ եւ յիշելոցս զիւր արքայութիւնն եւ
 ամենայն հաւատացելոց: Եւ նմա փառք, պատիւ եւ
 արհնութիւն յանլռելի ձայնից եւ յամենայն եղանու-
 թեանց այժմ եւ յաւիտեանս. ամէն, ամէն, ամէն:

16ա Ով սուրբ ընթերցաւդք, զբազմամեղ գծաւդս
 յիշեա՛, աղաչեմ (նման՝ 16բ, 32ա, 91ա, 253բ):

20ա Զյոքնաթշւառ եւ զտառապեալ գծողս Յո-
 վաննէս յիշեցէ՛ք առ Աստուած, եւ Աստուած զձեզ յիշէ.
 ամէն (նման՝ 27բ, 34բ, 52ա):

83բ Ով հարք եւ եղբարք, որք հանդիպիք սմա, յիշե-
 ցէ՛ք ի մաքրափայլ աղաւթս ձեր զմեղաւք լցեալ եւ զա-
 նարժան գծաւդ՝ զՅովհաննէս, եւ Աստուած զձեզ
 յիշէ. ամէն:

81ա Յերես անկեալ աղաչեմ գծաւդս եղկելի, /
 զհանդիպաւդս այսմ ոգէշահ տառի / յիշման առնել
 մեզ արժանի, / ասել՝ Տէր, թող զյանցանս գծողի եւ զիւ-
 րոցն ամենայնի, / զի եւ ձեզ ողորմեսցի Տէրն ամենի. /
 ամէն, եղիցի:

103բ Զմեղաւոր եւ զանպիտան գծողս յիշեա՛, ով եղ-
 բա՛րք, եւ խոշորութեան եւ փցուն եւ ախմար գրոյս անմե-
 ղադիր լերո՛ւք, զի կար մեր այսչափ էր, եւ մեղաց թողու-
 թիւն հայցեցէ՛ք Աստուծոյ, զի եւ ձեզ ողորմեսցի. ամէն:

128ա Զստացաւդ եւ զգծաւդ լուսագարդ մատենիս՝
 զտառապեալ եւ մեղաւք մեռեալ զՅովնաննէս յիշեցէ՛ք ի
 Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ:

211բ Ով պատուական սուրբ ընթերցա՛ւդք, որք ըն-
 թեռնոյք եւ լուսաւորիք հոգով, աղաչեմ, մի՛ մոռանալք
 զաշխատաւդս զՅովնաննէս ի մաքրափայլ աղաւթս ա-
 ռաջի սոսկալի խորհրդոյն՝ զենեալ գառինն եւ միշտ
 կենդանոյն, եւ որ յիշէ, յիշեալ լիցի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 265ա (1637 թ., անարուեստ նոտրգիր) Ես՝
 Արիստակէս վարդապէտս, տէր Յակոբս, տէր Բար-
 սեղս վաճառեցար զայս գիրքս Չարեֆայ անապատին՝
 Դաւիթ պարոնտէրին, տէր Խաչատուրին, տէր Անտո-
 նին եւ այլ միաբանիցն, ի թվին ՌՁԿ.ին (1637): Մի՛ ոք
 հակառակութիւն արասցէ, եւ ով հակառակի, սեւերես
 լիցի աւուրն դատաստանին. ամէն:

Ես՝ Դավիթ եպիսկոպոսս եւ իմ միաբանքս ըստա-
ցաք զայս գիրք Մեծ անապատէն՝ Արիստակէս վար-
դապետէն: Եւ ով որ հանդիպիք սմա, յիշեցէ՛ք զմեզ յա-
ղօթիս ձեր առ Աստուած, եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն:

2. 264ա (Ժէ. դ., անարուեստ նոտրգիր) Չարեհայ
անապատին է գիրքս:

3. 265բ (Ժէ. դ., անարուեստ բոլորգիր) Ես՝ տրուպ
եւ ամե[նե]ցուն ոտաց հող եւ մոխիր եւ ծառայ էս
կենաց մորմոքեալ եւ տօշորեալ սրտիւ աղաչեմ ըզձեզ
վասն ի սէրն արքաութեան եւ վասն ի սէրն Աստուծոյ
ամենեքեան խնդրիցէ՛ք թողութիւն մեղաց զգծող
սորին՝ Նսէննահօ [= Օհաննէսն] իմ անունս վիրու:

4. 1գ (1848 թ., շղագիր) Չայս գիրք ընծայեաց Սա-
նահնու նորակառոյց ուսումնարանիս Աղա պարոն
Բէգն Դանէլբէգեանց՝ ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ
արեւշատութիւն իւրոյ օրհնեալ զաւակաց: Ի 1848 ամի,
ի 11 հոգտեմբերի, ի Մառաս:

5. 2ա (ԺԸ. դ., անարուեստ նոտրգիր, եղծուած) Ես՝
Խաչատուր արեղայս, զնացի անապատ մեկի// որ
ինձի հետէ տալո դաս թ (՞) // մեղաց մեռան // ին է եւ
մի՛ որ հակառակեսցի:

6. 1գ (ԺԹ. դ., անարուեստ նոտրգիր) Ես՝ նուաստ
Եսայի Կուլստանցի, ստացա այս խորհրտի Մեկնիչս,

ազատելով ի ձեռաց անօրինաց, եւ ետու վախմ փա-
ռուոր ուխտին Երից մանկանց վանից, ձեռամբ քեռին
իմոյ Ներսէս կաթողիկոսին [Աշտարակեցոյ], որ
անշինչ յիշատակ մնայ իմ հոգոյս, ընթերցողք յիշեն
զբազմամեղս, եւս առաւել ծնողք իմ Գեարքն եւ Պա-
շիմ: Եւ որք յիշէք, յիշեալ լիջիք առաջի ահեղ ատենին
Քրիստոսի, եւ ասացէ՛ք Հայր մեր, որ յերկինս, որ է
Հոգոցն հանկուցելոց:

7. 46ա (Ի. դ., շղագիր) Ըստ Հ^մ 172 Մեկնութիւն
ժամագրոց ուղղագոյն օրինակի, է պակաս «Լուսաւո-
րեսցուք եւ մեք զայս մտաց մերոց, նայելով ի լոյս
ճշմարիտ, իմաստութեամբ վարել զընթացս կենաց մե-
րոց, զի յաւրհնութիւն վայելիցեմք, եւ զի հով...»:

ԳՐԶԱՓՈՂՁ Պտոկ-պհայնկ Աբ՝ «է ճանապարհ, որ
թուի մարդկան թէ աջ է, բայց վախճան նոցա հայի յա-
տակս դժոխոց» (տե՛ս 269 բ նիւթը), 1ա՝ «կամակոր»:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած թերթիկին՝ «Մով-
սէս վարդապետի Մեկնութիւն ժամագրոց, (2)», 1ա՝
«Հ^մ 175/2608, ՌԶԴ. 1635, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»,
1գ (Ժէ. դ., անարուեստ բոլորգիր, եղծուած) «Գիրքս
Գրիգոր վար[դապետին է]»:

2609


Ս Ա Ր Գ Ի Ս Կ Ո Ի Ն Դ , Մ Ե Կ Ն Ո Թ Ի Ի Ն Ղ Ո Ի Կ Ա Ս Ո Ի

ԲՐՋՆԻ


ԳՐԻԶ՝ Մարտիրոս Բրջնեցի: ՍՍԱՅՈՂ՝ Թաղէս վրդ.: ԿԱԶՄՈՂ՝
Սահակ վրդ.:

ԹԵՐԹ՝ 319+1 (կրկն.՝ թ. 1). չգրուած 1ա, 25բ-6ա: ՊՐԱԿ՝ Ա-
Ջx12 (Ա՝ 11, Ջ՝ 9)*: ՆԻԻԹ՝ թուղք: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 26x17: ԳՐՈՒ-
ԹԻԻՆ՝ միասին (21,5x12,5): ԳԻՐ՝ բոլորգիր. նմուշ՝ 109ա (Եր-
բեմն՝ խոշոր. նմուշ՝ 28ա): ՏՈՂ՝ 24-26 (մեծ մասամբ՝ 25): ԿԱԶՄ՝
դրոշմագրող բաց շագանակագոյն կաշի, դոնակով եւ 3 կապիչով,
միջուկը տախտակ, աստուր կապոյտ կտաւ. լուսանցակողերը՝
կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Բ+ԳԴ՝ չգրուած սպիտակ թուղք (Ժէ. դ.) լու-
սագծերով եւ լուսադրոշմով՝ բուսական ռեաւորուած զինանշան,
որի ներսում ետեի ռոտերի վրայ կանգնած կատուագրի եւ 3
ֆուտաթե ծաղիկ:

*Պրակահամարներ՝ քստ այբուբենի գրերի կարգի:



Նմուշ 28ա




Նմուշ 109ա

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան ըստ Մատթեոսի, ԺԶ.
11-12, 14-17, 19-20, 22-23: 1 (Ա) + 1 (Ե): Թ. դ.: Ստացուած մէ-

ՈՂԳ. – 1184

կական երկսին թերթերի ընդլայնակի եւ երկայնակի հատումով,
եզրահատուած, պահպանուած մէկ սինը եւ միւսի եզրը: Մագա-
ղաթ, 25,4x16, միասին (12x9,5), բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝
Եա), տող 9+2: Կարդալ՝ Աբ, Եբ, Եա, Աա. «Թէ ոչ վասն հացի
ասացի ձեզ... Ոչ խորհիս զաստուածոյսն»:



Նմուշ Եա

Ա. պատառիկ-պահպանակի ստորին եւ Բ. պատառիկ-
պահպանակի վերին եզրերին 16x3,5 չափսի, երկուական տող
ունեցող մագաղաթ կարկատաններ (կարուած սպիտակ թելով,
վրան ցեցի անցքեր). Մտք. ԺԹ. 27, 29, Ի. 4, 8. Աա՝ «Մեք թողաք
զամենայն եւ եկաք զկնի րո, արդ [զի՛նչ լինիցի մեզ]», (Մտք.
ԺԹ. 27): Աբ՝ «Նոցա վարձս, սկսեալ յետոյն մինչ» (Մտք. Ի. 8):
Եա՝ «[Հար]խրապատիկ աոցէ [եւ] զկեանսն յալի[տեանկանս]»
(Մտք. ԺԹ. 29), Եբ՝ «Դոմ յայգի ի[մ եւ որ] ինչ ածան ի[ցէ]»
(Մտք. Ի. 4):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի Ա. փեղկի 3 գամերն ընկած, կա-
պիչները մաշուած, պատառիկ-պահպանակներ կեղտոտուած,
խունցած, կծկուած, լուսանցակողերը՝ գունաթափ, պիպ. Բ.
ԳԴ, թ. 1-22, 282-319՝ ցեցի անցքեր, թանաքի բարձր թթուայնու-
թեան հետեւանով գրադաշտը մասամբ խունցած, հիւմեքի
մօտ թերթերը կեղտոտուած, խոնաւութեան եւ աղտոտուածու-
թեան զանազան հետքեր, սկզբի եւ վերջի թերթեր նորոգուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

1գ-318բ [Սարգսի վարդապետի Կունդի] Պատ-
ճառ Աւետարանին Դուկասու

– 1գ-3բ [Նախերգան] – Դուկասու Աւետարանս
երրորդ է ըստ կարգի աւետարանչացն... եւ լինիցիմք
ճշմարտապէս ժառանգք Աստուծոյ եւ ժառանգակիրք
Քրիստոսի: Յաջողեայ Քրիստոս զգործս իմ:

ա. 3բ-35բ [Գլուխ Ա.] – Քանզի բազումք յուժարե-
ցին վերստին գրել... եւ այնուհետեւ համարեցաւ Իսրա-
յեղի իբրև զհրեշտակ իջեալ յերկնից:

բ. 35բ-60բ [Գլուխ Բ.] – Ել հրաման յովոստոս
կայսերէ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիե-
զերս... զի Դուկաս գրէ. «Ուսուցանէր ի ժողովուրդս
նոցայ փառաւորեալ յամենեցուն[ց]»:

գ. 60բ-8բ [Գլուխ Գ.] – Ի հինգետասան[երորդի]
ամի տէրութեանն Տիբերեայ կայսեր եւ ի դատաւորու-
թեան Պիղատոսի Պոնտացոյ... այսպէս եւ մեք ի Քրիս-
տոս մկրտեալք վերստին ժամանեցաք ի դրախտն:

դ. 68բ-79ա [Գլուխ Դ.] – Եւ Յիսուս լի Հոգովն Սրբով
դարձաւ ի Յորդանանէ... զի վասն ամենեցուն առաքեցաւ:

ե. 79ա-83ա [Գլուխ Ե.] – Եղև ի խոնել զնովաւ
ժողովրդոցն եւ լսել զբանն Աստուծոյ... քանզի ոչ էին
մաշեալ հրէական վարդապետութեամբն:

զ. 83բ-90ա [Գլուխ Զ.] – Եղև ի շաբաթու Բ.որ-
դումն առաջնոյն, որ էր ամն ողջոյն շաբաթ... թուի ինձ
թէ զհանդերձեալ դատաստանացն հատուցումնն ասէ:

է. 90ա-101ա [Գլուխ Է.] – Իբրև կատարեաց զա-
մենայն բանս իւր ի լսելիս ժողովրդեանն... եւ ատա-
րացուցանել եւ առնել հաղորդս դիւաց:

ը. 101բ-6բ [Գլուխ Ը.] – Եւ ինքն շրջէր ընդ քաղաքս
եւ ընդ գեաւոս... զի մի առաչաւք ինչ կարծիցի[ն]:

թ. 106բ-21բ [Գլուխ Թ.] – Կոչեաց զառաքեալսն եւ
եւտ նոցա զաւրութիւն եւ իշխանութիւն ի վերա դիւաց...
որ ոչ փոյթ արարին գործեացն եւ բազմութեան ձկանցն:

ժ. 121բ-31բ [Գլուխ ժ.] – Յետ այսորիկ երևեցոյց
Տէր այլևս ՀԲ. (72)... զի զամենայն առաքինութիւն կա-
մեցաւ ուսանել եւ ըստ կարգի ուղղել:

ժա. 131բ-42ա [Գլուխ ժԱ.] – Եւ եղև ի տեղոջ ու-
րեք կալ յազաւթս... հնարէին բանիւն զրպարտութիւն
գնել ի վերայ նորայ:

ժբ. 142ա-54ա [Գլուխ ժԲ.] – Յիսուս ասէ. Չգոյճ
լերուք ի խմորոյ փարիսեցոցն... որ յետին բնիոն եւ
նաքարակիտ անուանեաց:

ժգ. 154ա-63ա [Գլուխ ժԳ.] – Եկին ոմանք ի նմին
<ժամ> ժամանակի եւ ասեն նմայ վասն գալիլեա-
ցոցն... որք ի յայնժամ երկիր պագանելոց էին նմայ:

ժդ. 163ա-70ա [Գլուխ ժԴ.] – Եւ ի մտանել նորայ ի
տուն ուրեմն յիշխանաց փարիսացոցն ուտել հաց ի շա-
բաթու... և զհատուցումն հրով սպառնայ յասելն՝ զաւտ
նորայ հուր ծախէ:

ժե. 170ա-83բ [Գլուխ ժԵ.] – Եւ էին մերձ առ նայ
ամենայն մաքսաւորք և մեղաւորք... եւ միանգամայն
ասել իսկական նորայ բարեգարգութեանն եւ ամենայն
աշխարհի խնամածութեանն:

ժզ. 183բ-95բ [Գլուխ ժԶ.] – Եւ ասէ առ աշակերտս
իւր. Այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես... այսքան
վայրենամիտք եղեն անհաստատութեամբն:

ժէ. 195բ-203բ [Գլուխ ժԷ.] – Եւ ասէ առ աշա-
կերտսն իւր. Չէ մարթ չգալ գայթ[ակղութեան]... և
զկենդանիսն որսացեալ կերակրի:

ժը. 203բ-13ա [Գլուխ ժԸ.] – Դատաւոր մի էր...
քանզի զհետ իսկ երթային՝ փառաւորելով զնշանա-
գործն:

ժթ. 213ա-29բ [Գլուխ ժԹ.] – Եւ մտեալ շրջէր ընդ
երէքով... որ ոստիւք արհնէին զեկաւորութիւն թագա-
ւորութեան նորայ:

ի. 229բ-37ա [Գլուխ Ի.] – Իսկ ի միւսում ատուրն
յայնցանէ, մինչդեռ ուսուցանէր, ասեն ցնա... քան
զայն, որ բարեան վարին ի շարն:

իա. 237ա-47ա [Գլուխ ԻԱ.] – Ետես մեծատունս,
որ արկանէին գտուրս իւրեանց ի գանձանակն... եւ
յնգիպտոս Ե. քաղաքան, որ պահեցան:

իբ. 247ա-66բ [Գլուխ ԻԲ.] – Մերձեցաւ տան բա-
ղարջակերացն, որ կոչէր պասէք... եկն սփռեցաւ ի
վերայ Փրկչին մերոյ:

իգ. 266բ-90բ [Գլուխ ԻԳ.] – Եւ յարուցեալ ամենե-
քին ածին զնա առ Պիղատոս... Հանդարտեցին եւ կա-
նաչքն ի նմին ատուր ըստ արինացն, թէպէտ եւ ջեր-
մէին [ի] սպասաւորութիւն Տեառն ամենայն ուրեք:

իդ. 290բ-317բ [Գլուխ ԻԴ.] – Բայց ի միաշաբա-
թոջն վաղ՝ քաջ ընդ առաւաւտն եկին ի գերեզմանն...
եւ եղեն խորհրդակից Քրիստոսի, որում փառք յաւի-
տեանս. ամէն:

– 318ա [Վերջաբան] – Հգաւրին եւ անճառին, փա-
ռաց փառաւորին, անբաւ վեհին... փառք եւ զաւրու-
թիւն ի ներկայիցս եւ յանցելոցն, ի սպառականց եւ
յանյանգից, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Բ. Սարգիսեանը հաւանական է համարում, որ հեղինակը Ստեփանոս Սինեցին է (տե՛ս Վենետիկի ցուցակ, Բ., էջ 294-304), Գ. Յովսէփեանը բնորոշել է «Ստեփանոս Կունդի կամ Սարգիս Կունդի» (Յիշ-ք, էջ 499): Լուսանցներում բուն գրչու-
թեամբ կան սրբագրութիւններ, աղբիւրների եւ նրանց հեղի-
նակների անունների նշումներ, հատուածաբաժանման որեւէ
նշան չունի: Տե՛ս Սարգիս Կունդ (ԺԲ. դ.), Մեկնութիւն Աւետա-
րանին Դուկասու, աշխ. եզնիկ եպս. Պետրոսյանի, Ա. էջմիա-
ծին, 2005, «ձեռ. Ա», էջ 17-636. հմմտ. եզնիկ եպս. Պետրո-
սեան, Արմէն Տէր-Ստեփանեան, Սուրբ գրքի հայերէն մեկնու-
թիւնների մատենագիտութիւն, Երևան, 2002, էջ 91:

ՅԵՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

242բ ՈՎ ընդերձողդ եւ կամ ընդաւրինակողդ, յոր-
ժամ ի պէտս հաստատութեանն հաւատոյ լուծանես
զգլուխ գրոցս, ասասջիր, թէ՛ Աստու՛ճ, որ կամիս

գլեակ ամենայն մարդոյ, ողորմեայ՝ ի քում մեծի գայտեանդ սուրբ վարդապ[ետ]ին Ստեփաննոսի, որ կոչի Կունդ: Եւ որք ընդ նմա աշխատեալք են ի գործս բարիք գրոցս այսմիկ, ընդ նոսին եւ ստացողի սորայ՝ Թաղէս վարդապետի եւ ծնողաց իւրոց, եւ զիս՝ զանպիտան եւ զսուտանունս Մարտիրոց երեց ի դղեկ քաղաքէս Բջնոյ, յիշեսցիք եւ ողորմութիւն ի Քրիստոսէ հայցեցէ՛ք, զի կարող է Աստուած ի ձեռն այլոց այլում ողորմութիւն առնել, եւ դուք, որ յիշեքդ, յիշեալ |243ա| լիջիք ի Քրիստոսէ Յիսուսէ Աստուծոյ մերոյ, որու[մ] փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն: Խալատելոյս մի՛ մեղագրեր, զի երեց խալատի:

318ա Աստանար յանգ ելեալ աւարտեցաւ տառս այս հրամանաւ սուրբ եւ յստակ յամենայնի Թաղէս վարդապետի ընդդերոյ եւ իմաստնոյ, ընթերցասիրի եւ բարեպաշտի, վարժ եւ կիրթ յամենայն գործ բարեաց՝ ի լուսաւորութիւն սրբոյ եկեղեցոյ եւ ի բարեխաւութիւն անձին իւրոյ եւ ծնողաց իւրոց՝ ստանալով զսայ յիշատակ բարի կենաց եւ մահու, ի ձեռն Մարտիրոսի անարհեստ եւ փցուն գրչի եւ յետին ամենայն երիցանց, ի դղեկ քաղաքէ Բջնոյ, որ է մեր[ձ ի] Դվին քաղաք Հայոց յարեւելալ կոյս: |318բ| Արդ, աղերսի հայցեմք յամենեցունց, որք ժառանգէք կամ ընթեռնոյք կամ ի գաղափար առնոյք, զԹաղէս վարդապետ եւ զծնողսն իւր յիշեսցիք ի Քրիստոս, ընդ նմին եւ զվարձկան սորին գրոց զՄարտիրոս յիշեսցիք ի Քրիստոս, եւ դուք՝ որ յիշեք, յիշեալ լիջիք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեան յաւիտենից. ամէն:

Ի վեց հարիւրերորդի երեսներորդի երրորդի (Ո՛Գ՝ 1184) եղև կատարում սորայ ի փառս Աստուծոյ: Ո՛վ եղբայր եւ տէր իմ Թաղէո՛ս, ըստ կամաց եւ մտաց քոց յիշատակարան գծեալ՝ եւ մեզ թողութիւն շնորհեալ, զի եւ դու եւս առջիս թողութիւն ի Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

Այս երկու յիշ-ները տես Յովս., Յիշ-ք, էջ 499-502, 2^ր 299 («Կետագրութեան ուսումնասիրման համար կարելոր է այս ձեռագիրը, որի համար եւ ուղղագրութիւնը պահեցինք անփոփոխ»): Տես նաեւ Ե-ԺԲ. դդ. յիշ-ք, էջ 244-5:

Ճա Ձոմանս աւետարանիչս եւ զոմանս Աւետարանս քարոզս արարին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 243ա (ԺԳ. դ., կազմողի, անարուեստ բոլորգիր) ես՝ նուաստ ծառայ Յիսուսի Քրիստոսի Սահակ վարդապետ, յոյժ փափագանաւք սիրով Հոգւոյն առի զսուրբ գիրքս զայս՝ զՄեկնիչս Դուկասու Աւետարանին եւ եդի ի միասին զՄատթէոսի Մ[եկն]իչն, զոր գնեալ էի, եւ ձեռաւք իմովք կազմեցի յոյժ սիրով, եւ եդի ինձ եւ իմ սիրելեացն լինել յիշատակ բարի, ակն ունելով առ Քրիստոս՝ տալ մեզ գերկնից արքայութիւնն եւ զմեղաց թողութիւն ի ձեռն բարեխաւութեան սուրբ գրոցս. ամէն:

Արդ, ո՛չ գին կայ այս գրոցս եւ ո՛չ ծախ, այլ որ վարդապետ լինի յիմ ազգէ եւ կամ ի յայս քաղաքէ ի Բալուայ, նայ ժառանգէ գգիրքս զայս Աստուծով: Տէր Յիսուս Քրիստոս ողորմեսցի Յակոբ երիցու հոգւոյն, որ երես զԼուկասու Մեկնիչն եւ գին ոչ էառ, այլ կամեցաւ իւր յիշատակ լինել առ մեզ, մեղաց թողութիւն եւ գերկնից արքայութիւնն շնորհեսցէ նմայ Տէրն մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

2. 319ա (ԺԳ. դ., անարուեստ բոլորգիր) Արարչագործ Աստուած, որ յոչ էից գոյացուցեր գեղե[ալա] ամենայն// գլուխ արարեր//, տալով նմա տեղի բարձր քան զարեգակն, որ եւ հա// ամ, թէ ընդ բարձրութեան տեղոյն նմանապէս եւ փառաց բարձրագունի զնա արժանացուցեր, իսկ նա յայնքան ճոխութենէ ա// աք անգեան մախանաւք այնմ, որ պայծառութեանն արասեակ լեալ եւ խաւար վասն ամբառնալոյն եղեալ, եւ զնայ եւս խաւարեցոյց ի ճշմարիտ լուսոյ կենաց դրախտին, վիրաւորելով ի ձեռն նախնոյն զբաւանդակ վերելքս ի նմանէ, եւ ոչ ոք էր՝ որ ի թիկունս հասանէր նւաստագունիցս, իսկ արարչական գթութեամբ շարժեալ յարարածս քո, առաքելով զհակից բանդ ճշ[մար]-տի փրկութիւն բանական հատիս, որ եղև հովի// իկ բնաւին ծառայելոցս, փրկելով ի զանազան հարուածոց, խաչի եւ արեամբ աւարտեալ զմեր փրկութիւն, ուղղելով զգնացս մեր ի ճանապարհս վերնոյն Երուսաղէմի՛ մարն ամենեցուն զնալով ի զարուսթենէ ի զարուսթիւն, մինչեւ գայցէ միւսանգամ հատուցանել ըստ իւրաքանչիւր գործոց յաւուր ան[երեկի], [յ] որժամ դողան եւ սարսափին// այն արա// ք... Յայնմ աւուր յահեղին ողորմա՛ նւաստագունիս, որ անուամբ եւեթ ունիմ զաստիճան քահանայական, պարտական գտեալ բիւր քանքարոյ, որ եւ վարդապետական ընկալա աշտիճան՝ Գրիգորս անուամբ, եւ մակ[անուեալ] վարդապետ, որ եւ անունս բաւական է ինձ |319բ| կշտամբութիւն անուղա եւ սողոսկէր անձինս այլոց ա՛հ ուսուցիչ եւ ինձ կորուսիչ, զայլս ժրացուցանեմ բանիւ [Տեառն], հեղզ գտանիմ գործով, յաղագս որո անունս բաւական է ինձ ի յանդիմանութիւն: Եւ արդ, Տէ՛ր բարերար, ես ինձն բողոքեմ եւ հրապարակատես գոչեմ յականջս ամենեցուն, ո՛չ թաքուցանեմ զխալաթեալ վէրս հոգոյս, ո՛չ կարեմ վիրաւորս կեղծաւորել, առաջի ծածկագէտ բժշկիդ պատմեմ զանար[էն]ութի[ւ]նս իմ, զի արդարացայց: Ո՛ր Տէր բարերար, զոր ստեղծեր արարչութեամբ, մի՛ անտես առներ ողորմութեամբդ, զոր ազատեցեր խաչիւղ, մի՛ թողուր ի ծառայութեան մեղաց եւ դժոխոց, զոր գնեցեր արեամբ, մի՛ մերժեր ի տիրական իշխանութենէդ, ասելով՝ Ի բաց կացէ՛ք ամէնայն մշակդ տնար[ենութեան], այլ ներեա՛, զթա՛յ, ողորմա՛յ թշուառացեալ եւ եղկելի անձինս յառաջ յիշեցեալ անուանս՝ տառապեալս եւ տկարս՝ Գրիգոր վարդապետս, աղաչեմ, պաղատիմ [խնդր]եմ ի բարե-

պետաց եկեղեցոյ՝ կարգեալ եւ յարիմեալ դիրահաս ընթերցողաց, առաջին՝ Ներսէսի Հայոց կաթողիկոսի ի, խնդրոյ նորին եղբար Գրիգորիսի՝ վերադիտողի Հայոց

Տէ՛ս ձեռ. 1253, 15ա-353ա. Ընծայական/12բ-7ա: ա/17ա-99ա: ր/99ա-165բ: գ/165բ-214ա: պ/214ա-58բ:

Տէ՛ս նաեւ Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալուր..., Կ. Պօլիս, 1825: Տպագրի համեմատ ձեռագրում ամբողջ բնագիրը (ըստ այդմ եւ գրովները) շատ համառօտ են, բնաբաններն ու սկզբնատողերը երբեմն տարբեր են:

ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 259ա (գրչի) Փառք սուրբ Երրորդութեանն՝ երեքանձնեայ եւ մի բնութեան աստուածութեանն, յամենայն գոյեղինաց, որ արժանաւորեաց զանարժանս՝ հասանել յաւարտումն տեառնախօս Մեկնութեան սուրբ Աւետարանի Մարթնիսի՝ ձեռամբ անարհեստ եւ փցուն գրչի՝ պիտականուն Յովհաննէս կրօնաւորի, ի ստացումն եւ ի վայելս գերապանծ եւ մեծ ըրբունապետին Յովհաննիսի, յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնաւղաց եւ վարժապետաց, եղբարց եւ ամենայն արեան մերձաւորաց եւ առաջնորդ վերին գնացմանն:

Արդ, որք հանդիպիք ի շահս աւգտութեան աստուածախօս Մեկնութեանս, զվարդապետն Յովհաննէս եւ զհարսն ամենայն եւ զանյարմար տառապիտ (= տառատիպ) սորին եւ զիման ամենայն յիշեսջիք ի մաքրափայլ եւ յարժանաւոր յաղաթս ձեր, զի եւ դուք յիշեսջիք առ բուն բարին Քրիստոս, որում փառք յաւիտեանս. ամէն: Նա եւ զՊետրոս սրբասնեալ կրօնաւոր յիշման արժանի առնէք, որ յառաջոյ եւ յետոյ գրեաց եւ աւգանական եղեւ մեզ վասն անկարութեանն, զի յոյժ վշտացայ ի բազում ձանձրութեանէ: |259բ| Այլ եւ զՍտեփանոս՝ կազմող սորայ, որ եւ զթուղթս այլ կոկեաց, եւ զմիաբան եղբարքս մեր զՍէթ եւ Կիրակոս եւ զԱնդրանիկն (վերջին երկու անունը՝ յետագայ յաւելում) եւ զԹորոս եւ զԴաւիթ, որք աւգանական եղեն մեզ ձեռնտութեամբ եւ ամենայն գործովք, եւ զհոգեւոր տնտես մեր, որ սպասաւորեաց մեզ լրջմտութեամբ. զամենայն զգրեալքս ի սմայ յիշեցէ՛ք ի Քրիստոս եւ մեղաց թողութիւն խնդրեցէ՛ք, եւ Աստուած զձերն եւ զմերն առ հասարակ թողցէ:

Արդ, գրեցաւ սայ ի նուրբ եւ ի նեղ ժամանակի, յորում գերին եւ աւար լինին ամենայն ազգք քրիստոնէից՝ վասն ծովացեալ մեղաց իմոց եւ ի տառապանս եւ ի տարակուսանս կայեաք ամենեքեան: Գրեցաւ սա ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոյս Գամաղիէի, որ կայ առնթեր հիզամ քաղաքիս, ի խնդրոյ սուրբ եւ առաքինաջան վարապետի Յովհաննիսի՝ յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց եւ ամենայն արեան մերձաւորաց, եւ փոխելոցն առ Քրիստոս. ամէն: Դարձեալ կրկին յերես անկեալ աղաչեմ խոշորութեանն եւ սխալանացն անմե-

ղադիր լինել, զի յոյժ վշտալից էր տեղս ի մժեխից եւ ի ճանճից եւ յայլոց, որ սոցին նման է: Թվականին ՊԹԺ.Երրորդի (1363):

Գրչափոխութեամբ յաւելեալ ունի՝

259բ Ի Յոբայ – Արդ, քնար եմ ես նոցա, եւ զիս ունին բամբասանս: Գարշեցան յինէն մեկնեալք ի հեռաստանէ եւ յերեսաց իմոց զթուք ոչ խնայէին: Վասն իմ ծախեցին զգուլթս իւրեանց, քաղցրացաւ նոցա հաց ընդ լկտիս: Զանդ տհաս, որ ոչ իւրեանց էր, հնձեցին, տկարք զայգիս ամբարշտաց անհաց եւ անվարձ գործեցին, զմերկս [բա]զումս ննջեցուցին առանց հանդերձից, զսգեստս անձանց նոցա զերծին (Գիրք Յոբայ, Լ. 9-10, ԻԳ. 5-7):

258բ Զմեղուցեալ գրիչս եւ զիման ամենայն յիշել ի Տէր, աղաչեմ:

259ա Վասն սիրոյն Քրիստոսի՝ գրչի սորայ մեղապարտի Յովհաննիսի սուտ կրօնաւորի եւ անպիտան յամենայնի լի սրտիւ ասացէ՛ք Աստուած ողորմի:

2ա Զբազմալէրս յիշ[ե]ա՛, աղաչեմ:

89բ Ով սուրբ ընթերցող, բարէմի՛տ եւ իմաստուն, յիշեա՛ ի բարին զգծողս եւ մի՛ մեղադրեր խոշորութեան գրոյս եւ սլալանացս, աղաչեմ:

132ա եւ զիս յիշէ՛:

162բ Զանպիտանս յիշեա՛:

202ա եւ զիս յիշեա՛՛ զմեղուցեալս:

221բ Տէ՛ր իմ Յիսուս, յայնմ ժամուն ողորմ[եա՛] ինձ:

2. 258բ (ստացողի) Ի ժամանակս այլայլական, Աշխարհս ամեն թափառեցան, Յերկրէ յերկիր տարագրեցան Վասն մեղացն, որ բարդեցան: Յովհաննէս մակոյկ, տգէտ ու անբան Ի լըռամկաց պատեալ իշխան Վասն փառաց յոյժ մոլութեան Վարդ անւան իմ// անպիտան: Հոգին անեղ անհասական Ինձ ասդ արար, թէ չես պիտան Ես խոնարհացն եմ բնակարան Անմեղ հոգւոյն, որ ինձ բաղձան: Դու միշտ ցանգաս փառաց մարդկան Գերիս մտօք դու ելնես անբան Կարծես զքեզ յոքունց պիտան Փշաբեր լինիս ծաղկի փոխան: Յիշեա՛ց զգուլթն արարչական, |259ա| Զի է արւեստ իւրն բնական, Եցոյց ինձ զհացս անմահութեան, Զի ըրբունեացն է սայ սեղան: Ես լի սիրով յայս փութացա, Ի մեկնաց բանս յարեցայ, Կենաց կտակ զսայ ինձ ստացա, Զի արեգակն ոգոց է սայ:

Արդ, աղաչեմք զգրիպողք սորա
 Յիշման առնէք զմեզ յարակա,
 Զի տապ բոցոյն յինէն դառնա,
 Զոր իմ կամաւս ես ինձ ստացա:
 Անշափ 'ւ անբաւ եղուկ եւ վայ,
 Երբ քանքարաց Տէրն յայտնի գա,
 Պահանջէ յինէն զգրեալս ի սմա,
 Զոր ի գործոցն յոյժ հեղգացայ:
 Անձն անպիտան փութով ջանա,
 Մինչ դեռ այսօրդ առաջի կա,
 Զի արտ/// եղի է սա
 եւ այլ բարեացն ով կամենա:
 Երրորդութեանն փա՛ռք յարակա,
 Որ ըստանալ ետ զմեզ գսա,
 Զի որ սիրով ընթեռնու գսա
 եւ ի գործոյն ոչ հեղգանա,
 Անմահութիւն տիրէ նմայ. ամէն:

3. 89բ (կազմողի) Ընդ ամին եւ զկազմողս յիշեցէ՛ք ի բուն բարին Քրիստոս, որ է արհնեալ յաւիտեանս. ամէն:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. Պտուկ-պհայնկ Բբ (1594 թ., անարուեստ նոտրգիր) Թվին Ռեհ. (1594), յունիս ժՁ. (16) սկիզբն արարի Մաթեոսեան Աւետարանին ի Համիրք՝ ի Սուրբ Սարգսի եկեղեցին: Թվին Ռեհ. (1594), մարտի Գ., Աւագ պահոցն Իպրահիմ փաշային փիալա քեխեան մտաւ ի Համիրք. զարհուրեցաւ բոլոր քաղաքն յահէ նորա: Մայիս Բ. ելաւ ի Համրա, մայցով յունիսի ԻԳ. Մահմատ փաշան եկաւ ի Համիրք: Տոյժ, այսինքն պատիժ: Տեսի զգործս քո, զի անուն կենդանոյ ունիս, եւ մեռեալ ես, զի միշտ ցանգա մարդ անյայտիցն գիտակ լինել:

2. Պտուկ-պհայնկ Գբ (1599 թ., անարուեստ նոտրգիր) Ազարիայ կաթողիկոսն յԵսայա մարգարէի տօնին Ե.շաբթին ելաւ ի Համրա, յուլիսի ժԹ. գնաց ի Զուլա: Կառկառեցի Պեարոս վարդապետն օգոստոսի Ա., օրն Գ.շաբթի Ռեհ. (1599) թվին ելաւ ի Համրայ, գնաց յեզնկան վասն Երուաղէմայ նիւիրակութեան:

3. 107բ (ժՁ. դ., անարուեստ բոլորգիր) Փրկեա՛յ, Քրիստո՛ս, զյուսացեալս ի քեզ:

4. Պտուկ-պհայնկ Բա (ժԸ. դ., անարուեստ նոտրգիր) Աբղուլին գնած Մաթեոսի մեկնիչն է:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ Պտուկ-պհայնկ Բա սեւով շրջանակ, մէջը թագապսակ զինանշան, եզրերին՝ “Πεγ. Αχαλιψεих-ской градскоѣ по.паша”:

ԳՐՉԱՓՈՐՉ՝ Պտուկ-պհայնկ Աա (նոտրգիր) «աաբաա, Հանգամանս, այսինքն՝ սահման կամ շափ կամ ընտրեալ, հանգամանս ցսահման կշկ, ափկընա»: «Քանգի ան մարդ է/// զանձին իւրոյ զփառս/// եւ կարծելի առնել զխորհուրդ, որպէս ցոփ ոք, որ պատմէ

զարժանաւորութիւն եւ զպատիւ անձին իւրոյ: Քանգի դժուարահաւատ է բնութիւն ի կարի վիշտս գոլով ազատութիւն, հագիւ թէ ակն ունիցի: Առաւել յանձին ունել, քան խնդրականացն: Զի այս բնաւորեալ է ի մարդ բարոյն ընդ առաջ զընալ խելով, Աստուծոյ եւ ի պատուհասելն հրաժարելս կարծէիր, թէ յինէն ի բաց կացցէ աւելի ինձ, քան իցէ: Զի լաւ է մի ոք առնէ զկամս, զի այն զբիւր անօրէն: Զի լաւ է վէրք բարեկամի, քան զկամակոր համբոյր թշնամոյն»: «Ժսկ դու մի մնասցես ի կարծեցեալ քո իշխանութիւնդ»: Պտուկ-պհայնկ Բբ (նոտրգիր՝ իբրեւ շարունակութիւն վերոյիշեալ յետագայի յիշատակարանի) Զինչ է վհուկ: Դեւ իմն շար, որ յորովայնէ կանանց խօսի եւ նոր իրօքն ջանայ հաւատալի առնել զմոլութիւն, զի ոչ բերանովն, այլ յորովայնէն խօսի: Չագացեալս, այսինքն ձագուց պէս ճովեալս: Թուի, թէ եւ այս զմեռելահարցուկս նշանակէ, զի նոր բարբառովն զարմացուցեն դեք իբրեւ զհաւս, զոր Հ.ունքն զրայխօս ասացին: Զինչ խնդրեն վասն կենդանեացն ի մեռելոցն: Մեռեալս զդեան կոչէ կամ զմեռեալսն եւ այս բաւական է ցուցանել զստութիւնն, զի թէ կենդանիքն հարցողքն չգիտեն ինչ, զիա՛րդ մեռեալքն գիտեն: Որ ոչ է առողջ մարմնով, ոչ կարէ ծառայել Աստուծոյ հոգւով»: 1ա (բոլորգիր եւ նոտրգիր) «Թէ ասիցէ ոք, թէ անիծեալն եւ մեռեալն զիարդ կեանս տայ աշխարհի, եւ աւձն անիծեալ զիարդ կեանս տայր տեսողացն յանապատին: ԶՎերգիլիոսի, որ ասէ յերից միութենէն ի մի տեսաւորի եւ յերից աներեւութիցն ոչ պակասի եւ Սիբիլայ կին էր եւ գրեաց ի գիրս իւր ի շարս պատճէնի, վասն խաչին ասէ. Ով երիցս երանեալ փայտ, քանգի աւծեալն տարածէր զբազուկս իւր ի վերայ քո, եւ նախ գուշակեաց զխորհուրդ Սուրբ Երրորդութեանն եւ միւսն զշարշարանն Քրիստոսի: Քահանայութեան կառք սէր եւ խոնարհութիւն, զի մին բարձրացուցանէ, եւ միւսն զբարձրացեալն ոչ թողու անգանել: Արի՛, Տէ՛ր, ի հանգիստ քո: Ոչ ուրեք է տեղի, որ կարող է ի մեղաց պահել զմարդ, եթէ ոչ անձին ամբիւրով սգուշասցի: Եբրաեցերէն Մովսէսի Ե. գրոց անունն այս է. Բերսիթ Արարածք էլեամովթ Ելք, Նուարէ, Դաբբեր, Դաբարիս՝ Երրորդ օրէնք: Աւտարութիւն է յամենայնէ հրաժարել եւ յԱստուածոյ զինք անորոշելի ունել եւ ոչ յաշխարհէ յաշխարհ շրջել»: Պտուկ-պհայնկ Գա՝ «խի», Պտուկ-պհայնկ Դբ՝ «ն, իի»:

ՆԿԱՐԱՓՈՐՉ՝ 2բ, Դա՝ «թռչուն», Դա՝ բուսական նախշ:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած թերթիկին՝ «Եփրեմ վարդապետի Մեկնութիւն Մատթէոսի Աւետարանին», Աա՝ «Մ[խառն] եպ[իսկոպո]ս, ՊԻ.-1371», Բա՝ «Հ^մ 171, 64.», 1ա՝ «Հ^մ 181/2610», 259բ՝ «1371»:


2611

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Յ

ՂՐԻՄ մայրաքաղաք

ԳՐԻԶ, ՍՏԱՅՈՂ, ԿԱԶՄՈՂ, Կարապետ Բնյ.:

ԹԵՐԹ՝ 177. չգրում 175թ-176ա, 177ա: ՊՐԱԿ՝ Ա-ԺԵX12 (Ա՝ 11, ԺԵ՝ 10): ՆԻԻԹ՝ բուր: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 25x17,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (1ա-4ա, 133ա՝ 20,5x13), երկին (4թ-132թ, 133թ-15թ՝ 20,5x13,5): ԳԻՐ՝ բուրգիր (նմուշ՝ 32ա): ՏՈՂ՝ 37-41 (1ա-134թ), 33-38 (133ա-175թ): ԿԱԶՄ՝ ծաղկաթուղթ, մշքր կարմիր կաշի, միջուկը ստուարաթուղթ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱ՝ ՆԱԿ՝ Ա+Բ՝ սպիտակ չգրում թուղթ, մաս կազմաստառի:



Նմուշ 32

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ – ձ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 4ա, 133ա: Հովի՝ 65թ: Լ ու ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական, թռչնային, խաչ տանար, լուշկապարիկ: Ջ ա ր դ ա գ ի ր՝ թռչնագիր, հանգուցագիր: Գ ո յ ն ե ր՝ կարմիր:

Տե՛ս Աստղիկ Գեորգեան, Անանուն հայ մանրանկարչիներ, IX-XVII, Կահիրե՛, 2005, էջ 132:

ՎԻՃԱԿ՝ բաւարա. լուսանցակողերը գունաքապի, մշքի կաշին կեղտոտում, մաշում, վերին մասում ցեցի անցք, թ. 132, 137-8, 140, 143՝ հիմքից մասամբ պոկում, ձեռագիրը խոնաւտիւն տեսած, թերթերին ցեցի անցքեր, հիմքերի մօտ կեղտոտում, աղտոտումներով գանազան հետքեր. վերակազմուել է բազմիցս՝ 1363, 1601 թթ. եւ ԺԹ. դ.:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. 1ա-128թ Սրբոյն Նան<ան>այ վարդապետի Աստրոյ արարեալ Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին

Տե՛ս ձեռ. 2520, 18ա-255թ: Յոշքն/1ա-3թ: ա/4ա-72ա: ր/72թ-118թ: գ/118թ-28թ:

Լուսանցներում եւ տողամէջերում կան յետագայ գրչութեամբ սրբագրութիւններ:

Տպ. տե՛ս Նանայի Աստրոյ վարդապետի Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին, Վենետիկ, 1920:

Բ. 129ա-32ա Յաղագս սփանչելեացն Յովհաննու առաքելոյ եւ աւետարանչի – Ընդ ժամանակս Դիմետիանոսի երանելին Յովհաննէս առաքեալ... էր Յովհաննէս ամաց Ծ.ից (50), եւ ես էի ամաց երեսնից, եւ երրորդութեանն փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

– 131թ-2ա Վասն տեսլեան – եւ յետ ժամանակաց ինչ առեալ զիս Յովհաննէս...

Գ. 133ա-68ա Տեսութիւն բնութեան աղաթից աւետարանչին Յովհաննու, ի խնդրոյ Ստեփանոսի վարդապետի Յակովբայի, ի Ներսիսէ աշակերտէ իւրոյ եւ հոգեւոր որդեկէ...

Տե՛ս ձեռ. 2516, 1ա-60թ: Նխոր./133ա-4թ: ա/135ա-68ա:

Դ. 168ա-74թ [Մեկնութիւն Հայր մեր-ի]

ա. 168ա-71թ Մեկնութիւն սրբոց վարդապետաց եկեղեցոյ, արարեալ ի Հայր մեր որ յերկինսն, զոր ուսոյց Տէր աշակերտացն, եւ նոքաւ ամենայն հաւա-

ՊԺԲ. – 1363

տացելոց՝ աղաթիւ առ Հայր Տեսուն – [Բան]. Հայր մեր, որ յերկինսդ ես: [Մեկնութիւն]. Քաղցր եւ ախորժ, շնորհալի անուն... արքայութեան իւրոյ եւ փառս տալոյ նմա յաւիտեանս. ամէն:

բ. 171թ-4թ Դարձեալ կրկին մեկնութիւն ի Հայր մեր որ յերկինսն, զոր ուսոյց Տէրն աշակերտացն – [Բան]. Հայր մեր, որ յերկինսդ ես: [Մեկնութիւն]. Որ Հայր դաւանէ, զինքն ի ներքոյ որդէգրութեան... զմեզ ապրեցո՛, Տէ՛ր, եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն:

Ձեռ. 771, 141ա՝ սա վերագրում է ներսէս Լամբրոնացուն:

ԺԶ. դ.ի գրչութեամբ յաւելեալ ունի՝

176թ [Փառատրութիւն առ Տէրն] – Արդ, հաստատեցարուք ի նա, յիշելով զնայ...

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

132թ Փառք Հաւորն էականի, Որդոյն միածնի եւ ազատիչ Սուրբ Հոգւոյն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն, ամէն: Արդ, գրեցաւ լուսաշաւիղ եւ աստուածաշունչ զիրքս Աստուծոյ ի թուականիս հայկազան տումարիս ՊԺԲ. (1363), եւ յամսեանն աւգոստոսի աւարտեցաւ ի փառս Աստուծոյ, ի հայրապետութեան տեառն Մեսրոպայ եւ ի թագաւորութեանն Կոստանդինոսի բարեպաշտի, եւ յառաջնորդութեան մայրաքաղաքիս Ղրիմի տէր Ստեփանոսի արքեպիսկոպոսի եւ յաթոռակալութիւն տէր Յովհանիսի կորովամիտ վարդապետի եւ հոգեւոր իմաստասիրի՝ հերձուածողաց հալածողի եւ ցոփագնացից ահարկանողի, զոր այժմ փայլէ ի մէջ եկեղեցոյ իբրեւ զսին լուսոյ եւ իբրեւ զպարիսպ բարձրապատուար շուրջանակի: Եւ մեր խնդրեմք աղաչանաւք ի Տեսունէ, զի ընդ երկայն աւուրս շնորհեսցէ զսա արիւնակ բարեաց մանկանց նոր Սիրովնի:

Բայց գրեցաւ առ ոտս Սուրբ Ստեփանոսի՝ արեամբ նահատակեալ ծառային Քրիստոսի եւ Նախավկայի եւ այլ եւս հաւաքեալ աստ սրբոց, ձեռամբ անպիտան եւ անարհեստ գրչի Կարապետի՝ միայն անուամբ կոչեցեալ քահանայ եւ գործովք հեռի: Որում փափաճող էլեալ ես՝ անբարիս, այսմ հոգիանորոգ եւ լուսաւոր երգարանի սուրբ գրոցս, յամենայն սրտէ եւ ի կամաց աջողութեամբ Տեսուն գրեցի զսուրբ Աւետարանիս Յովհաննու մեկնութիւնս, մեկնեալ Նանա<նա>այ Աստրոյ ուղղադաւան վարդապետի, բազում տառապանաւք յաղագս աշխարհիս զբաղմանց, եւ կազմեցի զսա ի լուսաւորութիւն հոգւոց եւ մարմնոց հաւատով ընթերցողաց եւ յիշատակ եւ բարեխաւս ինձ եւ ծնողաց իմոց, եւ զաւակաց եւ ամենայն ազգականաց իմոց եւ աւտա-

րաց: Արդ, ամենեքեան, որք ընթեռնուք կամ արինակէք, գոհութիւն եւ արհնութիւն տո՛ւք մարդասիրին Աստուծոյ եւ ընթեռնուլն ձեր յիշեսջիք զիս աղաւթիւք ձերովք ի Տէր, զի բազում վիշտս կրեցի ի գրել սորին՝ յաներեւութ թշնամւոյն եւ յերեւելեացն: Այլ Տէրն ողորմած փութով զելան արար եւ զնոսա զամենեսեան պարտեալ ամաշեցոյց: Եւ դարձեալ զնոսա թողեալ եմք յահեղ ատեանն եւ յանխաբ դատաւորն ամենայնի: Եւ ես՝ եղկելիս եւ բազմամեղս յերեսս անկեալ աղաշեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ, յիշեսջիք ի Տէր զԿարապետ գրիչս եւ զկենակիցն իմ զԳօհար տիկինն եւ զաստուածապարգեւ զաւակսն մեր՝ զՀիլալն եւ զԱստուածատուրն՝ զհանգուցեալսն առ Քրիստոս, եւ զոր դարձեալ պարգեւաց մեզ Տէր զաւակք մխիթարութեան նովին անուամբ՝ զՀիլալն եւ զՎարդենին, եւ զճնողսն իմ զԱստուածատուրն եւ զԱղուփաթառնն, եւ զմարքուրն իմ զԼալիաթառնն եւ զեղբարսն նոցա՝ զԱրքերն եւ զՄովսէսն, եւ զԱզգերսն եւ զՋաւուարքն եւ զԵլիսաթառնն եւ զԽաչատուրն եւ զՇուշանն եւ զԱստուածատուրն եւ զեղբարսն եւ զքոյրսն իմ յիշեսջիք աղաւթիւք ձերովք, եւ դուք յիշեալ լիջիք առ Տէր. ամէն, ամէն:

22ա Զողորմելի հոգս զԿարապետ գրիչս աղաշեմ յիշել բարի յիշմամբ առ բարերարն Աստուած եւ թողութիւն հայցել ինձ եւ իմոցն (նման՝ 48ա, 50բ, 118բ):

28ա Որդի՛ Աստուծոյ, Քրիստո՛ս Աստուած, փրկեա՛ զմեզ ի փորձութենէ:

31բ Որ ոք յերկուս բաժանեն, նզովեսցէ զնոսա Քրիստոս, եւ զմի բնութիւն դաւանողքն արհնեսցէ. ամէն:

34բ Մեղայ Տեառն Աստուծոյդ մերոյ:

77բ Եւ զմեզ կոչեա՛ զողորմութեամբն քո, Տէ՛ր, ի գերեզմանացն՝ որպէս զՂազար, ի կեանսդ յաւիտենից:

78ա Տէ՛ր իմ եւ Աստուած Յիսուս Քրիստոս, քո կամաւոր շարչարանաւորդ ազատեա՛ զհոգիս մեր ի մեղաց հրոյն եւ տանջանաց:

80ա Տէ՛ր իմ եւ Աստուած Յիսուս Քրիստոս, արժանի զմեզ արա՛ տեսանել զքեզ յահագին աւուրն եւ մասնաւորեա՛ վիճակի ժառանգութեան սրբոցն ի լոյս, եւ արհնեալ ես յաւիտեանս. ամէն:

82ա Տէ՛ր իմ եւ Աստուած Յիսուս Քրիստոս, եւ զմեզ ժողովեա՛ ընդ արդարոցն ի շտեմարանս արքայութեան քո. եւ քեզ փառք յաւիտեանս:

89ա Տէ՛ր իմ եւ Աստուած Յիսուս Քրիստոս, քո անճառելի խոնարհութեամբդ կանկնեա՛ զգլորեալքս մեղաւք եւ ողորմեա՛ ինձ՝ Կարապետի գրչի, եւ իմոցն. ամէն:

126ա Փառք անհասանելոյդ Աստուծոյ. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 128բ (1602 թ., անարուեստ նոտրգիր) եւ զսրբագրողս՝ զՄրապիոնս Ուոհայեցի, յիշեա՛ ի Տէր, եւ զաշխատողս ընդ իս՝ զհոգեւոր որդեակս իմ զՈւոհայեցի Յովհաննէս աշակերտն իմ: Էր թիւն ՌԾԱ. (1602), յապրիլ եւ ի մայիս ամսոյն:

2. 175ա (1603 թ., անարուեստ բոլորգիր) Ես՝ Մրապիոն վարդապետս Ուոհայեցի, որ ստացա զայս Յոհանն Մեկնիչս ի հալալ արդեանց իմոց եւ ետու նուէր եւ ընծայ ի դուռն Բարձրահայեաց Ուոհայու Սուրբ Աստուածածնին, զի մնասցէ անջնջելի յիշատակ հոգոյ իմոյ եւ ծնաւդաց իմոց՝ հարն իմոյ խօճա Դանիէլին եւ մօրն իմոյ մղտեսի Աթլագին, եւ եղբարցն իմ Խաւատավերտուն եւ մղտեսի Յակոբին, Քասապարին, Պաղտասարին, եւ քվերցն իմ մղտեսի Մարիամին եւ Վարթխաթունին եւ ամենայն արեան մերձաւորացն իմո: Եւ ով ոք յանդգնի եւ հանէ զսա ի դրանէ Սուրբ Աստուածածնին՝ յիմոց եւ թէ՛ յաւտարաց, ծախելով եւ կամ այլ ինչ պատճա[ռա], դատապարտեալ լիցի յԱստուծոյ եւ յամենայն սրբոց նորա՝ աստ եւ ի հանդերձեալ ահեղ ատենին Քրիստոսի: Այլ լաւ պահողն եւ խնամ տանողն արհնի յԱստուծոյ եւ յամենայն սրբոց նորա եւ ի մէնջ. ամէն:

Գրեցաւ ձեռագիրս ի թվին հայոց ՌԾԲ. (1603) յունվար ամսոյ Գ., Բ.շաբթի, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերո. ամէն:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 174բ (անընթեռնելի): 175ա՝ սեւով ոճաւորուած ութանկին շրջանակ՝ ներսում. «ՍՐԱՊԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ»: 4ա՝ սեւով ութանկին շրջանակ՝ ներսում. «ԳԻՐՔՍ ՍՈՒՐԲ ԷՋՄԻՍԻ»:

ԳՐՉԱՓՈՐՉ՝ 177բ (նոտրգիր) «Ստորոգութիւնք ներքեւաստութիւնք անուանին կամ քննութիւնք, այսինքն՝ զներքինսն քննելոյ: Ստորաստութիւն եւ բացասութիւն: Ստորաստութիւն ճշմարտութիւն է, եւ բացասութիւն՝ սուտն»: «Եղնիկ մի ջրին խմելն զեղջերացն զշուքն է տեսեր: Նա յայնթաքիս զարկեր, թէ սրլեհ եմ հետ վերուցեր արինակ մի յառիւծո փախէր, նա եղջիւրքն ի ծառն է գամե[ր], զոր ինքն ապաւէն դրեր, նա իւր մահն ի յանկից եղեր»: «ԹՃԻԳ., որպէս, դէ, անակիալ ի զատ խոստ, այսար ա զանճառե, որպէս մուշտուիէ, աաբգգեգէրթ, որպէս, Մարտիրոս, կատա»:


ՆՇՈՒՄ՝ Աս՝ «Հ» 185/2611, ՊԺԲ.-1363, Մ[ետրոպ] եպ[իսկոպոյ]ս»:

2612

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ՅՈՒՅԱՅ

ԺԷ. դար

ԹԵՐԹ՝ 105. չգրուած՝ 105թ: ՊՐԱԿ՝ Ա-ԹX12 (Թ՝ 9): ՆԻԻԹ՝ թուղթ, լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 24,5x18,6: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (17,5x11,5): ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 7ա): ՏՈՂ՝ 31: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ սեւ կաշի, միջուկը տախտակ. լուսանցակողերը՝ դեղին: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա + Բ, դեղնաւուն թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եռամանիկ:



Նմուշ 7ա

ՎԻՃԱԿ՝ բարաւար. կազմի կաշին վնասուած, մաշուած, Ա. փեղկին անցքեր, ք. 1-12՝ կարերը հիմքից թույլացած, մասամբ անջատուած, ք. 85-105, պհպ. Բ՝ հիմքից պրակով անջատուած, ք. 44-105՝ լուսանցներին խոնաւութեան հետեւեր, ք. 105, պհպ. Բ՝ ցեցի անցքեր, թերթերի եզրերը դեղնած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1ա-105ա Մեկնութիւն Յոբայ՝ արարեալ Վանա-կան վարդապետի

ՏԵ՛ս ձեռ. 1166, 1ա-99ա. Յոռաջարանութիւն/1աբ: 1/2ա-16բ: 2/17ա-20ա: 3/20ա-4բ: 4/24բ-6ա: 5/26ա-31բ: 6/31բ-3ա: 7/33ա-8բ: 8/38բ-41ա: 9/41ա-4բ: 10/44բ-6ա: 11/46ա-8բ: 12/48բ-50բ: 13/50բ-2բ: 14/52բ-4բ: 15/54բ-8ա: 16/58ա-9ա: 17/59ա-60բ: 18/60բ-6ա: 19/66ա-73ա: 20/73ա-4ա: 21/74ա-7բ: 22/77բ-9բ: 23/79բ-80բ: 24/80բ-4բ: 25/84բ-92բ: 26/92բ-100բ: 27/100բ-5ա:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1բ, 105ա (1831 թ., շղագիր) Մետրապօլիտ Բաղդասար Հասան-Չալալեանց ստացաւ սուրբ տառս հոգեշահս ի 1831 ամին, ի 15 օգոստոսի, ի սուրբ աթոռս Գանձասարու:

ԳՐԶԱՓՈՐԶ՝ պհպ. Աս՝ «ամենայն, ամենայն», գրած ջնջած տառեր, 105բ՝ խզրզոց:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած թերթիկին՝ «վ. Վանական վարդապետի «Մեկնութիւն Յոբայ (2)», պհպ. Աս՝ «Mifs bibiothek. F. a. 47», «Հ^մ 194/2612, ԺԷ., Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2613


ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ՍԱՂՄՈՍԱՅ

ՌՃԼ.-ՌՃԼԱ. – 1681-1682

ՇԱՄԱԽԻ

ԳՐԻԶ՝ Բարսէլ Բնյ. եւ Ղազար սրկ. Քարահաղցի (եղբարձ 3ա-298բ), Թումայ Բնյ. (299ա-313ա), Բաղդասար դպիր (313ա-684բ): ԱՏԱՅՈՂ՝ Վլախոս վրդ. Շամախեցի:

ԹԵՐԹ՝ 687. չգրուած՝ 1ա-2բ, 587բ, 605բ-6ա, 685ա-7բ: ՊՐԱԿ՝ Ա-ԼԲX12 (ԺԲ, ԺԳ՝ 11, ԻԹ՝ 10, ԼԲ՝ 13)+12+1Գ-ԽԹX12 (ԽԷ՝ 10)+6+Ծ-ԾԶX12 (ԾԶ՝ 11)+3: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 24,7x 19,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն (19x14,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 23ա): ՏՈՂ՝ 33-36: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի, դոնակով եւ ետե՛ գամով, միջուկը տախտակ. աստաղը ծաղկազարդ կտաւ, լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա (սկ.), դեղնաւուն թուղթ, չգրուած:



Նմուշ 23ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ – Կ ի ս ա խ ո ռ ա ն Յ ա: Ճ ա կ ա - տ ա զ ա Ր ղ՝ 9ա, 112ա, 200ա, 271ա, 345ա, 416ա, 485ա, 606բ: Լ ո ս ա ն ց ա զ ա Ր ղ՝ բոսական, թոյնային, խաչ: Զ ա Ր ղ ա - զ ի Ր՝ հանգուցագիր, թոյնագիր: Գ ո յ ն ե Ր՝ կարմիր, կապոյտ, կանաչ, նարնջի:

ՎԻՃԱԿ՝ բարաւար. կազմի կաշին մաշուած, մէջքի վերին եւ ստորին մասի կաշին վնասուած, ետե՛ կապիչներն ընկած, դոնակը ծալուած, վնասուած, մէջքը հիմքից մասամբ անջատուած, որի հետեւանով կարերը թույլացած, պհպ. Ա՝ հիմքից պոկուած, ք. 311՝ այրուածի հետե՛, ք. 316՝ պատռուած, ք. 470-92, 670-87՝ ցեցի անցքեր, ք. 628՝ հիմքից մասամբ պոկուած, ստ. լս.ին հետեւեր, թանաքի թրոպայութիւնը բարձր, հիմքերի մօտ կեղտոտուած, թերթերին աղտոտուածութեան զանազան հետեւեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

3ա-681ա [Ներսիսի Լամբրոնացոյ Մեկնութիւն Սաղմոսաց]

ՏԵ՛ս ձեռ. 990, 2ա-730ա: Նախատեսութիւն/3ա-4ա: Թէ վասն էր/4ա-8բ: ա/9ա-112ա: ք/112ա-99բ: զ/200ա-71ա: ղ/271ա-344բ: ւ/345ա-415բ: զ/416ա-84բ: ւ/485ա-605ա: ը/606բ-81ա: Յղակրն/681ա:

Կից ունի՝

1. 681բ-2բ Նախադրութիւն յիշատակ ոգողաց հոգեկից սուրբ տառիս – Աստուածային մարդասիրութեանն նախախնամութիւնն... |682ա| եղեւ վերափոխումն սրբոյ քահանայետին Աստուծոյ տեառն Ներսէսի Ռե՛. (1198)... իսկ առաջին գրութիւն ճառիս ՈՄԳ. (1204)... |682բ| ընդ որում Հօր, միանգամայն եւ Սուրբ Հոգոյն վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ:

Յիշատակարանը Ներսէս Լամբրոնացոյ քեռորդի Ներսէսինն է: ՏԵ՛ս ձեռ. 990, 745ա-6ա, տե՛ս նաեւ Ներսէս վ. Ակի-նեան, Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956:

2. 682բ-3ա Յիշատակ տառիս եւ աստուածախօս մատենիս – Փառք քեզ անսահման անունն...

Աշխարհի արարչագործութեան մասին է:

3. 683աբ Յիշատակարան մատենիս – Աստուած Բանն իւր անհաս գիտութեամբն... Դարձեալ հաստատեցին զառաքելական սահմանս կանոնաց ուղղափառ

հաւատոյ ի փառս սուրբ Երրորդութեանն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

Աղամ-եւայի, Քրիստոսի ծննդեան եւ խաչելութեան մասին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 52բ (Բարսէղ գրչի) Զստացող աստուածապատում երգարանին զՎլլաւ վարդապետն եւ զԲարսէղ գրիչս յիշեսջիբ առաջի Քրիստոսի Աստուծոյ մերոյ (նման՝ 15ա, 25ա, 41ա, 66ա, 77բ, 90բ, 123ա, 138ա, 156ա, 188ա, 210ա, 229ա, 250բ, 310բ):

168ա Ստացողի գրոյս՝ Վլլաւ վարդապետին, եւ անարժան Ղազար գրչիս ողորմեսցի Քրիստոս Աստուած եւ վարձս բարեաց պարեւգեւեսցէ, ամէն (նման՝ 180ա):

199բ Զբստացող գրոյս զՎլլաւ վարդապետն եւ զԾնողան իւր եւ զԲարսէղ գրիչս յիշեսջիբ եւ թողութիւն մեղաց խնդրեցէք ի փրկչէն Յիսուսէ Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն: Այլ եւ աղաչեմ յիշել զբարեսէր եւ զցանակալին իմ զհրաշագեղ եւ զսիրելի եղբայրն իմ զտէր Թովմանն, որ բազում աշխատանս կրէր վասն մեր ի գրելն այսմ սուրբ երգարանիս, որ կոչի Սաղմոս Դապի: Թվին ՌձԼ. (1681):

344բ Ով աստուածասէր անձինք, յորժամ հանդիպիք աստուածահաճոյ Սաղմոսաց մեկնողիս, յիշեսջիբ յաղօթս ձեր զստացողի գրոցս, զքաջ ռաբունապետն:

2. 370ա (Բաղդասար գրչի) Յիսուս Քրիստոս, լոյսոյ հայրական, լուսաւորեա՛ զհոգի զստացողի գրոցս Վլլաւ ամենիմաստ վարդապետի եւ ծնողացն, եւ ինձ՝ մեղաւոր եւ անարժան Բաղդասար գրչի (նման՝ 393ա, 404ա, 415բ, 431բ, 453բ, 458ա, 469ա, 616բ, 628ա, 636ա):

484բ Յիսուս Քրիստոս, Որդի՛ Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, յորժամ գաս հայրական փառօք՝ ի դատել զերկիր եւ հատուցանես իւրաքանչիւր ըստ գործոց մարդկան ի քում գալստեանն եւ առատ ողորմութեամբ, ողորմեա՛ զստացողի սուրբ տառիս Վլլաւս վարդապետին եւ ծնողացն սորին եւ զիս՝ անարժան գրչի եւ իմ ծնողացն՝ Եղիայ քահանայի. ամէն:

Արդ, որ հանդիպիք սուրբ լուսազարդիս ընթերցմամբ կամ գաղափարելով, ի սուրբ եւ ի մաքրափայլ յաղօթս ձեր յիշեցէք եւ զվերոյգրեալսս ի սմա եւ մեղաց թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս եւ անզրաւ յաւիտենին. ամէն: Աղաչեմ զձեզ, ո՛վ հարք եւ եղբարք, անմեղադիր լերո՛ւք սխալանաց գրոյս, զի զօրինակն այսպէս էր:

(«Պաղտասարի»)

Պարգեւ Հոգւոյ սա է բարի,
ով ընթերցեալ եւ իմասցի,
Աստուածահայր մարգարէի,
որոյ Դապիք վերաձայնի,

Ղազար աղքատ անուն բարի
նստաւ ի գոգն Աբրահամի,
Տառիս ստացող վարդապետի
եւ ընդ սրբոցս ճարակեսցի,
Անուն Վլլաւս վերակոչի
հանդերձ ծնողօք յիշեսցի,
Սա յանգիտաց յոյժ հրաժարի
եւ իմաստնոցն է տենչալի,
Աշակերտեալս եմ վարպետի՛
Բարսէղ անուն քահանայի,
Բաղ նուաստ անպիտանի
պատճառ յիշման զայս գրեցի,
Ի սոսկալի աւուրն մեծի
կամքն Աստուծոյ ձեզ քաղցրասցի:

515բ Զստացողի լուսազարդ տառիս ողորմեսցի Քրիստոս եւ թողութիւն մեղաց պարգեւեսցէ. ամէն (նման՝ 644ա):

526ա Ողորմեսցի Քրիստոս Աստուած ստացողի գրոյս Վլլաւս վարդապետի, եւ զիս՝ մեղաւոր Բաղդասար դպրի. ամէն:

655ա Բարերա՛ր եւ ողորմած Աստուած, ողորմեա՛ ստացողի սորայ եւ փրկեա՛ ի հրոյն յաւիտենից:

667ա Քրիստո՛ս Որդի Աստուծոյ, ճշմարիտ թողութիւն շնորհեա՛ մեղաց եւ յանցանաց ի քում ահաւոր եւ ի փառաւորեալ գալստեանդ ստացողի սորա եւ ծնողաց իւրոց, մանաւանդ եւ զիս՝ անպիտան մեղապարտ գժողս, յիշեցէք հանդերձ ծնողաւք:

681ա Ընդ նմին եւ մասն ողորմութեան լիցի / հոգւոյ խաւարեալ մեղսամած գրչի, / նաեւ ծնողացն իմոց եղիցի, եղբարց իմոց հարազատի, / արք, ես, եղկելի երեսս եդեալ ի գետնի, / աղաչեմ հանդիպողք այս սրբոյ տառի, / յիշել ի ժամ սուրբ պատարագի, / յորժամ արտասուա ձեր հոսեսցի, / յիշողն յիշեալ լիցի ի պարգեւողէն մեզ յամենայնի:

681ա Արդ, հայցեմ ի սուրբ ընթերցողաց, զի ներել անպիտանիս, որ եմք յոյժ մտօք եւ հոգով խաւարեալ ի պանդխտութեան յերկրի:

3. 684ա (Ստացողի) Յիշատակարան մատենիս. Շնորհօք եւ առատ գթութեամբ, օժանդակութեամբ եւ սատարութեամբ ինքնաշարժ եւ գերապատճառ էին, նոյնասահման եւ սկզբանց սկզբան միակին, Հօր Աստուծոյ՝ միշտ էին եւ անեղական պարգագոյն գոյին, եւ իւրում էական Բանին համազօրի, եւ նորին նոյնափառ Հոգւոյն իսկականի, որով են եւ կեան եւ շարժին ամենայն էակք նախկինք եւ երկրորդականք, յառաջընդունականք եւ վերջադասականք, ըստ իւրաքանչիւր կարգի եւ եդեալ սահմանի: Յայնմ աստուածապետական գորութենէ ի նուաստիս եւ փանաքիս Վլապիոսի իբրու պիտակ սպասաւորի տէրունեան բանի ողորմութիւն գտեալ՝ որպէս ընդ հուսկ վերջինս ի ծնունդս

մանկանց եկեղեցւոյ, բուն աշխարհաւ Ալանաց, քաղաքաւ Շամախի կոչեցեալ ըստ պարսկական լեզուի, ցանկացող եղեալ յաւէտ իմն տարիմամբ սրտի այսմ ճշմարտապատում մատենի, այսինքն՝ բացայայտութեան եւ մեկնութեան Սաղմոսաց Դաւթի, որ ի հոգիբնկալ արքեպիսկոպոսէն Տարսնի Կիլիկեցոյ ի մեծէն Ներսիսէ պարզաբանէ խորագոյն մտաց տեսութեամբ: Եւ ետու գրել գտառս զայս երկուց հարազատաց եղբարց՝ Բասիլիոսի քահանայի եւ Ղազար սարկաւազի, որք էին ի կողմանց Գանձակայ, ի գեղջէ Քարահաա կոչեցելոյ: Եւ ստացայ զսա ի հոգեւորական զբօսանս անձին իմոյ եւ ի մխիթարութիւն եւ ի սպեղանիս վիրօք լցեալ հոգւոյ իմոյ, որպէս զի սովաւ եւ ի ձեռս սորին սփոփութիւն գտից բազում տրտմութեան իմացականիս հեծութեան: Բայց ժտեմ եւ աղաչեմ, զի յաղագս խոշորութեան գրոյ տառիս եւ սխալանացն, որ ի սմա, եւ խառնափնդոր լինելոյ ըստ արուեստին ամեղադրելի թողուլ զմեզ եւ ներել, քանզի ոչ գտանիր ուղղագիծ օրինակ ի մերուն աշխարհի, յորմէ ածանցել տայաք ըստ մերում կամաց: Տինա եւ ոչ կրթագոյն որ յարհեստս գրչութեան, յորով յօրինուածով աւարտիր: Եւ եւ խրթնահայաց եւ դժուարիմաց բայիւք եւ բանիւք պաճուճելոյ լուսաւոր մեկնողին ոչ բաւականային անըստգիւտ ի գլուխ հանել, որոյ աղագաւ ոչ բարոք եզերացաւ: Այլ դուք ըստ յօժարութեան փափակման ստացողիս ապիկար Վլասիոսի շարժիլ պարտիք սիրով, ո՛վ ընթերցողք, եւ բարի մտօք յիշատակել զմեզ առ Քրիստոս եւ թողութիւն մեղաց խնդրել, զի եւ ձեզ յապագայից պատահողաց նոյն շնորհեսցէ:

Եւ արդ, եղեւ զրաւ գծագրութեան սորին յամի հարազերորդի վեցհարիւրերորդի եւ ութսուներորդի երկրորդի (1682) | 684թ| ըստ մեզ կենարարին Բանի, եւ ի թուահաշու[ու]թեան Արամեանս տոհմի հազարերորդի հարիւրերորդի եւ եռ տասնեակ եւ միոյ մասնըկի (1682), ի թագաւորութեան պարսկական ազգի շահ Սուլեյմանի, ընդ որոյ տէրութեամբ եւ երկիրս մեր նուաճի: Իսկ ի հայրապետութեան ընդհանրական մեծի աթոռոյն Էջմիածնի տեառն Եղեալաբու արիաջան հովուապետի եւ ի կաթողիկոսութեան Աղուանից աշխարհիս Սիմէոնի՝ մերում դաստիարակողի եւ ի պատիւ քարոզութեան բանի Տեառն վերածողի: Եւ արդ,

ըստ փոփոխման աստէիցս, որ ոք զկնի ելից մերոց զգիրսս զայս ժառանգիցէք եւ կամ ընթերցմամբ պարապիցէք եւ կամ գաղափար դնիցէք, հայցեմ եւ մաղթեմ յիշել զիս՝ զՎլասիոս զյետնեալս ի բարեաց առ Քրիստոս յոյն բնակից, զի ողորմութիւն պարգեւեսցի ինձ՝ մեղուցելոյս իբրու պատճառ եղեալ այսմ տենչալի մատենիս ստացման, հանդերձ մարմնաւոր ծնողօք եւ համայն ազգատոհմիւք, զհայրն իմ զմուղտասի Առաքելն, որ ի Քրիստոս գոյ այժմ հանգուցեալ, եւ մայրն իմ զԵանիշայ, եղբայր մեր եւ զԳալուստն եւ զՄակարն եւ զՄիխայելն եւ զնոցին որդեակնն զՊօղոսն, զԱլէքսիանոսն եւ զԱմիրաղայն եւ զհամօրէն արեանառու ծնունդս նոցին եւ զսերունդս յառաջնոց նոցին, այլ եւ զհանգուցեալ հոգեւոր հայրն մեր՝ զՊետրոս կաթողիկոսն եւ զԿիրակոս վարդապետն, նա եւ ըստ հոգւոյ հարազատ եղբարսն մեր զՄարտիրոս վարդապետն եւ զԱնտոն վարդապետն, որք այժմու կենօքս կեան եւ կենցաղավարին բոլորապէս պատճառիւք եւ մասամբ պատճառելօք նախկնեօք հաղորդեցելովք եւ վերջնեօք կցորդեցելովք, օրինակին ընձեռողօք եւ գծագրողօք, որոց ամենից Տէրն զթասցի պարգեւօք: Եւ եղիցի եւ եղիցի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 112ա (1750 թ., անարուեստ նոտրգիր) եւ ես՝ վերջին ստացողս Գասպար վարդապետս, ինձ եւ իմոցն ամենեցուն ի ՌՃՂԹ. (1750) թվին, ի հայրապետութեան տեառն Ներսիսի Աղուանից կաթողիկոսին ձեռամբ մեղսամած Ստեփան ապեղայի. ամէն:

2. 684բ (ժԸ. դ., անարուեստ նոտրգիր) եւ ես հուսզ հետինս Գասպար վարդապետս ըստացայ յիշատակ ինձ եւ իմոցն ամենեցուն:

Թանաքով ջնջած, եղծուած:

ԿՆՔԱԴԻՐՈՇՄ՝ պահպանակ Աս սեւով շրջանակ, մէջը թագապսակ զինանշան, եզրերին՝ “Πεγ. Αχαυβιχ-σκού γραδσκού πολλαυυ”:

ԳԻԶԱՓՈՐԶ՝ 1ա՝ «էդդ, արգդ», Աս՝ «զգործս ձեռ, զզսճրաաա», 344բ՝ «Ու սուրբ հայրք»:

ՆՇՈՒՄ՝ Աս՝ «Հ^մ 205/2613, Հ^մ 160/11, ՌՃԼ.-1682, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2614


Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

ԺԸ., ԺԹ. դդ.*

ԹԵՐԹ՝ 152. չգրուած՝ 1բ, 21բ, 152բ: ՊՐԱԿ՝ 4x10 (1, 2, 4՝ 11, 3՝ 12)+6x12 (6՝ 11)+2x14 (8՝ 15)+1x8 (9՝ 10): ՆԻԻԹ՝ թուղթ (թ. 145-52՝ տարբեր, լուսագծերով եւ լուսադրոշմով «V.G»): ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 24,8x17,8 (թ. 1-144), 23x16,5 (թ. 145-52): ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին՝ 20,5x14,5 (1-144), 17,5x11,3 (145-52): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 27ա): ՏՈՂ՝ 27-28, 30, 36 (1ա-144բ), 26 (145ա-52բ): ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի (Բ. փեղկը),

դռնակով, մէջքը՝ կարմիր կաշի, միջուկը տախտակ. աստաղը շագանակագոյն (Ա) եւ կապոյտ (Բ) կտաւ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ + ԳԳԵ՝ սպիտակ թուղթ, չգրուած (պհպ. Գ.՝ լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եւրոպական ոճի կանացի գլխարկ, ԺԹ.-ի դ.):

* Թ. 1-44 ժԸ. դ. գրել են տարբեր գրիչներ, Կ. Պոլսում, իսկ թ. 145-152՝ 1801 թ., Երուսաղէմում:



Նմուշ 27ա

ՎիճԱԿ բաւարար. բաղկացած է երկու տարբեր ձեռագրերից. կազմի Ա. փեղկը կաշտահան եղած կաշին ընկած, Բ. փեղկի կաշին մասամբ թափուած, Բ. փեղկի եւ մէջի կաշին վնասուած, մէջի ընկած կաշին փոխարինել են կարմիր կաշիով, դնակի 2/3 մասը պոկուել-ընկել է, ձեռագիրը հիմքից թուլացած, ք. 1-4, 131, 141-2, 145-52՝ եզրերը վնասուած, ք. 3, 46՝ հիմքից մասամբ պոկուած, կան խոնավութեան եւ աղտոտուածութեան զանազան հետեր, քանակի թրուայնութիւնը բարձր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. 2ա-21ա [Յովհաննու ճառ] – Անպատճառից Որդւոյս քո ծոցածնի... եւ ինձ՝ մեղապարտ սեւաւոր Յովհաննիսի՛ յօրինողի ճառիս, մասն բարեաց լիցի յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Բ. 22ա-144բ [Պատենէնի թղթոց]

1. 22ա Սիրելի եւ ազնիւ որդեկիդ իմոյ տեառնդ Կարապետի ծայրագոյն նուիրակի եւ աստուածաբան վարդապետի հայրական սիրով ողջոյն եւ օրհնութիւն ի Տէր – Յիրաւի է, թէ յարմատոց յոստան էլանեն խոնաւութիւնք... եւ ողջ լէ՛ր ի պարծանս Յակոբայ երբեմն պատրիարգի սրբոյն Սաղեմայ տնօրինական քաղաքի, եւ արդ, ի Կոստանդնուպօլիս, որ ի ՌԲՃԱ. (1752), յովիսի ԻԹ. գրեցի զգիրս իմով ձեռամբ, ի Սուրբ Աստուածածին, ի պատրիարքարանն ամենայն Հայոց, վէթիլ Սամուէլ աստուածաբան վարդապետն, ընդ Աթանաս վարդապետ եւ այլոց գրեզ ողջունէ սիրով:

2. 22բ-3ա Իմաստութեամբ հասուն... տեառնդ Յօհաննէսի Թրակիոյ Բայ դիտի եւ աստուածաբանօրէն ներկուտ ուսուցչի ողջոյն ի Քրիստոս – Գիրդ իբրեւ զանուշահոտ վարդ...

3. 23ա-4ա Եանաւար տանառի... ծայրագոյն քահանայապետիդ տեառնդ Մինասայ արագնակատար կաթողիկոսի՝ երիցագոյն եղբօր եւ վեհափառ պաշտօնակցի սեռա սիրով եւ կարօտախեղձ տարփանօք համբոյր եւ ողջոյն – եւ ըստ նախկնոց աստուածապաշտիցն օգեցի... Ողջ լէ՛ր ի պարծանս Յակոբայ իբրու երբեմն պատրիարգի Սաղեմայ... որ ի օգոստոս մէկն զգիրս գրեցի...

4. 24աբ [Գրառաջ] – Յորմէ սիրով ողջունիւ... Գրեցաւ աթոռակալութեան նամակս հրամանի ՌՄԱ. (1752) յոգոստոս Ժե., ի տօնի Վերափոխման սրբունոց Աստուածածնին, ի պատրիարքարանս ամենայն հայոց: Բաւ է:

5. 24բ-5ա Յորմէ սիրով օրհնութեամբ... ի Պուրտուր գիւղաքաղաքի բնակեալ լուսաւորչադաւան օրհնեալ եւ բարեմիտ իշխանազուն պարօն մահտեսի Աստուածատուր եւ պարօն մահտեսի Յակոբ... Գրեցաւ

նամակս օրհնութեան ՌԲՃԱ. (1752), սեպտեմբերի ԺԸ., ի Սուրբ Աստուածածին, որ ի Ստամպօլ, ի պատրիարքարանս ամենայն հայոց:

6. 25աբ [Առ] Սուրբ Գէորգ եկեղեցոյ համայն քահանայք եւ կղերիկոսունք... Գրեցաւ աւագերիցութեան նամակս ՌՄՄԱ. (1752), ի պատրիարքարանս ամենայն հայոց, ի Սուրբ Աստուածածին:

7. 25բ-6ա Յորմէ ժամանեալ հասցէ գիր... պարօն Նիկողայոսիդ... Գրեցաւ սիրոյ եւ ողջունի գիրս ՌՄԱ. (1752), սեպտեմբերի ԺԶ. ...

8. 26ա-7բ Ազնիւ սիրելեաց իմոց՝ Պետրոս աղային, Խաչատուր եւ Յօսէփ աղայից... Գրեցաւ... ՌՄԳ. (1754) թուին եւ ի ապրիլի Ը., ի Կոստանդնուպօլիս, ի Սուրբ Աստուածածին, ի պատրիարքարանս ամենայն հայոց. բաւ է:

9. 27բ-8բ [Թուղթ] – եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ... Գրեցաւ... ՌԲՃԱ. (1752) դեկտեմբերի Դ., ի պատրիարքարանս ամենայն հայոց, ի Սուրբ Աստուածածին, որ ի Կոստանդնուպօլիս. բաւ է:

10. 28բ-30ա Ծայրագոյն... Մինասայ վեհափառ հօրդ... – Յորմէ բղխեաց հօրն այն... ի ՌՄԲ. (1753), մարտի է. զգիրս գրեցի...

11. 30աբ Գեղզօնի... հովուի Թրակիոյ... Զողջունագիրդ... ընկալայ... որ ի ՌՄԲ. (1753), ապրիլի Դ. գրեցի...

12. 30բ-1ա Ի տէր Յակոբ վարդապետէ... Սիրոյ մեղադրանօք ծանիք... Գրեցաւ... ՌՄԲ. (1753), ապրիլի Դ. ...

13. 31ա-2ա [Առ] համայն լուսաւորչադաւան ազգդ իմ... – Զի մինչ կայր ի բանտի, գլուխն առաքելոց... Գրեցաւ... ՌՄԲ. (1753) եւ մայիսի Ը. ...

14. 32բ-3ա [Գիր խաղաղութեան] – Անուամբ ամենասուրբ Երրորդութեանն... Գրեցաւ... ՌԲՃԲ. (1753), յոգոստոս Գ.:

15. 33ա-4բ Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Աղէսսանը կաթողիկոս... – Յորոց ժամանեալ հասցէ գիր օրհնութեան...

16. 34բ-5ա եւ ընդ սիրոյ ողջունի եւ օրհնութեան գրոյս ծանիք... Գրեցաւ... ՌՄԲ. (1753), սեպտեմբերի Ի. ...

17. 35աբ Երեմեանեան արագանի... տեառնդ Աղէսսանդոսի վեհափառի... – Տէր իմ սրբազան... ի ՌՄԲ. (1753), նոյեմբերի Դ. զժիրս գրեցի...

18. 35բ-6ա Յիսուսաձիր սիրով... Որ ի ՌՄԲ. (1753), նոյեմբերի Դ. գրեցի...

19. 36աբ [Առ]... մահտեսի Յօհանն աղայ – Զի աղեացս գալարիչ... Գրեցաւ ՌՄԲ. (1753), նոյեմբեր Բ. ...

20. 36բ-7բ Յորմէ ժամանեալ հասցէ գիր դառնութեան... չիք տէր Գրիգորիդ եւ չիք տէր Աստուածատուրոյդ... Գրեցաւ... ՌԲՃԲ. (1753) դեկտեմբերի Ժ. ...

- 21. 37բ-ճա Ի տէր Յակոբ վարդապետէ... գրեցաւ արգելման գիրս ՌՄԲ. (1753), դեկտեմբեր ԻԲ. ...
- 22. 38աբ եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան... Գրեցաւ ՌՄԲ. (1753), յունվարի ԻԱ. ...
- 23. 38բ-9ա եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ... Գրեցաւ առաջնորդական նամակս օրհնութեան ՌԲՃԳ. (1754), եւ փետրվարի ԺԵ. ...
- 24. 39աբ Յորմէ ժամանեալ հասցէ նամակ օրհնութեան...
- 25. 39բ-40ա եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ... Գրեցաւ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան գիրս ՌԲՃԳ. (1754), մարտ ամսոյ ԻԷ. ...
- 26. 40ա Յորմէ ժամանեալ հասցէ գիր սիրոյ... քաղաքիդ երգնկայու հնգից որբոց եկեղեցեաց քահանայից... Գրեցաւ... ՌՄԺ. (1761), ի յունվար ամսոյ ԺԵ. ...
- 27. 40աբ եւ ընդ սիրոյ ողջունի... Մելֆօնիին... Գրեցաւ... ՌԲՃԳ. (1754), ապրիլի Ժ. ...
- 28. 40բ-1ա եւ ընդ աստուածապարգեւի... Գրեցաւ նամակս օրհնութեան ՌՄԳ. (1754), մայիսի ԻԳ. ...
- 29. 41աբ Յորմէ սիրով, ողջունի... լուսահոգի մահտեսի Ղազարի որդի խօճայ մահտեսի Յարութիւն եւ խոճայ մահտեսի Մարտիրոս... Գրեցաւ ՌՄԳ. (1754), յուլիս Գ. ...
- 30. 41բ-3բ [Թուղթ] – Ձկնի օծմանդ շնորհիւ...
- 31. 43բ-4բ եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ... Գրեցաւ ՌՄԳ. (1754), յօգոստոսի ԺԳ. ...
- 32. 44բ-5ա եւ ընդ սիրոյ ողջունի... Գրեցաւ նամակս օրհնութեան ՌԲՃԳ. (1755), ապրիլի ԻԸ. ...
- 33. 45աբ Յորմէ ժամանեալ հասցէ գիր անիծից... առ ի վերայ Կաֆայեցի շուշտակ չիք տէր Աստուածատուրիդ եւ շուշտակ աբեղայ չիք Ստեփանիդ... ՌԲՃԳ. (1755), յունիսի Զ. ...
- 34. 45բ-6ա Յորմէ ժամանեալ հասցէ գիր դառնութեան... ի վերայ չիք եւ անիծեալ Ամասիացի սուրբ եկեղեցւոյն զժողովուրդոց... Գրեցաւ... ՌՄԷ. (1758), յունվարի ԻԹ. ...
- 35. 46աբ...ի տէր Յակոբ վարդապետէ... ի յԱրապկեր բնակեալ համայն քահանայք, իշխանք եւ առ հասարակ ժողովուրդ... – Ձի գրէ սրբազան առաքեալն... Գրեցաւ բանադրանաց գիրս ի ՌՄԺԲ. (1763) թուին, մարտի ԺԸ. ...
- 36. 46բ...ի տէր Յակոբ վարդապետէ... յԱմասիա Սարաթոլի չիք մահտեսի Ալիֆսան եւ մարսվանցի չիք եւ նզովեալ շահտեսի Մրապիօն – Ով որդիք կորստեան... Գրեցաւ այրեցմամբ սրտի գիրս բանադրանաց ՌԲՃԳ. (1755) եւ ի յունիսի ԻԹ. ...
- 37. 46բ-7ա Ի տէր Յակոբ վարդապետէ... ի վերայ Կարփրցի չիք եւ անիծեալ երկու եղբայրդ, այսինքն՝ մարդասպան շահտեսի Պօղոսիդ եւ շահտեսի Պետրոսիդ... – Քանզի դուք որդիքդ կորստեան... Գրե-

- ցաւ բանադրանաց գիրս ի ՌՄԺԲ. (1736) թուին, ի փետրվարի Ե. ...
- 38. 47ա-ճա եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ օրհնութեան գրոյս... Գրեցաւ... ի ՌՄԺԵ. (1766) թուին, սեպտեմբեր ԺԵ. ...
- 39. 48ա Յորմէ ժամանեալ հասցէ գիր նզովից... ի վերայ Մէրտինցի թէրզի չիք Կարապետիդ – եւ ծանիր, ով որդի կորստեան... Գրեցաւ բանադրանաց գիրս ՌՄԳ. (1755), յուլիսի Է. ...
- 40. 48աբ Յորմէ ժամանեալ հասցէ գիր դառնութեան... ի վերայ չիք եւ անիծեալ երգնկացի... Մելֆօնիդ – Ծանիրք, այ պիղծ Կայէն... Գրեցաւ... գիրս ՌԲՃԳ. (1754), ապրիլի Ժ.:
- 41. 49աբ եւ ընդ աստուածապարգեւի... Գրեցաւ նամակս օրհնութեան եւ շնորհակալութեան առ Աստուած ՌՄԶ. (1757), օգոստոսի ԻԸ. ...
- 42. 49բ-50բ Յորմէ ծանիք, Սուրբ Գեորգ եկեղեցայ քահանայք, իշխանք եւ առ հասարակ ժողովուրդ... Գրեցաւ խրատական յորդորական եւ զնազանդողաց բանադրանաց գիրս ՌՄԶ. (1757), նոյեմբերի ԺԵ.:
- 43. 50բ-1ա Ռոպինեալ կարգ է ամենայն էակաց... Գրեցաւ դպրապետութեան գիրս ՌՄԵ. (1756)...
- 44. 51ա-2ա Ի տէր Յակոբ վարդապետէ... – Ծանիր Սուրբ Լուսատրչի եկեղեցւոյ աւագերէց... Գրեցաւ գիրս պատուիրանաց ՌՄԶ. (1757), դեկտեմբերի ԺԺ. ...
- 45. 52աբ եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան... Գրեցաւ օրհնութեան նամակս ՌՄԶ. (1757), դեկտեմբերի Դ. ...
- 46. 52բ-3ա եւ ըստ սիրոյ օրհնութեան գրոյս ծանիք... Գրեցաւ գիրս օրհնութեան ՌՄԷ. (1758) եւ ի մայիսի Լ. ...
- 47. 53աբ Վէ պատէ սէլամու տուալերոն... [Գրեցաւ թուին] հայոց ՌՄԵ. (1791), մարտի Ժ. ...
- 48. 53բ-4ա Վէ պու տուվանամէ... [Գրեցաւ թուին] հայոց ՌՄԷ. (1758), մայիսի ԺԲ. ...
- 49. 54ա-5ա եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ... Գրեցաւ... կոնդակս ի ՌՄԸ. (1759) թուին հայոց, հոկտեմբերի Ի. ...
- 50. 55ա-6ա եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... Գրեցաւ ՌՄԶ. (1757) ապրիլի Լ.:
- 51. 56ա-7ա եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ...
- 52. 57ա-8ա եւ աստուածապարգեւի եւ սիրոյ... Գրեցաւ սիրոյ եւ վերհաստատութեան առաջնորդական նամակս ի ՌՄԺ. (1761) թուին, դեկտեմբերի ԺԳ. ...
- 53. 58աբ եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... ՌՄԺԲ. (1763), մայիս:
- 54. 58բ-9ա եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... Գրեցաւ ժողովարարութեան օրհնութեան նամակս ի ՌՄԺ. (1761) թուին, յունիսի ԻԸ. ...

55. 59աբ Վէ պու տուանամէ... Գրեցաւ պատուիրանի կանօնական գիրս ՌՄԺԱ. (1762) թուին հայոց, ապրիլի 2. ...

56. 60աբ Եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ... Գրեցաւ պողաճառաբովեան գիրս ի ՌՄԺԲ. (1763) թուին:

57. 60բ-1ա Եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... Գրեցաւ օրհնութեան եւ պատուիրանի ի ՌՄԺԲ. (1763) թուին. ամէն: Ապրիլի ԻԸ. ...

58. 61աբ Յորմէ սիրով ծանիք Անդրիանուպօլսոյ Սուրբ Թէոդորոս եկեղեցոյ համայք քահանայք... Գրեցաւ խրատական եւ կանոնական կոնտակս ի ՌՄԺԲ. (1763) թուին, փետրուարի ԻԳ. ...

59. 61բ-2բ Եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... Գրեցաւ օրհնութեան եւ շրջաբերական կոնտակս ի ՌՄԺԵ. (1766) թուին, յօգոստոսի ԻԵ. ...

60. 62բ-3բ Եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... Գրեցաւ յորդորանաց, պատուիրանի եւ օրհնութեան գիրս ի ՌՄՄԵ. (1806) թուին, սեպտեմբերի ԺԵ. ...

61. 63բ Եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... Գրեցաւ պատուիրանի եւ փոխանորդութեան գիրս ի ՌՄԺԳ. (1764) թուին եւ յուլիսի Ը. ...

62. 64ա-5ա Եւ ընդ աստուածապարգեւի, սիրոյ... Գրեցաւ օրհնութեան եւ յորդորանաց նամակս ի ՌՄԺԵ. (1766) թուիս հայոց:

63. 65աբ Եւ ընդ աստուածապարգեւի եւ շնորհագեղուն... Գրեցաւ օրհնութեան եւ պատուէրի նամակս ի ՌՄՄԵ. (1806) թուին եւ մարտի ամսոյ տասին...

64. 65բ-6բ Եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ... Գրեցաւ օրհնութեան, սիրոյ եւ յորդորանաց նամակս ի ՌՄԺԳ. (1765) թուին հայոց:

65. 66բ-7ա Յիսուսի Քրիստոսի ծառայի տէր Գրիգոր վարդապետէ եւ պատրիարքէ Կոստանդնուպօլսոյ... – Ծանիք, Իսմայիլու քաղաքին Սուրբ Աստուած|67ա|ածնի եկեղեցոյ համայն քահանայք, Իշխանք եւ առհասարակ ժողովուրդք... Գրեցաւ ամբողջակալութեան գիրս ի ՌՄԺԳ. (1764) թուին եւ յուլիսի տասն. եւ այլն:

66. 67աբ Եւ ընդ աստուածապարգեւի, սիրոյ... Գրեցաւ օրհնութեան եւ պատուերի նամակս ի ՌՄԺԵ. (1766) թուին եւ յունվարի ԻԹ.ին (29)...

67. 68աբ Վէ պու տուվայի վէ մուհապպէք նամէ... Գրեցաւ օրհնութեան եւ պատուերի նամակս ի ՌՄԺԵ. (1766)...

68. 68բ-9բ Եւ ընդ աստուածապարգեւի, օրհնութեան... Գրեցաւ քաջալերութեան եւ սիրոյ գիրս... ՌՄԺԵ. (1766), նոյեմբեր Ը.:

69. 69բ-70բ Ի տէր Գրիգոր վարդապետէ – Յորմէ ծանիք լուսաւորչադաւան օրհնեալ ազգդ իմ... Գրեցաւ պատուէրի նամակս ՌՄԺԵ. (1766) թուին:

70. 70բ-1բ Եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ... Գրեցաւ ամբողջակալութեան գիրս ի ՌՄԺԳ. (1764)...

71. 71բ-2բ Եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... Գրեցաւ... նամակս ի ՌՄԺԶ. (1757) թուին, սեպտեմբերի հինգ...

72. 72բ-3բ Եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... Գրեցաւ... գիրս ի ՌՄԺԶ. (1767) թուին, նոյեմբերի վեց...

73. 73բ Յիսուսի Քրիստոսի ծառայ ի տէր Գրիգոր վարդապետէ... ի Պօլիս բնակեալ համայն քահանայք, Իշխանք եւ առ հասարակ ժողովուրդք... Գրեցաւ... գիրս ի ՌՄԺԶ. (1767) թուին, սեպտեմբերի հինգ...

74. 73բ-5ա Եւ ընդ աստուածապարգեւի, օրհնութեան... Կարապետ վարդապետին վերջի գնալու գրին օրինակն է:

75. 75ա-6ա Եւ ընդ աստուածապարգեւի, սիրոյ... Գրեցաւ օրհնութեան եւ փոխանորդութեան, սիրոյ նամակս ի ՌՄԺԷ. (1768) թուին, ապրիլի Ա. ...

76. 76բ-7ա Յորմէ ժամանեալ հասցէ գիրս ողջունի... Գրեցաւ յորդորական եւ յանձնարարական ՌՄԺԷ. (1768), ապրիլի Ա. ...

77. 77աբ Եւ ընդ աստուածապարգեւի, օրհնութեան... Գրեցաւ նազրութեան նամակս ՌՄԺԷ. (1768), մայիսի ԻԹ. ...

78. 77բ-8բ Եւ ընդ աստուածապարգեւի, օրհնութեան... Գրեցաւ սիրոյ, յորդորանաց եւ խրատու գիրս ի ՌՄԺԷ. (1768) թուին հայոց, յուլիսի Ա. ...

79. 78բ-9ա Եւ ընդ աստուածապարգեւի, օրհնութեան... Գրեցաւ նոր սիրոյ եւ պատուէրի գիրս ՌՄԺԷ. (1768) թուին հայոց, յունիս ամսոյ տասնեութն:

80. 79աբ Եւ ընդ սիրոյ ողջունի... Գրեցաւ սիրոյ եւ միաբանութեան նամակս ի ՌՄԺԷ. (1768) թուին հայոց...

81. 80աբ Յորմէ դառնութեամբ հոգոյ եւ մեղադրանօք ծանիք ի Յիսմայիլ քաղաքի բնակեալ Պարխուտար, Մաղաֆիայ... Գրեցաւ մեղադրական գիրս ՌՄԺԷ. (1768), յունիսի մէկ...

82. 80բ-2ա Եւ ընդ աստուածապարգեւի, օրհնութեան... Գրեցաւ... ՌՄԺԷ. (1768) թուին եւ յուլիսի ամսոյ ԻԵ. ...

83. 82ա-3ա Եւ ընդ աստուածապարգեւի, օրհնութեան... Գրեցաւ սիրոյ եւ պատուէրի գիրս ի ՌՄԺԶ. (1767) թուին հայոց եւ յօգոստոսի ԻԵ. ...

84. 83ա-4ա Հայրութեան քոյ զգիրն...

85. 84աբ Յորմէ սիրով եւ աստուածային օրհնութեամբն ծանիք, Սուրբ Գեորգ եկեղեցոյ համայն դաս...

86. 84բ-5բ Եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան... Գրեցաւ դատապարտութեան եւ յորդորանաց գիրս ՌՄԺԸ. (1769) թուին, սեպտեմբերի մէկ...

87. 85բ-6ա Յորմէ ընծայի ողջոյն... առ եօթնից

եկեղեցւոցն աւագերիցունս եւ առ ձերունի խորհրդա-
կան քահանայսդ եվրոկիոյ աստուածապահ քաղա-
քին... Գրեցաւ օրհնութեան, պատուէրի գիրս *ՌՄԺԹ*.
(1770) *Թուին, ապրիլի ամսոյ ԻԵ. ...*

88. 86ա-7ա Սիրոյ գործ է, մտերիմ իմ... Գրիգոր
վարդապետ եւ պատրիարգ, Կոստանդնուպօլիս,
ՌՄԺԹ. (1770), *յուլիսի ԺԶ.:*

89. 87ա-8ա եւ ընդ աստուածապարզելի օրհնու-
թեան... Գրեցաւ օրհնութեան եւ մխիթարութեան եւ օգ-
տակար խրատու գիրս *ՌՄԺԹ*. (1770) *Թուին, յուլիսի Ի.:*

90. 88ա-9բ եւ ընդ աստուածապարզելի օրհնու-
թեան... Գրեցաւ օրհնութեան, խրատու եւ ի բարին յոր-
դորման գիրս *ՌՄԺԹ*. (1769), *դեկտեմբերի քսանեմէկ...*

91. 89բ-90բ եւ ընդ աստուածապարզելի օրհնու-
թեան... Գրեցաւ սիրոյ եւ օրհնութեան գիրս *ՌՄԺԹ*.
(1769) *Թուին հայոց, դեկտեմբերի ԻԱ. ...*

92. 90բ-ա եւ ընդ աստուածապարզելի օրհնու-
թեան... Գրեցաւ խրատական գիրս *ՌՄԺԹ*. (1770), *յօ-
գոստոսի ԺԳ. ...*

93. 91ա-2ա եւ ընդ աստուածապարզելի օրհնու-
թեան...

94. 92ա-3ա եւ ընդ աստուածապարզելի օրհնու-
թեան... Գրեցաւ օրհնութեան եւ սիրոյ եւ պատուի-
րանի նամակս ի *ՌՄԺԹ*. (1770), *հոկտեմբերի Ի. ...*

95. 93ա-4բ եւ ընդ աստուածապարզելի օրհնու-
թեան... Գրեցաւ շրջաբերական յորդորանաց նամակս
ՌՄԺԹ. (1768) *ուին, յօգոստոսի Ժ. ...*

96. 95ա-6ա Յորմէ ճշմարտի սիրելութեամբ...
Գրեցաւ սիրոյ եւ պատուէրի գիրս *ՌՄԻ*. (1791) *Թուին
եւ ի յունիսի Ժ. ...*

97. 96աբ եւ ընդ աստուածապարզելի օրհնու-
թեան... Գրեցաւ օրհնութեան եւ սիրոյ նամակս ի *ՌՄԻ*.
(1771) *Թուին, սեպտեմբերի Բ. ...*

98. 97աբ եւ ընդ աստուածապարզելի օրհնու-
թեան... Գրեցաւ օրհնութեան, խրատուց եւ յորդորա-
նաց նամակս *ՌՄԺԹ*. (1768), *յուլիս ԺԶ. ...*

99. 97բ-9ա եւ ընդ աստուածապարզելի օրհնու-
թեան... Գրեցաւ օրհնութեան եւ յորդորանաց գիրս
ՌՄԺԹ. (1769), *յօգոստոսի Գ. ...*

100. 99ա եւ ընդ աստուածապարզելի օրհնու-
թեան... *ՌՄԺԹ*. (1770) *Թուին, յուլիսի ամսոյ մէկ:*

101. 100ա-1ա Որոց զկնի յայտնի լիցի... Գրիգոր
վարդապետ, *ՌՄԺԹ*. (1770), *յունվարի ԻԶ.:*

102. 101աբ Յիրաի յարգութեան ձերոյ
զհանգստութիւնն... *ՌՄԺԹ*. (1770) *եւ յունիսի ԺԷ. ...*

103. 101բ-3ա Յորմէ սիրով, ողջունիւ...

104. 103բ-4բ Յորմէ սիրոյ ողջունիւ...

105. 104բ-5ա Յիսուսի Քրիստոսի ծառայ Գրիգոր
վարդապետ... Գրեցաւ... գիրս *ՌՄԻ*. (1771) *Թուին եւ
ի յունուարի Ի. ...*

106. 105բ-6բ Գիտեմ, զի գիտես դու... Գրեցաւ

ըստ սպեղանեաց կարգի յարմարեցեալ գիրս *ՌՄԻ*.
(1771) *եւ ի յունիսի Ի. ...*

107. 106բ-8ա Լուեալ իսկ է հոյ յաղագս եղիագար
պետի գալստեանն...

108. 108բ-9ա...տէր եղիագար վարդապետիս եւ
արեւախիսկապոսիս սոյն ձեռագրոյ պատճառն այս
է... Այս եղեւ ի *ՌՄԻ*. (1771), *յօգոստոսի ԻԲ. ...*

109. 109ա-10բ եւ ընդ աստուածապարզելի օրհ-
նութեան... Գրեցաւ օրհնութեան եւ վկայական նաեւ
պատուէրի ի *ՌՄԻԱ*. (1772) *Թուին եւ ի փետրվարի
ամսոյ մէկին...*

110. 111ա Յորմէ աստուածային ամենատա
օրհնութեամբն... Գրեցաւ օրհնութեան եւ պատուէրի
նամակս ի *ՌՄԻԱ*. (1772) *Թուին եւ փետրվարի ամսոյ
մէկին...*

111. 111ա-2ա Զատ ի յարգութենէդ զծեալն զիր
ընկալեալ մեր...

112. 112աբ Մե՛ք ի յըստորեւ կնօղք գոյս... Գրե-
ցաւ մահարական գիրս ի *ՌՄԻԲ*. (1773) *Թուին, ի
յուլիս սեպտեմբերի...*

113. 112բ-3ա Զօրութիւն ձեռագրոյս այս է, որ ես՝
Աշապանի որդի Մարկոս երէցս... Գրեցաւ եւ եղեւ
պայմանի գիրս ի *Թուին հայոց ՌՄԻ*. (1771) *եւ յուն-
վարի ամսոյ ԻԵ. (25)...*

114. 113աբ Գերայարգի երջանկիդ տեսնոն եղիա-
գարու աստուածաբան պետի... Գրեցաւ *ՌՄԻԲ*.
(1773), *սեպտեմբերի հինգ...*

115. 113բ-4բ Ի սգատու եւ ի տրամաբախիծ ան-
բաղդ Յակոբոս... Գրեցաւ տրտմալի գիրս ի մխիթա-
րութիւն ձեր *ՌՄԹ*. (1759) *Թուին, յուլիսի տասն:*

116. 114բ-5բ եւ ընդ աստուածապարզելի եւ
ընդհատարած օրհնութեան գոյս այսորիկ...

117. 115բ-6բ եւ զկնի ողջունատութեան... *ՌՄԺԹ*.
(1769) *Թուին, յօգոստոսի ԺԷ.:*

118. 116բ-8բ եւ ընդ աստուածապարզելի օրհ-
նութեան... Գրեցաւ օրհնութեան եւ յորդորանաց գիրս
ի *Թուին հայոց ՌՄԺԹ*. (1769), *յօգոստոսի ամսոյ
տասնեւեօթն...*

119. 118բ-9ա Առ ի ոչ հետեւիլ իւրաքանչիւր
ունեմ... Այս գիրս յԻսմայիլ գնաց, սակայն տարեկան
Թիւն չի կարացի գտանել, որ զԹիւն եւս գրիցէի:

120. 119ա-20ա Այլ եւ զկնի համարժանի բազմաց
մեծատանաց... Գրեցաւ ի *Թուին ՌՄԻԲ* (1173), *յունի-
սի Ժ. ...*

121. 120աբ Աստուածապարզել օրհնութեանց նա-
մակին... Գրեցաւ ի *ՌՄԻԲ*. (1173) *Թուին, յօգոստոս Ժ. եւ
Զ. ...*

122. 120բ-1ա Յորմէ սիրով եւ աստուածային ա-
մենատա ողորմութեամբն ծանիք, Դոյումնոյ հա-
մայն էմնաֆ...

123. 121ա-2ա եւ ընդ աստուածապարզելի օրհ-

նուրբեան... Գրեցաւ օրհնութեան, սիրոյ եւ պատուէրի գիրս ՌՄԻ. (1771) թուին եւ ի յունիսի ժ. ...

124. 122ա-3բ եւ ընդ աստուածապարզելի օրհնութեան... Գրեցաւ խրատական գիրս ի ՌՄԻԱ. (1772) թուին եւ ի յունիսի է. ...

125. 123բ-4բ եւ ընդ աստուածապարզելի օրհնութեան... Գրեցաւ օրհնութեան, սիրոյ եւ յորդորանաց նամակս ի ՌՄԻԱ. (1772) թուին եւ ի յունիսի ամսոյ ժ. ...

126. 125աբ Յորմէ սիրոյ ողջունիւ եւ աստուածային օրհնութեամբ ծանիփ: Եպոկիոյ տիրախնամ փաղափ սրբասնունդ բոլոր փահանայփ, բարեպաշտօն իշխանփ... Գրեցաւ պատուէր գիրս ՌՄԻԱ. (1772) թուին եւ ի սեպտեմբերի ամսոյ Ե. ...

127. 125բ-6ա եւ զկնի հարցանելոյ բարեկամաբար զողջունէ... Գրեցաւ վարդապետ: ՌՄԻԱ. (1772), հոկտեմբերի Ի. ...

128. 126աբ եւ ընդ աստուածապարզելի օրհնութեան... Գրեցաւ պատուէրի գիրս ՌՄԻԱ. (1772) թուին, հոկտեմբերի Ի. ...

129. 126բ-7ա Յորմէ սիրոյ ողջունիւ... Գրեցաւ... յորդորանաց գիրս ՌՄԻԲ. (1773) թուին եւ ի փետրվարի Բ. ...

130. 127ա-8ա եւ ընդ աստուածապարզելի օրհնութեան... Գրեցաւ օրհնութեան եւ Մուխամաթայի կոնդակս ի թուին ՌՄԻԲ. (1773), սեպտեմբերի Ե. ...

131. 128ա-9բ եւ ընդ աստուածապարզելի օրհնութեան... Գրեցաւ օրհնութեան եւ պատուէրի նամակս ՌՄԻԲ. (1773) թուին եւ ի սեպտեմբերի ԻԵ. ...

132. 129բ-30ա եւ ընդ աստուածապարզելի օրհնութեան... Գրեցաւ սիրոյ եւ յորդորանաց գիրս ՌՄԺԷ. (1768), հոկտեմբերի Ի. եւ Դ. ...

133. 130ա-2ա եւ ընդ աստուածապարզելի օրհնութեան...

134. 132ա-5ա Յորմէ գորովագութ հայրականաւ խնամով... Գրեցաւ խրատու եւ պատուէրի գիրս ՌՄԺԷ. (1768) թուին եւ ի հոկտեմբերի տասնեւհինգ...

135. 135բ Յորմէ ողջունիւ եւ օրհնութեամբ ծանիփ Յեզնիմիտու փաղափին փահանայփ, իշխանփ եւ բոլոր ժողովուրդփ... Գրեցաւ պատուէրի գիրս ՌՄԺԹ. (1770), դեկտեմբերի ժԴ. ...

136. 135բ-7բ եւ ընդ աստուածապարզելի օրհնութեան... Գրեցաւ օրհնութեան, սիրոյ եւ պատուէրի գիրս ի ՌՄԺԹ. (1770) եւ ի փետրվարի ամսոյ ժ. ...

137. 137բ-8ա Գորովագրոյ հայրութեանդ...

138. 138ա-9ա Յորմէ հասցէ գիր անիծից եւ բանադրանաց...

139. 139ա-40ա Յանննէ եղկելոյս եւ սուրբ արժանատյն իմոյ...

140. 140ա-3բ եւ ընդ աստուածապարզելի օրհնութեան... Գրեցաւ օրհնութեան եւ յորդորանաց եւ իմատարիական կոնդակս ՌՄԾ. (1801), յունվարի Ա. ...

141. 144աբ Յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան... Գրեցաւ օրհնութեան եւ կանոնադրութեան եւ պատուէրի կոնդակս ի ՌՄՆԳ. (1794) թուին հայոց եւ յուլիս ամսոյ է. ...

1752-1806 թթ. Կոստանդնուպոլսից առաքուած պատրիարքական նամակների, կոնդակների, շրջաբերականների պատճեններ են: 1ա-66բ՝ Յակոբ արքեպիսկոպոսի, իսկ 66բ-144բ՝ Գրիգոր արքեպիսկոպոսի նամակներն են. ուղղուած են տարբեր քաղաքների, եկեղեցիների, քահանաների, առանձին մարդկանց: Նամակների մի մասն անհասցէ է, մի քանիսն էլ հայատառ թուրքերէն (53աբ, 53բ-4ա, 59աբ, 68աբ) են:

Գ. 145ա-52ա [Կոնդակ] – Ռ՛հ եւ Ռ՛հ աղեաց գալարելոյ... Գրեցաւ օրհնութեան եւ յորդորանաց եւ իմատարիական կոնդակս ՌՄԾ. (1801), յունվարի Ա., առ դրան Սրբոյ Երուսաղէմայ հրաշալի աթոռոյն:

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի նիթական ծանր կացութեան, նրան դրամապէս օժանդակելու անհրաժեշտութեան մասին:

Տես Յամիկ Ստեփանեան, Յուցակ հայերէն ձեռագրերի հայատառ թուրքերէն նիւթերի եւ հայատառ թուրքերէն ձեռագրերի, Երեւան, 2008, էջ 54:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1ա (Ստացողի, ժԹ. դ., շղագիր) Ընդ ձեզ եւ երկնաւոր խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ ամէնակալէ եւ ի Տեառնէ ուսէ Քրիստոսէ եւ ի Հոգւոյն Սրբոյ կենարարէ, եւ առատածաւալ պարգեւատուէ եւ ամենունա շնորհաբաշխ բարերար մարդասիրէ, որ հեղաւ ի սուրբ վայելչազարդ մայրաքաղաքս Երուսաղէմ, ուստի տարածեալ օրհնեցան բոլոր ամ[ենայն] տիեզերք եւ եւս միշտ եւ հանապազ եւ ամենայն ժամու գետօրէն յորդահոս անսպառ խաղացմամբ եւ աղբերաբար առատապէս ծաւալմամբ հեղեալ ծաւալեսցի, եկեսցէ իջցէ ի վերայ ձեր եւ օրհնեսցէ զձեզ զամենեսեան, հոգւով եւ մարմնով, տամբ եւ բոլոր ընտնեօք, որդուվք եւ դստերք, զարմօք եւ զաւակօք, ընչիւք եւ ապրանօք, սիրիլեօք եւ բարեկամօք, հողովք եւ ջրովք, առօք եւ տարօք, վարօք եւ ջաստակօք, այգեստան եւ անդաստանօք, եւ ամենայն բարեաց արդար գոյականօք, սկիզբին որոյն եւ ի կատարածի նորին, կրկին կենօք եւ երկու աշխարհօք եղիցի միշտ աստուածային անճառելի օրհնութիւնն եւ անհատակուն բիւր բարութիւնն եւ առատապարգեւ գթութիւնն եւ ողորմութիւնն ի վերայ հոգոց եւ մարմնոց ցերոց, եւ այնու օրհնեսցէ զձեզ բարերան Աստուած, որ ազ երեք անցանէ ա[ն]դրաւ յաւիտենիւ. ամէն: Եւ ընդ աստուածապարզելի օրհնութիւն գրոյս ծաներուք վերոյգրեցեալ օրհնեալ զաւակունք մօրս լուսոյ՝ Սրբոյ Երուսաղէմիս, Ռ՛հ, Ռ՛հ: Դեկտեմբերի 18ին ստացայ զայ տետրակս ի վայելս իմ, յունիսին 30 9000:

ՆՇՈՒՄ՝ Կազմի մէջքին փակցուած թերթին՝ «Նամականի, 4», Աս՝ «Հ» 227/2614, 1762 – Մ[ետրուպ] եպ[իսկոպոս]»:

2615


ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ, ՃԱՌՔ ԱՌ ՆԱԻԱՐԿՈՒԹԻՒՆ

ՏՓԵԽՍ

ՌՄՂԹ. – 1850

ԳՐԻՉ՝ Ստեփաննոս Դեմիւրեոզլենց: ՄՍՏՈՂ՝ Կարապետ արեւիկսկոպոս:

ԹԵՐԹ՝ 92+2 (երկուսն էլ 30). չգրուած՝ 1ա-2բ, 5բ, 30գ, 91բ-2բ (գրչի էջակալում՝ 1-178, որ է՝ 3ա-91ա): ՊՐԱԿ՝ 12+2x 8+2x 10+4+1x7 (6՝ 10)+2x6+16+2: ՆԻԻԹ՝ թուղթ, ննշադրոշմով՝ ք. 1-37 (ոնստրուած բազմանկիւն շրջանակ, որի ներսում)՝ «ՏՍՍԵՐԲԻՆ». ք. 37-44՝ բոլորակի մէջ գիւնանշան՝ երկգլխանի թագակիր արծիվ, ներքեում նիւղեր եւ մակագրութիւն՝ «Ղ. Խ. Ժ. թ». ք. 45-91՝ բոլորակի մէջ թագապսակ երկրորդ բոլորակն, որի ներսում էլ՝ E3C, տակը մակագրութիւն՝ «E3 C: B. Γ. Δ. Y. E. Сергиевской»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 26x20,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (21x22,5): ԳԻՐ՝ շղագիր (նմուշ՝ 8ա): ՏՈՂ՝ խառն՝ 24-31: ԿԱԶՄ՝ ծաղկաթուղթ, մէջքը եւ կազմի անկիւնները կարմիր կաշի, միջուկը ստուարաթուղթ. աստաղը թուղթ. լուսանցակողերը՝ կապոյտով ցողում: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա. + Բ, դեղնաւուն թուղթ, չգրուած:



Նմուշ 8ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի մէջի կաշին մաշուած, քանակի թրոսայնութիւնը բարձր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

3ա-91ա Գրիգորի Աստուածաբանի Առ նաւարկութիւնն

Տէ՛ս ձեռ. 823, 1ա-171ա: 1/3ա-7ա: 2/7բ-12ա: 3/12ա-17ա: 4/17ա-20ա: 5/20ա-2ա: 6/22ա-9բ: 7/30ա-4բ: 8/34բ-66ա: 9/66ա-79բ: 10/79բ-86բ: 11/86բ-91ա:

Լուսանցներում սրբագրութիւններ, լրացումներ:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

91ա Ի վայելումն նորին բարձր սրբազնութիւն տեսոն Կարապետի սրբազան արքեպիսկոպոսի եւ ասպետի, աշխատասիրեալ արտագրեցի զայս ի յօրինակէ խոնարհ ծառայ նորին Ստեփաննոսս Դեմիւրեոզլենց ի 20ն մայիսի 1850 ամի, ի ք. Տիփլիս:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ պահանկ Աս սետով շրջանակ, մէջը թագապսակ զինանշան, եզրերին՝ “Πετ. Αχαλαβιτσκού γραδσκουï πολιτου”:

ՆՇՈՒՄ՝ մէջքին փակցուած թերթիկին՝ «Գր. Աստուածաբանի ճառք առ նաւարկութիւնն», Աս՝ «ՀՄ՝ 219/63, ՀՄ՝ 229/2615, 1850 - Մ[Եւրոպ] եպ[իսկոպո]ս»:

2616

Ժ Ո Ղ Ո Վ Ա Շ Ո Յ

(Բաղկացած է 2 տարբեր ձեռագրերից)


ԹԵՐԹ՝ 127: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ բաց շագանակագոյն կաշի, միջուկը ստուարաթուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ չգրուած թուղթ լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եռամանիկ կամ «REAL»:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, կեղտոտուած, Ա. փեղկի ստորին եզրի կաշին՝ թափուած, աստաղ չունի: Երկու ձեռագիրն էլ, հասանաբար, գրուած են նոյն գրչի ձեռով:

ՁԵՌԱԳՐԻ Ա.

ՓԼ. դ.

ԹԵՐԹ՝ 75 (ք. 1-75. ունի գրչի էջակալում՝ 1-142, որ է՝ 1ա-72բ). չգրուած՝ 72բ, 74ա-5բ: ՊՐԱԿ՝ Ա-Չx12+3: ՆԻԻԹ՝ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եռամանիկ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 26x19,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսին (20x14): ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 9ա): ՏՈՂ՝ 25:



Նմուշ 9ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ք. 72՝ վնասուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. 1ա-73բ Վիպասանութիւն պատմութեան վասն գայստեան իմոյ ի Սուրբ էջմիածին եւ վասն վախճանի Աբրահամու սրբազան կաթողիկոսին Բաղիշեցոյ՝ դիտին Տարօնոյ, եւ վասն անցիցն եւ վշտա-

ՌՄԺԶ. – 1767 կամ յետոյ

կրօնեան իմոյ, եւ վասն գայստեան Թահմազ խանին ի Կեննէ, ի Ղարս եւ Արարատ, եւ վասն պատերազմին եղելով ընդ օսմանցիս ի դաշան Եդուարդայ եւ գրաւ նորին

Տէ՛ս ձեռ. 1674, 6ա-63բ: ա/1աբ: բ/1բ-2բ: գ/2բ-3բ: դ/3բ-4բ: ե/4բ-5բ: զ/5բ-7ա: Յ/7ա-8բ: ը/8բ-9ա: թ/9աբ: ժ/9բ-10ա: ժա/10ա-2ա: ժբ/12աբ: ժգ/12բ-3բ: ժդ/13բ-5բ: ժե/15բ: ժզ/16ա-7ա: ժլ/17ա-8բ: ժր/18բ-9ա: ժս/19ա-20ա: ի/20աբ: իա/20բ-1ա: իբ/21ա-2ա: իգ/22ա-3բ: իդ/23բ-5ա: իե/25ա-6բ: իզ/26բ-9ա: իէ/29ա-30ա: իը/30ա-1բ: իթ/31բ-2բ: իժ/32բ-4բ: լա/34բ-5ա: լբ/35ա-6բ: լգ/36բ-9բ: լդ/39բ-40բ: լե/40բ-2ա: լզ/42ա-3ա: լէ/43ա-4բ: լը/44բ-6ա: լթ/46բ-8բ: լս/48բ-50ա: խա/50աբ: խբ/50բ-3ա: խգ/53ա-4ա: խդ/54ա-6ա: խե/56աբ: խզ/56բ-8ա: խէ/58ա-60ա: խը/60ա-3ա: խթ/63ա-4ա: ժ/64ա: ժա/66ա-9ա: ժբ/69ա-70ա: ժգ/70ա-2ա:

Յաւելեալ ունի «Յանկ վիպասանութեան»՝ 73աբ:

Տէ՛ս Աբրահամ Կրետացի, Պատմութիւն, Երեւան, 1973, ձեռ. Ը:

– 72ա Հայատառ թուրքերէն Յ քառեակ:

Նադիր շահի օրոք հատուած ոսկեղբամի, կնիքի, յաղթանակի գրութեան հայատառ պարսկերէն տարբերակները՝

ա. Սիգբէ ինէ

Սիգբէի պէր գէր քեարթ նամի սալթանաթրա դէր ճիհան,

Շահեդին նագիր Ղուլի Իսքենդերի սահիպգրան:

(PwնսC) ոնսC ոեՎ)

ՅDՌV ok Co Pն...կv ՎճDj կքի oq pF UC ոեՎ)

ՅCըթGdD) olնիvC ՎկթokDj նսկԿC ՋDz

Ձեակերպումը հետեւեալն է՝

Ոսկու վրա հետեւեալ ձեակերպումը տուեց իր իշխանութեանը աշխարհում

Հաւատի շահ, Ալէքսանդրի պէս փառաւոր նագիր Ղուլի:

բ. Մէօհերն է

Նիկինի տէօլվէթի դին րաֆթէ պուդ շուն ազ ճայ պէնամի նագիրի Իրան դերար դադ խուտայ րոճ

UDV qC ՅZ k2F ոՕթօ նսկ PԿճk նՎխj

UCIh kCk oCըթ ՅCըսC ՍokDj ճDնF

Կնիքն է՝

Պետութեան փայլը մարել էր, երբ մի տեղից

Աստուած նագիրի իշխանութեան տակ հաստատեց Իրանը:

գ. Ֆաթիհէմէն է

Փատիշահի մէմալեքի իրան զէլլի սուպհան նատիրի տէվրան ֆաթիհ

ոճDնեՕէ

ոեNDէ ՅCօճk ՍokDj ՅDeG) ծո ՅCըսC ԼԿDՄճ ՋDzԿDJ

Ֆաթհ-նամէն (Յալթանակի գրութիւն) է

Իրանի երկրի շահ, Աստծո ստուեր, միշտ յաղթող նագիր:


ԳՐՁԱՓՈՐՁ՝ Աս՝ «գգգրիչ»:

ՆՇՈՒՄ՝ Մէջքին փակցուած թերթին՝ «Աբրահամ կաթողիկոսի Կրիտացուց Պատմագրութիւն», Աս՝ «N 239/2616, ԺԼ., Մ. եպս.» , «Ի գրեաց Սարգիս արքեպիսկոպոսի Ջալալեան, Աբրահամ կաթողիկոս Կրետացի»:

ՁեՌԱԳԻՐ Բ.

ՌՄԺՁ. – 1767՞

Թերթ՝ 52 (թ. 76-127). չգրուած՝ 125բ-7բ: ՊՐԱԿ՝ Ա-Գx12 (Գ, Գ՝ 13)+2: ՆԻԻԹ՝ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եռամսհիկ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 26x19,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկպին (20x14): ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 78ա): ՏՈՂ՝ 25:



նմուշ 78ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ք. 100՝ վնասուած, պնպ. Գ՝ պատռուած:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Բ. 76ա-125ա Վէմ գայթակղութեան, շարադրեցեայ յիլիայ Մինեադիսէ՝ եպիսկոպոսէ Քալալիդի դացն վիճակի, ի խնդրոյ ուրումն իշխանի, եւ թարգմանեցեայ ի յունացն ի հայս յամի տեառն 1767 եւ Հայոց ՌՄԺՁ. (1767), իսկ յունվարի 31:

– 76բ-125ա Վէմ գայթակղութեան, այսինքն՝ սկիզբն եւ պատճառ պատառման երկուց եկեղեցեացն արեւելականի եւ արեւմտականի – *Խնդրեցեր յինէն, ով իշխան փառաւորագոյն... Ահա այսպիսի կերպիւ մնայ մինչեւ ցայսօր պատառումն ընդ մէջ եկեղեցեացն, որ եւ միացուցէ անլոյծ կապիւ՝ շնորհ ամենասուրբ Հոգւոյն. ամէն:*

Լուսանցներում արաբական թուահամարներով բաժանուած է 1-57 հատուածների:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԻԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Տե՛ս Տիտղոսաթերթի 76ա. սա կարելի է համարել եւ՛ որպէս թարգմանիչ-գրչի, եւ՛ որպէս գրչի յիշատակագրութիւն. ըստ այսմ էլ՛ գրչութեան թուականի հարցականը:

ՆՇՈՒՄ՝ Գա՝ «105 Թումայ», Գա՝ «109, 53-54 փափերու»:


2617

Կ Ի Ր Ա Կ Ո Ս Գ Ա Ն Ձ Ա Կ Ե Ց Ի , Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց

Թերթ՝ 105 (գրչի էջակալում՝ 1-211, որ է՝ 1ա-105ա): ՊՐԱԿ՝ Ա-Ժx12 (Ա, Գ, Ձ՝ 10, Ժ՝ 3): ՆԻԻԹ՝ թուղթ լուսագծերով եւ լուսադրոշմով՝ ոճաւորուած բոլորակ, որի ներսում ետեի թաթերին կանգնած ինչ որ կենդանի: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 25,2x17,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (21x13,5): ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 30ա): ՏՈՂ՝ 31-32: ԿԱՁՄ՝ դրոշմագարդ սեւ կաշի, միջուկը ստուարաթուղթ. աստաւոր դեղնաւուն թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+ԲԳ, դեղնաւուն չգրուած (ԲԳ) թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ երկու ճիւղ, որոնց միջեւ «M», նաեւ՝ թագ:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Ձ ա ր դ ա գ ի ր՝ թոշնագիր, կենդանագիր:

ԺԷ. դար



նմուշ 30ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, վնասուած, Ա. փեղկի կաշին ստորին մասում մասամբ փեծուած-պոկուած, անկյունների կաշին մաշուած-թափուած, լուսանցակողերը՝ մասամբ գունաթափ, ք, 23՝ հիմքից մասամբ անջատ, թերթերին խոնավութեան եւ աղտոտածութեան զանազան հետքեր, մասնակի նոսրցուած ԺԹ. դ-ում:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1ա-105բ Համառոտ պատմություն ժամանակագրի սրբյուն Գրիգորի մինչև գլխին ատուս թեալեալ, արարեալ Կիրակոսի ընտրեալ վարդապետի ի մեծանշակ ուխտն Գեալայ

Տե՛ս ձեռ. 1518, 181ա-260բ: Նախերգան/1ա-2բ: ա/2բ-30ա: բ/30ա-40բ: գ/40բ-2բ: դ/42բ-3բ: ե/43բ-7ա: զ/47ա-8բ: ի/48բ-9ա: լ/49աբ: լ/49բ-51ա: ժ/51ա-4ա (այս գլուխը բաժանուած է երկու մասի՝ 51ա-3բ, 53բ-4ա): ժա/54աբ: ժբ/54բ-5բ: ժգ/55բ-7ա: ժդ/57ա-8բ: ժե/58բ-9ա: ժզ/59ա-60ա: ժլ/60աբ: ժր/62բ-2ա: ժր/62աբ: ի/62բ-4ա: իա/64աբ: իբ/64բ-6ա: իգ/66աբ: իդ/66բ-9բ: իե/69բ-70ա: իզ/70աբ: իլ/չիբ: իր/71աբ: իր/71բ-3ա: ի/73ա-4ա: լա/74ա: լբ/74բ-5բ: լգ/75բ-6բ: լդ/76բ-7ա: լե/77ա-8բ: լզ/79ա: լ/79ա-80ա: լր/80աբ: լր/80բ-1ա: լա/81աբ: լաա/81բ-2ա: լաբ/82ա-4ա: լազ/84ա-7բ: լալ/87բ-8ա: լաե/88ա-9ա: լազ/89ա: լալ/89ա-90ա: լալ/90ա-2ա: լալ/92աբ: ժ/92բ-4ա: ժա-ժբ/չիբ: ժգ/94ա-5ա: ժդ/չիբ: ժե/95ա-6ա: ժզ/96աբ: ժլ/96բ-7բ: ժր/97բ-9բ: ժր/99բ-101ա: կ/101ա-2բ: կա-կզ/չիբ: կր/103ա: կե/103-5բ:

Ձեռագրում առկայ գլխակարգութիւնը մայր օրինակի եւ սպագրի գլխակարգութեանը չի համապատասխանում հիմնականում ձեռագրում որոշ գլուխների բացակայութեան պատճառով:

Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1961. ձեռ. ց:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

62բ Տէ՛ր Յիսուս, ողորմեա՛յ կրչիս: 74ա Տէ՛ր Յիսուս, ողորմեա՛յ այս գրչիս իմում:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

Պհպ. Աս (1837 թ., շղագիր) Կիրակոս պատմագիրս այս է պայծառափալ կենեզ Իւան Զախար[ի]-

չին՝ ողորմած տեառն իմոյ, գոր ետ ինձ ընթեռնուլ՝ ի կենդանութեան իմում, եւ զկնի մահուանս է կրկին ընդ իւր բարձր իշխանութեան: Ս. վարդապետ, միաբան Սանահնի սրբոյ վանից: 1837, ի 4 յուլիսի: Ս. վարդապետ, միաբան Սանահնի սրբոյ վանից:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա, 105բ. սեւով ուլթանկին շրջանակ՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆԱՌԱՅ / ՄԱՀՏԵՍԻ Տէ՛ր / ԱՔՐԱՀԱՄ / ՌՃԶԶ. (1737)»:

ԳՐԶԱՓՈՐԶ՝ Ա. կազմաստառ՝ «ասորի, սուրմակ բրբիշու թուէլ», 84բ՝ «Հատ., 222. 33», 105բ՝ «գղղեզէլթիթիլսիսիհիհի»: «Աստուած մի՛ ասցէ ա երկրում, որ խէր բան լին այս անում գրէն իւրեանց խեա/// ուրն գավալչի նման, ամայ ուր դաս/// ուրիշի գրել տայ խաւատն պախի:// իէլ/// մանիէլ, Տարածիէլ՝ սուրբ հրեշտակ եղբայր/// սուրբ հրեշտակ եղբայր/// ելի, սուրբ հրեշտակ եղբայր///, սուրբ հրեշտակ, պահպան լե՛ր ծառայի Աստուծոյ Բարսեղ:


105բ Վրացերէն. ԺԹ. դ., մեղերուլի, 1ա. «ատորցորնս Յեյցցանուլուծա՛»՝ «երկոտասանեգոյնի ներբասածութիւն», 105բ. «Յջալու ռ-յ ժ/// Յցցցորնս / Յու Յանալուտատյես յրոն յե իցցորն»՝ «Տէր երբ/// Շիո Նարաղուլթաթէ է այս գիրբ» (ըստ Բեռնար Ուտիէի):

ՆԿԱՐԱՓՈՐԶ՝ 49բ՝ թուշուն, 104բ՝ կենդանի ինչ հովազ: ՆՇՈՒՄ՝ Աս՝ «Հ՛ւր 243/2617, Ժէ. դ.»:

2618

Ժ Ո Ղ Ո Վ Ա Շ Ո Յ

Գրի՞՞ Գրիգորիս երէց: ՄՍՏՅՈՂ՝ Նաշատու արեալս.: ԹԵՐԹ՝ 272. չգրուած՝ 1բ, 9բ, 10բ, 104բ, 272բ: ՊՐԱԿ՝ Ա-ԻԵՒ12 (Ա, Ժ, Ի, ԻԵ՝ 10, Ը՝ 11, ԺԸ՝ 5): ՆԻԻԹ՝ թուրք: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 25,5x19,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսին (19x14): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 127ա): ՏՈՂ՝ 29: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի, դոնակով, միջուկը տախտակ. աստուղը դրոշմագարդ շագանակագոյն կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ + ԳԵԶ, դեղնատուն չգրուած թուրք (Ի դ.):



Նմուշ 127ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻԻՆ – ճ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 110բ, 141բ, 168ա, 185բ, 199ա: Լ ո լ ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական, թոշնալին: Զ ա ր դ ա գ ի ր՝ հանգուցագիր, թոշնագիր: Գ ո յ ն ե ՚ կ ա ր փի, կապոյտ, վարդագոյն:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան բառ Մատթէոսի, ԺԲ. 4-11, 14-20: Թ. դ.: Բ՝ սկզբ., ստացրած մէկ թերթի ընդլայնակի հատումով, եզրահատուած՝ բնագիրը վնասուած: Մագաղաթ,

ժէ. դար 23,5x18,3, երկսին (19,5x17), բոլորգիծ երկարագիր (նմուշ՝ Բա), սող 9-11: Կարդալ՝ Աբ-Աս. «[Բայց միայն] Բանանայից... [եւ գպատրոյգն] առկայձեալ»:



Նմուշ Բա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցակողեր գունաթափ, պատահիկ-պահպանակը վնասուած, խունացած, կեղտոտուած, ք. 1-93՝ վերին մօտ 4/5 մասը թափուած, նորոգման դեղնատուն թղթով լրացուած, ք. 115, 265՝ վնասուած, թերթերին խոնաւութեան եւ աղտոտութեան գանագան հետեւ. նորոգուած Ի. դ.ում, վերակազմուած է հին ու նոր կաշիով, նոր կազմաստառով:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. 1ա-202բ [Եւաբի Պատմագիրի եկեղեցական]

Տե՛ս ձեռ. 1726, 2բ-151ա: 1/1ա-21բ: 2/21բ-42բ: 3/42բ-71բ: 4/71բ-93բ (վջ.՝ «[ձեռ]ւնդս մարդկան եւ [ուս]ուցանեն

մարդոյ ի հրա[ժարել]: Տպ. էջ 310): 5/94ա-109բ* (սկ.՝ «[Սր]բելոյն մարդկան այսոց պղծոց»: Տպ. էջ 357): 6/110ա-40բ: 7/140բ-67բ: 8/167բ-85ա: 9/185ա-98բ: 10/199ա-202բ:

* 104ա «Յայսմ վայրի թուղթ է անկեալ յօրինակէն: եւ զորքանն ոչ գիտեմ»:

Տէ՛ս եւսերիսս Կեսարացոյ Պատմագիրք եկեղեցոյ, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1877 թ.:

Բ. 202ա-43ա Պատմութիւն Տարօնոյ, զոր թարգմանեաց Զենոբ Ասորի եպիսկոպոսն

Տէ՛ս ձեռ. 1328, 242ա-333բ: ա/203աբ: բ/203բ-9ա: գ/209ա-18ա: դ/218ա-2բ: ե/222բ-5բ: զ/225բ-32ա: Ն/232ա-8բ: ը/238բ-41ա: թ/241ա-3ա:

Տէ՛ս տպ. Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երեւան, 1941:

Գ. 243ա-53բ Պատմութիւն յաղակս սրբոյ խաչին, որ Հացունեաց կոչի, թէ՛ որպէս դարձաւ ի Պարսից աշխարհէն իսպառն աստուածընկալ, եւ մասն ընկալեալ աիկնոջն Սիւնեաց – եւ եղեւ յետ թագաւորելոյն Մօրկա արքային Հոռոմոց... Իսկ սորա աւուրս յայտնեցաւ սուրբ խաչն, որ ի Վարազ, եւ էր թվական հայոց ճ. եւ Բ., եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:

Տպ. տէ՛ս «Արարատ», 1888/է., էջ 399-404:

Դ. 253բ-6բ [Մեկնութիւն նշանագրոց Հայոց] ա. 253բ-4ա [Տառք Հայոց] – Ա բ գ դ զ թ ժ. Աղաջական են ամենայն իրս... (հմմտ. ձեռ. 599, 33ա-4ա).

բ. 254ա-5ա [Իմաստք այբուբենից] – Այս են իմաստք այբուբենիս...

գ. 255աբ [Դ. գիրն. ձայնատրք] – Այս գրերս աւելաւ ի Մերոբա... (հմմտ. ձեռ. 599, 37ա-41բ).

դ. 255բ Զգրոց մեկնութիւն յօրինակէղ իմասցիս. Ո՞վ եհան գիր Հայոց – Յորժամ սուրբն Սահակ հայրապետ Հայոց եւ հայերէն եղաւ դպրութիւն... (հմմտ. ձեռ. 599, 41բ-2ա).

ե. 255բ-6բ Յաղակս ձայնից, թէ՛ ուստի գտաւ – Երանելոյն Բարսեղի յաղակս ձայնից... (ձեռ. 599, 42ա-6բ)

ե. 256բ-61ա [Մովսիսի Խորենացոյ] Վասն աշխարհագրութեան – Յաղակս աշխարհագրութեան ոչ ինչ գտանեմք... Ունի եւ բագինս Բ., մինն կոչի Աղէքսանդրոյ, եւ միւսն՝ Կեսարիոյ:

զ. 261աբ [Քաղաքք եւ շինողք նոցա] – Ամասիայ թագաւորն զՄսիս շինեաց... Կոստանդիանոս Կոստանդնուպոլիս նորոգեաց:

է. 262ա-71բ [Վարդանայ Արեւելցոյ] Աշխարհացոյց է այս

Տէ՛ս ձեռ. 20, 251ա-7ա: ա/262ա-3ա: բ/263աբ: գ/263բ-7բ*: դ/267բ-71բ:

* 264բ «Անմեղադիր լինիք, Գ. օրինակ կայր առաջի. միևնույն կայր՝ Բ.սումն չկայր, Բ.սումն կայր՝ Ա.ումն չկայր»:

Տէ՛ս Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, Փարիզ, 1960:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

22ա Զերջանիկ ընդրեալ եւ անւանի վարդապետն զաթոռակալն արհի զեպիսկոպոսն զտէր Խաչատուրն յիշեցէ՛ք ի Քրիստոս Աստուած, եւ զգծողս նորա հետ, եւ զծնողս նորա եւ զայլս նոցա հետ ի դասս արդարոց եւ զիմս նոցա հետ ի դժոխոցն ի զատ եւ արքայութիւնն պէտ:

109բ Զստացող սուրբ գըրոցս զԽաչատուր Բազ | 110ա| ըբարբապետն եւ զարհի զեպիսկոպոսն յիշեցէ՛ք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէ՛ք, եւ ինձ՝ անարժան Գրիգորիս գծողի, եւ ծնողաց իմոց եւս եւ առ ամենայն հաւատացելոց Քրիստոս ողորմեսցի. ամէն:

140բ Զստացող լուսագարդ սուրբ տառիս՝ զերանեալն եւ զերանաշնորհ վարդապետն եւ զարհիեպիսկոպոսն զտէր Խաչատուրն յիշեցէ՛ք ի Քրիստոս Աստուածն ամենայնի. ամէն (նման՝ 185ա, 198բ, 261բ):

167բ Զերանեալն եւ զզարդարեալն ամենայն առաքինութեամբ եւ պէսպէս աստուածագարդ շնորհօք լցեալն զտէր Խաչատուր վարդապետն եւ զարհիեպիսկոպոսն՝ զստացող աստուածախօս տառիս յիշեցէ՛ք ի Քրիստոս Աստուածն ամենայնի. ամէն: Եւս առաւել անարժան Գրիգորիս գծողի մեղաւոր իրիցի Աստուած ողորմի ասացէ՛ք ինձ եւ իմ ծնողացն. ամէն:

271բ Այլ եւ զհոգեւոր դասս կրօնաւորական եղբարցս, մանաւանդ թէ՛ եւ զհայրս զմիայնացեալսն ի տանց, զհեռացեալս յընդանեաց եւ ի մեկնեալս աշխարհական հոգոց՝ զսիրողս սրբութեանց եւ զեղբայր առաքինութեանց օրհնեսցէ Քրիստոս Աստուածն մեր եւ պահեսցէ անթառամ ծաղկօք վարուց սրբութեան, ի պատիւ, ի փառս եկեղեցոյ եւ ի յամօթ բանսարկուին, եւ յետ աստեացս ընդ ճգնաւորացն դասակեսցէ: Նա եւ համշիրակ եղբարցս դասս սրբագանիցդ զգրոց աշակերտեալ անձինդ, որ ծարաւիդ էք ի ջրոյն կենաց, տացէ՛ք ձեզ ինքնին ըմբել զուխս փափկութեան, մինչ զի եղիջիք իւրաքանչիւր ի շնորհաց հոգոյն բաժանեալ, որով անմտաց ըստ թարգմանութեան տան ջուր կենդանական իմաստից, անաղտ բղիճամբ պարագայից եւ երկար ամօք կրթիլ ձեզ ի մամուլս առաքինութեան եւ ի հրահանկս իմաստից, ժամանիլ ի բարիքք աւարտն, ի փառս հանդերձեալ կենաց. ամէն: Այլ եւ քահանայք եւ փակակալք եղիցին արթունք եւ պատրաստք լապտերօք բարեգործութեան, զի՛ գալ փեսային արժանասցին մտից առագաստին. ամէն: Այլ եւ զկամարակապ հաստատութիւն եւ անդրթուրի զօրութեամբ կացցէ դշխոյ ընդ աշմէ՛ք Քրիստոսի ի հերքումն դիւաց, ի բժշկութիւն հիւանդաց/// (Թափուած):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

272ա (ԺԸ դ., անարուեստ նոտրգիր) Մայիս Ժ. օրում տէր Յակոբ եկաւ իմ տուն մինչեւ մէկ տարի

վաղդայ Ե. դուրուշ քրայ, Ա. դուրուշ հասաւ Է. շաի ժամ ԻԳ. (23) փարայ էլ ԺԳ. (13) փարայ եղ Ը. վոյել, Բ. լիդր ալուր:

ԳՐԶԱՓՈՐԶ՝ Գա՝ «Առաքել, Յակոբ հան, 10ա (շղագիր) «/// իւզ/// ուն օծէ/// Քրիստոս թագաւ/// էայ արքայ/// երկնից մէջսինիկի (?) ողորմեայ մեզ կեցուցիչ: Հաւիկ մի պայծառ տեսի աննման: Հաւուն, հաւուն արդնացեալ, դիտելով գրեթեանոս, ձայնէր ձայն] էր տատրակի սիրայանոյն սիրելի: Գարձի՛ր դարձի՛ր սոմնացի հօժանեաւ իմ: Ես՝ Ըստեփա[նոսս] գրեցի այս գիրս»: 104ա՝ «նոյն բնագրի 5 տող արտագրութիւն յետագայ ձեռքով», «Յայսմ վայրի թուղթ է անկեալ յօրինակէն: Եւ գորքանն ոչ գիտեմ», 104բ՝ «խակ եպիսկոպոսքն, որ էին ի կողմանս Ասիայույ փոթեայ պահել զսովորութիւնն, Վարդան վարդապետին յատատաաաաաա», 128բ՝ «աբգդեզ, ադդ, աբգ,

բգդեզէրթ, ի նուաստ Յակոբ էմ է, ի նուաստս աբ, աաաբգգդե», 200ա՝ «ՋՋ», 203ա՝ «Ե ի նրաան, ան, եւ դժոխոց դրունք խորտակացն, ւ ան ին անանանս, աանելուցն», 203բ՝ «մարգ, անին», 204բ՝ «Քրիստոս Աստուած, Քրիստոս Աստուած մեր, որ որ վասն մե, աաբգդեզէրթ, աաբգդ, անին, աաբգդեզէրթ, անբգդե», 205ա՝ «աբգդեզէրթիլ, աաաաաաաեաաաաե», 206ա՝ «անին, անանանանան», 206բ՝ «ինչ ինիա ինձ ինչ կամիք», 207ա՝ «անին, անինսանին», 210բ՝ «անգրչագիր, անին գրչ», 211ա՝ «անուն Աստուծոյ մի սնե գրչագ գրչար ան», 214ա՝ «սնի, ասնննն նննն»:

ՆՇՈՒՄ՝ Աա, 1ա՝ «2618», Գա՝ «263/2618», 1ա՝ «Ժէ., Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս», Եբ՝ «Վերակազմուած է հին ու նոր կաշիով, նոր կազմաստառով: Գլխ. վերականգնիչ Ա. Խաչատրեան: Երեւան, 1974 թ.»:

2619


Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Յ

ՀԱԼԷՊ

ԳԻԻԶ՝ Աստուածատուր սրկ. (1ա-166բ, 181ա-223ա), Առաւել (167ա-81ա)*: ՄՍԱՅՈՂ՝ Արիստակէս վոդ. Խարբերոցի: ԹՈՒՂԹ՝ ԿՈԿՈՂ՝ Մուրաւ:

* Առաւել գրչի գրած մասը կարող է անելի ֆիչ լինել:


Թերթ 224. չգրուած՝ 52բ-Յա, 223բ: ՊՐԱԿ՝ 1+Ա-ԻX12 (Ա՝ 10, ԺԳ՝ 11, ԺԵ՝ չիբ, ԺԶ՝ 10): ՆԻԻԹ՝ թուրք լուսագծերով եւ լուսադրոյնով՝ թագ, վրան՝ վեցաթեւ աստղ, վրան՝ մանիկ: ՄԵՇՈՒԹԻԻՆ՝ 25x18: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն (17,5x12,5): ԳԻՐ՝ նուորգիր (նմուշ 7ա): ՏՈՂ՝ 27: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի, միջուկը տախտակ. աստառը կապոյտ կտաւ, լուսանցակողերը՝ կարմիր:



Նմուշ 7ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ – Կ ի ս ա խ ո ռ ա ն Յա: Ճ ա կ ա - տ ա գ ա ռ դ՝ 2ա: Լ ու ս ա ն ց ա գ ա ռ դ՝ բուսական, թռչնային: Չ ա ռ դ ա գ ի ռ՝ հանգուցազիր: Գ ո յ ն ե ռ՝ կարմիր, կապոյտ, նարնջի:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան ըստ Յովհաննու, Բ. 10-21, Գ. 1-16: Ժ. դ.: ԱԲ+ԳԿ, ստացուած երկու կից թերթերի երկայնակի եւ լայնակի հատումով՝ բնագիրը վնասուած: Մազադար, 24,2x17,5, երկսիւն (ԱԲ՝ 17x16,5, ԳԿ՝ 22x12,5, 17), բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Բա), տող 11, 15: Կարդալ՝ Գբ-Գա-Գբ-Աա2-Աբ-Բա-Բբ-Գա-Աա1-Գա2. «Յառաջ[ագոյն] պաշտէ... Ե՛րթ, կոչ[եա՛] զայր ք[ոն եւ կ]այ[աբ]»:



Նմուշ Բա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ – Լ ու ս ա ն ց ա գ ա ռ դ՝ բուսական: Գ ո յ ն ե ռ՝ կարմիր, կանաչ:

ՌՀԹ. – 1630

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, Յական կապիչներն ու գամերն ընկած, Ա. եւ Բ. փեղկերին պահպանուած մետաղէ 2 փականների հատուածներ, լուսանցակողերը՝ գունաթափ, պատուոյն-պհպները վնասուած, կեղտոտուած, խումսացած, ք. 10-36, 201-2, 211-1՝ հիմքից մասամբ պոկուած, ք. 223՝ կէսից երկայնակի կտրած-հանած, հիմքերի մօտ կեղտոտուած, կարերը թուլացած, թերթերին աղտոտուածութեան հետեւեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. 1աբ [Վկայութիւն վասն ֆարոգութեան...] Նախերգանք – Երանելին միայն հզօրն թագաւորն... զի կարող լինիցիմ համարձակիլ ի մեկնութիւն աստուածային մատենիս, որ ասէ:

Բ. 2ա-166բ [Եպիփանու Կիպրացոյ Ի սկզբնագիր Արարածոց եւ աւետարանական ֆարոգութեանց, որ ըստ Դուկայ]

– 2աբ Արդ, այս ինչ կայ ի գիրս յայս, որ է սրբոյն Եպիփանու ցանկա – Ա. Յաղագս ըստեղծմանն յԱղամայ... ԼԶ. Յաղագս սրբոյ խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

1. 3ա-14բ Պատմութիւն վարուց եւ սփանչելեաց սրբոյն Եպիփանու արքեպիսկոպոսին Կիպրացոյ – Արանչելի այրս այս Եպիփան էր ազգաւ հրէա... եւ անասանել մնացեալ մինչեւ ի վախճան ի փառս ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, այժմ եւ միշտ:

2. ա. 14բ-25ա Երանելոյն Եպիփանու արքեպիսկոպոսապետին Կոստանդեայ Կիպրացոյ ասացեալ ի սկզբնակիր Արարածոց եւ յաւետարական ֆարոգութեանց, որ ըստ Երկուկայ. Յաւետիս սրբոյ Աստուածածնին եւ միշտ կուսին Մարիամու – Աստանօր

սկիզբն արասցուք... արդարն մի՛ կործանեսցի, զի Տէր ձեռն կալու նորա:

բ. 25ա-31բ Մինչեւ ցայս վայր հանգիստ – Արդ, մի՛ ոք ընդդէմ եկեալ իմոյ բանիցս... Փառաւորելով զԱստուած հօր եւ մօրն իրեանց՝ եւայի եւ Ադամայ:

գ. 32ա-5ա Ը. Նորին ասացեալ հանգիստ Ը. – եւ Աբելուհի լցեալ զթիւ ամաց... օրհնէր, գովէր եւ փառաւոր առնէր զարարիչն Աստուած:

դ. 35ա-6բ ԺԱ. Հանգիստ – եւ հրաման ետ նոյ որդոց իւրոց... դարձաւ Սէմ եւ եկն ի տուն իւր:

ե. 36բ-41ա Հանգիստ – Այլ եւ աւն անդր մնաց Սեդեկ միայնացեալ... արտայայտին աստուածաբանական իմաստք աւետաբեր ճառիս:

զ. 41ա-51բ Նորին երանելոյն ասացեալ հանգիստ – Արդ, ի թագաւորութեանն Անթիպատրեայ... եւ գովեսցուք զամենասուրբ զԵրրորդութիւն եւ զմի աստուածութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

է. 51բ-8ա ԺԶ. Նորին ի գնալ սուրբ կուսին առ Եղիսաբեթ ազգակիցն իւր. յԱւետարանէն, որ ըստ Դուկասու է – Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ... որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, յաւիտեանս յաւիտենից:

ը. 58ա-61ա ԺԷ. Նորին Յաղագս սուրբ Մկրտչին Յովաննու – եւ Եղիսաբեթի լցան աւուրք... եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

թ. 61ա-8բ ԺԸ. Նորին Յաղագս ծնընդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի սուրբ կուսէն – Անըսկիզբն Բանն յանըսկզբնական ի Հօրէ... ի փառս ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդոյ եւ Սրբոյ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ժ. 68բ-72բ ԺԹ. Նորին ասացեալ ի նոյն խորհուրդ. յԱւետարանէն Դուկա – եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ... Որ է օրհնեալ ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ժա. 72բ-88ա Ի. Նորին ի գալ մոզուցն յերկրպագութիւն Տեառն. յԱւետարանն Մաթէոսի – եւ ծընանելն Յիսուսի ի Բեթղէէմ... եւ սարկաւագունս քարոզելով նոցա զՔրիստոս Աստուած ի փառս Հօր եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ:

ժբ. 88ա-91բ ԻԱ. Նորին երանելոյն Եպիփանու արքեպիսկոպոսապետին Կոստանդեայ Կիպրացոյ ի թլփատութիւն Տեառն ութօրեա, յԱւետարանէն, որ ըստ Դուկասու – եւ իբրեւ լցան աւուրք ութ... մեզ հասանել շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն:

ժգ. 91բ-7ա ԻԲ. Երանելոյն Եպիփանու արքեպիսկոպոսապետին Կիպրացոյ ասացեալ ի գալուստ Տեառն ի տաճարն քառասնաւորեա եւ ի ծերունին Սիմէոն. յԱւետարանէն, որ ըստ Դուկասու – եւ

իբրեւ լցան աւուրք սրբութեանց նոցա... եւ նմա փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ժդ. 97ա-100բ ԻԳ. Նորին երանելոյն Եպիփանու արքեպիսկոպոսապետին Կոստանդեայ Կիպրացոյ Վասն մանկանցն Բեթղէէմի եւ ի փախստեա Տեառն յեգիպտոս. յԱւետար[ան]էն, որ ըստ Մատթէոսի – եւ իբրեւ զնացին նոքա անտի... ընդ որում Հօր եւ Սուրբ Հոգւոյն վայել է փառք, իշխանութիւն, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ժե. 100բ-2ա ԻԴ. Նորին Եպիփանու Կիպրացոյ ասացեալ՝ Ի դառնալն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յեգիպտոսի եւ բնակելոյն ի Նագարէթ իբրեւ սնանելով անդ – եւ ի վախճանելն Հերովդի... գորութեամբ փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին:

ժը. 102ա-4բ ԻԵ. Նորին երանելոյն Եպիփանու ասացեալ՝ Ի գնալն Յիսուսի ի Զատիկին. յԱւետարանէն, որ ըստ Դուկասու – եւ երթային ծնողքն նորա... վայել է փառք, պատիւ եւ իշխանութիւն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

ժէ. 104բ-8բ ԻԶ. Նորին երանելոյն Եպիփանու արքեպիսկոպոսապետի Կոստանդեայ Կիպրացոյ ասացեալ՝ Ի մկրտութիւն Տեառն. յԱւետարանէն, որ ըստ Մատթէոսի – Յաւուրսն յայնոսիկ գա Յովհաննէս Մկրտիչ... ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս եւ անզրաւ յաւիտեանս. ամէն:

ժը. 108բ-11ա ԻԷ. Նորին երանելոյն Եպիփանու արքեպիսկոպոսի Կոստանդեայ Կիպրացոյ ասացեալ՝ Ի մկրտութիւն Տեառն. յԱւետարանէն, որ ըստ Մաթէոսի – Յայնժամ գա Յիսուս ի Յորդանան... ընդ որում Հօր եւ Հոգւոյն Սրբոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ:

ժթ. 111ա-4բ ԻԸ. Երանելոյն Եպիփանու արքեպիսկոպոսապետի Կիպրացոյ ասացեալ՝ Ի Յովհաննոյ Աւետարանին մեկնութենէն – Աստանօր որդին Որոսման... որում փառք յաւիտեանս. ամէն:

ի. 114բ-20բ ԻԹ. Նորին Եպիփանու Կոստանդեայ Կիպրացոյ արքեպիսկոպոսապետի ասացեալ՝ Յաղագս մեծահրաշ եւ առաջնապարգեւ Նշան<ան>ին ի Կանա Գալիլէացոյ՝ զգուր ի զինի փոխարկելով – Բազում աշխատութեամբ եւ մեծահաւատ սիրով... փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

իա. 120բ-2բ Լ. Նորին երանելոյն Եպիփանու ասացեալ ըստ կարգի բանից. յԱւետարանչեացն սրբոյ, որ ըստ Յոնաննու – Ի վաղիւն անդր կամեցաւ ելանել... ընդ որում Հօր եւ Հոգւոյն Սրբոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ:

իբ. 122բ-4բ ԼԱ. Նորին երանելոյն Եպիփանու արքեպիսկոպոսապետի Կիպրացոյ ասացեալ՝ Ի Յոնաննու յԱւետարանին մեկնութենէ, ըստ կարգի ասա-

ցելոցն – *ՁԱստուած ոչ ոք ետես երբէք... ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որում վայել է փառք, իշխանութիւն:*

Իգ. 124բ-7ա ԼԲ. Երանելոյն Եպիփանու արեւալիկոպոսի Կոստանդեայ Կիպրացոյ ասացեալ՝ Ի քառասնօրեա պահելն Յիսուսի եւ զփորձապետն յաղթելոյ – *Անեղանելի եւ արարիչն բանն Հօր... ընդ որում Հօր եւ Հոգոյն Սրբոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատ[իւ]:*

Իդ. 127ա-42բ ԼԳ. Երանելոյն Եպիփանու Կիպրացոյ ասացեալ Յաղագս վերջնումն ժամանակին եւ վասն յայտնելոյ որդոյն կորստեան Նեոնին, գոր մերձ ընդ մերձ սատակեսցէ Յիսուս հոգով – *Արդ, զառանցելոց ժամանակաց... եւ զամենահօր Հոգին Սուրբ յաւիտեանսն եւ յայժմ յաւիտեանս եւ յանսպառ յաւիտենից. ամէն:*

Իե. 142բ-58բ ԼԴ. Երանելոյն Եպիփանու արեւալիկոպոսին Կիպրացոյ ասացեալ՝ Յաղագս միասնազամ գալստեանն Քրիստոսի Աստուծոյ, յորժամ գայցէ փառոք իւր եւ Հօր եւ հրեշտակաց սրբոց առնել դատաստան արդար իսկապէս արդարոց եւ մեղատուաց՝ հատուցանելով իւրաքանչ[իւրոց] ըստ գործոց ի փրկութիւն ամենայն հաւատացելոցս Երորդութեան – *եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ... |158ա| փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին, այժմ |158բ| եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Իզ. 158բ-66բ ԼԵ. Երանելոյն Եպիփանու Կիպրացոյ արեւալիկոպոսապետի ասացեալ Ի փոխումն սուրբ Աստուածամինն եւ միշտ կուսին Մարիամու – *Արդ, Հոգոյն սրբոյ առաջնորդութեամբ... զոր միածինն նորա աշով իւրով օրհնեաց ի բար///:**

* Քերի, թերթեր ընկած. 166բ ստ. լս.ում. «Պակասում է 13 թերթ կամ 52 սրւնեակ: Գ. Տ[էր]-Ս[կրտչեան]:»

Գ. 167ա-212ա [Վարդանայ Արեւելցոյ Լուծմունք ի Սուրբ Գրոց]

Տե՛ս ձեռ. 341, 1ա-141ա: 1-2/չիք թերթերը ընկած լինելու պատճառով: 3/167ա-77բ: 4/177բ-8ա: 5/178ա-81ա: 6/181ա-3ա: 7/183ա: 8/183ա-4ա: 9/184բ-92բ: 10/192բ-4ա: 11/194ա-200բ: 12/200բ-2ա: 13/202ա-4բ: 14/204բ-8բ: 15/208բ-9ա: 16/209ա-10բ: 17/210բ-2ա: 18-27/չիք:

Դ. 212ա-5ա Թուխթ տեառն Կոստանդեայ Կաթողիկոսի Հայոց, գոր գրեաց առ Հեթում թագաւորն, ի յաստուածապահ դղեկէս Հոռոմկլայէս, ի մայրաքաղաքն Սիւ: Պատասխանի թղթին, որ ի պապէն Հոռոմայ բերաւ առ թագաւորն Հեթում, ի ձեռն լիկատին, որ կոչէր Տիմանչ, ի թուին ՈՂԵ. (1246). գրեցաւ ի ձեռն արդիւնական վարդապետին Վարդանայ յարմար իրին – *Սո՛ւրբ Թագաւոր, յառաքեալ գրոյ քո ծանեաք... ողջ լե՛ր, կրկին թագաւորեալ, թագաւոր աստուածասէր:*

Ե. 215ա-22բ Դաւանութիւն հաւատոյ ողղափառութեամբ՝ սրբոյ վարդապետին Վարդանայ, ի

խնդրոյ սրբազան կաթողիկոսին Հայոց Կոստանդեա – *Ի պահանջումն զարհուրելի խնդրոյս... ոչ իշխեմք չափել զանչափելին եւ աղաչեմք չմեղադրել մեզ վասն այսորիկ: Ողջ լերո՛ւք:*

ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 14բ (Աստուածատուր գրչի) *Զմեղապարտ Աստուածատուր դպիր սարկաւագս յիշեցէք ի Քրիստոս. թվին ՌՀԹ. (1630) ամին:*

31բ *Յիշեցէք զտէր բաբունապետ Արիստակէս վարդապետն, ստացողի սորա |32ա| փրկութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ: Եւ դարձեալ յիշեցէք զանարժան գրծողս սորա Աստուածատուր դպիր սարկաւագս, եւ դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն:*

51բ *Ստացողի սորայ Արիստաքէս վարդապետն փրկութիւն եւ ողորմութիւն իւր եւ իւրոցն հայցեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ վայելողք սորայ: Զգծողս սորայ սակաւագ Աստուածատուրս յիշեցէք ի Քրիստոս. թվին ՌՀԹ. (1630) ամին:*

58ա *ԶյԱրիստաքէս վարդապետն եւ զԾնողն իւր եւ ըզգարմ յիշեցէք ի Քրիստոս, ո՛վ սուրբք Աստուծոյ (նման՝ 61ա, 68բ, 72բ):*

2. 174բ (Առաքել գրչի) *Զմեղուցեալ ծառայս Աստուծոյ Առաքել յիշեցէք ի Քրիստոս:*

178ա *Որ փարթամանայք հոգւով, յիշեսջիք |178բ| ի բարեբախտիլն ի Տէր եւ ստացողի եւ գրողի մեղաց թողութիւն մաղթեցէք:*

181ա *Զստացող աստուածային գաղափարիս զտէր Արիստակէս վարդապետն յիշեցէք, օգտողք ի սմանէ, եւ մացառոտ գրչիս մեղաց թողութիւն խնդրեցէք եւ ասացէք, Ամենագորն Աստուած թողցէ զյանցանս ձեր. ամէն:*

209ա *Զարժանին յիշատակի զսուրբ վարդապետն Վարդան լուսոյ բանիցս ծագող յիշեա՛յ ի Տէր, ընդ նմին եւ զտէր Արիստաքէս վարդապետն յիշեա՛յ ի Քրիստոս եւ զմեղուցեալ գրիչս զԱստուածատուրս սարկաւագ յիշեա՛:*

210բ *Եւ զանպիտան գրիչս՝ Աստուածատուրս սարկաւագ եւ զԾնողս իմ զՄարիամ եւ զհայր իմ կաւղար Միրաֆն յիշեցէք ի Քրիստոս:*

222բ *Յիշատակարան. Փառք անբսկրգբանն եւ անեղին Հօր եւ պատճառին բոլորիցս, փառք Որդոյ անկատարածի եւ անբսկրգբան ըսկսեալ ի Հօրէ անժամանակաբար, փառք ի Հոգոյն Սրբոյ, ելօղին ի Հօրէ, բղիժամբ անհատաբար առօղին յՈրդոյ եւ լցօղին գեկեղեցի իւր սուրբ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Ի թվականութեանս Հայկազեան տումարիս ՌՀԹ. (1630), ի հայրապետութեանն տեառն Մովսէսին եւ ի թագաւորութիւնն Կոստանդիանոյայօղսի սուլտան Մուրատին, ոմն յերկրէն Խարբերթո՛ւ անուա-*

նեալ Առիստակէս վարդապետ, ուսեալ եւ հմուտ եղեալ Հին եւ Նոր կտակարանաց, եկեալ ի մայրաքաղաքս Հալապ՝ վասն Երուսաղէմ գնալու, եւ ժամանակ ինչ աստ կեցեալ քարոզէր զբանն սուրբ Աւետարանի ի լսելիս հաւատացելոց, եւ տեսեալ զՊատմագիրս զայս, զոր արարեալ է սուրբն Եպիփան Կիպրացին եւ ցանկացեալ սմա, վասն որոյ մեծաւ փափագանօք ետ գրել ինձ՝ Աստուածատուր սարկաւազիս զսուրբ Պատմագիրքս եւ զԼուծմունսն, զոր արարեալ է Վարդան վարդապետի եւ այլ սուրբ վարդապետաց, որ լի եւ անթերի ունի զՊատմութիւն ժամանակաց եւ զտնօրէնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց տէր Կիրակոսին եւ Հռեփսիմէ, որ մակաւնուն Կոլփան կոչի:

Արդ, աղաչեմ զեղբայրսդ մեր զամենեսեան եւ զուսումնասէր զքահանայսդ եւ զքահանայապետսդ, որք հանդիպիք այս սուրբ գրոցս՝ ընթեռնելով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զվերոյսացեալ զտէր Առիստակէս |223ա| վարդապետն եւ զեղբայրն իւր զՎրդանէան եւ զնորա կենակիցն զՄուղալն, որ հանգեալ ի Քրիստոս. ետուն գրել զսուրբ գիրքս յիշատակ յիւրեանց եւ ծնողաց իւրոց տէր Կիրակոսին եւ Հռեփսիմէին եւ եղբարցն իւրեանց ըՍտեփաննոսին, Խարշանին եւ Յուսիկին եւ այլ անենայն արեան առու մերձատրացն եւ Աստուած ողորմի ստողացն. ամէն:

Եւ դարձեալ յիշեցէ՛ք զգծողս սորա Աստուածատուր սարկաւազս եւ զծնողսն իւր՝ զԿոշկար Միրաֆն եւ զՄարիամն եւ այս սուրբ գրքիս թուլթ կօկողն զՄուրաւն, որ խիստ աշխատեցաւ. եւ լի բերանով ողորմի մի ասացէ՛ք, եւ Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն:

Հա՛յր մեր որ յերկինս, սուրբ եղիցի:

Տէս Ժէ. Գ-ի յիշ-ք, Բ., էջ 375-6, Հ^ս 555 ունի 14բ, 32ա, 209ա, 210բ, 222բ-3ա էջերինը:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 224ա* (1761 թ., շղագիր) Թիվն ԱՌԲՃԺԱ. (1762) եւ թիւն փրկչին ՌէճԿԱ. (1761), ի քաղաքն Բաղդատ ես՝ Ջուղայեցի Յակոբջանի որդի Մանուկս գրեցի: Արդ, երես անկեալ աղաչեմ ցհնադիպողստ սորայ ժամանակաւ յիշեցէ՛ք զվերոյիշեալ հայրն իմ եւ զմայրն զԹագունին եւ զերկոսին եղբայրքն իմ՝ զմեծն Ջաֆարիայն, զմիջակն Մարգարայն, եւ զիս՝ զկրտսեր նոցայ եւ ձեր ծառայ ամենայնի, որ եւ դուք յիշեալ լիջիք ի յօրն ահագին առաջի ահեղ ատեանն Քրիստոսի. ամէն:

224ա [Տաղ Մանուկի, «Մանուկ է՛»] – Մեղայ գոչեմ եւ զղջանամ, / Դարձեալ կրկին նոր ջանամ, նոր ջանամ... է զիմ պաղեալ սիրտս առ բարին / սիրով ջեռեալ ընդ շարին, ընդ շարին:

* Առաջին սիւնակում յիշատակարանն է, երկրորդում, 7րդ տողից հետեւում է «Մանուկի տաղը»:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 3ա, 222ա (ութանկիւն շրջանակ, սեւ թանաքով) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ/// ՎԱՐԴԱՊԵՏ, 1217 (1768)»:

ԳՐՁԱՓՈՐՁ՝ Բա՝ «աաաա, բբբ», Բբ՝ «Աակիսօն Ասիի անուն», 1ա՝ «Քրիստոս Աստուած արի տացէ նուաստ», 50բ՝ «Ը. ունկն մտել», 224բ (նոտրգիր) «Ո որ զի նոր իցի իւրօք թօշակոք, ո որ անկիցէ այգի եւ ի պտղոյ նորա ոչ ուտիցէ, ո՞ որ արածիցէ զխաշն եւ ի կաթանէ խաշինն ոչ ուտիցէ...» (18 տող): «Տօն մի պակաս կա ի յապայցներն. Գոհարին եւ Ռամանոսին եւ Մամիդէ. Ա Վ Ք ԸՁ Գ Տ Օ Տ Յ Ն Ք եւ սոյնպէս, որպէս ի վերոյ գրեալ կայ թ. Ռձնե. (1696)», Գա՝ «Յակոբ ծառայ»:


ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած թերթիկին՝ «Եպիփանու Կիպրացոյ Պատմութիւն», Աա՝ «265/ 2619, ՌձԹ. -1630, Մ[խարոպ] եպ[իսկոպո]ս», 222բ թուաբանական հաշուարկ՝ «1079/551/1630»:

2620

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր Ի Յ Տ Ի Ե Զ Ե Ր Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ Ո Յ Ն

ՌՃՂԹ. – 1750

ԳՐԻԶ՝ Քեանեա օղլու: Թերթ՝ 384. չգրուած՝ 33բ, 78բ, 267բ, 382ա-4բ: ՊՐԱԿ՝ Ա-ԼԳX12 (Թ, ԻԳ, ԻԿ, Լ՝ 10, ԺՁ՝ 9, ԼԳ՝ 11): ՆԻԻԹ՝ թուրք, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եռամսհիկ: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 25,2x19: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (20x12,5): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 18ա): ՏՈՂ՝ 17, 30: ԿԱԶՄ՝ ծաղկաթուրք, մէջբը՝ կարմիր կաշի, միջուկը ստուարթուրք, աստաղը թուրք, լուսանցակողերին՝ հաւասարաբեւ խաչ եւ բուսական զարդանախշ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա + Բ, սպիտակ չգրուած թուրք, մաս կազմաստաղի:



նմուշ 18ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի ծաղկաթուրք մաշուած, վնասուած, ք. 1-95՝ մասամբ ցեցակեր, ք. 156-66, 374-84՝ ցեցի անցեր, ք. 36, 73, 254՝ վնասուած, ք. 382-3՝ հիսլից մասամբ պոկուած, ձեռագիր խոնամութիւն տեսած, հիսլիքի մօտ կեղտոտուած, աղտոտուածութեան հետեւեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1ա-381բ [Համառօտ նախապատմութիւն Նիկիոյ, Կ. Պոլսոյ, Եփեսոսի ժողովոց]

Տէս ձեռ. 1776, 4ա-327ա: Ա/1ա-33ա: Բ/34ա-52բ: Գ/53ա-70ա: Դ/70ա- նախապատմութիւնը. 70ա-8ա: 1/79ա-125բ: 2/126ա-267ա: 3/268ա-381բ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

381բ Գաղափարեցաւ գիրքս ժողովոց ի լաւ եւ յընտիր օրինակէ, ձեռամբ ումեմն դեռաբողոքոջ նօտարի, որ է ձեռնասուն աշակերտ մահտեսի Գրիգորի, յամի ՌձՂԹ. (1750), որ մականուամբ Քեանեա ողլու ասի:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա սեւով շրջանակ, մէջը թագապսակ գինանշան, եզրերին "Печ. Ахалыцхской градской полиция":

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ 382բ, 383ա, 384աբ՝ խզբզոց: ԳՐՁԱՓՈՐՁ՝ 384բ արաբանիշ թուեր՝ 10, 20, 30, 40, 50, 60, 70, 80, 90, 100, 200, 300, 400, 500, 600, 700, 800, 900, 1000, 1252, 12712. 4000:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած թերթիկին՝ «Նախապատմութիւն տիեզերական ժողովոց, 2», Աս «269/2620, ՌձՂԹ.-1750, Մ[ետրայ] եպ[իսկոպո]ս», 1ա՝ «Հ^մր 170/82»:


2621

ՌԱՄԳԻՐՔ

ՎԱՐԱԳ

ԳԻՒԶ՝ Յարոպին Վանեցի (4ա-132բ), անանուն (133ա-6ա): ՍՍԱՅՈՂ՝ Մահտեսի Երեմիա առց:

ԹԵՐԹ՝ 152 (գրչի էջակալով 1-252, որ է՝ 4ա-129բ). չգրուած 1ա-3ա, 133բ, 135բ, 136բ-52բ: ՊՐԱԿ՝ 3+Ա-ԺԹx8 (ե, ԺԳ, ԺԷ՝ 6, ԺԸ՝ 7, ԺԹ՝ 12): ՆԻԻԹ՝ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով «EREDI TURCHI», եւ՝ թագապսակ շրջանակ՝ ներսում թոշուն, որի տակ 3 ռեաւորուած բլուր: ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 25,8x18,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (21,5x13,2), աղիասկների բաժնում տարբեր: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 9ա): ՏՈՂ՝ 31 (աղիասկների բաժնում խառն): ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի, միջուկը տախտակ. աստաղը թուղթ. լուսանցակողեր՝ կարմիր:



Նմուշ 9ա

ՄԱՆՐԱՆԿԱԲՁՈՒԹԻՒՆ – Կ ի ս ա խ ո ռ ա ն՝ 4ա: Ճ ա կ ա տ ա զ ա Ր Պ՝ 31ա: Լ ու ս ա ն ց ա զ ա Ր Պ՝ բուսական (4ա՝ վարդ), վերջագարդ՝ 13ա: Չ ա Ր Պ ա գ ի Ր՝ թռչնագիր: Գ ո յ յ ե Ր՝ կարմիր, դեղին, կանաչ, վարդագոյն, նարնջի, կապոյտ, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, լուսանցակողերը՝ գունաթափ. թ. 3-4, 28-35, 82, 111-20, 134՝ հիմքից մասամբ պակուած, հիմքերի մօտ կեղտոտուած, թանաքի թթուայնութիւնը բարձր, աղտոտուածութեան հետեւեւ:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Թ Ի Ի Ն

Ա. 4ա-132բ Գիրք որ կոչի Ընումի, արարեալ ի սրբոց վարդապետաց, սակայն է նախկին հեղինակն սորին գերեշահնիկ մարգարէնն Դանիէլ

ա. 4ա-5ա Գրուխ առաջին: Յուգմունմ վերջաասան կերպից եւ անուամբ նոցին են այստփիկ – Կահեայն, խաբըլտախիլ... Արդ, այսոքիկ են կերպը, եւ իւրաքանչիւր աստեղօք գուշակէ զօրն եւ զսահաթն (3բ եւ 5ա՝ մէկկական աղիւսակ):

բ. 5ա-30բ Արդ, յառաջ պարտ է իմանալ զտանց բաժանումն եւ զկերպից բնութիւն. Գրուխ երկրորդ – Առաջին տուն հօմրիէ եւ կենաց... Այս է ատամբները կերպերոյն, թէ ինչ կերպ ինչ տուն ատամբ ունի, աստիս արա՝ եզր կարմիր գիրն տունն համարքն է... (բերուած է համապատասխան աղիւսակը):

գ. 31ա-41բ Այս է մուսալեաթն յորժամ ելանէ տարելէն՝ արքայիտախիլէն յահեայն. Պրակ առա-

ՌՄՆԵ. – 1796

շին. – Գուշակէ բանին վերջն աղէկ լինայ... եւ կորուստն գտանէ, եւ պեղ միրաթէ ըրգակ տունու եւ անասուն: Վերջ:

Բաժանուած է 16 պրակների:

դ. 42ա-81բ Խաբըլտախիլին Բ. լուծ կերպերն, մեծ միգան, որ է ԺԵ. տուն (80 աղիւսակ՝ զանազան բովանդակութեամբ՝ Վասն Չամիրին, Թագաւորի ծառայութեան, Դատաստանի, Յատակ վաստակելու, Իրք խնդրելու, Պսակի, Հիւանդի, Տղայ ուզելու, Գողցածի եւ կորածի, Ճանապարհի, Անձրեւի, Յերուսաղէմ գնալու եւ այլն):

ե. 82ա-103բ Վասն Ընումի վատայ տարուն – Յաւուրն եւ շաբաթին ամսոյն եւ տարւոյն... Բայց զկատարեալն ամենայնի Աստուած գիտէ, որ եւ նմա փառք յաբիտեանս. ամէն:

Բաժանուած է ԺԶ. «դռն», 98բ-9ա՝ 4 աղիւսակ ԺԵ. տան, որ է միգանն, 99բ-103բ՝ 9 աղիւսակ տարբեր բովանդակութեամբ՝ շաբաթուայ օրերի շար եւ բարի լինելու, թւերի, գոյնների, ամիսների, տարիների, ժամերի եւ կենդանակերպերի վերաբերեալ:

զ. 104ա-29բ Պատմութիւն երկուասան կենդանակերպից եւ է. մոյորական աստեղաց – Արդ, երկոտասան տեղիքս բաժանեցին իմաստունքն... Ժխոր է բանդ, զոր առնես, լաւ է, որ գնաս ի վայր նստես ի յաւագ, որ երթալ ուզես, եթէ չերթաս լաւ կու շահես. այսքան առ այս: Վերջ (122ա-4ա՝ 6 աղիւսակ՝ կենդանակերպային, լուսնային, հրեշտակների անուններով):

– 130ա-2բ Յանկ գրքոյս – Ա. Յաղագս վերջաասան կերպից... Ճնթ. Վիճակ առաքելոցն: Վերջ (ունի աղիւսակներ, ցանկեր, բողոքակներ):

Ա. 133ա-6ա Արդ, շարագծեցաւ աղիւսակքս այս ուսմահարութեան նախապէս ի մղրուպոց... (6 աղիւսակ):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

132բ Արդ, գրեցաւ գիրքս շնորհիւ ամենազօրին Աստուծոյ, ի խնդրոյ հանճարաշատ եւ նրբամիտ յարգելի մահտեսի տիրացու Երեմիայ իմաստասիրի, ձեռամբ Յարոպին փծուն գրչիս Վանեցոյ, ի թուա-

կանխ մերում ՌՄԽԵ. (1796), հոկտեմբեր ամսոյ ժ. (10), ընդ հովանեաւ Սրբոյ Խաչին Վարազայ:

ԿՆՔԱԳՐՈՇՄ 4ա, 30բ. սեւով շրջանակ, մէջը՝ «է Խ Ս Փ Վ Ք Բ». բոլորակ կնքադրոշմի մէջ շուրջանակի գրուած այս տառերից իւրաքանչիւրն անշատուած է մի գծիկով, իսկ «է»-ն գրուած է կնքադրոշմի կենտրոնում:

ԳՐՉԱՓՈՐՉ՝ 1ա՝ «Գաղտնի խորհուրդ կայ ի սմա, / Թէ գտանիս, քաջ հուշումիս, / Ոչ հրաշից կայ ի սու կէտ եւ ոչ խաթիւ ինչ արհիդ»:

ՆԿԱՐԱՓՈՐՉ՝ Ա. փեղկին՝ խոյակ, երկգլխանի թագակիր արծիւ, վերետում մեծ թագ:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած թերթիկին՝ «Ռա-միլգիրք», Ա. փեղկի կազմաստառին՝ «Մատնէ 15 տունն», 1ա՝ «272/2621, ՌՄԽԵ.-1796, Մ[ետրոյ] եպ[իսկոպո]ս», Բ. փեղկի կազմաստառին՝ «229 երեսին գրիլ է համէսագէ»:

2622

Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

(Բաղկացած է 15 տարբեր ձեռագրերից)

ԹԵՐԹ՝ 382: ԿԱԶՄ՝ ծաղկաթուղթ, մէջի եւ անկիւններ՝ սեւ կաշի, միջուկը ստուարաթուղթ, աստառը սպիտակ թուղթ: Բ. փեղկի աստառի տակ երեսում է հնատիպ մի գրքի 451րդ էջը. «...գիարդ Վեսպիանոս դարձեալ ի Հռոմ վրնկալեալ եղև ի նոցանէ: Գ...» (տե՛ս Յովսէփոս Երայեցի, Յաղագս պատերազմին հրէից, էջմիածին, 1787, էջ 451): յուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա + Բ, դեղնաւուն շգրուած թուղթ, սկզբից (Ի. դ.):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի ծաղկաթուղթը մաշուած, կաշին մասամբ թափուած, ֆերձուած, պհպ. Ա, Բ՝ հիմֆից մասամբ պոկուած, տարբեր ժամանակներում ու վայրերում գրուած եւ տարբեր չափսեր ունեցող առանձին ձեռագիր մատենաներ կամ առանձին թերթեր հաւաքուած եւ առնուած են մի կազմի մէջ:

ՋԵՌԱԳԻՐ Ա.


Ա. ԿԱՐԱՊԵՏ

ՌՄՉԵ. – 1836

(ԿԱՊԱԳՐՈՇՄՈՅ՝ ԿԵՍԱՐԻԱ)

ԳՐԻՉ՝ Գրիգոր վրդ. Կոստանդնուպոլսեցի: ՍՍՍՅՈՂ՝ Մատթէոս վրդ. Կոստանդնուպոլսեցի:

ԹԵՐԹ՝ 20 (թ. 1-20). չգրուած՝ 1աբ, 18ա-20բ: ՊՐԱԿ՝ 1x20: ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22,5x18: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (14,5x17,5): ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 7ա): ՏՈՂ՝ 18-22:



Նմուշ 7ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կարեր հիմֆից թուլացած:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. 2ա-17բ Տղայ եմ ութնամենի եւ Շրջաբեր տղայ եմ անուանեալ, անուն իմ Ութնամենի: Ըստ խնդրոյ տեառն Մատթէոսի շնորհառատ վարդապետի Մամնդատն՝ առաջնորդի Կոստանդնուպոլսեցոյ ընծայեցաւ: Եկի յաշխարհ աշխատասիրութեամբ Գրիգոր վարդապետի Կոստանդնուպոլսեցոյ, մականուամբ Հաճի կոչեցելուոյ: Որք պահեքդ զիս, խնդրեմ առնել զկամս իմ. 1836, նոյեմբեր 12, ի վանս Սրբոյն Կարապետի, Կապադովկիայ:

ա. 3ա-4ա* Սիրեսցես զընկեր քո – Յաւել[ը] ժական սիրոյդ տագնապ հրկէզ սրտիս եւ գիտեմ, / Դուն մի

անկեզ քուն մի անբոց չիք զով երբէք եւ գիտեմ... Ընդ իս եւ զիմ եղբայր միակ յամենայնէ վտանգէ:

* 2բ՝ «Իբրու թէ գիտաց, հանել ի գանձէ զնոր եւ ըզհին»:

բ. 4բ Մի՛ ի դատարկ հանցուկ զժամ եւ զժամանակ – Չայն ձայնէր մեծագգ մի, կանգուն ձեռք չկայր, / Չալար սահաթ... ուստի նորեակն ունայն փախչիլ թող մի՛ տար:

գ. 5ա-6բ Ձ[ը]նթերցողս արգահատեմ լսել զհրապարակական խոստովանութիւն մեղսակիր անձինս – Կացի բացի, զաչ համբարձի, տեսի զաշխարհ, զի սուտ է... այլ դու, Աստուած, այցելուդ իմ, ինձ ողորմիլ փութացիր:

դ. 6բ Քաղցրասցին քեզ այսուհետեւ բանք իմ իբրեւ զխառիխս մեղու: Հանելու – Մերկին տեսի ես ու մի... (Չամիչ): Դուռնըն ջրակոյտ, փայտեայ բանալի... (Եբրայեցիք, Եգիպտացիք, Յորդանան եւ գաւազանըն Մովսէսի):

Բ. 7ա-17բ Քեզ, ո՛վ սիրուն եղբայր, առաքեմ զայս փոքրիկ բարետեսիլ մանկիկ, խօսիլ ընդ քեզ ի զուարճութիւն քում սրտի...:

ա. 7աբ Գլուխ Ա. Ո՛յք են – Մերկապրիկն հանդէպ եկաց մերկացելոյն... եւ յարքայութեան իւրում փառաւոր կացուցանէ (չնու միամենին զօրէր):

բ. 8ա-9ա Գլուխ Բ. Ո՛յք են – Բ. Հազարամեայ ժամանակն ծնեալ էր գուբ մի խոր... գիր. վճարէ զամն երկրորդ:

գ. 9բ-10բ Գլուխ Գ. Ո՛յք են – Կտաւոտիկ փայտամարմին... զոր համեղ խորվածուն համբոյր տայր քմաց հնդկայհաւ:

դ. 10բ-2ա Գլուխ Դ. Ո՛յք ումանք – Երբեմնական բորահաւաքն... եւ արժանաւորս առնէ աստուածային տեսութեան:

ե. 12ա-3ա Գլուխ Ե. Ո՛ր այս – Երինչ մի յիւրում մորի զծնեալն... փութով վերբերեն ի կեանս:

գ. 13ա-4ա Գլուխ Զ. Ո՞չք — Ստիպեալ երկու քանակ... եթէ շնորհք Աստուծոյ ժամանեն, խորհուրդ դիւական խաբանին:

է. 14բ-5ա Գլուխ Է. — Պճնայարդար միակեցիկն անխօսուն... եւ հասանիս փրկութեան:

ը. 15բ-7ա Գլուխ Ը. — Ը. Զօրականք պահնակք անցող ժամու... | 17ա| Ութնամենի մանկիկ մի հասակ այսքան փոքրիկ մանկանս ուրախ արասցէ զսիրտ սրբազան եղբորդ իմոյ, յորժամ կամիցի զբօսնուլ ի պարապիլ պահու, ուրեմն զանց զտկարախօսութեանց երախայիս այսրիկ, արարեալ թօթովիկ բանից դժուարարձակ բառքառելոյն ի վերայ խնդասցիս: Ողջ լի՛ր:

17բ Տխմար գոլով սակաւ խօսի, / Վճարելով զամն ութնեկի:

Ամէն գլխի վերջում կայ ոտանաւոր եւ խրատ կամ հանելուկ:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Տէ՛ս տիտղոսաթերթ 2ա:


ՆՇՈՒՄ՝ 2ա՝ «Մ[ետրոյ] եպ[իսկոպո]ս»:

ՁԵՌԱԳԻՐ Բ.

ՇՈՒՇԻ ՌՄՁԷ. — 1838

ԳԻՒԶ՝ Յովսէփ Արցախեցի: ՄՍԱՅՈՂ՝ Բաղասար արեւպ. Հասան-Ջալալեան:

ԹԵՐԹ՝ 22 (թ. 21-42). գրչի էջակալում 1-44, որ է՝ 21ա-42բ: ՊՐԱԿ՝ 3x8 (3՝ 6): ՆԻԻԹ՝ թուղթ, անընթեռնելի ենշադրոշմով (33ա, 34ա, 41ա): ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 23x18,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (18x14): ԳԻՐ՝ շղարգիր (նմուշ 23ա): ՏՈՂ՝ 21:



Նշում 23ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցակողեր՝ գունաթափ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

21ա-42բ Գիրք, որ կոչի Վահան ուղղափառաց, յորում ասանդին նախ՝ բանք զպնդութենէ պահոց, երկրորդ՝ բանք զճնարտութենէ բարեխօսութենէ ամենայն արքոց Հնոց եւ Նորոց, երրորդ՝ զընդունելութենէ եւ զերկրպագութենէ պատկերաց՝ հաստատեալ վկայութեամբք Աստուածաշունչ սուրբ գրոց: Ի հայրապետութեան տեսան Յովհաննու արժանաւոր կաթողիկոսի ամենայն հայոց եւ ասպետի: Հրամանաւ եւ ծախիւք աստուածարեալ առաքելաշաւիղ վիճակաւոր առաջնորդի եւ մետրապօլիի Հայոց Գարաբաղու եւ այլոց տեսան Բաղասարայ իշխանագնեայ Հասան Ջալալեան սրբազան արեւալիկոպոսի եւ ասպետի: Յորդորմամբ վերոյ յիշեալ արհւոյն հաւաքեալ բանք նուաստագոյն Յովսէփայ Սեւաթի Արցախեցոյ, ի միաբանութենէ արքոյ վանացն Գանձասարու: Ի Շուշի, 1838 ամի Տեառն ՌՄՁԷ. (1838):

ա. 22բ-9ա Յաղագս պահոց — Գրի ի Մատթէոսի Գ. 2. Եւ պահեալ զքառասուն տիւ... եւ խափանեցէ զբնուութիւն որովայնամուրկութեան նոցա. ամէն:

բ. 29ա-39բ Յաղագս բարեխաւսութեան արքոց — եթէ գոյ մարմնաւոր դատաւոր... իսկ լուծեալանք եւ մահմետականք զանընդմիջաբար աղօթելն առ Աստուած միայն:

գ. 39բ-42բ Յաղագս պատկերասիրութեան եւ պատկերատեցութեան — Պատկեր կայ, որ առանց Աստուծոյ հրամանին է... ուրեմն ինքեանք իսկ են կռպաշտք: Այսքան առ այս:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ


21ա Տէ՛ս տիտղոսաթերթ 21ա:

ՁԵՌԱԳԻՐ Գ.

Կ. ՊՈՒԽ ՌՅԱ. — 1852

ՄՍԱՅՈՂ՝ Թաղէոս Միհրդատեանց:

ԹԵՐԹ՝ 20 (թ. 43-62). չգրուած՝ 43բ, 44բ-5բ, 62աբ (գրչի էջակալում 1-32, որ է՝ 46ա-61բ): ՊՐԱԿ՝ 1x20: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 25x17,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (18x11,2): ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 47ա): ՏՈՂ՝ 28:



Նմուշ 47ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

43ա-61բ Վարք Մուհամմետայ՝ աղանդապետին տանկաց, յարաբացի հաւատարիմ մատենագրաց հաւաքածոյ, տարեգրեալ ի Յովհաննէ Ռամբօլտեայ՝ յիտալական բարբառ:

Եւ ի մերս թարգմանեալ ի Տէր-Կարապետեան պերհիմաստ Յովհաննէ պատուելոյ Պրուսացոյ, յամի Տեառն 1835, ի Կոստանդնուպօլիս, ի վայելումն Տէր-Աստուածատուրեան պ. Թաղէոս Միհրդատի Միհրդատեանց: 1852, սեպտեմբերի 1:

44ա Նախածանօթք ի թարգմանչէն — Առ բազումս եւ գրէթէ առ ամենեսեան...

46ա-61բ Ամի Տեառն 578 — Մուհամմէտ Ապուլ Քասսէմ կամ էպուլ Քասըմ... Ապտուլլահ որդի Ապուլուհահաֆայի Ապտիւլքեապէ անուա/// (Թափուած):

Կենսագրութիւնը ըստ տարիների է՝ 578-613 թթ., վերջից թերի է:


ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Տէ՛ս տիտղոսաթերթ 43ա:

ՁԵՌԱԳԻՐ Գ.

ԺԹ. դար

ԹԵՐԹ՝ 14 (թ. 63-76). չգրուած՝ 69բ-76բ: ՊՐԱԿ՝ 1x14: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 24,5x17,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (18,5x14): ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 63ա): ՏՈՂ՝ 25:



Նմուշ 63ա

ՎիճԱԿ՝ բաւարար. քանափի թրոպանութիւնը բարձր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

63ա-9ա Միաբանական ժողով մարդկային սեռի եւ դժգոհ նոցա զաղեալի աշխարհէս – Սկսուած. Ի կանուխ անդ մշտաթաւալ ժամանակի... Աղաղակեմ ի ծաղկազարդ յայգեաց եւ ի տերեւախիտ աարաստանաց:


Թատերազարկան տարր պարունակող երկ:

ԶԵՌԱԳԻՐ Ե.

ՌՄԾԲ.-ՌՄԾԵ. – 1803-1806

ՍՏԱՅՈՂ՝ Մահլոյն հանի Մարտիրոս:

ԹԵՐԹ՝ 24 (թ. 77-100). շգրուած՝ 77աբ, 100աբ: ՊՐԱԿ՝ 1x14: ՆԻԻԹ՝ թուրք, լուսազձեռով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 24,3x17: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (21x14,5): ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ 78ա): ՏՈՂ՝ 28:



Նմուշ 78ա

ՎիճԱԿ՝ բաւարար.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

78ա-99բ [Յովհաննու պատրիարքի Կ. Պօլսոյ] Կոնդակֆ նորոգ շարադրեալք, սրբագրեցաւ

ա. 78աբ Յորմէ սիրով Սուրբ Հոգւոյն եւ աստուածային օրհնութեամբ... հաւատարիմ ի բարեկամութիւնս. ամէն:

բ. 79ա Ողորմութեամբ Աստուծոյ... Ես՝ Կամախու Սուրբ Նշան վանուց իբր տեսուչ տէր Մկրտիչ քահանայս... եւ ի գթութիւն եւ յողորմութիւն տառապելոցս:

գ. 79բ Քաջաքարոզ, բարեյօժար բաղձալուոյց իմոյ... Մինասայ սրբազնակատար կաթողիկոսի երիցագոյն եղբօր... Եւ ողջոյն տիրածիր:

դ. 80ա Մովսէսայ շնորհա Սուրբ Հոգւոյն պերճացեալ... Գրեցաւ ՌՄԾԳ. (1804), ապրիլի ժԱ. (11):

ե. 80ա Թէսկերէ ամիրայից – Բարեպաշտութեամբ պերճացեալ մեծահաւատ Յօհաննէս Զէլէպի ամիրայի յարգութեանն ողջոյն... Գրեցաւ ՌՄԾԳ. (1804), մայիսի 2.:

զ. 80աբ Զատկիւն. ի տէր Յօհաննէս – Սիրով Սուրբ Հոգւոյն եւ աստուածային օրհնութեամբ ծաներո՛ւք... զի զգուշացեալ հասարակութիւնն անփորձ մնասցին:

է. 80բ Ի շնորհա Տեառն զարգացեալ Կարապետ խոհեմամիտ արհույ եւ Սուրբ Դանիէլ վանուց տեսչէ ողջոյն... ՌՄԾԳ. (1804), մայիսի ժԳ. (13):

ը. 80բ-1ա Յանուն մեծին ի ծնունդս կանանց Սրբոյ Կարապետի կառուցեալ հանրահոշակ վանուցն այցելութիւն տեսուն Ստեփաննոս պանծալի արհույ ողջոյն... ՌՄԾԳ. (1804), մայիս ժԳ. (14):

թ. 81աբ Յորմէ ծանի՛ր ի Թօմարզայ յանուն ամենորհնեալ Սուրբ Աստուածածնի կառուցեալ վանուցն տեսուչ եւ առաջնորդ Մաաթէոս վարդապէտ... Գրեցաւ ՌՄԾԳ. (1804), մայիս ժԳ. (13):

ժ. 81բ Յորմէ սիրով Սուրբ Հոգւոյն եւ աստուածային (օրհնութեամբ) երկիւղին ծաներո՛ւք յիսկիւտար Սուրբ Կարապետ եկեղեցւոյ համայն քահանայք... ՌՄԾԲ. (1803), բամազանի Ա.:

ժա. 81բ-2ա Յորմէ սիրով Սուրբ Հոգւոյն եւ աստուածային օգնութեամբ ծաներո՛ւք ի Պալաթ Սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյ բարեկրօն քահանայք... ՌՄԾԲ. (1803):

ժբ. 82ա Յորմէ սրով Սուրբ Հոգւոյն եւ օրհնութեամբ աստուածային ծանեցուք... Գրեցաւ ՌՄԾԲ. (1803), մարտի ժ.:

ժգ. 82բ Շնորհօք ամենասուրբ Հոգւոյն... մեծահարուստ մահտեսի Յօհաննէս... ՌՄԾԳ. (1804), մայիս ժԲ.:

ժդ. 82բ-3ա Եւ գկնի տիրածիր օրհնութեան սիրով Սուրբ Հոգւոյն ծաներո՛ւք բարեկրօն քահանայք... ՌՄԾԳ. (1804), մայիս ժԳ.:

ժե. 83ա Յամի Տեառն 1803, յառաջնորդարանն, որ ի յԱնդրիանուպօլիս... ՌՄԾԳ. (1804), մայիսի Ա., ի Կոստանդնուպօլիս:

ժզ. 83բ Մօր մերոյ անարատ ծնողի անյաղթելի սրբոյ Աթոռոյն էջմիածնի արժանավայել հայրապետի... Դաքեայ աստուածարեալ վեհափառ քահանայապետի... ՌՄԾԳ. (1804), յուլիս ժ. (10):

ժէ. 84ա Եւ ընդ աստուածապարգեւի... ՌՄԾԳ. (1804), յուլիս ժԵ. (15):

ժը. 84բ ՌՄԾԵ. (1806) մարտ ժԳ. Թէսկերէ – 3 Թէսկերէ վասն մուխթայի... Կեր ողջ ի սէր Յովհաննէս պատրիարքի Կոստանդնուպօլսոյ:

ժթ. 85աբ [Հաշուետումար] – Դուռուշ: Սուրբ Գէորգայ ՌՄԾԳ. (1804) մարտի Ե. ...

ի. 86ա Տապանակագիր – 1. Տապանս այս է ժրագլխի / Հաճի ճօհար անուն ասի... (8 տապանագիր):

իա. 86բ Տէֆտէրի սկիզբն է – Եւ ըստ օրհնառաք գրութեանս... ՌՄԾԳ. (1804), յուլիս Ա.:

իբ. 87ա Յորմէ սիրով... ծանեցու՛ք ի յիսկիւտար Սուրբ Խաչ եկեղեցւոյ... քահանայք... ՌՄԾԳ. (1804), յունիսի ժԱ. (11):

իգ. 87բ Նախանձաւոր օրինացն Աստուծոյ... ՌՄԾԳ. (1804), յուլիս ԻԱ. (21):

իդ. 88աբ Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Յօհաննէս արքեպիսկոպոս... յորմէ ժամանեալ հասցէ գիր

օրհնութեան եւ նամակ ազդեցական ի տիրախնամ քաղաքն Տիգրանակերտ... իւր անճառելի տեսութեանն արժանացուցէ. ամէն:

իե. 88բ Ի հրեշտակահիմն եւ գերահռչակ սրբոյ եւ հրաշալի վանուցն Տաքետու... իշխանութեան պահեալ ենք ունիմ:

իգ. 89ա եւ ընդ օրհնառաք գրութեանս յայտ իսկ... շնորհակալութեանն առաքեմք, որ եւ՛:

իէ. 89բ Յորմէ ժամանեալ հասցէ... եւ արքայութեանն արժանացուցէ:

իը. 89բ Յորմէ սիրով Սուրբ Հոգւոյն ծանիր... եւ այժմ չէ յարմար ժամանակ այդմ գործոյ ի գլուխ ելանելոյ:

իթ. 90ա Ի գերապանծ խնամարկու յաղթող տէրութիւնս Ռուսացն պանծալի սպարապետ... Յօհաննէս աղայ... եւ եթէ կամք տէրութեան ձեր:

լ. 90բ Պօղոս վարդապետէ պիր մէքթիւպ ըէճայ... Գրեցաւ օգոստոս ժԹ. (19):

լա. 90բ Հստ որոյ գիտել լիցի... Ժան Պատէստ Առլէզս անուն ոմն... Օգոստոս 20:

լբ. 90բ Մարգար աղայի: Յունիս 6 – Առ իս եղեալ գրամն... սրբոյ աշոյղ համբոյր ընծային:

լգ. 91ա եւ ընդ աստուածապարգեւ օրհնութիւն նամակիս ծանիր... եւ յամենայն սրբոց նորա եւ ի մէջ յարածամ. ամէն:

լդ. 91բ Տէր Խաչատուր Ղարայնիսար – Բարեհամբաւ եւ ազնուատոհմ մահտեսի Գրիգոր աղայ... (յաջորդում է «Հարսանիք – Հարսանեաց մարաֆ»... եւ «Այրի մանչուն մասարաֆն»):

լե. 92ա Յաննանարարուքին հարսանեացն նիշայի – Ի հանճարս զօրացեալ եւ ի խոհեմութիւնս փայլեալ... Սրբոյ Կարապետի հրաշալի աթոռոյն վերատեսուչ եւ մեծին Կեսարիոյ քաջութիւն... ՌՄԾԳ. (1804), հոկտեմբեր 28:

լզ. 92բ Անեղ իսկութեան... հրաշակերտ աթոռոյն... տեառն Թէոդորոս արժանապատիւ պատրիարգի... 1254 (1805), նոյեմբերի ԻԸ. (28):

լէ. 93ա Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մարմնառիկ տնօրէնութեան սուրբ տեղեացն... եւ Տեառնեղբօր հռչակաւոր սուրբ Աթոռոյն վերատեսուչ տեառն Թէոդորոս արժանաժառանգ պատրիարգի... Յօհաննէս պատրիարգիս մեծի Պօլսոյն:

լը. 93բ Խոհեմ ի բանս... վերատեսչի քաղաքիդ Պրոսպալի... (հետեւում է «էջմիածնի գանձանակ») 94ա, եւ «Կցորդ մուխաթայի»՝ 94բ):

լթ. 95ա-6ա Աստուածատուր վարդապետի – եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան նամակիս... չունիմ հրաման սիրելի եւ հոգեւոր հարազատ փոխնորդին:

լա. 96բ-8ա Անապատացն Լիմայ եւ Կառուցայ – Յորմէ սիրով սուրբ Հոգւոյն... եւ դուք ուրեմն մի՛ խնայէք:

իա. 98բ Յորմէ սիրով Սուրբ Հոգւոյն եւ աստուածային պատուիրանան... Գրեցաւ ՌՄԾԳ. (1805), դեկտեմբերի Թ.:

իբ. 99աբ Վասն նշխարի բարձման – Յորմէ սիրով Սուրբ Հոգւոյն եւ աստուածային օրհնութեամբ... եւ շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի:

իգ. 99բ Առ Փիլիպպոս ամիրայն – Հստ խնդրանաց Կապանու մատչնու... ուստի այսպէս կատարեցաւ (ընդամենը 3 տող):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ


85ա Մահլյան հաճի Մարտիրոսի գիր մեծ:

ՆՇՈՒՄ՝ 77բ՝ «Լոկ կանոնագրութիւնքն դժուարին ճանապարհ են յուսումն, իսկ հանդերձ օրինակօք՝ դիւրին, նմին իրի եւ օրինակաւ գիրսն յայտնի առնելի է»:

ԶԵՌԱԳՐԻ Զ.

ՌՄԺԳ. – ՌՄԺԷ. – 1164 – 1768

ԹԵՐԹ՝ 14 (թ. 101-14): ՊՐԱԿ՝ 1x14: ՆԻԻԹ՝ թուրք, լուսագծերով: ՄԵՇՈՒԹԻԻՆ՝ 25x18,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (20x14,5): ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 105ա): ՏՈՂ՝ 32:



Նմուշ 105ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցակողերը՝ զունաքափ, քերթերին աղտոտուածութեան զանազան հետքեր:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ն

101ա-14բ [Գրիգորի պատրիարքի Կ. Պօլսոյ թուրքի, Կոնդակի]

ա. 101աբ [Վասն Սուրբ Կարապետի վանուցն] – եւ յայտնի առնեմք ձեզ ամենեցունցդ... եւ վատչն փախչելի, լերո՛ւք ո՛ղջ, բաւ է:

բ. 101բ-2ա Գերայարգի... տեսանդ Յովնանու աստուածարան վարդապետի եւ այլելոյի հրաշալի վանից Սուրբ Կարապետին, որ ի Տարօն... – Փոյթն մեր միշտ թարց այլեւայլոյ քօղարկութեանց... եւ լէ՛ր ողջ, բաւականացեալ այսու՝ Գրիգոր պատրիարք եւ մեղապարտ վարդապետ Կոստանդնուպօլսոյ:

գ. 102աբ [Առ մահտեսի Սուփիաս] – Յորմէ ծանիր, մահտեսի Սուքիաս... եւ զվերջին եզրակացութիւնն մեզ ծանուցանել բաւ է:

դ. 102բ-3բ Մեծի մայրաբաղաւթին Կարնոյ առաջնորդի... տեսանդ Պաղտասարայ աստուածիմաստ վարդապետի եպիսկոպոսի – Համայն պարագայիւք մի ըստ միոջէ հասու եղաք... ՌՄԺԷ. (1768), հոկտեմբերի ժԹ. (19):

ե. 104աբ Պատուատուր իշխանիդ մայրաբաղաւթին Կարնոյ եփրիկեան մահտեսի Գրիգորիդ առաքի ողջոյն – Յայտնի իսկ է, որ եթէ իշխանք խորհրդականք... դարձուցէք. բաւ է:

զ. 105աբ [Առ Սուրբասա եւ այլ մահաւետիք] – Յորմէ ծանիք, մահտեսի Սուքիաս, մահտեսի Պետրոս եւ խօճա Թումաճան... Զի գիտասցուք զբանս մեր:

է. 105բ-6ա Նախաձանօթ բարեկամի մերոյ մահաւետի Գրիգոր պատուաւոր իշխանիդ մեծի մայրաբաղաւթին Կարնոյ... – Վասն օգտի հոգւոց եւ մարմնոց ձերոց... եւ զորպիսութիւն սիրելեացդ հարցանիմ ի բարին:

ը. 106աբ եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ եւ օրհնութեան նամակիս ծանիք, սիրելիք մեր ի Տէր... Գրեցաւ օրհնութեան եւ յորդորական նամակս ի ՌՄԺԳ. (1764) Թուին:

թ. 106բ-7ա եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ եւ օրհնութեան գրոյս ծանիք, սիրելիք մեր... եւ ամենայն սրբոց նորա եւ ի մէնջ. ամէն:

ժ. 107ա-8ա եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ, ողջունի եւ առաքելականի օրհնութեան գրոյս... եւ ողորմութիւնն Աստուծոյ ի վերայ ձեր. ամէն:

ժա. 108ա-9ա եւ ընդ աստուածապարգեւի եւ շնորհագեղուն սիրոյ եւ օրհնութեան գրոյս... եղիցի ի միջի ձերում. ամէն:

ժբ. 109աբ եւ ընդ աստուածապարգեւի եւ շնորհագեղուն սիրոյ եւ օրհնութեան նամակիս... եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսին. ամէն:

ժգ. 109բ-10ա եւ ընդ աստուածապարգեւի եւ շնորհագեղուն օրհնութեան եւ յորդորանաց գրոյս... Գրեցաւ օրհնութեան եւ պատուէրի նամակս ՌՄԺԵ. (1766) Թուին եւ մարտի ամսոյ ժ.ին (10), ի Գր.":

ժդ. 110բ-1ա եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ, ողջունի եւ օրհնութեան նամակիս... Ամենասուրբ տեսութեանն իւրոյ արժանաւորս արասցէ. եւ լէր:

ժե. 111բ-2ա եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ, ողջունի եւ օրհնութեան գրոյս... իւր օրհնեալ տեսութեանն արժանացուցէ. ամէն:


ժէ. 112բ-3բ եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան, սիրոյ եւ ողջունի գրոյս... եւ յանդիմանութեան առ ի մէնջ հետեալսն եւ այլն:

ժը. 113բ Ի տէր Գրիգոր վարդապետէ եւ պատրիարքէ Կոստանդնուպօլսոյ – Յորմէ ծանիք, լուսաւորչազական օրհնեալ ազգդ իմ... որոց վայն յաւիտեական կան ի վերայ նոցա (վերջից թերի):

ժր. 114աբ [Յաղագս շարչարանաց Քրիստոսի] – //առանց արդեանց շարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... որ արդարեւ կորուսաք// (սկիզբը եւ վերջը թերի):

ՁԵՌԱԳԻՐ Է.

ՆՈՐ ՋՈՒՂԱ 0-3. – 1851
ԳՐԻՉ Թ[աղէս] ԵԱՍ. ԲԷԿՆԱԳԱՐԵԱՆԵՑ:
ԹԵՐԹ 2 (թ. 115-6): ՊՐԱԿ 1x2: ՆԻԻԹ քուղք: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34,5x24,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (29,5x22,5): ԳԻՐ՝ շղագիր (նմուշ 116ա): ՏՈՂ՝ 39:



Նմուշ 116ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

115ա-6բ Թարգմանութիւն ի պարսից լեզուէ Մեծ Մանչուր ասացեալ դաշնագրոյ: Դաշնագիր Մէհնեմէտի, որ ի քրիստոնէայս, գրեալ ձեռամբ Ալիի: Որ էնն Աստուած բարձրեալ յանուն Աստուծոյ գթածի եւ ողորմածի – Այս բան դաշն է ծանուցեալ... որ ինչ գրեալ եղեւ յայսմ, այլ՝ այլ՝ ազն նզովեալ եղիցի յԱստուծոյ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

116բ 1851, օգոստոս 30, ի Նոր Ջուղայ, որ յԱպահան, Ամենափրկիչ վանոց: Ն. Թ[աղէս] Եպիսկոպոս Բեկնազարեանց եւ առաջնորդ ի Նոր Ջուղայոյ, որ յԱպահան:

116բ Ծանօթութիւն. օրինակ թարգմանութեանս Մեծ Մանչուր ասացեալ դաշնագրոյն մեծին Մահամէտի ընդ քրիստոնէայս, որոյ իսկականն լեալ է ի քուֆի լեզու, յորմէ ժամանակաւ յեղափոխեալ ի պարսից լեզու եւ վկայեալ յերեւելի հոգեւորականաց պարսից՝ ի գոյ նորա համեմատ բնագրին, գտանի այժմ ի գրատան Սուրբ Ամենափրկիչ վանցն Նոր Ջուղայոյ, որ յԱպահան, յորմէ թարգմանութեամբ գաղափարեալ:


ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

116բ (1853ից ուշ, շղագիր) Ծանօթութիւն: Նաեւ գտաք յայլ օրինակ, որ գրեալ էր 1853, յուլիսի 30, ի Թէհրան, եւ ի ներքոյ գրոյն եղեալ էր ստորագրութիւնն այսպէս թէ՛ «Թարգմանեաց Գալուստ Շիրմազանեանց»:

ՁԵՌԱԳԻՐ Ը.

ՈՄՄԳ.-ՈՄՄՁ. – 1805-1807

ԹԵՐԹ 36 (թ. 117-52). չգրուած 117աբ, 134բ-54բ: ՊՐԱԿ 1x36: ՆԻԻԹ՝ քուղք լուսագծերով եւ լուսադրոյնով՝ «GFA»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 24,6x17,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (20,5x14,5): ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ 118ա): ՏՈՂ՝ 29, 31-32:



Նմուշ 118ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցակողերը գունաթափ:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. 118ա-22բ [Քաղուածք ի պէտս քաղաքից] – Իմաստութիւն յելլս ճանապարհաց գովի... կամ ի հանդերձեալ ձախմէ կացցէ ի թագաւորութեանն Քրիստոսի (Առկթ, Ա. 20):

Բ. 123ա-5բ [ԺԲ. հրաշագործութիւնք Գրիգորի Նարեկացոյ] – Ի սուրբ եւ փառաւորեալ, աստուածազարդ եւ մեծապայծառ... գրեցաւ ՌՄԾԵ. (1806), յունկար Ա.:

Գ. 126ա-34ա [Թուղթ]

ա. 126ա-8ա [Առ] պատուելի եւ գովելի, քաղցրասէր եւ բարեկամ Սուրառ փառայ աֆէնտուն... ՌՄԾԵ. (1806), մայիսի Ա., ի Կարին – Մալիւմ լինի հրամանացդ տէրութեանն... այս ըստ նկարագրին, թարց սրբագրութեան է:

բ. 128բ-9ա Մահսերն Զիմիշկեղէկու – Խնամարկու եւ մեծահաւատ, բազմերախտ հայրապետին Փիլիպպոս... եւ ի յօգնութիւն վշտացելոցս:

գ. 129ա-130ա Մահսերն Ստանպօլու Դաւիթ կաթողիկոսի Անատօլու – Անյաղթելի սրբոյ Աթոռոյն էջմիածնի մորս լուսոյ ծնողի մերոյ... եւ մնացէ ի հաստատութեան յորժամ. ամէն:

դ. 130բ-2ա Մահսերն անապատաց – Յորմէ սիրով Սուրբ Հոգւոյն եւ փրկչական սուրբ ողջունի... Գրեցաւ ՌՄԾԳ. (1805), օգոստոսի Ժ. (10), ի հետ ժամակոչ մահտեսի Աբրահամու առաքեցաւ:

ե. 132աբ Վասն անապատի դրսի տանն բարձման – Յորմէ սիրով Սուրբ Հոգւոյն եւ աստուածային պատուիրանան... ՌՄԾԳ. (1805), դեկտեմբերի Թ.:

զ. 132բ-3ա Մահսերն Իզմիրու – Քաջափառագոյն իմն ճոխափայլեալ... սրբազան պատրիարքի մեծավայելուչ յարգութեամբ սրբոյ աշոյն համբոյր ընծայեմք... ՌՄԾԶ. (1807), մարտի 26:

է. 133բ էջմիածնի – Եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեանս յայտ լիցի սիրելոյդ... աստ եղիցի ձեզ եւ ննջեցելոց ձերոց. ամէն:


ը. 134ա [Յանկ միաբանից Լիմ եւ Կառոց անապատաց] – Լիմ անապատի Անանիա եպիսկոպոս... Յարութիւն Շատախցի: ՌՄԾԶ. (1807), օգոստոս Ա. Բ. անապատաց մահարի կնքողքն են:

ՁԵՌԱԳՐԻ Թ.

Էջմիւծին

ՌճԿ. – 1711

Թերթ 14 (թ. 153-66). չգրուած 153ա-5բ, 164բ-6բ: ՊՐԱԿ 1x14: Նիւթ՝ թուղթ, թ. 153-4 եւ 165-6՝ լուսագծերով եւ լուսադրոշմով «GFA», կամ թագակիր արձի: ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 24,5x18,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (20,5x17): ԳԻՐ՝ շղագիր (նմուշ 156ա): ՏՈՂ՝ 25:



Նմուշ 156

ՎԻՃԱԿ՝ բարար.

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

156ա-64ա [Թուղթ]*

* 155ա (յետագայ ձեռքով մատիտով գրուած բնորոշում) «Նամականիք առ Աղեքսանդր կաթողիկոս եւ առ Կոստանդին կաթողիկոս»:

ա. 156ա-7բ Աստուածապետականն ամենայն գլխոյ շնորհօք լցեալ եւ Հոգւոյ նորա ներընդունակ եղեալ գլուխ պատուական եւ տիեզերական կաթողիկոս եւ եպիսկոպոսապետ Հայոց մեծաց տէր Կոստանդին – Զգիր պատուական հրամանաց քոց ընկալաք մեք՝ նուստ եպիսկոպոսքս Սիւնեաց տէր Յովհաննէս եւ տէր Ստեփաննոս եւ վարդապետքս Դաւիթ եւ Եսայի... ինքեանք տայցեն պատասխանի Աստուծոյ:

բ. 158ա-62ա Թուղթ Աղեքսանդր կաթողիկոսի Հ[այոց] առ հայրապետն Հռովմայ տեառն Գլեմենտոսի, վասն անողղայ գնացից միսիոնարաց... – Ի գերապատի եւ ի գերասկզբնական պատճառէ... Գրեցաւ ի ՌճԿ. (1711) թուին, յապրիլի ԺԶ. (16), ի դուռն Սուրբ Աթոռոյն էջմիածնի:

գ. 163ա-4ա Գերապատի գլխոյն՝ սրբազան քաջ հովնապետիդ, արթակալիդ առաքելական արթոնիդ, Լխարխոսիդ Հայոց ամենիմաստ եւ քաջ հովնի պաշտօնակցիդ մեր ի Քրիստոս տէր Զաւարիաս – Նամակ ողջունիս եւ հրամանաց ընկալաք նուստ եպիսկոպոս Սիւնեաց Աւրպելի Յոհաննէս... բաժանեցեր սուրբ յաթոռոյն եւ գլխոյն:


ՆՇՈՒՄ՝ 162ա՝ թուաբանական հաշուարկ՝ 1160/551/1711:

ՁԵՌԱԳՐԻ Ժ.

Էջմիւծին

ՌՄՂԹ. – 1850

ԳՐԻՉ՝ Աբել վրդ. Մխիթարեանց: ԹԵՐԹ՝ 7 (թ. 167-73). չգրուած 172բ-3բ: ՊՐԱԿ՝ 1x7: Նիւթ՝ թուղթ, ննջարոշմով՝ 167ա, 168ա, 169ա, 170ա՝ «E, C. B. Г. Л. У. Е. Сергиевской» (առաջին երեք գորական տառեր են, որոնց վերեւում թագ կայ, մնացեալները՝ ոտաւեղն գրե են): ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 35x21: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (33,7x19,5): ԳԻՐ՝ շղագիր (նմուշ՝ 168ա): ՏՈՂ՝ 50, 53:



Նմուշ 168ա

ՎԻՃԱԿ՝ բարար. թ. 173՝ արտաքին լուսանցի հատվածը մասամբ պատռուած:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. 167ա-71բ Ղազարու վարդապետի Փարպեցոյ՝ աշակերտի Աղանայ վարդապետի, առ Վահան տէրն Մամիկոնից Մեղադրութիւն ստախօս արեղայից: Յառաջաբան թղթոյն, առաքեալ ի Համիթ քաղաքէն – Լուսաւորէ միշտ շնորհ աստուածային... | 171ա| եւ որք լսեն, աւաղեսցեն, | 171բ| զազգիս մերոյ գտառապանս:

Տէս Մատենագիրք Հայոց, Ե. դ., Բ. հատոր, Անթիլիաս, 2003, էջ 2377-94 Ղազար Փարպեցի:

Բ. 171բ-2ա Տեղեկութիւն սակա ինչ այժմեան վիճակէ Աթոռոյն, որ եւք թուական 1850 – Արդ, պատ-

մեցից փոքր ի շատէ զկարճագրութիւնս սոցա... որ ի փառս ազգիս կարգաւորեսցէ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ

171բ Աւարտեցաւ գիրքս Ղազարու վարդապետի Փարպեցոյ, ձեռամբ բազմակիր եւ անարժան Գրիգոր իրիցու, ի հարկէ սրբազան եւ քաջ վարդապետին Վարդան դիտապետի: Արդ, աղաչեմ զընթերցողսդ, յիշեսցիք ի մաքուր աղօթս ձեր եւ մեղաց թողութիւն շնորհեցէք մեղաւորիս: Եւ որ առատն է ի բարիս՝ պարգեւեսցէ ձեզ եւ մեզ զերկնից արքայութիւնն: Եւ Քրիստոսի մարգասիրին փառք յաւիտեանս. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 171բ (գրչի) Օրինակն էր գրեալ ի թուին հայոց ՌՃԻԱ. (1672), ի Բաղէշ, ի վանան Յովհաննու Կարապետի:

Նկատի ունի Մատենադարանի Հ^մ 2639 ձեռագիրը:

167ա Ծանօթութիւն. Առաջին երեսն այս ինչ ունէր. ձգնաւորէր Աղան յազգէն Արծրունեաց, բնակեալ ի յայտն Աղանայ, ի Յանբերդ:


2. 171բ (ստացողի) Ձայս բողոքոյ գիրն մերս խնդրանօք եւ վարձով գրեաց Աբէլ վարդապետ Մխիթարեանց, միաբան կաթողիկէ եկեղեցոյ Սրբոյ գահին իջմիածնի: 1850, օգոստոս 20:

ՁԵՌԱԳԻՐ ԺԱ.

ՌՄՂԷ.-ՌՄՁԱ. – 1828-1832

ԳՐԻՉ՝ Գրիգոր Շաֆարեան:

ԹԵՐԹ՝ 94 (թ. 174-267). չգրուած՝ 174բ, 191բ: ՊՐԱԿ՝ 1-10x8 (2՝ 9, 3, 8՝ 12, 4՝ 4, 5, 6՝ 10, 10՝ 11): ՆԻԻԹ՝ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ «OM. ILARIO GALAMARI» եւ բուսական ոճաւորմամբ զինանշան, որի մէջ վերի հատուածում թագակիր արծիւ, ներքեւի աջ կողմում ջահակիր ձեռք, ձախում՝ շուշան: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 25,2x13,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (23x15,5): ԳԻՐ՝ շղագիր (նմուշ՝ 176ա): ՏՈՂ՝ խառն՝ 38-40:



Նմուշ 176ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ն

175ա-267բ [Գրիգորի Շաֆարեանց, Թուղթ յամս 1828-1832]*

* 174ա՝ «Յիշատակագրութիւն նամակաց առ մեզ ծանօթս առաքեցելոց ի 1828 ամի, ի 17էն նոյեմբերի, սկսեալ մինչեւ ի լրումն ամին»:


Հարիւրից աւելի նամակ, գրուած 1828-1832 թուականներին եւ ուղղուած տարբեր մարդկանց՝ Մարտիրոս դպիր մանկածու, Պոնտոսի դէտ Գրիգոր րաբունի, Յարութիւն դպիր մանկածու, Պոլսեցի Պօղոս րաբունի, Յօհաննէս աղայ, Սրբոյ Կարապետի դէտ Պետրոս րաբունապետ, Գէորգ աղայ, Կեսարացի Գապարեան Բարսեղ դպիր, տէր Գաւթ րաբունի, Բարթոլոմէոս րաբունի, ուսումնասէր տիրացու Յակօբ, տէր Կարապետ

բարեհամբոյր րաբունի, տիրացու Յարութիւն մանկածու, Յովսէփ պանծալի րաբունի, Պալազիտցի Մկրտիչ աղայ, Քաղէոս վարդապետ, աղայ Մատթէոս, համեստասուն եւ պարկեշտափայլ Քաղէոհի, Սահակ դպիր, Համբարձում աղայ, Մնացական դպիր, Քաղէոս րաբունի, Յովակիմ աղա: Նամակները հիմնականում ողջոյնի, կարօտի, սրտնեղութեան, գովերգման, շնորհակալական, խնդրանք պարունակող, նաեւ յորդորական (չձուլանալ եւ հետեւել ուսմանը) բովանդակութեամբ են, ազգային գործունէութեան, բարեգործութեան, եկեղեցական պաշտօնի ձեռնարկութեան պատասխան առնելու, տեղեկութիւններ բարեբաստիկ կենցաղավարութեան մասին, անձնական խնդիրների վերաբերեալ խնդրանքներ ազգասէր աղաներին, տարբեր քաղաքներում եւ նահանգներում ազգի աղելսարշ կեղեքումների, վնասների եւ խոշտանգումների, բարեկամներից հետո գտնուելու եւ այլնի մասին:

ՁԵՌԱԳԻՐ ԺԲ.

ԺԸ. դար

ԳՐԻՉ՝ Յակոբ: ԹԵՐԹ՝ 32 (թ. 268-299): ՊՐԱԿ՝ Ա-Գx12 (Գ 8): ՆԻԻԹ՝ թուղթ, լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 26x19: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն (20x13): ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 271ա): ՏՈՂ՝ 33:



Նմուշ 271ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցակողերը՝ գունաթափ:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ն

268ա-99բ Բանն գովեստի պատմագրաբար յաղագս ծննդեան, սննդեան, քաղաքավարութեան եւ վերափոխման ամենաբարձրի եւ միշտ կուսին Մարիամու Աստուածածնին, ասացեալ ի նորին ծառայէ եւ մաղթանաց հայցողէ, յոգնամեղ մենատէր Գրիգորէ [Յեսուացոյ Սկեռացոյ]

– 268ա-70բ [Նախաբան] – Ըստ բարուցն բուսոյ բնաւորեալ... որ ի նորայն փառատրութեանն է:

ա. 270բ-2բ [Յաղագս Մարիամու] – Եւ արդ, եկեսցուք ուստի սկսանէլն է արժան... եւ լցեալ աւուրբք ըստ նախագրութեան տեսանողացն:

բ. 272բ-6բ Վասն անտեսաց կուսին Մարիամու – Վասն որոյ միում ի պետացազգեալ վիհիցն դասուց... որ ասէ՝ Դու Բեթլեհէմ երկ՝:

գ. 276բ-7ա Ծնունդն Քրիստոսի – Եւ ծնանի յայրին... եւ ինքեամբ կատարեաց:

դ. 277աբ Մկրտութիւնն Քրիստոսի – Իսկ ի լրումն երեսնամիւ ամաց... զամենայն աւուրս կենաց նորա:

ե. 277բ Կատարումն չարչարանացն Քրիստոսի – Իսկ զոր ի ժամ շարշարանաց եւ մահու միաձմին... մինչեւ ցառաւօտ միաշափաթին կար տարեալ. ամէն:

զ. 278աբ Յարութիւն Տեառն – Եւ ընդ ծագել լուսոյն... եւ տեսուչ բանաւոր հօտին իւր:

է. 278բ-9բ Վասն համբարձման Տեառն – Եւ վերացաւ յերկինս... որ բովանդակի ընդ ամենայն վաթսուն ամբ բոլոր ժամանակ սրբուհոյն:

ը. 279բ-99բ Վերափոխումն կուսին – Իսկ ի ընուկ երկրոտասան ամաց... փառք, պատիւ եւ երկրպագութիւն ամենայն եղականաց, յիմանալեացն եւ զգալեացս, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՅԱԽԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԸ. դ. վերջ

299բ Որ քան արհամարհելագոյն է, որ իշխէ, այնքան առաւել խոնարհութիւն հնազանդողին հաճոյ է Աստուծոյ: Հոսոմացուց 6, 13: Անդամքն շար գործ մարդոյն են զկնք եւ սուր անօրէնութեան... (եւ խրատական այլ քաղուածքներ):


ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

299բ Ձմեճ վարդապետն Գրիգոր միայնացեալ, որ է երգօղ սրբոյ ճառիս, յիշեալիք ի սուրբ յաղօթս ձեր, ո՛վ տօնօղք աստուածասէրք, ընդ նմին եւ զողորմելի գրիչս Յակոբ, որ յոյս առեալ դարձի զգէմս ի յերկիր եղեալ պաղատիմ մօրն Յիսուսի՝ բարեխօսել եւ մաղթել զքաւութիւն տօնողացս եւ ամենայն միահաղոյն հաւատացելոց զփրկութիւն եւ զմեճ զողորմութիւն. ամէն:

ՁԵՌԱԳԻՐ ԺԳ.

ԺԹ. դար

Թերթ՝ 4 (թ. 300-303): ՊՐԱԿ՝ 1x4: ՆԻԻԹ՝ թուրք: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 26x19: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (23,5x14,5): ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 301ա): ՏՈՂ՝ 31:



Նմուշ 301ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցակողեր զունարափ:


Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

300ա-303բ Վ[երապատուեալ] (գրած, ջնջած) վարդապետաց տեառն տեառն Ձ. Հ. Մկրտիչ վարդապետի եւ Հ. Իգնատիոս վարդապետի ի Տէր խնդալ – Ի Ստամպոլ, ի 25 փետրուարի, ի 1816: Զգիր վեր/// (գրած, ջնջած) ձերոյ գրեալ ի Հոսոմայ ի 6 դեկտեմբերի 1815, ընկալայ ի 16 փետրուարի ի 1816... որոյ հայրագութ տեսչութեանն կամ յամենայնի հնազանդ ծառայ հայր Միքայէլ Չամչեան:

ՁԵՌԱԳԻՐ ԺԴ.

ԺԹ. դար

Թերթ՝ 10 (թ. 304-13). չգրուած՝ 313աբ: ՊՐԱԿ՝ 1x10: ՆԻԻԹ՝ թուրք, ննշադրոյմով՝ թ. 304-6, 310-12՝ զարդարուած շրջանակ, ներսում «ФАБРИКИ З АРИСТАРХОВА»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 26x19,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (19,5x16,2): ԳԻՐ՝ շղագիր (նմուշ՝ 305ա): ՏՈՂ՝ 27:



Նմուշ 305ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

304ա-13բ [Սարգսի Ջալալեան] Աղուանմ

ա. 304ա-8ա [Աղուանմ] – Այս աշխարհ ընկալաւ զանուն իւր... եւ առիթ բազմաց աւերակաց, մանաւանդ աշխարհին Հայոց եւ Վրաց:

բ. 308բ-12բ Ալանաց դուռն կամ ճորա դուռն, ըստ պարսից՝ Գարբանդ – է հռչակաւոր եւ մեծաշէն պարիսպ կամ բերդ... որք ընդ օդս ճախրեալ փոքր ինչ երեւին, եւ ապա ընդ օդօվ ծածկեալ անհետանան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

304ա (ԺԹ. դ., շղագիր, մատիտով) Համառօտ պատմութիւն եւ աշխարհագրութիւն այս Աղուանից է գրեալ արժանապատիւ Սարգսի վարդապետի Ջալալեանց, զոր ընծայեաց մեզ 18///:


եզրահատման պատճառով թուականի տասնաւորը եւ միաւորը կտրուած են:

ՁԵՌԱԳԻՐ ԺԵ.


Կ. ՊՈՒԼԻՍ

ՌՅԵ. – 1856

ԳՐԻՉ՝ Յովհաննէս Թագաւորեան*: ՄՍՍՅՈՂ՝ Գաթնու աղայ: ԹԵՐԹ՝ 69 (թ. 314-82). չգրուած՝ 314բ-5բ, 318ա-9բ, 375բ, 377բ-378ա, 381ա-2բ: ՊՐԱԿ՝ Ա-Չx12 (ե՛ 8, ջ՛ 13): ՆԻԻԹ՝ թուրք: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 25x19: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (22x16,5): ԳԻՐ՝ նոսրգիր (320ա-75ա, նմուշ՝ 322ա), շղագիր (316ա-7բ, 376ա-80բ, նմուշ՝ 316ա): ՏՈՂ՝ 28 (316ա-7բ, 320ա-75ա), 29 (376ա-80բ):



Նմուշ 316ա



Նմուշ 322ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թ. 360՝ հիմքից մասամբ պոկուած, թ. 376-80՝ թանափ բարձր թրայնութեան հետեւանով գրադաշտը մասամբ զունափոխուած:

* Տեղ, թուական եւ գրիչ հարցերի պատասխանները վերաբերում են 320ա-67ա մասին:

նժք. 353աբ Քարոզ այլակերպությունն Քրիստոսի – Առնու Յիսուս ընդ իւր զՊետրոս... 2. զԱմաղեկ վանեաց, դարձեալ սինն ամբոյն: Գաւազ/// (Թափուած, Թերի):

2աբ «Յանկ»ը եւ քարոզները սկզբում գրուած համարները յետագայ գրչութեամբ են, գլխահամարները երբեմն չեն համընկնում, օրինակ՝ «Յանկ»ի վերջինը «ՃժԼ.» համարն է, այնինչ ունենք 119 քարոզ, «ԿԹ.»ին յաջորդում է «ՀԱ.» (-1), «ՀԹ.»ից եւ «ՃժԼ.»ից յետոյ չեն համարակալուած մէկական քարոզ (+2):

Գ. ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆԻՆՔ

1. 1ա [Դեղագիրբ]. ԺԼ. դ.

ա. 1ա [Դեղ լուծելոյ] – Թօրպատ սաղմոնիայ Գ.Գ. մսխալ... Կերակրի վրա կամիս ուտել Բ. մաղալ:

բ. 1ա [Դեղ փամու] – Գ. մսխալ անծարուտ... Քամու դեղ է:

գ. 1ա (ժէ. դ.ի գրչութեամբ) [Դեղ լուծելոյ] – Գ. մսխալ սինամաքի... Այս լուծման դեղ է:

2. Կազմաստառ Բ. (ժԹ. դ., անարուեստ շղագիր) Լուսաւորչին եմք հետեւող,

Սուրբ Հօրն մեր՝ մեծ եւ յաղթող,
աշակերտաց քոց հետեւող,
վեհ փեսայիդ եմք ընկերօղ,
միշտ սիրակից հարսն եմք հոգով:
(վերջին երեք տողի վրայ գիծ է քաշած)
Փեսայ սիրոյդ եմք ընկերօղ,
սուրբ սիրակից հարսն եմք հոգով,
փութեամբ լրսել ըզձայն քո միշտ
եւ հոլովիմք վրշտէ առ վիշտ,
զի դու իսկ ես հանգիստ եւ խիզտ,
(վերջին երկու տողի վրայ գիծ քաշած)
զմարմինըս մեր շար եւ ըռիշտ,
ոչ ների մեզ տոկալ ընդ վիշտ:
Ջքեզ գիտելով հանգիստ եւ խիշտ
տարաբերիմ միշտ անդադար
ընթանալով տարէ ի տար
ոչ գտանեմ (արբ. ունելով) հանգիստ եւ ճար (արբ.՝
զուրեք դադար)

համակ գոյիւս կամ ահուզար
աւա՛ղ գոյիս տատանական,
վա՛յ, ո՛հ աղետիս իմոյ դիպման,
վա՛յ կարդացէք եղերական
գերեալ հոգւոյս իմ սաստկաձայն
արքայ Քրիստոս, Տէր համայնից,
փրկիչ եւ Տէր եւ արարիչ,
հանցես զանձն իմ յայս արկածից
վասն արեան քում սուրբ եւ ամբիծ:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

91ա Աղաչեսցուք զՔրիստոս, զի օգնեսցէ անկելոյս:

113ա Յիշեա՛ զմեռեալս հոգով սուտ գրիչ:

125ա Յօրինակս չկա:

156ա Ո՛հ, յիշեա՛ զմեղուցեալս (նման՝ 281բ):

159ա Քրիստո՛ս Աստուած, քո սուրբ ծնողի բերա-
խօսութեամբդ եւ ամենայն սրբոց ողորմեա՛ ստացողի
սուրբ գրոցս Աբրահամ վարդապետի եւ ծնողաց
իւրոց, եւ ինձ՝ մեղուցեալ սուտ գրչիս Աստմի, եւ իմ՛:

171ա Լսել տացէ Քրիստոս Աստուած զայս քաղցր
ձայնս Աբրահամ վարդապետին՝ ստացողի սուրբ
գրոցն, եւ ինձ՝ մեղապարտ ծրողիս:

181ա 2/// (քերած) յիշեցէ՛ք ի Յիսուս Քրիստոս:

187բ Որով զմեզ փրկեսցէ Քրիստոս յամենեցունց:

190բ Յիշեա՛ զխոցեալս ի սատանայէ:

202բ Որով փրկեսցէ զմեզ Քրիստոս:

219ա Յիշեա՛ զգոգեցեալ հոգիս:

234բ Որով զմեզ փրկեսցէ Քրիստոս ի շար տեսու-
թենէն սատանայի եւ արժանի արասցէ տեսանել
զՔրիստոս նախ զստացող գրոցս զԱբրահամ վար-
դապետն եւ զծնողս իւր. ամէն:

276բ Եւ երջանիկ եւ սուրբ վարդապետ զմեղուցեալ
եւ զբիւր քանքարոյ պարտականս յիշեա՛յ զԱստմ
զծօղ, եւ Աստուած զձեզ յիշէ:

292ա Աւա՛ղ, կուռնս կու ցաւի:

308բ Աւա՛ղ, զինչ որ գրեցի, ամէն շարն յիս է:

340բ Զմեղուցեալ Յովհաննէս աղաչեմ յիշել, եւ
զեղկելիս Աստմ:

351բ Կատարեցաւ Գիրք դժոխոցն ձեռամբ մեղա-
պարտ գրչի՛ Աստմի, յիշեցէ՛ք յաղօթս ձեր եւ զՈհաննէս,
որ բազումս աշխատեցաւ ի տուն տալն էս ցրտովս:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԿԱԶՄՈՂԻ

Տէս Կազմ, Ա. փեղկ:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

Պհպ. Բա (1736 թ., անարուեստ նոտրգիր) եւ առայ
Սրբոյ Նախայվկային Արիստակէս իրբ վարդապետ, որ
սկզիբն արի սուրբ գիրքս դուրս ձգելոյ: Թվին ՌՃՁԵ.
(1736) դեկտեմբերի ամսոյ ժ. եւ Գ. (14):


ԳՐՉԱՓՈՂՁ՝ պհպ. Բա (անարուեստ նոտրգիր)
«Քրիստոսի ճառագայթ փառաց էին, որ ըզբնութիւնս
մարդկայ, ւ, այ, Յօվ...»: «Այսօր անճառ լուսոյն ծա-
գումն ի փրկութեան մեր կատարումն...»: 352բ (ժէ. դ.,
անարուեստ բոլորգիր) «Ես՝ տէր Յովանէս»:

ՆՇՈՒՄ՝ Կազմի մէջքին փակցուած Թերթիկին՝ «Քա-
րոզգիրք, 5», պհպ. Բք՝ ստորագրութիւն՝ «/// արեան
(անվերծանելի), Animus», 1ա՝ «317/2625, ժէ. դ.,
Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2626

Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Թե՛րթ՛ 90 (գրչի էջակալում՝ 1-172, որ է՛ 1ա-86բ). չգրում՛ 1աբ, 66բ, 87ա-90բ: ՊՐԱԿ՝ Ա-Թx10: ՆԻԻԹ՝ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ «NICOLO POLERIEFIGL»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 24,6x19,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (18,3x13,8): ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 32ա): ՏՈՂ՝ 31: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակազոյն կաշի, միջուկը ստուարաթուղթ. աստար ծաղկաթուղթ. լուսանցակողերը՝ դեղիմ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ + ԳԻ, սպիտակ չգրում թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ «GFA», «AL MASSO», եւ վերետում աղեղնաձև, ներբետում սուր անկիւնով վահան, մէջը կիսաղէվ-կիսալուսին եւ երկգիծ բոլորակ, որի մէջ՝ «LV»:



Նմուշ 32ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի եզրերը մաշուած, մէջքի ստորին մասի կաշին թափուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

2ա-86բ Աստուածաբանութիւն

I. 4ա-66ա [Հատոր առաջին]

– 2ա-3բ Յանկ Առաջին հատորոյ աստուածաբանութեան – Յառաջաբան հանրական. Ներածութիւն աստուածաբանութեան. Ճառ Ա. Յաղագս աստուածաբանութեան ընդհանրապէս... Տեղի ութերորդ, իններորդ, տասներորդ, այս են երեք արտաքին տեղիք... Գլուխ Գ. Յաղագս պիտանութեան եւ հեղինակութեան պատմութեան յԱստուածաբանութեան, ուր եւ յաղագս կրիտիկաց լինին բանք:

ա. 4ա [Ճառ Ա. Յաղագս աստուածաբանութեան]. Եզրակացութիւն է. ԽՆ. – Աստուածաբանութիւնն է նախապատիւ, քան գամենայն գիտութիւնս... Ի խնդիր յառաջաբան:

բ. 4ա-9բ [Տեղի առաջին, որ է Սուրբ գիրք] – Գրիգոր Մագիստրոս ի Ա. Թուղթ առ Իպրահիմ... աւելի քան զվաւերականութիւն հին Վուկաթային լատինացւոց յարեւմուտս:

գ. 10ա-22բ Տեղի երկրորդ, որ է ասանդութիւն – Որչափ կարեւոր է աստուածաբանի հաստատել զաստուածային ասանդութիւն... մեզ շատ լիցին ընդհանրապէս ասացեալքս:

դ. 23ա-45ա Տեղի երրորդ, որ է եկեղեցի: Գլուխ Գ. Յաղագս անդամոց եկեղեցոյ... – Սուրբն Օգոստինոս... զոր ձգեցին, անշուշտ, կորեան գլախտենական կորուստն:

– 42բ Ի մերուժս թղթահամարէ 54, ուր սկսանի «Ի խօսել աստուածաբանից (լատին) զհերետիկոսաց կամ զհերձուածողաց» եւ այլն, մինչեւ ցայս վայր է յընդարձակ բանից հեղինակին յուխտն եւ հինգ երեսս թղթոց բովանդակելոց այսչափ եւեթ հաւաքածոյք անանուն ժողովովի ուրուք: Որոյ վերնագիր է յերես ՈԹԲ. Գլուխ

ԺԹ. դար

Դ. Յաղագս նշանաց եկեղեցոյ եւ յետ խօսելոյ զորից նշանաց եկեղեցոյ, այսինքն՝ միութեան, սրբութեան, ընդհանրականութեան եւ առաքելականութեան: Յարէ՛ յեր[ես] ՈԿԵ. «Յօդուած Ե. Թէ որո՞ւմ միաբանութեան քրիստոնէից անկ իցեն շորեքին նշանք ճշմարիտ եկեղեցոյ», զոր բերեալ աւարտէ մինեւ յերես ՉԾ. |43ա| յառաջ բերեալ Իկանոսէ գիրք Ե. գլուխ Ե., ԽՆ. «Դատաստանն Աստուծոյ յենու միշտ ի ճշմարտութիւն, ոչ խաբէ եւ ոչ խաբի, իսկ դատաստանն եկեղեցոյ երբեմն զհետ երթայ կարծեաց, որում ստէպ դիպի խաբել եւ խաբիլ: Սմին իրի լինի երբեմն, զի որ կապեալն է առ յԱստուծոյ, արձակեալ է առաջի եկեղեցոյ, եւ որ ազատն է առ յԱստուծոյ, ընդ եկեղեցական դատակնքով է փակեալ»:

Ե. 45բ-9ա Տեղի չորրորդ, որ է ժողով: Գլուխ Բ. Պատմական համառօտութիւն ընդհանուր ժողովոց մի առ մի – Գիտելի է, զի եւ ի բուն իսկ տիեզերական ժողովս... ժողովոց արեւելեաց եւ արեւմտեաց՝ իբր յանսխալ կանոնաց հաւատոյ:

գ. 49ա-65բ Տեղի հինգերորդ, որ է գահն Հռովմայ, կամ հեղինակութիւն պապին: Գլուխ Ա. Յաղագս պէսպէս գամագանութեանց հեղինակութեան գահին Հռովմայ կամ պապին – Խոսքով ի Մեկնութեան ժամագիրք 362... եւ ի հպատակութիւն սրբոյ գահին ըստ ամենայնի եւ յամենայնի, աւելի քան զոր կարծելին էր:

է. 65բ Տեղի վեցերորդ, որ է վկայութիւն հարց սրբոց: Յօդուած Գ. Առաժ եւ կանոն վասն հեղինակութեան հարց – Կան ոմանք ի հարց ի միջական կարգի... եւ արդեամբ ուսուցիչ ամենայն ուղղութեան:

ը. 66ա Տեղի եօթներորդ, որ է հեղինակութիւն աստուածաբանից: Յօդուած Ա. Թէ ո՞յք իցեն, որք աստուածաբան կոչին, եւ զի՞նչ զօրութիւն ունիցի վկայութիւն նոցա – Այնք յաստուածաբանից եւ ի վարդապետաց... եւ կամ արդեացս տգէտ:

II. 1. 67ա-82ա [Հատոր երկրորդ]

– 67աբ Յանկ երկրորդ հատորոյ – Ա. Աստուածաբանութիւն տեսական: Յաղագս միոյն Աստուծոյ եւ ստորոգելեաց նորա. Նախերգանք... Գլուխ Գ. Խնդիր վասն առանձնական դատաստանի եւ նշանակութեան բարոս կայանք:

1. ա. 68ա-72ա Ճառ երկրորդ. Յաղագս ստորոգելեացն Աստուծոյ – Գլուխ Զ. Յաղագս անտեսանելիութեանն Աստուծոյ եւ տեսանելիութեան նորա: Յօդուած Գ. Արդե՞օք հնար իցէ այնպէս տեսանել զԱստուած գերբնապէս... – Ոսկեբերան ի ճառ Գ. ընդգէմ անոմեանց...

բ. 72ա-5բ ձառ համառոտ: Նախագիտելիք: Գրույս Ա. Խնդիր վասն հատուցման Հոգևոց սրբոց ընդդէմ հագարամեայց եւ կայանադրաց – Զնոյն կարծիս (այսինքն՝ կարծիք յապաղման վարձուց)... Վանական ի գիրս Հարց[մանց]:

գ. 76ա Գրույս Բ. Խնդիր վասն վիճակի դժոխոց նախ քան զօրն յետին – Լուսաւորիչ Յաճախ. ձառ Գ. ... Յակոբ Նալեան, ի Նարեկի, Բան ժՁ. 121 եւ ԼԳ. 281:

դ. 76բ-80ա Գրույս Գ. Խնդիր վասն քաւարանի – Ըստ անուան ձայնս քաւարան... եւ մտացածին կարծիք: Տաթևացիին, ի Գիրս հարցմանց, 388, 401 եւ այլն:

ե. 80աբ Գրույս Դ. Խնդիր վասն առանձնական դատաստանի եւ նշանակութիւն բառիս կայանք – Ի Վարս հարանց գլուխ Դ. ... զորոց է բան կամբրոնացւոյն:

2. 81ա-2ա [Երկրորդ մասն երկրորդ հատորոյ]

– 81ա-2ա Յանկ երկրորդ մասին երկրորդ հատորոյ – ձառ չորրորդ. Յաղագս գիտութեան Աստուծոյ... ձառ եօթներորդ... Գրույս Դ. ... Յօդուած Դ. Վասն վիճակի, անկեալ բնութեան մարդոյն, թէ զի՞նչ էր մեղքն նախաստեղծից, եւ զինչ պատիւք զկնի եկին:

3. 82ա-3բ [Հատոր երրորդ]

– 82ա-2բ Յանկ երրորդ հատորոյ – Աստուածաբանութիւն տեսական... ձառ Դ. ... Գրույս Ե. Մասնաւոր խնդիրք, որք հային յելուծն Հոգւոյն Սրբոյ եւ յՈրդւոյ:

ա. 83աբ Վասն ձայնիս պատեառ յաստուածային ելմունս – Մեծն Բարսեղ ընդդէմ Ենոմեանց... Սարգիս ի Մեկնութիւն, Ա., Պետր. Բ.:

4. 84աբ Յանկ չորրորդ հատորին – Նախերգանք. Յաղագս խորհրդոյ մարդեղութեան... Գրույս է. Յաղագս մշտնջենաւորութեան մարդեղութեան եւ յաւէտ վասն անբաժանելի մնալոյ միաւորութեան, նաեւ յետօրեայ մահուանն Քրիստոսի:

ա. 85ա-6բ [Վկայութիւնք] – Կիրեղ. Յաղագս ուղիղ հաւատոյ... Երզնկացի, Տաղ Յաղագս երկնի:

Կաթողիկ հայ հեղինակի աշխատութեան համառոտուած տարբերակ է: Հատորներն ունեն «տեղի»ներ, «ձառ»եր, որոնք իբրեւ ենթաբաժին երբեմն ունեն «Գրույս»ներ, վերջիններս էլ «Յօդուած»ներ: «Յանկ»երում նշուած ոչ բոլոր նիւթերն են արտացոլուած բնագրում:


ՆՇՈՒՄ՝ Բ. փեղկին՝ «Մարապետ Մարդավարովա Քաղաքավուծ (՝)», կազմի մէջքին փակցուած թերթիկին «3, Աստուածաբանութիւն», Պհպ. Ա.՝ «350/2626, ժԺ., Մ[ետրոպ] եպ[իսկոպոս]», «Աստուածաբանութիւն անյայտ հեղինակի, գրեալ ի թղթի՝ շղղագիր գրչութեամբ: Զունի գլխատակարան»:

2627

Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Շ Ո Ւ Ն Չ

ԿԻԼԻԿԻԱ (ՍԻՄ)

ԳՐԻՉ՝ Յակոբ (1բ-179բ), Սարգիս ԲԲ. (180բ-541ա): Ծաղկող՝ Սարգիս երէց: ԿԱՉՄՈՂ՝ Յովանէս սրկ.: ՍՏԱՅՈՂ՝ Յակոբ կթղ.: ԹԵՐԹ՝ 542+3 (կրկն.՝ ք. 83, 261, 386). չգրուած՝ 180ա, 226բ, 542բ: ՊՐԱԿ՝ Ա-ԽԵԼ՝ 12 (Ա, ԻՉ՝ 11, ԺԵ, ԺԶ՝ 10, ԺԷ՝ 7, ԻԵ՝ 8, ԻԸ՝ 14, Լ, ԼԷ՝ 9): ՆԻԻԹ՝ մագաղաք: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 23.5x16.5: ԳՐՈՒԹԻԻՆ երկսիւն (19x12,3): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 268ա): ՏՈՂ՝ 52: ԿԱՉՄ՝ դրոշմագարոյ շագանակագոյն կաշի 3 կապշով, ամէն փեղկին հնգական կոտող, միջուկը տախտակ. աստաղը կարմիր մետախ. լուսանցակողերը՝ դեղին: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲԳ+ԳԵ, չգրուած մագաղաք:



Նմուշ 268ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՆ – Նկարք բնագրի մէջ. Սարգիս երէց ծաղկող՝ 422բ, Յակոբ կթղ. ստացող («Տէր Յակոբ կաթողիկոս») 422բ, Սուրբ Երրորդութիւն՝ 2բ, Մեղսագործութիւն (Նա եւ Աղամ՝) 2բ, Անարոն եւ Մովսէս՝ 2բ, Սողոմոն՝ 285բ, Նսայի՝ 321բ, ննջումն Յովհաննոս՝ 541ա: Լանց-ային. Դաւիթ՝ 140բ, 260բ, Մարգարէ ոմն՝ 168բ, Նսքե՝ 210բ, Յուդիթ՝ 215ա, Տովբիթ՝ 221բ, Յոբ՝ 310բ, Ովսէ՝ 343բ, Ամովս՝ 346բ, Միքիայ՝ 348բ, Յովել՝ 350բ, Աբդիոն՝ 351բ, Յովնան՝ 352ա, Ամբակում՝ 353բ, Անգէոս՝ 355բ, Զաւարիայ Յ56բ, Նեմիս՝ 363ա, Դանիէլ՝ 390ա, Տեգլիէլ՝ 399բ, Ծնունդ՝ 423ա, Աւետումն Յովսէփայ՝ 423ա, թգենի՝ 431ա, 441ա, Պօղոս՝ 499բ, Յակոբ՝ 486բ, Պետրոս՝ 488ա, Յովհան՝ 491ա: Մատթէոս (Սուրբ Մարթոս Աւետարան[իչ])՝ 422բ, Մարկոս՝ 436ա, Լուկաս՝ 445բ, Յովհաննէս՝ 460ա: ԽՈՐԱՆ՝ 420բ-421ա: Կ ի ս ա խ ո ռ ա ն ՝ 3ա (խորանի վրայ՝ Սուրբ Հոգի), 115բ,

ԶԶԷ՝ – 1338՝

260բ, 285բ, 390ա, 423ա, 436ա, 445բ, 460ա, 500ա: ձ ա կ ա - տ ա զ ա ռ դ՝ 25ա, 44ա, 57բ, 75ա, 90ա, 101բ, 112ա, 129ա, 140բ, 154բ, 168բ, 180բ, 194ա, 201ա, 205ա, 215ա, 221բ, 227ա, 242ա, 253բ, 259ա, 262ա, 265ա, 268ա, 271ա, 274բ, 277բ, 280բ, 288բ, 297ա, 310բ, 322ա, 343բ, 346բ, 348բ, 350բ, 351բ, 352ա, 353ա, 353բ, 354բ, 355բ, 356բ, 360ա, 362ա, 363ա, 399բ, 470բ, 473ա, 486ա, 486բ, 494ա, 505բ, 510բ, 514ա, 516ա, 518ա, 519բ, 521ա, 522ա, 523բ, 528ա, 529բ, 530բ, 531բ, 532ա, 534ա, 540ա: Լ ու ս ա ն ց ա զ ա ռ դ՝ բուսական, թոյնային, յուշկապարիկ, ձիւթեմի, ծառ, խաչ: Զ ա ռ դ ա զ ի ռ՝ կենդանագիր, հանգուցագիր, թոյնագիր, մարդադէմ (473ա): Գ ո յ ն ե ռ՝ կարմիր, ոսկի, կապոյտ, սրճագոյն, կանաչ, սպիտակ, դեղին, սև, շագանակագոյն:

Տէս Աստղիկ Գերգեան, Հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն, IX-XIX, Կահիրէ, 1998, էջ 657-8:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը մաշուած, դոնակն ու հին կապիչներն ընկած, մուգ վարդագոյն առկայ կապիչների գործուածքային մասերը նոր՝ դրուած 2007 թ., մէջքի ստորին մասի կաշին թափուած, ք. 539-42, պհպ. Դ-Ե՝ գեցի անգէր, ձեռագիրը խոնավութիւն տեսած, հիմքերի մօտ կեղտոտուած, քերթերին աղտոտուածութեան հետքեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

- Ա. 1. Ծնունդը – Նխ. 1բ: Գլ. 1բ-2բ: Գիրք Յա-23ա:
- 2. Ելք – Նխ. 23: Գլ. 23ա-5ա: Գիրք 25ա-42բ:
- 3. Ղեկավարան – Նխ. 42բ: Գլ. 42բ-4ա: Գիրք 44ա-56ա:
- 4. Թիւք – Նխ. 56աբ: Գլ. 56բ-7ա: Գիրք 57բ-74ա:

- 5. Բ. Օրէնք – Նյւ. 74ա: Գլ. 74ա-5ա: Գիրք 75ա-89ա:
- 6. Յետու – Նյւ. 89բ: Գլ. 89բ-90ա: Գիրք 90ա-101ա:
- 7. Դատատրք – Նյւ. 101ա: Գլ. 101աբ: Գիրք 101բ-12ա:
- 8. Հոսոյք – Նյւ. 112ա: Գիրք 112ա-3բ:
- 9. Թագ. Ա. – Յոջբ. 113բ-4ա: Նյւ. 114բ: Գլ. 114բ-5ա: Գիրք 115բ-28ա:
- 10. Թագ. Բ. – Գլ. 128բ-9ա: Գիրք 129ա-39բ:
- 11. Թագ. Գ. – Գլ. 139բ-40բ: Գիրք 140բ-53բ:
- 12. Թագ. Դ. – Գլ. 153բ-4բ: Գիրք 154բ-67բ:
- 13. Մնաց. Ա. – Նյւ. 167բ-8ա: Գլ. 168աբ: Գիրք 168ա-79բ:
- 14. Մնաց. Բ. – Գիրք 180բ-93բ:
- 15. Եգր Ա. – Նյւ. 193բ: Գիրք 194ա-200բ:
- 16. Եգր Բ. – Գիրք 201ա-4բ:
- 17. Նեւեմի – Նյւ. 204բ-5ա: Գիրք 205ա-10ա:
- 18. Եսթեր – Նյւ. 210բ: Գիրք 210բ-5ա:
- 19. Յովթիթ – Նյւ. 215ա: Գիրք 215ա-21բ:
- 20. Տովթիթ – Նյւ. 221բ: Գիրք 221բ-25բ:
- 21. Մակար. Ա. – Նյւ. 225բ-6ա: Գլ. 226ա (Միայն խորագիրը): Գիրք 227ա-41բ:
- 22. Մակար. Բ. – Գիրք 242ա-53բ:
- 23. Մակար. Գ. – Գլ. 253բ: Նյւ. 253բ: Գիրք 253բ-9ա:
- 24. Սաղմոս – Նյւ. («Զամենայն», Եպիփանոս) 259ա-60ա: Գիրք 260բ-84ա (ունի «Փոքր էի»՝ 284ա):
- 25. Առակք – Նյւ. 285ա: Գլ. 285աբ: Գիրք 285բ-96ա:
- 26. Ժողովող – Նյւ. 296ա: Գլ. 296ա-7ա: Գիրք 297ա-300բ:
- 27. Երգ երգոց – Նյւ. 300բ: Գիրք 300բ-2բ (ունի «Գիտացք»):
- 28. Իմաստութիւն – Նյւ. 302բ: Գլ. 302բ-3ա: Գիրք 303ա-9ա:
- 29. Յոբ – Նյւ. 310ա: Նյւ. (Աղիկառնացի) 310աբ: Գիրք 310բ-21ա:
- 30. Եսայի – Նյւ. 321ա: Գլ. 321աբ: Մրգ. 322ա-42բ:
- 31. Ովսէլ – Նյւ. 343ա: Գլ. 343աբ: Մրգ. 343բ-6ա:
- 32. Ամովս – Գլ. 346աբ: Մրգ. 346բ-8բ:
- 33. Միքիէ – Գլ. 348բ: Մրգ. 348բ-50բ:
- 34. Յովէլ – Գլ. 350բ: Մրգ. 350բ-1բ:
- 35. Աբդիու – Գլ. 351բ: Մրգ. 351բ-2ա:
- 36. Յովնան – Գլ. 352ա: Մրգ. 352աբ:
- 37. Նաուս – Գլ. 353ա: Մրգ. 353աբ:
- 38. Ամբակում – Գլ. 353բ: Մրգ. 353բ-4բ:
- 39. Սովոնիա – Գլ. 354բ: Մրգ. 354բ-5բ:
- 40. Անգէոս – Գլ. 355բ: Մրգ. 355բ-6ա:
- 41. Զաւարիա – Գլ. 356աբ: Մրգ. 356բ-9բ:
- 42. Մաղաբիա – Գլ. 360ա: Մրգ. 360ա-1ա:
– Կատարումն Աստուծով երկոտասան մարգա-
րէիցս եւ ննջումն ԲԺ.ան մարգարէիցս – Մահ Ովսէլի

- 361ա: Մահ Ամովսայ 361ա: Մահ Միքիայ 361ա: Մահ Յովէլայ 361ա: Մահ Աբդիու 361ա: Մահ Յովնանու 361ա: Մահ Նաուսայ 361ա: Մահ Ամբակումայ 361աբ: Մահ Սովոնիայ 361բ: Մահ Անգէի 361բ: Մահ Զաւարիայ 361բ: Մահ Մաղաբիայ 361բ:
- 43. Երեմիա – Յոջբ. 362ա: Գլ. 362ա-3ա: Մրգ. 363ա-86բ:
- 44. Բարուք – Թուղթ 386բ-7ա:
- 45. Ողբ Երեմիայ – Ողբ 387ա-9ա: Աղաւթք 389ա:
- 46. Դանիէլ – Նյւ. 389աբ: Գլ. 389բ: Մրգ. 390ա-8ա:
- 47. Եզեկիէլ – Նյւ. 398աբ: Գլ. 398բ-9բ: Մրգ. 399բ-420ա:
- 48. Թուղթ Եսեթի – Թուղթ 420բ:
- 49. Համաբարբառ կանոնք Ա-Ժ. – 421ա-2ա (Նաեւ լուսանցային՝ 423ա-70ա):
- 50. Համաձայնութիւն – 422աբ:
- 51. Մաթթէոս – Գլ. 422ա: Նյւ. 422բ: Ա. 423ա-35բ:
- 52. Մարկոս – Գլ. 435բ: Նյւ. 435բ: Ա. 436ա-44բ (ունի «Յարուցեալ Յիսուս»):
- 53. Դուկաս – Գլ. 444բ-5ա: Նյւ. 445ա: Ա. 445բ-59բ:
- 54. Յովհաննէս – Նյւ. 459բ: Գլ. 459բ-60ա: Ա. 460ա-70ա (ունի «Իրք կնոջն շնացելոյ»):
- 55. Գործք առաքելոց – Յոջբն. («Որք») 470բ-1ա: Գիր («Ի հարցն») 471ա: Գլ. 471ա-2ա: Ընթրց. 472ա: Այլ Նյւ. 472աբ: Ընթացքն 472բ: Գիրք 473ա-86ա:
Գրչից՝ 472բ եղբայր, այս յետին... (տէս ձեռ. 187, 398բ):
- 56. Թուղթ Յակովբայ – Յոջբն. 486ա: Գլ. 486աբ: Թուղթ 486բ-8ա:
- 57. Թուղթ Պետրոսի Ա. – Գլ. 488ա: Թուղթ 488ա-9բ: Նյւ. 489բ:
- 58. Թուղթ Պետրոսի Բ. – Գլ. 489բ: Նյւ. 489բ-90ա: Թուղթ 490աբ:
- 59. Թուղթ Յովհաննու Ա. – Գլ. 491ա: Նյւ. 491ա: Թուղթ 491ա-2բ:
- 60. Թուղթ Յովհաննու Բ. – Գլ. 492բ: Նյւ. 492բ: Թուղթ 492բ-3ա:
- 61. Թուղթ Յովհաննու Գ. – Գլ. 493ա: Նյւ. 493ա: Թուղթ 493ա:
- 62. Թուղթ Յովայի – Գլ. 493ա: Նյւ. 493աբ: Թուղթ 493բ:
- 63. Աղերս Եսթաղի – 493բ-4ա:
- 64. ԺԳ. Թուղթ Պաղոսի – Յոջբն 494ա-6ա: Վկ. 496ա: Բովանդ. ընթերց. եւ վկայից. – 496ա-9ա:
- 65. Առ Հոռոմայեցիս – Գլ. 499ա: Նյւ. 499աբ: Թուղթ 500ա-5ա:
- 66. Առ Կորնթացիս Ա. – Գլ. 505ա: Նյւ. 505աբ: Թուղթ 505բ-10ա:
- 67. Առ Կորնթացիս Բ. – Գլ. 510աբ: Նյւ. 510բ: Թուղթ 510բ-4ա:

68. Առ Գաղատացիս – Գլ. 514ա: Նխ. 514ա: Թուղթ 514ա-6ա:

69. Առ Եփեսացիս – Գլ. 516ա: Նխ. 516ա: Թուղթ 516ա-7բ:

70. Առ Փիլիպեցիս – Գլ. 517բ: Նխ. 517բ-8ա: Թուղթ 518ա-9ա:

69. Առ Կոդոսացիս – Գլ. 519ա: Նխ. 519աբ: Թուղթ 519բ-20բ:

70. Առ Թեսալոնիկեցիս Ա. – Գլ. 520բ: Նխ. 520բ: Թուղթ 521ա-2ա:

71. Առ Թեսալոնիկեցիս Բ. – Գլ. 522ա: Նխ. 522ա: Թուղթ 522աբ:

72. Առ Եբրայեցիս – Գլ. 522բ-3ա: Նխ. 523աբ: Թուղթ 523բ-7բ:

73. Առ Տիմոթէոս Ա. – Գլ. 527բ: Նխ. 527բ: Թուղթ 527բ-9ա:

74. Առ Տիմոթէոս Բ. – Գլ. 529ա: Նխ. 529աբ: Թուղթ 529բ-30բ:

75. Առ Տիտոս – Գլ. 530բ: Նխ. 530բ: Թուղթ 530բ-1ա:

76. Առ Փիլիմոն – Գլ. 531ա: Նխ. 531աբ: Թուղթ 531բ:

– [Վերնագիր, Թելադրութ., Նաւարկութ.] – 531բ:

77. Առ Կորնթացիս – Կորնթացւոց 532ա: Պօղոսի 532աբ:

78. Յայտնութիւն Յովհաննոս – Գլ. 532բ-3բ: Գիրք 534ա-40ա: Նխ. 540ա:

79. Հանգիստ Յովհաննոս – 540ա-1ա:

Բ. 309բ Յիշատակարան աստուածաբան տեառն Ներսէսի («Ա.-Ք»)- Աստուածեղէն հոգւովն ի սմա, / հաղաղովիւն անուն արքա... Քոյր կոչելով աստուածակառք, / յաննիւթական տարեալ քաղաք:

Ունի «ֆոնակի» համարներ:

ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԲՆԱԳՐԱՅԻՆ

2բ Համար ֆոնակնոյն, զոր ջաբիստր կոչեն, որ ի վերա ամէն Աստուածաշնչին ճապղած է, ես (անունը ջնջած. պէտք է լինի «Հեթում, որ եւ Յովհաննէս կոչիմ») բազում աշխատութեամբ փոխեցի առ ի դիրաւ գտանելոյ, եթէ բան ինչ իցէ յերկոցունց միջի:

24բ Իսկ ի Յուդիթն զապարաւն ի ճակատն կապել ասէ, այլ այն զարդ կանացի է, թէ եւ աստ նոյն իցէ, ոչ գիտեմ:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 2բ (Յակոբ գրչի) Արդ, աղաչեմ զբազմամեղս յիշել առաջի Քրիստոսի, որով եւ դուք յիշեալ լիջիք. ամէն: Ընդ նմին եւ զայժմ գրող գրոցս աղաչեցէ՛ք վասն իմ: Աւգնէ՛, Քրիստո՛ս, գրողիս, զի կատարեցից:

87բ (ստ. լս.) Յարս 2Շ. (= վեցշաբաթին), յամիս յունիս ԻԶ., 22է. (1338) եղին Բ. մարդ ի մեքենայս եւ չարաչար սատակեցան, վասն զի զա|88ա|աշխարհս եւ

զբերդն Սիւսյ ծախեալ էին անաւրինաց գաղտաբար, եւ արս էր կէտ եղեալ վնասու նոցա: Վա՛յ զիրենք:

101բ Փառս տամ Քրիստոսի յամենայն ժամ:

114բ ԶՅակոբ գրող սմին աղաչեմ՝ յիշեցէ՛ք ի Տէր:

115ա Մեղա Տեառն Աստուծոյ եւ վա՛[յ] աննիւթ գրելոյս:

2. 259ա (Սարգիս քհյ. գրչի) Կատարեցաւ Յիսուսիւ Երրորդ Մակաբայե[ցի]ս ձեռամբ Սարգսի անարժան քահանայի: Որ յիշէ զիս եւ զծնողս իմ, Քրիստոս Աստուած զինք յիշէ. ամէն:

309բ Ներսէսի Հայոց կաթողիկոսի է բանս այս եւ նորին համանուն եւ դաստիարակեալ աշակերտի գրեալ զսա յիշատակաբան գրոցս, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Զամենաբարի պարոն մեր զհոգեւոր տէրն զտէր Յակոբ սուրբ հայրապետն Հայոց եւ զպատրիարզն Արեւելից ծնաւղաւք եւ զարմիւք Քրիստոս Աստուած արժանի արասցէ երկնից սուրբ արքայութեանն եւ դասեսցէ ընդ սրբոց հայրապետաց եւ ընդ սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի զաթոռակից սուրբ հայրս մեր զտէր Յակոբ, եւ ինքն արհնեալ եւ փառաւորեալ եղիցի յաւիտեանս. ամէն:

Եւ ես յերես անգեալ աղաչեմ զձեզ, իմ բարի պարոն, եւ զամենայն դասս եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից եւ սարկաւազաց Սարգիս սուտանուն քահանայս եւ անարժան մեղաւոր հողս՝ գրագիր սուրբ Աստուածաշնչիս, որ անմոռաց յիշմամբ զիմ անարժանութիւնս եւ զծնաւղս իմ խնդրել թողութիւն յամենառատէն Աստուծոյ, զի ինք[ն] Քրիստոս ասէ, թէ՛ Զոր թողուք, թողեալ լիցի եւ ձեր, բանիւզ ջնջեսցի, եւ ինքն բարեբանեալ յաւիտեան:

389բ Ո՛հ, զՍարգիս սուտանուն եւ անարժան քահանայ եւ զմեղուցեալ հողս յերես անկեալ աղաչեմ զսրբալոյս դասս լուսերամից սրբոց քահանայից՝ յիշել սրտի մտաւք եւ մեղաց իմոց եւ ծնաւղացն իմ թողութիւն խնդրել յԱստուծոյ՝ ի բարեաց տուողէն ամենայն հաւատացելոց, եւ ինքն բարեաց տուաւդ հատուցէ ընդ միոյն հարիւրապատիկ յիշողացդ եւ յիշեցելոցս. եւ նմա փառք յաւիտեանս յաւիտենից. ամմէն:

399բ Զամենաբարի պարոն զտէր Յակոբ կաթողիկոս ամենայն Հայոց՝ զստացաւդ սուրբ Աստուածաշնչիս ծնաւղիւք եւ զարմաւք յիշեցէ՛ք ի բարին Քրիստոս, եւ զգրիչ սորա ծնաւղաւք, եւ որ յիշէ, յիշեալ լիցի ի Տեառնէ Աստուծոյ մերոյ. ամէն, ամէն:

420ա Ով մարգարէ աստուածաբան, / զքեզ աղաչեմ աղերսական, / բարեխաւսեա՛ մեր փրկութեան / առ Տէր Աստուած իսրայէլեան, / որ ողորմի մեզ զըլթական, / Սարգսի հողոյս եւ անպիտան / եւ ծառայիս Տեառն անարժան:

435բ Փառք Աստուծոյ Հաւր եւ Որդոյ նորա միածնի եւ ճշմարիտ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս. ամէն:

460ա Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն: ՉՍարգիս սուտանուն քահանայ եւ զծնաւոյս իմ աղաչեմ յերես անկեալ խնդրել թողութիւն մեղաց մերոց ի Քրիստոսէ:

510բ ՌՎ հայր Պապոս սուրբ առաքեալ, / քարոզ բանին Տեառն յայտնեալ, / զՍարգիս գըրիչ մեղաւք լըցեալ, / առ քեզ յանձին եմ արարեալ:

531բ Փառք քեզ կոնէաքող արեգսագողն, արարիչ կիսագնդի եւ Դէմետրի. ամմէն:

3. 2բ (ծաղկողի) Սարգիս երիցու շինեալ:

422բ Սարգիս երէց է շինել:

4. 541ա (կազմողի) Ռհ, զմեղաւք դատապարտեալս զկազմող սորայ զՅոնանէս սարկաւագս աղաչեմ յիշել ի Տէր եւ զծնողս իմ եւ զուսուցիչն մեր զՅակոբ երեց՝ զորդին մեծ պարոն, եւ որ յիշէ, յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. Պհպ. Աա (1374 թ., անարուեստ բոլորգիր) Ի թվականին ՊԻԳ. (1374) ապրիլի ԻԸ., մտաք ի Բերիայ:

2. 1ա (1425 թ., անարուեստ բոլորգիր) Զվերջին ստացաւ փափագելի եւ ամենագով Աստուածաշունչ Հին եւ Նոր կտակարանացս զԱւետիք աշակերտս բանի եւ զերախտաւոր հայրս իմ ըստ հոգոյ եւ զուսուցիչս զտէր Սահակ աղաչեմ զդասս սրբագանիցդ, եւ որք յետ մեր ժառանգէք զսայ, զի յիշման արժանի առնիցէք զանարժանքս եւ մեղաց մերոց եւ անթիւ սխալանացն ներումն թողութեան հայցեցէք ի բարերար փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ եւ ձեզ եւ մեզ առ հասարակ ողորմեսցի ի միւսանգամ գալստեան իւրում, եւ նմա փառք յամենայն յաւիտեանս. ամէն:

3. 459բ (1425 թ., անարուեստ բոլորգիր) Զվերջին ստացաւ սուրբ եւ փափագելի Աստուածաշունչ մատենիս զԱւետիք սպասաւոր բանի եւ զբազմերախտ հայրս իմ ըստ հոգոյ զտէր Սահակ աղաչեմ յիշել ի բարի եւ մեղաց մերոց ներումն հայցել, որ եւ ձեզ լիցի մասն բարեաց. ամէն:

4. 472բ (1425 թ., անարուեստ բոլորգիր) Զվերջին ստացաւ Աստուածաշունչ կտակարանացս զբազմամեղ ոգիս զԱւետիք աղաչեմ յիշել եւ մեղաց մերոց թողութիւն հայցել, որ եւ ձեզ յիշողացդ, լիցի մասն բարեաց. ամէն:

5. 499բ (1425 թ., անարուեստ բոլորգիր) Զվերջին ստացաւ սուրբ եւ ամենագով Աստուածաշունչ կտակարանացս զԱւետիք սպասաւորս բանի եւ զտէր Սահակ՝ զուսուցիչս իմ, յիշեսչիք ի Քրիստոս, աղաչեմ:

6. 541բ Բաղձանք բարոյ եւ փափաճումն առ զեղեց[կ]ագոյնսն բնութեամբ է բանական, կենդանի

մարդոյս, մանաւանդ որոց ճանաչի գոլն եւ միշտ գոլն եւ բարիոք գոլն: Արդ, ցանկութեամբ մեծաւ բարի կելոյն միշտ կարաւտեալս եւ բնաւորական կելով ոչ ժամանեալս երբեք եւ առ միշտ կելոյն խոստման խոտելի կենաւք կասկածեալս, տարտամս եւ տառապեալս սգով Աւետիք աշակերտ բանի, ի Դաւաւնաղեաց գօսուէ, ի վաղուց հետէ փափաքեալ ըղձայի այսմ վայելուչ ցանկալի եւ ամենագով Աստուածաշունչ Հին եւ Նոր կտակարանացս, իսկ ի վախճանել հոգէլից եւ տիեզերահռչակ մեծ բաբունապետին իմոյ եւ վարժապետին ժառանգեաց զսա եղբաւորդի նորին Եղէկիլ սարկաւագն: Եւ կամեցեալ նորա վաճառել. որ եւ ես, թէպէտ անձեռնհաս էի եւ անարժան, կամակցութեամբ եւ աւժանդակութեամբ բազմերախտ հօրս իմոյ հոգեւորի՝ տէր Սահակ կորովամիտ բանասիրի եւ երաժշտապետի, որ եւ ի վերայ ամենայն երախտեաց, զոր ի մանկութենէ մերմէ դաստիարակեալ էր եւ վարժեալ յուսումն եւ ամենայն հոգէկան եւ մարմնական պիտոյիք խնամարկեալ, տեսեալ զտենչանս իմ առ այս անգին մարգարիտս, աւզնական եղեալ յորդորեաց զմեզ, որ եւ վաճառեալ զամենայն ինչս մեր, զոր ունէաք ի նախնեաց եւ յազգականաց, եւ խնդութեամբ ստացաք զայս լուսատու մարգարիտս եւ զաստուածային գանձս սակօականաց կենացս մերոց կարօտանաց լրումն եւ երկար յուսոյն առ յապագայիցդ յիշումն յիշատակի: Արդ, որք ժառանգէք զսա յետ մեր, ողորմելով մեղուցեալ ոգոցս, ողորմութիւն հայցեցէք ի Քրիստոսէ եւ յիշման արժանի արարէք ի բարին, մանաւանդ զերջանիկ վարժապետն իմ զԳլորգ լու[ւ]աւոր հոգին, նաեւ զուսուցիչս իմ զտէր Սահակ եւ զարեամբ նահատակեալ հայրն իւր զՍեղբեստրոս քահանայն եւ զշնորհալի եղբայրն իւր զՏիապարոն սարկաւագն զփոխեցեալն առ Քրիստոս, այլ եւ զիս՝ զանարժանս, եւ զըստ մարմնոյ ծնօղսն իմ եւ զեղբայրն իմ զփոխեցեալն առ Քրիստոս զՄկրտիչ քահանայն եւ զմիւս եղբայրն՝ զՆերսէս, եւ զեղբօրորդեակքս իմ զԴաւիթ սարկաւագ եւ զՅոնաննէս պատանեակ եւ զայլ ամենայն արեան մերձաւորսն մեր եւ զերախտաւորսն, զկենդանիսն եւ զհանգուցեալսն առ Քրիստոս յիշեսչիք աղօթիւք, որ եւ դուք յիշեալ լիջիք յամենառատ ողորմութիւնն Աստուծոյ, զի ձեզ եւ մեզ լիցի մասն բարեաց ի շնորհացն Քրիստոսի, եւ նմա փառք ընդ Հաւր եւ Սուրբ Հոգոյն յամենայն յաւիտեանս. ամէն:

Աղաչեմ յիշել ի Տէր եւ զպարոն Յակոբն՝ զքեռին իմ, որ աւզնական մեզ եղեւ յոլով արդեամբք ի գրոցս ի գինն, որ եւ ի սոյն ամի ի Քրիստոս փոխեցաւ, զոր տէր Յիսուս թողցէ զյանցանս նորա եւ գրեսցէ զնայ ի դպրութիւն կենաց. ամէն:

Եւ ստացաք զամենագով Աստուածաշունչս ի թվականութեանս հայոց ՊԷԳ. (1425), ի դառն եւ ի դժնեա ժամանակիս, զի մեծ պատուհաս պատահեցաւ Եկե-

ղեաց գաւառիս, քանզի ի նոյն ամի, յորում փոխեցաւ առ Քրիստոս հռչակելի բաբունապետն մեր Գեորգ, եկն Աւրման պարոն ի վերայ եզնկիս եւ յոյժ աւերեալ հրդեհեաց զգեղաւանն առ հասարակ եւ զվանորայս, ընդ որ եւ հռչակելի մենաստանս մեր Կապրաու վանքս հրդեհեալ աւերեցաւ եւ Գ. ամ ի խսար պահեց զքաղաքն, եւ առեալ ապա խաղացոյց, եւ խնամաւքն Աստուծոյ սկիզբն եղեւ շինութեան գաւառիս: Որ եւ մեք, ողորմութեամբն Աստուծոյ նորոգեցաք զսուրբ անպատս պայծառ շինուածով առաւել քան զառաջինն, զժամատունն եւ զխցերն եւ զտնտեստունն եւ զայլ ամենայն շինուածսն, որ եւ խնամաւք բարերարին Աստուծոյ մնացէ սա անխախտ ի վայելում սրբազան կրաւանաւորաց եւ յիշատակ մեզ՝ անարժանիցս, եւ ամենայն աշխատաւորաց ի սմայ. ամէն:

7. 1ա (1715 թ., անարուեստ նոտրգիր) Թվին ՌՃԿ.ի (1715) գրեցաւ գիրս, մարտի ամսուն ԻԲ. (22) օրն:

8. Պահնկ Աա (1791 թ., անարուեստ նոտրգիր) Թիւն դարձեալ եղեւ ՌՄՆ.ին (1791) վերջստին գիրս Եմուտ ի Բերիայ սեբդե[մ]բրի Ա.ին:

9. 1ա (1801 թ., անարուեստ նոտրգիր) Թվոչն մեր 1ԻԾ. (1801) ամի Գրիգոր նվաստ վարդապետս ըստացայ զայս անգին Աստուածաշունչս ի Քրայիզունցի մահտեսի Աբրահմէն ի բարի վայելում նվաստիս: Ով աստուածային շնորհօք ընդերձօղք, ամենայնեղս յիշեսչիք ի մաքրափայլ յաղօթս ձեր, եւ խնդրեմ հոգեւոր եղբայրն իմ մահտեսի Աբրահմամ օրհնեսչիք, զի զօրասցի տերամբ, եւ զն[ն]ջեցեալքն յիշեսչիք ի Տէր, եւ դուք յիշօղք յիշեալ լիջչիք ի Քրիստոս:

10. 57ա (1873 թ. անարուեստ նոտրգիր) Եզինէ տիկին Կոստանդնուպօլսեցի՝ հարազատ քոյր Գէորգ Դ. կաթողիկոսի ամենայն Հայոց, գնեալ երեք հազար դահեկանի գտոյն Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր կտակարանաց, նուիրեաց ի վայելս եղբօր՝ իւրոյ ընդ-

հանրական հայրապետի ազգիս Հայոց Տ. Տ. Գէորգեայ եւ ի յաւերժական յիշատակ կենդանեաց եւ ննջեցելոց իւրոց ի դուռն Սրբոյ Էջմիածնի եւ խնդրէ ի վերժանողաց յիշել ի մաքուր աղօթս զհանգուցեալսն իւր ի Քրիստոս զհայրն բարեպաշտ Մինդանի մահտեսի Պետրոսն Քլեխտէնեան եւ մայրն զբարեպաշտուհի մահտեսի Սրբունին, եւ զեղբարս իւր՝ զկեղեցական երաժիշտ մահտեսի Յօհանն, եւ զՄինդանի Աւետիսն, եւ զքոյրն՝ բարեպաշտուհի զՓեփրոնէն կոյս, որք ի Տէր ննջեցին, եւ զկենդանի միակ որդին՝ զԳրիգորիկն, զի եւ դուք յիշեալ լինիջիք ի Քրիստոսէ փրկչէ. ամէն:

1873 թ., դեկ. 15 եւ ի թուականաւթեան հայոց ՌՅԻԳ. (1874), Քաղոց՝ Դ., ի մայրաքաղաքն Կ. Պօլիս (նման՝ 179բ, 193բ, 226ա, 242ա, 284բ, 342բ, 445ա, 470ա, 533բ, 541բ (վերջին երկուքը մանուշակագոյն թանաքով եւ շղագիր):

11. 114ա (1874 թ., շղագիր, մանուշակագոյն թանաքով) Յիշեսչիք ի խնկանուէր մաղթանս ձեր զգնող Աստուածաշունչ մատենիս զԵզինէ Կ. Պօլսեցի՝ զքոյր ընդհանրական կաթողիկոսի ամենայն Հայոց եւ պատրիարքի Արարատեան Մայր Աթոռոյ Տ. Տ. ի Գեորգեայ Դ.-ի, եւ զորդին իւր միակ զԳրիգորիկն, որոց տացէ տէր Աստուած երկարութիւն կենաց եւ զննջեցեալսն ի լոյս երեսաց իւրոց հանգուցէ յարքայութեանն երկնից. ամէն: ՌՅԻԳ. (1874) Մարգաց (նման՝ 486բ):

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա, 3ա (կարմիր թանաքով ութանկիւն), 3ա (սեւ թանաքով ութանկիւն) եղծուած:

ՆԿԱՐՉԱՓՈՐՉ՝ պհպ. Գա, Գբ՝ վիշա՛պ:

ԳՐՉԱՓՈՐՉ՝ 1ա՝ «Թվին հագ.», պհպ. Դա՝ «ձ., ձ.», պհպ. Դբ՝ «Ամենայ տող եղեն քան զերկի», պհպ. Եբ՝ «Մարիամ, այս գիրքըս, Մարիամ»:


ՆՇՈՒՄ՝ Աա՝ «359/2627, ԺԳ. սկիզբ, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2628


Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Շ Ո Ւ Ն Չ

ՌՉԴ. – 1635

ԳՐԻՉ՝ Գրիգոր երէց:
ԹԵՐԹ՝ 482. չգրուած՝ 2բ: ՊՐԱԿ՝ Ա-ԽԱՄ12 (ԼԳ՝ 2): ՆԻԻԹ՝ մագաղաթ: ՄԵՍՈՒԹԻԻՆ՝ 22,5x17,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկաթին (18x13,7): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 69ա, 356ա). ք. 307ա-86բ՝ գրչափոխութեամբ (նմուշ՝ 356ա): ՏՈՂ՝ 50 (1ա-306բ), 44-47 (307ա-86բ, 372բ՝ 36), 50-52 (387ա-482բ): ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի, մէջ սեւ կաշի, միջուկը տախտակ, աստաղը ծաղկաթուղթ. լուսանցակողերը՝ դեղին: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ, ծաղկաթուղթ, մասն կազմաստաթի*:



Նմուշ 69ա



Նմուշ 356ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՆ – Լ ա ն ց - ա յ ի ն . Ովսն՝ 310ա, Ամովս՝ 313բ, Միբիլ՝ 315բ, Յովի՝ 317ա, Աբդիա, Յովման՝ 318բ, Նատու՝ 319բ, Ամբակում՝ 320ա, Սոփոնիա՝ 321ա, Անգեւս՝ 322ա, Զաւարիա՝ 322բ, Մաղափա՝ 326ա: Կ ի ս ա խ ո ռ ա ն ՝ 3ա, 239ա, 263ա, 389ա, 399ա, 407բ, 418ա, 428բ, 456ա: Ճ ա - կ ա տ ա զ ա ռ ղ՝ 40բ, 57բ, 69ա, 85ա, 98ա, 107ա, 117բ, 128բ, 137բ, 148ա, 157բ, 166բ, 177ա, 209բ, 221բ, 230բ, 241բ, 244բ, 247բ, 250ա, 253ա, 256ա, 259ա, 439բ: Լ ո ս ա ն ն ց ա զ ա ռ ղ՝

բուսական, թռչնային: Զ ա ռ դ ա գ ի ռ՝ թռչնագիր, հանգուցագիր, կենդանագիր: Գ ո յ յ ն ե ռ՝ կարմիր:

ՎիճԱԿ՝ բառարար. կազմը մաշուած, փեղկերի եզրերը թափած, տախտակը բաց, մէջի կաշուի վրայ ցեցի անցներ, 3 զամերն ու կապիչներն ընկած, թ. 1, 97՝ եզրերը փոփոխիչ վնասուած, թ. 335՝ հիմքից մասամբ պոկուած, հիմքերի մօտ կեղտոտուած, թերթերին աղտոտուածութեան զանազան հետքեր:

* Համարակալուած են միայն Ա-ԼԳ. պրակները, կազմը ժժ. դ. կազմարարութեան լաւ նմուշ է:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

- Ա. 1. Ծնունդի – Նյւ. 1ա: Գլ. 1բ-2ա: Գիրք 3ա-24բ:
- 2. 24բ-38ա [Կտակ ժԲ. Նահապետացն]
- ա. 24բ-5բ [Ա.] Գիրք Մնացորդաց: Խաւար Ռուբենի:
- Կտակ առաջնոյն:
- բ. 25բ-6բ Բ. Կտակ Շմառնի: Վասն նախանձու: Երկրորդ:
- գ. 26բ-8բ Գ. Կտակ Ղեւեայ: Վասն քահանայութեան եւ ամբարտաւանութեան:
- դ. 28բ-30բ Դ. Կտակ Յուզայ: Զորրորդ: Վասն արբեցութեան եւ արծաթսիրութեան եւ պոռնկութեան:
- ե. 30բ-1ա Ե. Կտակ Իսաքարայ:
- զ. 31ա-2ա Զ. Կտակ Զաբողովնի:
- է. 32աբ է. [Կտակ] Դանա: Վասն ամբարտաւանութեան եւ ատելութեան:
- ը. 33ա-4ա Ը. Կտակ Նեփթաղիմայ: Վասն բնական բարութեան:
- թ. 34աբ Թ. Կտակ Գադայ: Վասն տեսութեան:
- ժ. 34բ-5բ Ժ. Կտակ Ասերայ: Վասն երկդիմութեան եւ առաքինութեան:
- ժա. 35բ-7ա ԺԱ. Կտակ Յովսէփայ: Վասն նախանձու:
- ժբ. 37ա-8ա ԺԲ. Կտակ Բենիամենի: Բժ.աներորդ:
- 3. Ելք – Նյւ. 38աբ: Գլ. 38բ-40ա: Գիրք 40բ-56ա:
- 4. Ղեւտական – Նյւ. 56ա: Գլ. 56ա-7բ: Գիրք 57բ-68ա:
- 5. Թիւք – Նյւ. 68աբ: Գլ. 68բ-9ա: Գիրք 69ա-83բ:
- 6. Բ. Օրենք – Նյւ. 83բ-4ա: Գլ. 84աբ: Գիրք 85ա-97բ:
- 7. Յետու – Նյւ. 97բ: Գլ. 97բ-8ա: Գիրք 98ա-106բ:
- 8. Դատաւորք – Նյւ. 106բ: Գլ. 106բ-7ա: Գիրք 107ա-15ա:
- 9. Հուպ – Նյւ. 115ա: Գիրք 115ա-6ա:
- 10. Թագ. Ա. – Յոջբ. 116աբ: Նյւ. 116բ: Գլ. 116բ-7ա: Գիրք 117բ-28ա:
- 11. Թագ. Գ. – Գլ. 137աբ: Գիրք 137բ-47ա:
- 12. Թագ. Դ. – Գլ. 147բ-8ա: Գիրք 148ա-57ա: – 155ա գրչից՝ «Յայտ տեղս հասանիս, յուրիշ օրինակ տե՛ս, պակաս կայ աստ» (սխալ է. բնագրական պակաս չկայ):
- 13. Մնաց. Ա. – Նյւ. 157ա: Գլ. 157աբ: Գիրք 157բ-66ա:
- 14. Մնաց. Բ. – Գլ. 166աբ: Գիրք 166բ-77ա:

- 15. Եզր Ա. – Նյւ. 177ա: Գլ. 177ա: Գիրք 177ա-82բ:
- 16. Եզր Բ. – Հանգամանք 182բ: Գիրք 182բ-5բ:
- 17. Եզր Գ. – Գիրք 185բ-92բ:
- 18. Նեւեմի – Նյւ. 192բ-3ա: Գլ. 193ա: Գիրք 193ա-7ա:
- 19. Եսթեր – Նյւ. 197ա: Գիրք 197բ-200բ:
- 20. Յուդիթ – Նյւ. 200բ: Գիրք 201ա-5բ:
- 21. Յուդիթ – Նյւ. 200բ: Գիրք 201ա-5բ:
- 22. Տովբիթ – Նյւ. 205բ: Գիրք 205բ-8բ:
- 23. Մակար. Ա. – 208բ-9ա: Գլ. 209աբ: Գիրք 209բ-21ա:
- 24. Մակար. Բ. – Նյւ. 221ա: Գլ. 221աբ: Գիրք 221բ-30ա:
- 25. Մակար. Գ. – Նյւ. 230ա: Գլ. 230ա: Գիրք 230բ-4ա:
- 26. Սաղմոսք – Նյւ. (Եպիփանու) 234բ-5ա: Կանոն Սաղմոսաց 235ա: Նյւ. («Զամենայն») 235ա-6ա: Գլ. 236ա-9ա: Գիրք 239ա-62բ (ունի «Փոքր էի» եւ Օրհնութիւնք):
- 27. Առակք – Նյւ. 262բ: Գլ. 262բ-3ա: Գիրք 263ա-71ա:
- 28. Ժողովոյ – Նյւ. 271ա: Գլ. 271ա-2ա: Գիրք 272ա-4բ:
- 29. Երգ երգոց – Նյւ. 274բ: Գիրք 274բ-6ա (ունի «Գիտացի»):
- 30. Իմաստութիւն – Նյւ. 276աբ: Գլ. 276բ: Գիրք 276բ-81բ:
- 31. Յոբ – Նյւ. 282աբ: Նյւ. (Աղիկառնացի) 282բ: Գիրք 282բ-91ա:
- 32. Եսայի – Նյւ. 291ա: Գլ. 291ա-2ա: Մրգ. 292ա-309ա: Մահ 309աբ:
- 33. Ովսէէ – Նյւ. 309բ-10ա: Գլ. 310ա: Մրգ. 310ա-3ա:
- 34. Ամովս – Գլ. 313աբ: Մրգ. 313բ-5բ:
- 35. Միքիէ – Գլ. 315բ: Մրգ. 315բ-7ա:
- 36. Յովել – Գլ. 317ա: Մրգ. 317ա-8ա:
- 37. Աբդիու – Գլ. 318աբ: Մրգ. 318բ:
- 38. Յովնան – Գլ. 318բ: Մրգ. 318բ-9բ:
- 39. Նաւում – Գլ. 319բ: Մրգ. 319բ-20ա:
- 40. Ամբակում – Գլ. 320ա: Մրգ. 320ա-1ա:
- 41. Սոփոնիա – Գլ. 321ա: Մր. 321աբ:
- 42. Անգէտ – Յոջբն. 322ա: Մրգ. 322աբ:
- 43. Զաբարիա – Գլ. 322բ: Մրգ. 322բ-5բ:
- 44. Մաղափա – Գլ. 325բ-6ա: Մրգ. 326աբ: – Կատարումն Աստուծոյ Բժ.-ան սուրբ մարգարէիցն – Մահ Ովսէի 326բ: Մահ Ամովսայ 326բ-7ա: Մահ Միքիա 327ա: Մահ Աբդիու 327ա: Մահ Յունանու 327ա: Մահ Նաւումայ 327ա: Մահ Ամբակումայ 327ա: Մահ Սոփոնիայ 327ա: Մահ Անգէի 327աբ: Մահ Զաբարիայ 327բ: Մահ Մաղափայ 327բ: Մահ Դանիէլի 327բ:

- 45. Երեմիա – Նյւ. 327բ-ճա: Գլ. 328ա-9ա: Մրգ. 329ա-50բ:
- 46. Բարոմ – Թուղթ 350բ-2բ:
- 47. Ողբ Երեմիայ – 352բ-ճա: Աղաւթք 354բ: Մահ 354բ-ճա:
- 48. Դանիէլ – Նյւ. 355ա: Գլ. 355աբ: Մրգ. 355բ-63բ:
- 49. Եզեկիէլ – Նյւ. 363բ-4ա: Գլ. 364աբ: Մրգ. 364բ-86բ: Մահ 386բ:
- 50. Թուղթ Եսայի – Թուղթ 387ա:
- 51. Համարարատ կանոն Ա-Ժ. – 387ա-ճա (նաեւ լուսանցային՝ 389ա-426բ):
- 52. Համաձայնութիւն – 388բ:
- 53. Մաաթէոս – Գլ. 388աբ: Նյւ. 388բ: Աւ. 389ա-98բ:
- 54. Մարկոս – Գլ. 398բ-9ա: Նյւ. 399ա: Աւ. 399ա-405բ (ունի «Յարուցեալ Յիսուս»):
- 55. Լուկաս – Գլ. 405բ-ճա: Նյւ. 406ա: Աւ. 406բ-17բ:
- 56. Յովհաննէս – Գլ. 417բ-ճա: Նյւ. 418ա: Աւ. 418ա-26բ (ունի «Իրք կնոջն շնացելոյ»):
- 57. Գործ առաքելոց – Յոջբն. («Որք») 426բ-7ա: Գիր («Ի հարցն») 427աբ: Գլ. 427բ-ճա: Լնթրց. 428ա: Գիրք 428բ-39ա:
- 58. Թուղթ Յակովբայ – Յոջբն. 439ա: Նյւ. 439աբ: Գլ. 439բ: Թուղթ 439բ-40բ:
- 59. Թուղթ Պետրոսի Ա. – Նյւ. 440բ: Գլ. 440բ-1ա: Թուղթ 441ա-2ա:
- 60. Թուղթ Պետրոսի Բ. – Նյւ. 442ա: Գլ. 442ա: Թուղթ 442ա-3ա:
- 61. Թուղթ Յովհաննու Ա. – Նյւ. 443ա: Գլ. 443աբ: Թուղթ 443բ-4բ:
- 62. Թուղթ Յովհաննու Բ. – Նյւ. 444բ: Գլ. 444բ: Թուղթ 444բ:
- 63. Թուղթ Յովհաննու Գ. – Նյւ. 444բ: Գլ. 444բ: Թուղթ 444բ-5ա:
- 64. Թուղթ Յուդայի – Նյւ. 445ա: Գլ. 445ա: Թուղթ 445աբ:
- 65. Աղես Եթաղի – 445բ:
- 66. Յայտնութիւն Յովհաննու – Գիրք 445բ-51ա:
- 67. ԺԻ. թուղթ Պատրոսի – Յոջբ. 451ա-2բ: Վկ. 452բ: Բովանդ. ընթերց. եւ վկայեց. – 452բ-5ա:
- 68. Առ Հովնայեցիս – Նյւ. 455աբ: Գլ. 455բ: Թուղթ 456ա-60ա:
- 69. Առ Կորնթացիս Ա. – Նյւ. 460ա: Գլ. 460աբ: Թուղթ 460բ-4բ:
- 70. Առ Կորնթացիս Բ. – Նյւ. 464բ: Գլ. 464բ: Թուղթ 464բ-7բ:
- 71. Առ Գաղատացիս – Նյւ. 467բ: Գլ. 467բ: Թուղթ 467բ-9ա:

- 72. Առ Եփեսացիս – Նյւ. 469ա: Գլ. 469ա: Թուղթ 469ա-70բ:
 - 73. Առ Փիլիպեցիս – Նյւ. 470բ: Գլ. 470բ: Թուղթ 470բ-1բ:
 - 74. Առ Կողոսացիս – Նյւ. 471բ: Գլ. 471բ-2ա: Թուղթ 472աբ:
 - 75. Առ Թեսաղոնիկեցիս Ա. – Նյւ. 472բ-3ա: Գլ. 473ա: Թուղթ 473ա-4ա:
 - 76. Առ Թեսաղոնիկեցիս Բ. – Նյւ. 474ա: Գլ. 474ա: Թուղթ 474աբ:
 - 77. Առ Եբրայեցիս – Նյւ. 474բ-5ա: Գլ. 475ա: Թուղթ 475ա-8բ:
 - 78. Առ Տիմոթէոս Ա. – Նյւ. 478բ: Գլ. 478բ: Թուղթ 478բ-80ա:
 - 79. Առ Տիմոթէոս Բ. – Նյւ. 480ա: Գլ. 480ա: Թուղթ 480ա-1ա:
 - 80. Առ Տիտոս – Նյւ. 481ա: Գլ. 481ա: Թուղթ 481աբ:
 - 81. Առ Փիլիմոն – Նյւ. 481բ: Գլ. 481բ: Թուղթ 481բ-2ա:
– Թէլադրութ., Վերադիր, Նաւարկութ. – 482ա:
 - 82. Առ Կորնթացիս – Կորնթացւոց 482ա: Պողոսի 482աբ:
Բ. ա. 281բ-2ա Տեառն Ներսիսի Յիշատակարան Առակացն Սողոմոնի, զոր իւրով ձեռամբ գրեաց զարթուցանել զթմբեալս մեղօք («Ա-Ք») – Աստուածեղէն հոգւովն ի սմա, / Խաղաղութեան անուն արքայ... Քոյր կոչելով աստուածակառք, / յաննիւթական տարեալ քաղաք:
բ. 282ա [Նորին] Անդրադարձութիւն տառիս յիշատակի («Ք-Ա») – Քաղցրագունիս այս բաղձանաւք, / լցեալ հոգիս մեռեալ մեղաւք... աւարտ բանիս, Տէր ողորմեա՛, / առ հասարակ մեզ եւ նոցա:
- ՅԵՏԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ**
- 2ա Թվին ԹՁԳ. (1635) ի յունիս ամսոյ ԻԸ. (28) սկիզբն եղև գրոցս:
- Վերեւում յետագայ ձեռքով արտագրուած այսպէս. «Թվին ԹՅԳ. (1605), ի յունիս ամսոյ ԻԸ. (28)»:
- 68ա Կատարեցաւ Դեւտականն ձեռամբ Գրիգորի մեղուցեալ գրչի:
- 117ա Ո՛հ, գծանրամեղ գրողս գԳրի[գոր], ո՛վ սուրբ եղբայր, յիշեա շա՛յր մեղայիս:
- 137ա եւ զմեղաւոր գրողս յիշեա՛:
- 200բ Ո՛հ, գծանրամեղս գԳրի[գոր] երէց յիշեա՛, ո՛վ եղբայր, որ եմ պանդուխտ աւտար յերկրի:
- 230ա Զծանրամեղ եւ զբազմամեղ գԳրի[գոր] երէցս, որ բազում երկաւք իբր երկունք ծնրնդականի Աստուծոյ ներողութեամբն քերելով ծնայ մինչև ցայսր եւ սկն ունիմ ի Տէր, որ հասուցէ ի զրաւն, որ է արհնեալ յաւիտեանս. ամէն:

234ա Փա՛ռք քեզ, Աստուած, որ ետուր կարողութիւն հասանել ծանրամեղ քերաւղ գրոյս Գրի[գորի] երիցու մինչեւ ցայսր: Եւ արդ, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, յոյս գքեզ ունիմ, որ յաշողեսցես եղկելոյս յառաջակայ այսմ սուրբ Աստուածաշունչ կտակիս մտանել ի հունն եւ ի զրան հասանել, որ է արհնեալ յաւիտեանս. ամէն: Հայր մեր, որ յերկինս՛:

406ա Տարտամս յիմաստս սուրբ գրոց, / որովք սնայ յարբունս տիոց, / ահա կարաւտ սոցին համոց, / գտայ գերեալ յաւտար հոգոց: / Ուստի հարեալ սրտիս ի խոց, / եւ տոշորմանս, որ կայ յիս բոց, / զայս սրսկեմ կաթն անձրեւոց, զձեռահիւս սուրբ գրոց, / Մի՞թէ գնացիւք այսոց գետոց, / իմ զովասցի ծարաւս ոգւոց, / եւ սփոփեսցի յիրոց ցաւոց, / սրբեալ տաճար Տեառն աւթանոց: / Այսու յուսով յերկս վաստակոց / կամ ի յորունց մէջ ի հոգոց, / զի արծարծեալ ճրագս իմ բոց, / մի՛ խրթնացի յաւտար հողմոց:

418ա Արհնութիւն, որ կարգայ, գովութիւն, որ լսէ, փա՛ռք տուողին եւ յիշատակ գրչիս. ամէն:

406բ Աղաչեմ գքեզ, Տէ՛ր, եւ գոհանամ զանհաս մարտասիրութենէդ քումմէ, որ արժանի արարեր զարժան ծառայս քո հասանիլ ի ժամ գիշերոյ: Դու ես,

Տէ՛ր, տըվընջեան եւ գոյացուցիչ գիշերոյ, դու պահեա՛յ զծառայս ի կարծեաց ցնորից եւ երկիրէ յերեւելեաց եւ աներեւոյթից, եւ ամրացո՛ւ ի դառնութենէ դիւաց, ի բռնութենէ Բելիարայ, ի սաստիկ սատանայէ, ի փլմանէ շինուածոյս, ի նենգութենէ մարդկան, ի յաղանդոյ կախարթաց, ի մոլար/// (չշարունակած):

ՅԻՇՍԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

482բ (ԺԹ. դ., անարուեստ նոտրգիր) Յիշատակ է ըՍտեփան Բաղդասարեանին ի Գենջէ քաղաքի, որ է եղիսաբեդապոլ: Տէր տացէ հաշողութիւն, եւ Աստուած ողորմեսցի. ամէն:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 482բ. սեւով քառակուսի՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՍՏԵՓԱՆ///»:

ԳՐԶԱՓՈՐԾ՝ 1ա (Բոլորգիր) Ամենա: Մեծ է Տէր եւ օրհնեալ է յոյժ, եւ մեծութեան նորայ ոչ կոյ չափ: Ազգ եւ ազգ գովեսցեն զգործս քո եւ: 482բ՝ «Աստուած, Զ»:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած թերթիկին՝ «360», պհպ. Աս՝ «Հ^{ւր} 360/2628, Առաքեալ է ի վիճակէն Աստրախանայ», «ՌԶԳ.-1635, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս», Բա՝ «1000 000»:


2629

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՍՏԱՅՈՂ՝ Կոստանդին թագադիր իշխան:

Թերթ՝ 281. չգրուած՝ 1ա, 2բ-3ա, 4բ-5ա, 6բ-7ա, 8բ-9ա, 10բ-11ա, 12բ-13ա, 280բ-281բ: ՊՐԱԿ՝ 12+Ա-Շx12 (Ա, Բ, Ե, Խ, Հ, Յ, Ծ՝ 11): ՆԻԻԹ՝ մագաղաթ: ՄԵԾԻԹԻԻՆ՝ 24,7x18,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսին (19,5x12,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 232ա): ՏՈՂ՝ 20: ԿԱԶՄ՝ վարդագոյն թաշապատ տախտակ, արծաթէ կապիչներով (վերինին՝ Պօղոս առաքեալը, վրան՝ «СВЕТОИ АПОСТОЛ ПАВЕЛ»): Ա փեղկին՝ արծաթէ շրջանակ, որի ներսում՝ բոլորակ՝ արծնապատ արծաթէ զարդերով, կենտրոնում՝ Յարութին, վրան՝ «Иисус Христос», ստորին ձախ անկիւնում՝ Դուկաս աւետարանիչը՝ «СВЕТОИ ЕВАНГЕЛИСТЪ ЛУКІА», Բ. փեղկին՝ արծաթէ շրջանակ, որի ներսում արծաթէ փորագրաւանդակներ. կենտրոնում՝ բոլորչու վրայ Աստուածամայր մանուկ Յիսուսը գրկին՝ «Иисус Христос, М'р Д'у», անկիւններում՝ մէկական սերովբէ, աստաղթ թուրք. լուսանցակողերը՝ ոսկեգոյն: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա, Բ, սկզբ. Ա.՝ թուրք, մաս կազմաստաղի, Բ.՝ մագաղաթ՝ չգրուած:



Նմուշ 232ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Մատթեոս՝ 13բ, Մարկոս՝ 92բ, Դուկաս՝ 139բ, Յովհաննէս եւ Պրոխորոն՝ 221բ: Խորան՝ 1բ, 2ա, 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ, 10ա, 11բ, 12ա: Կիսախորան՝ 14ա, 93ա, 140ա, 222ա: Լ ս ն ց - ա յ ի ն՝ Բարտիմէոս կոյր՝ 121բ: Լ ու - ս ա ն ց ա զ ա ր դ՝ բուսական (147 հատ), տանար (3), վարդեակ (6), խաչ (9): Զ ա ր դ ա զ ի ր՝ թոչնագիր (33), բուսական (63), հանգուցագիր (52), կենդանագիր (39), բուսական՝ մարդաղիմ (25ա), երկու յովկապարիկ եւ թոչուն (193բ): Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, նարնջի, վարդագոյն, մանուշա-

ԺԳ. դար

կազոյն, շագանակազոյն, մոխրագոյն, սպիտակ, սեւ, ոսկի: Զարդագրերը, լուսանցագրերը (բացառութեամբ անուանաթերթերի) եւ լուսանցային նկարը գծանկարային են:

ՎիճԱԿ՝ բաւարար. ձեռագիրը եզրահատած, կազմի Ա. փեղկի վերին երկու անկիւնների բոլորակ արծնապատ արծաթէ զարդերը եւ ստորին աջ անկեան արծնը, ստորին արծաթէ կապիչն ընկած, մանրանկարների գոյները տեղ տեղ վնասուածներով. ք. 225ա՝ ստորին ձախ անկիւնի պատռուածը կարկատուած ժԱ. դարի ձեռագրի թերթի փոքր հատուածով (6x0,8), որի վրա «///րեալ///» (երկաթագիր), ք. 274ա եւ 278բ մէջը ամրացած Թ. դարի ձեռագրի թերթի հատուածով (24,5x1,6), որի վրայ (274ա) «///Զի ուր իցեն երկու/// [ծախայից իւրոց///» [Աւետարան ըստ Մարթնոսի ԺԼ. 20, 23], երկաթագիր, երկսին:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

1. 1բ-2ա Թուրք եւսերիովի:
2. 11բ-2ա, 3բ-4ա, 9բ-10ա, 5բ-6ա Համբարբառ (Կանոն Ա.Ժ.):
3. 14ա-92ա Աւետարան ըստ Մատթեոսի:
4. 93ա-139ա Աւետարան ըստ Մարկոսի: 139ա՝ Գլովիմ ՄԼԳ., Տունն ՌՈ.:
5. 140ա-221ա Աւետարան ըստ Դուկասու: 221ա՝ Գլովիմ ՅեԳ., Տունն ՍՊ.:
6. 222ա-278ա Աւետարան ըստ Յովհաննու (242բ «Իրք կնոջն շնացելոյ». այսչափ, բնագիրը չկայ):

Գլխաբաժանումներում կան «Յ[ուանկի]» համարներ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

74բ (արտ. լս., գրչի) Ֆռ.՝ սուրբ ստ՝ զայս կարդ[այ]:

139ա Շնորհեա՛ մեզ, Տէ՛ր, ընդ երկայն աւուրս զԿոստանդին բարեպաշտ իշխան թագադիր Հայոց Կիլիկեցոց նահանգիս եւ տէր Սարուանդիբար[այ]:

Տպ.՝ ԺԳ. դ. յիշ-բ, էջ 483:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 278բ (1423 թ., բոլորգիր) Ի թվականութեանս հայոց ՊՂԲ. (1423), ի հայրապետութեան տեառն Պաղոսի եւ ի առաջնորդութեան հրշակաւոր եւ աստուածապահ քաղաքիս՝ արի եւ քաջ ընդառնապետիս՝ Մատթէոս վարդապետի, որ է ժառանգ եւ աթոռակալ եւ աշորդ գլխոյն համայնի Հայոց տեառն տէր Պաղոսի կաթողիկոս ամենայն հայոց: Արդ, ի յայս ժամանակիս այր ոմն բարեպաշտ եւ հաւատարիմ, համեստ եւ պարկեշտ, որոյ անուն կոչի Խաւնզաւ, որ է կենակից հանդիսաւոր, անուանի եւ պատուելի մեծ խաւճային՝ պարոն Ամիրին, որ յայսմ ամի բարիոք քաղաքավարութեամբ հանգեաւ խաղաղութեամբ եւ փոխեցաւ ի յոյսն ամենեցուն Քրիստոս. արդ ցանկացող եղեւ յայսմ աստուածային հրամանիս եւ անկողոպտելի գանձիս Խաւնզաւ խաթունն եւ գնեաց զսա ի հալալ արդեանց իւրոց՝ յիշատակ իւր եւ կենակցին իւրոյ՝ խաւճաւ Ամիրին՝ փոխեցելոյն ի Քրիստոս, զմտաւ ածելով զայն եւս, թէ սնտորի եւ անցաւոր է |279ա| փառք եւ մեծութիւն աշխարհիս եւ առ բոլոր բարութիւն երանելի կենացն եւ անպատում ուրախութիւնսն ոչ երեւի, զի այս ոչ յուրվից է նախապատուելի, այլ որոց մտաց աչքն պայծառ լուսով հոգւոյն են վայելչացեալք, որպէս եւ սորայս, զի հոգւոյն ակամբ նայեցեալ յաստուածայինսն, այսինքն՝ ի հրաման գլխոյն մերոյ եւ Աստուծոյ, որ ասէ, թէ՛ Զամենայն զոր ինչ ունէր, երթալ, վաճառեաց եւ գնեաց, զայն մարգարիտ. եւ դարձեալ թէ՛ Մի՛ գանձէք ձեզ գանձ յերկրի, այլ յերկինս, որ ոչ ցեց ուտէ եւ ոչ ուտիչ ապականէ: Եւ ըստ Սողովմոնի զասացեալն, թէ՛ Լաւ է զվաճառն զայն գտանել, քան զգանձս ոսկւոյ եւ արծաթո, եւ թէ՛ Երանի, որ ունիցի զաւակ ի Սիրոն եւ ընդանի յերուսաղէմն վերին, որ եւ ստացաւ զսուրբ Աւետարանս զայս, զանանց գանձարանս եւ զաստուածունակ ճեմարանս, որ է թագ պարծանաց եւ պսակ փառաց սրբոյ եկեղեցւոյ նայ եւ ամենայն սրբոց առաքելոց եւ մարգարէից, |279բ| հայրապետաց եւ բազմաշարշար մարտիրոսաց, վասն զի արեգակնապէս լուսաւորէ զընթհանուր հաւատացեալքս:

Արդ, ստացաւ զսա իբրեւ զհոգեւոր գանձ եւ զանշիջանելի լապտեր եւ ամենագով պարգեւ, պատճառ փրկութեան եւ առաջնորդ երկնաշու ճանապարհին: Եւ ընծայեաց զսա Խաւնզաւ խաթունն ամէնարհնեալ զաւրեղ զաւրավարին Սրբոյն Սարգսի եկեղեցւոյս, եւ մի՛ ոք իշխեսցէ հանել զսա ի դրանէ Սրբոյն Սարգսի՝ ո՛չ վաճառելով, ո՛չ գրաւկնելով եւ ո՛չ գողանալով: Եթէ՛ ոք յանդգնեսցի անզգամութեամբ եւ խորհեսցի հանել զսա ի դրանէ Սրբոյն Սարգսի, մեր մեղացն պարտական լիցի եւ նզովեալ եղիցի յԱստուծոյ եւ ի զաւրեղ զաւրականէն իւրոյ եւ ի սուրբ աւետարանչացն. ամէն:

Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան՝ որք աւգտիք ի սմանէ ընթեռնելով կամ արինակելով կամ զաղաքարելով, յիշեսչիք ի մաքրափայլ յա|280ա|ղաւթս ձեր զխարճաւ Ամիրն՝ զփոխեցեալն առ Քրիստոս եւ զկենակիցն իւր՝ զԽաւնզաւ խաթունն, եւ զամենայն ծնաւղսն իւրեանց, զի ողորմեսցի ամենագութն Աստուած եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն սղալանաց սոցա եւ գրեսցէ զսոսա ի գիրն կենաց, եւ արժանի արասցէ անճառ ցնծութեանն եւ երանելի հանգստեանն, սրբոց պարակցութեանն եւ յաւիտենական ուրախութեանն. ամէն: Եւ ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի բարերարն Աստուած, յորժամ նստցի յաթոռ փառաց իւրոց, անդ, ուր բանք սպառին եւ գործք թագաւորին, քաղցրութեամբ եւ ողորմութեամբ նայեսցի ի ստացաւ սուրբ Աւետարանիս եւ յիշողքն իւրեանց. ամէն:

Մասամբ տե՛ս ժե. դ. յիշ-բ, մասն Ա., էջ 310:

2. Պահպանակ Աբ (1792 թ., անարուեստ նոտրգիր) Զսուրբ Աւետարանս շնորհեսցի նոր Նախիջեւանու Սուրբ Խաչ վանքին. Յովսէփ արքեպիսկոպոս [Արղութեանց], 1792, նոյեմբերի 27ին:

ԳՐՉԱՓՈՐՉ Պահպանակ Բբ՝ «Երրորդ»: 1ա՝ «նայ պատասխ. նա պատա. նայգ. արտ ասա. նայ. նա. նայ պա»: 281բ՝ «ասա, նայ տացէ, զոր ինչ չ, Ա, գլ»:

ՆԿԱՐԱՓՈՐՉ Պահպակ Բբ՝ մարդկային ձեռք:

ՆՇՈՒՄ՝ Աա՝ «365/2629», «ՊՂԲ. – 1423 Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»: Պհպ. Աբ-ին տոսնձած թղթիկին՝ «Ստացող Խաւնզաւ-խաթունն՝ կին խաւճայ պարոն Ամիրի: Ընծայուած Յովսէփ Արղութեան արքեպիսկոպոսից նոր Նախիջեւան Ա. Խաչ վանքին, թուին 1792, նոյ. 27ին»: Աբ՝ «Ծան.՝ ՊՂԲ. թուականը գրութեան տարին չէ, այլ ստացման»:

2630


Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ՍԿԵՒՈՒ

ՉԼԹ. – 1290

ԳՐԻՉ՝ Ստեփանոս Բանանայ: ԿԱԶՄՈՂ՝ Կոստանդին ոսկե-
րիչ: ՍՍԱՅՈՂ՝ Թորոս Կոստանդնուպոլսեցի:

ԹԵՐԹ՝ 306. չգրուած 1ա, 6բ-7ա, 88բ, 144ա, 234ա: ՊՐԱԿ
7+Ա-ԻԱx12 (Ա՝ 14, է, ժԲ՝ 13, ԻԲ՝ 11, ԻԵ՝ 8): ՆԻԻԹ՝ մագաղաթ
(թուղթ՝ թ. 7, 89, 144 և 234): ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22,3x17: ԳՐՈՒԹԻԻՆ՝
երկախն (19,5x12,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 77ա): ՏՈՂ՝ 20:
ԿԱԶՄ՝* նարնջի թաշապատ տախտակ, մետաղէ կապիչներով
(վերինին՝ Պօղոս առաքեալը, վրան՝ «Светои апостол Па-
велъ», ստորինին՝ Պետրոս առաքեալը՝ «Светои апостол
Петръ»): Ա. փեղկին՝ մետաղէ շրջանակ, որի ներսում՝ բոլորակ՝
արծնապատ զարդերով (Սուրբ Երրորդութիւն, Քրիստոսը խաչե-
լովքինից յետոյ, խաչին թիկնած, վրան՝ «Иисус Христос» և
«БОГЪ ОТЕЦЪ»), վերին աջ անկիւնում մետաղէ արծնապատ
շրջանակ, որի ներսում Յովհաննէս աւետարանիչը՝ «Светои
евангелистъ Иоаннъ», կողքին մետաղէ արծնապատ շրջանակ,
մէջը Մատթէոս աւետարանիչը՝ «Светои евангелистъ Мат-
вейъ», ստորին ձախ անկիւնում մետաղէ արծնապատ շրջանակ,
ներսում Դովկաս աւետարանիչը՝ «Светои евангелистъ Лукіа»,
կողքին մետաղէ արծնապատ շրջանակ, մէջը Մարկոս աւետա-
րանիչը՝ «Светои евангелистъ Маркъ», Բ. փեղկին՝ մետաղէ
շրջանակ, որի ներսում փորագրաւանդակներ (կենտրոնում՝ բո-
լորշու վրայ, Աստուածամայրը մանուկ Յիսուսը գրկին՝ «Иисус
Христос, М’р Д’у», անկիւններում՝ մէկական սերովբէ): Ա. և
Բ. փեղկերը երիզուած մետաղէ եզրագօտիով. միջուկը տախ-
տակ, աստաղը Ա՝ թուղթ, յուսանցակողեր՝ ոսկեգօծ: ՊԱՀՊԱ-
ՆԱԿ՝ Ա+ԲԳ, թուղթ, յուսագծերով և յուսադրոշմով՝ «RMCР» և
երկարակորթ տապարով ստնէտ, վերեւ՝ թագ: Կազմի մասին
տե՛ս Էմմա Կորիսմագեան, Հայ-նուսական մշակութային կապե-
րի արտացոլումը արուեստի ասպարէզում».- Բանբեր Մատենա-
դարանի, հտ. 13, Երեւան, 1980, էջ 211-22:



Նմուշ 77ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Մատթէոս՝ 7բ, Մարկոս՝ 89բ, Դու-
կաս՝ 144բ, Յովհաննէս և Պրոխորոս՝ 234բ: Խ ո Ր ա ն՝ 1բ-2ա,
2բ-3ա, 3բ-4ա, 4բ-5ա, 5բ-6ա (վերջինը թերի): Կ ի ս ա խ ո Ր ա ն՝
8ա, 90ա, 145ա, 235ա: Լ ո ս ա ն գ ա զ ա Ր ղ՝ բուսական:
Չ ա Ր դ ա զ ի Ր՝ թոշնագիր, հանգուցագիր: Գ ո յ ն ե Ր՝ նկարնե-
րինը և խորաններինը՝ կարմիր, կապոյտ, ոսկի, մանուշակա-
գոյն, շագանակագոյն, կանաչ, դեղին, սպիտակ, մնացածները՝
մուգ կարմիր:

Խորանների (1բ-5բ) գունատուրը ժէ. դարի է, իսկ աւե-
տարանիչների նկարները 1621 թ. (գուգէ և՛ ժԸ. դ.) յաւելում են
(տե՛ս յիշ. 143բ), եւրոպական մանրանկարչութեան ակնյայտ
ազդեցութեամբ: Տե՛ս Աստղիկ Գեորգեան, Անանուն հայ մանրա-
նկարիչներ, մատենագիտութիւն, IX-XVII, Կահիրէ, 2005, էջ 65:
Տե՛ս նաև Աստղիկ Գեորգեան, Հայ մանրանկարիչներ, Մատե-
նագիտութիւն, IX-XIX, Կահիրէ, 1998, էջ 699:

ՎԻՃԱԿ՝ բասար. կազմի թափշը թափուած, աստաղին և
պնակ-ներին, թ. 1-7, 299-306՝ ցեցի անցեր, թ. 209-10, 233՝ հիւմ-
փից մասամբ պոկուած, հիւմփերի մօտ կեղտոտուած, թերթերին
խոնաւութեան և աղտոտուածութեան հետեւ:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1. 1բ-2ա Թուղթ եւսերեայ:

2. 2բ-6ա Համաբարբառ (Կանոնք Ա.-Ժ., նաեւ լու-
սանցային):

3. 8ա-88ա Աւետարան ըստ Մատթէոսի:

4. 90ա-143ա Աւետարան ըստ Մարկոսի («Յարու-
ցեալ Յիսուս»՝ 142ա-3ա)

5. 145ա-233ա Աւետարան ըստ Դովկասու:

6. 235ա-302բ Աւետարան ըստ Յովհաննէսու («Իրֆ
կնոջն շնացելոյ»՝ 302աբ):

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԳ. դար.

306բ Աղապք վասն երաշտութեան – Տէ՛ր Աս-
տուած մեր, որ յաղագս առ քեզ նախանձուն... եւ քեզ
վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ
եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

302բ (Գրչի) Փառք ամենասուրբ Երրորդութեանն՝
Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն: Որ տայ զարուսթիւն յինքն
հայեցողաց ի ներհակ եկամտիցն պարսպել զանձինս
եւ բնաւորական արարչադիրն հետեւել սահմանի, որով
զբնաւորական շարժումն իմաստապէս մարթ է յարի-
նել աստուածային սիրովն ուղերձեալ եւ սիրալիր համ-
բուրիւ զսեպհականն |303ա| ողջունել կեանս, յար ի
գլուխն ըստ իմաստնոյն հայեցմամբ: Ըստ որում է եւ
այժմու յիշատակեալ քահանայս Թորոս, որ է յաշխար-
հէ թագաւորական քաղաքին Կոստանդինուպոլսի, ի
գաւառեն, որ կոչի Ակոտաւն, ի բերդէն, որ կոչի Շի-
կաւն, եւ յերիտասարդական հասակին թողեալ
զճնաւդս եւ զազգայինս, լնլով զտէրունական հրամանն
ուսուցնասիրութեան, փափագ[մ]ամբ պանդխտեալ
յաշխարհս Կիլիկիոյ, շրջելով յանապատս եւ ի վանո-
րեայս, եւ առաքինութեան վարուք արժանի լեալ քա-
հանայութեան աշտիճանի եւ ըստ բնաւորական բարէ-
սէր բարուցն մեծաւ ըղձիւ ստացաւդ եղեալ քառա-
վտակ սուրբ Աւետարանիս, յորոյ բղխմանէ սորա կեն-
դանածնեալ նորոգին ամենայն ազգք եւ ազինք, ի վա-
յելումն սրբասէր անձին իւրոյ եւ ի յիշատակ հոգւոյ
իւրոյ եւ ծնո |303բ|ղաց իւրոց եւ եղբարոց, որ եւ զայս
աւանդէ, զի յետ մահուանն իւրոյ՝ ուր եւ հանդիպի,
ըստ ժառանգութեան իրերաց մի՛ ոք իշխեսցէ վաճա-
ռել զսա, այլ մնասցէ յիշատակ հոգւոյ իւրոց եւ ծնո-
ղաց իւրոց, եւ թէ՛ ոք ստունգանէ, ընդ բանիւ եղիցի:

Արդ, եղև գրչութիւն սորա ի թուականիս ՉԼԹ.
(1290), ի հայրապետութեան առաջին ամին տեառն
Ստեփանոսի եւ յիշխանութեան թագաժառանգ ծիրա-
նածին պարոնին Հեթումոյ՝ որդւոյ Լեւոնի արքայի, ի
սուրբ եւ ի գերահռչակող ուխտս Սկեւա, որ է առըն-

թեր անմատոյց դղեկիս Լամբրունի, ընդ հովանեա Սուրբ Փրկչիս եւ կենսակիր Սուրբ Նշանիս եւ մար լուսոյ Աստուածածնի, ձեռամբ ամենամեղ քահանայի Ստեփանոսի:

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք զսա եւ լուսաւորիք կամ ընդարինակէք, յիշեսչիք ի Քրիստոս զյառաջասացեալ պատուական քահանայն |304ա| Թոռոս եւ զծնաւզնն իւր եւ զեղբարս եւ զքնաւ զարմն նոցին: Ընդ նմին եւ զամենամեղ գրիչս Ստեփանոս եւ զծնաւզնն իմ եւ զուսուցիչս իմ: Եւ որ ընդունաւն է աղաւթից՝ Տէր Յիսուս Քրիստոս, յիշելոցս եւ յիշողացս ողորմեսցի, եւ ինքն աւրհնեալ եղիցի ընդ Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ <Սրբոյ> այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Տէս ԺԳ. դ. յիշ-ք, էջ 658-9:

ՅԵՇԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 304ա (կոստողղի. բոլորգիր) Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս. ամէն: Ի թուականին 296. (1296). աստուածին ամենառատ բարերարութեան զլոյս գիտութեան հանապազ ծագէ ի սիրտս հաւատացելոց, զհոյր սիրոյ իւրոյ բորբոքեալ ի հոգիս: Արդ, աղաչեմ զամենեսեան, ո՛վ պատուական դասք լոյս երամայից, յիշեսչիք ի մեղաքաւիչ, երկնաթռիչ յաղաւթս ձեր զԿոստանդին եւ զամուսին իւր զԿալի, որ ի նմին ամի փոխեցաւ ի Քրիստոս, զի բազում աշխատութեամբ |304բ| աշխատեցաւ եւ կոստղեց զԱւետարանս զայս: Արդ, որք ընթեռնոյք, յիշեսչիք յաղաւթս ձեր զԿոստանդին ոսկերիչ եւ զծնողս իւր, եւ որ յիշէքդ, յիշեալ եղիչիք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

2. 306բ (ԺԳ. դ. յաւելագրողի) Յիշեսչիք յաղաւթս ձեր զՍովունչ դպիրս:

3. 305ա (1352 թ., անարուեստ բոլորգիր) Արդ, ցանկացող եղեալ այսմ տիեզերաշուս սուրբ Աւետարանիս Յուստինիէ՝ դուստր Արսէնի, ստացօ զսա ի հալալ ընչից իւրոց՝ զբուրաստանս ծաղկաւէտ եւ զգանձս աստուածային, դրախտ անուշահոտ եւ ծառ քաղցրաճաշակ, որ ունի զխորհուրդ շորից գետոցն ճղեմայ՝ ի լուսաւորութիւն քրիստոնէից եւ ի պայծառութիւն սուրբ եկեղեցոյ, ի թ[վին] ՊԱ. (1352), ի հայրապետութիւն տեառն Մխիթ[ա]րայ եւ ի յայսմ նահանգիս առաջնորդութեան տեառն Ստեփանոսի արքեպիսկոպոսի ամենայն հիւսուսական կողմանց: Ստացաւ զսայ Յուստինիէն յիշատակ անջնջելի եւ բարեխաւս անմիջելի եւ եզ զսա ի ժառանգութիւն Սուրբ Աստուածածնին, որ է պարոն Խաչերեսին, ի մայրաքաղաքս Սուլխաթ, ըստ մարգարէին, որ ասէ, թէ՛ Երանի, որ ունիցի զաւակ ի Սիոն, եւ ընդանի յերուսաղէմ: Արդ, մի՛ ոք իշխեսցէ հանել զսա յեկեղեցոյ Սուրբ Աստուածածնին Սուրխաթ քաղաքի, եւ ոչ ոք տէր կամ

111ա Քրիստոս Աստուած, բարեխօսութեամբ եւ աղօթիւք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ողորմեա՛ ստացողի գրոցս Վարդան քաջ եւ սրբասէր վարդապետին, եւ իւր ծնողացն, հօրն՝ Եղիային, եւ մօրն՝ Ղարիպին, եւ եղբարցն՝ Խաչատուրին եւ Խօշիաբարին, եւս առաւել՝ հոգեւոր ծնողին իւրոյ Խաչատուր բաբունապետին եւ հոգեւոր որդոց իւրոց՝ Աբրահամ վարդապետին եւ Սարգիս պատանեկին: Զի յոյժ սիրով եւ փափաքանօք ետ գրել զգիրքս զայս՝ յիշատակ իւրն եւ ծնողաց իւրոց: Յիշելով զբանն մարգարէին, որ ասէ. Երանի, որ ունիցի զաւակ ի Սիոն. այսինքն՝ յեկեղեցի, եւ ընդանեակս ի վերինն Երուսաղէմ: Արդ, աղաչեմք զձեզ, ո՛վ հոգեւոր հարբ եւ սիրելի եղբարք, որք հանդիպիք այս սուրբ տառիս, ինչ կերպիւ եւ իցէ՛ թէ՛ կարգալով, թէ՛ օրինակ դնելով եւ կամ հարեւանցի տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՎարդան քաջ եւ բաբունի վարդապետն՝ զԲաղիշեցին, որ իբրեւ զարեգակն փայլէ եւ լուսաւորէ զխաւարեալ եւ մեղսասէր մարդիկք, ասելով եւ խրատելով, եւ զամենեսեան դարձուցանելով ի շարեաց քաղցր բարբառովն եւ Աստուածային քարոզութեամբն: Զի միշտ եւ հանապազ ո՛չ դադարի ի քարոզելոյ եւ յուսուցանելոյ: Քանզի զբազում ժամանակաց զխանգարեալ եւ զաւերեալ եկեղեցիսն նորոգեալ կանգնեաց, եւ զոչ եղեալսն շինեաց ի հիմանէ, եւ այլ բազում բարեգործութիւնս արար ի վերայ երկրի, զոր ոչ կարեմ մի ըստ միոջէ արկանել ի շարս քարտիսիս: Այլ բարեաց հատուցանողն, որ տայ սիրողաց իւրոց զիւր անճառ բարիսն, տացէ նմայ եւ զիւր երկնից արքայութիւնն՝ ի միւսանգամ զալստեանն իւրում, եւ ի կեանս յայս ընդ երկայն աւուրս պահեսցէ զնա. ամէն: Ես՝ Պօղոս երէցս, գծող սորա, աղաչեմ զձեզ, զի յիշման արժան առնէք զիս:

146բ ԶՊօղոս մեղապարտ երէցս յիշման արժանի արա՛, ոտիցդ հող եմ եւ փոշի:

147ա ԶՎարդան վարդապետն եւ զԾնողսն իւր՝ զԵղիէն եւ զՂարիպն, եւ զուսուցիչն՝ զԽաչատուր վարդապետն, յիշեցէք ի Քրիստոս Աստուած եւ լի բե-

րանով Աստուած ողորմի ասացէք Վարդան վարդապետին, եւ որ յիշողքդ յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի: Եւ Պօղոս գծողս զտոգ կու համբուրէ, որ թէ յիշման արժան առնես: (Բ. սիւնեակի տակ) Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՎարդան վարդապետն եւ զԾնողսն իւր, զհայրն՝ զԵղիէն եւ զմայրն՝ զՂարիպն, եւ զեղբարքն՝ զԽաչատուրն եւ զԽօշիապարսն, եւ Աստուած ողորմի ասացէք նոցա. ամէն:

159ա Արդ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, ո՛վ ընթերցողք, զՎարդան վարդապետն զԲաղիշեցին, որ ետ գրել զպատմագիրքս՝ յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց. յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք:

169ա ԶՎարդան վարդապետն զԲաղիշեցին յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք իւրն եւ ծնողաց իւրոց եւ եղբարցն, եւ ուսուցչին՝ Խաչատուր վարդապետին, եւ Բաբունեց Յովաննէս վարդապետին, եւ ինձ՝ մեղաւոր Պօղոս սուտ երիցո՛ւ գծողի տառիս, եւ դուք յիշեալ լիջիքլ:

210բ Արդ, յերես անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ սուրբ հարբ եւ վարդապետք, եւ իմաստուն ընթերցողք այսմ տառիս, զի յիշման արժան առնէք զխորին փիլիսոփայն եւ զհոգիւրնկալ վարդապետն՝ զՎարդան Բաղիշեցին, որ յայսմ ամի ի հալածանս է յանիծեալ ազգէն մահմեռականաց, յերկիրն Սուրացոց, որ այժմ Հազու վերածայնի: Որ յայսմ հալածանաց միջի ետ գրել զգիրս՝ յիշատակ իւրն եւ ծնողաց իւրոց: Եւ ես, Պօղոս սուտ երէցս, որ եմ գծող տառիս, աղաչեմ զձեզ, զի յիշման արժան առնէք զիս:

244բ Փա՛ռք անհասանելի եւ միասնական Սուրբ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Որ կարողացոյց զիս ծրագրել զպատմութիւն թագաւորացն մերոց՝ ի Յաբեթէ սկսեալ մինչեւ ի Սահակ հայրապետն Պարթեւն: Աղաչեմ զձեզ զամենեսեան յիշելոյ եւ թողութիւն խնդրելոյ յանոխակալ եւ յանյիշաշար Տեառնէն արժանի առնէք զՎարդան վարդապետն զԲաղիշեցին եւ զԾնողսն իւր՝ զԵղիէն եւ զՂարիպն, եւ զեղբարքն՝ զԽաչատուրն եւ զԽօշիաբարն, եւ զամենայն արեան մերձաւորսն նորա: Եւս առաւել՝ զհոգեւոր հայրն նորա՝ զԽաչատուր քաջ վարդապետն զԲաղիշեցին եւ զԲաբունեց Յովաննէս վարդապետն, որ նա եւս բազում աշխատութիւն ունի ի վերա նորայ, իր գրոց սերտցուն, եւ զիւր աշակերտն՝ զԱբրահամ վարդապետն զՀամթեցին, եւ զիս զանարժանս, զնորին անառակ որդին՝ զՊօղոս սուտ եւ խաբեբայ երէցս, որ եմ գծող սորա, որ բազում երախտիք ունի ի վերա իմ հոգեւոր եւ մարմնաւոր: Եւ դուք՝ յիշողքդ զմեզ, յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի. ամէն: Թողութիւն արա՛, խիստ եմ նեղացեր:

270ա Զբազմալէր հոգիս եւ զաղբատս ի բարեաց եւ զլրացեալս ի շարեաց՝ զՊօղոս գրիչս, զտարտա-

մեալս եւ զտարագրեալս ի կենաց կտակէն, պատահողք սմա յիշման առնէ՛ք արժանի: Եւ եւ զստացօղ տառիս՝ զՎարդաւան վարդապետն եւ զիւր ծնօղսն, եւ զամենայն երախտատորքն իւր, եւ դուք յիշողքդ յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի. ամէն:

356ա Այց ինձ եւ յայս ճառս դարձեալ պիտոյ է գալ, եթէ Տէր ինքնին կամեսցի: Եղիշէ վարդապետն ասէ:

356բ [Փ]ա՛րք Հօր անսկզբան, եւ Որդւոյ անսկզբան եւ սկզբան, եւ Սրբոյ Հոգւոյն անքննաբար ի նոցունց էութենէ, անհատաբար եւ անսպառ բոլսմանն, եռատրո՛հ անձնաւորութեանն, եզաբուն բնութեանն, միակամ եւ միահեծան իշխանութեանն, ամենակալ եւ անվախճան թագաւորութեանն, միասնական ամենասուրբ Երրորդութեանն, յամենից շնչոց կենդանեաց՝ իմանալեաց եւ զգալեաց, որ յանէից եղեալ գոյացան, ի նորին զարհուրելի հիահրաշ հրամանացն, եւ ի լրումն նորայն կամաց, անհատ եւ անվճար օրհնութիւն, գոհութիւն եւ անդադար փառաբանութիւն, ի վեր քան զմիտս եւ անդր քան զպայմանն, անեզր յաւիտենիւ եւ յաւիտենի յաւիտենից. ամէն:

[Ա]րդ, զի որպէս երիս երբեակս իմացուցանեն դասակարգութիւնս հրեշտակաց ի միտս մեր գիրք աստուածայինք, գոլ փառա՛խանիչս ստեղծագործողին իւրեանց, այսինքն՝ անմարմին զուարթունք, նոյն ձեռով տարագու երիս կարգադրութիւնս տեսանի ի սուրբ եկեղեցի, որ ճշմարտապէս երկին է ի յերկրի, առ ի պայծառութիւն եւ ի լուսաւորութիւն ընդհանուր տիեզերածաւալ մարդկութեանս սեռի: Նա եւ ի փառաբանութիւն մարմնառիկ տնօրէնութեան միածնի մարդացելոյ Բանին Աստուծոյ, առ ի քարոզել եւ հոշակ հարկանել զփրկութիւնն եւ զերախտիսն Աստուծոյ, որ ի նմանէն ի մեզ ծաւալեցաւ, եւ այս ոչ ի ձեռս հրեշտակաց եւ անմարմին գերաշխարհիկ զինուորութեանց, այլ ի ձեռն հազարապետացն Աստուծոյ՝ Քրիստոսի ասեմ առաքելոցն, զոր յօրինեալ շարակարգէ ընտրեալն եւ զարմանալին այն Պօղոս յիւրականն թխափ ասելով. «Եւ զորս եդ Աստուած յեկեղեցւոջ այս են. նախ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ՝ զվարդապետս»: Եւ այս ո՛չ վարկպարագի եւ ունայն [գոլ], որք դասեցան մի զկնի միմեանց, այլ խորհուրդ իմն յայտնեալ տեսանին ի նոսա: Վասն զի համաքատակ եւ նմանասարաս են լուսաւորացդ, որ յերկինս արեգականն՝ առաքեալք, եւ լուսնին՝ մարգարէք, եւ աստեղաց՝ վարդապետք: Եւ որպէս զանագան են լուսաւորութիւնք լուսաւորացդ. ոմն՝ զցայգ, եւ ոմն՝ զցերեկ, այսպէս են եւ |357ա| բանք տեսանողաց եւ լուսատուաց հոգւոց մերային զարմից: Եւ որչափ էր կար եւ հնար նոցին, լուսաւորեալ պայծառացուցին եւ զխաւար տգիտութեան ի միգապատ եւ ի մռայլատեսակ մտաց մարդկայինս ազգի փարատեցին եւ միշտ փարատեն: Եւ ունին վարդապետք զնմանութիւն մարգա-

րէից եւ զտիպ առաքելոց, զի որպէս նորա ի հնումն զինչ եւ պատահէր ազգին իւրեանց, զնոյնն մարգարէանային՝ եթէ տրտմականս, եւ թէ ուրախականս, որպէս նոցին իսկ բանքն յայտ առնեն, այսպէս եւ վարդապետք եկեղեցւոյ, ժրացեալք ի Սուրբ Հոգւոյն, քարոզեն առաքելաբար, եւ մատուցակեն զգինին ուրախարար, եւ սերմանեն զբանն կենաց ի սիրտս հաւտացելոց, եւ արբուցեալ ոռոգանեն ջրովն աստուածային զպասքեալ հոգիս բանաւորաց: Եւ թէ նեղութիւնս ինչ եւ մրրիկ դառնութեան եկեալ ժամանէ յանօրինաց եւ յայլադէմ անաստուած բռնաւորաց, եւ կամ այլ իմն ուղխածեւ փորձութիւնս դիւական ի վերայ հաւատացելոց, յառնեն իբրեւ զմարգարէ եւ պատմեն զանցս աղետից եւ զկսկիծս թշուառութեան, որպէս զԵրեմիայ, եւ կամ իբրեւ զմի ի մարգարէիցն, իւրաքանչիւր ոք իւրում ազգի: Վասն որոյ երրորդ զկնի առաքելոց եւ մարգարէից դասեալ կարգեցան, եւ որպէս աստղ քան զաստղ առաւել է փառօք, նոյնպէս եւ վարդապետ քան զվարդապետ բանիւք գիտութեան եւ վարուք առաքինութեան: Որպէս այլք այլոց ազգաց են պատմօղք, նոյնպէս ազգիս մերոյ եւ զարմի են պատմիչք եւ վիպասանք՝ կորովիքն եւ քաջաբանքն, անյաղթ փիլիսոփայքն եւ յոգնահանձար եւ առատամիտ փաղերայքն:

Նախ Ագանթանգեղոս քաջ քարտուղարն, որ հրամանաւ թագաւորին Տրդատայ, զսուրբ Լուսաւորչին մերոյ Գրիգորի գերաշխէպսն ի կիր արկեալ թուէ, թէ որքանաբար անըմբերելի կարծրագոյն տանջանաց եւ սարսուելի շարշարանաց եւ կրից տարեալ համբերեաց, եւ ապա, թէ որքան ժամանակս յամեալ ի Վիրապն խոր |357բ| եւ անդնդային, ուրանար, իբր յարգանդի մօր, զմերն լինէր յղացեալ զփրկութիւն: Ուստի արեգականասարաս ելեալ ծագեցաւ եւ լուսաւորեաց զխաւարամած երկիրս Հայաստանեայց եւ ծնաւ վերստին, ըստ ասացուածոյ մարգարէութեանն՝ զազգ մի ողջոյն: Եւ այսպէս պատմաբանելով տարեալ զբանն, յանկ ածէ ի փառս Աստուծոյ: Եւ ապա զկնի նորին, մեծիմաստն Մովսէս Քերդողանայրն՝ գեղեցկապէս եւ հարուստ իմաստութեամբ սկսեալ զպատմութիւնս Հայոց, կարճ բանիւք եւ մանուածոյ բառիւք, բայց ընդարձակ մտօք տրոհեալ ի հատորս երիս, հասուցանէ զբանն առ մեծն Իսաակ եւ Մեսրօպ, եւ անդ զաղետալի ողբսն ասացեալ, սակս ամայութեան աշխարհիս եւ երկուց գաւգանաց, դադարէ ի փառս Աստուծոյ: Եւ ապա ընկերք նորին՝ Եղիշէ վարդապետն, որ զՎարդաւանաց զիրսն եւ զքաջապէս նահատակութիւնսն ճառեաց. եւ Ղազար Փարպեցի՝ պատմագիր եւ ճարտասան, զնոյն ոճ երկրորդեաց: Եւ այլք յոգունք, որք մի զկնի միմեանց յանցնիւր ի դարս եւ ի ժամանակս պատմաբանեցին եւ արձան յիշատակի յետ իւրեանց կենդանի թողին: Զորս

ի բազմաց եւ յորովից բազմավէպ պատմութեանց աստուածային որեարցն որք ասացան/// (Թերի):

2. (Գրիգոր գրչի) 429ա Քրիստոս Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց, Գրիգոր գրչիս, եւ ձեզ կարդացողացդ, եւ այսմ տառի ստացողի առհասարակ ողորմեսցի յաւուրն դատաստանի. ամէն:

486բ Այո՛, սուրբ վարդապետ, զոր ինչ ասացեր ճշմարիտ է, զի եւ այժմ նոյնպէս եղեւ եւ լինի հանապազ: Ո՛վ սուրբ ընթերցաւդ եւ եղբա՛րք, գիրքս հին էր եւ արինակս: Յունան վարդապետն կարդացեալ էր զաւրինակն եւ նորոգեալ եւ զպակասութիւն թղթոցն, որ պակաս է, ոչ էր գտեալ, եւ ես ոչ կարացի գտանել: Աղաչեմ զամենեսեան, եթէ գտցի գիրքս այս ուրեք, գրեսչիք զպակասումն թղթոյս եւ դի՛ք ի սմայ. նախ՝ զսկիզբն գրոցս եւ ապա յերիս տեղիս թուղթ մի անկեալ կայ: Եւ եթէ սխալ գտչիք ի սմա, թողութիւն խնդրեցէք ինձ ի Քրիստոսէ յանցանաց իմոց, եւ ծնողաց իմոց, ամէն ազգիս մերոյ եւ յառաջագոյն նախնեաց սրբոց, որ երկրորդեցի զգիրքս վասն յիշողութեան սրբոցն ի պարծանս մեր, եւ անսրբոցն յողբումն թշուառութեան եւ յամօթ յաւիտենից: Քաջքն զօրասցին ի Քրիստոս, եւ տկարամիտքն կորանայցեն: Եւ որք լսենն, աւաղեսցեն զազգիս մերոյ զտառապանս:

486բ Աւարտեցաւ գիրքս Ղազարոս վարդապետի Փարսպեցոյ ձեռամբ բազմավէր եւ անարժան Գրիգոր երիցու, ի հարկէ սրբազան եւ քաջ վարդապետին Վարդան դիտապետի: Արդ, աղաչեմ զընթերցողքդ, յիշեսչիք ի մաքուր յաղօթմ ձեր եւ մեղաց թողութիւն շնորհեսցէք մեղաւորիս: Եւ որ առատն է ի բարիս, պարգեւեսցէ ձեզ եւ մեզ զերկնից արքայութիւն, եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն:

547բ (ստ. լս.) Զյետինս ի գրչաց եւ զառաջինս ի մեղաւորաց, զանարժան, զանարհեստ եւ զան|548ա| իմաստ զԳրիգոր երէցս արժանի առնել աղաչեմ, զձեզ, ով սուրբ ընթերցողք, միով |547բ| ողորմայիւ եւ մեղաց իմոց թողութիւն շնորհել ինձ եւ իմոցն ամենայնի, եւ նա, որ յիշէ, յիշեալ |548ա| լինիցի ի Քրիստոսէ յարդարամէտ դատաւորէն մերմէ՛ Յիսուսէ Քրիստոսէ, եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

562ա Յիշեցէ՛ք զքաջ ռաբունապետն՝ զՎարդան վարդապետն առ Քրիստոս Աստուած, եւ լի բերանով Աստուած ողորմի ասացէ՛ք նա եւ եղկելի գրչիս. ամէն:

3. 142ա (ստացողի) Արդ, ես Վարդան վարդապետս Բաղիշեցիս, ցանկացայ բարի աւուրցն, որ միշտ արծարծէր շնորհք Հոգւոյն Սրբոյ յարժանաւորս իւր, սիրոյ նոցին եւ աղօթիցն տենչացայ եւ ետու գրել զպատմութիւն սուրբ կաթողիկոսացն եւ թագաւորացն, զի աղօթիւք նոցա ողորմեսցի Քրիստոս Աստուած մեզ եւ մերոցս ամենայնի. հօրս իմոյ՝ Եղիային, եւ մօրս՝ Ղարիպին, եւ եղբարոցս՝ Խաչատուրին եւ Խօշխապարին, եւ զաւակաց նոցին: Եւ ես առաւել հոգեւոր հօրս իմ եւ ուսուցչի՝ Խաչատուր մեծ իմաստուն եւ փիլիսոփայ վարդապետի՝ Խաչատուր Բաղիշեցոյն, որ յայսմ ամի, որ զգիրս ետու ծրել, Ժ. (10) ամա յառաջ փոխեալ է առ Տէր: Եւ նորաբողբոջ հոգեւոր որդոցս իմ՝ Աբրահամ վարդապետի Համթեցոյն եւ Սարգիս փոքր պատանեկին, եւ միաբան եղբարոցն ամենեցուն, որ կան ի սուրբ ուխտս Յովաննու Մկրտչի, ի ծառայութիւն սուրբ խորանացս եւ ի սպասաւորութիւն մեզ, որ մականուամբ Ամրդօլու վանք ասի: Արդ, աղաչեմ զձեզ, ո՛վ հարք մեր եւ եղբա՛րք, որք ընթեռնուք եւ հոգեւոր բանս օգտիք ի սուրբ գրոցս, բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէ՛ք ինձ՝ Վարդան վարդապետիս եւ զժագրողի սորա՝ հոգեւոր որդւոյ իմոյ տէր Պօղոս երիցու Գաւրոցոյ, եւ դուք՝ յիշողքդ, յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի. ամէն: Գրեցաւ ի Ռ. եւ ի Ը. եւ ի ԻԱ. (1672) թվին:

4. 4բ (ծաղկողի) Յիշեալ՛ս զիս, Տէր իմ եւ ստեղծող, զՎանեցի Սահակ ծաղկող:


34ա ԶՎանեցի Սահակ ծաղկողս յիշ[եցէ՛ք]:
ԳՐԶԱՓՈՐՉ 5բ «ս, է, ք, եւ», 254ա «Եւ յեղիշէի»:
ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած թերթիկին՝ «611», Ա. փեղկի կազմաստառին փակցուած թերթիկին՝ «Համար 1, 611, 1672», 142ա՝ թուաբանական հաշուարկ՝ «1121/551/1672», պհպ. Բ.՝ «60/3/180 + 30/210»:

2640

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ Մ. ԶԱՄԶԵԱՆԻ ՎԱՀԱՆ ԿՈԶԵՑԵԱԼ ՄԱՏԵՆԻՆ

Կ. ՊՈԼԻՍ
Թերթ՝ 84 (գրչի կշակարում՝ 1-159, որ է՝ 4ա-83ա). չգրում՝ 1աբ, 2բ, 6բ, 73բ, 77բ, 83բ-4բ: ՊՐԱԿ՝ 2+3+Ա-Ըx10 (Ը՝ 11): ՆԻՒԹ՝ թուրք լուսագծերով եւ լուսադրոշմով՝ բուսական ոճաւորմամբ զինանշան, որի 2 կողմերին եւ ներսում ետեւի մէկ թաթի վրայ կանգնած աղիւծ, եւ ոճաւորում թագ, եւ աստղ, եւ՝ Gerolamo Ben to Picardo, եւ «GERVINO»: ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 24,8x18: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (18x12,8): ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 40ա): ՏՈՂ՝ 28: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ ոսկեգօծ սեւ կաշի, միջուկը ստուարաթուղթ. աստաղը ծաղկաթուղթ. լուսանցակողերը՝ ու-

կեգոյն: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա + Բ, չգրում թուրք, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ «CALCAGNO»:



նմուշ 40ա

ՌՄԿԹ. – 1820

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Ձ ա ռ դ ա գ ի ռ՝ թոչնազիր: Գ ո յ - ն ե ռ՝ կարմիր:

ՎիճԱԿ՝ բաւարար. կազմի կաշուի եզրերը մաշուած, Բ. փեղկի կաշին վնասուած, թերթերին աղտոտուածութեան զանազան հետեւեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

2ա-83ա Համառոտութիւն Վահան կոչեցեալ մատենին, շարադրեալ ի Չամչեան հայր Միքայէլէ, առ ի ցուցանել հակառակասիրաց զուղղափառութիւն Հայաստանեայց սուրբ եկեղեցոյս: Յամի Տեառն 1776: Իսկ այժմ գաղափարեցաւ ի վեհափառ հայրապետութեան մօտ լուսոյ սրբոյ գահին էջմիածնի տեառն Եփրեմի գերբնախի եւ սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց, ի թուականիս մերոյ ՌՄԿԹ. (1820), ի Կոստանդնուպօլիս:

ա. 3աբ Թարգմանութիւն արդար վեռոյ սրբազան Պիոսի է. պապին Հռովմայ վասն «Վահան հաւատոյ» կոչեցեալ մատենին եւ հեղինակի նորուն հայր Միքայէլ վարդապետի Չամչեան – Չգիրքն կոչեցեալ «Վահան հաւատոյ ուղղափառութեան Հայոց» մատուցին յատեան... քննութեան ժողովոյն: Թարգմանեալ ի Հռովմ, ի լատինականէն ի հայ, ի Հայր Իգնատիոս վարդապետէ Փափագեան՝ յաշակերտէ տեառն Մխիթարայ արքայի, յամի Տեառն 1815, ի սեպտեմբեր 17:

բ. 4ա-6ա Շարունակութիւն կամ հաստատութիւն յառաջագոյն գրեալ մերումս տեսարանի կամ յայտնի ապացոյց նոր հերձուածող լինելոյ վերապատուելի հայր Միքայէլի Չամչեանց եւ բոլոր միաբանութեան իւրոյ, քաղեալ ի բուն ձեռագիր գրուածոյ իւրոյ, զոր իբր հրաշխի՛մ ձգեցա՛մ ի ձեռս մեր յամին 1815, մարտի Գ. – Չոր ինչ միանգամ գրեալ էր յառաջին անդ... զոր իբր վերջակետ իմն դնէ ի վերջ բանից իւրով ասելով:

գ. 7ա-15բ [Առարկութիւն – Ա]ստանօր վախճան տուեալ նախածանօթ տեղեկութեանց... եւ այսմ եւս յուսամ հանդիպել: Վերջ խնդրոյն մարդեղութեան, մինչեւ յերես 167:

դ. 16ա-21ա Խնդիր Բ. Ի վերայ բոլիման Հոգոյն Սրբոյ – Եւ արդ, վ. հ. Միքայէլ Չամչեանց յաւարտ հասուցեալ գառաջին վիճաբանութիւն իւր... եւ որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ:

ե. 21ա-42բ Ի վերայ եկեղեցոյ – Եւ արդ, խուզել զայս խնդիր պիտանի է քան զամենայն... թէ հայք չիցեն հերետիկոս կամ հերձուածող, բերէ՛ ի վերայ ասելով:

– 37բ-9բ Յօդուած Գ. Թէ քանի՞ ծանր վնաս է վտանգ կարեն յառաջ գալ, երբ անխորհրդարար հերետիկոս կոչէ ո՛ր զայլս – Յարէ գկնի. «Երանի թէ զայս եւեթ մտածէին չարախօսք մեր...»...

– 39բ-42բ Գ. յօդուած ասելով. Թէ զինչ իցէ հերձուածողութիւն – Որով ցուցանի, թէ չէ մարթ իւրի հերձուածող կոչել զեկեղեցին Հայոց...

գ. 42բ-9բ Ի վերայ վերջին օժման – Աքանչելի է ճարտարմտութիւն եւ ճարպկութիւն... եւ վերջն ոչ գիտեմ որպիսի դեղովք ունի բժշկել:

է. 49բ-66բ Վէճ վ. հ. Միքայէլի Չամչեանց ի վերայ ջրախառնութեան՝ համառօտի քաղեալ ի ձեռագիր մատենէ իւրմէ – Այս խնդիր է մէջ ահագին մատենի վ. հ. Միքայէլի... որ եւ ի վերայ տօնի ծննդեան եւ մկրտութեան Տեառն:

– 64բ-5ա «Գիտելի է, ուր վերոյգրեալ բանքն, յորոց վերայ գրեալ կան նշանագիրս ա եւ բ, ի ձեռագիրն սրբագրեալ են, սակայն մեր յայտնի ընթերցեալ՝ եղաք յայսմ ներգործութեամբ եւ այն ընդ փակագծի միայն՝ առ ի յայտնելոյ զգիտումն բանից հեղինակին, եթէ վասն որոց խօսի եւ վասն որոց պնդեալ է»:

ը. 67ա-9ա Վէճ վ. հ. Միքայէլի Չամչեան նոր պաշտպանին ուղղափառութեան Հայոց, որ ի վերայ տօնի ծննդեան եւ մկրտութեան, համառօտի քաղեալ ի բուն ձեռագիր մատենէն իւրմէ – Թէպէտ չէին կամք մեր ի սոյն խնդիրս պատաղիլ սակա թեթեւութեան նիւթոյն... որով դադարէր ամենայն վեճ հակառակութեան ի վերայ այսպիսի նիւթոյ, յերես 377: Վերջ:

թ. 69բ-73ա Վէճ վ. հ. Միքայէլի Չամչեանց ի վերայ քաւարանի՝ համառօտի քաղեալ յընդարձակ ձեռագիր մատենէ իւրմէ – Յոյժ ճարար ոք է վ. հ. Միքայէլ Չամչեան... եւ ի նոյն վայելել անխորժեմք ի փառս Քրիստոսի փրկչին մերոյ եւ Աստուծոյ. ամէն: Ի հայր Միքայէլ վարդապետէ Չամչեան, 1776:

ժ. 74ա-7ա Յայտարարութիւն դասնութեան վ. հ. Պօղոս վարդապետի Թընկերան՝ աշակերտի վ. հ. Միքայէլի Չամչեան, զոր գրեաց ի ժամանակս վերջին միաբանութեան եւ հրատարակեաց թէ առ հայս եւ թէ առ ուղղափառս, որով իւրաքանչիւր ո՛ր քաջ իմանայ, թէ քանի ազգակցութիւն ունի այս դասնութիւն ընդ վերոյ գրեալ բանսն հայր Միքայէլին – Եկեղեցին Հայաստանեայց ի սկզբանէ եւ այսր ընդունի եւ դաւանի զուղղափառ հաւատս ճշմարտութեան... չիք այլ ինչ թշնամութիւն մեծ եւ անօրինութիւն անտանելի:

ժա. 78աբ Գլխատրումն բանից – Որով եւ վերջին դատումն մտաց մերոյ... զի աչօք բացօք տեսանմք եւ տեսեալ իսկ եմք: Վերջ: 1815, փետրուարի 12, ի Կոստանդնուպօլիս:

– 79ա-83ա Յանկ մատենիս – Հայաստանեայց սուրբ եկեղեցի... վերջին օժումն է խորհուրդ եկեղեցոյ, բայց օժանելն իւրով չէ հարկաւոր յոյժ ըստ մեծին Խորհուրդու Անձեալեաց եպիսկոպոսի:

Յանկը կազմուած է ոչ թէ ըստ խորագրերի, այլ այս կամ այն գլխում շօշափուած նիւթերի, որոնց դիմաց նշուած են այդ նիւթերի սկզբնատողերի էջերն ու տողերը՝ «Երեսնամարը եւ տողահամարը»: Նաեւ հմմտ. ձեռ. 1936:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ
Տե՛ս Տիտղ.՝ 2ա:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

ՑՅբ (անարուեստ նոտագիր) «1844 յունվարի 5
ծր[ն]ունդ Թով[մ]աս»:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած թերթիկին՝
«670», «Վահան կոչեցեալ մատենին», Ա. կազմաստա-
ռին փակցուած թերթիկին՝ «Հ^մ 111», Աւ.՝ «670/260,
1820, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:


2641

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս Մ Ի Ր Զ Ա Յ Ե Ա Ն Վ Ա Ն Ա Ն Գ Ե Յ Ի , Տ Ե Ս Ա Ր Ա Ն Հ Ա Ն Գ Ի Ս Ի Յ Ն
Հ Ա Յ Կ Ա Յ , Ա Ր Ա Մ Ա Յ Ե Ի Ա Ր Ա Յ Ի

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ԳՐԻԶ, ՍՍՍՅՈՂ՝ Գրիգոր Կարնեցի Շաֆաբեան:

ԹԵՐԹ՝ 110. չգրուած՝ 1ա-3բ, 4բ-5բ, 108բ-10բ: ՊՐԱԿ՝ Ա-ԺԱ
x10 (Ա՝ 11, Թ՝ 8, ԺԱ՝ 9)+2: ՆԻԻԹ՝ թուղթ, լուսադրոշմով՝ «GIO-
VANNI GHECCHI»: ՄԵԾԻԹԻԻՆ՝ 24,3x20,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միա-
սին (19x15,7): ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 77ա): ՏՈՂ՝ 32: ԿԱԶՄ՝
ձաղկաթուղթ, միշուկը ստուարաթուղթ, անկիւնները եւ մէջքը շա-
գանակագոյն կաշի, աստառը թուղթ. լուսանցակողեր՝ կապոյ-
տով ցօղոսած:



նմուշ 77ա

ՎիճԱԿ՝ բաւարար. կազմի ձաղկաթուղթը մաշուած, կեղտո-
տուած, ք. 1-22՝ հիմքից մասամբ պոկուած, ք. 1-11՝ կարերը հիմ-
քից թուլացած:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

4ա-108ա Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ
եւ Արայի, ոտանաւորեալ Միրզայեան Յովհաննու
Վանանդեցի վարժապետ քահանայի՝ Սուրբ Ստե-
փաննոս եկեղեցոյն Զմիտնոյ, ի գրօսանս ման-
կանց ազգիս հայոց: Զգուշութեամբ օրինակեալ ի
վայելս Գրիգորի բանասիրի Կարնեցոյ Շաֆաբեան
անարդին մանկավարժի: Թիւ յօրինմանն՝ 1831, ի
Զմիտին օրինակելոյն՝ 1832, ի Կոստանդնուպոլիս, ի
նորաշէն դպրոցի Սրբոյ Խաչի եկեղեցոյն, որ յԽա-
կիտար, ի թաղն Սէլաւարգ:

– 6աբ Յատաչարան – Որք զհայրենի քաջարու-
թեանց հանդիսից զվիպագրութիւնս իղծս... ստոյգ
խոստովանութիւն զանձնէ վարապանէ ի կզակս պար-
սաւադրաց, թէ իցեն յուշի:

– 7ա Յանկ գլխակարգութեան գործոյս – Ա. Նա-
խաշափղ առ ի նոյն յորդորման... Ժէ. Յորդոր նմանիլ
նախնեաց:

Իբրեւ բնաբան 7բ էջում բերուած է Իմաստութիւն գրքի Ժ.
9 տունը՝ «Իմաստութիւն զողոթիս իւր փրկեաց ի ցաւոց...
գորաւոր է աստուածապաշտութիւնն»:

ա. 8ա-9բ Հագնեւոց տաղաչափական ի պայծառ
հանդէս դիւցազին մերոյ Հայկայ Թորգոմեան: Գլուխ
առաջին: Նախաշափղ առ ի նոյն յորդորման – Հոր
է սեղանոյ՝ իղձ ազգասիրին, / արծարծուն վառեալ ի
ներքս ի հոգին... անձանց բարութեան մթերել զօճան:

ՌՄԶԱ. – 1832

բ. 9բ-14բ Բ. Ծնունդ եւ սնունդ Հայկայ – Զմեր
նախնի գեղադրտակ վեհ դիւցազին, / եկն արդ, ի վէպս
առնուլ զփառսրն պանծագին... յայ[ն] միկ հնչէր խրախ
նորա անտխրական:

գ. 14բ-9ա Գ. Աստուածապաշտութիւն Հայաստա-
նի – Փառաց են պարգեւք յայս նոր տեսարան, / առ
ճոխ բարձրութիւն ազգիս Հայկազեան... համայն գոր-
ծադիրք աստուածապաշտութեան:

դ. 19ա-23բ Դ. Զեղծումն մարդկան ի բարին – Այս
վեհապանծ փառացն շուք Հայաստանին / խոր խոցո-
տէր զսիրտ խարդախ դժնեայ դիւին... երկրպագեմ քեզ
յոգեշարժ յիղծս եռանդեան:

ե. 23բ-7ա Ե. Ազատութիւն Նոյի ի ցուրցն հեղե-
ղաց – Հրաման վեհին անդարձ հաստատեալ զեղծումն
աշխարհին / ջնջեալ, եթէ զամս հարիւր եւ քսան ան-
դարձ զեղխեսցին... զկատար Մասեաց ի նաւահան-
գիստ անվըտանգ կալան:

զ. 27ա-31բ Զ. Բագմանայ մարդկան եւ բաժա-
նումն – Հին աւուրցըն հայր արդար ծերունին, / գտեալ
յանդորրու յետ միոյ ամին... հաստատուն սիրով կալ
ընկերական:

է. 31բ-5ա Է. Աշտարակաշինութիւնն – Հոգին
աննիւթ եւ անձնիշխան շունչ երկնային, / ինքնագործ
է, թէեւ կապեալ ընդ նիւթ մարմնին... յերկնից գա-
ւիթըն գումարեաց զազգս ամենայն:

ը. 35ա-8ա Ը. Վտարանջութիւն Հայկայ – Նոր ինչ
եկն ի յայտ արտաքոյ կարգի մտաց մարդկային, /
Թանձրանիւթ մարմնոյ զաստուածեան պատիւ տալ
իւրոյ անձին... անդ կալ ժամ առ ժամ գալստեան
ստուար խուժանին քուշեանց:

թ. 38ա-42ա Պատեւազմ եւ յաղթութիւն Հայկայ –
Աստ պերճութիւն փառաց Հայկայ խրոխտագին, /
սերտ ուժգնութիւն տածէ ի սիրտ զօրականին... յէն
անհատ աղբիւր կարգեալ պայծառ տոհմին:

ժ. 42ա-7բ Ժ. Միապետութիւն եւ աշխարհաշի-
նութիւնն Հայկայ – Ահա պանծալի պսակ պետական /
ի գլուխ երկիրն առնու Հայաստան... զսորայն դրուատ
երգել ի կեթառ:

ժա. 47բ-54ա ժԱ. Ման Հայկայ դիցագրին – Այսպէս ի պարարտ ձերուծիւն բարեաց զագգըն խաղաղեալ / զարմըն Յաբեթեան հայր մեր քաջարի Հայկ գերհամբաւեալ... թէ ոչ զղամպար սիրոյն վառեսցուք անշէջ ի սրտին:

ժբ. 54ա-62բ ժԲ. Միապետութիւն Արամայ եւ հանդէսն – Աստ նոր նուագ եկն ինձ ի ճառ հագնեղ-գական, / ի հանդիսից մերս Արամայն վեհագնու-թեան... զերկրին հանգիստ ի թշնամեայն ապահովեալ:

ժգ. 63ա-7բ ժԳ. Միապետութիւն Արայի – Յետ կատարելոյ զհանդէս թաղման Արամայ վեհին / բազմախումբ ատեան անդրեն բոլորեն որեարք աշխարհին... ի պսակ հանել կալայց զառաջին ոճ հագնեղգական:

ժդ. 67բ-80բ ժԴ. Պատերազմ Շամիրամայ ընդ Արայի – Ի յորդ լիութիւն բարգաւաճ բարեաց / մինչ յուրթ պանծայր երկիր Հայկազանց... զորոցն ընկալար՝ հատո՛ տոհմական:

ժե. 80բ-5բ ժԵ. Եղերեգութիւն զԱրայէ – Զարթիր ինձ նուագ, դու մակեղովնեան ընդ դէպսըն յարիր, / զարթիր յորջանաց զդրդեալ շարժին զՀայկեան ջո-լիր... նշանք բարետիպք անմուռնչ պատուեն յաւէտ հոշակեալ:

ժզ. 86ա-92բ ժԶ. Երգիծանութիւն առ Շամիրամ – Ո՛ր ես, պոռնի՛կ դու Շամիրամ, ճակ դիմագող, / յո՛ր յր

գարշնանաց ի ժահր արդէն ծփիս յորդոյ... անդ ցնծասցիս յանստուէր լոյսն երջանկութեան:

ժէ. 92բ-108ա ժԷ. Յորդոս նմանիլ նախնեաց – Ասա՛ ինձ, նոր հանդէս երկոց եւ քրտանց ընդարձակ բացեալ, / յագգային շահուց վաստակ յորդորէ սերտ քաջալերեալ... այսքան քեզ հոգւոյս ծնունդ հարազատ, բողբոջ Կոստանդեան, / յագգասէր եռանդն, արթնասիրտ Գրիգոր, հանդէս քերթաբան, / ընկա՛լ հաճութեամբ ըստ քուճըզ հայցման մտաց զբօսարան, / որով եւ իմ այս վաստակ դիւրասցի ի բերս հանգստեան:

Վերջում 108ա՝ «Ընդ ամենայն են ի հագնեղգութեանս տունք 1685»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Տե՛ս խորագիր՝ 4ա:

ՆՇՈՒՄ Կազմի մէջքին փակցուած թերթիկին՝ «1. Տեսարան հանդիսիցն Հայկայ», 1ա՝ «682/2641», 1բ՝ «Համար 1. Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ եւ Արայի, քառածալ ընտիր նօտրագիր, ոտանաւորեալ Միրզայեան Յովաննու Վանանդեցի վարժապետ քահանայի եւ արտագրեալ ի թուղթ բամբակեայ Գրիգորի Շաքարճեան վարժապետի Կարնեցոյ, յամի Տեառն 1832, ի նորաշէն դպրոցի Սրբոյ Խաչի եկեղեցւոյն, որ յիւսկիւտար Կ. Պօլսոյ: Չունի գլխատակարան», «1832, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2642


Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Յ

ՆՈՐ ԶՈՒՂԱ

ԳՐԻՉ՝ Մարկոս եւց եւ Մալին (1բ-326բ), Կիրակոս եւց (328ա-50բ, 276ա-624բ), Աղամալ-Պետրոս (351ա-76ա), Մկրտիչ (389բ-90բ): ԾԱՂԿՈՂ՝ Յակոբ վրդ.: ՍՏԱՅՈՂ՝ պրն. Մեղնոն եւ Յակոբ վրդ.:

Մարկոս եւ Մալին, Կիրակոս, Աղամալ եւ Մկրտիչ գրիչներն այս ձեռագիրը գրել են փոխնիփոխ, բայց Մարկոս եւ Կիրակոս գրիչների գրած բաժինները, միւսների համեմատութեամբ, մեծ են:

ԹԵՐԹ՝ 632. չգրուած՝ 1ա, 2ա-6բ, 12աբ, 327աբ, 391ա-2բ, 406բ, 418աբ, 490աբ, 557բ-8բ, 582բ, 604ա-6բ, 625ա-32բ: ՊՐԱԿ՝ 4+Ա-ԾԳx12 (Ա, ԽՁ՝ 8, ժԵ՝ 14, ԼԲ, ԼԳ՝ 16, ԾԲ՝ 6, ԾԳ՝ 4)+4: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵՇՈՒԹԻԻՆ՝ 25,8x19,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսին (19x14,5), միասին (13ա, 328ա): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 211ա): ՏՈՂ՝ 45: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի. Ա. փեղկին 2, Բ. փեղկին մէկ կապիչի մետաղէ ագուցիչ հիմքեր, միջուկը տախտակ, աստաղը ծաղկագարդ կտաւ. լուսանցակողեր՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա-Գ+Ե-Ը, սպիտակ չգրուած թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եռամանիկ, եռաթերթ ծաղիկ եւ յաւերժութեան երկու նշան:



Նմուշ 211ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՆ – Կ ի ս ա խ ո ռ ա ն՝ 13ա, 328ա: Ճ ա կ ա տ ա գ ա ռ դ՝ 16բ, 269բ, 491ա, 559ա, 583ա, 584ա,

ՌՃԺԲ.-ՌՃԺԳ. – 1663-1664

607բ: Լ ո ս ա ն ց ա գ ա ռ դ՝ բուսական, թռչնային: Զ ա ռ դ ա - գ ի ռ՝ կենդանագիր, թռչնագիր: Գ ո յ ն եր՝ նարնջի, մանուշակագոյն, կանաչ, դեղին, կապոյտ, կարմիր, սպիտակ. շագանակագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, վնասուած, մէջի եւ Ա. փեղկի ստորին հատուածի կաշին մասամբ թափուած, երկու կապիչը եւ Բ. փեղկի մետաղէ մէկ ագուցիչ-հիմքն ընկած, լուսանցակողեր՝ գունաթափ, թ. 3-4, 551-3՝ ցեցի անցքեր, թ. 5-11, 302, 626-7՝ հիմքից մասամբ պոկուած, թ. 394-6՝ թերեւակի վնասուած, թանափի թթուայնութիւնը բարձր՝ գրադաշտը մասամբ խունացած (յատկապէս սկզբի մասում), հիմքերի մօտ կեղտոտուած, թերթերին աղտոտուածութեան տարբեր հետքեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. 1բ [Ի Ծննդոց գրոց –Եւ Է]ղեւ լոյս: Եւ ետես Աստուած զլոյսն, զի բարի է... եւ զձառն գիտելոյ զգիտութիւն [բարւոյ եւ չարի]: [Ա. 3 – Բ. 9]

Բ. 10բ-1բ Յորդորակ [օրհնութանց] – Այժմ ժամանեալ մեր յաւարտ... եւ պսակեսցէ անթառամ պսական, մշտագուռարթ բերկրանօքն, անզրաւ ուրախութեամբն:

Ունի աշխարհի, քրիստոնէից, հայոց, Աստուածածնի, խաչի, եկեղեցւոյ, ննջեցելոց, եկեղեցւոյ շինողի, հայրապետի, եպիսկոպոսի, թագաւորի, իշխանի, վարդապետի, հօր, եղբարց, քահանայից, քաղաքի օրհնութիւններ:

Գ. 7ա-10բ, 13ա-390բ [Գրիգորի Տաթևացոյ Քա-
րոզգիր]

1. 7ա-297ա [Զմեռան հատոր]. Գրիգորի եռամեծի
ֆաջ հոեառոի եւ յանյախտ փիլիսոփայի, աշակերտի
Յոհաննու Ռոտմեցոյ արարեալ բանս խրատա-
կանս ոգէշահն եւ հաննարս իմաստայեղս, ի մէկնու-
թիւն եւ ի գովեստ փառաց տօնից տէրունականաց, ի
պատիւ սրբոց եւ ի պատնառ գիտութեան այնմա-
րաց: Մանաւանդ ի յոյբ արտասուաց, անձանց
թախձելոց յաւէտ ի ճշմարտութիւն կարգաց ուղղա-
փառաց, եւ յեղծումն բարբաշմանց շարափառաց, ի
յիղձ մախթանաց ոմանց բանասիրաց, եղբարց հա-
րազատաց, նորին աշակերտաց. ազգնեա՛ Հոգի
Աստուած:

Տե՛ս Զմեռան հատոր, տպ. 1740. 3անկ/7ա-10բ: ա/13ա-
6բ: բ/16բ-8ա: գ/30ա-2ա: դ/18ա-20ա: ե/20բ-2բ: զ/23ա-6բ:
կ/26բ-30ա: լ/32ա-4ա: զ/34ա-6բ: ժ/36բ-8ա: ժա/38ա-40ա:
ժբ/40ա-2ա: ժգ/42ա-4բ: ժդ/44բ-6բ: ժե/46բ-8բ: ժզ/48բ-50ա:
ժկ/50ա-2բ: ժլ/52բ-5ա: ժր/55ա-7ա: ի/57ա-8բ: իա/58բ-61բ:
իբ/61բ-3ա: իգ/63ա-5ա: իդ/65ա-8ա: իե/68ա-70բ: իզ/70բ-1բ:
իկ/71բ-3ա: իլ/ չիբ նաեւ տպ.: իր/73ա-5ա: յ/75ա-7ա: յա/77ա-
8ա: յբ/78ա-9բ: յգ/79բ-81ա: յդ/81բ-3բ: յե/83բ-5բ: յզ/86ա-8ա:
յկ/88բ-90ա: յլ/90ա-2բ: յր/92բ-3բ: իա/94ա-5բ: իա/95բ-7բ:
իբ/98ա-9ա: իգ/99ա-101ա: իդ/101ա-3ա: իե/103բ-5ա:
իզ/105ա-7ա: իկ/107բ-9ա: իլ/109ա-10բ: իր/111ա-2ա:
ժ/112բ-5ա: ժա/115ա-6ա: ժգ/116ա-7բ: ժզ/117բ-8ա:
ժկ/118աբ: ժլ/118բ-9ա: ժր/119ա-20ա: ժս/120ա-1բ: ժտ/121բ-
2բ: ժր/122բ-4բ: կ/124բ-7ա: կա/127բ-9բ: կբ/129բ-32ա:
կգ/132ա-4բ: կդ/134բ-6ա: կե/136բ-8ա: կզ/138ա-40ա:
կկ/140բ-2բ: կլ/142բ-4ա: կր/144ա-5բ: կս/146ա-8ա: կա/148ա-
9բ: կբ/149բ-50բ: կգ/150բ-2բ: կդ/152բ-3բ: կե/153բ-5ա:
կզ/155ա-6բ: կկ/156բ-8բ: կլ/158բ-60բ: կր/160բ-2բ: ձ/162բ-
4բ: ձա/164բ-6բ: ձբ/չիբ: ձգ/166բ-7բ: ձդ/168ա-9բ: ձե/169բ-
71բ: ձզ/171բ-3բ: ձկ/173բ-5բ: ձլ/175բ-8բ: ձր/178բ-80ա:
դ/180ա-1ա: դա/181ա-2բ: դբ/183ա-4բ: դգ/184բ-6ա:
դդ/186ա-7ա: դե/187ա-8բ: դզ/188բ-91ա: դկ/191ա-3բ:
դլ/193բ-5ա: դր/195ա-6բ: ճ/196բ-7բ: ճա/198աբ: ճբ/198բ-9բ:
ճգ/199բ-200բ: ճդ/200բ-1բ: ճե/201բ-3բ: ճզ/203բ-6ա:
ճկ/206ա-8բ: ճլ/208բ-11ա: ճր/211ա-3ա: ճս/213ա-5ա:
ճտ/215ա-8ա: ճր/218ա-20ա: ճզ/220ա-1բ: ճդ/221բ-3ա:
ճե/223ա-4բ: ճզ/224բ-6բ: ճկ/226բ-8բ: ճլ/228բ-30բ:
ճբ/230բ-2բ: ճր/232բ-5ա: ճիա/235ա-6բ: ճիբ/236բ-9բ:
ճիգ/239բ-41ա: ճիդ/241ա-2բ: ճիե/243ա-5ա: ճիզ/245ա-6ա:
ճիկ/246ա-8ա: ճիլ/248ա-9ա: ճիր/249ա-50բ: ճիս/250բ-3ա:
ճիտ/253ա-4ա: ճիբ/254ա-6բ: ճիգ/256բ-8ա: ճիդ/258ա-61ա:
ճիե/261ա-3ա: ճիզ/263ա-4բ: ճիկ/264բ-6բ: ճիլ/269բ-72ա:
ճիր/272ա-6ա: ճիս/276ա-9ա: ճիտ/279ա-83բ (ձեռագրիս մէջ
այս նիւթը, սկսած «Եւ թէ հարցանէ որ...» հատուածից, ներկա-
յացուած է երկու գլխով իբրեւ ձնԳ-ձնԳ, տէ՛ս տպ. էջ 646,
սիւնակ Ա): ճիբ/283բ-7ա: ճիգ/287ա-8ա: ճիդ/288ա-9ա:
ճիե/291բ-4ա: ճիզ/289ա-91բ: ճիկ/294ա-7ա: ճիլ/352ա-3բ:
ճիր/345ա-7ա: ճիս/347ա-9բ: ճիտ/349բ-52ա: ճիբ/353բ-5ա:
ճիգ/355ա-8ա: ճիդ/358ա-61ա: ճիե/361ա-2բ:

Յաւելեալ ունի.

ա. 266բ-8ա նորին դարձեալ ֆարոզ վասն Յարու-
թեան, ի բանն որ ասէ. Յարեաւ Աստուած, եւ ցրուե-
ցան ամենայն թշնամիք նորա, փախեան ատեալ
նորա յերեսաց նորա – Հրամայեաց Աստուած երբեմն

մեծին Մովսէսի... վասն շորորոզ յառնելոյն Աստուծոյ
ի դատաստան: Որում եւ զմեզ փրկեցէ՛ք Քրիստոս, եւ
նմա փառք յաւիտեանս. ամէն:

բ. 268ա-9ա Դարձեալ ի նոյն խորհուրդ. Յարցէ
Աստուած, եւ ցրուեցին թշնամիք, փախիցեն ա-
տեալք – Տեսցուք այժմ զերկորոզ հարցումն... որում եւ
զմեզ արժանաւոր արասցէ՛ք Քրիստոս Աստուած յարու-
թեանն կենաց եւ փառաց ընդ ամենայն սուրբս իւր, եւ
նմա փառք յաւիտեանս. ամէն:

Քնագրային նշում-ծնթ.ներ՝

113բ «Ի կարմիր նշանէն ի վայր սերտ կարգա՛յ, զի ընդդէմ
Ֆոանկաց է»:

114ա «Առաջին կարմիր նշանէն մինչ ի յայս թէ պիտի ի
քարոզն ասա՛, եւ թէ շպիտի՛ ոչ»:

2. 297ա-390բ [Ամառան հատոր]

Տե՛ս Ամառան հատոր, տպ. 1740. ա/328ա-9ա: բ/329ա-
31բ: գ/331բ-6ա: դ/336ա-8բ: ե/338բ-40բ: զ/341ա-2ա: կ/342բ-
5ա: լ-ժա/չիբ: ժբ/363ա-5ա: ժգ/365ա-9ա: ժդ/369աբ:
ժե/369բ-70բ: ժզ/370բ-2ա: ժկ/372ա-4ա: ժլ/374ա-6ա: ժր-
ձգ/չիբ: ձդ/376աբ: ձե-ճիե/չիբ: ճիզ/377ա-9ա: ճիկ/չիբ:
ճիլ/379ա-82ա: ճիր-ճր/չիբ: ճիս/282ա-4բ: ճիտ-ճր/չիբ:
ճիբ/384բ-7ա: ճիե/չիբ: ճիզ/387ա-9ա: ճիկ-ճիլ/չիբ: ճիզ/389բ:
ճիլ/389բ-90բ: ճիե-ճիբ/չիբ: ճիզ/297ա-9բ: ճիդ/299բ-302բ:
ճիե/302բ-5ա: ճիզ/305բ-7բ: ճիկ/307բ-10բ: ճիլ/310բ-2ա:
ճիր/312բ-4բ: ճիս/314բ-7ա: ճիտ/317ա-9բ: ճիբ/319բ-21բ: ճիզ-
ճիլ/չիբ: ճիե/321բ-4բ:

Տպագրի համեմատ քարոզների կարգը տարբեր է:

Գ. 325աբ Վերջին ֆարոզ վասն Յովհաննու Աւե-
տարանչին՝ Յովհաննու Ռոտմեցոյ, ի բանն. Աշա-
կերտն, զոր սիրէրն Յիսուս – Նախ զի ըստ մարմնոյ
ցեղապետութեան... զայս ամենայն զօրութեամբ յղա-
ցեալ ընկալաւ ի շնորհաց Հոգւոյն, որում փառք
յաւիտեանս. ամէն:

Ե. 393ա-489բ [Քարոզք]

ա. 393ա-4ա [Վասն հաւատոյ] – Աստուածային եւ
մեծ առաքեալն Պօղոս ասէ ուրեմն. Առանց հաւատոյ
անհնար է հաճոյ լինել Աստուծոյ [Առ երբայցցիս, ԺԱ.
6]... վասն այն ասէ առաքեալն Առանց հաւատոյ ան-
հնար է հաճոյ լինել Աստուծոյ: Այսքան առ այս:

բ. 394աբ Յաղագս սահմանին հաւատոյն. ասելի
է – Հարցումն. Զի՞նչ են հաւատք... որոյ ոռոգմամբն
յորս հասնէ կենդանին ամենեքեան: Այսքան սահման ի
հաւատոյն:

գ. 394բ-5ա [Յ]աղագս միութեան հաւատոյ – Ասէ
առաքեալն Պօղոս. Մի՛ է Տէր, մի՛ է հաւատ [Առ եփեսա-
ցիս, Գ. 5]... եւ ոմանք սակաւ եւ անորոշակի: Այսքան
առ այս վասն միութեան հաւատոյ:

դ. 395ա-6բ Յաղագս հարկաւորութեան յուսոյն.
Յուսա՛ ի Տէր՝ որպէս լեռն Սիոն մի – Ոմաստունք
ասեն, թէ՛ Ամենայն որ են, զապականութիւնն իւրեանց
ատեն... վասն այն ասէ մարգարէս՝ Ո, յուսա ի Տէր: Այս-
քան վասն հարկաւորութեան յուսոյն:

ե. 396բ-ճա Յաղագս գործո յուսոյն, ի բանն Պօղոսի, որ ասի. Յուսով ասրեցաք [Առ Հռոմայեցիս, Ը. 24] – Ասէ Տէր մեր Յիսուս Քրիստոս. Ամենայն ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի... եւ Դաւիթ ասէ. երանեալ է այր, որ երկնչի ի Տեառնէ եւ՛:

զ. 398ա-400ա Քարոզ եւ գովասանութիւն վասն սուրբ Աստուածածնին, ի բան Սողոմոնի, որ ասէ. Տէր արար զբեզ եւ պատրաստեաց զբեզ յարգանդէ, զեղեցիկդ ի կանայս, զի մայր քո ծնցի մարմին ան[տխիղծ. Երգ երգոց, Ը. 6] – Վարդապետք ասեն, թէ որպէս համեմատելով ընդ յԱստուած... եւ ասել ներբողական ձայնիւ՝ Ո՛վ ամենասրբուհի Աստուածածին Մարիամ:

է. 400ա-1ա Դարձեալ վասն սիրոյ, ի բանն Պօղոսի. Նախ քան զամենայն սէր սերտ ունենալ զմիմեանս [Պետրոսի Ա. թուղթ, Դ. 8] – Ասէ Ոսկեբերանն Յովհան, թէ՛ Որպէս հիւանդութիւնն պատրաստէ զմարմինն ի մահ... եւ այսպէս սէրն վերաբերի առ ամենայն առաքինութիւն, վասն որոյն ասէ Պօղոս՝ նախ քան զամենայն՛:

ը. 401ա-6ա [Խ]րաւք հանապարհորդութեան մտաց, ի բանն իմաստնոյն Սողոմոնի, որ ասէ. Ահա-ասիկ գրեցի զնա քեզ ետեմ կին՝ ի խորհուրդս, ի գիտութիւն եւ ի հանճար – Գիտելի է, զի ամենայն գիտութիւն ունի յինքեան զնշան երրորդութեանն... Աստուած ոչ է զգալի, ոչ երեւակաւի, ոչ իմանալի, ոչ է է, այլ ի վեր, քան զամենայն:

թ. 407աբ Յաղագս տեսական իմաստութեան, որ է իմացական միտքն: Փոքր ինչ տեսութիւն – Հարցանելի է եւ զայս, թէ միտքս մեր որպէ՛ս վերանայ առ ճշտութիւնն... եւ մշտաւէտ ուրախութեամբ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է արհնեալ ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս. ամէն:

ժ. 407բ-ճբ Վասն թէ քանի՛ եւ կամ զո՛րս պարտի ուսանել ուսուցիչն – Ասէ Տէրն յԱւետարանին Մատթէոսի. Դո՛ւք էք լոյս աշխարհի... եւ Տէրն շրջէր ի քաղաքս եւ ի գեօղս եւ ուսուցանէր ի ժողովուրդս նոցա:

ժա. 408բ-13բ Դարձեալ խրատ վասն վարդապետաց, ի բանն. Գնացէ՛ք այսուհետեւ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս, ուսուցէ՛ք նոցա պահ[ել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ]. [Մատթէոս, ԻԸ. 19-20] – Վարդապետք ասեն, թե անպատշաճ է զգիտութիւնս խնայել... եւ թաքուցանել: Վասն որոյն ասէ Տէրն՝ Գնացէ՛ք այսուհետեւ, ուսուցէ՛ք նոցա պահ՛:

ժբ. 413բ-4բ Յաղագս թէ քանի՛ եւ կամ զո՛րս պարտ է ունել աշակերտն, ի բանն Եսայեա, որ ասէ. Ուսարո՛ւմ զբարիս գործել. [Եսայի, Ա. 17] – Ասէ Արիստոտէլ, թէ՛ Բնական է, զի ամենայն մարդ ցանկայ գիտութեան... սիրէք տուողին ինձ գիմաստութիւն, տաց զփառս:

ժգ. 414բ Վասն յատկութեան ոչխարի, ի բանն Ահաւասիկ եւ առաւել զձեզ – Հարցունմն, թէ Վասն է՞ր նմանեցուցանէ ոչխարի: Պատասխանի. Վասն ժ. պատճառի... եւ դուք միաբան եւ միտ հիւ՛հ՛դ (=միախորհո՞ւրդ) կացէք: Այսքան առ այս:

ժդ. 414բ-5ա Դարձեալ գիտելի է, զի բազում եւ զանազան են պատճառ մոլորութեան կոպալաշտից – Առաջին պատճառ մոլորութեան կոպալաշտիցն եղեւ սաստիկ կսկիծ ի վերայ մահուան սիրելոյ... եւ այս եւ այլ սոյնպիսիք եղեն պատճառ կորստեանն կշաղտութեան [=կոպալաշտութեան] մարդկան:

ժե. 415աբ Հարցումն. Վասն է՞ր է զի Աստուած նախ զայս, եւ ապա զայն կանոնմ տայ մարդոյս եւ զայն, զի նախ պատիւ պատուականն, քան զանարգն – Պատասխանեմ այսմ, թէ ամենայն ինչ, զոր արար եւ զոր առնէ Աստուած, բարի են եւ յօգուտ մեզ... զի տո՛ւր իմաստնոյն պատճառ եւ իմաստն՛:

ժզ. 415բ Նորին ի բանն. Տէր հան ի բանտէ – Գիտելի է, զի մարմնական կենցաղս այս նման ի բանտի... խառնեալք ի ժողովուրդս անդրանկաց եւ ի դասս լսողանաց: Այսքան առ այս:

ժէ. 415բ-6բ Նորին ի բանն. Վասն այդորիկ ասեմ ձեզ. Ամենայն մեղք եւ հայե[ն]ութիւնք թողցի մարդկան, բայց որ զՀոգին Սուրբ եւ որ ասէ բն[416ա]լագդի մարդոյ՝ Բաց, որ զՀոգին Սուրբ՝ [Մատթէոս, ԺԲ. 31] – Նախ այս է պատճառն հայհոյութեան Հոգւոյն... զմահուելու մեղաւորաց: Այսքան առ այս:

Կրկնուած է 440ա-1ա:

ժը. 416բ-7բ Քարոզ վասն ծննդեան Տեառն, ի բանն, որ ասէ. Բանն մարմին եղեւ եւ բնակեաց [Յովհ., Ա. 14] – Այսինքն՝ Որդին Աստուծոյ մարդ եղեւ... ամենայն ինչ կատարեալ է: Վասն այսորիկ ասէ բանն:

Կրկնուած է 441ա-2բ:

ժթ. 491ա-20ա Դարձեալ բան ի խորհուրդ ծննդեան եւ վասն թագաւորացն ընծայից. Բացեալ զգանձս իրեանց խունկ, ոսկի եւ զմուտ [Մատթէոս. Բ. 11] – [Գ]իտելի է, զի թագաւորքս այս մոգուց... զի որ համբերէ իսպառ, նա կեցցէ: Վասն այսորիկ ասէ. Բացեալ զ[գ]անձս եւ՛:

417բ էջի սկզբի 12 տողը գրած, յետոյ մէկ թերթ բաց թողած, եւ 419ա էջում նոյն քարոզը սկզբից մինչեւ վերջ գրած:

ի. 420ա-5բ Մեկնութիւն յաղագս Փառք ի բարձման: Փառք ի բարձունս Աստուծոյ [Ղուկաս, Բ. 14] – Գիտելի է, զի փառաւորեալն զնոյն... եւ այսու յուսով առաւել եւս վստահացեալք կարդամք զանուն քո, եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն:

իա. 425բ-6ա Քարոզ վասն հասարակաց առաքինութեանց, որ է խոհեմութիւն, ողջախոհութիւն եւ արդարութիւն, ի բանն Դիոնէսիոս[ի] ի գիրս Աստուածային անուանցն. Չար է մարդն ինել ընդդէմ

բանականություն – Գիտելի է, զի ուղղութիւն բանականին... վասն այսորիկ ասէ Դիոնէսիոս. Չար է մարդոյ լինել ընդդէմ այսքան վասն Դ.ից առաքինութեանց:

Իբ. 426բ-7ա Վասն սահմանի խոհեմութեան – Այր խոհեմ ուղղէ զգնացս իւր... վասն որոյ ասէ Սողոմոն՝ Այր խոհեմ՝:

Իգ. 427ա-8ա Քարոզ վասն գործոյ խոհեմութեան, ի բանս որ ասէ. Պատրաստ եղերո՛ւմ, խոհեմք եւ արթունք – Իմաստասէրն ասէ, թէ Բնական յօժարութիւն խնդրէ զճանաչումն իմն... զգուշ լե՛ր, գուցէ անկանիցես, վասն այսորիկ ասէ. Պատրաստ եղերուք՝:

Իդ. 428ա-9ա Վասն գործոյ խոհեմութեանն – |428ա| Ի յերեսս խոհեմին այլ է իմաստութիւնն... եւ այսպիսի խոհեմն ոչ լինի ապաստան ի խոհեմութիւնն իւր: վասն այսորիկ ասէ՝:

Իե. 429բ-31ա Քարոզ վասն գովութեան խոհեմութեանն, ի բանն, որ ասէ Սողոմոն. Ստացի՛ր զիմաստութիւն, զի լաւագոյն է, քան զոսկի, եւ ժառանգեա՛լ զխոհեմութիւն, զի պատուական է, քան զարծաք – Ասէ իմաստասէրն Արիստոտէլ, թէ խոհեմութիւնն ի մէջ այլ առաքինութեանցն... վասն այսորիկ ատեա՛ զձեզ յաշխարհ:

Իզ. 431ա-2բ Դարձեալ քարոզ խոհեմութեան եւ վասն մասանց նորին, ի բանն. Ո՛ր թէ ի միտ առ նոսին եւ իմանա[յ]ին եւ զապագայս տեսանէին, զոր ասէ Մովսէս Յոբ Գ. օրէնսն – Գիտելի է ըստ իմաստասիրացն, զի խոհեմութիւնն բաժանի Գ. մասունս... զի նախատեսեալ սուրն սակաւ վնասէ: Այսքան առ այս:

Իէ. 432բ-3բ Դարձեալ վասն խոհեմութեան, ի բանն Եսայեա. Հրաման տո՛ւր վասն տան քո, զի մեռանիս եւ ոչ կեաս, կամ այլ, զոր ինչ կամիմ. [Եսայի, ԼԸ. 1] – Գիտելի է ըստ իմաստասիրացն, |433ա| զի միտք իմաստնոյն հոգա վասն Գ. ժամանակաց... եւ դատելոյ զժողովուրդ քո արդարութեամբ: Այսքան առ այս:

Իը. 433բ-4բ Քարոզ վասն գովութեան արիութեան: Զգօրութիւնս եւ զմեծ վայելչութիւն զզեցար, ասէ իմաստունն յԱռաքիլս [Ա. 26] – Վարդապետք ասեն, թէ որոց պարզեւեաց Աստուած մեծամեծս եթող ի նոսին... թէ յորժամ համբառնայր Մովսէս զձեռն իւր, զօրանայր Իսրայէլ: Այսքան առ այս:

Իթ. 434բ-5բ Խրատ ընդդէմ երկիւղի մահուան, ի բանն Դաւթայ. Տէր է իմ օգնական, եւ ես ոչ երկեայց, ոչ արասցէ ինձ մարդ [Սաղմոս ճԺԷ. 6] – Վարդապետք ամեն, թէ՛ Զինուորն, որ ոչ է տեսեալ պատերազմ... երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցեն: Այսքան առ այս:

Լ. 435բ-6բ Քարոզ եւ խրատ վասն անոխակալութեան, ի դէմս իշխանաց եւ առաջնորդաց, ի բանն Սողոմոնի. Անոխակալութիւն պատրաստէ զկեանս –

Իմաստասէրքն ասեն, թէ՛ Յատուկ է մեծասիրտ մարդոյն դիւրաշատ լինել... վասն այսորիկ ասէ իմաստունն. անոխակալութիւնն պատրաստէ զկեանս:

Լա. 436բ-7բ Խրատ յաղագս ժուժկալութեան ամուսնացելոց, ի բանն՝ եղիցին երկոքեանն ի մարմին մի, ասէ նախամարգարէն Մովսէս ի գիրս Ծնընդոց – Վարդապետք ասեն, թէ Խնկ՞ (խորհուրդ՞) պսակի սակաւիկ ցուցումն է... կամեցաւ կրել ամօթ եւ մահ ի ժողովրդեանն, քան մեղանշել առաջի Աստուծոյ: Այսքան առ այս:

Լբ. 437բ-8բ Խրատ յաղագս համբերութեանն, ի բանն Դուկասու. Համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր [Դուկաս, ԻԱ. 19] – Գիտելի է ըստ իմաստասիրաց, զի մարդն է տէր իւրոցն անձնիշխանութեամբն... եւ այլոց սոյնպէս զանդգնութիւն թիւրեւոյն յետս ընկերելի է: Այսքան յաղագս Սահմանի համբերութեան:

Լգ. 438բ-40ա Յաղագս է. պարզեաց Հոգոյն Սրբոյ, ի բանն Պօղոսի. Ես պարզեա մարդկան [Առ Եփեսացիս, Գ. 8] – Վարդապետք ասեն, թէ Որքան ճանաչումն է բարձրագոյն... Արդ, սոքա են է. պարզեւ Հոգոյն Սրբոյ՝ տուեալ ի յօգնութիւն առաքինութեանցն: Այսքան առ այս:

– 440ա-1ա.- նոյն քարոզը տե՛ս նաեւ ժէ., 415բ-6բ:

– 441բ-2բ.- նոյն քարոզը տե՛ս նաեւ ժը., 416բ-7բ:

Լդ. 443աբ Քարոզ անտեսացն. Առաքեալ Գաբրիէլ հրեշտակն Աստուծոյ ի քաղաք. Դուկաս [Ա. 26] – Սուրբ Աստուածածինն նման է սաղաֆի... եւ ապա մարդիկ բազմեցան ի սեղան արքայութեանն:

Լե. 443բ-5բ Քարոզ մկրտութեանն Քրիստոսի. |444ա| Ի քէն է, Տէր, աղբեր կենդանութեան. Սաղմոս – Երկիր ոչ տա պտուղ վասն Բ. պատճառի... եւ յորոյ վերայ հասանէր՝ կենդանացուցանէր զնոսս, այսինքն՝ զմկրտեալսն:

Լզ. 445բ-7ա Քարոզ Պետրոսի առաքելոյն. Դու ես վեմ, եւ ի վերայ այդ շինեցի. Մատթէոս [ժԳ. 18] – Պատշաճ է, զի որ տա բարի խրատ... եւ Տէրն ասէ. եղիցին մի հօտ եւ մի հովիւ:

Լէ. 447ա-8բ Չորեքշաբթին, որ է սկիզբն պահոց. Հող էիր եւ ի հող դարձցիս. Ծննդոցն [Գ. 19] – Ըստ ի մեղանշելն Ադամայ է... վասն այն ասէ Սիրաք. Յիշեա՛յ զօր մահու քո եւ յաւիտեան ոչ մեղիցես:

Լը. 448բ-50ա Այլ քարոզ յարութեանն Քրիստոսի. Երանի սրբոցն, որ ունիցին բաժին ի յարութեան յառաջնումն ի վերայ նոցա երկրորդ մահն ոչ ունի իշխանութիւն. Տեսիլն Ի. – Սովորութիւն է, յորժամ մեծ տօն յամենայն գաւառաց ժողովին անտ... եւ հանից զձեզ ի գերեզմանաց ձերոց, ժողովուրդ իմ, եւ տարայց զձեզ յերկիրն Իսրայէլի:

Լթ. 450աբ Այլ քարոզ վասն հովուացն. Ես եմ հովիւ քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխար:

րաց: Յովն., Ժ. 11] – Գիտելի է, զի Քրիստոս է բարի հովիւ... որպէս ճշմարիտ եւ քաջ հովիւն Քրիստոս, որպէս ասէ. Յիսուս առնէր եւ ուսուցա[նէր]”:

Խ. 450բ-2ա Քարոզ մարմնոյն Քրիստոսի. Այլ է մարմին իմ: Մատթէոս, ԻԵ. [=ԻԶ. 26] – Ըստ Օգոստինոսի, սէրն է պատճառ միաւորութեան... մարմինն Քրիստոսի տեղակալապէս է յերկինս եւ խորհրդաբար ի բազում սեղանս պատարագի քահանայիւր:

Խա. 452ա-3ա Քարոզ պատարագի եւ վասն մարմնոյն Քրիստոսի. Փորձեսցէ մարդ զանձն իւր եւ ապա ի հացէ անդի կերիցէ: Առ Կորնթացիս ԺԱ. [28] – Ըստ բժշկաց՝ որիշ կերակուր պարտ է տալ այնմ... աստուած ո՛չ արհամարհի, այլ արհամարհօղն Աստուծոյ:

Խբ. 453ա-4ա Քարոզ ընթրեացն. Այր ումն գործեաց ընթրիս մեծ. Դուկաս, [ԺԳ. 16] – Ըստ իմաստասիրաց, որ ինչ լաւագոյն է... վասն այնորիկ անյապաղ պարտ է ընթանալ առ բարի կոչօղն Քրիստոս Աստուած մեր:

Խգ. 454ա-5բ Այլ փարոզական. Եթէ ակն ֆո գայթաղեցուցանէ զֆեզ. Մատթէոս, Զ. [=Ե. 28] – Ըստ Օգոստինոսի յերկու բարոյն պարտ է զմեծ բարին ընդրել... զի մեռանելն ոչ է մեղք, այլ գայթաղեցուցանելն է մեղք մահու չափ:

Խդ. 455բ-6ա Քարոզ հինգէտասաներորդ կիրակի յետ տօնի երդու՞. Ոչ կարէք երկուց տէրանց ծանայել. Մատթէոս, [Զ. 24] – Եսայի ասէ. Նեղ է մահիճքն... սրբեցարո՞ւք, ընկեցէ՛ք զշարիս, ուսարո՞ւք զբարիս գործել:

Խե. 456ա-7ա Այլ փարոզ ծառի. Ծառ բարի պտուղ բարի առնէ, եւ ծառ չար՝ պտուղ չար առնէ: Մատթէոս, [Է. 18] – Որպէս մարմնաւոր ծառն ունի արմատ... այլ կամօքն յետոյ լինի չար կամ բարի, ապալ ուրեմն բանն Քրիստոսի ճշմարիտ է:

Խզ. 457ա-8բ Քարոզ տանուտեառն, որ տնկեաց այգի. Եւ տնկեաց Նոյ այգի եւ արբ ի գինոյ. յԱրարածքն Թ. գլուխ [=Ծնունդք, Թ. 20-1] – Նոյ թարգմանի հանգիստ... այլ առաւել կամի զմահ, քան զկորուստ հոգւոյն իւրոյ:

Խւ. 458բ-9ա Դարձեալ այլ փարոզ ի նոյն՝ վասն այգոյն. Դատ արարէք ընդ իս եւ ընդ այգիս իմ: Տնկեցի, զի բերցէ ինձ խաղող, եւ երբ ինձ փուշ, փակեցի զպարիսպ նորա եւ տաց զնա ի կոխան ազգաց [Եսայի, Ե. 4-5] – Արդ, վասն Գ. իրս տեսանելի է... եւ հոսեսցէ զնոսս ի յաւիտենական դժոխքն:

Խբ. 459ա-60ա Քարոզ սիրոյ. Մի՛ ունէք պարտապան գտանիցիմք, բայց թէ զմիմեանս սիրելոյ. Պողոս, [Հմ. ԺԳ. 8] – Ըստ Օգոստինոսի բնութիւն է սիրոյն միացուցանելն... վասն այն ասէ Պողոս. Ոչ ունէք պարտ[ապան գտանիցիմք], բայց թէ զմիմեանս:

Խբ. 460ա-1ա Այլ փարոզ սիրոյ. Որ սիրէ զեղբայր իւր, ի լոյս բնակէ. Յովնաննու յԱռաջի Կաթողիկոս, Բ. գլուխ – Ըստ Արիստոտէլի՝ ի յայնս որ կարգին... թէ կամիս սիրուիլ, սիրեա՛յ, եւ սիրեսցիս դու յԱստուծոյ եւ ի մարդոյ:

Ը. 461ա-3ա Քարոզ Մեծի ուրբաթին սգոյ. Ով դուք ամենեւեան անցաւորք նանապարհի, հայեցարո՞ւք եւ տեսէ՛ք, թէ իցեն երբէք ցաւ նման ցաւոց իմոց. յՈղբոցն – Սովորութիւն է վարդապետաց, զի յորժամ քարոզեն... ուստի երեւի թէ բազում շարշարանս եւ նախատինս կրեաց, որ ոչ գրեցին վասն բազ[մ]ութեանն:

Ըա. 463ա-6բ Գիրք վասն բանին մարմնացելոյ. Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ. Յովնաննու [Ա. 14] – Արդ, ի շորից աւետարանչացն պատուականագոյն գտանի... եւ հրեշտակացն միայն մի, զի ի հօրէ միայն են, եւ ոչ ի մօրէ:

Ըբ. 466բ-7ա Քարոզ առաջի կիրակի գալստեանն. Աւեհնեալ, որ եկն անուն Տեառն. Մատթէոս – Սահման էր ի հինն... եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք:

Ըգ. 467ա-8ա Քարոզ աւետեաց Աստուածածնին. Մաի ի պարտէզ իմ, ֆոյր իմ հարսն. յԵրգ երգոց, Է. [=Ե. 1] – Վարդապետք ասեն թէ, յոյժ հարկաւոր է, զի յորժամ ոք մեծ իշխան... այնպէս քոյր իմ ի մէջ դատերաց: Վասն այն ասէ Քրիստոս. Մտի պարտէզ իմ՛:

Ըդ. 468ա-9բ Քարոզ փոխման Աստուածածնին. Եւ նշան երեւցաւ յերկինս. կին մի արկեալ գիրեալ՝ զԱրեգակ եւ զԼուսին ի ներոյ նոսից նորա, եւ ի վերայ զլսոյ նորա պսակ ԺԲ. աստեղաց. Տեսիլն, ԺԲ. գլուխ – Գրեալ է յերկրորդ թագաւորութեանցն... նոյնպէս ամենաւրհնեալ մայրն իւր յետ երից աւուրց մահուանն իւրոյ փոխեցաւ յերկինս, առ Որդին իւր:

Ըե. 469բ-71բ Քարոզ Աստուածածնի ծննդեան. Եղեւ նա իբրեւ զնա շահաբեր ի հեռաստանէ զմեծութիւն. յԱռակացն, [ԼԱ. 14] – Ասեն վարդապետք, թէ յորժամ թագաւոր ոք թշնամի է... զի զամենայն գերեալսն ի սատանայէ զմարդիկ բարձեալ յինքն, տարաւ յերկնային նաւահանգիստն, որ եւ զմեզ արժանի՛:

Ըզ. 471բ-3ա Այլ փարոզ Աստուածածնի ծննդեանն. Ծագեսցէ աստղ ի Յակոբայ. գրեալ է ի Տեսիլն, Ժ. գլուխ [Ղեա., ԻԳ. 17]... – Վարդապետք ասեն, թէ աստղս այս, որ անկաւ յերկնից... այսինքն՝ զի սուրբ կոյսն զանազան ակունս առաքինութեանց ներածէ շնորհօք ի սիրտս հաւատացելոց եւ քրիստոնէից:

Ըւ. 473ա-4ա Քարոզ սուրբ խաչին. Այլ ինձ փալիցի պարծիլ, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի – Ասեն վարդապետք, թէ մարդիկ որ կամին երթալ... արմաւենին զպտուղ արդարութեանն, իսկ ձիթենին զկակղութիւն ողորմութեանն:

Ըբ. 474ա-5ա Քարոզ հրեշտակապետացն. Ոչ ոք է, որ օգնէ մեզ, բայց միայն հրեշտակապետն Միքայէլ

գլխատուն մեր. Դանիել – Ասեն վարդապետք, թէ որպէս մեղուք նստելով ի վերայ ծաղկանց... այսքրիկ ամենեքեան ոչ լինին հրեշտակաց, այլ ներհակք սոցին:

Ծք. 475ա-6ա Այլ քարոզ վասն հրեշտակացն. Հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերգս Հօր իմոյ, որ յերկինս է. Աւետարան [ըստ Մատթէոսի, ԺԸ. 10] – Ըստ Դիոնէսիոսի յերկնային քահանայապետութեանն բաժանէ երիս... երրորդ՝ յաղագս ցուցման սիրոյն, զոր ունին առ մեզ:

Կ. 476ա-8բ Քարոզ առաւելոցն Սիմոնի եւ Յուդայի. Որդիք քո որպէս նորատունկ ձիթենի շուրջ զսեղանաւ քո. Սաղմոս [ՃԻԷ. 3] – Աբրահամ հայրն հաւատոյ... զի ընկալան սոքա զփառս, կալով շուրջ սեղանովն Աստուծոյ, քանզի ասէ Որդիք քո որպէս նորատունկ ձիթենոյ շուրջ սեղանով քո:

Կա. 478բ-9ա Քարոզ Մեծի ուրբաթին. տե՛ս եւ արա՛յ ըստ օրինակին, որ ցուցաւ քեզ ի լերինն. յԵլից ԻԷ. [=Առ Եբրայեցիս, Ը. 5] – Քրիստոս է, որպէս զիրք օրինակի եղեալ ի գրակալ խաչին... յայնմ աւուր յոյժ առատ լինի ընդդէմ սիրելեացն աղաչելով վասն նոցա:

Կբ. 479ա-81ա [Ք]արոզ ամենայն սբոց. Երանի ամենեցուն, որ բնակեալ են ի տուն Տեառն յաւիտեանս յաւիտենից արհնեսցեն զքեզ – Վարդապետք ասեն, թէ Գ. զանազանութիւն կա ի մէջ մարդոյս եւ այլ կենդանեաց... որով զմեզ արժանի արասցէ Քրիստոս Աստուած իւր կենարար փողոյն եւ երկնից արքայ[ութեանն]:

Կգ. 481ա-3ա [Ն]ախերգան քարոզի. Երթա՛յք քարոզեցէ՛ք եւ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս. Մատթէոս, [ԻԸ. 19] – Վասն բազում պատճառաց անպատեհ է զբանն Աստուծոյ ծածկել... այսինքն՝ զմեղս եւ զանմիաբանութիւն քակել եւ զընդդէմն տընկել:

Կդ. 483ա-4ա Քարոզ աղօթից – Աղօթքն է յօգուտ վասն Գ. պատճառի... այլ ստորայինքս ունին հակառակութիւն ընդդէմ կամացն Աստուծոյ:

Կե. 484ա-5ա Քարոզ խոստովանութեան. Երթիցո՛ւք երից ատուրց նանապարհ յանապատ եւ զոհեսցո՛ւք Տեառն Աստուծոյ մերոյ. յԵլիցն, [Գ. 18] – Մարդ որ ընթանա ի ճանապարհ ինչ... ի փառս Աստուծոյ արասջիք զամենայնն:

Կզ. 485ա-7ա Դարձեալ ի նոյն քարոզ. Երթիցո՛ւք երից ատուրց նանապարհ. Ղուկաս [=Ելք. Գ. 18, Ե. 3] – Ոմն թագաւոր ոչ կարէր ԺԹ.աւ (100.000) պատերազմել... զի ոչ ոք ի հրեշտակաց կամ ի սրբոց իշխեսցէ զճշմարիտ խոստովանիլն ամբաստանել:

ԿԷ. 487ա-8բ Դարձեալ ի նոյն բանն. |487բ| Երթիցո՛ւք երից ատուրց նանապարհ – Ձանազանութիւն է ի մէջ ճանապարհի... ի սրտէն զխոստութիւնն բառնա, ի բերանոյն՝ զամօթն, ի քսակէն՝ զագահութիւնն:

ԿԸ. 488բ-9բ Այլ քարոզ խոստովանութեան. Խոստովան եղէք քեզ, Տէ՛ր, զի բարկացար ինձ եւ դար-

ձուցեք զստամոտքիւն քո յինչն եւ մխիթարեցէք զիս: Եսայի, ԺԲ. [1] – Ապաշխարութիւնն զօրութիւն մեծ ունի վասն բազում պատճառի... այսպէս եւ Աստուած առնու վրէժ ի մեղաւորաց՝ դատապարտելով զնոսայ:

Կթ. 489բ [Ք]արոզ անտեսացն. [Ա]ռաւեցաւ Գարիիլ հրեշտակն Աստուծոյ ի քաղաք [մի Գալիլեացոց, որում անուն էր Նազարեթ]. Ղուկաս [Ա. 26] – Սուրբ Աստուածածինն նման է սագաֆի... սուրբ կոյսն սղայ էր հոգով եւ մարմնով, եւ ոչ կայր ի նմահնութիւն ինչ մեղաց (/// շարունակուած, յաջորդ՝ Թ. 490բ շարունած):

Զ. 491ա-519ա [Ի հարանց վարուց]

ա. 491ա-514բ Գլուխ չորրորդ. Բանք սուրբ հարցն յաղագս զղջութեան եւ քաղցր արտասուաց – Ասաց հայրն Անտոն. Առաջի աչաց քոց կայցես միշտ գեր- [կ]իւն... յետոյ ի շափ փարթամութեան ծնողաց իւրոց եհաս բարուք քաղաքավարութեամբ (տե՛ս ձեռ. 789 Ա, 71ա-83բ):

բ. 515ա Սրբոյն Նեղոսի Վասն որկրամոլութեան – Սկիզբն պտղաբերութեան ծաղիկ, եւ սկիզբն առաքինութեանն գործոյ՝ համբերութիւն... եւ ոչ խրխնջէ շարժէ արձակմամբ ախտիցն ցանկութեանց (տե՛ս ձեռ. 789 Ա, 106աբ):

գ. 515բ-6ա Նեղոսի սուրբ հօրն Յաղագս պոռնկական խորհրդոց – Ձգաստութիւն ծնանի զժուժկալութիւնն... զի մի՛ այրեսցիս յանջէջ հօրն ի տեսիլ ամենայն մտեղեաց (տե՛ս ձեռ. 789 Ա, 125ա-6ա):

դ. 516աբ Նեղոսի սուրբ հօրն Վասն արծաթաւորութեան – Արծաթ ամենայն չարեաց արծաթասիրութիւն... եւ վնասի եւ ոչ ինչ օգտի. յորմէ ազատեսցէ զմեզ յամենաբաւական կարօղն ամենայնի Տէրն եւ փրկիչն Յիսուս Քրիստոս, յորում փառք յաւիտեանս. ամէն (տե՛ս ձեռ. 789 Ա, 137աբ):

ե. 516բ Նեղոսի սուրբ հօրն Յաղագս սնափառութեան – Մնափառութիւն է ախտ անբնական... եւ զքեզ փառատրեսցէ ի վերջին աւուրն, յորում փառք յաւիտեանս. ամէն (տե՛ս ձեռ. 789 Ա, 173ա):

զ. 516բ-7բ Նեղոսի սուրբ հօրն Վասն հպարտութեան եւ ամբարտաւանութեան – |517ա| Հպարտութիւն է ախտ զայրացեալ... յորում վայել է փառք եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն (տե՛ս ձեռ. 789 Ա, 185բ-7ա):

է. 517բ-8ա Նեղոսի սուրբ հօրն Խրատ վերակացոց – Նաւավար տգէտ պատրաստէ ի կորուստ... յորում վայել են փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն (տե՛ս ձեռ. 789 Ա, 216բ-7ա):

ը. 518աբ Նորին սուրբ հօրն Նեղոսի Պատուէր առ մանկուսն – Պարտ է մանկանց ճգնել եւ կրթել զմարմինս իւրեանց... եւ նոցա բարեացն ժառանգակից լինել ի Քրիստոս ի Յիսուս ի Տէր մեր, յորում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն (տե՛ս ձեռ. 789 Ա, 217աբ):

թ. 518թ-9ա Սուրբ հօրն Նեղոսի վասն տրամուրթեան, որ խափանիչ է աղօթից – *Տրտմութիւն է տխրութիւն անձին... շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի փառք, վայել է եւ իշխանութիւն, այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն (տե՛ս ձեռ. 789 Ա, 241բ-2ա):*

է. 519ա-26բ [ձառք, խրատք]

1. 519ա-20բ ձառ վասն խոնարհութեան – *Առաջին աստիճանն այս է, որպէս զի կրօնաւորն ունիցի առաջի աշաց զերկիրն Աստուծոյ... եւ փառաւորեսցեն զՀայր ձեր, որ յերկիրն է:*

2. 520բ Եւ դարձեալ բան վասն խոնարհութեան – *Տեարք եւ եղբարք, զիրք սուրբք ձայնեն եւ ասեն... եւ բարձրանամք ընդ նոյն խոնարհութեամբ:*

3. 520բ-3բ Աբբայ Եբեմի խորին Աստուծոյ ասացեալ Յաղագս զղջման – *Հոգեւորապէս նորոգեսցուք, եւ մի՛ մարմնով ըստ մարմնոյ... զԱստուած գթութեանց ես եւ Տէր ողորմութեանց, եւ քեզ ամենայն գոհութիւն ամենայնի:*

– 520բ Որք եւ հպարտ փառամոլին, / յաղթող գտան յասպարիսին, / զիս փրկեսցես հայցմամբ նոցին / յաջակողմեան մենամարտին:

4. 524ա-6ա Սուրբ հօրն Նեղոսի Խրատ պիտանի – *Լաւ է յստակ խորհրդով ննջել... որք յամենայն ժամ կարօտ են արդարութեան եւ հեզութեան Յիսուսի Աստուծոյ, յորում փառք յաւիտեանս. ամէն:*

5. 526աբ Խրատ սուրբ հարցն – *Որ ոք կամիցի Քրիստոսի Աստուծոյ հաճոյ լինել... եւ հաճոյ Քրիստոսի Աստուծոյ, յորում փառք եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Ը. 527ա-57ա [Քաղաւածոյ մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի Գրիգորի Տաթեւացոյ] (համառօտ տարբերակ)

– 527աբ [Յանկ]. Այս ինչ է ի սմայ – *Ա. Ընդդէմ որք ասեն զբերքաթուրն... ՂԹ. Եղբայրք իմ մեծամեծք եւ որ ազգ եւ ազինք:*

1. 528ա-57ա Նորին Գրիգորի աշակերտի եռամեծին Յոնաննու Ռոտունեցոյ արարեալ Հաւաքումն բանից ի մեկնութենէ Սաղմոսին աստուածահօրն Դաւթի մարգարէին – *Եպիփան ի վերայ սաղմոսին. Ոչ յարիցեն ամբարիշտք ի դատաստան, ասէ. Ամենեւին մեղաւորք ոչ յառնեն... եւ ազինք հեռաւորքն ամենայն: Այսքան առ այս: Եւ Քրիստոսի Յիսուսի Աստուծոյ մերոյ փառք եւ գոհութիւն ընդ Հօր եւ ամենասուրբ Հոգոյն անզբաւ յաւիտեանս. ամէն:*

Այլ խմբագրութիւն է 2^{րդ} 1020 ձեռագրի (Յա-373բ) համեմատ. նման է ձեռ. 1126, 4ա-65բ:

Թ. 559ա-82 Մեկնութիւն Երգ երգոցի ի հոգէխառն իմաստապատում առն Սողոմոնի արքայի Իւրայելի, զոր արարեալ է տեառն Գրիգորի ներանձնատր Բահանայի եւ հոգէշնորհ վարդապետի, որդոյ

տեառն Խոսրովայ, զոր Բրիստոսասէր արքայն Գուրգէն սակս իւրոյ աստուածերկիրոյքեան եւ ընթացասէր գոյով ցանկացեալ տառի մեծաւ աղաչանօք եւ խնդրուածով եւ մեկնեալ զառակս փեսայի եւ հարսին, որ բացայայտի մեկնութեամբ ի Քրիստոս [եւ] եկեղեցի

ա. 559ա-61ա [Նախադրութիւն] – *Հրամանք քո աստուածասէր թագաւորութեանդ, ով տէր արքայ... Թէ Տէր ասաց ցիս. Որդի իմ ես դու, եւ ես այսօր ծնայ զքեզ:*

բ. 561ա-82ա Երգ երգոց, որ է Սողոմոնի – *Սողոմոն խաղաղութիւն թարգմանի... Դարձեալ եւս յաւէտ փառք շնորհատուողին Տեառն Յիսուսի Քրիստոսի հանդերձ Հարբն եւ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն, ամէն:*

– 582ա [Յիշատակարան հեղինակի] Ի շորս հարիւր ու քսանուվեցն (977) թուականութեան հայոց հարկեցայ ես՝ Գրիգոր քահանայ ի Նաբեկա, որդի տեառն Խոսրովա Անձաւացեաց եպիսկոպոսի ի Գուրգենա աստուածասէր քրիստոսապսակեալ արքայ՝ որդոյ Ապուսահլի Համազասպ թագաւորի, որդոյ Գագկա թագաւորի առի մեկնութիւնս ահաւոր բանիցն Սողոմոնի եւ բացայայտալ զխորինս զձաձուկս նոր ի նոսա, որ են քաղցր առ ի լսել, վասն զի զփեսայէ եւ զհարսնէ ասէ, որ եւ զստեանց եւ զկարմրացեալ շրթանց եւ զայտից զեղեցկութենէ եւ զաշաց զանկալեաց եւ զքեռ եւ զեղբօրորդոյ եւ զօր[ի] որդաց եւ զայլն ամենայն այսպիսեաց բանից տոբանայց եւ ս[ր]տից խաղտանաց սեռն սիրոյ եւ շաղկապ տիաւորութեանց, զոր լուեալ մարդկան, անիմանալեօք մտօք այլ եւ այլ իրս իմանին: Ապա ի հոգս եղեալ թագաւորն այսպիսի իրի, յղէ առ իս միանգամ եւ յերիցս, որում ոչ իշխեցի ընդդիմանալ, զի ծանեա, թէ աստուածահաճոյ է հրամանն, եւ մեկնեցի զԵրգս երգոցն նորին հրամանան, զի թէպէտ եւ յաւելի գործ քան զիս առի զանձամբ առ երկիր զանհնազանդութեան, զի մի՛ թագաւորական հրամանն անկատար մնասցէ, սակայն յոյժ յանդգնութիւն է ինձ այս եւ բազում բամբասանաց արժանի յամենեցունց, նա՛ եւ աստուածային կողմանէն պատժոց ակնկալիք, բայց յերկոցունց կողմանէ՛ յաստուածայնուցն եւ ի մարդկայնուց զթագաւորական հրամանն առաջի կալեալ կարծեմ արդարանալ, զի իւր իսկ Քրիստոսի հրաման է հնազանդ լինել թագաւորաց իբրեւ Աստուծոյ, եւ որ հնազանդի իւր՝ համարի Աստուած, եւ որ անհնազանդ գտանի, եւ զայն իւր եւս համարի Աստուած, զոր աղաչեմ զընթացասէրսդ, մի՛ մեղադրանս յաւելուլ ինձ յաղագս ձեռնարկութեան ի գործ, որ յաւելի էր, քան զարժանն իմ, եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն, ամէն:

Տե՛ս ձեռ. 1104, 48ա-116ա: *Տպ. տե՛ս Մատենագիրքը Հայոց, հտ. ժԲ., Գրիգոր Նարեկացի, Երևան, 2011, էջ 749-883:*

Ժ. 583ա-603բ Հոգիապայծառ և տիեզերայնյա վարդապետին Վարդանայ արարեալ Պարզուպին Երզոց երզոյն ի յոյսն Քրիստոս

Տե՛ս ձեռ. 1141, 305բ-27բ: *Յառաջարան/583աբ: Մեկնութիւն/584ա-603ա: Յիշ. հեղինակի/603աբ:*

– 596բ «Փառք Աստուծոյ ամէն: Մինչեւ ցայս վայր Գրիգոր Նիսացին մեկնեալ է, և աստի ի հետ զՀոգին Սուրբ խնդրեմք առաջնորդ»:

ԺԱ. 607ա-24բ Համառոտ հաւաքումն ի տեսութիւն լուծմանց Երզոյ երզոյն, աշխատասիրեալ Գրիգորիոս հսկողի, արի և երջանիկ հեռետորի և քաջ փիլիսոփայի Հայոց, աշակերտի և եռամեծին Յոհաննէս Որոտնեցոյ, ի լուսաւոր բանից վարդապետին Վարդանայ. Օգնեա, Սուրբ Հոգի Աստուած

Տե՛ս ձեռ. 1012, 65ա-94բ. *Յանկ/607աբ: 1/607բ-24բ:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 36բ (Մարկոս գրչի) Արդ, ո՛վ մատակարարք և սպասաւորք բանից կենաց, յորժամ հանդիպիք այսմ աստուածաշունչ մատենիս, յիշեցջիք ի Քրիստոս գտառապեալ և զչնչին Յակոբս՝ յետին ի սպասաւորաց բանին, ողորմութիւն հայցեսջիք ի Քրիստոսէ, զի և ձեզ ողորմեսցի՝ որ առատն է ամենայնի, նաև զծողի սորա Մարկոս իրիցի:

48բ Քրիստո՛ս Աստուած, բարեխօսութեամբ ծնողիք և միշտ կուսին, ողորմեա՛ ստացողի սուրբ գրոցս պարոն Մկրտնին և ծնողացն իւրոց, ազատութիւն և մեղաց թողութիւն շնորհեա՛ աստ և ի միւսանգամ գալստեանն քո և ինձ՝ զծողի սորա Մարկոս իրիցի, և բեզ փառք յաւիտեանս. ամէն:

2. 206ա (Մալին գրչի) Մանաւանդ յիշեսջիք ի Քրիստոս զՅակոբ վարդապետն, որ բազում երախտիք և աշխատանք ունի ի վերայ սորա, և զիս՝ մեղապարտ ոգի Մալին զծողիս, և ծնողացն իմոց:

324բ Այլ և աղաչեմ յիշել ի Տէր զՄալին եղկելի գրիչս:

481ա և ինձ մեղապարտ Մալին՝ փծուն զծ[ողի]՝:

624բ Այլ և յիշեսջիք զանարժանս ի գրչաց զմեղօք գառածեալ զՅարեանցի Մալին դպիրս, որ անուամբ միայն եմ և գործով տարակացեալ, զոր և մաղթեմ առ ձեզ, ո՛վ գաղափարօղք և վերծնօղք տառիս, յիշեսջիք զմեզ ի յաղօթս ձեր, լինի թէ ներումն շնորհեսցէ Աստուած մեր բազում յանցանացն, և ըստ յիշմանն յիշեսջիք ի յաղօթս ձեր զՅակոբ վարդապետն, որ ստացաւ զայս գիրքս ի հալալ արդեանց իւրոց յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց, զոր Տէր Աստուած բարի վայելել տացէ սմա: Այլ և յիշեսջիք զծնողսն իմ զՕլիւրէկն և զԵղիսաբեթն, որ հանգուցեալ են ի Քրիստոս: Եւ դուք յիշեալ լիջիք յայնմանէ, որ էջ ի խնդիր մոլորեալ ոչխարին և ժ.անց (10) դրամիցն և

եգիտ, և զթով խնամեաց, արկանելով ի վերայ վիրացն ձէթ և գինի, նոյն գթութեամբն և ողորմութեամբն ողորմեսցի ձեզ և մեզ ի յարութեան յաւուրն յետնումն, և արժանաւորս արասցէ հասանել մասին ժառանգութեան սրբոցն ի լոյս: Այլ և սխալանաց և խոշորութեան սորա անմեղադիր լերո՛ւք, զի հազիւ կարացաք այսքան կարս ուսանել, բայց աղաչեմ, զի յորժամ ընթեռնուք, մի՛ այսպանիցէք ըստ բանի առաքելոյն, մի՞թէ ամենքեան վարդապետք իցեն, այլ ներեցէ՛ք յոգնահանճար իմաստութեամբ ձերով. ամէն:

3. 331բ (Կիրակոս գրչի) Մանաւանդ զանարժան զծօղ նամակի Կիրակոս էրէցս յիշեցէ՛ք ի Քրիստոս:

340բ Որ և զամենեսեան առ հասարակ գհաւատացեալս անուան իւրոյ և զերկրպագուս կենսատու խաչին դասեսցէ Աստուած ընդ սրբոցն դասուց, ներելով անյիշաչար լիցի ի վերայ բազում յանցանաց և սխալանաց մերոց, ի ձեռն արեամբ ներկեալ և շարշարանօք խաչին իւրոյ սրբոյ, և մաղթանօք և բարեխօսութեամբ ամենայն երկնաւորց և երկրաւորաց, և համագումար սրբոց և սիրելեաց իւրոց Քրիստոս Աստուածն մեր, և նմա փառք ընդ Հօր իւրում և Սուրբ Հոգւոյն յաւիտեանս. ամէն:

342ա Որ և աղօթիք ամենայն սրբոց զողորմութիւն և զնուէրս ոգւոց ձերոց ընկալցի Քրիստոս զհաճոյսն իւր և միոյն փոխարէն հատուցէ աստ զձ.աւորն և անդ զկեանսն յաւիտենից ժառանգեցուցէ ի փառս Հօր իւրոյ և Սուրբ Ոգւոյն յաւիտեանս. ամէն:

389ա Ո՛վ դասք երամից սուրբ վարդապետաց, յորժամ հանդիպիք այսմ ծաղկեալ և անուշահոտ ընդ ամենայն ոլորտս տիեզերաց հոտոտեալ և ճաշակմամբ սորին, յիշեցէ՛ք զանարժան և մեղօք մածեալ Կիրակոս էրէցն և զծնողսն իմ զԶաւարիայն և զԵղիսաբեթն, և զեղբարսն իմ զտէր Յոհաննէս արեղայն և (չնչա՛ժ՝ «զՍահարն»), և զկենակիցն զնորաբողբոջ Մարիամն, զոր մանուկ տիօք փոխեցաւ առ Քրիստոս, մանաւանդ և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է արհնեալն յաւիտեանս. ամէն:

467ա Զտառապեալ և զփծոն, զանարժան զծօղս յիշեցէ՛ք:

4. 376ա (Աղամալ գրչի) Աղամալս յիշեա՛:

389ա Յիշեցէ՛ք զանարժան և մեղօք մածեալ Աղամալս, որ անուանեցաւ Պետրոս, և դուք յիշեալ լիջիք]:

450ա և զանարժան գրիչս յիշէ:

5. 390բ (Մկրտիչ գրչի) Ո՛վ ընթերցող, զՄկրտիչ տառապեալ զծօղս յիշեա՛, և դու յիշեալ լիջիս:

515ա Զտառապեալ և զմեղապարտ Մկրտիչ դատապարտեալս յիշեցէ՛ք և ող[որմի] ասացէ՛ք]:

6. 241ա (Թուղթ կոկողի) Այլև յիշեցէ՛ք ի Քրիստոս զնշօստող և զկոկող սորա, ով որ բազում երախտիք աշխատանք ունի ի վերայ սորա:

7. 81ա (ծաղկողի) Արդ, ո՛վ մատակարարք եւ սպասաւորք բանից կենաց, յորժամ հանդիպիք այսմ աստուածաշունչ տառիս, յիշեսջիք ի Քրիստոս զտառապեալ եւ զչնչին Յակոբս՝ յետին ի սպասաւորաց բանին, ողորմութիւն հայցեսջիք ի Քրիստոսէ, զի եւ ձեզ ողորմեսցի, որ առատն է ամենայնի (նման՝ 97բ, 110բ, 140ա, 175բ, 245ա, 269ա, 321բ):

256բ Մանաւանդ եւ զստացող սորին զսրբասնունդ եւ զհեզառօցի եւ զքրիստոսադաւան Յակոբ վարդապետն, որ շատ աշխատեցաւ ի վերայ ծաղկի սորա, որ միայն ձեռամբ իւրով աւարտեաց, զոր Տէր Աստուած հատու՞, եւ ինձ՝ անարժան Մալին տատանեալ գրիչս յիշեցէք]:

8. 34ա (ստացողի) Քրիստո՛ս Աստուած, բարեխօսութեամբ ծնօղի քո եւ միշտ կուսին, ողորմեա՛ ստացողի սուրբ գրոցս պարոն Մելքոնին, եւ ծնողացն իւրոց ազատութիւն եւ մեղաց թողութիւն շնորհեա՛ աստ եւ ի միւսանգամ գալստեանն քո, եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն (նման՝ 80բ, 85բ, 93բ, 103ա, 112ա, 136ա, 145բ, 182բ, 305ա):

326ա Փառք, պատիւ եւ գոհութիւն եզակի տէրութեանն եւ միեղէն աստուածութեանն եւ միասնական Սուրբ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, յամենայն արարածոցս, յամենայն յաւիտեանս. ամէն: Զի որք եռափափազ սիրով եւ մշտատենչ յուսով եւ մեծահանդէս հաւատով աստուածայնույ շնորհացն եւ գերակա բարեացն, իմանալի փառացն եւ անպատում ուրախութեանցն, յաւետախաղաց կենացն եւ անձառ խորանացն, ուղղակի եւ իմանալի յանհաս խորսն յառին եւ խոհեմ եւ գերամբարձ մտօք, յաստուածապետականին բարձրութիւնսն եւ ի գեղեցկութիւնսն նրբահայցեցութեամբ նկատեն եւ զանտի բարիսն պայծառտեսութեամբ, եւ խոր իմացմամբ ճշգրտիւ ճանաչեն զամենայն երեւելիքս եւ զգիւրավատնելիքս յետս ընդդէմ ընկրկեն, միայն գերակայ եւ աստուածայնույ, եւ շնաշխարհայնուցն ցանկան բազում եւ հոլովակի ըղձմամբ ըստ ասելոյն Տեառն, երթեալ զամենայն, զոր ինչ ունէ, վաճառէ, եւ գնէ զանապական զգանձն եւ զլուսափայլ եւ զգեղեցկատեսիլ մարգարիտն, եւ զպատուական եւ զարփիամաքուր եւ զբարձրագոյն յագարակն, ըստ սմին աւրինակի եւ յեղանակի ամենայն ոք ցանկան արքայութեանն՝ ըստանալով գիրքս աստուծայինս: Ըստ որո[ւ]մ այսմ խրատու ունկնդիր եւ ցանկացող եղեւ քրիստոսասէր եւ բարեմիտ զպարոն Մելքոնն՝ իբրեւ երկիր պարարտ ըստ տէրունական առակին, արդիւնաւորեալ աճեցուցին զսերմն աստուծայնույ բանին, յոյժ փափագմամբ զմիմեանս յորդորելով ստացաւ զաստուածաշունչ գիրքս՝ յիշատակ անձին իւրոյ, ըստ այնմ, թէ՛ Երանի այնոցիկ, որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընտանեակ է նմա յԵրուսաղէմ, ի դառն եւ ի վերջացեալ պաղ ժամանակիս, ի թուաբերութեան Հայ-

կագեան սեռիս ԹՃԹԺ.Երրորդի (1663), ի յաւագ ամսոյն սեպտեմբերի սկիզբն արարեալ զաստուածաշունչ բուրաստանիս, մինչեւ ի գալ ամեան (1664) յունիսի ԻԶ. (26) աւարտ հասուցեալ ձեռամբ նօտարաց երկից՝ տէր Մարկոսին եւ անպիտան դպիր Մալինիս, որոյ պատճառաւ արժանի վարկանեմ զընթերցողսդ յիշել միշտ զվերոճրեալ զստացող սորա, որ ստացաւ զսա ի հալալ եւ արդար վաստակոց իւրոց, ի խնդրոյ սրբասնեալ եւ քրիստոսադաւան Յակոբ վարդապետին, զոր Տէր Աստուած վայելել տացէ միշտ յաւիտեանս. ամէն: Դարձեալ ստացաւ զսա յիշատակ անձին իւրոյ. յիշեցէք: Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Մելքոնն եւ զծնօղքն իւր զԲաղին եւ զԲէկիխանն, յիշեցէք: Միւսանգամ յիշեցէք ի Քրիստոս զՄելքոնն եւ եղբարցն իւրոց՝ Մելիֆեանին, որ հանգուցեալ է առ Քրիստոս, եւ կենդանի եղբարցն՝ Սահակին, Մանկասարին, Յովանիսին, տէր Աբրահամին. յիշեցէք: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Մելքոնն եւ զամուսինն իւր զԹաճուսն, յիշեցէք եւ Աստուած ո[ղորմի] ասացէք]: Կրկին անգամ յիշեցէք ի տէր զպարոն Մելքոնն եւ զորդիքն իւր զՂաստուղանն, զԲաղին եւ զՍողոմոնն (3 տող չգրած) յիշեցէք: Միւսանգամ ի Քրիստոս զպարոն Մելքոնն եւ զքորքն իւր՝ զԽիալն եւ զՆազրումն յիշեցէք: Այլ եւ մերձաւորացն եւ ազգականացն ամենեցուն եղիցի յիշատակս անջինջ, մինչեւ յօր երեւելոյ փրկչին. ամէն (6 տող չգրած):

Եւ արդ, ով սպասաւորք կենաց բանին եւ պաշտօնեալք վերնոյն Սիովնի, մանկո՛ւնք եւ զարգարի՛չք սուրբ եկեղեցւոյ, յերեսս անկեալ հայցեմք ի սիրելեացդ ձերոց, զի յորում ժամու դէպ եւ կամ ընթերցումն պատահիցի, ձեզ՝ բարեկամացդ, որ ի մէնջ անիմանալի է, այլ ի շնորհացն, որ ի վերուստ իմանալի լեալ բուրաստանս, որ եւ կոչի հին եւ նոր պատուիրանագրութիւն աստուածապետականէն առ ի յօգուտ մեզ՝ ստորայնոցս, եւ պատճառ վերնոյն երանութեան տենչօղք հպմամբ աննիւթական եւ մշտնջենաւոր բարութիւնս անկարծիք օգուտ ինչ ձեր գտեալ: Իսկոյն յիշմամբ մասնակիցս արասջիք զմասնեակս ընթանրիցդ, անիմաստս յիմաստնոցդ, անսուրբս ի սրբոցդ, անօգուտս ի յօգնականացդ, ապիրատ եւ հէք զՅակոբ եւեթ անուամբ |326բ| կոչեցեալ վարդապետս, յորում եղէ յետ մահուան տիեզերալուր եւ քարոզիչ եկեղեցւոյ եւ կարգաւորիչ հասարակաց մանկանց Սիովնի մեծի վարդապետին վարդապետաց Խաչատուոյ Կեսարու եւ առաջնորդին մեծին Զուղայու: Սորա փոխեալ եղեւ ի հանդերձեալ կեանսն ի թուաբերութեանս ԹՂ. եւ Ե. (1646) ամին, եւ յաջորդեալ յետ սորա սիրելի եւ աւագագոյն եւ միշտ հլոյ եւ կամակատար աշակերտն Դաւիթ, որ եւ ճար եւ նման վարդապետին իւրոյ սկսեալ ժողովել զմանկունս՝ առ ի աշակերտել եւ ուսուցանել զվարս աստուածային կրթութեամբն, զոր կրթեալ եւ

կատարելապես ծրարեալ ունէր ի յանձին իւրում զամենայն վարս առաքինութեան, զոր եւ տեսեալ մեր թշուառացելոյս ցանկացեալ վարուցս մեծի եւ գերահոչակ եւ հեզահոգի քաջաջան եւ անձանձիր միշտ ուսուցանողի տեսանս մեծի եւ արքեպիսկոպոսի <Բ> գեօղաքաղաքիս Ջուղայու եւ առաջնորդ ուխտիս մեծի աթոռոյս Ամենափրկչի վանացս եւ դամբարանի սրբոյն Խաչատրի օրէնսուսոյց վարդապետի, յորում եղեալ կա ի ներքոյ սրբոյ սեղանոյն: Եկեալ ի կրօնս յայս, յորում էի Փե.ամեա, ի թուականիս ՌՃ. եւ Զ. (1657) եւ յունվարի ամսոյն մէկ, ի մենարանի աստ սիրելին ամենեցուն զԲարսեղ քաջ հռետոր եւ ճշմարտութեան վարդապետն, որ եւ վախճանեալ ի տիս երիտասարդութեան, ի ՌՃ. եւ է. (1658) թուին, նաեւ զհանգուցեալ եղբարսն, որք ի աստուստ՝ զտէր Սարգիսն եւ զտէր Մովսէսն եւ զԽաչիկն յիշել աղաչեմք՝ զմիաբանք սուրբ ուխտիս, որք են ի ներքոյ հրամանի հասարակաց հօրս մերոյ Դավթ վարդապետին եւ զՍտեփաննոս հանճարեղագոյն եւ մշտաբարոզ ճշմարտութեան վարդապետին, զոր Տէր Աստուած անփորձ պահեսցէ ի ներկայս եւ ի հանդերձեալն. ամէն: Նա եւ զտէր Յոհաննէսն եւ զտէր Բարսեղն, զտէր Միխայէլն եւ զտէր Յակոբն, զտէր Ստեփաննոսն եւ զտէր Յովսէփն, զտէր Սիմէոնն եւ զմիւս տէր Յոհաննէսն եւ զսարկաւագոնս՝ զՊետրոսն եւ զՂազարն, զԱբգարն եւ զայլ զսպասաւոր սուրբ ուխտիս, որք են թուով եօթն եւ տասն, զոր եւ յերեսս անկեալ աղաչեմք զձեզ, ո՛վ մանկունք սուրբ Սիովնի, միշտ յիշել զվերոյգրեալքս ի մաքրափայլ յաղօթս ձեր, եւ դուք՝ յիշողքդ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ փրկչէն մերմէ. ամէն:

Պատճառ վերստին նորոգման Ամենափրկչի վանացս, վասն զի միշտ վարանեալ կայեաք միաբանք սուրբ ուխտիս սակս ոչ բաւականութեան վանացս եւ անյարմար եւ անզարդ շինուածոյ սորին, զոր ի վաղուց հետէ վարդապետիս իմոյ եղեալ էր ի մտի զխորհուրդս զայս, այլ ոչ գտանիւր դիպող եւ անքոյթ ժամանակ: Զի միշտ ի վրդովման եւ ի նեղութեան ներքոյ կայեաք՝ երբեմն ի Ֆռանկաց պատրշաց, երբեմն շկամողաց ոմանց վարդապետաց եւ ժողովրդոց, երբեմն ի տարակուսութենէ եւ յուսահատութենէ, եթէ կար գոյ աւարտման կամ կատարումն նոր մտածութեան ձեւոյս, զի մի՛ լիցիմք ծաղր ըստ տէրունականին, եթէ՛ Այրս այս սկսաւ շինել եւ ոչ կարաց կատարել: Այլ ըստ հոգոյ հօրս իմոյ զամենայն զներհակաս յինքենէ ի բաց եղեալ, յուսով ապաւինութեամբ դիմեաց զինքն առ յոյսն բնաւից ունելով նեցով[ւ]կ իմացկանին զայն բան, որ ասէ ինամօղն բողորից, ի ձեռն մարգարէին, եթէ՛ Զեզ միայն է բնակել ի տունս զմբեթեայս, եւ տուն իմ աւերեալ կա: Զայս բան ապաւինելով, սկսաւ փրուցանել զշինուածս հին եւ նորոյս ձեռնարկել ի ՌՃ. եւ Դ.

(1655) թուին, ի թագաւորութեան Պարսից Փոֆր շահ Ապապին եւ հայրապետութեան տեսան Յակոբայ եւ իշխանաշուք պարոնաց պարոնին խօշա Սաֆրազին եւ օգնականութեամբ Ջուղայու ժողովրդոցս եւ շնորհօք Սուրբ Հոգւոյն աւարտ եւ կատարումն հասուցաք գեղեցիկ յօրինուածովք, որպէս եւ տեսանէք, հագիւ թէ կար եղել մինչեւ ՌՃԺ. եւ Գ. (1664) թիւն: Ով դուք՝ բնակո՞ղք եւ վայելո՞ղք՝ դա՛սք քահանայից եւ կրօնաւորաց, ի ժամ սուրբ խորհրդոյ պատարագի յիշել միշտ աղաչեմք զաշխատողք եւ կամակից սորին. ամէն: Այլ եւ յիշել աղաչեմ եւ զմեզ՝ ապիրատ եւ փժուէն ծրողքս՝ զտէր Մարկոսն եւ զՄալինս, թէպէտ ոչ էաք այս սուրբ արուեստիս արժան, այլ սակայն օգնականութեամբ Հոգւոյն Սրբոյ աւարտեցաք, եւ դուք, ո՛վ մանկունք սրբոյն Սիովնի, յորժամ ընթեռնուք, թողութիւն շնորհեցէք, քանզի կար մեր այս էր, եւ զմեզ եւ զվերոյգրեալքն միով Հա՛յր մեղայիւ յիշել, եւ դուք՝ յիշողքդ, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ եւ լսել զնոյն բարբառ. Եկա՛յք, արհնեա՛լք Հօր իմոյ, ժառանգել. ամէն:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 557ա (ԺԼ. դ. սկ., անարուեստ բոլորգիր) [Ո]վ երջանիկ սուրբ վարդապետք, աղերսելով հայցեմք ի ձէնջ, յորժամ հանդիպիք յայսմ ծաղկեալ եւ փթթեալ յայգուոյս հոտոտելո եւ ճաշակելո յաստուածային պտղոյն, յիշեցէ՛ք զստացող տառիս զբարեսէր աստուածային բարոյն զՅոհաննէսն եւ զպապն իւր Դողմիշն եւ զհանիկն՝ Պզտիկ տատիկն եւ զմիւս պապն՝ զՊետրոսն, զՓէրիխանն, եւ զԾնօղսն իւր զՄովսէսն եւ զԹագունիւն եւ զկենակիցն իւր զՄարիամն եւ զորդիսն իւր (մէկ տող չգրած) եւ զեղբայրն Աւետիկն, սորին կենակիցն իւր զՍողոմն եւ զքոյրսն իւր Մամարն, Տալիթայն, զԶիբեթայն, եւս առաւել եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է արհնեալ յաւիտեանս. ամէն: Հայր մեր, որ յերկինս՝:

2. 624բ (1771 թ. շղագիր) Յովսէփ յոգնամեղ եպիսկոպոսս Սանահնեցի եւ յազգէ Արդութեան, ստացայ զհոգեշահ մատեանս ի վայելս անձին իմոյ, եւ զկնի մահուանս՝ յիշատակ ի դուռն բազմերախտ մօրն իմոյ՝ բարձրագահ եւ լուսակերտ Սուրբ Աթոռոյն էջմիածնի: Արդ, աղաչեմ զհանդիպողսդ, ի վայելելն ձեր յիշեցիք յաղօթս ձեր զՅովսէփ մեղսաներկ վարդապետս եւ զկրկնակի ծնօղսն իմ՝ զՍիմէօն սրբազան կաթողիկոսն ամենայն Հայոց, զբազմերախտն ազգիս մերոյ եւ Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, որ նոր ի նորոյ հրաշակերտեաց զՍուրբ Աթոռն շինուածովք եւ այլովք հարկաւորօք, որում Տէր եղիցի վարձատրիչ: Եւ ապա զմարմնաւոր ծնօղսն իմ՝ զՇիօշբէգն եւ զՔէթէվանն, եւ զեղբարսն իմ՝ զպարոն Մովսէսն եւ զԲէժմանն եւ զամենայն մերձաւորսն եւ զերախտաւորսն իմ, ընդ նախկին ստացողովքն հոգեշունչ գրքոյս, եւ ձեզ՝ յիշողացդ,

եւ զմեզ՝ յիշեցելոցս, առ հասարակ ողորմեսցի Քրիստոս Աստուածն մեր, որ առատն է ի տուրս բարեաց. ամէն: Ի ՌՄԻ. (1771) թուին եւ ի Սուրբ Աթոռս էջմիածին գրեցաւ:

406ա (ԺԸ. դ., անարուեստ բոլորգիր) եւ՝ մեղաւոր եւ զանարժան ոչ Պետրոս էրէցս, գրեցաք, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ /// (մէկ տող գրած-չնշած):

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 7ա, 13ա, 16բ, 269բ, 328ա, 363ա, 491ա, 559ա, 584ա, 607բ, 624բ սեւով կլոր շրջանակ, որի կենտրոնում երկգլուխ արծիւ՝ «ԹՈՒՄԱ ՍՈՒՐԲ

ԱՄԵՆԱՓՐԿԻԶ»։ 7ա, 13ա, 559ա, 607բ, 624բ սեւով ութանկյուն շրջանակ՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՅՈՎԱԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ, 1215 (1766)»։

ԳՐԶԱՓՈՂՉ՝ Պհպ. Աբ (նոտրաշղապիր) «Գրչափորձութիւն արա՛, տե՛ս, լաւ է, մըրափորձութիւն արա՛, տե՛ս, լաւ է»։


ՆՇՈՒՄ՝ Ա. կազմաստառին փակցուած թերթիկին՝ «Քարոզգիրք, Հ^ր 1», պհպ. Աա՝ «694/2642», «ՌՃԺԲ. 1663թ., Մ[ետրայ] եպ[իսկոպո]ս»։

2643

Պ Օ Ղ Ո Ս Ի Ա Ֆ Ո Ւ Ն Ի Ի, Ք Ա Ր Ո Ջ Գ Ի Ի Ք

ԳՐԻԶ՝ Հեղինակը (°):

ԹԵՐԹ՝ 209+3 (կրկն.՝ ք. 72, 81, 94). չգրուած՝ 121բ, 202բ, 209աբ: ՊՐԱԿ՝ 1-18x12 (1՝ 9, 5՝ 19, 9, 17՝ 8, 10՝ 10, 11՝ 6, 12, 18՝ 11, 13՝ 15, 14-16՝ 14): ՆԻԻԹ՝ բուրբ, լուսադրոշմով՝ «J. Whatman 263»): ՄԵԾՈՒԹԻԻՆ 24,8x20,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (21,3x15,3): ԳԻՐ՝ շղագիր (մանչ՝ 156ա): ՏՈՂ՝ 25-26: ԿԱԶՄ՝ կանաչ բուրբ, միջուկը ստուարաթուղթ, մէջի՝ բրոնզադրոշմ եւ անկիւններ՝ շագանակագոյն կաշի, աստառը ծաղկաթուղթ. լուսանցակողերը՝ կարմիրով ցօղուած: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա + Բ, նարնջի եւ սպիտակ բծերով ծաղկաթուղթ:



Նմուշ 156ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի թուղթը մաշուած, վնասուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1ա-208բ Քարոզ՝ Պօղոսի Բաբունույ

ա. 1բ-7ա Քարոզ հինգերորդ. Ի վերայ օգտելոյ ի բարոզութենէ՝ - Բնաբան. Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ: Սկսուած. Առ ինչ պէտս Աստուած ետ մարդոյ գերկու ականջս... անպատում փառաց հասցուք շնորհօք Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի:

բ. 7ա-14ա Քարոզ ի վերայ պահնգ. Յառաջին չորեքշաբթի ատուր քառասնորդական պահնգ - Բնաբան. Չի՛նչ են կամքն Աստուծոյ բարին եւ հաճոյն, կատարեալն. Հոռվմ. ԺԲ. 2: Սկսուած. Կամք Աստուծոյ ի յԱստուած մի է... որոց կայ եւ մնայ մեծամեծ բարեաց հատուցումն ի յերկինս:

գ. 14ա-20բ Քարոզ ի վերայ աղօթից. Յառաջներորդ ուրբաթու - Բնաբան. Աղօթից ստէպ կացէք տքնել ի նմին գոհութեամբ. Կողոսացի, Գ. 2: Սկսուած. Հաւատամք ամենեքեան, թէ է Աստուած... լցուցէ գիտիմք սրտից ձերոց եւ այլն:

դ. 20բ-8ա Քարոզ ի վերայ մեղաց. Յերկրորդում կիրակկի մեծի պահնգ յառաւօտուն - Բնաբան. Ամենայն, որ առնէ զմեզս, ծառայ է մեղաց. Յովհ. Ը. 34:

ԺԹ. դար

Սկսուած. Աստուած է գերագոյն օրէնսդիր... գերծանիցիմք ի մշտնջենաւոր ամօթոյն:

ե. 28ա-35բ Քարոզ ի վերայ քննութեան գործոց. Յերկրորդում կիրակկի մեծի պահնգ յերեկոյին - Բնաբան. Մատիցէ այր ի խորութիւն սրտի իւրոյ. Սաղմոս: Սկսուած. Յառաւօտուն լուայք գտգեղութիւն մեղաց... նոքա ինքնին անյայտ լինին:

զ. 35բ-42բ Քարոզ ի վերայ հոգեւոր ողորմութեան. Յերկրորդում շաբաթու մեծի պահնգ ի չորեքշաբթի ատուր - Բնաբան. Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո. Ղեւտական, ԺԹ. 18, Ղուկաս, Ժ. 24: Սկսուած. Օրինական ոմն յարեաւ փորձել զՔրիստոս... որ սիրէ զընկերն, կատարէ զօրէնսն:

է. 42բ-9ա Քարոզ ի վերայ մարմնատուր ողորմութեան. Յերկրորդում շաբաթու մեծի պահնգ յատուր ուրբաթու - Բնաբան. Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո. Ղեւտական, ԺԹ. 18: Սկսուած. Տեսաք ի շորեքշաբթի ատուր... ապա սիրելի լիցին ձեզ կատարել եւ գործով:

ը. 49բ-55բ Քարոզ ի վերայ զղջման. Յերկրորդում կիրակկի մեծի պահնգ յառաւօտուն - Բնաբան. Եւ լուեալ զայս, զղջացան ի սիրտս իւրեանց, Գործ., Բ. 34: Սկսուած. Յաւուր սքանչելատեսիլ եւ զարմանագործ գալստեան Հոգւոյն Սրբոյ... ահա է այս երկրորդ աստիճան խորհրդոյ ապաշխարութեան, յոր յուսամ թէ ելանել կամիք:

թ. 56ա-62բ Քարոզ ի վերայ առաջադրութեան. Յերկրորդում կիրակկի մեծի պահնգ յերեկոյին - Բնաբան. Ատեալ զչար, զհետ երթալ բարեաց. [Հոռմայեցիս, ԺԲ. 9]: Սկսուած. Առ ժամանակօք փրկչին մերոյ բազումք էին աղանդաւորքն փարիսեցոց... եւ կատարեսիք յօգուտ փրկութեան հոգւոց ձերոց:

ժ. 63ա-71ա Քարոզ ի վերայ անատակին. Յերկրորդում շաբաթու մեծի պահնգ ի չորեքշաբթին - Բնաբան. Թոշակ մեղացն մահ է, այլ շնորհքն Աստուծոյ՝ կեանք յաւիտենից. [Հոռմայեցիս, Զ. 23]: Սկսուած.

Արդարեւ, Աստուած է թագաւոր թագաւորաց... Ժառանգեցուք զխոստացեալ կեանսն յաւիտենեաց շնորհօք եւ զթուփեամբ Հօրն երկնաւորի:

Ժա. 71բ-8ա Քարոզ ի վերայ միութեան եկեղեցայ. Յերոնդումն շաբաթու մեծի պահոց յատու ուրբաթու – Բնաբան. Որ ի ծով այս աշխարհի շինեաց տապան գեկեղեցի եւ ի նմա զօժանդակեալ հոգիս փրկեաց ի ջուրց մեղաց. Շարական: Սկսուած. Երանելի էր արդարեւ վիճակ անմեղութեան... եւ ի նմա զօժանդակեալ հոգիս փրկեաց ի ջուրց մեղաց:

Ժբ. 78բ-83բ Առաջին ֆարոզ ի վերայ խոստովանութեան բերանոյ. Ի չորրորդումն շաբաթու մեծի պահոց ի կիրակէի յառաւօտուն – Բնաբան. Ընկեցէք զշարիս ձեր յանձանց ձերոց առաջի աշաց իմոց. Եսայի, Ա. 16: Սկսուած. Ով որ է այս, որ հրամայէ զշարիս եւ զմեղս մեր... ի փրկչէն իւրմէ գտանէ զողորմութիւն եւ զգթութիւն հանդերձ շնորհօք բարեաց:

Ժգ. 83բ-90ա Երկրորդ ֆարոզ ի վերայ խոստովանութեան. Ի չորրորդումն կիրակէի մեծի պահոց յերեկոյին – Բնաբան. Ընկեցէք զշարիս յանձանց ձերոց առաջի աշաց իմոց. Եսայի, [Ա. 16]: Սկսուած. Յիսուս Քրիստոս՝ Տէր մեր, յերկնից էջ, մարդ եղեալ... ապա խոստովանութեամբ ընկեցէք զմեղս ձեր:

Ժդ. 90բ-5բ Քարոզ ի վերայ տնտեսին. Ի չորրորդումն շաբաթու յառաւօտ չորեքշաբաթի – Սկսուած. Յետ նաւակատեաց, որ ի ձմեռան եղեւ... զի ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուցէ զնա: Դուկաս, ԺԲ. [44]:

Ժե. 95բ-101բ Քարոզ ի վերայ մեծատան եւ աղբատի. Ի չորրորդումն շաբաթու մեծի պահոց յատու ուրբաթու – Միակարգ պարգաբանութիւն պատմութեանն ըստ սրբոյ Աւետարանին. Արդ, գիտել արժան է... եւ ահանատես գոյով խօսեսցի:

Ժզ. 101բ-8ա Երրորդ ֆարոզ ի վերայ խոստովանութեան. Ի հինգերորդումն շաբաթու մեծի պահոց ի կիրակէի առաւօտուն – Բնաբան. Ընկեցէք զշարիս ձեր յանձանց ձերոց առաջի աշաց իմոց: Եսայի, [Ա. 16]: Սկսուած. Այսօրեայ ընթերնուած սրբոյ Աւետարանին... զի՞արդ աղտեղեցից զնոսա: [Երգ] երգոց, Ե. 3:

Ժէ. 108ա-14բ Չորրորդ ֆարոզ ի վերայ խոստովանութեան. Ի հինգերորդումն շաբաթու մեծի պահոց ի կիրակէի երեկոյին – Բնաբան. Ընկեցէք զշարիս ձեր յանձանց ձերոց առաջի աշաց իմոց. Եսայի, [Ա. 16]: Սկսուած. Այսօրեայ ընթերցուած սրբոյ Աւետարանին ի Դուկայ... եւ արժանանալ սուրբ խորհրդոյ հաղորդութեան:

Ժը. 114բ-23բ Քարոզ ի վերայ ուղղակի եղանակաց բամբասանաց. Ի հինգերորդումն շաբաթու մեծի պահոց յատու չորեքշաբաթու – Բնաբան. Դի՛ր, Տէ՛ր, պահպան բերանոյ իմոյ, եւ դուռն ամուր շրթանց իմոց, զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ բանիւ շարութեան. Սաղմոս [ձն. 3-4]: Սկսուած. Զանազան իրաց կարէ

նմանիլ մարդոյս... ուր աստուածսիրութիւն եւ եղբայրսիրութիւն փայլէ անվախճան ժամանակաւ:

Ժբ. 123բ-32ա Դարձեալ ֆարոզ ի վերայ բամբասանաց. Ի հինգերորդումն շաբաթու մեծի պահոց յատու ուրբաթու – Բնաբան. Ամենայն բան տգեղ ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ. Եփեսացիս, Գ. 29: Սկսուած. Արարչապետն բնութեան ի ստեղծանելն զմարդ... որք ելանէին ի բերանոյ նորա: Դուկաս, Գ. 22:

Ժ. 132ա-42բ Քարոզ ի վերայ շարչարանաց սուրբ Լուսաւորչին. Ի տօնի մտից ի Վիրապն յառաւօտուն – Բնաբան. Ուրախ եմ ի շարչարանս իմ վասն ձեր եւ ընում զպակասութիւն նեղութեանցն Քրիստոսի ի մարմնի իմում վասն մարմնոյ նորա, որ է եկեղեցի. Կողոսացիս, Ա. 24: Սկսուած. Եկեղեցիս Հայաստանեայց... եւ զի՞արդ նա վասն քո իսկ ասացեն՝ Ահա ես եւ մանկունք իմ: [Մարգարէութիւն Եսայայ, Ը. 18]:

Ժա. 147բ-7բ Ներքողեան ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչ Հայոց, ի խորհուրդ մտիցն ի Վիրապն, յերեկոյին – Տեսաք յառաւօտուն, թէ որպէս աստուածագով ծնօղ մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչ... ի դիւբաբաղիս սաստիցն երկրպագուս առնելով զամենեսեան սուրբ երրորդութեանդ: Յորդորակ (այսչափ չգրուած):

Ժբ. 147բ-57ա Քարոզ ի վերայ վնասման ապաշխարութեան. Ի վեցերորդումն շաբաթու մեծի պահոց ի կիրակէի առաւօտուն – Բնաբան. Ապաշխարեցէք... ի թողութիւն մեղաց. Գործք, Բ. 33, Սկսուած. Այսօր զվերջին մասն խորհրդոյ ապաշխարութեան... Այլ եւ յարութեամբ քով յանտարանկաց եկեղեցին հասանես վայելել զամենեանեալ տեսութիւնն Աստուծոյ:

Ժգ. 157ա-71բ Քարոզ ի վերայ փախչելոյ յառօթից մեղաց. Ի վեցերորդումն շաբաթու մեծի պահոց ի կիրակէի երեկոյին – Բնաբան. Եւ մինչդեռ մատչիւր, զարկոյց զնա դեւն եւ շարժելեաց. Դուկաս, Թ. 22 (= 42): Սկսուած. Ի վաղիւ անդր զկնի հրաշափառ այլակերպութեան Յիսուսի... աս ազգ ոչ ելանէ, եթէ ոչ պահօք եւ աղօթիւք:

Ժդ. 172ա-81բ Քարոզ ի վերայ նախատանաց. Ի վեցերորդումն շաբաթու մեծի պահոց ի չորեքշաբաթու – Բնաբան. Որ ասիցէ ցեղբայր իւր՝ Յիմար, պարտաւոր լիցի ատենի. Մատթէոս, Թ. 22: Սկսուած. Ապաքէն ի հնումն մարգարէն Մովսէս... որով եւ պարտաւոր գտանիք ատենին Աստուծոյ եւ դժոխոցն, զօգուտն ձեր դուք խորհեցէք:

Ժե. 181բ-91բ Քարոզ ի վերայ հաշտութեան. Ի վեցերորդումն շաբաթու մեծի պահոց յատու ուրբաթու – Բնաբան. Երթ, նախ հաշտեա՛ց ընդ եղբոր քում. Մատթէոս, Ե. 24: Սկսուած. Ապաքէն որոյ սիրտ լցեալ է սիրովն Աստուծոյ... եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբոր իւրում ի սրտից ձերոց զյանցանս նոցա: Մատթէոս, ԺԸ. 35:

իզ. 191բ-7բ Քարոզ ի գալուստ փրկչին մերոյ Յիսուսի յերուսաղէմ. Յեթններորդումն շաբաթու մեծի պահոց, ի Ծաղկագարդի առաւօտուն – Բնաբան. Անա թագաւոր քո գայ առ քեզ արդար եւ փրկիչ, նոյն հեզ եւ հեծեալ ի վերայ իշոյ եւ յաւանակի նորոյ. Չաբարիա, Թ. 9: Սկսուած. Այսօր եկեղեցիք քրիստոնէից կատարեն զտէրունեան տօն՝ Ծաղկագարդ անուամբ... զփառաւորիչս իմ փառաւորեցից, եւ որ արհամարհեն, զի անարգեացի:

իէ. 198ա-9ա [Քարոզ ի գալուստ փրկչին] – Բնաբան. Տեսեալ զքաղաքն, ելաց ի վերայ նորա. Դուկաս, ժԹ. 41: [Սկսուած.] Չարմանք յարդարեւ, զի այսօր հասարակաց է ցնծութիւն... եւ օգնեացէ մեզ շնորհիւ իւրով:

իը. 199ա-202ա Ի դատաստանի – Ով մարդ, անգամ մը վերցուր աչքդ, խալլէէ խասեվեթէ եւ հարարեթէ սրբէ միտքդ... եւ բնութիւնք հրդեհեալ հալիցին: Բ. Պետրոս, Գ. [12]

իթ. 203ա-7բ Ի ցաւ երանելի կուսին, յաղագս յարչարանաց Քրիստոսի Տեառն մերոյ: Դժոխքն ի սիրտ երանեալ կուսին – [Բան]. Վիշտք դժոխոց պաշարեցին զիս. Սաղմոս, Ժէ. 6: [Սկսուած.] եթէ ցաւ եւ կսկիծն է անմխիթարելի... զմեզ ազատեա՛ արէամբք քոյին /, Ի մահուանէն յաւիտենին:

լ. 208աբ Նա, որ առաւել սիրէ, կանխագոյն յառնէ – [Բան]. եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան ի գերեզման ընդ արեւագալն, Մարկոս, [ԺՁ. 2]: [Սկսուած.] Որ առաւել սիրէ, ոչ մնայ ցհասարակել աւուր... եւ ինքն Տէրն զնա զարթոյց ելանել եւ շարժել զկապսն արեգական:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄՆԱԿԻ

1բ Առաջինք գրեալ եմ յայլում տետրակի միւսէ վեցէ:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած թերթիկին՝ «1, Քարոզգիրք Պողոսի Րաբունուոյ», «702», 1ա՝ «Հ^ր 702/2643», «ԺԹ., Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:


2644

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Յ


ԳՈՐԻ (1850), ՍՍՄԱԹԻԱ՝ Կ.ՊՈԼԻՍ

ԳՐԻՉ՝ Ռուբէն Պաղտասարեան (2ա-202բ), Թաղէս Միհրդատեանց (203ա-54ա), Անանուն (253ա-300ա): ՍՍՄՈՂ՝ Թաղէս Միհրդատեանց:


ԹԵՐԹ՝ 300 (գրչի կշակալում՝ 2-234, որ է՝ 2բ-118բ, 2-162, որ է՝ 122բ-202բ, 1-47, որ է՝ 204ա-27ա, 2-51, որ է՝ 229բ-54ա, 3-30, որ է՝ 259ա-72բ, 2-53, որ է՝ 275ա-300ա). չգրուած՝ 1աբ, 119ա-21բ, 203բ, 228աբ, 254բ-7բ, 273աբ, 300բ: ՊՐԱԿ՝ Ա.-ԺԵՄՃ+Ա.-ԺՄՃ (Ա՝ 10)+ 8+17+Ա.-ԳՄՃ (Ա՝ 11, Գ՝ 6)+18+10+12+6: ՆԻԻԹ՝ թուրք (թ. 203-27՝ կապոյտ): ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 26,2x21: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (23,5x16,5): ԳԻՐ՝ շղագիր (մնուլ՝ 82ա, 225ա, 270ա): ՏՈՂ՝ 27-30: ԿԱՉՄ՝ վարդագոյն լաթ, միջուկը ստուարաթուղք, աստաղը թուրք. լուսանցակողերը՝ կարմրով ցօղուած: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԳ, սպիտակ չգրուած թուրք, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ թագ, վերեւում աստղ, մանիկ (ԲԳ), ննչադրոշմով՝ թ. 1-202 (զարդարուած ուղղանկյին) «Bath», 209-210 (բոլորակ) «Bath», 228-300 (բոլորակ, որի ներսում ուր աստղ)՝ «Canson»:



Նմուշ 82ա



Նմուշ 225ա



Նմուշ 270ա

ՌՄՂԹ.-ՈՅԶ. - 1850-1857

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թ. 27, 41, 206, 223, 254՝ վնասուած, թ. 202՝ արտաքին լուսանցի մասը պատռուած, թ. 228-30՝ հիմքից մասամբ պոկուած, պկպ. Գ՝ ցեցի անցկեր, թանաքի թրուայնութիւնը բարձր: Գրչի կշակալումներ եւ պրակահանրուի պատկերը ցոյց են տալիս, որ պրակախմբեր գրուել են առանձին-առանձին եւ յետոյ ի մի են կազմուել՝ հաւանաբար ստացողի նախաձեռնութեամբ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. 2ա-118ա Պատմութիւն Մատթէոսի Ուռնայեցւոյ

Տէս ձեռ. 1731, 77ա-273բ: ա/2ա-39ա: բ/39ա-100ա: գ/100ա-118ա (վերջը թափուած՝ «...եւ զնէր զօրս ի բերդն պահագան: եւ Քրիստոսի մարդասիրին եւ օրհնելոյն փառք յաւիտենան. ամէն: Հայր մեր, որ յերկինս՝ »): դ/չիբ:

Լուսանցներում ունի մատիտով արուած բնագրական նշումներ, ուղղումներ, լրացումներ: Տէս Մատթէոս Ուռնայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:

Բ. 122ա-202բ [Գէորգոս Ֆրանձէսի Պատմութիւն Յունաց տէրութեան եւ Կ. Պոլսոյ առման]

1. 122ա-58բ Գիրք առաջին
ա. 122ա-4բ Գլուխ Ա. Յաղագս պատճառաց Բալթիօլոսաց թագաւորութեան – Պետութիւնն վերելակ Ալէքսիոս Անկելոս Քոմնենոսն... ի Նիկիայն Բիւթանացւոց վասն տիրեցեալ լինելոյ թագաւորեալ քաղաքին ի յիտալացւոց:

բ. 125ա-6բ Գլուխ Բ. – եւ ընդ անցանելոյ ժամանակի յոյժ սակաւու... որ էր առաջինն Բալթիօլոսացն, երանի թէ ոչ իցէր:

գ. 126բ-7բ Գլուխ Գ. – Եւ արդ, այս Միքայէլ թագաւորս... որպէս ասացաք, վարեցաւ նա թագաւորութիւն Անդրոնիկոսի Բալէօլօկոսի առաջ:

դ. 127բ-8ա Գլուխ Գ. – Եւ արդ, որովհետեւ եւ առ որդին Անդրոնիկոս... եւ անդ ընդ կնոջ լծակցեալ ցեղիւ Իսրուէնուլայ կոչմամբ զորդիս եւ զգաստերս ծնաւ:

ե. 128բ-30ա Գլուխ Ե. – Ի թագաւորութեանն ասացելոյ... զուխտսն անարգեցին, եւ էին բազում շարագոյն դժուար գայթակղութիւնք:

զ. 130աբ Գլուխ Զ. – Եւ ի նմին ժամանակի թագաւորի... որ է ի Քրիստոսի ծննդէնէն հազար երեք հարիւր քսան եւ ութը ամ, իսկ ի ստեղծմանէ աշխարհի վեց հազար ութն հարիւր երեսուն եւ վեց:

է. 131աբ Թագաւորութիւնն Փոքր Անրոնիկոսի Գլուխ Է. – Եւ առեալ զթագաւորութիւնն եւ զքաղաքն... եւ ամիրայն յետ ոչ բազում աւուրց տիրող եւ քաղաքին նիկիայի եղեւ:

ը. 131բ-2ա Գլուխ Ը. – Եւ ի ձմեռնամտին զամենայն նա հոռովմայեցոց գումարել ընդդէմ Մարթինոսի... եւ հինգ ամս, յորոց թագաւորեաց ամս քսան:

թ. 132աբ Զիւարդ կերպի թագաւորեաց Քաթաֆուլիմոսն, եւ զիւարդ կերպի թագաւորութիւնն ի ձեռս նորին եղեւ. Գլուխ Թ. – Արդէն ի մեռանիւն թագաւորին... առաքեաց դեսպան առ ամիրն իւր՝ հանդերձ թղթովն, որ պարունակէր այսպէս:

ժ. 133աբ Թուղթ Յովհաննու թագաւորին առ Քաթաֆուլիմոս աներն իւր. Գլուխ Փ. – Ես բազմիցս եւ այժմ խորհելով զարմացայ... աստուածային արդարութիւնն դատեսցէ:

ժա. 133բ-5ա Յաղագս թէ զիւարդ կերպի Քաթաֆուլիմոսն էստ զթուղթն. Գլուխ ՓԱ. – Եւ առեալ զթուղթն Քաթաֆուլիմոսն... եւ էր ի պատրաստի եւ քիր Մանուէլն մերձ հօրն իւրոյ:

ժբ. 135ա-6բ Գլուխ ՓԲ. – Եւ ի գնալն նոցա Մուրատ ամիրային... որպէս զի թագաւորութիւնն իւրեան եւ որդւոյ իւրոյ Յովհաննու բարձեալ եղիցի:

ժգ. 136բ-8ա Գլուխ ՓԳ. – Եւ ի մեռանիւն Մուրատ ամիրային... եւ ծառայեցուցանելն Գերմանիոյ թագաւոր Սիկիզմոնտոսն իմացաւ զեղեալսն:

ժդ. 138աբ Յաղագս թէ զիւարդ կերպի թագաւորն Գերմանիոյ առ ամիրայն դեսպան առաքէ. Գլուխ ՓԴ. – Եւ արդ, Սիկիզմոնտոս թագաւորն... պաշարեալ զքաղաքն բազում կերպիւ զամս եւ զժամանակս բազումս:

ժե. 139աբ Գլուխ ՓԵ. – Ի միջոցի այսմիկ ժամանակի... ոչ ունէին ինչ պատասխանել, ուստի անգործ ի Կոստանդնուպօլիսն դարձաւ:

ժզ. 139բ-40ա Գլուխ ՓԶ. – Եւ արդ, յամի հազար չորս հարիւր հինգերորդին... որպէս զի ոչ եւս եւ ոչ երբէք այնպիսի ինչ առնել յիշեսցէ:

ժէ. 140աբ Գլուխ ՓԷ. – Իսկ քաղաքի ազատութիւնն... եւ ի ծերոյ լուաք, վասն որոյ եւ ի լուութեան ոչ թողումք:

ժը. 140բ-1ա Գլուխ ՓԸ. – Եւ ի քսան եւ ութն յուլիսի ամսոյն... եւ որչափ ինչ գրով յաղագս ազգաբանութեանն այսմիկ տեսաք:

ժթ. 141ա-2ա Զանազան պատմութիւնմ յաղագս Օդմանիաց ազգին, թէ ուստի իջանէ բազմակերպապէս. Գլուխ ՓԹ. – Թագաւորն Յովհանէս Քոմնինոս... եւ այսպիսիքս թուին զճշմարիտն ասել:

ի. 142աբ Այլ ուրիշ գրոյց, թէ ուստի իջանէ Օդմանիաց սեռն. Գլուխ Ի. – Սուլթան Ալատինն քրիստոնէից ծնողաց գոյր որդի... ճշմարտութեանն պատմողացն մտաց եւ առ էրտողրուլն վերադարձցուք:

իա. 143աբ Յաղագս էրտողրուլին. Գլուխ ԻԱ. – Գոյր այս էրտողրուլ... եւ արդ, ծնանի զՕդմանն, յորմէ եւ Օդմանիք ամենայն ազգն կոչեցան:

իբ. 143ա-6բ Յաղագս Օդմանին. Գլուխ ԻԲ. – Եւ արդ, ի մեռանիւն էրտողրուլին... եւ եկայ ի գերութեանն ամիսս ութն:

իգ. 146բ-8ա Յաղագս եղևոց շիրմանցն ի պատճառէ Պայազիտի մահուան ընդ մէջ որդւոյն նորին եւ յաղագս այլոց ոմանց. Գլուխ ԻԳ. – Այսու կերպիւ ուրեմն իրացն կացելոց... թէ զիւարդ կերպիւ զնոսս վնասել եւ եղծել, եւ մեռաւ թագաւորեալ ամս տասն եւ եօթն:

իդ. 148աբ Յաղագս թագաւորութեան Մուրատին – Եւ ուրեմն մեռանիւն ամիրայ Մեհմէմէտին... որ եւ թագաւորեաց ամս երեսուն եւ չորս:

իե. 148բ-9բ Յաղագս թագաւորութեանն Մէհմէմէտ թագաւորին թուրքաց եւ զֆաղաֆն առողին – Եւ ի գալն ամենայնի պետութեանն... եւ մեք զճանապարհն պատմութեան ըստ կարգի դարձեալ սկսանիցիմք:

իզ. 150ա Անտուստ վերադառնան եւ իջանեն իրքն պատմութեան յաղագս թագաւորութեանն Հոռովմայեցոց պապութեանն, որպէս ի յառաջին գլուխն ասացաք. Գլուխ ԻԶ. – Եւ ի յամսոյն յուլիսոյ... եւ զնաւարկութիւնն նաու պատմութեանն արասցուք:

իէ. 150բ-3բ Յաղագս Մէհմէմէտի յաջորդացն եւ ուրանօր թագաւորեցին. Գլուխ ԻԷ. – Անիծեալ Մէհմէմէտի յաջորդքն... եւ դարձեալ ի շինումն Իսթմոսին վեր եկեսցուք:

իը. 153բ-4բ Գլուխ ԻԸ. – Ի վեց հազար ինն հարիւր քսան եւ երեքին... եւ թաղեցաւ ի յօթեանն Լիվուի:

իթ. 154բ Գլուխ ԻԹ. – Ի սկիզբն վեց հազար ինն հարիւր քսան եւ վեցերորդ թուին... եւ ակումբ ակմբից արարին:

լ. 155ա Գլուխ ԻԼ. – Եւ ի վեց հազար ինն հարիւր քսան եւ ութն թուին... եւ որդիքն իւր ի տուն դարձան:

լա. 155բ-6բ Գրուխ ԻԹ. — Եւ ի գարնան նոյն թուին... եւ զգուշութեամբ պահել հրամայեաց:

լբ. 156բ-7ա Գրուխ Լ. — Եւ շուրջ զսկզբամբ ամարանն... եւ սպան զնա մատնութեամբ ընտանեացն նորին:

լգ. 157ա-8բ Գրուխ ԼԱ. — Եւ ի մայիսի ամսոյ ի նոյն ամին... սակս ոչ լինելոյն բարետեսիլ եւ գեղեցիկ թագուհոյն: Վախճան առաջնոյ գրգոյն:

2. 159ա-85ա Գիրք երկրորդ, սկսեալ յետ մահուան թագաւորին Քիր Մանուէլ Բալէօլօկոսի

ա. 159ա-60բ Յաղագս պետութեան թագաւորութեանն Յովհաննոս՝ որդոյ նորին. Գրուխ Ա. — Ի ժամանակին ուրեմն... այսու կերպիւ շնամաձայնութիւնս արարին:

բ. 161ա-2բ Գրուխ Բ. — Եւ արդ, ի յառաջինն մայիսի նոյն թուին... եւ ապա եղբօրն իւրոյ դեսպօղի քիր Կոստանդինոսի շնորհեաց:

գ. 162բ-3բ Գրուխ Գ. — Եւ ի նմին ամի մարտի ժՁ. ... եւ մեք եւս ի վաղին պատերազմի սկիզբն արարաք:

դ. 163բ-4ա Փակումն Բաղուայի ի տեսպօղի Քիր Կոստանդինոսէ. Գրուխ Դ. — Եւ ի վաղին հանդիպեցաւ տօնն արմաւենեաց... եւ ի յայլոց անբժշկելեաց տրտմականացն:

ե. 164բ-6ա Վարբ եւ քաղաքավարութիւն Թովմայիդիս սրբունոյն. Գրուխ Ե. — Եւ հետեւի աստանօր պատմել ինձ... եւ յաղագս սրբունոյն Թովմայիսայ այսպէս ունէին ճշմարտութեամբ:

զ. 166աբ Գրուխ Զ. — Եւ ուրեմն կալն իմ ի բանտի... եւ Ֆլօրիայ, այսինքն՝ դահեկան ոսկիս հազարս երիս:

է. 167ա Գրուխ Է. — Եւ ի վաղին ուրեմն ի գնալն մեր... եւ պատրաստեմ զամենայն իրս քոչոյ հրամանի:

ը. 167ա-9ա Գրուխ Ը. — Եւ իբրեւ եկն ժամանակէտն... որ եւ եղեւ պատճառ վասն Բաղուային առնելոյ ուղղութիւն նիւթոյն:

թ. 169աբ Գրուխ Թ. — Ի նոյն յուլիս ամսոյն ի նմին թուի... եւ զայնոսիկ, զորս ընդ իս կալան ոսկոյ հազարի հինգ:

ժ. 169բ -70ա Գրուխ Ճ. — Ի յայսմիկ ուրեմն ժամանակի, ի մարտի ամսոյն... եւ բազում ժանտացաւ հիւանդութիւնն ի Բաղուայն եղեւ:

Ճա. 170բ-1ա Գրուխ ՃԱ. — Եւ ի ԼԱ. յունվարիոսի... որպէս զի մտեալ ի նոսա, ի քաղաքն երթիցէ, ահա հասի եւ ես:

Ճբ. 171աբ Գրուխ ՃԲ. — Եւ մտեալ ի նաւն վենետիկցոց... ի Կոստանդնուպօլիսն եկաք:

Ճգ. 171բ-2ա Գրուխ ՃԳ. — Եւ ի ԻԵ. մարտի նոյնոյ թուին եկն ի քաղաքն... ոչ ի լուսթէնէ թողից զայն, այլ պատմեցից:

Ճդ. 172ա-6ա Հարցումն երբայեցւոյն. Զի՞արդ էր կարելի Մարիամայ ծնանիլ Քրիստոսն, որ էր կոչս: Պատասխանի թագաւորին — Զի՞արդ ծնաւ Ադամ զեւայն

առանց կնոջ... եւ աստուածային մկրտութեամբ վերանորոգեցեալ փոխանակ ըՔսենոսի էմմանուէլ անուանեցաւ:

Այս գլուխը համար չունի, բաղկացած է մի քանի հարց-պատասխանից:

Ճե. 176ա-7բ Գրուխ ՃԴ. — Ի յառաջակայն վերադարձցուք... եւ դեսպօղի քիր Տիմիդրիոսն պատմեաց ինձ:

Ճզ. 177բ-9ա Յաղագս թագաւորին Յովհաննոս ի յԽալիայ գնալոյն՝ ժողովոյ աղագաւ. Գրուխ ՃԵ. — Ի եօթն փետրվարի ամսոյն... եւ ողջունեալ դուքսն եւ իշխանքն գնային ի տունս իւրեանց:

Ճէ. 179բ-80ա Զուսումն Վենետիկոյ ի Ֆերարիայ. Գրուխ ՃԶ. — Եւ ի ԻԸ. փետրվարի էլեալք ի Վենետիկոյ թագաւորն... եւ սպասաւորացն թագաւորապէս ի չորսն մարտի ամսոյն յաւուր երրորդի:

Ճը. 180աբ Յաղագս գալոյ պատրիարքին ի Ֆերարիայն. Գրուխ ՃԷ. — Եւ արդ, ի մերձենալն պատրիարքին... եւ ուրեմն թողեալ որչափ ինչ ի ժողովն պատահեցան առ մեզ, հետեւեալս ասացուք:

Ճթ. 180բ-2ա Գրուխ ՃԸ. — Ի վեց հազար ինն հարիւր եւ յՁ. թուին... եւ դեսպօղի քիր Տիմիդրիոսին եւ թագաւորին ինքեան:

Ի. 182ա-4բ Գրուխ ԹԹ. — Ի յունիսի ամսոյ նոյնոյ թուին եկն ի Կոստանդնուպօլիսն... զճանապարհն իւրեան արարի ի քսան եւ ութերորդն նոյնոյ սեպտեմբերի ամսոյ:

Իա. 184բ-5ա Գրուխ Ի. — Եւ ի հոկտեմբերի ամսոյ նոյնոյ թուին ել ի Կլարէնձայէ խաթուն... եւ թագաւորեաց ամս քսան եւ երեք եւ ամիսս երեք եւ աւուրս տասն: Վերջ երկրորդի գրգոյն եւ թագաւորութեանն Յովհաննոս Բալէօլօկոսի:

3. 185բ-202բ Գիրք երրորդ. Յաղագս թագաւորութեանն քիր Կոստանդինոսի Բալէօլօկոսի եւ քաղաքի առմանն եւ այլոց ոմանց

ա. 185ա-9ա Գրուխ Ա. — Ի յերրորդն նոյեմբերի ամսոյն... եւ վասն այսմ պատճառիս բնակակցութիւնս այս ոչ եղեւ:

բ. 189ա-94բ Գրուխ Բ. — Եւ ի նմին թուին, ի յոգոստոսի ամսոյն... որպէս զի տեսանիցեմք՝ միգուցէ ի ճանապարհին հանդիպեցի մեզ անըղձալի իր:

գ. 194բ-5բ Սկիզբն երկանց եւ ապակամութեան թագաւորողին քաղաքաց. Գրուխ Գ. — Տեսեալ եւ լուեալ ամիրայ Մէհմէմէտն... եւ ահա իրքն Բելլոբօնիսոսի այսպէս ունի:

դ. 195բ-9բ Գրուխ Դ. — Եւ իբրեւ գարունն պայծառացաւ... եւ ամենայն խորհրդարանն իւր այսինչ եւ այնինչ:

ե. 199բ-202բ Գրուխ Ե. — Եւ ի լինելն այսոցիկ այսպէս... եւ նաւքն եւ կամուրջքն անվնաս պահեցան եւ ոչ այրեցան:

Տէս 3. Անասեան, Մանր երկեր, Լոս-Անջելես, 1987, էջ 441-8.- Գէորգ Ֆրանցէսի Քրոնիկոնի հայերէն անտիպ թարգմանութիւնը:

Գ. 204ա-Ծբ [Ճառք Մխիթարայ Գօշի]

ա. 204ա-Ծբ Երանելոյն Մխիթարայ Գօշ վարդապետի ասացեալ Յաղագս միութեան մարդացելոյ բանին Աստուծոյ – Ա. Տէրն մեր Յիսուս Քրիստոս միով բնութեամբ... եւ ճշմարիտ խոստովանութեամբ ի փառս նմին Յիսուսի Քրիստոսի եւ Հօր եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտենից յաւիտեանս. *ամէն:*

բ. 205բ-7բ Նորին Մխիթար վարդապետէ ասացեալ Վասն արարչագործութեան – Բանն Աստուած Որդին Հօր Միածին... եւ ի գովեստ ինքեան յամենայն էից արարածոց իւրոց ընդ Հօր հօրի եւ ամենասուրբ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից. *ամէն:*

գ. 207բ-Ծբ Նորին Մխիթարայ վարդապետէ ասացեալ Յաղագս տնտեսութեան խորհրդոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ – Խորհուրդք տնտեսութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ներգործական կրիցն երկակի գոլով... այնուհետեւ անճառ հրաշից եղանութիւնս ունել բնաւորեցան ի փառս Հօր եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտենից յաւիտեանս. *ամէն:*

դ. 208բ Նորին Մխիթարայ վարդապետի Հարցումն եւ պատասխանի ամենայն նուաստական կրիցն Տեառն Յիսուսի Քրիստոսի – Վասն զի զամենայն նուաստական կիրս բնութեամբ ունելով... այլ անձնիշխան կամօք ներգործի, երկակի զօրութեամբ է եւ նոյն կարելի:

Կ. 209ա-11բ Գեղեցկայաւմար համեմատութիւնմ Հնոց կտակարանաց ընդ Նորոյս՝ արարեալ Վանականայ սուրբ վարդապետի – Երկինք՝ եկեղեցի, Արեգակն՝ Քրիստոս եւ Աւետարան, Լուսինն՝ օրէնքն... եթանասուն թարգմանիչքն՝ աստուածաբան վարդապետին: Եւ Քրիստոսի յուսոյն մերոյ փառք եւ պատիւ եւ գոհութիւն յաւիտեանս յաւիտենիւ. *ամէն:*

Ե. 212ա-Ծբ Յայտարարութիւն աղանդաց հոովմէական ուննիթօսաց եւ ճիզութեաց, գրեալ յերկուսի հարագատաց՝ ի Կիրակոսէ եւ Յովաննիսէ վարդապետաց, ի խնդրոյ տէր Սարգիս Բահանայի Կարնեցոյ, թովին 1665, անտի ի բնագրէն գաղափարեցաք 1855, ի մարտի 20, ի Սամարիայ – Ընկալայ զնամակ հրամանի նուաստս Կիրակոս եւ Յովհաննէս վարդապետք ազնուական ընտրեալ... եւ գոհութիւն տաշիր պարգեւողին Հոգւոյն Սրբոյ, որում փառք եւ երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից. *ամէն:*

Զ. 216ա-20ա Տեսիլ սրբոյն Մէթոտիոսի եպիսկոպոսի եւ Պատարայ վկայի յաղագս անցեալ ներկայիս եւ ապառնեացն աշխարհի, ասացուածք յԱստուածաշունչ գրոց, զոր թարգմանեալ է տեառն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի – Ի վերջնում դարու արմատաքի իլեցցի թագաւորութիւնն պար-

սից... եւ ամպարիշտք դարձցին ի դժոխս եւ ի կորուստն յաւիտենից:

է. 220ա-3բ Սկիզբն հաւատոյ, զոր ասացեալ է տեառն Կովիտասայ Հայոց կաթողիկոսի տիեզերական վարդապետի – Քանզի այսպէս ընկալաք ի սուրբ պատուիրանաց... որ Ադամ թարգմանի հողեղէն բնութիւն, նիւթ ի հողոյ պատկեր, փառք Աստուծոյ. *ամէն:*

Ը. 224աբ Երանելոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի արարեալ Յաղագս եկեղեցեաց կարգաց, թէ զի՞նչ է խորհուրդն – Վէմն անտաշ եւ անկորք, եղեալ ի հիմունս... այս առաջին լեալ վասն միանալոյ մեր ընդ հրեշ//:

– 224բ (ստ. լս.՝ գրչից) «Աւա՛ղ, որ աստի թուղթ մի անկեալ էր յօրինակէն: Անմեղադիր լերո՛ւք, ով ընթերցօ՛ղք, եւ զիս յիշելոյ մի՛ դանդաղիք: Թուին ՊԻԵ. (1376)»:

Բնագիրը թերի է. տէս ձեռ 743, 197բ, տող 8, ձեռ 1244, 184ա, տող 13. հմմտ. Ժամակարգութեան մեկնութիւն ընդարձակ եւ համառօտ՝ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, եւ նորին Պատճառ հիմնարկութեան սրբոյ եկեղեցոյ, ի լոյս ընծայեց Սահակ վարդապետ Ամատունի, Վարդաշապատ, 1917, էջ 74, տող 14: Սրան հետեւող՝ սկզբից թերի անխորագիր բնագիրը նախորդի շարունակութիւնը չէ:

Թ. 224բ-7բ [Գովասանք եկեղեցոյ] – //Սիօնի ասի մայր, եւ մարդ ծնաւ ի նմա... ամենայն շարաց իրաց ի բաց կացէք, ի փառս Աստուծոյ Հօր. *ամէն:*

Ունի «Ուրախ լ՛եր, եկեղեցի...» սկսուածքով բազմաթիւ պարբերութիւններ:

Ժ. 229ա-53բ Պատմութիւն պատերազմին Խօթնու՝ ի ժամանակս սուլթան Օսմանին տանկաց եւ ի կաթողիկոսութեան Հայոց Մելիսեդի Սրբոյ էջմիածնի

– 229ա-30ա Առաջաբանութիւն գրոցս Պատերազմին Խօթնու, որ եղել ի ժամանակս բարեպաշտ եւ քրիստոսապսակ արքային Իլախաց, այսինքն՝ Լեհաց, Զիկմունդի Երոտոյի, ի ձեռն ամբարիշտ եւ ինքնակամ արքային տանկաց Փոքր Օսման կոչեցելոյն, արարեալ ումեմն Յովհաննու անիմաստ հետեւողի, ի խնդրոյ հօր իւրում տէր Յակօբ բարեւէր Բահանայի եւ ի պարծանս համօրէն հաւատացեալ եղբարց – Յերիս որոշմունս բաժանեալ երեւիւր արհեստ վիպաբանութեանց... անյապաղ սկսեալ անտի, ուստի սկսանելն է արժան:

ա. 230բ-2ա Գլուխ առաջին. Յաղագս բոնականութեան ազին իսմայէլեան եւ վասն խորհելոյն Օսմանայ սուլթանին՝ գալ ի վերայ աշխարհին Իլախաց, մոռացեալ զուխտ հաստատութեանն իւրոյ – Արդ, ի զօրանալ խուժադուժ ազգին սարակինոսաց... ծագել զլոյս շաւղացս հետոց, մինչեւ ի կէտ խոստմանցս իմոց:

բ. 232ա-3ա Գլուխ Բ. վասն սպառնալեացն ուղարկեալ թղթոյն Օսմանայ մանկահասակին եւ

խոնարհաբար պատասխանի արժային Իլիսաց, այսինքն՝ Լեհաց – *եւ ի կատարել ամաց կենարարին... արին ձեր ի գլուխ ձեր եղիցի: Աստ ժԲ. տուն ոտա- նաւոր կայր պատմաբար:*

գ. 233բ-4ա Գլուխ Գ. Յաղագս պատրաստելոյ Օսմանայ զամենայն զօրս իւր եւ զալոյն մինչեւ ի գետն Թունայի – *Յայնժամ, իբրեւ ընթերցաւ զիմաստութեամբ պատասխանին... գիտելով զասացեալն՝ եթէ առաւելութիւն բանից պատերազմող է լըսելեաց:*

դ. 234բ-5բ Գլուխ Դ. Յաղագս գնալոյ զօրավարին իլիսաց Խօթինու – *Իսկ բարեպաշտ արքայն Զիկմունդ... ոչ բազում աւուրս մնալով զալստեան արքային եւ տեան իւրոյ:*

ե. 235բ-6բ Գլուխ Ե. Յաղագս գնալոյ արժայորոյտոյն ի բանակն, եւ վասն զալստեան խազախացն – *Բայց զի խոհեմն այն եւ արին... որ եւ զայս յիւրում տեղւոջ գրեցից:*

զ. 236բ-7բ Գլուխ Զ. Յաղագս զալստեան Օսմանին ի Խօթին եւ զկնի Թաթարխան քան Թամուրին – *Ապա ի ժԶ. աւուր օգոստոս ամսոյն եկն եհաս ամբարիշտ արքայն տաճկաց Օսման... որք լինէին յաւուրսն յայնոսիկ:*

է. 237բ-8բ Գլուխ Է. Յաղագս զալոյ զօրացն տանկաց ի վերայ բանակին խազախաց եւ ամօթալից դառնալոյն – *Իսկ յաւուր շաբաթու, օգոստոսի ժԸ. յարուցեալ զօրք բազում տաճկաց գան... եւ մարտուցեալ ընդ անհաւատսն, փախստական արարին՝ կոտորելով ի նոցանէ զարս երեսուն կամ աւելի:*

ը. 238բ-9բ Գլուխ Ը. Յաղագս յաղթութեանն պարոն Շինեաւսիին եւ կոտորելոյ զանազան ազգացն տանկին – *Դարձեալ ի նմին աւուր միաբանեալք անհաւատիցն... այս եղեւ ի ձեռն նոյն Մուստաֆայ փաշային, զոր վերագոյն յիշեցաք, ի ԻԱ. օգոստ՝, Գ. շաբթի օրն:*

թ. 239բ-40բ Գլուխ Թ. Յաղագս ելանելոյ ընդհանուր զօրաց հաւատացելոցն ի հակատ պատերազմին եւ տանկաց, որ ոչ իշխեցին ելանել ամենեւին – *Յայնժամ, ի շորեքշաբթի աւուր օգոստոսի... եւ յետ երկու շաբաթ գլխատեցին Պօրօտավքայ ի բանակն իւրեանց:*

ժ. 240բ-2ա Գլուխ ժ. Յաղագս զալստեան դեսպանացն տանկաց վասն հաշտութեան եւ կորստեան Խարախաչ փաշային – *Երկուշաբթի աւուրն օգոստոսի գայ ոմն... դո՛ւ եղեր պատճառ կորստեան այսքան զօրուն մըսըլմանայ:*

ժա. 242ա-3ա Գլուխ ժԱ. Յաղագս խազախացն եւ վասն մահուան Հաթմանին եւ արձակելոյն տանկաց զդեսպանն Բիստունէից – *242բ| Իսկ ի հինգշաբթի աւուրն օգոստոսի... եթէ ոչ Տէր շինէ տունն ի նանիր վաստակին շինողք նորա:*

ժբ. 243բ-4բ Գլուխ ժԲ. Յաղագս մեծ եւ անագին պատերազմին տանկաց ընդ Բիստունէայս – *Ապա յաւուր երեքշաբաթուջ հրամայէ Օսման... այլ մանաւանդ աներեւոյթ աջովն Աստուծոյ հանապազ հարեալք եւ եղծեալք եւ կործանեալք լինէին:*

ժգ. 244բ-6ա Գլուխ ժԳ. Յաղագս արձակելոյ զդեսպանս տանկաց եւ ընդ նմա յղեն զիւրեանց դեսպանն – *245ա| Յետ այսորիկ ի բանակէն Իլիսաց... եւ ի մնացեալ յայտնիսն դիմեցից՝ ընտրելով զստոյգս ի յուրովից:*

ժդ. 246ա-7ա Գլուխ ժԴ. Յաղագս ժողովելոյն զամենայն զօրս իւր Օսմանին եւ դառնալոյ ի յերկիր իւր յետ կատարելոյ հաշտութիւնն – *Յայնժամ, Դ. շաբթի աւուրն սուլթան Օսման... մինչեւ ի վերջին կէտ աշխատութեանցս վեհ իմաստութեան ձերում:*

ժե. 247բ-8բ Գլուխ ժԵ. Յաղագս զալստեան թագաւորին Իլիսաց ընդհանուր զօրօք յիլով եւ անդ լուեալ զհաշտութիւն ընդ թշնամիս, դարձաւ վերստին ի Վարժով (Վարշաւ կոչեցեալն այժմ) Բաղա – *Ընդ աւուրսն ընդ այնոսիկ ինքնակալ եւ բարեպաշտ արքայն Զիկմունդ... ասելով՝ եղիցին կամք Տեան օրհնեալ յաւիտեան:*

ժզ. 248բ-9ա Գլուխ ժԶ. Յաղագս գնալոյ ամենայն զօրաց Բիստունէիցն ի տեղիս իւրեանց փառաւորելով զԱստուած եւ զարժայորդին Վլատիսլաւ – *Յայնժամ, յաւուր ուրբաթի արքայորդին Վլատիսլաւ... զի մանաւանդ որ հիւանդանալ եկն ի վերայ անձինս, եւ թողաք:*

ժէ. 249բ-50բ Գլուխ ժԷ. Յաղագս սովոյն, որ եղեւ ի մէջ երկուց բանակացն, եւ վասն թուոց զօրացն տանկաց եւ Բիստունէից – *Իսկ արդ, քանզի հարկեցաք յառաջագոյն... եւ ապագայիցն սպասեալ մնայ անսպառ եւ անզերծանելի տանջանացն ընկալման:*

ժը. 250բ-2ա Գլուխ ժԸ. Յաղագս սպանման Օսմանին, որ եղեւ ի թուին հայոց ՌՉԱ. (1622), մայիսի ժԹ., յաւուր չորեքշաբաթին – *Արդ, որովհետեւ ժամանեցաք ի վերջ... փառաւորելով զամենակարող եւ զանհասանելի մեծութիւն զօրութեան նորա այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

252աբ Ինքնագիտ յիշատակարան Յովհաննու արարողի բանիս, որիչ ի Թուոցն – *Արդ, յայսմ անդորրութեան աւուրցս, յորում ընդոստնեալ մերժեցան վնասակար թշնամիք եկեղեցւոյ, յետ ամաց վեցից անցանելոյ եւ Յովհաննէս հուսկ յետին բանահիւսաց եւ տարտամ հետեւողս ուսումնաւորաց, թողեալ զբազում տառապանս մշտակիր ոգւոյս եւ խանդաղատեալ սիրով, ցանկացայ թարգմանել խօսիւք նիւթական լեզուիս զայս բարեզեկոյց արգասաւորեալ նորագործ հրաշիցս համբաւ, վերավկայելով կրկին յաւելուածովք, որում տպաւորեալ տնօրինաբար ճշգրտիւ պատուաստեալ կառուցի ընդ համարս ամաց կենարարին, որ*

միշտ ընթացման է արուեստական հոլովեալ ի մեզ յոբե-
լինից ութեքին շորից եւ ի զօդն յաւելեալ հիւսմամբ,
կրկնակի գոյի հնգիցս հնգից եւ երկրորդ յարակից,
իսկ Արալ՝ 252բ՝ րաւտեան Թորգոմայ տոհմին զարմիցն
ի նորոգմանէ հինգ հարիւրեկին զկնի կատարման
տարուն ընդ շրգագայութեանց յեղանակաց ժամանա-
կիս յայսմիկ, յաւել եւս առ մերս քանակութիւն չափոյ
եօթներեակ տասանց եւ վեցից:

Յամս աստուածապատիւ եւ աթոռնկալ սուրբ ուխ-
տին Վաղարշապատու տեառն տէր Մելքիսեթեկին եւ ի
թագաւորութեան ինքնակալի տեառն տէր եւ բարե-
պաշտի Զիկմունդի Երուրդի, որոյ Քրիստոս Աստուած
պահեսցէ զընտրեալն իւր ընդ ամրածածուկ աջովն
իւրով, մանաւանդ զմեծապայծառ իշխանն եւ ծիրանա-
ծին զանդրանիկն իւր զմեծն Վըլատիւլալ եւ զայլ մե-
ծամեծսն թագաւորութեանն իւրոյ հաստատեսցէ Տէր ի
գործ արիութեան եւ օրհնեսցէ զամենեսեան անսպա-
ռելի օրհնութեամբ. ամէն:

Թէպէտ զկնի շարունակ բանք շատք կային շնորհա-
կա յիւրեանց բնակելոցն Հայոց անդ եւ հայրախնամ
գթութիւնք Լեհաց տէրութեանն, որ առ ստորագրեալս
գովասանաբար յայտարարութիւնք բազումք, որպէս եւ
յառաջն ասացաք, ի խիստ աղաւաղ գրութենէն ամե-
նեկին այլայլեալ գոլոյն թողաք, որ եւ իսկ անհարկա-
ւոր առ մեզ գոլոյն շաշխատեցաք զսխալանացն, բայց
զկնի սոցա ոտանաւոր յիշատակարանն բազում աշխա-
տանօք ըստ կարի մերում ուղղեցաք եւ գրեցաք
գուղիղն:

Տպ. տէս Յովհաննէս Կամենացի, Պատմութիւն պատերազ-
մին Խոթինու, աշխատ. 3. Անասեանի, Երեւան, 1964:

Ժք. 252բ-Յբ [Տաղ-յիշատակարան] – Գարձեալ
շնորհեմ սիրով զայս բան, / գովեալ աշինդ իմ պա-
տուական... յանցեալ գալոցն եւ այժմ որ կեան /, եւ
անսպառ միշտ յաւիտեան:

– 253բ Սահակ* գրիչս առնէք յիշման, / նա զձեզ
յիշէ յիւր գալստեան, / յորժամ նստցի յաթոռ դատման,
/ մեղաւորաց նա քաւարան: / ամենասուրբ Երրորդու-
թեան / տացուք պատիւս գոհութեան / յանցեալ գա-
լոցն եւ այժմ, որ կեան, / եւ անսպառ միշտ յաւիտեան:

– Ստ. լս.-ում գրչի ծնթ* «Գուցէ առաջին գաղափարողէ
գործոյս եղեալ է զայս (իմա՛ Սահակ) անուն, որովհետեւ վեր-
ջին օրինակողի անունն Սարգիս կոչի, որպէս տեսցի ի ստորեւ
յիշատակարանի, եւս յայտնի տեսանի յաւելումն ոտանաւորի, ի
նոյն գրչէ, որոյ անունն եղեալ է:

ԺԱ. 258ա-64բ Վարդանայ Հայկազնոյ Տաղ գե-
րեզմանական վասն փոխման երանելի կաթողի-
կոսին Հայոց Գրիգորի Վկայասիրի – Յորժամ զմիտս
իմ ժողովիմ եւ քննութեան բանն պարապիմ, / յան-
կարծ զիմոց աղէտն յիշեմ յառաջ ու վերջ, զոր ճանա-
չիմ... այնմ, որ օրհնեալն է յաւիտեան, յայժմ եւ յապա
անզրաւելի:

– 264բ Յօրինակին հետեւեալ ոտանաւորն գոյր:
ԺԲ. 265ա [Գրիգորի Տաղ] – է յիս գիտու-
թիւն, բայց խամրացեալ է, / գոյ երկիւղ բարեաց, այլ
շիջանի միշտ... Թողցէ Յիսուս բազմաց, զոր պահան-
ջեաց նա:

Տպ. տէս Գրիգոր Տղայ, Բանաստեղծութիւններ, աշխատ.
Ա. Մնացականեանի, Երեւան, 1972, էջ 179-81:

ԺԳ. 265բ-72ա [Առաքելի Բաղիշեցոյ] Պատմու-
թիւն Մեծին Ներսէսի Հայոց հայրապետի, որ էր որդի
Յուսկան՝ թոռին Գրիգորի Հայոց Լուսաւորչի –
Օրհնեալ անուն անճառ Աստուծոյ մեծին, / Հօր եւ
Որդոյ, Հոգւոյ նոցին փառակցին... լի եւ առատ սրտիւ
ասէք ողորմի: Փառք ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր
եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ յաւիտեանս. ամէն:

– 266բ («որ պատմագիր կոչի ի յեկեղեցի») բառերի
վերաբերեալ) «Ծանօթ՝. Սխալ է համարումն հեղինա-
կին, քանզի ոչ սա է շինողն եկեղեցական պատմու-
թեան, այլ նա Կեսարիոյ Պաղեստինոյ եպիսկոպոս էր,
եւ սա՛ Կեսարիոյ Գամրաց, մանաւանդ նա իբր յիսուսն
ամ յառաջ վախճանեալ էր, յորժամ ամբարձաւ աթոռ
հայրապետութեան սրբոյն Ներսէսի//»:

– 272ա Որ ետ տկարիս կարողութիւն հասանել
աւարտ բազմա...

Յետագայ գրչութեամբ լս.-ում նշում «Ծանօթ՝. այդպէս
պակասի յօրինակին»: Տէս «Պատմութիւն երջանիկ վարուց եւ
մահուան երանելի առն Աստուծոյ սրբոյն Մեծին Ներսէսի եւ որ
ինչ մարգարէական հոգւով ասաց նախքան զլինիլն...», Կ.
Պոլիս, 1737, էջ 191-211: Հմմտ. 3. Անասեան, Հայկական
մատենագիտութիւն, Ե-ԺԸ. դդ., հտ. Ա., Երեւան, 1959, էջ 1110
«Առաքել Բաղիշեցի»:

ԺԴ. 274ա-300ա [Էօժէնի Պօռէի] Պատմութիւն
աւերակացն Անույ, թարգմանեալ ի գաղղիական
բնագրէն աշխատութեամբ Յովհաննէս Տէր Կարա-
պետեան Զամուրհեանց Պրուսացոյ, հանդերձ ծա-
նօթութեամբ. յԻւսիստար, 1843:

– 274ա Յառաջաբան թարգմանչին – Հեղինակ
գործոյս Էօժէն Պօռէ՛ այր իմաստուն, բազմահմուտ եւ
կրօնասէր*, ճանապարհորդեալ ի յԱսիա, ի Հայաստան
եւ ի Պարսկաստան, բաց ի յիշատակաց բազմաց եւ ի
նամակաց, զորս ի պէսպէս տեղեաց գրեաց, սկսեալ ի
1837 ամէն, որ է սկիզբն ճանապարհորդութեան նորս,
մինչեւ ց1840, յորում ամի դէմ եղ դառնալ ի Գաղղիա՝
ի հայրենիս իւր, ունի եւ զպատմութիւնս զայս արա-
րեալ, յորում են ինչ ինչ սխալք պատմականք կամ
աշխարհագրականք, զորս աստ ի մերում թարգմանու-
թեանս ծանօթութեամբ ուղղելով. առ որոշելոյ զմերն ի
ծանօթութեանց գաղղիական տպագրութեան, ի ստորէ
մերոցս դնեմք զանուն մեր:

* «Կրօնասէր» բառի վրայ աստղանիշ դնելով, ինչ որ մէկը
(հաւանաբար Թաղէոս Միհրդատեանցը) լուսանցում յետա-
գայում գրել է այս ծանօթութիւնը. «Այս հակառակասէր եւ
կործանիչ եկեղեցւոյն Քրիստոսի, մանաւանդ թշնամի Հայաս-

տանեայց սուրբ եկեղեցւոյ, սակայն թա[րգ]մանչին մտերիմ բարեկամ լինելոյ աղագաւ գովէ զայսպիսի գրութեամբ գովաբանելով իբր միամիտ իրեան պապամոլութեան եւ կրօնակից [ճիգ] վիթական խարդախութեանն, որ [տե]սանի ի ներքոյ գրութեան թէ՛ հեղինակի եւ թէ՛ թարգմանչի եւ է այժմ կար//ւեր եւ մեծաւ նալաղիոյ Քենետիկեան կրօնա[ւո]րաց եւ հակառակ սուրբ եկեղեցւոյս հեղինակ] սորին»:

274ա-300ա Պատմութիւն աներակաց Անւոյ – Անցեալ էաք մեք շտապով ընդ մեծագոռն հիւսիսակողմն Անւոյ... եւ ծանօթ է գիտելեաց, զի Աղեքսանդր կոչի ժառանգ կայսերութեանն Ռուսաց: Վերջ:

Բոլոր նիւթերի լուսանցներում կան տարբեր մարդկանց կողմից եւ տարբեր ժամանակներում արուած բնագրային նշումներ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ

272բ Ամենայն սրբոց բարեխօսութեամբն, որ յառաջին դարուն հաճոյացան եւ որք զհետ նորա աշխատեցան փոխադրելով եւ գծագրելով մինչեւ ի մեզ. Քրիստոս Աստուածն մեր ողորմեսցի իրեանց եւ ծնողաց եւ ուսուցչաց վարձս բարեաց պարգեւեսցէ. ամէն: Երես անկեալ աղաչեմ զհանդիպողդ այսմ Երգարանի, յիշեսչիք ի սուրբ աղօթիս ձեր զմեղապարտ գրիչս զԱլեքսանոս դպիրս եւ զճնողս մեր՝ զտէր Ստեփաննոս քահանայն եւ զմայրն իմ Զմրութն, որ հանգուցեալ են առ Քրիստոս. եւ դուք յիշեալ լիջիք ի բարերար փրկչէն մերմէ ի փառս իւրում. ամէն: Գրեցաւ սա ի թուականիս մեր ՌՃԺ (1661). որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:

211բ Բանքս համեմատի Հնոյ եւ Նորոյ կտակարանի ձեռամբ գծագրի Թումա երիցի

Ի Կերտ Տիգրանի
 Թըվին հազարի հարիւր քսանի (ՌՃԻ.-1671)
 նոյեմբեր տասնի,
 ի վայելս անձնի աստուածաբանի
 տէր Մարտիրոսի:
 հանդիպողք սըմի, մէկ Տէ՛ր ողորմի
 առջիք արժանի,
 Քրիստոսն ամենի, փրկիչն համայնի
 Ձեզ եւս ողորմի:

220ա (1676 թ.) տե՛ս Յիշատակարան գրչութեան ժամանակի՝ 220ա:

254ա Յիշատակարան յօրինակողէ Պատմութեանս – Յամի Տեառն 1791, հայոց ՌՄԻ.* (1771) թուին, յունվարի ամսոյն օրինակեցեալ եղեւ զայս Պատմութիւնս ի հին եւ աղաւաղեալ ձեռագիր գրչէ միոջէ, յանկեան ուրեք մնացելոյ, ի Սարգիս դպրէ՛ պաշտօնէէ մանկատան Սրբոյ Յակոբայ Մծբնայ հայրապետի, շատ աշխատելով ամենասխալ գրութեան գաղափարին եւ շուտափոյթ գրութեանն վասն կարճութեան պահուն, ձեռամբ գրասէր եղբօր իմոյ՝ մեծապատիւ տիրացու Աւետիսին Թապալգատէ կոչեցելոյ,

որոյ Տէր լուսաւորեսցէ զհոգիս ննջեցելոցն ընդ պատմիչ Յօհաննէսին, որ զայս թարգմանութեամբ ի լոյս ածեալ է:

Փրկչական եւ հայկական թուականներն իրար շեն համապատասխանում, դժուար է ասել՝ ճիշտը ո՞րն է՝ 1771ը, թէ՞ 1791ը. գուցէ հայոց թուականը վրիպակով է եւ պէտք է գրուէր ՌՄԻ.՝:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 118բ (Ռուբէն Պաղտասարեան գրչի) Օրինակեցաւ գիրս, որ է Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ, ի թանգարանի Պալատոյ Սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյ: Գրչութիւնն հին, բայց անթուական էր: Գոյր ի մէջ սորա Պատմութիւն երկարայ Իմաստասիրի եւ Պատմութիւն Մեծին Ներսէսի:

Ի վայելումն Թաղէոս աղայի Միհրդատեան:

ԳՐԶԱՓՈՐԶ՝ Պտոկ-Պհպ. Գա՝ «աբգդեզ», Դբ՝ «աաբդդապա», Եա՝ «Մովաբ, Ամովն», 1ա՝ «Ես քո սիրուն, օվ նազելի, նազելի», 36բ՝ «ի դրանէ էր», 359ա՝ «Հաստատէ Տէր զարդարս եւ հանէ», 377ա՝ «ի նուգա: ՆՇՈՒՄ՝ պհպ. Աա՝ «2669», Պտոկ-Պհպ. Գա՝ «Հ՞ր 17/2669», «ՌՂ.-1641 Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս», Պտոկ-Պհպ. Էբ.-ին կպցուած թերթիկին՝ «Վերականգնուած է. տախտակը, մէջքը եւ մամուլները: Դրուած է նոր աստառ: Գլխ. վերականգնիչ՝ Լ. Աղաբէկեան. 1980 թ.»:


2670

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ԱՆԱՊԱՏ (ՈՍԱՆ)

ԳՐԻԶ, ԾԱՂԿՈՂ՝ Աստուածատու արդյ.: ՍՍՅՈՂ՝ Մուրաւ- շահ:

Թերթ՝ 330+1 (կրկն.՝ ք. 1). չգրում՝ 1ա-2բ, 253ա, 330աբ: ՊՐԱԿ՝ 11+4+Ա-ԻԷX12 (ԻԷ 4): ՆԻԻԹ՝ թուրք: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 27.5x 18.3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսին (20x12.5): ԳԻԹ՝ բոլորգիր (նմուշ՝ 196ա): ՏՈՂ՝ 21: ԿԱԶՄ՝ դրոշմագար շագանակագոյն կաշի, դոնակով, 1 գամով եւ 1 կապիչով, միջուկը տախտակ, աստառը սև բախշ. լուսանցակողերը՝ կամիր:



Նմուշ 196ա


ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ – Զոհաբերութիւն Աբրահամո՝ 3ա, Աւետումն՝ 3ա: Ծնունդ՝ 3բ, Լուսցումն Քրիստոսի՝ 3բ, Ընծա- յումն՝ 4ա, Մկրտութիւն՝ 4ա, Հարսանիք ի Կանայ՝ 4բ, Պայծառ- կերպութիւն՝ 4բ, Բժշկութիւն անդամալուծի՝ 5ա, Բժշկութիւն կու- րի եւ դիահաւարի՝ 5ա, Քերահաստութիւն Պետրոսի՝ 5բ, Բաշ- խումն նկանակի՝ 5բ, Յարութիւն Դագարո՝ 6ա, Մուտք յերուսա- ղեմ՝ 6ա, Ոսկնուայ՝ 6բ, Քացեալ պատառ՝ 6բ, Մատնութիւն՝ 7ա, Պիղատոս լուանայ զձեռն՝ 7ա, Խաչելութիւն՝ 7բ, Քաղումն՝ 7բ, Յարութիւն՝ 8ա, Համբարձումն՝ 8բ, Զորեկերպեան արոն՝ 9ա, Հոգեգալուստ՝ 9ա, Փոխումն Աստուածամօրն՝ 252բ: Մատթէոս՝ 15բ, Մարկոս՝ 104բ, Դովկաս՝ 159բ, Յովհաննէս եւ Պրոխորոն՝ 253բ: Լ ա - ա յ ի ն . Մարիամ Մագդաղենացի՝ 101բ, Յովհաննէս Մկրտիչ՝ 120բ, Յովսէփ Արիմաթացի՝ 157ա, Գաբրիէլ հեշտա- կապեա՝ 162ա, Յովսէփ նախարար՝ 247ա: Խ ո Ր ա ն ն՝ 9բ, 10ա,

ՊԿԸ. – 1419


10բ, 11ա, 11բ, 12ա, 12բ, 13ա, 13բ, 14ա: Կ ի ս ա յ ո Ր ա ն ն 16ա, 105ա, 160ա, 254ա: Լ ու ս ա ն ց ա գ ա Ր դ՝ բուսական, կենդանական, թռչուն, յուշկապարիկ, տաճար: Զ ա Ր դ ա գ ի Ր՝ մարդալիմ, հանգուցազիր, թռչնազիր, կենդանազիր: Գ ո յ ն ե Ր՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, մանուշակագոյն, շագանակագոյն, սև, սպիտակ, սուրբ: Տ Ե՛ ս Ա. Գեորգեան, Հայ մանրանկարիչներ, 9-19րդ դդ., էջ 56-7:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան Յովհաննո, Բ. 3 - Գ. 2, ժէ. 35 – ժԸ. 11: ԺԱ. դ.: Ա. (սկ.), ստացուած մէկ ամբողջա- կան թերթից: Մագաղաթ, 26x18, երկսին (23x16), ուղղագիծ երկաթագիր (նմուշ՝ Գա), տող՝ 26: Կարդայ՝ Աա-Աբ. «Եւ ի պա- կասել գինույն... ոչ ոք կարէ գայդ նշանոյ առնել» (Բ. 3 - Գ. 2): Բ. Աւետարան Դովկասո: ԺԱ. դ.: Բ. (վշ.), ստացուած մէկ թե- թից: Մագաղաթ, 27x18, երկսին (23x16), ուղղագիծ երկաթա- գիր (նմուշ՝ Բա), տող՝ 25: Կարդայ՝ Բա-Բբ. «տեսանել եւ ոչ տե- սանիցիք... մին փարիսեցի եւ մեան մաքսաւոր: Փարիսեցին կայր» (ժէ. 35 – ժԸ. 11): Ունի ստ. լս. համաբարբառ:

Ըտ գըշութեան՝ սկզբի եւ վերջի պատառիկ-պահպանակ- ները նոյն ձեռագրի մաս են:



Նմուշ Բա



Նմուշ Գա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի Ա. փեղկի տախտակը ստորին մասում շարդուած, ստորին եւ ձախ մասի կաշին պոկուած, երկու գամերը, կապիչները եւ նախկինում Ա. փեղկի վրայ եղած խաչն ընկած, պահպանուած 1 կապիչի կէտը պոկուած, լուսանկարները գունաթափ, ք. 1-10՝ հիմքից թուպացած, ք. 329՝ հիմքից պոկուած, ք. 327-8ի միջև 1 ք. ընկած, որոշ թերթերի ստորին անկիւնները գործածութիւնից մաշուած, ք. 329-330 եւ պնպ. Գ.՝ ցեցի անցեցողով:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

- 1. 9բ-10ա Թուղթ Եւեբեայ:
- 2. 10բ-14ա Համաբարբառ:
- 3. 14բ, 103ա Նախադրութիւն: 16ա-103ա Աւետարան Մաթթեայի:
- 4. 103ա-4ա, 158բ Նախադրութիւն: 105ա-58բ Աւետարան Մարկոսի:
- 5. 160ա-251բ Աւետարան Դովասաու: 251բ Նախագրութիւն:
- 6. 251բ-2ա, 323ա Նախադրութիւն: 254ա-322ա Աւետարան Յովհաննու (322ա-3ա Իրբ կնոջն շնացելոյ):

Ծնթ.՝ Ունի ստ. լս. համաբարբառ, սրբագրում-լրացում 53ա:

ՅԻՇՄԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 323ա (գրչի) Փառք անսկզբանն եւ սկզբանն ամենայնի, անեղ էին եւ գոյացուցչին բնաւից, անվախճան եւ անսահման էացուցչին, սահմանիչ եւ կատարումն բոլոր էիցս, երիցս միակին, եզակի եւ միում աստուածութեան, որ անշարժ գոլով շարժէ զարարածս ի կեանս եւ ի փրկութիւն, էից էակն եւ կենդանեաց կեանքն, որ անփոփոխ գոլով միշտ, յէութեան անեզր եւ անվարպիակ լրումն եւ բովանդակիչ ամենայնի, |323բ| եւ յամենայնս է եւ յամենայնէ անհաս է, որպէս ի մասունս, եւ ի բոլորս, եւ ինքն ո՛չ մասն, եւ ո՛չ բոլոր, որպէս թէ զմասն եւ զբոլոր զամենայն ինքն ունելով, եւ կրէ զամենայն բանիւ զաւրութեան իւրոյ, գերալիր գոլով ընու զամենայն, եւ անհաս է յամենայնէ, որում բան եւ իմաստութիւն եւ լեզու տուեալ բոլոր էիցս, հանցուք արհնութիւն եւ փառս Հար եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Իսկ չորից աւետարանչացն խորհուրդ բազմաւրինակ իմն ցուցմամբ տեսանի, զի ոմանք ասէն, թէ չորից աւետարանչացն են չորք անկիւնք արարածոց՝ արեւելք, արեւմուտք, հիւստս, հարաւ. պարտ էր համապիւռ քարոզել զԱւետարանն: Իսկ ոմանց հաճոյ թուեցան ըստ չորից մշտահոս գետոցն յաղենական |324ա| աղբերէն յառաջ խաղացեալ՝ առ ի տիեզեաց առողումն

Փիսոն, Գեհոն, Տիգրիս, Եփրատես, եւ սոցա գոլով նմանապէս թուով ուռճառեալք ի կենդանական ոռոգանել զպարբեալ միտս մարդկային բնութեանս: Նոյն արինակ՝ ըստ տեսութեանն եզեկիէլի քառակերպեան աթոռոյ՝ մարդ, առիւծ, եզն, արծիւ. զանմարմնոցն Տէր տեսանելով բազմեալ ի փառացն աթոռ, իմանալի ցուցմամբ զինամս բոլոր բնութեանս զակնարկումն, որ աստուածապէս եւ տիրաբար բերմամբ նշանակէ զլինելն առ ի հողածին հոգեղինացն՝ անմահից զմահկանացուս առնել հաղորդս: Եւ ի գերակատար հանել ի փառս, վասն զի փառաց թագաւորն Քրիստոս՝ փառակիցն Հար եւ Սուրբ Հոգոյն, զմերս առեալ զբնութիւն, ինքեան միացոյց աստուածութեան, ուսուցանել |324բ|ով մի Որդի դաւանել, որ յԱստուծոյ Հարէ եւ որ ի Մարիամայ սուրբ կուսէ, անճառ միութեամբ, զոր աւետարանական ուսուցանեն բանք, մինչ ի կատարած հաւնութեամբ, հաստատ կարգաւք, ի նոյն յարելով յառաքելականն քարոզութիւնն, որ զաստուածախոսն վարդապետութիւն գրոշմեալ զսակաւս ի բազմացն՝ առ ի հաւատալ, թէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ՝ ըստ վեհին Յոհաննու, հաւատալ եւ զկեանսն յաւիտենականս ընդունել յանուն նորա: Ուստի եւ տեսեալ զսորայն անճառ փրկագործութեան խորհուրդ, աստուածասէր ոգին Մուրաւշայ եւ ստացաւ զսուրբ Աւետարանս ի հալալ արդեանց իւրոյ՝ յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնաւդացն՝ Անպէտին եւ Թավրէզին, եւ եղբարցն՝ Եվաթին եւ Ստեփանոսին, Դարիպառին եւ Գաւհարմելիէին, կենակցին՝ Հայիմ|325ա|խաթունին, եւ աներոջն՝ Աստուածատրին, եւ (մէկ անուան տեղ չգրած) եւ ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց եւ հանգուցելոց: Եւ արդ, ես՝ յետինս ի քահանայս եւ անարժան աբեղայս ի մանկունս եկեղեցոյ, հրաման առեալ ի պատուիրանադիր առաքելական բանէն, որ ասէ. Յոր կոչումն, որ կոչեցար, ի նմին յամեսչիր, տեսի զսէր եւ զփափաք Մուրաւշին, որ առ հոգեւորսն, եւ իմով տկար անձամբս եւ մեղաւոր ոգով յանձն առի եւ կատարեցի զսուրբ Աւետարանս՝ գրով եւ ոսկով ի ստոյգ եւ յընտիր յարինակէ: Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս եւ յամենալի սեղանոյս, որք պատահիք սմա ընթերցմամբ կամ արինակելով, յիշեսչիք ի մաքրափայլ յաղաթն ձեր զստացաւ սորա զՄուրաւշէն եւ զիւր ծնաւդսն՝ |325բ| զԱնպէտն եւ զԹավրէզն, զԵվաթն, զՍտեփանոսն, զՔամալն, զԳաւհարմելիէն, զԴարիպառն, զկենակիցն զՀայիմխաթունն եւ զիւր քվերսն եւ զամենայն արեան մերձաւորսն: Ընդ նոսին եւ զանպիտան գրիչս՝ զԱստուածատուր աբեղայ, եւ զծնաւդն իմ զԱտոմ եւ զՇաֆարխաթունն, եւ զհարազատ եղբարսն իմ զԹումաբէլ եւ զՅոհաննէս, եւ զհանգուցեալ քվերսն իմ զՇահրուման եւ զԴովիշայ, եւ զմեծ մայրն իմ զԳաւհարմելիս եւ

զՎարիպալանն: Նա եւ յիշեցէ՛ք ի Քրիստոս զվարդապետն իմ զՅակոբ, որ բազում աշխատեցաւ ի վերայ իմ եւ ուսոյց ինձ զսաղմոս, զշարական, զտէտր, զգրագրութիւն եւ զամենայն բարեձեւութիւն, զոր ոչ առնեմ: Քրիստոս Աստուած յերկար կենաւք պահէ ի գլուխս մեր եւ յետ աստեացս զերկնից արքայութիւնն ժառանգէ ընդ |326ա| երկնաւոր վարդապետին. ամէն:

Յիշեսցի՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք ստացողի սորա Մուրատչին եւ ծնաւդացն, գրողաց եւ աշխատողացն՝ ի ժամ սուրբ եւ սոսկալի պատարագին: Եւ ինքն, որ տուողն է բարեաց, ձեզ՝ յիշողացդ, եւ յիշեցելոցս ողորմեսցի մարդասէրն Աստուած:

Այլ եւ գրեցաւ սուրբ Աւետարանս ի յանապատիս Սուրբ Վարդանայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Վարդանայ Զարավարիս ի հայրութեանն Թումայի, ի հայրապետութեանն տեառն Գաւթի, եւ ի թուականութեանն հայոց ՊԿԸ. (1419), ձեռամբ Աստուածատու արեղայի՝ անիմաստ եւ անմար գրչի եւ բազում մեղաւք ցնորեալ եւ անիշեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգեւեաց մեզ մարդասէր Հոգին, բազում աշխատանաւք կատարեցի զցանկ եւ զբառն |326բ| յայն Աւետարանէն, որ ի Սիս էր գրած:

Դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս զՍտան քաղաքի քահանայքս՝ զկենդանիքս եւ զհանգուցեալսն զՅոհանննէս քահանայն եւ աւագերէց Սուրբ Աստուածածնին եւ զՅովաննէս փրիստիպայն զԱմիրջուսէնց եւ զԳորգ փրիստիպայն, եւ զՍտեփաննոս քահանայն, եւ զԱստուածատու փրիստիպայն, եւ զԱտոմ փրիստիպայն, զԾերուն գրագիրն, եւ զՍարգիս քահանայն եւ այլք, որ զնացին առ Քրիստոս. շնչէ Քրիստոս Աստուած զիրեանց ձեռագիր յանցանացն, իսկ զկենդանիքս՝ զՍտեփաննոս քահանայն՝ որդի Յոհաննէս քահանային, եւ զորդի նորին Յովաննէս քահանայ, այլ եւ զաւագերէց սուրբ եկեղեցոյս զտէր Թումայ եւ զՅովաննէս փրիստիպայն, զՍտեփաննոս որդի Աստուածատու փրիստիպային, զոր ի վերոյ յիշեցաք, եւ զմիւս Ստեփաննոս՝ որդի Ատոմ քահանային, եւ Զաբարիայ որդի Ստե|327ա|փաննոս քահանայի, եւ զԹումայ որդի Ծերունին, զՄկրտիչ, զՍտեփաննոս, զՅոհաննէս, զՄկրտիչ, զՎարդան: Ողորմածն Աստուած ամենեցուն ողորմեսցի, ննչեցելոցն հանգիստ արասցէ եւ կենդանեացս ժրութիւն եւ զղջումն տացէ. ամէն:

Դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս զստացաւ սուրբ Աւետարանիս զՄուրատչին եւ զծնաւդսն իւր զեղբարսն եւ զամենայն ազգատոհմն իւր, եւ զամենայն արեան մերձաւորսն, եւ Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն:

Տէ՛ս ժե. դ. յիշ-ք, Ա., էջ 227-Ց:

2. 253բ (ծաղկողի) ԶԱստուածատու ծաղկող յիշեցէ՛ք ի Քրիստոս:

15բ Ո՛վ եղբայրք, թէ ես յայս Աւետարանս յոսկելն

յիշտապել եմ ու անփոյթ առնել, նա Աստուած զիմ մեղքն ոչ թողու, ապա հահք առնէին զիս, թէ զմեր գիրքն ի մեզ շիտալ, ի նաւասարդի ամիս ոսկել տուին ու թ[անա]քն ամէն մասաւ, յիշ[տ]ապաւղքն ամօթով լինին յԱստուծոյ:

Տէ՛ս ժե. դ. յիշ-ք, Ա., էջ 228:

3. 15բ (ստացողի) ԶՄուրատչայ եւ զՎատչայ:

103բ Զստացաւ սուրբ Աւետարանիս զՄուրատչայ եւ զհանգուցեալ ծնաւդսն իւր զԱնպէտ եւ զԹավրէզ եւ զեղբարսն իւր եւ զամենայն արեան մերձաւորսն, եւ զՔամալ յիշեցէ՛ք ի Քրիստոս:

104բ (նկարի շրջանակի ստ. եզրին) ԶԹավրէզ յիշեցէ՛ք ի Քրիստոս:

158բ Ո՛վ սրբասէր ոգիք, պատուական քահանայք եւ ժողովուրդք, յիշեցէ՛ք ի Քրիստոս զՄուրատչին՝ զստացաւ^է աւղ սուրբ Աւետարանիս եւ Աստուած ողորմի ասացէ՛ք իւր բարի ծնաւդացն՝ Անպէտին եւ Թավրիգին, եւ մեծ մաւրն Գաւհարմելէփին, եւ եղբարցն՝ Էվատին եւ Ստեփանոսին, եւ կենակցին՝ Հալիմին, եւ ամենայն արեան մերձաւորացն. ամէն:

159բ (նկարի շրջանակի ստ. եզրին) ԶԳաւհարմելիք յիշեցէ՛ք ի Քրիստոս:

252բ (նկարի շրջանակի ստ. եզրին) ԶԱնպէտն յիշեցէ՛ք ի Քրիստոս:

327ա եւ՝ Մուրատս, որդի Անպէտին, տուի զսուրբ Աւետարանս Ոստան քաղաքի կաթաւղիկի եկեղեցոյն Սուրբ Ստեփանոսի[ն] ընծայ յիշատակ հոգոյ իմոյ եւ իմ ծնաւ|327բ|դացն: Եւ արդ, մի՛ ոք իշխեսցէ ձեռնարկել ի սա՝ ծախելով, գրաւելով, զողանալով կամ այլ ինչ հնարք առնելով՝ հեռացուցանել ի Սուրբ Ստեփանոսէն: Ով որ զայս առնէ, ան[էծա] (եօթ տող քերած. երեւում են միայն առանձին տառեր): Եւ արդ, ո՛վ եղբարք, զաւակ ո՛չ ունիմ յաշխարհիս, եւ ստացայ զսուրբ Աւետարանս յիշատակ ինձ: Ով որ (մէկ բառ քերած) թէ՛ եղբայր, թէ՛ որդի, թէ՛ քահանայ, թէ՛ աւագերէց, թէ՛ եպիսկոպոս (երկու տող քերած)/// գէ ամէն:

Տէ՛ս ժե. դ. յիշ-ք, Ա., էջ 228:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 327ա (ժե. դ., բոլորգիր) Արդ, աղաչեմ զամենեսեանս, յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղօթս ձեր գՔորդաւ եւ զկողակիցն իւր եւ զեղբայրն իւր, որ ազատեաց զԱւետարա[նս] ի գերութենէ՝ յիշատակ իւր եւ ծն[աւ]աց իւրոց եւ ետ ի Տէրն:

2. 328ա (ժե. դ., բոլորգիր. սկ. թափուած) ///Յովհաննու հաւատալ եւ զկեանսն յաւիտենականսն ընդունել յանուն նորա: Զոր տեսեալ զայսպիսի գանձս աստուածային եւ պայծառ լուսով եւ զլուսափայլ եւ զմաքուր մարգարիտս՝ աստուածասէր եւ բարեպաշտ եւ հաւատարիմ տանուտէրն խոջայ Զանգիշէն, եւ սորա ի խնդիր ելեալ մեծաւ փափագմամբ եւ եռանդնաշարժ

սիրով այսմ լուսափայլ եւ անգին մարգարտիս եւ աստուածախաւս սուրբ Աւետարանիս, որ կեանս տայ կամայորդոր լսողացն՝ յարինակ եղջերուին, որ ի յոլովութեան հրակաթ մասինն ցանկայ հանապազ փափագմամբ յաղբիւրս ջուրց՝ ըստ բանի երջանկին Դաւթայ. այսպէս եւ սա ի յոլովութիւն մեղաց իւրոց վարկեալ եւ ի խիղճէ մտացն հարեալ, եւ ի սպառնալեաց անշէջ հրոյն տոչորեալ, գաստուածախաւս կտակս զայս արար ճարակ փրկութեան հոգւոյն իւրոյ եւ պաշար երկայնաձիգ ճանապարհին, որ հասուցանէ զինքն առ Աստուած, եւ ցանկացաւ այս սուրբ Աւետարանիս խոջայ Զանգիշէն |328բ| եւ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց՝ յիշատակ բարի հոգւոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց՝ Յոնանիսին եւ Ամբարխաթունին, կենակցին՝ Գուլիջխանին, եղբարն՝ Ստեփանոս քահանային, եւ ամուսնոյն՝ Քընֆուչին, միւս եղբարն՝ Մովսէսին, եւ կենակցին՝ Մուղալին, քրէրն՝ Գուլշափին, որդւոցն՝ Մուրատին, Պարոնգորգին, Միրափին եւ ննջեցեալ որդւոցն՝ Աղուալչին եւ Սաֆարչին, եղբար որդւոցն՝ Յունանին եւ Պարոնչին, որ առ Աստուած փոխեցաւ, եւ աներոջն՝ Ատով քահանային, որ հանգեաւ ի Քրիստոս, եւ ամենայն ազգականացն եւ արեան մերձաւորացն:

Արդ, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս եւ յամենայի սեղանոյս, որք պատահիք սմա կարգալով կամ արինակելով կամ տեսանելով, լիակատար բերանով եւ ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէ՞ք վերջին ստացողի սորա խոջայ Զանգիշին եւ ծնողաց նորին՝ հօրն Յոնանիսին, եւ մօրն Ամբարխաթունին, եւ կենակցին եւ ամուսնոյն՝ Գուլիջխանին, եւ որդւոցն՝ Մուրատին, Պարոնգորգին եւ Միրափին, եղբարն՝ |329ա| Ստեփանոս քահանային, եւ Մովսէսին, եւ ամենայն ազգականացն՝ կենդանեացն եւ հանգուցելոցն: Մանաւանդ յիշել եւ Աստուած ողորմի ասել ի ժամ սուրբ եւ սոսկալի, հաշտարար եւ մեղսաքաւիչ պատարագին եւ մեղաց թողութիւն խնդրել խոջայ Զանգիշին եւ ամենայն ազգատոհմի նորին, զորս յառաջն յիշեցաք, եւ Աստուած յիշողացող ողորմեսցի. ամէն: Եւ դուք՝ հանդիպեալք սմա, պատուական հարք եւ եղբարք, ընթերցողք եւ լսողք, յերես անկեալ աղաչեմ զսրբութիւնդ ձեր, ասասջիք լի բերանով. Քրիստոս ճշմարիտ Աստուած, յորժամ գաս հայրական փառօք՝ ի դատել զամենայն արարածս քո, բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնի ծնողի քո եւ աղաչանաւք ամենայն սրբոց քոց, քաղցրալուր բարբառով կոչեա՛ յանուանէ զձառայս քո՝ զխոջայ Զանգիշին եւ զեղբարն՝ զՍտեփանոս քահանայն եւ զամենայն ազգականս նորա, եւ լսել տուր նոցա զարհնութեան քո զձայն, եթէ՛ եկա՛յք, բարի եւ հաւատարիմ ծառայք, մտէ՛ք յուրախութիւն Տեառն ձերոյ՝ ընդ սուրբս եւ ընդ |329բ| սիրելիս անլան իմոյ, եւ ժառանգեցէ՛ք զարքայութիւնն իմ. ամէն:

Եւ արդ, ես՝ խոջայ Զանգիշա, ստացայ եւ գնեցի զսուրբ Աւետարանս ի յանարինաց՝ ի յարդար վաստակոց իմոց ի ճՁ. (170) շախտուհի եղի ի դուռն Սուրբ Առաքելոցն ի Վան քաղաքի, եւ մի՛ ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ Սուրբ Առաքելոցն՝ գողանալով կամ ծախելով կամ գրաւելով: Եւ եթէ՛ ոք յանդրգնի եւ հեռացանէ, նա զմասն զՅուդային առցէ եւ զայլ խաշահանացն:

Տէս ժե. դ. յիշ-ք, Ա., էջ 228:

3. 15ա (ժՁ. դ., բոլորգիր) Մաթեոսի աւետ[ար]անչի բարեխաւսութեամբն ողորմեա՛յ, Քրիստոս Աստուած, ստացողի սուրբ Աւետարանիս խոջա Ապղազիզին եւ իւր ծնաւդացն. ամէն:

4. 104ա (ժՁ. դ., բոլորգիր) Մարկոսի աւետարանչի բարեխաւսութեամբն ողորմեա՛յ, Քրիստոս Աստուած, ստացողի սուրբ Աւետարանիս խոջա Ապղազիզին եւ իւր ծնաւդացն՝ խաւրն խոջայ Զաւարիային եւ եղբարն՝ տէր Յովանիսին, եւ խոջա Սֆանդարին եւ խոջ[ա] Աբդուլին եւ խոջա Ղարիպչին:

5. 105ա (ժՁ. դ., բոլորգիր) Խոջա Ապղազիզին եւ խոջա Ղարիպչին:

6. 159ա (ժՁ. դ., բոլորգիր) Ո՛վ սրբասէր ոգիք եւ պատուական քահանայք եւ ժողովուրդք, յիշեցէ՛ք ի Քրիստոս զխոջա Ապղազիզն, եւ զխայրն իւր՝ խոջա Զաւարիայ, եւ զեղբայրն՝ զտէր Յովաննէսն, եւ խոջա Ապուլեն, եւ զխոջայ Ղարիպչն, եւ ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց եւ հանգուցելոցն. ամէն:

7. 160ա (ժՁ. դ., բոլորգիր) Խոջա Ապղիզիզն եւ որդին Ղարիպչն եւ խոջա Սֆանդարն եւ խոջա Աուլեն յիշեցէ՛ք ի Քրիստոս:

8. 252ա (ժՁ. դ., բոլորգիր) Յոնաննու աւետարանչի բարեխաւսութեամբ ողորմեա՛յ, Քրիստոս Աստուած, ստացողի սուրբ աւետարանչիս խոջա Ապղազիզին եւ իւր ծնաւդացն՝ խոջայ Զաւարիային, եւ եղբարն՝ տէր Յովաննիսին, որ փոխեցաւ առ Քրիստոս, եւ խոջա Սֆանդարին, եւ խոջա Ապլին, եւ խոջա Ղարիպչին. ամէն:

9. 254ա (ժՁ. դ., բոլորգիր) Տէ՛ր Աստուած Յիսուս Քրիստոս, ողորմեա՛յ խոջա Ապղիզիզին եւ խոջա Ղարիպչին. Աստուած զձեզ ընդ երկայն աւուրս. ամէն:

10. Պհպ. Աբ (ժՁ. դ., բոլորգիր) Արդ, աղաչեմ զամենիսեանդ յիշեց[է՛ք] ի մաքրափայլ յաղօթս ձեր զՄեղեախք եւ զկենակիցն իւր զՍարա, եւ զհայրն իւր զԱմենաւաքն եւ զմայրն իւր զՌուզնաթուն, եւ զորդիքն իւր զԱ[մէ]նաւաքն եւ զՀայրապետն, եւ զամենայն արեան մերձաւորս իւր. ամէն: Եւ լի բեր[ան]ով Աստուած ողորմի ասացէ՛ք որ աւգնական եղեւ ի զին սուրբ Աւետարանիս, եւ Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն:

12. 103ա (1701 թ., նոտրգիր) Քրիստոսի ծառայ Մկրտիճ:

13. 322բ (1701 թ., նոտրդիր) Քրիստոսի ծառայ Մկրտիչը գրեցի թվ. ՌՃԾ. (1701):

ԳՐԶԱՓՈՐԶ՝ 1ա՝ «աաչեղ չգգգաեղգղղ, Կե», 3ա՝ «եա՝ Յարուբին», 327բ՝ «երանի աղքատաց, զի նոցա ա,

երեւից արմ մարդ աբգ, աստեե չկկկկկկկկկկ ա աբգդեզ»:

ՆՇՈՒՄ՝ 1ա՝ «24/2670», «ՊԿԸ. – 1419, Մ[ետրայ] եպ[իսկոպո]ս»:


2671

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ՎԱՆ

ԳԻԻԶ՝ Վարդան եւեց: ԾԱԿԿՈՂ, ԿԱԶՄՈՂ՝ Գրիգոր Բնյ.: ՍՍՅՈՂ՝ Մկրտիչ կբ.:

ԹԵՐԹ՝ 299. չգրուած՝ 141բ-2ա, 230ա: ՊՐԱԿ՝ Ա-ԻԶx12 (Ա, Է, ԺԲ, ԺԸ 11, ԺԹ 8, ԻԱ 9, ԻԶ 10): ՆԻԻԹ՝ թուրք: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 27x 18: ԳԻՈՒԹԻԻՆ՝ երկսիւն (20x12): ԳԻԻ՝ բոլորգիր (նմուշ՝ 48ա): ՏՈՂ՝ 21-22 (խառն. 21՝ հիմնականում 1ա-118բ): ԿԱԶՄ՝ դրոշմա-գարդ շագանակագոյն կաշի, դրնակով եւ մէկ կապիչով, միջուկը տախտակ, աստուար դրոշմագարդ կարմիր կտաւ. լուսանցա-կողեր կարմիր:




Նմուշ 48ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ – Մարկոս՝ 86բ, Դովկա՝ 142բ, Յով-հաննէ եւ Պրոխորոն՝ 230բ: Լա-ային. Յովհաննէ Մկրտիչ՝ 103ա, Աւետում (Գարբիէ հրեշտակ՝ 145ա, Մարիամ Աստուա-ծածին)՝ 146ա, հովիտ՝ 148բ: Կ ի ս ա խ ո Ր ա ն ՝ 2ա, 87ա, 143ա, 231ա: Լ ու ս ա ն ց ա զ ա Ր ղ՝ բուսական, յոշկապարիկ, վա-րդեակ, թռչուն, տանաւ, սափոր: Զ ա Ր ղ ա զ ի Ր՝ սկզբնաբերե-րին աւետարանիչների խորհրդանիշներով, մարդաղմ, թռչնա-գիր, հանգուցազիր: Գ ո յ ն ե Ր՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դե-ղին, մանուշակագոյն, սև:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Ճաշոց: ԺԱ. դ.: ԱԲ+ԳԴ, ստա-ցուած մէկական թերթից, եզրահատուած՝ բնագիրը վնա-տուած: Մագաղաթ, 26.5x17, երկսիւն (23x17), ուղղագիծ երկա-թագիր (նմուշ՝ Գա), տող՝ 27: Կարդալ Աա, Աբ՝ «է գնա/// եպ, նամխորտն իւր արարեալ պատանս... փառս ամենատուր Ե-րորդութեանն. ամէն: Ի Պետրոսի կաթողիկէի թղթոյն ընթե-ցու[ած] – Արթուն լերու՛ք, հսկեցէ՛ք... նմա իշխանութիւն եւ փառք յա[խտեանն]: Աղեղութիա, սաղմոս ԻԲ., Աւետարան ըստ Յովհաննոս – Ամէն, ամէն ասեմ ձեզ... պատուիցէ գնա Հայրեն իմ: Սահմի Լ. Սարգսի եւ Բախոսի: եւ այս կանոն [կա]տարի – Սաղմոս ՃԺԵ., Կցուրդ. Պատուական է առաջի Տեառն մահ: Ըն-թերցուած յեսայե[լ] մարգ[արէ] – Սուր է Տէր Աստուած մեր, որ բնակեալն է... մեզ եւ յամաւր աննէ գ///»: Բբ, Բա՝ «///(1 տող անընթեռնելի) Բան գիր բնա/// ութիւն/// գՀայր եւ գՈրդի եւ գՀո-գին Սուրբ այծմ եւ միշտ եւ յախտեանս յախ[տեմից]: Աղե-ղութիա, Սաղմոս ՃԷ., Աւետարան ըստ Մարկոսի – եւ տեսեալ գժողովուրդան, ել ի լեառն... առաջ, Բան գնեցն էին: Հոռի առա-ջին կիրակէն աշ[խարհամատրանն] եւ այս կանոն կատարի. Սաղմոս ԿԷ. [Կցուրդ]. [Յեկե]ղեցիս արհմեցէ՛ք գԱստուած եւ գՏէր, յաղբերացն Իւրայեղի: Ընթ[երցուած] [յԱռակայց] – Պա-տուեայ գՏէր ի Բոց... եւ որ յենուն ի նա իբրեւ ի Տէր հաստատու-թեամբ: [Երկրորդ կիրակէն. Սր[բ]ոց Ոսկեանցն: եւ այս կանոն կատարի – Սաղմոս ԽԴ., Կցուրդ. Վասն Բո մեռանիմք գար հա-նապազ] Ընթերցուած Յեսայեա մարգարէ – Այսպէս ասէ Տէր. «Ահաասիկ եւ դարձուցանեմ ի դոսա... եւ կառք մորս իբրեւ գմրիկ հնոցի հատուցանել սրամտութեամբ, գե///»: Գա, Գբ՝ «///ուցումն իւր եւ բոցով գա/// ամարհանս իւր, զի ի հուր... նորս ամենայն մարմին: Պատմութիւն յարգազ տանի մատրանն – [Քա]նգի ի շինել երանելոյն [Կ]ոստանդիանոսի միանգամայն գամենայն եկեղեցիս... ունելով գփառս Սիովնի եւ գարոյն//

ՊՂԳ. – 1444

ուրեանն: Գբ, Գա՝ «/// (3 տող անընթեռնելի) Պատմութիւն Նու-նեայ եւ Մանեայ – ///նա անուն Նունի յընկե[ր] [ար]թոյն Հոռի-սիմեանց... ըստ ձեռայ եւ յափոյ փայտեղնին կարով ի վերայ նո-րա հանդ[երձ]///»:



Նմուշ Գա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի Ա. փեղկին երբեմնի եղած խաչք, երեք գամերն ու երկու կապիչներն ընկած, լուսանցակողերը տեղ-տեղ գունաթափ, ք. 1-2ի միջեւ ընկած 1 թերթ, ք 78, 278, 289՝ հիմից պոկուած, որոշ թերթեր հնում նորոգուած, գրեթէ բո-լոր թերթերի ստորին աջ անկիւնները կեղտոտուած-սեսացած, Պհպ. Բ. եւ Գ. հակառակ-գլխիվայր կարուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

- 1. 1աբ Գլուխ: 2ա-84ա Աւետարան Մատթէոսի:
- 2. 84բ Նխորդ.: 85ա-6ա Գլուխ: 87ա-138բ Աւետա-րան Մարկոսի (138բ-9ա Յարուցեալ Յիսուս):
- 3. 139բ Նխորդ.: 140ա-1ա Գլուխ: 143ա-228բ Աւե-տարան Դովկասու:
- 4. 228բ Նխորդ.: 229աբ Գլուխ: 231ա-96ա Աւե-տարան Յովհաննոս:

Ծնթ.՝ Ունի ստ. լս. համարաբարտ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 296բ (գրչի) Յիշատակարան սուրբ Աւետարա-նիս. Ի ծագման ճշմարիտ արեգականն եւ ի յայտնիլ Աստուածն Բանի՛ նորագուարձ բերկրանօք պայծառա-ցան արարածք ամենայն, զի զթափանցիկն եւ զգերա-զանցեալ լոյսն ընդ յաւիտենիս խառնելով, գեղազար-դեալ փարթամութեամբ, անպարագիտ եւ աստուածու-նակ բնութեամբ զարդ եւ նախահայրն յատուերամած նիրհմանէն եւ խաչակարկառ եւ բեւեռապինդ բազկօք ազատեցաւ ի խաւարային եւ ի մեղսասէր բանտէն: Եւ ի շորից աւետարանչացս, որ գետորէն եւ բղբջահոս բխեն ի տանէն տէրունի, ի յայգիս հայրատունկ, ծաղ-կեցաւ արգանդի մօր մերոյ Սիոնի եւ ծնաւ անթիւ կա-ճառս աստեղաց եւ տրամափայլեաց գունակ-գունակս, զդասս մարգարէից, զ[297ա] շոկքս առաքելոցն, զպարս եւթմանանիցն, զերամս հազարաց, զթիւս հայրապե-տաց, զընտրութիւնս վարդապետաց, զխորանս մարտի-րոսաց, զպսակս վկայից: Այսքանեաւք իմաստութեամբ լցաւ արարածս ամենայն, քան զչորս բազումս, որ ծածկեն զծով: Արդ, այսմ աստուածեղէն եւ երկնա-պարգեւ գանձիս եւ լուսափայլ մարգարտիս ցանկա-ցաւ երջանիկ եւ հոգեւոր կրօնաւորն Մկրտիչ եւ ետ

գրել գաս յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց՝ հնդրուին եւ հուրթուին: Աւրինակ եղեալ եղչերուն՝ Մկրտիչ կրօնաւորն, որ ի յուրվութէնէ հրական մասին բաղձայ աղբերց ջուրց՝ ըստ բանի երշանկին Դաւթի. Ապաւինեալ ի մարդն ճշմարիտ եւ ի գառն Աստուծոյ, զոր պատմէ աւետարարաբառն Մաթէոս՝ վստահացեալ յառեւծն խորհատական ի հօրն Յիսուս, զոր ծանուցանէ մեզ Մարկոս, աւժն |297բ| դակեալ յեզն պարարակ եւ զուարակն արգիւնական, զոր յայտ առնէ քաջաբանն Դուկաս, բուռն հարեալ արծաթոնիչ բարձրութեանն, որ բերէ ի վերայ միջնողան, որպէս գրէ որդին աւրինաց, որ բերէ զօրինակ աստուածաբանն Յոհաննէս: Արդ, զայս պատուական ակն շափիւղայ, ուր կայ հանգուցեալ Աստուած Բարայէրի եւ զկառս Եզեկիէլի, որ պարագրէ զլոյսն արտափայլեալ, առեալ Մկրտիչ կրօնաւորն պաշար երկայնածիզ ճանապարհին, որ տանի առ հանգերձեալ եւ ահագին դատաստանն, եւ սովալսէ զհայրական ձայնն, եթէ. Եկա՛յք արհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէ՛ք զարքայութիւնն: Արդ, կատարեցաւ սուրբ Աւետարանս եւ բերանս Քրիստոսի եւ քարոզս Յիսուսի Տեառն Աստուծոյ մերոյ ի քաղաքս, որ կոչի Վան, ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի եւ Սուրբ Վարդանայ քաջ |298ա| զօրավարին, ի թվաբերութեանս հայոց ՊՂԳ. (1444), ի հայրապետութեան տեառն Գրիգորի եւ մերոյ աթոռակալի եւ առաջնորդի սուրբ ուխտիս Վարագայ տէր Յովհաննիսի եւ աթոռակալիներկրին Քաջբերունոյ տիեզերալոյս եւ քաջ հեռորդին Թումա բաբունապետին, ձեռամբ անարժան եւ սուտանուն երիցու Վարդան անարհեստ գրչի: Արդ, աղաչեմ զմանկունսդ սուրբ եկեղեցոյ, որք հանգիպիք սմա, յիշեցէ՛ք ի Քրիստոս եւ ի սուրբ յաղօթս ձեր զՄկրտիչ սրբասէր կրօնաւորն եւ զծնողքն իւր զհնդրուն եւ զհուրթուն եւ զեղբարքն զՅովհաննէսն եւ զՎարագայեան զհանգուցեալքն ի Քրիստոս, եւ զքոյրն զՓաշաւէլիբ եւ զեղբօրորդիքն զհնդրուն եւ զգաւակսն՝ զՄխիթարն եւ զԿարագայեան, զհեռապետն, եւ զգաւակսն նորին՝ զԱմիրամէլէնն եւ զՅովհաննէսն, եւ զհօրեղբայրն զՍոնգադեղն եւ զկենակիցն |298բ| զԼի տիկինն, եւ զգաւակսն՝ զպարոն Մկրտիչն եւ զԶմրուրն, եւ զբերորդին զԱռաքելն, եւ զգաւակսն պարոն Մկրտչին՝ զպարոն Մեհերն եւ զՄուղղապին, եւ զբերորդին՝ զՍտեփանոսն, եւ զամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիք եւ զհանգուցեալսն: Կի բերանով եւ ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէ՛ք, եւ Աստուած զձեզ ողորմեսցի. ամէն:

Եւ զիս՝ զանարժան գծողս, եւ զծնողսն իմ զՅովհաննէս քահանայ եւ զԶմրուր, եւ զեղբայրքն իմ՝ զՎարագայեան քահանայն՝ զուսուցիչն իմ, եւ զՄկրտիչ եւ զՄելիքս, եւ զհոգեւոր մայրն իմ զԱրդունմէլէնն եւ զերախտաւորքն մեր՝ զԱրքիմսէնն, զՖառուխչն եւ զՊապուհէր դարբինն եւ զԱւետիսն եւ զիւր ծնողքն (վերջին չորս բառն աւելացրած ձախ լուսանցում) եւ զկոկող

թղթին յիշեցէ՛ք եւ լի բերանով Աստուած ողորմի ասացէ՛ք ի ժամ սոսկալի սուրբ պատարագին, եւ Աստուած զիշողքդ եւ զյիշեցեալքս արժանի արաա |299ա| ցէ արքայութեան իւրում. ամէն:

Դարձեալ յերես անկեալ աղաչեմ զձեզ՝ անմեղադիր լերո՛ւք սխալանաց եւ խոշորութեան գրիս, զի միտքս մեղօք մոլորեալ է եւ յիմ շար գործքն տարեկուսեալ: Աղաչեմ շմեղադրել:

Տէս ժե. դ. յիշ-ք, Ա., էջ 568-9:

134բ Աւա՛ղ միտքս մեղօք կուրացել է, մի՛ մեղադրէք:

2. 299ա (ծաղկողի եւ կազմողի) Այլ եւ աղաչեմ յիշել ի սուրբ յաղօթս ձեր զԳրիգոր սոսկանուն քահանայ՝ ծաղկող եւ կազմող սուրբ Աւետարանիս եւ զծնողքն նորա եւ զեղբարքն եւ լի բերանով Աստուած ողորմի ասել, եւ Աստուած ձեզ եւ մեզ եւ ամենայն հաւատացեալ քրիստոնէից առ հասարակ ողորմեսցի, եւ նմա փառք յաւիտեան]:

Տէս ժե. դ. յիշ-ք, Ա., էջ 569:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 299ա (ժԶ. դ., բոլորգիր) Դարձեալ յիշեցէ՛ք զվերջին ստացողս սուրբ Աւետարանիս զՊողոսն եւ զհայրն՝ զԱստուածաառն, եւ զմայրն՝ Սայիբսաւլթան, եւ զկողակցին՝ Թուրվանդէն, որ այժմ հանգուցեալ է, եւ զմիւս կողակիցն՝ զՄարգարիտն, եւ զդուստրն՝ Գուրնտան: Տէր Աստուած բարով վայելել տացէ Պաւղոսին եւ զեղբայրն՝ զՄիքանդէն, եւ զմիւս եղբայր]ն՝ զԹաթէոսն, եւ Պետրոսն եւ զքոյրքն զՄարգան, զԳուրնտան եւ իւր աներն՝ Սարգիսն, զփեսէն՝ զտէր Մարտիրոսն, եւ հարեղբայրն՝ զՍտապադարն, |299բ| եւ զորդին իւր՝ Զաֆէոսն, զՄկրտիչն: Կի բերանով եւ ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէ՛ք Պաւղոսին, որ ի հալալ վաստակոցն գնեց սուրբ Աւետարանս՝ յիշատակ իւրն եւ ծնաւդացն իւր, ամենայն արեան մերձաւորացն՝ մեծի եւ փոքու, առ հասարակ ամենեցուն. ամէն:

Դարձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ՝ յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղալթս ձեր զխոշայ Պաւղոսն, որ գնեց սուրբ Աւետարանս ձեռանմն (= ձեռամբն) տէր Աստուածաշտուր քահանային եւ զհայրն՝ զՄելիքսէթն, եւ մայրն՝ զՎալայրէլիկն. ամէն: Յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք սոցա հոգոյն, եւ Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն, եղիցի, եղիցի: Աստուած օրհնէ:

2. 230բ (ժԷ. դ., նոտրգիր) Իշատակ է սուրբ Աւալետարանս ըՍտեփանի որդի Մերանդուլին, եղ[բ]արն մեր Սաղարին, Մամանին, Այօնին, ծնողացն՝ Նանին: Օվ որ կարգայ, մէկ բերան Աստուած ողորմի ասացէ. ամէն:

ՆՇՈՒՄ՝ 1ա՝ «26/2671, ՊՂԳ.-1444, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2672

Գ Ա Ն Ձ Ա Ր Ա Ն


ԿԱՅԱ

ՌԾՁ. – 1607


ԳՐԻՉ՝ Ստեփանոս Թոխաթցի: ՍՍԱՅՈՂ՝ տէր Ստեփանոս (գրիչը), տէր Յակոբ:

Թերթ՝ 415+1 (կրկն՝ 146). չգրուած՝ 4աբ, 8ա, 9բ: ՊՐԱԿ՝ Ա-ԼԵՒ12 (Ա. 9, Թ. 14, ԺԲ, ԼԳ, ԼԵ 11): ՆԻԻԹ՝ թուրք լուսագծերով եւ լուսադրոշմով՝ երեւնուով պատկուած բոլորակ, մէջը՝ խարխախ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 28x21: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսին (21x15), միասին (10ա-2բ, 13բ-4բ՝ 21x14): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 73ա), նուրգիր (57ա, 108ա, 146բ, 402աբ, 403ա-15ա, նմուշ՝ 108ա) ՏՈՂ՝ 25: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի, դոնակով, միջուկը տախտակ. աստուղը դրոշմագարդ կտաւ. լուսանցակողերը կարմիր:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Կ ի ս ա խ ո ռ ա ն 10ա: Ճ ա կ ա - տ ա զ ա ր ղ՝ 146գ: Լ ո ս ա ն ց ա զ ա ր ղ՝ բուսական: Չ ա ր - ղ ա զ ի ղ՝ հանգուցազիր, թոչնագիր (120բ), մարդաղիմ (306ա, 328ա): Գ ո յ ն ե ղ՝ շագանակագոյն, կարմիր:




Նմուշ 73ա



Նմուշ 108ա

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Ա.Գ.ԿԵ.Լ., Ժամագիրք-Աղօթամատոյց՝ Missale Romanum (յառնելէն տպագիր, խանձարուարին հրատ.), Գերմանիա (հաւանաբար), ԺԵ. դար: 8 թերթ, թուրք, 28,4x20,5, երկսին (26x17), գորթական գիր (նմուշ՝ Գա), տող՝ 34. երկգոյն՝ սեւ եւ կարմիր տպագրութիւն, որոշ գլխագրեր ձեռնով կապոյտ գունատուած (համառոտ նկրգր.՝ ըստ Ղ. Киселева-ի 8 ժԱ. 2013 թ. նամակի):



Գա

ՎԻՃԱԿ՝ բարար. կազմը տեղ-տեղ մաշուած, երեւական գամերն ու կապիչներն ընկած, մէջքի կաշին կիսով շափ պատուած-թափուած, լուսանցակողեր գունաթափ եւ սեւացած, թ. 138-9ի, 388-9ի միջեւ ընկած մէկական թերթ, թ. 51-2ի ստորին լուսանցները 2սմ-ով ընդլայնակի կտրած-համած, բայց բնագիրն անվնաս, թ. 170-1՝ ընդլայնակի պատռուած, թ. 286-97՝ ձեթի հետեւերով, Ե-Ձ. եւ Է-Ը. պատառիկներն իրար կպած, ապա անջատելու փորձից վնասուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1ա-342բ [Գանձարան]

1. 1ա-2բ Գանձ սուրբ Մինասայ, Եւմոզգինեա եւ Գրաբոսի եւ կամօտր աղբատացն Յոհաննու եւ Ալէսեանոսի («Անդրեասն խնդրեց») – Անպարագիր Բանըն հայրական...

2. 3աբ Գանձ Ձ.երոզ կիրակէի աղցացն («Գրիգոր ըրգոր») – Գոյիդ կատարեալ, Աստուծոյ ոյդ բարձրեալ...

3. 5ա-6բ Յանկն է Գանձտետրիս, որ ցուցանէ գտեղ եւ զխնդրեալ գանձն, որ շուտ գտանես եւ զԳանձտետրս շի շարչարես – Ա. Նախ եւ առաջին ծննդեան ճրագալուցին... Ճիւղ. Այսօր եհաս ինձ ար վախճանի:

4. 7աբ Գովասանք Գանձտետրիս եւ խրատն նորին («Գրիգորի եւ երգս բանի») – Գովեմ ըզբեզ, ո՛վ Գանձարան... ի մարդկայնոցրս վերանան:

Սա Գանձի «Գովասանք» մասն է, իսկ «Խրատ» մասը Յիշատակարանների շարքում լրիւ բերել ենք (տե՛ս ստորեւ)՝ նկատի ունենալով, որ այն վերաբերում է ընդհանրապէս գրքի նկատմամբ խնամքի պահանջին:

5. 8բ-9բ Քարոզ ջրարահնէից եւ մկրտութեան, Յովհաննէ վարդապետէ («Յոհաննիսի երգ») – Յամենայն ժամ արհնեմք զարհնեալ փրկիչը...

6. 10ա-2բ Ա. Գանձ հրագալուցին Մերնդեանն («Տէր Միսի») – Տարիումն ըղձական... ա. 12բ-3ա [Տաղ] («Ներսիսի է այս երգ») – Նորի ծաղիկ բըղխէ... բ. 13ա [Տաղ] – Այսար ի սուրբ ի յայրին...

7. 13բ-5ա Բ. Գանձ Մերնդեան առաջին օտւն («Թարա») – Թագըդ պարծանաց... ա. 15աբ [Տաղ] – Հրճուիմք այսար մեք հոգեպէս...

Կան գրչի գրած ձայնային ցուցումներ, որոնք արձանագրում ենք համապատասխան գանձերից յետոյ. 13ա՝ «Ձայս տաղս Քրիստոս փառաց-ին ձայն ասայ, հոգի՛ եղբայր»:

8. 15բ-7ա Գ. Գանձ երկրորդ օտւն («Յովաննէ») – Յանեղան լուսոյն խոնարհեալ... ա. 17ա [Տաղ] («Ներսեսի է») – Նորահրաշ ծննդեան քո, Տէ՛ր... (17ա՝ «Ի յեյս արեու արեւ, ի յորովայնէ ընդրեալ, ես ձայն գառիւծոյն գոչեմ», «Այսար նորահրաշ տօնիւս ցընձամք եւ թէ շես կարեր, Յիսուս Որդու ձայներուն ասայ») . բ. 17աբ [Տաղ] («Ներսիսի երգ») – Նոր թագաւորին անժամանակ... գ. 17բ [Երգ] («Երգ Ներսիսի այս է») – Երգ նոր աւետեաց... դ. 17բ-ճա Տաղ եւ աւետիս ջրարահնէից, Ներսէս կաթողիկոսի ասայ. ի վերայ ջրին երեկեանն է – Աւետիս մեծ խորհրդոյ... ե. 18աբ [Տաղ] – Ո՛վ զարմանալի խորհուրդ այս մեծ... (17բ՝ «Նոր ծաղիկ բխէ այսօր», «Թէ՛ զիւր բնական գունն շի գիտես, նա Յիսուս Որդու ձայներուն ասայ, նաչարի հալ»):

9. 18բ-20բ [Գ.] Գանձ երրորդ ատու Մերնդեանն եւ թէ Յովակիմայ եւ Աննայի տօնես կամ ծննդեան սուրբ Աստուածածնին, նայ գայս գանձս ասայ («Գրիգորի է սա») – Գոյիդ անեղի... ա. 18բ [Կափայ] («Գրիգորի է») – Գանձ եմ համով եւ գովելի... բ. 20բ-1բ Տաղ եւ վկայութիւն մարգարէից, յԱռաքել վարդապետէ ասացեալ – Աւրհնեալ Հայր երկնօտր... գ.

21բ-2բ [Տաղ]– եղև այր մի արդար որդոցն Յուդայ... (20բ՝ «Յովասափին գոյն ասա՛»):

10. 23ա-4բ Ե. Գանձ Ծնընդեան շորորդ ատու առաւօտին եւ Աւետեաց սուրբ Աստուածածինն այլ զայս ասա՛ («Խաչատուր») – *Խընդութեան ձայն բարբառ աւետեաց...* (24բ՝ «Մեծացի՛ր այսար սուրբ Աստուածածին գոյն է»), ա. 24բ-5ա Տաղ ի Ներսէս Լամբրոնացոյ ասացեալ («Ա.-Ք») – *Այսար երեւի անտեսն ի բարձանց...* բ. 25աբ [Յորդորակ] («Ա.-Գ») – *Աւետիս քեզ, Մարիամ...* (25ա՝ «Քէ յորդորակս իւր ձայն ասես, նա խիս անոյշ եւ գեղեցիկ է»), գ. 25բ-6ա Այլ տաղ եւ անձինք օտեաեաց («Ա.-Ք») – *Ամսեանըն վերցերորդի Կարապետին...* (25բ՝ «Ի մեղական-ին. Դարիպին կեանքն է լալի, Արարիչ Տէր քաղցրացաւ ի յԱզամայ»):

11. 26ա-8ա Զ. Գանձ հինգերորդ ատու Ծնընդեանն եւ Աւետեաց Աստուածածինն. երեկոյն այլ զայս ասա՛յ («Աւետեաց յԱռաքել վարդապետէ ասացեալ») – *Այսոր իջեալ պետըն վերնական...* ա. 28աբ Մեղեղի Ներսէսի Լամբրոնացոյն ասացեալ – *Աւր է աւետեաց ուրախութեան...* բ. 28բ [Տաղ] – *Անմահից արքայն եւ սրովբէիցըն...* (28բ՝ «Ով զարմանալոյն ձայն է») գ. 28բ-9ա Տաղ Ներսէսի Կլայեցոյ ասացեալ («Քան Ներսիսի է») – *Բարբառ աւետեաց ձայնի...* (28բ՝ «Ի յէյս արեւու արեւ»):

12. 29ա-30ա Է. Գանձ Ծնընդեան վեցերորդ ատուն («Մկրտիչ») – *Մաքուր եւ ամբիժ սուրբ Աստուածածին...* ա. 30աբ Տաղ ի Գրիգորիս կաթողիկոսէ («Տէր Գրիգորիս է») – *Տապանակ կազմեալ անփուտ...* (30ա՝ «Առաջնաճաշակ պտղոյն»), բ. 30բ-1ա Յորդորակ – *Աստուածածին բարեաց պատճառ...* գ. 31ա Տաղ ի Ներսէս կաթողիկոսէ ասացեալ («Ներսէսի է այս բան») – *Նոյն ինքն անդրանիկըն...*

13. 31ա-2ա Ը. Գանձ Ծնընդեան եաւրն ատուն ասա՛յ («Առաքել») – *Այսար ծընեայն Որդին հայրական...* ա. 32աբ Տաղ յԱռաքել վարդապետէ ասացեալ – *Աւրհնեալ ես, սո՛ւրբ Աստուածածին...* (32ա՝ «Ի մեղական-ին. Դարիպին կեանքն է լալի, բարձրացուցէ՛ք-ին, Աստուած անեղ, անպարագիծ-ին, Ով քահանայք եւ վարդապետք-ին»), բ. 32բ [Տաղ] – *Աւր[հն]եալ շըրթամբբ համբուրեցեր...* (32բ՝ «Արարիչ Տէր քաղցրացաւ ի յԱզամայ-ին գոյնն դարձոյ»):

14. 33ա-4ա Թ. Գանձ է. օտու երեկոյն («Խաչատուր») – *Խընդայ խորան փըրկչին Յիսուսի...* ա. 34աբ Տաղ ի Ներսէս կաթողիկոսէ ասացեալ (Տէր Ներսէս) – *Տէ՛ր փառաց անճառ...* (34ա՝ «Այսար նորահրաշ տօնիւս ցընձամբ, թէ՛ չես կարեր խազով, նա Յիսուս Որդի ձայն ասա՛յ»), բ. 34բ Տաղ ի Կոստանտին կաթողիկոսէ ասացեալ («Կոստանդի») - *Կոյսն ի յայրն...* (34բ՝ «Նոր ծաղիկ բխէ այսօր»):

15. 35ա-6ա Ժ. Կաֆա Ը. ատու թլփատութեանն: Գանձ Ը. ատու Ծնընդեան եւ թլփատութեան Տեառն

(«Գրիգոր») – *Գոշումն ըղձագին...* ա. 35ա [Կաֆայ] («Գրիգորի է») – *Գանձըս գրեցաւ թըլփատութեան...* բ. 36աբ Տաղ Ներսէս կաթողիկոսէ ասացեալ – *Ստեղծաւղ մանկանցն մանուկ ցուցաւ...* (36ա՝ «Յիսուս Որդու ձայներուն դի՛ր, զոր գոյն, որ պիտի», «Յիսուս Որդի է ԺԲ. ձայն, գունն եւ մուղամ, էզկու եւ հաւայ ունի, զորն որ կասես, հրամանքն քոյ է»), գ. 36բ-7բ [Տաղ] – *Յայնժամ գոյ ի Յորդանան...*

16. 37բ-9ա ԺԱ. Գանձ տնօրէնութեան երեկոյն – *Ի վեց դարուն ի վեցն ապրիլին...* ա. 39աբ [Տաղ] – *Դու շուշան ծաղիկ անապական...* (39ա՝ «Ով զարմանալոյն գոյնն է»), բ. 39բ-40ա [Տաղ] – *Յընձայ՛ դու, շուշան ծաղիկ...*

17. 40ա-1ա ԺԲ. Գանձ Տեառնընդառաջին («Մկրտիչ») – *Միասնական Սուրբ երրորդութիւն...* (40ա՝ «ՃԼԹ. համարն Տեառնընդառաջի գանձ մի այլ կայ. գի՛տ եւ առօտումն ասա՛»), ա. 41աբ Տաղ – *Քրիստոս փառաց թագաւորն այսօր եկեալ...* բ. 41բ-2ա [Տաղ] – *Այսիր ցընձայ երուսաղէմ...*

18. 42ա-3բ ԺԳ. Գանձ Յովաննու ծնընդեան զլիսատմանն, Գիւտ նշխարաց եւ բերելն ի Տարօն, Աթանագինեայ եւ Յոբայ արդարոյն եւ խոտանարակացն («Մկրտիչ») – *Մեծապայծառ փառօք պանծալի...* (43բ՝ «Յոբայ արդարոյն տաղն գի՛տ ձԻԲ. համարն»), ա. 43բ-4ա Տաղ Յովաննու – *Մըկըրտիչըն Քրիստոսի մեծ Կարապետըն Յովաննէս...* բ. 44աբ Այլ տաղ Յովաննու Կարապետին – *Յովաննէս մեծ մարգարէ...* գ. 44բ-5բ Տաղ Յովաննու զլիսատմանն Նոր կիրակիին շաբաթ օր – *Յորժամ կամէր Հայրըն գըթաժ...* (44բ՝ «Յիսուս Որդու ձայներուն»), դ. 45բ-6ա Այլ տաղ Յովաննու Կարապետին – *Քեզ մատուցանեմք այսար, Քրիստո՛ս...* ե. 46ա Յորդորակս շնորհաբաշխ սուրբ Կարապետին, տեառն Ներսէսի ասացեալ – *Զճրագ արինացըն Յովաննէս...*

19. 46ա-7բ ԺԴ. Գանձ Պետրոսի Աղէկսանդրու հայրապետին եւ Արիստղոմայ – *Յայնժամ Պետրոսին կանգնեալ ի յօտին...* ա. 47բ Տաղ սուրբ հայրապետին Պետրոսի եւ Արիստղոմայ – *Ո՛վ սուրբ հայրապետ առաքինիդ Պետրոս...* (47բ՝ «Պատճառ պարծանաց եւ թէ՛ չես կարեր, Ով զարմանալուն ձայն է»):

20. 48ա-9բ ԺԵ. Գանձ համարէն եզնօտաց եւ սրբոց հարցն եւ Անտոնի այլ զայս ասա՛ («Բայիս եզ») – *Բարձրեալ ահօր, Բան Հաւր դիմաւոր...* ա. 49բ-50ա Տաղ սուրբ եզնատացն, սուրբ հայրապետին Ներսէսի ասացեալ – *Ճըզնաւորաւքըն յանապատին...* բ. 50ա Յորդորակ – *Որք զաղաւթիցըն շնորս առին...* (50ա՝ «Յիսուս Որդու ձայներուն»), գ. 50բ Այլ տաղ Անտոնի եզնօտին – *Անձամբ խոնարհիմք ի ճգնութիւնըս քո...*

21. 50բ-3ա ԺԶ. Գանձ համօրէն ամենայն թագաւորաց («Հինգետասան») – *Համագոյական Հօր*

սահման եւ Բան... ւ. 53աբ Տաղ Տրդատա թագաւորին, տեառն ներսեսի կաթողիկոսի ասացեալ («Ներսեսի է») – նորահրաշ տեսիլ... (53ա՝ «Այսօր նորահրաշ տօնիս ցընծամք, եւ Յիսուս Որդու ձայն այլ կու գայ»), բ. 53բ Տաղ համօրէն թագաւորաց – Քաղաւորին երկնաւորի...
 22. 54ա-5ա ժէ. Գանձ Կիրակոսի եւ Յուլիտայ («Գրիգորի է») – Գերապայծառ արքայդ երկնային... ւ. 54ա [Կաֆայ] («Գրիգոր») – Գանձըս գրեցաւ Կիրակոսի... բ. 55աբ Տաղ Կիրակոսի եւ մօր նորա Յուլիտայ, ի Մերենց Գրիգորէ – Սուրբ Կիրակոս բարի զօակ...
 23. 55բ-7ա ժԼ. Գանձ Վահանա Գողղնացոյ («Գրիգոր») – Գրթացեալ քոյին արքայդ երկնային... ւ. 55բ [Կաֆայ] («Գրիգոր») – Գանձ ինչ ասեմ ես քեզ կաֆայ... 57ա Տաղ Վահանայ Գողղնացոյ – Յաղթող զօրովեամբ վերնայկանօ...
 24. 57բ-9ա ժԹ. Գանձ սրբոց հայրապետացն Աղէկսանդրոսի, Աքանասի եւ Կիրոյի («Յովհաննիսի է բան») – Յիսուս Քրիստոս, Աստուած իմ բարի... (59ա՝ «Ի խաչին տնկեալ կամ տապանակ»), ւ. 59ա Տաղ սրբոց հայրապետացն – Այսաւր ցընծութեամբ տանեմք զտան... (59ա՝ «Յիսուս Որդոյ ձայն»):
 25. 59բ-61ա Ի. Գանձ առաջօրաց որբաթին Նիւնուէացոցն («Գրիգորի է») – Գոյիդ կատարեալ, / գերալըրացեալ... ւ. 59բ [Կաֆայ] («Գրիգորի է») – Գանձ եմ աղվոր, թէ ձայն ունիս... (61ա՝ «Աչք իմ ծով ի ծով ծիծաղախիտ. եւ թէ չես կարեր, նա, Ով զարմանալոյն ձայն ասայ. եւ զՍտեփանոս յիշեա՛»), բ. 61աբ Տաղ Յովնանու մարգարէին եւ Նիւնուէի – Պատճառ պարծանաց... գ. 61բ-2ա Այլ տաղ Յովնանու եւ Նիւնվէի – Յովնան քարոզըն Նիւնվէի... (61բ՝ «Յիսուս Որդու ձայներուն ասայ, ճայն տէր վարպետ եւ թոխաթցիս յիշեա՛»):
 26. 62ա-3բ ԻԱ. Գանձ Սարգսի զաւրավարին եւ որդի նորա Մարտիրոսի («Մկրտիչ») – Մեծապայծառ փառօք զարդարեալ... ւ. 64ա Տաղ սրբոյն Սարգսի զօրավարի («Յակոբայ է երգ») – Յառաջ տեսողէն... բ. 64աբ Մեղեղի սուրբ Սարգսի զինաւորին – Վրկայից հանդիսից հրաշալի... (64ա՝ «Ի յելս արեւու արեւ, նորահրաշ ծնընդեան քո, Տէր», «Սուրբ Ոսկի քահանայդ նագելի»), գ. 64բ-5ա Այլ տաղ – Սուրբըն Սարգիս ժամ կատարման... դ. 65ա Կաֆայ («Գրիգոր») – Գթովեամբն աստուածային...
 27. 65ա-6ա ԻԲ. Գանձ սրբոց Ատոմեանցն («Գրիգորի») – Գեղապանձ լուսով... ւ. 66բ [Տաղ] – Սուրբ նահատակ Ատոմ գովեալ... բ. 66բ [Փոխէ] – Ապայ եւ զօրք բոլոր գնդին...
 28. 67ա-8բ ԻԳ. Գանձ սրբոց Սուփասանցն («Գրիգորի ե սա») – Գանձ սիրոյ քոյին... ւ. 67ա [Կաֆայ] («Գրիգոր») – Գանձ եմ համեղ եւ հարկօր...

բ. 68բ Տաղ Սուփասանցն եւ ֆօշիցն – Հրաշալի խորհուրդ քօշից... (68բ՝ «Երջանիկ ի հոգիահրաշ յետքն գիտ, Յիսուս Որդու ձայն», «Ով իմ սիրելի եղբայր, Գ. թուխտ շրջէ եւ գիտ զՈսկեա[ն]ց գանձն, ասայ եւ ի տեղն մի թողոյր»):
 29. 69ա-72բ ԻԴ. Գանձ թարմանչացն Սահակա եւ Մեարոպայ («Բան Բարոզից») – Բարձրեալ անքննին... ւ. 72բ Տաղ ի ներսէս կաթողիկոսէ ասացեալ – Յայսըմ վայրի եղեւ յայտնեալ... բ. 72բ-3ա [Փոխ] – Այսըմ շնորհաց սովօ տուեալ... (72բ՝ «Յիսուս Որդու ձայներուն»):
 30. 73ա-4բ ԻԵ. Գանձ Ոսկեանցն («Առաքել») – Անճառելի Բանըդ հայրական... ւ. 74բ-5ա Տաղ սուրբ Ոսկեանց Բահանայիցն – Սուրբ Ոսկի քահանայդ նագելի...
 31. 75ա-6ա ԻԶ. Գանձ Ղեւոնտեանցն եւ Վարդանանցն («Նաչատուր») – Խրրամատեալ կանոն օրինի... ւ. 76բ Տաղ Ղեւոնտեանց Բահանայից – Ի հանդէս տանի ձեր... բ. 76բ-7ա Տաղ Ղեւոնտեանց («Ի Յակոբէ») – Ի հանդիսաւոր աւուր տօնի... (76բ՝ «Պատճառ պարծանացին, Այսօր Գաբրիէլ, նոր ծաղիկ բխէ այսօր. թէ չես կարեր Ով զարմանալուն էզկուն է»), գ. 77աբ Այլ տաղ Վարդանանցն – Ի յարեւելից ծագել... դ. 77բ Այլ տաղ տեառն ներսեսի կաթողիկոսի – Աստուածային հոգով լրցեալ...
 32. 78ա-80բ ԻԷ. Գանձ սրբոց հայրապետացն Գ. ժողովոյն («Այրիվանց») – Աստուած կենդանի... ւ. 80բ-1ա Ուղ[ղ]ափառ դօանոպին տեառն ներսէսէ – Խոստովանիմ Աստուած ըզՀայր... բ. 81ա [Տաղ անոյշ ի ներսէս հայրապետէ] – Ի Նիկիայ ժողով դարձեալ, / զԳրիգորիոս անդ կոչեցեալ... գ. 81ա [Փոխ] – Այլ մեք ի Հայր հաւատացեալ...
 33. 81բ-4ա ԻԸ. Գանձ համարէն ամենայն սրբոց հայրապետաց եւ վարդապետաց («Վէշտասանֆ է») – Վայել է քոյին... (84ա՝ «Մեղեղիս այսաւր երեւի անտեսն»), ւ. 84ա Տաղ սրբոց համօրէն հայրապետացն («Ա-Ղ») – Այսաւր մայր Սիոն ցընծայ... բ. 84աբ Այլ տաղ ի ներսէս կաթողիկոսէ («Ներսէսի երգ») – Նոր գինոյն իմաստովեան... (84ա՝ «Այսաւր ցընծայ երուսաղէմ եւ զուարճացեալ»):
 34. 84բ-7ա ԻԹ. Գանձ համարէն ամենայն հայրապետաց եւ վարդապետաց («Վարդապետաց») – Վարդապետաց քանոն եւ սահման... ւ. 87աբ Տաղ սուրբ հայրապետաց եւ վարդապետաց – Հանդէս գումարեալ եկեղեցոյ... (84բ՝ «Չգանձս ըսկըսիբ անուշ ձայնով, Գ. հոգով կամ շորսով, միտքդ ի յառաջ ընթանալով եւ դու ըզհետ բարբառելով, մի ի յետեւըդ հայելով ւ անկարգաբար ծիծաղելով, գոտվիտ ճապաղէ իսկ դընելով ի քովէ քով անկանելով»), բ. 87բ Այլ տաղ հայրապետաց – Այսաւր դըշխոյ պանծալի...
 35. 87բ-8բ Լ. Գանձ համօրէն հայրապետաց («Նա-

չառուր») – *խորհուրդ գորեղ Հար անեղութեան... ա. 89ա Մեղեղի սուրբ հայրապետաց («Ճ-Ք») – Ճառագայթ լուսոյ չերկիր... բ. 89ա Տաղ սրբոյ հայրապետաց, տեառն Ներսէս կաթողիկոսէ – Հայրապետաց հանուրց ազգին... (89ա՝ «Այսօր մայր Սիոնին կէսն է եւ նոյն ձայն է»), գ. 89աբ Գօանուփին Գ. ժողովոյն – Բանն անմարմին ըստ էութեան... (89ա՝ «Սուրբ Կիրակոսին ձայն է եւ նաշար Յիսուս որդոյն»), դ. 89բ-90ա Մեղեղի Գրիգորի Աստուածաբանի եւ Գրիգորի Սփանջեագործի («Գրիգոր») – Գետ հոսեալ աստուածային... (89բ՝ «Զինչ Գրիգոր, որ տօնես, յառաջն զհետ հոսեալն ասայ՛ց եւ ապա բայց մեք այսպէս խոստովանեմք»):*

36. 90ա-93ա ԼԱ. Գանձ բուն բարեկենդանին կիրակին, աս[աց]եալ Մխիթար վարդապետի Այրվանեցոյ («Ներեւանեցին») – *Երգս յաւերժական... (91բ՝ «Թէ պահոց կիրակէքն գանձ պիտնայ, զԱստուածն ամենին գլուխ դի՛ր եւ ասայ՛»), ա. 93աբ Տաղ ի Ներսէս կաթողիկոսէ ասացեալ – Պատուիրեցեր զհոգալ զվաղվին ըզկերակուր... (93ա՝ «Ճրագ ճշմարիտն յետքն տե՛ս, Յիսուս Որդոյն»):*

37. 93բ-5ա ԼԲ. Գանձ Թէոդորոսի եւ Մեղկուտոսի («Գրիգոր») – *Գոհաբանեալ Աստուած Սուրբ Հոգի... ա. 93բ [Կաֆայ] («Գրիգորի») – Գանձ գեղեցիկ, քան ըզոսկի... բ. 95աբ Տաղ Ստեփանոս վարդապետէ ասացեալ ի սուրբն Թէոդորոս («Ստեփանոսէ») – Սիրով վառեցար ի սէր անմահ փեսային...:*

38. 95բ-7բ ԼԳ. Գանձ երկրորդ կիրակէին («Գրիգոր է») – *Գրթութեամբ իշեր, Տէ՛ր... ա. 95բ Կաֆաս եւ ձայնվարս երկրորդ կիրակէի («Գրիգորի է») – Գանձըս գրեցայ ես պիտանի... բ. 97բ Տաղ ի Ներսէս կաթողիկոսէ – Որպէս Ադամն այն առաջին... գ. 97բ-8ա Յորդորակ – Ըզպատմուճան սրբասիրին...:*

39. 98ա-9բ ԼԴ. Գանձ, որ զօրէնս սրբութեանն կիրակէի երեկոյին («Աղցից է») – *Անճառելի լոյսըն հայրական... ա. 97բ Կաֆայ Կիրղի («Գրիգոր») – Գանձըս գրեցայ ես պիտանի... (98ա՝ «Ի հոս մի՛ ասէր զայս կաֆայս, զի այս գանձիս չէ: Եւ յորժամ զԿիրղի գանձն ասես, կաֆայ զայս ասայ՛ց եւ ապա զԿիրղի գանձն»), բ. 99բ-100բ Մեղեղի ապաշխարութեան – Մեղայ քեզ, Քրիստո՛ս Աստուած... գ. 100բ Այլ տաղ ապաշխարութեան («Գրիգորի է») – Գանկատ ունիմ ասել քեզ... դ. 100բ-1ա Յորդորակ ապաշխարութեան – Քանքարթագոյց եմ անարժան... (100բ՝ «Առ Հայրդ աղաղ[ակ]եմ, անառակի», «Յիսուս Որդի ձայն»), ե. 101ա-2ա Գովասանութիւն խոստովանութեան Առաքել վարդապետէ ասացեալ – Եղբայ՛ր, ինձ մի՛տ դիր...:*

40. 102բ-3բ ԼԵ. Գանձ Կիրղի երուսաղեմայ հայրապետին եւ մօրն նորա Աննայի («Գրիգոր») – *Գրթացեալ քոին / Աստուածդ անքըննին... ա. 103բ-4ա Տաղ Կիրղի երուսաղեմայ հայրապետին – Հայրապետաց դասուց վեհին...:*

41. 104ա-5ա ԼԶ. Գանձ երրորդ կիրակէին եւ անառակ որդոյն («Մկրտիչ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ տիրական... ա. 105ա-6բ Տաղ ի Ներսէս կաթողիկոսէ ասացեալ – Մոլորեցայ ըստ ոչխարին...:*

42. 106բ-8ա ԼԷ. Գանձ Յոնանու երուսաղեմայ հայրապետին («Գրիգոր») – *Գրթուեամբ քոյին, / Որդիտ միածին... ա. 106բ [Կաֆայ] («Գրիգորի է») – Գանձըս գրեցաւ ի քարտիսի... բ. 108ա Տաղ Եպիփանու եւ Յոնանու – Այսաւր դշխոյ պանծալի...:*

43. 108բ-9բ ԼԸ. Գանձ չորրորդ կիրակէին՝ վասն մեծատան եւ զՂազարու («Մկրտիչ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ տիրական... ա. 109բ-10ա Տաղ ի Ներսէս կաթողիկոսէ – Արարչական բնութեամբ քոին... գ. 110աբ [Տաղ] – Ըստ մեծատան փափկասիրին... դ. 110բ [Փոխ] – Որ կարաւտէր կաթիլ մի... (110ա՝ «Այսօր ցնծայ երուսաղէմ»):*

44. 111ա-2ա ԼԹ. Գանձ սրբոց ֆառասնիցն, որք ի Սերաստիայ («Մկրտիչ») – *Մեծ եւ հրգօր անմահից արքայ... ա. 112աբ Տաղ սրբոց ֆառասնիցն («Փ ֆառասուն վկայսն») – Ի վեր համբառնամք... բ. 112բ Այլ տաղ սրբոց ֆառասնիցն («Քառասունսն») – Քրիստոս փառաց թագաւոր...:*

45. 112բ-4ա Խ. Գանձ հինգերորդ կիրակէին («Մկրտիչ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ անեղին... ա. 114աբ Տաղ տեառն Ներսէսի Կլայեցո – Ի յիմ քաղաք մարմնոյս դնին... (114ա՝ «Սուրբ Կիրակոսին եւ թէ՛ չես կարեր, Յիսուս որդու ձայներուն ասայ՛ց», «Գան կտուն իմ ասելն ի հոս պիտի. գի՛տ ԼԳ. համարն եւ ասայ՛ց»), բ. 114բ Յորդորակ – Աւրինաւոր փարիսեցին...:*

46. 115ա-6բ ԽԱ. Գանձ սուրբ Գրիգորի Լուսորչին մուտն ի վիրապն («Մկրտիչ») – *Մեծ եւ հրգաւր անմահից արքայ... ա. 116բ-7ա Տաղ Գրիգորի Լուսորչին, ասացեալ ի Գրիգորի կաթողիկոսէ եղբաւրն տեառն Ներսէսի Կլայեցոյ – Ի յելս արեւու արեւ... բ. 117ա-8ա [Փոխ] – Բարձրացի՛ր, զըշխո՛յ, փառօք... գ. 118աբ Ողբ եւ կոծ ի վերայ Հայաստ[ան]եաց աշխարհին եւ եկեղեցեաց, ֆահանայից եւ ժողովրդոց – Այսաւր ժողովեալ մանկունք...:*

47. 118բ-21ա ԽԲ. Գանձ վեցերորդ կիրակէին («Մերգան») – *Մեղայ՛ց, Տէ՛ր, մեղայ՛ց... ա. 121ա Մեղեղի Զ. (վեցերորդ) Կիրակէի – Քեզ, ս՛վ տէր Յիսուս... (121ա՝ «Թէ զիր բնական գոյն չես գիտեր, նայ ես եմ կորուսեալ ոչխար-ին գոյն այլ կուգա»), բ. 121աբ Փոխէ՛ զձայնդ – Վա՛յ իմ մեղուցեալ անձինս... գ. 121բ Փոխէ՛ – Ի քո սոսկալի ձայնէդ...:*

48. 121բ-3ա ԽԳ. Գանձ Զ. (վեցերորդ) կիրակէին երեկոյին («Աղցից է») – *Անտանելի Հօր անեղ Որդին... ա. 123աբ Տաղ Զ. (վեցերորդ) կիրակէին («Յակոբ մեղաւորն ասցե է») – Յաւուր յարութեան յորժամ որոտան...:*

49. 123բ-5բ ԽԴ. Գանձ յարութեանն Ղազարու

(«Գրիգորի է սա») – Գոշուճն ըղձական... ա. 123բ [Կաֆայ] («Գրիգորի է») – Գանձ եմ ախորժ եւ պատուական... բ. 125բ Տաղ Ղազարու յարութեան, յԱռաքել վարդապետէ ասացեալ («Այս յԱռաքել») – Աստուածն ամենի, / լոյսն անճառելի... գ. 125բ-6ա Այլ տաղ Ղազարու յարութեան – Զայն այն, որ գաշխարհն արար... դ. 126աբ Տաղ Ղազարու, ի Ներսէս Կլայեցոյ ասացեալ – Ընդ Ղազարու բարեկամին...

50. 126բ-8ա ԽԵ. Գանձ ծաղկազարդին («Հայցես») – Համագոյական, / Հօր սահման եւ Բան... ա. 128ա Տաղ ծաղկազարդին ի Ներսէս կաթողիկոսէ Կլայեցոյ – Ոստս արմաւենեաց հատեալ... բ. 128աբ Փոխէ՛ – Որոյ քերովբէք յաթոռ փառաց...

51. 128բ-9բ ԽԶ. Գանձ ծաղկազարդին երեկոյին («Քրով») – Ի տանըս տանից... ա. 129բ Տաղ դըռընբացեցին, երեկոյին տեառն Ներսէսի Կլայեցոյ ասացեալ («Տէր Ներսէսի է») – Տիրական տանիւս այսար... բ. 129բ-30ա Յորդորակ – Այսար գալըստեամբ քո, Տէր...

52. 130ա-2բ ԽԷ. Գանձ մեծի երկուշաբթի ատուրն («Գրիգորի է սա») – Գերագոյն էից, / գերահրաշ գոյից... ա. 130ա [Կաֆայ] («Գրիգոր») – Գանձ պատուական յարինեցար... բ. 132բ-3ա Տաղերս Յոհանէս Պլուզէ – Ադամայ ստեղծողն եկեալ յիւր պատկերն ի տես... գ. 133ա [Տաղ մեծի երկուշաբթոյ ատուրն] – Անդ ի մէջ դրախտին...

53. 133ա-5ա ԽԸ. Գանձ մեծի երեքշաբթին («Գրիգոր») – Գործ արարչական, / գերահրաշական... ա. 133ա [Կաֆայ] («Գրիգորի է») – Գանձ եմ աւագ երրորդ ատուր արաշուրթեան... (133ա՝ «Ի մեղականին գոյն ասա՛՛ գկաֆաս, որ խախք չի լինիս ի մէջ ատենին եւ ժողովրդին»), բ. 135ա Տաղ եւ խրատ աւագ երեքշաբթի – Որք ընկեալք ի գործ գքանքարն... գ. 135աբ Փոխ – Որ վարդապետէ այցելու...

54. 135բ-6բ ԽԹ. Մեծի չորեքշաբթին («Մկրտիչ») – Մեծ եւ ահեղ խորհուրդ անեղին... ա. 136բ-7ա Տաղ աւագ Դ.(չորեք)շաբթին – Որ վասըն մեր յերկնից յերկիր խոնարհեցար... բ. 137աբ Այլ տաղ Դ.(չորեք)շաբթի – Գառն անարատ պատարագ...

55. 137բ-9ա Մ. Գանձ մեծի Ե.(հինգ)շաբթին («Չպակաս») – Զահեղ, գանքըննին զխորհուրդըս խորին... ա. 139աբ Տաղ աւագ հինգշաբթին – Ընդ երեկոյս հասեալ ժամուն...

56. 139բ-40բ ՄԱ. Գանձ ոտնալուսին («Որդ») – Որք որ փափաքին... ա. 140բ Տաղ ի Ներսէս կաթողիկոսէ – Յերեկոյի հինկշաբթին...

57. 140բ-2ա ՄԲ. Մեծի ուրբաթին («Աշառ») – Առեալ ըզհացն ի հինգշաբթին... ա. 142ա-3ա Ողբ Աստուածածնին ի դէմ խաչին եւ խաչելոյն – Աստուածածին կոյսըն Մարիամ... բ. 143աբ Այլ տաղ խաչելութեանն Քրիստոսի – Լըցան բանքն այսար

սուրբ մարգարէին... գ. 143բ-4բ Այլ տաղ խաչելութեան – Անեղ Որդին Հար միածին...

58. 145ա-6ա ՄԳ. Գանձ մեծի շաբաթին («Մկրտիչ») – Մեծ եւ ահեղ խորհուրդ սոսկալի... ա. 146աբ Տաղ թաղման եւ հրագալուցին, տեառն Ներսէս Կլայեցոյ ասացեալ – Որ ելելոցըս շնորհ բաշխէ... բ. 146բ Փոխէ՛ – Խոնկ եւ զըմուռ նըշան թաղման... գ. 146բ – Ի իւտեալ պարեայ քաղաք պանծալի...

59. 146գ-7ա ՄԴ. Գանձ սուրբ Զատիկին եւ պատեփին («Մկրտիչ») – Մարդասիրութեամբ Որդիդ միածին... ա. 147աբ Տաղ յարութեան տեառն Ներսէսի – Ոչ արգելեաց վէմն երկրօտր... 147բ-8ա Փոխ – Այլոցն երթեալ վաղվաղակի...

60. 148աբ ՄԵ. Գանձ յարութեան երկրորդ ատուրն («Տէր») – Տէր տէրունական, / տըւաղ տիրական... (148ա՝ «Թէ չես արբեր դու անյարմար, / խմեր ազահ եւ վայրապար, / նայ դու ասայ՛ ըզգանձս ի շար / անուշ ձայնիւ քաղցրայարմար»), ա. 148բ-9ա Տաղ յարութեան, տեառն Ներսէսի – Որ յարութեան երեկոյին... բ. 149ա Այլ տաղ, Առաքել վարդապետէ ասացեալ – Տասըն վըրկաք այսար յայտնեաց... գ. 149բ [Տաղ յԱռաքել վարդապետէ] – Յորժամ Ադամ մեղօք մեռաւ...

61. 150աբ ՄԶ. Գանձ յարութեան երրորդ ատուր («Ուան») – Ուտի լոյս ծագեալ... (150ա՝ «Տընարհնեքին շատ մի՛ խըմեր, / որ չի մընայ գանձերս ի տեղ, / թէ չէ յետոյ օտըն ահեղ / դու կու լինիս հոգովըդ խեղ»), ա. 150բ-1ա Մեղեղի յարութեան, տեառն Ներսէսի կաթողիկոսի ասացեալ («Կաթողիկոսի Հայոց») – Կեանք ընդ Հար անմահ մարմնով... (150բ՝ «Նորահրաշ ծնընդեան քո, Տէր, ի յերս արեւտ», «Ե. թուխտ շրջէ եւ ասայ՛ ի նմին օտը այլու՛մ դիմաց»), բ. 151ա [Փոխ] («Ներսէի է») – Նոր իմն աւետեաց բարբառ...

62. 151ա-2ա ՄԷ. Գանձ յարութեան չորրորդ օտըն – Արդ, լուսաւորեայ՛, / Արդ փառօտեայ՛... (151ա՝ «Շատ մի՛ խըմէր, լինի՛ր մախմուր, / ըզգանձս ի տեղն մի՛ թողուր, / ասայ՛ գտաղերտ անուշ, ամուր / եւ բաներուտ դու վըճար տո՛ւր»), ա. 152աբ [Տաղ] – Նոր դըշխոյդ բերկրած... բ. 152բ-3ա Տաղ յարութեան տեառն Ներսէսի ասացեալ – Յընձան այսար երկինք... գ. 153ա Փոխէ՛ – Հար կամաւ իջեալ...

63. 153ա-4բ ՄԸ. Գանձ յարութեան Ե. օտըն («Մկրտիչ») – Մեծապայծառ ձայն ուրախալի... (153ա՝ «Զձայնըդ սըրէ եւ յիստիկէ, / զխըռչակդ քերէ, զխուխըր հանէ, / ասայ՛ ըզգանձս եւ յօրինէ, / թէ քո ընկերքդ խիստ աղէկ է»), ա. 154բ [Տաղ] Ե. օտըն է յարութեան տեառն Ներսէսի ասացեալ՝ ըստ խորհրդեան – Ելեալ ի լեառն դէմ տաճարի... բ. 155ա Այլ տաղ յարութեան՝ հասարակաց կիրակէից («Ներսէսի ի կաթողիկոսի») – Նոր ձայն աւետեաց... գ. 155բ-6ա Փոխէ՛ զձայնդ – Ի նմին ատուր կիրակէին...

64. 156ա-7ա ՄԹ. Գանձ վեցերորդ ատուր յարու-

քեանն Քրիստոսի («Յարու») – Յարեաւ Աստուած, մարգարէն գոչեաց... (156ա՝ «Ով քաջ ուսած սիրո՛ւն եղբայր, / զընկերտ աղէկ տես 'ւ ի հետ տա՛ր, / ապայ ըզգանձս ասա՛յ ճարտար, / որ ձայնն եւ բանն լինի յարմար»), ա. 157աբ Տաղ զատկին Զ. օտւն – Դարձեալ յայտնի ալլանման... (157բ՝ «Շաբաթ Յովանու գլխատման գանձ եւ տաղ Մնրնդեանն Ը. օրէ-իցն յետեւն գի՛տ եւ ասա՛յ անպատճառ», 157բ՝ «Գոչակն էական, Հօր սահման եւ բան, Աստուած պետական»), բ. 158ա Այլ տաղ հասարակաց յարութեան – Իւղաբերքն եկին, / խոնկս անուշս բերին... գ. 158ա [Փոխ] («ի Հայոց») – Ի գերեզմանէն զմարմինն, ո՛վ պարտիզապան...

65. 158ա-9բ Կ. Գանձ հասարակաց յարութեան («Թեան») – Թագօր անմահ նստեալդ իսկ ի գահ... (158ա՝ «Ըզգանձս ասա՛յ մըտօք ճարտար, / քաղցր եւ անուշ շինով յերկար, / տեղս անճարակ է եւ դժար, / բազում գիտունք նըստեալ են շար»), ա. 159բ- Տաղ յարութեան – Դասքըն հրէական / եղին պահապան... բ. 159բ-60ա [Փոխ] – Մի՛ լայր դու, ո՛վ կին... (159բ՝ «Աչք իմ ծովացեալ», «Անճառ միածին»):

66. 160ա-1բ ԿԱ. Գանձ յարութեան կիրակէից («Առաքել») – Անժամանակ լոյսն արփիական... (160ա՝ «Եթէ ունիս ձայն գովելի, / ժողովքըս խիստ ուրախ լինի, / ապայ թէ հաստէ 'ւ անճոռնի, / նայ մի խօսի՛ր, ես քի գերի»), ա. 161բ Տաղ յԱռաքել վարդապետէ ասացեալ («Առաքելի») – Այսար յարեաւ ի մեռելոց... (161բ՝ «Աստուած անեղ, անպարագիծ, արարիչ Տէր քաղցրացօ»), բ. 162ա [Տաղ] («Մկրտիչէ») – Մեծ հառաչ[ան]աւք եկին յայն առաւաւտին...

67. 162ա-3բ ԿԲ. Գանձ հասարակ կիրակէից («Ահարտոց») – Անճաւելի ի Հօրէ ծընեալ... (162ա՝ «Թէ գոյն գիտես, նայ զգանձս ասա՛յ, / հանց որ շայնեն քեզ մահանայ, / թէ չէ գիտնոց եղի՛ր ծառայ / եւ վարպետաց ականջ արա՛յ»), ա. 163բ Տաղ յարութեան կիրակէից («Ներսեսի երգ») – Նըստեալ անայք ողբացին... (163բ՝ «Հրճուիմք կամ Քրիստոս փառաց թագաւոր»), բ. 164ա [Տաղ] («Ներսէսի») – Նոր ծաղիկ պայծառ ցուցօ...

68. 164ա-5բ ԿԳ. (ԿԳ.) Գանձ համարէն ամենայն կիրակմտից («Գրիգոր») – Գերամբարձ Աստուած... 164ա Կաֆայ (ստ. լս.) – Գանձըս գրեցա կիրակմըտի... (165բ՝ «Ով անմահ հաց կենաց»), ա. 165բ-6ա Տաղ կիրակմտին, տեառն Ներսեսի ասացեալ – Որ ի դասուց հոգեղինաց... (165բ՝ «Բաշխես ըզհաց քո»), բ. 166ա Փոխէ՛ զձայնդ – Որ յարութեան երեկոյին... գ. 166ա-7ա Այլ տաղ յարութեան, Առաքել վարդապետէ ասացեալ («Տէր Առաքեալ Սիւնեաց») – Տէր մեր փառաւք այսար յարեաւ... (166ա՝ «Հրճուիմք»), դ. 167աբ Տաղ յարութեան («Տէր Առաքեալ Սիւնեաց») – Տեսեալ Մարիամ ըզՏէրն ի վերա խաչին... (167ա՝ «յԱրեւելից

յարեւմուտս»), ե. 167բ Կաֆայ («Գրիգոր») – Գթութեամբ Աստուածորդոյն...

69. 167բ-9բ ԿԴ. (ԿԴ.) Գանձ նոր կիրակէին («Գրիգորի է») – Գաղտնի խորհրդդին / գուշակեալ ի հին... (167բ՝ «Թէ այլ կիրակմըտի գանձ ուզես, գի՛տ Ղէ. համարն»), ա. 169բ-70ա Մեղեղի նոր կիրակէին – Այսար նոր արեւ հարեալ... (170ա՝ «Այսօր Գաբրիէլ հրեշտակապետն, Ով զարմանալի»), բ. 170աբ Այլ տաղ յարութեան եւ նոր եւ կարմիր կիրակիրակէին – Ո՛վ քաղցրաձայնեալ անուշախաւս երգով...

70. 170բ-2ա ԿԵ. (ԿԵ.) Գանձ աշխարհամաւրանին կիրակէին («Մկրտիչ») – Մաքրափայլ սուրբ տաճար տիրական... (170բ՝ «Ասա՛յ թէ ձայն ունի ոճին, / հանց որ ժողովքդ հօանին, / ապայ թէ չես հրմուտ սըմին, / նայ մի՛ ճըկտիր անհաս տեղին»), ա. 172աբ Տաղ եւ մեղեղի եկեղեցոյ եւ տաճարի եւ մատառնի («Սիմէոն է») – Սուրբ ես, տաճար երկնանման...

71. 172բ-4բ ԿԶ. (ԿԶ.) Գանձ երեւման խաչին («Ի Մաթոնոսե խնդրեաց Գրիգորն») – Իսկակից Որդի Հար քո հըզարի... ա. 174բ-5ա Տաղ երեւման սուրբ խաչին – Խաչն ի նախնունն երեւեցաւ...

– 172բ՝ «Ըզգանձս ասա՛յ սրբոյ խաչին / եւ երեւման սուրբ նշանին, / Բ. ընկերք ձայնիւ յոյժգին, / քաղցր եւ անուշ եւ մեղմագին, / հանց որ ժողովքըն հօանին / |173ա| եւ փառս տան ձեր ստեղծողին, / մի՛ ծուլութեամբ թողու տեղին / 'ւ երթայր, առներ զգործ մարմնալին»:

72. 175ա-6բ ԿԷ. (ԿԷ.) Գանձ համբարձմանն («Մկրտիչ») – Մեծապայծառ տաւնիս ահագին... (175ա՝ «Զհամբարձման գանձս ասայ սիրով, / քաղձըր ձայնիւ փափաքելով, / Բ. ընկեր ճարտար գոլով, / աւսէք անուշ, համեղ երգով»), ա. 176բ-7ա Տաղ համբարձման տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի («Անդրիասի») – Այսար անդրանիկ Հար միածին Որդին... բ. 177ա [Յորդորակ] («Վարդապետ») – Վեհից թագաւորն այսար առ հայր... գ. 177աբ Այլ տաղեր համբարձման երեկոյին («Ստեփանոսի է») – Սոսկալի ահիւ պակեան հոյլք... (177ա՝ «Ով զարմանալի», «Տապանակ, կայթեա՛ սուրբ կաթողիկէ»):

ժգ. 561բ-2բ Նորին ի յԵրուդոյթիւնն սուրբ – Առ քեզ, Տէ՛ր, մի... եւ անգուգական համապատիւ երրորդութեանդ, այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն]:

ժդ. 562բ Նորին յՈրդի – Զարուծիւն եւ իմաստութիւն Հար... հատուցէ քեզ փառս եւ արհնութիւն շրթամբք ցնծութեամբ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն]:

ժե. 562բ-3բ Նորին Յոհաննու վարդապետի Աղօթք – Հայեա՛, Տէ՛ր... փառաւորել զքեզ ընդ Հար... եւ յաւիտեանս. [ամէն]:

ժե. 563բ-4բ Նորին մաղթամբ առ Հայր, ի դէմս մանկանց – Առատ յամենայն տուրս բարեաց... Հոգւոյ քում Սրբոյ ելողի առ ի քէն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. [ամէն]:

ժզ. 564բ-5ա Նորին Աղաթ յՈրդի – Ի լուսոյ ճշմարտէ... եւ արհնեալ արժանապէս զմեծութիւն տէրութեան քո ընդ Հար եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն]:

ժէ. 565ա-5բ Նորին Աղաթք – Կորուսեալ անձին իմոյ... մատուցանել քեզ պատիւ եւ փառս... այժմ եւ միշտ [եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն]:

ժը. 565բ-6բ Նորին Աղաթք յՈրդի – Անստուեր լոյս... |566ա| եւ ընդ նոսին փառաւորել զքեզ ընդ Հար եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ:

ժթ. 566բ Նորին – Տէր Հայր եւ Աստուած կենաց, իմոց... եւ քեզ փառս մատուցուք յաւիտեան:

ի. 566բ-7բ Նորին Աղաթք պանդխտի – Արարիչ յամենայնի, յանեղծութիւն... եւ փառս մատուցանել քեզ ընդ Հար եւ ընդ Սրբոյ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն]:

իա. 567բ-8ա Նորին յՈրդի – Ծշմարիտ լոյս, ծնունդ լուսոյ... փառաւորել զքեզ ընդ Հար եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ:

իբ. 568ա-9բ Նորին Յոհաննու Սարկաւագ վարդապետի յՈրդի – Որդի՛ Աստուծոյ, Միածին Յիսուս Քրիստոս... բարձրացուցեն քեզ արհնութիւն ընդ Հար քում եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտե[անս յաւիտենից. ամէն]:

իգ. 569բ-71բ Նորին Աղաթք հոխացելոյ – Բնութիւն կենաց... արժանի արասցես զիս փառաւորել զքեզ հանդերձ Հոգւովդ Սրբով այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

իդ. 571բ-2բ Նորին սուրբ վարդապետի Բանբ աղաթից եւ գոհութիւն ծերացելոց յերկիւղն Աստուծոյ եւ սիրով նորին – Եկի կալ առաջի քո... եւ մատուցանել արհնութիւն եւ պատիւ քեզ... ամէն]:

իե. 572բ-8բ Նորին Առ եղբարս՝ վասն անձին յեռ կենաց – Ծառայակից ի Քրիստոս... եւ ձեզ եղիցի հատուցումն բարութեան յաւուրն Քրիստոսի... յաւիտեանս յաւիտենից:

լ. 579ա-81բ Հանդէս բանի վասն երանեալ եւ առնն Աստուծոյ Սարկաւագին կենաց եւ մահուան եւ այլոց սրբոց հուպ յայն ժամանակս – Յետ վարելոյ զքաղաքականութիւն... ուր սընաւ եւ վարժեցաւ ի փառս Տեառն եւ Աստուծոյ. թվին ՇԸ. (1059):

լԱ. 581բ-2բ Յաղագս վարուց երանելոյն տեառն Մաշտոցի – Ո՛վ աստուածասէր հարք եւ եղբարք... հասցուք ի նպատակ վերին կոշման յարքայութեանն Քրիստոսի Յիսուսի... վայել է փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

Տե՛ս Գէորգ Տէր-Վարդանեան, Մաշտոց Ա. եղիվարդեցի կաթողիկոսի վարքը.- «Էջմիածին», 2011, Բ., էջ 60 (մնացեալ օրինակների համեմատ տարբեր խմբագրութիւն է):

ՅԱԽԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, 1607 ք.

1. 418բ [Աղօթք] – Արթուն մտօք եւ անզբանս խորհրդովք... եւ գով[ա]բանելով փառաւ[ո]րել զՀայր եւ զՈրդին եւ զՍուրբ՛:

2. 418բ [Քարոզ] – Սուրբ սրտիւ եւ հաստատուն հօտտով կացցուք միաբան աղօթս առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ Որդւոյ եւ ամենայնուրեք Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

3. 586ա [Տաղ] (ծայրակապ՝ «Սահակ վարդապետ») – Մնայփառեալ ես պճնեցայ / եւ անցաւորս զուրաճացայ... հոգիս աղտով շաղախեցի / լուսայփայլ ըսգեստն կորուսի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

33բ Զտառապեալ գծողս ըզՄաթէոս աղաչեմ յիշել ի Տէր, ո՛վ ընթերցողք տառիս Անտոնի:

42ա Տէ՛ր Աստուած իմ, բարեխաւսութեամբ սրբոյն Մակարա ողորմեա՛ ծնողաց իմոց եւ ինձ՝ անարժան գրչիս՝ Մաթէոսի եւ փրկեա՛ յամենայն փորձութեանց սատանայի, եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն:

53ա Քրիստո՛ս Աստուած, բարեխաւսութեամբ սուրբ հարն մերոյ՝ երիցս երանելոյն Ոնոփրիոսի եւ այլ սրբոց ճգնաւորացն, ողորմեա՛յ ծնողաց իմոց եւ ինձ՝ անարժան գծողիս ի քո միւսանգամ գալստեանն. ամէն:

60ա եւ զիս՝ զմեռեալս ոգով զՄաթէոս գծող սորա եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն (նման՝ 126բ, 256բ, 263բ, 395ա, 404ա, 441բ, 491բ, 501ա, 578բ):

101ա Կարգա՛ եւ զեղկելի գծողս յիշեա՛:

108բ Կարգա՛յ եւ ԶՄաթէոս յիշեա՛:

149ա Զսակաւ աշխատեալ գծող սորա զՄաթէոս էրէց եւ գծնաւոյն իմ յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթըս ձեր միով Աստուած ողորմիւ, Աստուած զձեզ յիշեսցէ ի

գալստեանն իւրում: Նաև գերշահիկ ռաբունապետն մեր գՅովաննէն Հերմովնի:

361ա Ռ եղբայր, աղաչեմ, աղաչեմ, մանաւանդ ողորքանաւք հայցեմ, զի յորժամ ի խորոց սրտէ արտասուալից դիմաւք պաղատեսցիս առաջի Տեառն Աստուծոյ, յիշեսցես զեղկելի գծողս զՄաթէոս, զի բազում թախանձանաւք ծրեցի զսա առ ի յաւգտութիւն թշուառացելոյ անձինս:

369բ Յիշատակարան մատենիս եւ աստուածաւսոյց Հարանց վարուց. Փա՛ռք քեզ, անասման անուն եւ անզուգական, անսկիզբն եւ անվախճան, անեղ եւ անապական էականութիւն, անուր, աներբ, անուտեք եւ անժամանակ, յերիս բաժանեալ անձնաւորութիւնս եւ ի մի տէրութիւն եւ աստուածութիւն բովանդակեալ, անքակ միաւորութեամբ բաժանեալ եւ որոշեալ միաւորութեամբ, պարզ, անզրնին եւ թիւ կատարեալ, ի միոյ պատճառէ շարժեալ եւ կնքեալ ի յերիս: Անեղականք, անըսկզբունք, յառաջըմէ եւ ապա յառաջ եկեալ ի միոյ պատճառէ, Որդի ծննդեամբ եւ Հոգի բղխմամբ, ո՛չ սկսեալք եւ ո՛չ դադարեալք, միակամք մի Տէր եւ Աստուած, Հայրն եւ Որդին եւ Սուրբ Հոգին միով բնութեամբ հաւասարեալ, յորմէ գոյացան երեւելի եւ աներեւոյթ, տարրեղէն արարածք, որում Հար անհասի եւ անծրնի եւ Որդոյ նորա միածնի, եւ Սուրբ Հոգւոյն Աստուծոյ, ամենայն էից նորոգաւղի՛ փառք եւ պատիւ, գոհացողական երկրպագութեամբ, յանցելումն եւ ներկայէս, մինչեւ յաւիտեանն անանց եւ յաւիտենից յաւ[իտե]անս. ամէն:

Աստանար կատարեցաւ հոգիակեցոյց, ցանկալի դրախտս բուրաստան, աստուածատունկ ամէնունակ առատութեամբ, յորմէ գնան գետք եւ բղխէն աղբերք անմահարարք եւ զովացուցիչք, որք առոգանեն զժարաւեալ ոգիսըս պասքեալ սոցին փափագողաց, քանզի են ծառք երկնուղէշք, պլտուղք բարեհամբ տիեզերաց, նարդոս ծաղիկք եւ տունկք տենչալիք, ծաղկանոցք՝ լի անուշահոտութեամբք, անդր քան զտաշխն եւ զկինամոն եւ զամենայն խնձոց անուշահոտութիւն, զարդարեալ երփն երփն երանգաւք՝ սպիտակափայլք եւ ծիրանածինք, գոյն առ գունով, որք զմայլելով պատրաստեն զիմանալեացն գաւառ՝ լայնատարած վայրաւք եւ համասփիւռ ընդարձակութեամբ: Զի արդարեւ տարածանին երկնաքայլիցն ճեմարանք, որք թեւատարած սըլացմամբ վերառոցին յեթերն վերին, ի լոյսն մշտատիւ եւ անվայրափակ: Քանզի որք տիրապէս զրասորնայնոյս քայլեցին, սրբակրանիցն գուպարք անցեալ գնան նրբաշաւիղն առաքինութեամբ ընդ այնր երկնաքաղաք պողոտայ, |370ա| զոր գունդ սրբոց արդարոցն եւ մաքրագունիցն երամք թեւաթուցեալք Հոգւոյն թեւաւք, աւգապարիկ երթեւեկութեամբ, ջոկադասեալք ընդ ջոլիրս սրբաբանողացն դասուց, որք հանգարտագոջ քաղցրանուագ ձայնիւ, զանլուելին դրուատեն

զարհնաբանութիւն, ըստ այնմ, թէ՛ Ամենայն հոգի՛ք, արհնեցէ՛ք զԱստուած. նա եւ ըստ սաղմոսողին, որ ասէ Աւրհնեցից զՏէր յամենայն ժամ, եւ յամենայն ժամ արհնութիւն նորա ի բերան իմ, եւ դարձեալ ասէ. եղիցի անուն Տեառն արհնեալ յայսմ հետէ մինչեւ յաւիտեան: Եւ առաքեալ ասէ. Միշդեռ ժամանակս ի ձեռս է, գործեցէ՛ք զբարիս: Յաղագս այնորիկ բարւոյ ամենայն ոք ցանկալ, ոմանք մասանց եւ այլք՝ բոլորին, աստուածասէրքն՝ աստուածայնոյն, եւ բարեբարութքն՝ գերագունին: Որպէս մեծն Պօղոս Թեբալեցիին եւ նախասկիզբն միանձանց Անտոն խպթին եւ Մակար եգիպտացւոյն, եւ այլք յետ նոցա բերք բիրոց եւ հազարք հազարաց, որք զաչս մըտաց բաց եւ լըստակ կալան եւ միշտ զկայ առին լինելով ընդ Աստուծոյ, գանձեցին անձանց իւրեանց անճողոպրելի շահաւոր գանձս, որպէս աստուածուսոյց միանձնացեալքն եւ աստուածասէր բազմաշարար, արինաներկ սուրբ մարտիրոսքն, որք Աստուած Հոգոյն առաջնորդութեամբ ելեալք ի լերինս, յայրս եւ ի ծերպս վիմաց գիշերացանկ տքնութեամբ եւ սովալըլուկ տուայտութեամբ կենցաղավարեալք, հրեշտակական վարուք ճգնեցան խարազն առաքինութեամբ եւ ի Քրիստոս միանալով մեծի հանգըստեամբ փառաւորեցան:

Եւ արդ, ես՝ յետինս ի բնաւից եւ հողոյ հաւասար, ժանդալից մեղաւք խաւարեալըս հոգով Մաթէոս էրէց, ի տղական հասակն, մինչ էի ամաց քսանից, բազում բաղձանաւք եւ խանդակաթ սիրով, ըղձամբ սրտիւ եւ տենչանաւք փափագեցայ այսմ հոգիաբաշխ, աստուածապարգեւ սուրբ գրոցս, որ անուանի Հարանց վարք: Եւ մեղսամակարթ անձամբ գրեցի զսա՝ հաւաքելով ի համարէն աշխարհաց, ի բազում սուրբ գրոց, զոր քաջ գիտէք՝ զի ո՛չ գոյ ի մի վայր այսքան ամենալի եւ անուշահամ, զմայլեցուցիչ եւ ծաղկափթիթ բուրաստան՝ լի կենդանի, անմահական բանիւք եւ վարուք աստուածահաճոյ սուրբ հարցն: Որոց յուսով եւ ըղձափափագ տենչմամբ ցանկացող եղէ այսմ հոգիաբուղիս էղեմական վտակիս՝ փանաք եւ վտիտ գրիչս Մաթէոս, զի զպասքեալ ծարաւ, դառնաշունչ, մահապարտ հոգոյս սովաւ լցուցից, վասն զի յոգնակի սիրով գրեցի զսա ամըս է. (1371-1378), առ ի յիշատակ անբարի հոգւոյն իմոյ եւ փրկութիւն աղտեղեալ մեղսամակարթ |370բ| հիքոյս անձին: Քանզի սուրբ եւ պատուական, բարեշնորհ, աստուածաբնակ գիրքս այս պարունակեալ ունի յինքեան զմեծամեծ սուրբ հարցն վարք եւ զբազմադիմի խաւք եւ զխրատ նոցա: Ունի եւ զսրբոյն Նարեկացւոյն եւ զԳառնեցւոյն իրատք աղօթից եւ զբանք Փելեփսիանոսի եւ Յոհանու Ոսկէբերանի՝ ազգմամբ Սուրբ Հոգւոյն գրեալ վասն միանձնացելոց անձանց, այլ եւ Նփրեմի խօսք բազում, եւ սրբոյն Նեղոսի իրատք աղաւթից եւ յոլով աղաւթք ասացեալ աստուածաբնակ սուրբ վարդապետաց: Նա եւ ճգնազ-

գեաց փառագարդ վարդապետացն մերոց՝ հրաշալուոյն Բենկայ եւ հոգիբնկեալ մեծի պրեւտրիկոսին Մարկաւազ վարդապետի, գտանելին ամենայն մարմնապէս տեսողի՝ ասացեալ աղաւթս բազում: Եւ այլ եւս աստուածախաւս սուրբ վարդապետաց անհուն եւ անշափ բանք եւ խրատք, զոր ասացեալ են Աստուած Սուրբ Հոգւովն վասն եկեղեցւոյ մանկանց՝ թէ որպէս պարտ է կեալ ի կենցաղունս այսորիկ: Յաղագս որոյ են՝ փանաքի հէքս Մաթէոս, գրեցի զսա սատար սողոսկեալ հոգւոյս՝ առ ի յիշատակ շեղեալ, շուայտեալ մարմնոյս, թերեւս գտայց խերեւէշ մի ի մասանց փշրանաց՝ արտաքս ընկելոյ արժանաւորն մանկանց սեղանոյ:

Արդ, աղաչեմ արտասուելից հառաչմամբ եւ մոխրամած դիմաւք, որք գաղափար[եա]լ ընթ[եռ]նելով լուսաւորիք յայսմ գերազանց, արփիափայլ փայեթոնէ, յիշեսչիք սրտի մտօք ի մաքրափայլ աղաւթս ձեր զստրուկ աղքատս ի բարեաց գործոց զՄաթէոս գծագրողս եւ ի Քրիստոս՝ հանգուցեալ ծնօղսն իմ եւ զեղբարսն, նա եւ զգերազնամաքուր արեղայսն սրբազան՝ Իզնատիոս եւ Նսայի, որ են հարազատ որդի վրտիտ գծողիս, եւ զՀովսիփիմի՝ մայր իւրեանց, զլըսնամեայ ապաշխարութեամբ աղաւթեալն, եւ առաքինասէր դուստր իւր՝ կուսանն Մարգարիտ: Եւ որ առատն է ի տալն, տացէ ձեզ՝ յիշողացդ, եւ մեզ յիշեցելոյս զերկնից արքայութիւնն եւ զպսակն անթառամ:

Կատարեացաւ հրաշափառ սուրբ գիրքս այս բարերար շնորհաւք Աստուած Սուրբ Հոգւոյն, ձեռամբ նոյն վերոյգրեալ Մաթէոս իրիցոյ, ի թվիս հայոց ՊԻԷ. (1378), ի գեղաքաղաքս, որ Անկեղակոյտ կոչի, ընդ հովանեաւ ամենամաքուր տիրուհի, փառաւորեալ Սուրբ Աստուածածնին եւ արփիաւորչին մերոյ տեսան Գրիգորի Հայոց Մեծաց սուրբ Լուսաւորչի եւ այլ միեղէն, սքանչելագործ, զարմանահրաշ սուրբ եկեղեցեաց, որ է Քէթոյվանից Սուրբ Գրիգոր, Շաղատայ Սուրբ Գրիգոր, Խրոբնաւանից Սուրբ Գրիգոր եւ Բերդուոյ Սուրբ Գրիգոր: Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք, պատիւ եւ արհնութիւն յանլուելի ձայնից եւ յամենայն եղանութեանց այժմ եւ միշտ եւ յանգրաւն յաւիտենից յաւիտեանս. ամէն:

Սակաւիկ յիշատակիկ Մաթէոսի վտիտ ֆանաքի տրուպիկ գրչի:

429բ Զեղկելի գծողս յիշեալ:

585բ Աստուած ողորմի Մաթէոս իրիցուն, որ այսպէս աստուածաշունջս գրել ա վասն իւր անձինըն:

586ա Աստուած ողորմի գծողի սորայ, ամէն:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 583բ (ԺԵ. դ., բոլորգիր) Եւ ով ոք մեզ յիշէ ի կամս բարին եւ լի սրտիւ ասէ Աստուած ողորմի-ն, նա արժանի լինի տեսութիւն Յիսուսի:

2. 582բ (1580 թ., բոլորգիր) Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոնաց պարոնն եւ յիշխանաց յիշխանն՝ զմէլիք Շահնազարն եւ զհայրն իւր՝ զՄելիքբէկն եւ զմայրն իւր՝ զԽաթունաղէն եւ զկենակիցն իւր՝ զպարոն Ֆախրիջահանն եւ զյիշխա[նա]տիպ որդիքն իւր՝ զՀախնազար բէկն եւ զԵսայբէկն, զԻլանցիբէկն եւ [զ]Քամալբէկն եւ զԱվրիբէկն եւ զգուսաթ 583ա[ր]ն իւր զԽաթունաղէն եւ զփոխեցեալսն առ Աստուած զպարոնտէր Յովհաննէսն եւ զպարոնտէր Տէրունն եւ զԹահիրն եւ զՇիրինպաչին եւ զհամեստ հարսունքն իւր՝ զպարոն Վախախն եւ զԹահուսաղէն եւ աղայ զՍուլթաննաղէն եւ զնորաբողբոջ թոռն իւր՝ զպարոն Նաղտին եւ զհարազատ եղբայրսն իւր՝ զպարոն Աաիբէկն, որ տարածամ մահուամբ փոխեցաւ առ Աստուած, եւ զԳաւզայբէկն եւ զորդին իւր զԼաւանդբէկն, զՄիրզաբէկն եւ որդին իւր զԲաղրբխանն եւ զայլ ամենայն արեան մերձաւորսն իւր՝ զկենդանիս եւ զհանգուցեալսն եւ ուղիղ սրտիւ կենդանեացն կեանք եւ առողջութիւն խնդրեցէք ի բարերար արարչն, եւ լի բերանով Աստուած ողորմի ասացէք ննջեցելոցն. ամէն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմէլիք Շահնազարն՝ զգովելի յիշխանն, զպանծալի պարոնն, յորէ յոյժ բարուք բարի եւ բնութեամբ քաղցր, զի է խիստ աղաւթասէր եւ բնութեամբն յըստակ եւ հնազանդ ամենայն եկեղեցականաց, ուղիղ ի դատաստանն եւ անաշառ ի յանդիմանութիւն, ազատ եւ որդի ազատի, յիշխանական փառաւք զարդարեալ: Զի ի նախկի զարմից սորա յորդոց յորդիս մինչեւ ի սայ հոգեւոր եւ մարմնաւոր յիշխանութեամբ տիրեալ էին յերկրիս Գեղամա, իսկ սայ կարի փառաւք ճոխացոյց բարերարս, քան զամենայն ազինս իւր մարմնաւոր յիշխանութեամբ, զի ի վերջացեալ ժամանակիս ոչ գոյր նման սորա իշխան ի ազգս հայոց, զի է յոյժ փարթամ գոյիւք եւ առատ ընչիւք, յցեալ ի պարգեւացն յԱստուծոյ ամենայն առատութեամբ եւ հզաւր յիշխանութեամբ բարգաւաճեալ, պատուեալ եւ մեծարեալ ի խրոխտ կայսերէն Պարսից՝ ի շահ Թահմազէն եւ ի շահ Խոտայրբանդայէն եւ ի շահ Իսմաիլէն եւ այլ իշխանացն այլազգաց, ի խանէ եւ ի սուլթանէ բազում անգամ փառաւք խիլեալ, որպէս ի հնումն Զաւաբաբեղ ի Դարեհէն, եւ կամաւք արարչին կարի ճոխութեամբ փայլէ ի մէջ աշխարհի: Միթէ արարիչն Աստուած պահեսցէ անկողոպտելի յիշխանութեամբ եւ բարձր փառաւք յորդոց յորդիս. ամէն: Որ ետ վերըստին նորոգել զսուրբ գիրքս ի վայելչութիւն մանկանցն Սիովնի եւ յիշատակ բարի հոգոյ իւրո եւ ծնաւղացն իւրոց՝ հաւրն պարոն Մելիքբէկն եւ մայրն իւր՝ Խաթունաղէն եւ հարեղբաւրն իւր՝ պարոնտէր Մելիքբէկն եպիսկոպոսին եւ այլ ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեացն եւ ննջեցելոցն: Որք հանդիպիք սմա կարդալով կամ արիւնակելով կամ հարեւան-

ցիկ տեսանելով, լի բերանով եւ ուղիղ մտաւք Աստուած ողորմի ասացէ՛ք մէլիք Շահնագարին եւ կողակցին Ֆախրիջահանին, եւ Աստուած ձեզ ողորմեսցի իւր միւսանգամ գալըստեանն. ամէն:

Արդ, վերստին նորոգեցաւ սուրբ գիրքս ձեռամբ վարպետ տէր Գրիգորի եւ Յովասափ անուն նորին անարժան աշակերտի ի թվականութեանս հայոց Ռ. եւ ԻԹ. (1580) ամի, ի յերկիս Գեղամա, ի գաւղս, որ կոչի Մագրա ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ |583բ| Գրիգորի Լուսաւորչին, ի դառն եւ ի նեղ ժամանակի, զի տարածամ մահ էր եւ հարկապահանջութիւն, սով էր եւ հեծելաբժութիւն եւ ամենայն կողմանց պատուհաս պատեալ է վասն ծովացեալ մեղաց մերոց, բայց յոյս գԱստուծոյ անշափ ողորմութիւն ունիմք. նայ որ ամենայնի կարող է, միթէ նայ դարձուցանէ գմեր շարն ի բարին, զպատուհասն ի պատիւ, զբարկութիւն ի բարութիւն, զցասումն ցրուէ եւ զանիծքն ի արհնութիւն փոխէ, զմեղուցեալսն ի արդարութիւն, զերեւոյն ազատութիւն շնորհեսցէ եւ ամենայն ննջեցեալսն, որ այսմ Գ. տարիս մեռան՝ թէ՛ ի սովոյ, թէ՛ ի ցրտոյ, թէ՛ ի սրտոյ, թէ՛ ի տարածամ մահուանէ, որք պատուհասակոծ մահուամբ փոխեցան աստեացս, միթէ ողորմածն Աստուած ընդ սրբոյ նահատակացն եւ արեամբ ներկեալ մարտիրոսացն դասուն դասակից եւ պսակիակից արասցէ. ամէն:

Այս յիշ-ը մասամբ տեսնաւ ձեռ. 2678, 386բ ժէ. դ., 1620ի շուրջ:

3. 585բ (1599 թ., նոտրգիր) Եաւրիս՝ ծառայ Աստուծու, գիրեցի, գիրեցի ի ժամանակին, ինչ որ մագրին// պուեստուն ասեցին, թէ կեղացիք// թվին ՌեւԸ. (1599), Գձ. միչեւ // ուլ տվիք մեք // անք եկինք դարանակս // կացինք, ով մեզ իշի, Աստուած //:

4. 418բ (1607 թ., նոտրգիր) Գրեցօ թվիս ՌԾԶ. (1607), ձեռամբ Դովկաս սուտ արեղիս:

Տես ժէ. դ յիշ-ք, Ա., էջ 254:

5. 583բ (1655 թ., բոլորգիր) Նորոգեցաւ ձեռամբ մեղսասիրի յոգնապարտի եւ թշուառակի Մխիթարի, ի ներ թուում / հազարում հարիւր եւ չորրորդում (1655), / ի վայելուջ Սուրբ Աստուածածնում, / Չարեֆայ Սուրբ անապատում, / աղաչեմ յիշել անտրտում:

6. 18ա (ժէ. դար, բոլորգիր) [Յիսուսի] Քրիստոսի ծառայ Ազարիայ:

80բ (ժէ. դար, նոտրգիր) Բարեխօսութեամբ սուրբ բազմապատիկ համօրէն ճգնաւորաց արժանաւոր աղօթիւքն Տէր Յիսուս Քրիստոս Որդին միածին, Հայրն յէ[ր]կնաւոր, Հոգին Սուրբ, ճշմարիտ Աստուածըն ամենայնի, ողորմեալ մեղաւոր ծառայիս Աստուծոյ Ազարիս: Տէր Յիսուս Քրիստոս, օգնեալ զիս:

120բ (ժէ. դար, նոտրգիր) Տէր իմ եւ Աստուած Յիսուս Քրիստոս, բազմանուէր հառաչմամբ, ձայնիւ

մեծին հօրն Պարսամու աղօթիւքն ազատեմ գերի գրաւեալս ի ձեռաց յերեւելի եւ յաներեւուտ թշնամուն մեղաւոր Յիսուսի Քրիստոսի ծառայ, մեղաւոր, տառապեալ Ազարիս: Տէր, օգնեալ ինձ:

7. 583բ (1723 թ., նոտրգիր) Ես Առաքել՝ նվաստ հոգի, մեղօք լցեալ Աստապա[ա]ցի ՌձՀԲ. (1723) թվին սուրբ Հարանց վարքըս այլազգաց գ[ե]րութենէն ազատեցի, ես եմ մեղօք լցեալ մեղաւոր ձեռ ծառայ օվ ընթերձօղ, ինձ Օհանիսի եւ հօրն իմ Մկրտաչիին եւ ծրնողացն իմ Ա. Հայր մեղայիւ ողորմէք, Տէրն Քրիստոս ձեզ ողորմի. ամէն:

583բ (1724 թ., նոտրգիր) Ես՝ Առաքել նվաստ հոգի, մեղօք լցեալ Աստապ[ա]տեցի, ՌձՀԳ. (1724) թվին սուրբ Հարանց վարքըս որ բերի՝ կարդալ, ես եմ մեղօք լցեալ եւ շանա[ր]ժան ձեռ ծառայ Յոհանիսի որդի Խաչայտուրս գրեցի, ով որ կարթայ, մին բերան ասեյ, Աստուած յուրեան գործալըն մեղքըն թողութիւն տայ եւ շնորհօքըն ամենայկալին ի դատաստանի աւուր ձեռ մեղքըն ո՛չ յիշեսցէ. ամէն. եւ ասէք Աստուած յուրեանց օձաղըն հաստատ մնացէ մինչ ի գալուստըն անխախտ եղիցի, եղիցի. թանակ լավ չէր, գրեցի:

583բ (1724 թ., նոտրգիր) Ես Առաքել նվաստ հոգի մեղօք լցեալ Աստապացի ՌձՀԳ.ին (1724) թվին սուրբ Հարանց վարքըս որ բերի՝ կարդալ, ես եմ մեղօք լցեալ եւ շանարժան ձեռ ծառայ, օվ ընթերցօվ մեղօք լցեալ Խաչայտուրս գրեցի:

8. Ա.կազմաստատ (1729 թ., նոտրգիր) Ես գրեցի Կուրեազ թվին ՌձՀԸ.ումն (1729), որ է տվեցի:

9. 585ա (1729 թ., նոտրգիր) Օվ իմ եխպարք, խնդրեմք ինձ զինչ որ թողութիւն խնդրէք յիմ Աստուածէն վասն իմ մեղացն, եւս Աստուած ձեզ թողութիւն տացէ. գրեցաւ թվին ՌձՀԸ. (1729), հոգտեմբերի ԻԵ. (25): Օվ որ խնդրէ, Աստուած տացէ, եւ թողութիւն մեղաց լինիցի, զի ով իւղիղ սրտիւ խնդրիցէ, Աստուած նորայ ողորմութեանն դուռն պացէ. ամէն:

10. 276ա (1733 թ., նոտրգիր) Ես՝ Աստապա[ա]-ց[ի] Մկրտաչի որդի Աղայվելէնց Ռհանեսուր այս սուրբ գիրքըս Գնչոյ բերի Նախայվկայի Մարգարայ վարդապետըն յերես գծէց, տվի Սուրբ Ըստանոսայ Նախայվկայի սէրն: Ով էր կառթայ, Ա. «Հայր մեղայիւ» իմ հօրն եւ մօրն Ողորմի ասի Հոգոցօվ: Այս գրումըս որչապ սուրբ կապ գրեաց, իւրեան բարեխօս լին առ Հայրն երկնաւորն եւ Որդին Միածին եւ Հոգին Սուրբ եւ Աստուած ողորմի իւրեանն, ՌձԶԲ. (1733) յունիսի Ի.ին (20). ամէն, եղիցի:

371ա (1733 թ., նոտրգիր) Յիշատակ է սուրբ գիրքըս, որ է Հարանց վարք, Աստապա[ա]ցի Աղայվելէնց Մկրտաչի որդի Ռհանիսի եւ որդոցըն, դատերացըն՝ Հոտումսիմին, Չիչակին, Արուբէնին եւ հանգուցեալ Կարապետին եւ ամենայն արեան մերձաւորացն, որ եղակ ի գրանն Սուրբ Ըստեփաննոս Նա-

խայվկային, որ լինի մերոցն հոգուն փրկութիւն: Եւ դարձեալ յիշեցէ՛ք իմ եղբարքն, որ էր հանգուցեալ Ալահվերան եւ իմ եղբարն՝ Աղայվէլին, Օվանիսին, որ էինք Դ. եղբարք: Դարձեալ յիշեցէ՛քլ մեր ամենայն արեան մերձաւորքն եւ կողակիցն մեր, Տէրն մեր Քրիստոս յիշէ զձեր՝ իւր արքայութեանն իւրում, որ եղակ դրանն Սուրբ Ըստեփանոս Նախայվկայի: Ո՛վ ընդեր-ձօվ, յիշեա՛յ զմեզ եւ դարձեալ յիշեցէ՛քլ մեր եղբարցն, որդիկն՝ հանգուցեալ Աւաքն եւ Բունիաթն, Մաթոսն, Բ. Մկրտաիչն, Զիրաֆն: Տէրն Քրիստոս ձեզ յիշէ ամէն: ՌձՁԲ. (1733) յունիս Ի.ումն (20) եղեւ: Եղիցի յիշատակ փրկութեան հոգոց մերում, իմ Օհանիս ձեռացի գիրս է այս. ամէն, եղիցի:

11. 585ա (1733 թ., նոտրգիր.) Թվին հայոց ՌձՁԲ. (1733), մայրսի ամսոյ է.ին (7) գրեցաւ ձեռամբն մեղօք լցեալ մեղաւոր եւ անարժան Յիսուսի Քրիստոսի ծառայ Ազարի: Տէր Յիսուս Քրիստոս, վասն քոյ բազումօ՛վ շարճարեացար, խաչեցար, թաղեցար, յարեար, հանբացար, վասն մօր քոյ եւ կուսին եւ վասն սուրբ խաչին քոյ ողորմեա՛յ գերելուս, ազատեա՛յ ծառայիա քոյ անքուն որթէն, անշէջ հրուն, դժոխէ տանջանքէն, սատանաին ձեռնէն, վասն քո ամենայսուրբ համօրէն սրբոց վկաիա քոյ բեռօք լցեալս, թեթեւացո՛յ մեղօք սեւացեալս, սպիտակացո՛յ մոլորեալ ոչխար (ջնջած՝ «հրամ») գտեա՛յ: Յիսուս Քրիստոս, մի՛ դարցուցաներ գերեաա քոյ ծառայէս, օ՛վ Յիսուս Քրիստոս, թողութիւն շնորհեա՛յ իմ մեղացն, ողորմեա՛յ ն[ն] շեցեալս, արա՛յ վերին յերուսաղ[էմ]ին արժանի արա՛յ. ամէն: Մ՛վ ընդերցօղ, թէ՛ կամիր կառդալ, մէկ բերան ըսն[ն] շեցեալս յիշեցէ՛ք, Տէր Աստուածըն յիշէ ըզձեզ վերին կողմանըն: Թվին ՌձՁԲ.ին (1733), մարիս ամսոյ է.ին (7) այս Հարանց վարքըս Աղաւելինց Օհանէսին էր, բերի կառդալ, կառդացի թամամ, դուս գծեցի, յիմացայ սուրբ Հարանց վարք բազում աշխատանօք գրած է: Արդարոց աղօթիւքն օգնեա՛յ զիս, Յիսուս Քրիստոս. ամէն:

586ա (1733 թ., նոտրգիր) Ես՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ, մեղաւոր եւ անարժան Ազարէս գրեցի թվին հայոց ՌձՁԲ.ին (1733), մայրսի ամսոյ է.ին (7): Գրեցաւ բարեխաւսութեամբ ԳձԿԵ. (365) հայրապետաց, ԻԴ. (24) մարգարէից, երկոտասան առաքելոց, եօթանասուն Բ. (72) աշակերտաց, համօրէն մարտիրոսաց, երկոտասան վարդապետաց, ձգնաւորաց, կուսանաց, սրբոց երկնաին զօրացն, Թ. դաս հրեշտակաց, սրբո[յն] Գրիգորի մերո լուսաւորձին, սուրբ Յօհանու Կարապետին, սուրբ ԸՍտեփանոսի Նախավկային,

սուրբ Յորա Երանելուն, սրբոց զինվորացն եւ ամենան սրբոց, որ յԱբելա մինչեւ ցայսօր՝ հիմաչց մինչեւ վախճան ժամանակիս ամենայնի աղօթիւք ողորմեա՛յ մեղաւորիս, Տէր Յիսուս, օգնեա՛յ անարժանիս, Հայր, Որդի, [Հո]՛ւի սուրբ: Մ՛վ ընդերցօղ, որ հանդիպիք ամայ կառդալով, մէկ բերան յիշեցէ՛ք մեղաւորիս// ողաց եւ դուք յիշեալ լիջիք ահեղ ատենին Քրիստոսի. ամէն:

12. 1բ (1734 թ., նոտրգիր) ՌձՁԳ. (1734) թվին, փետրվարի սկ[ի]զբն արարի ի սուրբ Հարանցս վարուց ընթերցման: Եւ ի մարտ ամսոյ Ի. եւ Դ.ին (24) աւարտ եղեւ. փծուն ծառայ Արիստակէս իբր արեղայս աղաչեմ յիշել, որ եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ՛ փրկչն մերմէ. ամէն:

13. 585բ (ժԼ. դ., շղագիր) Գիրք էր, որտեղ մնաց, այս է: Ջ. ետ գիրք, Ա. մեծ պզտիկ, Ե. շանթայ, Ա. պղանծայ փառչ, Ա. պղինձայ կոժ, Լ. թաղիք, Դ. նոհ, Բ. փառտայ, Ա. խիլիչայ, Ա. ըստ ճհայ մանիճ Ա. պուշար (պուլղուր՝), է. մանկեղ, Ա. դարապասի ճեճիմ, մեծ մուղնին, Ա. մեծ դազար, Ժ. մորթի, Ա. ճարաֆաֆան էլ, Ա. հին հոհենի ծածասգ երէին նոքայ չուր ուրբաթին սուտ քահնային վերայ տառաւ սարուրբին ժողովուրդ մոտ մանեցին նոքայ չուր գոր ուրբաթին// շատ քէէջմ ան բացելու, նոքայ ի նսարու որբաթին:

Որոշ ընթերցումներ թէական են:

14. 585բ (ժԼ. դ., շղագիր) Աստուածապաւն Աստուած պահէ ի շար աչքէ, որ զիս յիշէ իւր պատա[րա]զն:

15. 567բ (ժԹ. դար, շղագիր) Աստուած ողորմի Ք// այս//ո գիրողին:

ԳՐՁԱՓՈՐՁ 1ա՝ (նոտրգիր) «Աստուածածին սրբուհի[ի]», 583բ «Արարչագործն Աստուած, արքայն համայնից, որ ըստեղծ զարարածս», 585ա՝ (նոտրգիր) «Ես՝ Ազարէս, գրեցի: Գրճափորց է», 586բ՝ (բոլորգիր) «Հարանցրն վարք, Հայրեանց վարք Հարանցըն վարք, վարք», 586բ (նոտրգիր) «Ազառ այժին որդի Ազառի արեւելեան Արեգակն սուրբ Յոհանէս, ի տան Տեառն անկեալ»:

ՆԿԱՐԱՓՈՐՁ 492ա, 586բ՝ թռչուն:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 373ա սեւով ութնանկիւն՝ «Դանիէլ»:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած պիտակին (նոտրգիր) «Հարանց վարք / (1.) / Պիէ. (1378)», 1ա՝ «106/2680», «Պիէ. — 1378», 579ա՝ կապոյտով. «578/1129»:


2681

Հ Ա Ր Ա Ն Ց Վ Ա Ր Ք

ԺԷ. դար

Գրիճ, ՄԱՂԿՈՂ, ՄՏԱՅՈՂՎ Մարգարէ:


Թերթ՝ 504. չգրուած՝ 7ա, 485բ, 503բ-4բ: ՊՐԱԿ՝ Ա-ԽԲx12 (Ա. 14, ԽԲ 10): ՆԻԻԹ՝ թուղթ, սպիտակ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եռամանիկ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 28x20,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն (18x12). սահմանագծերը կարմրով, ենթամիատրները եւ սկզբնատողերը՝ կարմրով, կապոյտով եւ վարդագոյնով: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 300ա): ՏՈՂ՝ 30-37: ԿԱԶՄ՝ դրոշմազարդ բաց շագանակագոյն կաշի, միջուկը տախտակ, դռնակով, աստուղը շերտազարդ կարմիր կտաս:



Նմուշ 300ա

ՄՏԱՅՈՂՎԿԱՐԶՈՒԹԻՆ՝ - Աւետարանիչ՝ (կարմրագիծ ուրուանկար)՝ 7բ: Կ Ի Ս Ա Խ Ո Ր Ա Ն Ը 8ա: Ճ ա կ ա տ ա գ ա բ դ 1բ, 60ա, 70բ, 99ա, 114բ, 138բ, 146բ, 173ա, 182ա, 192բ, 230բ, 245բ, 250ա, 271բ, 279ա, 294ա, 339ա, 343բ, 353ա, 383բ, 395ա, 415բ, 418ա, 420ա, 421ա, 424բ, 486ա: Լ ի Ս Ա Ն Գ Ա Ղ Գ Ր Ո Ւ Ս Ա Կ Ի Ր Գ Մ Ի Ր, կապոյտ, վարդագոյն:

ՊՐԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ - Աւետարան ըստ Մարկոսի, ԺԴ., 57-8, 60-1, 62-34, 64-5, ԺԲ., 14-25: ԺԲ. դ.: 1 (Ա.) + 2 (Բ., Գ.): Ա՝ ստացած մէկ թերթի ընդլայնակի ծալումով եւ հատումով (առկայ է թերթի ստորին կէտը), Բ-Գ՝ մէկ թերթի ընդլայնակի ծալումով: Մագաղաթ, Ա՝ 21x27.5, Բ+Գ՝ 40x27.5, երկսիւն (Ա՝ 12.5x21, Բ+Գ՝ 26.5x21): Բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Բա), տող՝ Ա՝ 8, Բ+Գ՝ 16. գծումներ՝ ճշգրտով: Կարդալ՝ Աք «//[ոչ է]ին վկայութիւնն: Այլ՝ յարուցեալ վկայիւն ստա... գայը ձեռագործ, եւ զե[րիս աւուրս]» (ԺԴ., 57-8), «//[ոչ է]ին տաս պատասխանի, զինչ զոբա... դարձեալ Բահանայայտան հարցանէր զը[նա կրկին]» (ԺԴ., 60-1), Աա «//[նստցի ընդ աբմէ գաւորեան եւ գայցէ ընդ ամպս... զպատմունանս իւր՝ եւ ասէ]» (ԺԴ., 62-3), «//[գնա] թէ մահապարտ է: Եւ ոմանմ՝ սկսան թխանել... այն որ եհարն զեգ: [եւ սպասաւորն]» (ԺԴ., 64-5), ունի ստորին լուսանցային համաբարբառ (զոյն՝ կարմիր): Բ-Գ՝ կարդալ՝ Գբ, Բա, Գա, Բբ «//[այլ ճշմարտութեամբ գեանապարհն Աստուծոյ... եւ ոչ կանայք արանց լինին. այլ [իրեւ]» (ԺԲ., 14-25):



Նմուշ Բա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, Բերժուած, տեղ-տեղ՝ առաւելապէս Բ. փեղկը՝ թափուած. երեսում է միջուկ-տախտակը, դռնակը կծկուած, մէջի վերին եւ ստորին հիմքերը մաշուած-ամջատուած, չորսական կապիչներն ու գամերն ընկած. մնում են Ա. փեղկին՝ գամերի հետքեր, Բ. փեղկի ներսի կողմում՝ 4 կապիչների հիմքերը, Ա. եւ Բ. փեղկերի աստառներին ցեցի անցքեր. գործածութեան եւ խոնաւութեան հետեանքով գանազան բծեր, դեղին հետքեր, գրադաշտը մասամբ գունափոխուած, պատասիկ-պահպանակները մաշուած, արտաքին անկիւնները թափուած, մկնակեր. 7ա եւ 485բ չգրուած էջերին կան գրադաշտի սահմանագծերը:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. 1ա-502ա [Հարանց վարք]

Տե՛ս ձեռ. 789: Ա. 2ա-533բ: Յանկ/1աբ: 1/1բ-6բ: 2/8ա-41բ: ա/41բ-54բ: բ/54բ: գ/54բ-5ա: դ/55ա-6ա: ե/56ա-7բ: զ/57բ-60ա: յ/չիբ: Յ/60ա-70բ: Ղ/70բ-87ա: ա/87ա-93ա: բ/93ա-4ա: գ/94ա-6բ: դ/96բ-7ա: ե/97ա-9ա: Յ/99ա-113բ: ա/113բ-4ա: 6/114բ-36բ: ա/137ա-8ա: 7/138բ-45բ: ա/145բ: բ/146աբ: 8/146բ-172բ: 9/173ա-181ա: ա/181աբ: 10/182ա-90բ: ա/190բ-2բ: 11/192բ-229ա: ա/229աբ: բ/229բ-30բ: 12/230բ-43ա: ա/243ա-5ա: բ/245աբ: 13/245բ-9ա: ա/249ա-50ա: 14/250ա-67բ: ա/267բ-71ա: բ/271բ-8բ: գ/279ա-94ա: 15/294ա-306ա: 16/306բ-35բ: ա/335բ-8ա: բ/338աբ: 17/339ա-43բ: 18/343բ-53ա: ա/չիբ: 19/353ա-9բ: ա/359բ-83ա: բ/չիբ: 20/383բ-95ա: 21/395ա-402բ: ա/402բ-4բ: բ/405ա-15բ: 22/415բ-7բ: ա/չիբ: բ/չիբ: 23/418ա-9բ: 24/420ա-1ա: 25/421ա-4ա: 26/424բ-5ա: ա/425բ-7ա: բ/427ա-8ա: գ/428ա-9բ: դ/429բ-30բ: ե/430բ-3ա: գ/չիբ: յ/433ա-7բ: լ/437բ-42բ: բ/442բ-3ա: ժ/443ա-7բ: ժա/447բ-9բ: ժբ/449բ-55բ: ժգ/456ա-7բ: ժդ/458ա-62ա: ժե/462ա-4բ: ժզ/464բ-5բ: ժյ/չիբ: ժթ/465բ-9բ: լ/469բ-71բ: իա/471բ-3ա: իբ/473ա-7բ: իգ/477բ-80ա: իդ/չիբ: իե/480ա-1ա: իզ/481ա-4ա: իլ/484աբ: իը/484բ-5ա: իթ/486ա-8ա: յ/488ա-9բ: լա/489ա-90բ: լբ/491ա: լգ/չիբ: լդ/491աբ: լե/չիբ: լզ/չիբ: լճ/491բ-4բ: լը/494բ-502ա: 27ա/57բ: բ/70բ: գ/99ա: դ/114ա: ե/138ա: գ/145բ: յ/173ա: լ/181բ եւ 338բ: բ/192բ: ժ/230բ: ժա/278բ: ժբ/343բ: ժգ/353ա: ժդ/383ա: ժե/395ա: ժզ/415բ: ժթ/417բ: ժլ/442բ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

6բ Տրփացեալս եւ շաղախեալս մեղօք Մարգարէ գրիչ արտասոււթոր աջօք առ ոտս ձեր անկանի եւ միով Հնչր մեղայ-իւ յիշատակէք, ո՛հ, ո՛հ (նման՝ 181բ, 250ա, 455բ, 457բ):

192բ Ով սուրբ ընթերձողք յայսմ յատենի, լալով եւ աղերսիւ անկանիմ առ ոտս ձեր, զմեղաւոր գրիչս միոյզվ ողորմեսցի Տէրն ասէք:

502ա Քրիստոս Աստուած, բարեխօսութեամբ բազմահամբեր եւ մեծ նահատակին քո եւ աղքատացելոյդ քո ողորմեա՛ եւ ինձ՝ մարմնով աղքատացեալ եւ տնանկացեալ, գերի եւ մեղապարտ գծողիս Սուրբ հարանց վարուցըս, քո միւսանգամ զալստեանդ. ամէն:

502բ Փա՛ռք անեղին եւ անմահին, աներբ, անկէտ իսկականին, երբակի տարորոշին եւ միակի եզականին՝ Հօր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյն՝ Երրորդութեանն երրեակ անձինն, յանցեալն, յայժմոյս, յապագային եւ անսպառ յաւիտենին: Քրիստոս՝ Աստուած ամենայնի, որ անհնարն հնարաւորի, ձեռամբ անպիտան չնչին կաւի աւարտ հանեալ այսմ տառի: Որ Հարանց վարք սա յորջորջեալ, զի զվարս սուրբ հարցն պատմեալ,

գործով զանունն յինքեան բերեալ,
 քերթողաբար ստուգաբանեալ:
 Սա ցանկալի դրախտ յօրինեալ,
 ի Սուրբ Հոգոյն արմատացեալ,
 շնորհօք Հոգոյն առոյգացեալ,
 անմահական պտղով լցեալ:
 Սա գեղեցիկ ծառ [ը]նձիւղեալ,
 բազմաստեղուն վարսաւորեալ,
 որք ի սօթոյ շարին նեղեալ,
 սովաւ լիցին հովանացեալ:
 Սա քաղցելոց սեղան եղեալ,
 անուշահամ խորտիօք լցեալ,
 որ ի սմանէ ճաշակեցեալ,
 այլ յաւիտեան նա ոչ քաղցեալ:
 Սա բարեհամ աղբեր բխեալ,
 եղեմական գետոյն նմանեալ,
 որք շրոյն կենաց կարօտացեալ,
 արբեալ զսա եւ զովացեալ:
 Յոյժ քաղցրագոյն են բանք սորին,
 քան զխորիսխըն մեղուին,
 որք զճաշակ սորին առին,
 յար ընթերձամբ ոչ յագեցին:
 Դարձեալ վասն այն ախորժ թուին
 ամենեցուն բանքըն սոցին,
 զի գոր գործով կատարեցին,
 զայն գրեցին եւ ուսուցին:
 Ըստ արդիւնական գիտնականին,
 միտքն այն եւ զարդն անապատին,
 թէ բանքն քո հաւատարիմ
 գործովքն քո հաստատեսցին:
 Սա վարժարան կրօնաւորաց,
 ուսով զխաչն բարձողաց,
 եւ հրահանգիչ ճգնաւորաց՝
 ընդդէմ շարին մարտնչողաց:
 Սա վարդապետ է լուսիթեանց,
 փակ բերանոյ եւ դուռն շրթանց,
 յանդիմանիչ բամբաստողաց
 եւ լեզուազար շարախօսաց:
 Սա խորտակիչ սնափառութեանց
 եւ բարձրավիզն հպարտութեանց,
 եւ ուսուցիչ խոնարհութեանց:
 Սա սանձարկու բարկացողաց,
 իբրեւ զգազան յարձակողաց
 եւ հաստատող հանդարտութեանց
 եւ բարեմիտն հեղութեանց:
 Սա է խլիչ արծաթասիրութեանց,
 այն, որ արմատն ամենայն շարեաց
 եւ սերմանող ողորմածութեանց
 ի բարս անգուլթ եւ խստասրտաց:
 Սա փարատէ զոխ ի մտաց

եւ զնենգութիւնն նախանձոտաց,
 ուրախութիւն տա տրտմողաց
 ու արիւթիւն ծուլից անձանց:
 Սա հալածիչ է հեշտութեանց
 եւ աղտեղի մտածութեանց,
 շիջուցանող հրոյ ցանկութեանց,
 որ բորբոքի ի տես կանանց:
 |503ա| Սա զարթուցիչ ի քնոյ մեղաց
 եւ սըթափիչ ի թմրութեանց,
 զուարթացուցիչ հոգւոց աչաց,
 որք հեղուցեալն են ի զբաղմանց:
 Սա վերբերիչ ի գբոյ շարեաց,
 սղմուտ կաւոյ տառապանաց,
 եւ առաջնորդ մտին կենաց,
 յերկրէ յերկինս ընթացողաց:
 Սա զարթուցիչ մոլորելոց
 եւ հաստատիչ գայթակղելոց,
 ճար եւ հնար անյուսելոց,
 բժիշկ հոգոց անյախտացելոց:
 Որ ոք սիրով զսա ընթերցի
 եւ փափաքմամբ ընդ սա խօսի,
 սրբոցս, որ աստ յիշատակի,
 փառաց նոցին հաղորդ լիցի:
 Հոգէնորոգ այսմ տառի
 յոյժ ցանկացեալ տարփամբ սրտի,
 հոգով աղքատ դպիր ձայնի,
 եւ Մարգարէ անուն կոչի:
 ՁՏէր ողորմեայն ես հայցեցի,
 ինձ եւ իմոցն ամենայնի
 թէ որ առատն է՝ պարգեւի
 եւ ողորմած յամենայնի
 նա ձեզ եւ մեզ ողորմեսցի. ամէն:
 Փառք ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդոյ
 եւ Հոգոյն Սրբոյ, յաւիտեանս. ամէն: Աստանօր յանգ
 եղեալ կատարեցաւ տառս այս, որ կոչի Հարանց վարք,
 որ եւ պատմէ զամենայն եղեալսն յառաջնոց հարցն
 սրբոց խարազնագգեաց ճգնաւորաց, որք դիմամարտե-
 ցան ընդդէմ սայթաքողին սահեցուածոյն եւ յուղղեւո-
 րեցան զամպաշու շաւիղն երկնային: Ես՝ եղկելիս ի
 պարտաւոր եւ անպիտան, որ զանունս միայն ունիմ եւ
 ոչ զգործ, այլ ամենեւիմբ յունայն՝ Մարգարէ հոմա-
 նուանեալ, տեսեալ ցանկացայ զսուրբ գրոցս եւ բա-
 զում աշխատութեամբ ջանք եղեալ՝ թէ՛ գթութիւն նշըշ-
 տայն, թէ՛ զկոկելն, թէ՛ զվրելն ես միայն եմ արարեալ.
 ոչ ոք ունէի ի մարդկանէ օգնական, բայց միայն բարե-
 գութն Աստուած, որ ետ համբերութիւն եւ կարողու-
 թիւն, հագիւ աւարտեալ զսուրբ գիրքս ի վայելումն
 անձին իմոյ եւ յիշատակ հոգւոյ եւ ծնողացն իմոց հո-
 գեւորաց, որ բազում աշխատութիւնս ունին ի վերայ
 իմ՝ զՄովսէս կաթողիկոսն, զՆաաթա վարդապետն,

Ղուկաս վարդապետն եւ այլ մարմնաւոր ծնողքն իմ, եւ գհայրն իմ Ջուղ[այ]եցի Չափաբէ եւ մայրն իմ Մէհրիպանն, եւ մեծ մամս իմ Անապխանն, որ եղեւ ապաշխարող, Աթանասեա կոչեցաւ, եւ մօրաքոյրն իմ Լուկիայն եւ եղբայրքն իմ Միքախանն եւ Կարապետն եւ ամենայն արեան մերձաւորացն իմոց՝ կենդանեաց եւ ննչեցելոց, որոց թողցէ Քրիստոս զյանցանս նոցա՝ ասասջիք, եւ գրեսցէ զանունս նոցա ի դպրութեան կենաց, եւ զի եւ դուք արժանի լիջիք գերանաւէտ ձայնին, որ ասէ. Եկա՛յք արհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէ՛ք զպատրաստեալն. ամէն: Հայր մեր՝: Դարձեալ առ ոտս ձեր անկանիմ եւ արտասուաթոր աչօք հայցեմ ի ձէնջ լիակատար սրտիւ Ողորմի-ս ասասջիք ինձ՝ տառապելոյս. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 227ա (փակցուած էջանշան թերթիկի վրայ, ժէ. դար, նոտրգիր) /// շուխա, մէկ թօփ կտ[ալ]///, մէկ գթակ անպատճառ///, այլ եւ այլ շանեմք///: Եւ ես՝ Մարգարա վարդապետս մե/// վարդապետի իղարօւն գրե[ցի]///:
2. 504բ (1723 թ., նոտրգիր) Եւ՝ անարժան, անպիտան Պետրոս գրեցի թիլին ՌձձԲ. (1723), մարտ ամսոյ ժ. եւ Դ.ին (14). ամէն:

3. 504բ (1725 թ., նոտրգիր) Եւ՝ Աստապատեցի Ավաբի որդի, անարժան եւ անպիտան Ավետիկս գրեցի ՌձձԴ. (1725) Ապրելի Ա.ին (1):

4. 243ա (ժԼ. դ., նոտրգիր) Սուրբ հօրն Նեղոսի վասն աղօթից, թէ զհարգ արթուն եւ պատրաստ պարտ է լինել:

5. 502ա (ժԼ. դ., նոտրգիր) Յիշեցէ՛ք ի Քրիստոս գտէր Մարգարէն, եւ դուք յիշեալ լիջիք առաջի Աստուծոյ:

6. 504բ (ժԼ. դ., նոտրգիր) Եւ եւս Յովանէս դպիրս աղաչեմ առ սրբուհի կոյսն Մարիամ:

ԳՐԻՉԱՓՈՐՉ Պտուկ-պհպ. Աս՝ «Ես անարժան, ծ, կ», 195ա՝ «աբգ գրչափոր[ձ]», 504բ (նոտրգիր) Այսօր անճառ լուսոյն ծագումն / ի փրկութեան մեր կատարումն (երիցս), «Աստուած, է, որ ի ծնաւ մեծէն սրբուհոյ կուսին»:


ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած պիտակին՝ (նոտրգիր) «Վարդան վարդապետի / Հարանց վարք / (2.)», Ա. փեղկին փակցուած պիտակին (նոտրգիր) «2^ր 45, Հարանց վարք, գրեալ՝ Մարգարէ դպիր», 1ա՝ «107/2681», (կապոյտ թանաքով շղագիր) «ժէ. [դար] / Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2682

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Յ

Կ. ՊՈՒԻՍ

Թերթ՝ 76 (գրչի էջակարմ 1-42, որ է՝ 1ա-21բ, 23-71, որ է՝ 22ա-46ա). չգրուած՝ 59բ-75բ: ՊՐԱԿ՝ Ա-[է]*x10 ([է]՝ 16): ՆԻԻԹ՝ բուլթ, սպիտակ, լուսագծերով եւ լուսադրոյմներով՝ «AL MAS-SO» եւ զինանշանն, որի մէջ թագակիր արծիւ, տակը աշտարակ, զինանշանի տակ՝ «GIORMAGNANI»: ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 29,5x20: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (25x15՝ 1ա-38ա, 41բ-59ա), երկսին (24.5x15՝ 38ա-41բ): ԳԻՐ՝ շղագիր (նմուշ՝ 21ա): ՏՈՂ՝ 37-38: ԿԱԶՄ՝ ծաղկաթուղթ, միջուկը ստուարաթուղթ, մէջը եւ անկիւնները՝ կաշի. աստուղը մուգ կապոյտ, անկիւնագծերով ծաղկաթուղթ. լուսանցակողերը՝ դեղին: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա-Բ (2՝ սկ.), բուլթ, սպիտակ, չգրուած, լուսագծերով եւ լուսադրոյմներով՝ նոյն ընդ ձեռ-ի թղթի:



Նմուշ 21ա

* Դ-է. պրակահամարները գրուած չեն:

ՎԻՃԱԿ՝ բարաւար. կազմի ծաղկաթուղթը բերձուած, տեղ-տեղ՝ առաւելապէս անկիւնները՝ մաշուած-թափուած. թերթերը խունացած, մասամբ ցեցակեր, խոնաւութեան հետեւ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. 1ա-12ա Ներբողեան ի վերափոխումն ամե-նօրհնեալ Աստուածածնին ասացեալ ի Ներսիսէ [Լամբրոնացոյ], ծնողաց խոստմամբ նմին ընծա-

ՌՄՀԲ.-ՌՄՀԴ.- 1823-1825

յեալ ծառայէ – Պարտական դատիմ կուսական աւուրս տօնի... որպէս զի միաձայն երգով ի մի հանդէս պարու տօնեցուք... եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Բ. 12ա-22ա Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելոյ սրբոյն Մետրոպոլ վարդապետի մե-րոյ թարգմանչի, արարեալ ի Կորին վարդապետէ՛ յաշակեալէ նորին – ԶԱքարանագեան ազգին եւ Հա-յաստան աշխարհին... Յազկերտի որդոյ Վոսմայ եւ դպրութեանն Հայոց՝ յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն, եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն:

Ընդարձակ խմբագրութիւն. ձեռագիրս օգտագործուած չէ գիտական հրատարակութեան մէջ, հմմտ՝ Կորին, Վարք Մաշտոցի, բնագիրը՝ Մ. Աբեղեանի, Երեւան, 1941:

Գ. 22բ-38ա [Գրիգորի Սկետագոյ] Ներբողեան պատմագրաբար ասացեալ ի վարս մեծի քահանայապետին՝ սրբոյն Ներսէսի արհիպիսկոպոսին Տար-սօնի Կիւիկեցոց, ի խնդրոյ նորին համանուն եւ համագոյ Նե[ր]սէսի քահանայի – Բագու՛մ զգու-շութեան եւ արթնութեան պէտք են այնոցիկ... յորոց ամենեցունց համաձայնութեամբ ի մի բերան փառաւորի ամենասուրբ Երրորդութիւնն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Իբրև յաւելուած՝ 36բ-7բ «Բան յիշատակի մատենիս - Աստուածային մարդասիրութեամբ նախախնամութիւնն միշտ բարիոք վերակացու եղեալ... անվորով ամենայն յարուցմանց մնալով ի փառս Աստուծոյ. ամէն»:

Գ. 38ա-41բ Գեղեցկայարմար համեմատութիւնմ Հընոյ կտակարանացն ընդ նորոյս, արարեալ Վանականայ սուրբ վարդապետի - Երկինք-եկեղեցի... Եօթնասուն թարգմանքն, աստուածաբան վարդապետքն... յաւիտեանս. ամէն:

Ե. 41բ-4ա Թուղթ արքայն Դիոնիսիոսի առ Տիմոթէոս աշակերտն Պօղոսի առաքելոյն, Յաղագս մահուանն Պետրոսի եւ Պօղոսի՝ առաքելոցն Քրիստոսի - Ո՛վ աշակերտ աստուածային... Եւ մեկնելով զվարդապետական թուղթս նորա, ընդ որում եւ զպսակն առցուք... յաւիտեանս. ամէն:

Զ. 44բ Թուղթ Ստեփաննոս արքայի Վենետկայ առ տիրացու Գէորգն Պալատ[ա]ցի վասն Գ[=Ք]րիոնիկոն ճառիցն Եւսեբեայ - Ազնուամէծար եւ քրիստոսասէր սիրելւոյդ... որպէս եւ ի սոյն իսկ արդեամբք ունիմք տեսանել, ողջ լերո՛ւք: Մնամք քրիստոսասէր սիրելւոյդ աղօթարար՝ Ստեփաննոս վ[արդապետ] Ազոնց՝ արքեպիսկոպոս Սիւնեաց եւ ընդհանրական արքահայր:

Ա-Զ. նիւթերի լուսանցներում կան թանաքով եւ մատիտով արուած լրացումներ:

Է. 45ա-52ա Վճիռ Սիւնհոդոսին

45ա [Տիտղոսաթերթ] Վճիռ Սիւնհոդոսին: Պրակ, որ կոչի Հայելի ծանօթութեան, որ պարունակէ զմասնաւոր գիրս տեսան Դանիէլի հոգեւորտիր կայսերակոչ եւ ազգահրաւեր կաթողիկոսի եւ հարազատից նորին Գրիգոր պատրիարքի Կոստանդնուպօլսոյ եւ այլ ճշմարտասէր եւ բարեկարգ արեպիսկոպոսաց, ի դաւանանութենէ Դավթի Լօնեցոյ՝ որոյոյ Պօշչալոյ՝ Թիֆլիզցի անուանելոյ: Հրամանաւ իսկ վերոյիշեալ հոգեւոր եւ սրբազան պատրիարքի: Տպեալ յամի Տեառն 1802 եւ Հայոց ՌՄԾԱ. (1802) հոկտ[եմբեր] Զ.: Ի տպարանի Յօհաննիսեան Պօղոսի:

- 45բ [Նախարան] - Փրկագործ տնօրէնութեանն Քրիստոսի սուրբ տեղեաց... ամենայն ազգիս Հայոց Մեծաց եւ փոքունց՝ քրիստոսական ողջունիւ սուրբ Սինհոդոսիս մերոյ՝ յայտարարութիւն լիցի:

ա. 45բ-6ա Քննութիւն սրբազան Սիւնհոդոսին: Բան Ա. - Ուր իցեն երկու եւ երեք ժողովեալ յանուն իմ... ի յիշատակ անշնչելի յապալս ժամանակի:

բ. 46աբ Կանոն վասն ընտրութեան կաթողիկոսի: Բան Բ. - Արդ, ի սկզբան անդ խնդրեցաք զկանոնս... Եւ ոչ օրինաւոր թաղման անգամ չեն, ասէ, արժանիք:

գ. 46բ-8բ Թուղթ միաբանութեանն Սրբոյ էջմիածնի: Բան Գ. - Եւ ընդ այսց տեսաք եւ ընթերցաք... Եւ ժառանգեսչիք զաղօթս եւ զօրհնութիւնս սուրբ Լուսաւորչին մերոյ:

դ. 48բ-9ա Վնոահատութիւն մեծի Սիւնհոդոսին:

Բան Դ. - Նաեւ տեսաք եւ ընթերձաք եւ այլ բազում գրութիւնս... Եւ դիմեալ յոռոս օրինաւոր սրբազանին, գտցեն զազատութիւն ինքեանց:

ե. 49ա-51ա Կոչումն տեսան Դանիէլի ի հայրապետութիւն ի զանազան ժամանակս եւ արժանապէս օծումն: Բան Ե. - Եւ ի վերայ այսր ամենայնի դարձեալ... ամենայն բարօրութեամբ եւ անտրտում ուրախութեամբ: Ողջ լերո՛ւք. Եւ շնորհք Տեառն Աստուծոյ ընդ հոգւոյդ ձերում. ամէն:

զ. 51բ-2ա Անուանք Սիւնհոդոսի եպիսկոպոսացն եւ վարդապետաց - 1. Կարապետ՝ կաթողիկոս Աղթամարայ... 32. Մարտիրոս վարդապետ՝ միաբան Մշու սուրբ Կարապետու: Եւ այլք վարդապետք... Ի ՌՄԾԱ. (1802) թուոցս, Մայիսի ԻԸ.ին (28), ի Երեքխորան կոչեցեալ սուրբ վանք, որ ի Բագրեւան գաւառ:

ը. 52ա-3ա Թուղթ շնորհատութեան օծման տեսան Դանիէլի սրբազան վարդապետի ի լուսեան Կոստանդնուպօլսոյ եկեղեցոյս ի ՌՄԾԱ. (1802) թուոց մերում, հոկտեմբեր Ի. (20) - Աստուածընտիր արքայակոչ եւ ազգահրաւեր... գրեցաւ եւ կնքեցաւ համահաճական մահարս այս:

Հմտ. Վճիռ Սիւնհոդոսին: Բ տիտղթ. Պրակ որ կոչի Հայելի ծանօթութեան: Որ պարունակէ զմասնաւոր կիրս՝ տեսան Դանիէլի հոգեւորտիր կայսերակոչ եւ ազգահրաւեր կաթողիկոսի, եւ հարազատից նորին Գրիգոր պատրիարքի Կոստանդնուպօլսոյ, ի դաւաճանութենէ Դավթի Լօնեցոյ որոյոյ Պօշչալոյ՝ Թիֆլիզցի անուանելոյ: Կ. Պոլիս, տպ. Պօղոս Յովհաննիսեանի (Արապեան), 1802, 43 էջ:

Թ. 53ա-7ա Ի մեծի աւուր տօնի Վարդավաթին երանելոյն Մովսէսի Քերթոզահօտն ասացեալ - Լուսաւոր եւ պայծառ է խորհուրդ մերձաւոր տօնիս... գորդեգրութեանն առեալ պարգեւս ընդ թագաւորեալսն... յաւիտենից. ամէն:

Այս նիւթի տողերը համարակալուած են՝ 1-42:

Ժ. 57ա-8բ Սրբոյն Եղիշէի ասացեալ յաղագս Թափօր լերինն - Վասն լերինն գեղեցկութեան եւ վայրացն վայելչութեան... զժողով սքանչելի եղբարցն, եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւ՛:

ԺԱ. 59ա Ղազարու վարդապետի Փարպեցոյ, աշակերտի Աղանայ վարդապետի, առ Վահան՝ տէրն Մամիկոնէից: Մեղադրութիւն ստախօս արեղայից - Լուսաւորէ միշտ շնորհ աստուածային... Եւ գիտուն մարդոյ ընթերցուածոց պատուի/// (շարունակուած):

Տէս Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, էջ 183-204:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՎԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ

22ա (1781 թ.) Յետնագրութիւն այնր, յորմէ այս օրինակեցաւ. Գրեցաւ մատեանս վարդապետին Կորինի ի ՌՄԼ. (1781) թուականին հայոց, ընդ յարկաւ սքանչելի շինուածոյ լուսաձեւեալ սուրբ կաթողիկէին, որ կայ կայացեալ յԱրարատեան դաշտին, ի Վաղար-

շապատ քաղաքի, ձեռամբ Գեորգայ ուրումն անար-
ժանի, բնիկ տեղեալ Կոստանդնուպոլսեցոյ:

37բ (1691 թ.) Յիշատակարան գրոցն, յորմէ այս
ճառ եւ բան յիշատակի օրինակեցաւ. Փա՛ռք եւ գո-
հուի՞րն անբաժանելի եւ միասնական սուրբ Երրորդու-
թեանն, Հօր եւ Յիսուս Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ
անգրաւ յաւիտենիւ, որ ըստ անբաւ եւ ամենառատ
ողորմութեամբ իւրով ետ յօրինակել զսուրբ եւ զաս-
տուածային տառս սրբոյն Ներսէսի Լամբրօնագոյ՝
արքեպիսկոպոսին Տարսնի, ի յընտիր օրինակէ
տեառն Մինասայ աստուածաբան վարդապետի Ամ-
բեցոյ, որ առաքեցաւ ի տեառնէ Եղիազարու հայրա-
պետէ՝ նուիրակ Սուրբ Աթոռոյն էջմիածնի ի քաղաքս
Իստամպոլ, հաստատեցաւ առաջնորդ Սուրբ աթո-
ռոյն Երուսաղէմի նոյն աստուածաբանն վարդապետն
Մինաս, ըստ խնդրոյ ամենայն Հայաստանեայց՝ եթէ՛
յարեւելից եւ եթէ՛ յարեւմտական կողմանս, միանգա-
մայն Ամենայն տանս Հայոց, եպիսկոպոսաց, վարդա-
պետաց, իշխանաց եւ դօլվաթաւորաց, հրամանաւ
տեառն Եղիազարու սրբազան կաթողիկոսին՝ լուսաւո-
րեալ հոգւոյ, որ յայսմ ամի, օգոստոս փոխեցաւ առ
Տէր: Եւ ես՝ պիտակս եւ սպասաւոր տեառն Մինասայ
աստուածաբան վարդապետի, տեսեալ զսուրբ գիրքս
առ նա, եւ խնդրեցի ի նրմանէ, որ եւ անյազ տենչմամբ
եւ փափագանօք ցանկայի սուրբ գրոցս միշտ, որ եւ
նախախնամութեամբն Աստուծոյ գտի եւ ի խնդրելս իմ
ի տիեզերաւոյս վարդապետէն շնորհեաց ինձ զայս
աստուածային գանձս, եւ ետու յօրինակել:

Արդ, խնդրեմ մաղթելով զհանդիպողսդ այսմ աս-
տուածաբան տառիս, նախ յիշեսջիք զաստուածաբան
եւ զգերերջանիկն զտէր Մինաս տիեզերաց վարդա-
պետն Ամբեցի՝ զպատճառ գրոցս, զշնորհատուն աս-
տուածային բարեացս, ապա եւ զտրուպս՝ զստացօղըս
սորայ, եւ դուք յիշեալ լիջիք ի Տեառնէ Յիսուսէ Քրիս-
տոսէ. ամէն: Հայոց թուին ՌՃԽ. (1691), նոյեմբերի Ը.
պիտակ Կովիտաս գծագրեաց զայս:

45ա Տպեալ յամի Տեառն 1802 եւ Հայոց ՌՄՄԱ.
(1802), հոկտ[եմբեր] Զ., ի տպարանի Յօհաննիսեան
Պօղոսի:

52ա Ի ՌՄՄԱ. (1802) Թուոշս, մայիսի ԻԸ. (28)ին ի
Երեւանում կոչեցեալ սուրբ վանք, որ ի Բագրեւան
գաւառ:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

22ա (1823 թ.) Ապա եւ սա օրինակեցաւ յումեմնէ
նուսատէ զգուշաւոր բաղդատութեամբ բառից եւ կի-
տից ի Կոստանդնուպոլիս, յԱստուածամայր Աւագ
կեղեցի, ի Մարտի 12, ի 1823, մինչ էաք ի գործ
նուիրակութեան:

41բ Փառք եւ պատիւ եւ գոհութիւն Քրիստոսի
յուսոյն մերոյ, յաւիտենան յաւիտենիւ. ամէն: Այս հա-
մեմատութեան բանքս գրեալ էին ի սուրբն Սաղիմ ի
թուին ՌՃԽԱ. (1692), իսկ ի օրինակել մեր էր թուա-
կանն ՌՄՀԲ. (1823), Յունիս ամսոյ 15:

52ա Արդ, ով խղճուկ, ուստի գաս դու՝ / զինազար-
դեալ փոքու զօրու. / ի կոտորած թագաւորաց, / ու-
տեալ զամ ես այսօր ի բաց: / Չեմ ես կըրտսեր սակա-
ւաւոր, / այլ եմ հըզօր հազարաւոր:

57ա (1825 թ.) Գաղափար այսմ ճառի օրինակեալ
էր ի Ճառգրքէ իմեքէ, որ էր գրեալ ի թուականի հայոց
ՉԿԶ. (1317), ի թագաւորութեան տեառն Կիլիկիոյ Օշնի
եւ ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդ[ե]այ եւ
յեպիսկոպոսութեան գաւառին Գերջնայ եւ Բաբերդոյ
տէր Սահակայ, յորմէ եւ նորին բուն գաղափար ապա
աստէն օրինակեցաւ ի 1825, ապրիլ 12, ի Կոստանդի-
նուպոլիս քաղաքի:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած պիտակին
(նոտրգիր) «//եւ ընտիր (9.)», պհպ. Աս՝ «131/2682»,
(նոտրգիր) «Աբէլ Միսիթար[եան]», (կապոյտ թանա-
քով շղագիր) «1823-25 / Մ[ետրայ] եպ[իսկոպո]ս»,
պհպ. Աբ՝ «Լցաւ շափ ճգնութիւն սորա առ իս»:


ՆԿԱՐԱՓՈՐԶ՝ Պհպ. Աս՝ ծաղիկ:

2683

Գ Է Ո Ր Գ Ս Կ Ե Ի Ռ Ա Յ Ի , Մ Ե Կ Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ե Ս Ա Յ Ե Ա Յ

ժԼ. դար

Թերթ՝ 120. չգրուած՝ 118բ-20բ: ՊՐԱԿ՝ 1-10x12: ՆԻԻԹ՝ թուրք,
դեղնասուն, լուսագծերով եւ լուսադրոշմներով՝ բոյսակ, մէջը՝
թագ, որի տակ՝ «GIMI» շուրջը՝ երկու ճիւղ եւ յրջանաձեւ ցան-
կապատ, մէջը՝ զինուորական հանդերձով եւ սաղաւարտով
մարդ, ձեռքին՝ նիզակ, դիմացը՝ առիտ՝ կանգնած 2 քաթի վրայ,
բարձրագրած թաթին՝ սուր, վերեւում գրուած «PRO PATRIA»:
ՄԵՇՈՒԹԻԻՆ՝ 30.5x19: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն (23.5x14.5). սանմա-
նագծերը՝ կարմրով: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 86ա): ՏՈՂ՝ 50: ԿԱԶՄ՝
բաց շագանակագոյն դրոշմագարդ կաշի, միջուկը տախտակ,
աստուոր վարդագոյն գունազարդ թուրք. լուսանցակողերը՝
դեղին: Պահպանակ՝ Ա-Գ (4) + Ե-Զ (2)՝ թուրք, սպիտակ,
չգրուած, լուսագծերով եւ լուսադրոշմներով՝ թագապսակ զինա-
նշան, որի տակ՝ «GR» եւ «KLOPPENBURG». լուսանցակո-
ղերը՝ դեղին (բրոնզ):



Նմուշ 86ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին փերձուած, տեղ-տեղ՝ առա-
ւելապէս անկիւնները մաշուած-թափուած, թերթերը թանափից
մասամբ խուճացած, չգրուած 118բ-20բ էջերին կան սինակների
սանմանագծերը, ունի կարմիր էջանշան մի ժապավէն՝ երկա-
րուրթինը՝ 56 սմ, ծայրերը տարբեր տեղերում, հիմքին շկարուած-
շամբացուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Թ Ի Ի Ն

1ա-118ա Համառոտ ժողովումն Մեկնութեան սուրբ մարգարէին յեսայեայ ի լուսաւոր մեկնչացն տեառն Եփրեմի Խորհրն Աստուայ, Յոհաննու Ոսկերե-րանի, Կիւրղի Աղէսամարացոյ՝ հրամանաւ տեառն Հայոց Հէթմոյ, լուսաւոր վարդապետին Գէորգայ արարեալ

Տէս ձեռ. 1208, էջ 1ա-190բ: ն/սրբ./1աբ: ա/1բ-8ա: բ/8ա-12ա: գ/12ա-5ա: դ/15բ-6ա: ե/16ա-9բ: զ/19բ-22ա: յ/22ա-6ա: լ/26ա-9ա: լ/29ա-32ա: ժ/32ա-4բ: ժա/34բ-6բ: ժբ/36բ-7ա: ժգ/37ա-8ա: ժդ/38ա-9բ: ժե/39բ-40ա: ժզ/40աբ: ժէ/40բ-1բ: ժը/41բ-2ա: ժթ/42ա-3բ: ի/43բ-4ա: իա/44բ-5բ: իբ/45բ-7ա: իգ/47ա-8ա: իդ/48ա-9բ: իե/49բ-51ա: իզ/51ա-3բ: իէ/53բ-4բ: իը/54բ-7բ: իթ/57բ-60ա: յ/60բ-2բ: յա/62բ-3ա: յբ/63ա-4ա: յգ/64բ-6բ: յդ/66բ-7ա: յե/67բ-8ա: յզ/68բ-9ա: յէ/69ա-70ա: յը/70ա-2ա: յթ/72աբ: իա/72բ-6ա: իաա/76ա-8ա: իաբ/78ա-80բ: իագ/80բ-2ա: իայ/82ա-3բ: իաե/83բ-6բ: իազ/86բ-7ա: իաէ/87աբ: իաը/88ա-9ա: իաթ/89ա-91բ: ձ/91բ-3ա: ձա/93ա-5բ: ձբ/95բ-7ա: ձգ/97ա-100ա: ձդ/100ա-1բ: ձե/101բ-3ա: ձզ/103ա-4ա: ձէ/104ա-5ա: ձը/105ա-6բ: ձթ/106բ-8ա: կ/108ա-9բ: կա/109բ-10բ: կբ/110բ-1ա: կգ/111ա-3բ: կդ/113բ-4ա: կէ/114ա-5բ: կզ/115բ-8ա:

Լուսանցներում աղբիւրների նշումներ. Հմբ 1208 ձեռ-ում որոշ գրութիւնների բնաբանները չկան, այստեղ բնագիրն ամբողջական է, հմմտ.՝ Գէորգ Սկեւոացի, Մեկնութիւն մարգարէութեանն Եսայեայ, բնագիրը՝ Յասմիկ Բաղաբանի, խմբ.-ը՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, էջմիածին, 2010:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ

118ա Փա՛ռք անսկզբանն Հօր եւ անեղին եւ պատճառին բոլորիցս, փա՛ռք Որդւոյ անսկզբան սկսեալ ի Հօրէ անժամանակաբար, փա՛ռք եւ Հոգւոյն Սրբոյ՝ Ելօղին ի Հօրէ բղխմամբ անհատաբար, առողին Որդւոյ եւ լցուցանողին զեկեղեցի իւր սուրբ այժմ՝: Ի թվականիս հայկազեան տումարիս Չիւէ. (1298), ի հայրապետութեան տեառն տէր Գրիգորի եւ ի թագաւորութեանն Հայոց Սմբատա, որ ճշմարտիւ թագաւորեաց ի վերայ մարմաջեցուցանող եւ գունակ գունակ հեշտակարծ ախտից առաթուր կոխելով եւ գրէթէ զամենայն աշխարհական փառս նանիր եւ ունայն վարկանելով, որպէս եւ է, նա եւ զանուն թագաւորութեանն ծանր գրէր եւ նուիրէր զանձն Աստուծոյ, եւ յորով անգամ հրաժա-

րէր ի հայրենական աթոռոյն եւ գնայր աղքատանայ, գոր հազիւ մեծացան տենչիւ, ոչ կարէին յեղաշրջել զկամս նորա, եւ զայս գիպուածս Աստուծոյ ի յանձն առնեմք: Իսկ մինչ յայս էր, սիրէր գՔրիստոս եւ զեկեղեցի նորա եւ զընթերցումն Սուրբ գրոց: Սա տեսեալ զՄեկնութիւն համարձակախօս մարգարէին յեսայեայ, եւ զի մեծն Եփրեմ կարճ եւ համառօտ քաջողորակի բանիւք էր անցեալ ընդ նա, իսկ աստուածաշնորհն Յոհանն Ոսկերեան յորջորջեալ վասն հոգեշահ վարդապետութեան եւ առատահոս իմաստիցն, որ ի բերանոյ նորա բղխեալ արբուցանէր զականջս եկեղեցւոյ, եւ սա ճոխաբար խօսեցեալ: Եւ քաջ ախոյեանն ուղղափառ հաւատոյս սքանչելին Կիւրեղ ի սակաւն եւ նա խօսեցեալ:

Արդ, բարգաւաճս այս վսեմս Հէթում ի մտի եղեալ զսոսա ի մի ժողովեալ՝ զաւակ ի Սիոն զսա իւր եւ բարի նախնեացն գանձելուն, խնդրեաց զայս առնել հարկեցուցիչ հրամանաւ ի յերրերջանիկ եւ ի լուսաբան րաբունապետէ Գէորգեա, որ ընդ այսու ժամանակ առաքինութեամբ յանձին ներգործութեամբ բնաւին փարթամացեալ, որ այժմս քրտնաշան երկամբք հրահանգէ զհամբակս, որ բանի են հետեւեալ զյոլովս, իսկ սա որպէս քարոզ ճշմարիտ հնազանդեալ հարկեցուցանող հրամանին, եւ զի էր Սարգսի վարդապետի հոգացեալ, առեալ եւ զայն եւ զայլ բանսն սրբոց մեկնչացն, հանառօտ զուգեաց առ իրեարս կարճաբանութեամբ եղեալ, եւ զմտացն ամբողջ ունելով զգօրութիւն եւ գրեալ ձեռամբ իւրով, ետ նմա:

2^մ 1208 ձեռագրում այս յիշատակարանը արձանագրուած չէ, չիք նաեւ ի ժԳ. դ. յիշ-ք:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած պիտակին (նոտրգիր) «Գէորգ վարդապետի / Մեկնութիւն / Եսայեայ / մարգարէութեանն / (3.)», պհպ. Աձ՝ «154/2683», «2^մ 9/44», «ԺԸ. դ[ար] / Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ պհպ. Աձ՝ (սեւ թանաքով շրջան, դժուարընթեռնելի) «Печать Ахалцихской градской полиции»:


2684

Գ Ր Ի Գ Ո Ր Ն Ի Ի Ս Ա Յ Ի . Մ Ե Կ Ն Ո Թ Ի Ի Ի Ն Ե Ր Գ Ո Յ Ե Ր Գ Ո Յ

ՏԱՐԱԽՆ
Գրիթ՝ Պետրոս: ՍՏԱՅՈՂ՝ հայր Կիւրակոս: ԿԱԶՄՈՂ՝ Յովնան (1159 թ.):

Թերթ՝ 240: ՊՐԱԿ՝ Ե-Փx8 (Ռ, Փ՝ 4)*: ՆԻԹ՝ մագաղաբ: ՄԵՇՈՒԹԻԻՆ՝ 28x21,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսին (22x15,5): ԳԻՐ՝ ուղղագիծ երկարագիր (մմոյ՜ 114ա): ՏՈՂ՝ 22: ԿԱԶՄ՝ ծաղկաթուղթ, միջուկը սառուարթուղթ, մէջքը՝ կարմիր կաշի, անկիւնները՝ սեւ լաթ, աստաղը թուղթ, սպիտակ, չգրուած: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ, թուղթ, սպիտակ, չգրուած (Աբ, Բաբ), մաս կազմաստառի:
*Պրակահամարներն ըստ այբուբենի գրերի կարգի:

ՆԻԲ. – 973



Նմուշ 114ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի ծաղկաթուղթը ֆեռձուած, տեղատեղ՝ աւաւելապէս անկիւնները՝ մաշուած-թափուած. որոշ թերթեր նորոգուած՝ 9-10, 90-4, 177-88. թ. 90-4՝ արտաքին լուսանցները ամելիով կտրած-համած, յետագայում թղթով կարկա-

տուած-լրացուած, որոշ թերթեր խումացած (թ. 221-4), թ. 15, 97-8, 107՝ բնական անցքեր, թ. 12-3, 24, 42, 48, 132, 136, 179, 189՝ պատռուածքները բուրդով կարած, Ա-Դ. պրակներն րնկած, Ռ. պրակը՝ 4 թերթ. թ. 184-5ի եւ 188-9ի միջև րնկած երկուական թերթ, որոշ պրակներ (Մ., Հ. եւ այլն) ստացուած 3 զոյգ եւ 2 առանձին թերթերից, որոնց ծայրած երուստներ կարուածքի տակ են. բովանդակութիւնը անթերի:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. 1ա-240ա [Գրիգոր Նիսացոյ Մեկնութիւն Երգոյ Երգոց]

Տե՛ս ձեռ. 436, 70ա-122բ: (Թուղթ)/չիբ: ա/(սկ. թերի) «//[գե]ղեցկագոյն եւ Աստուած վայելչաբար բանս այս... շնորհաւք եւ մարգասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն»: բ/1ա-21ա: գ/21ա-42ա: դ/42ա-67բ: ե/67բ-91բ: զ/91բ-110բ: յ/110բ-41ա: լ/141ա-52ա: բ/152ա-75բ: ժ/175բ-84բ, 185բ-8բ (184բ «...Քանզի ի նմանէն եւ նովա. եւ ի նոյն ամենայն ով երանելի պարտի//») (2 թ. ընկած) 185բ «//այնպէս արբեցաւ մանկագոյնն Բենիամին եւ Պաւղոս...»: ժա/188բ, 189ա-205բ (188բ «...զգուռն բաց ինձ քոյր իմ մերձաւոր իմ ար//») (2 թ. ընկած) 189ա «//շեալ, եթէ այսոքիկ ուղղեսցին ըստ բանիս պատմութեան...»: ժբ/205բ-13բ: ժգ/213բ-24ա: ժդ/224ա-40ա:

Լուանցներում երբեմն (98բ, 150ա եւ այլուր) կան յետագայ գրչութեամբ սրբագրութիւններ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

240ա Ի նիԲ. (973) Թուականութեանն հայոց եւ ՉԻԵ. (972) հոռոմի Թուականութեանն գրեցաւ մեկնութիւն Երգոյ Երգոցս ի գաւառին Տարաւնոյ, ձեռամբ Պետրոսի անարժան գրչի, հրամանաւ հարս Կիւրակոսի եւ համակամութեամբ եղբարցս, վասն յիշատակի հոգւոց իւրեանց, ի ժամանակի փոխման յաշխարհէ Գրիգորի Մամիկոնեանից եպիսկոպոսի, եւ յետ մահուան նորա բազում շփոթումն եւ հակառակութիւն եղև վասն ձեռնագրելոյ եպիսկոպոս:

Արդ, աղաչեմ զամենեսեան՝ զընթերցաւորսդ, |240բ| յորժամ ընթեռնուք զլուսաւոր եւ բազմափայլ գիրսս սրբոյն Գրիգորի Նիսացոյ՝ եղբար Բարսղի, եւ լուսաւորիք եւ աւգտիք ի սմանէ ընթերցմամբ եւ կամ

գրչութեամբ, զստացաւորս սորա՝ հանդերձ եղբարբքս, յաղաւթս յիշեսջիք ի Տէր, եւ Աստուած ձեզ ողորմեսցի յիւրում զալստեանն, յորժամ զսուրբս իւր պսակէ փառաւք:

Աղաչեմ եւ ես, որ գրեցի<ա> անարժանս եւ երկնից եւ երկրի, եւ յետինս քան զամենեսեան, եւ վերջացեալս յամենայն բարեաց գործոց, եւ որ ընդ իս եղբարքս յիշատակի արժանի արասջիք զձեզ ի Քրիստոս, քանզի սովորութիւն է մարգասիրին Աստուծոյ այլովք այլոց ողորմել, եւ Աստուած զձեզ յիշեսցէ ի հանդերձեալն զալստեանն իւրում, եւ արասցէ արժանի լսել զերանաւետ զձայնն, որ ասէ. «Եկա՛յք աւրհնեալք Հարս իմոց, ժառանգեցէ՛ք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի: Եւ յաւիտենից բարութեանցն արժանի լիջիք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

124բ (բոլորգիր) Ով եղբայր, քունս կու նեղէ խիստ, եւ ժամս գիշեր է:

Տե՛ս Յովս., Յիշ-բ, էջ 125-30, 2^մ 56. հմտ. Ե-ԺԲ. դդ. յիշ-բ, էջ 61-2:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 240բ (1159 թ., բոլորգիր) Զանպիտան կազմիչ գրոցս զՅովնան յաղաւթս յիշեսջիք: Թուականս ՈԸ. (1159) էր, յորում ամի կազմեցի:

Տե՛ս Յովս., Յիշ-բ, էջ 377-8, 2^մ 183. հմտ. Ե-ԺԲ. դդ. յիշ-բ, էջ 180:

2. 236ա (ԺԳ. դար, բոլորգիր) Հաղբատա է գիրքս: 240ա (ԺԳ. դար, բոլորգիր, նոյն ձեռքով) Հաղբատա է գիրք, մի՛ ոք իշխեսցէ հանելոյ:


ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած պիտակին, նոտրգիր՝ «Գրիգորի Նիսացոյ / Մեկնութիւն / Երգոց Երգոյն/ (1.)», պհպ. Աս՝ «159/2684», (սեւ թանաքով շղագիր) «Մեկնութիւն Երգոյ Երգոց ի Գրիգորէ Նիսացոյ», (կապույտ թանաքով շղագիր) «ՆիԲ - 973 / Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս», 9ա՝ «126»:

2685

ՅԱԿՈՒՆ ԱԼԵԱՆ, ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ԵՕԹՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԺԹ. դար

Թերթ՝ 340. չգրուած՝ 38բ, 82բ, 104աբ, 170բ, 255բ, 302բ, 339աբ, 340բ: ՊՐԱԿ՝ Ա-ԻԹx12 (Ա, Ե, Զ, ԺԶ, ԺԸ 10, Թ 14, ԺԹ 11, ԻԸ 16, ԻԹ 9): ՆԻԻԹ՝ թուղթ, յուսագծերով եւ յուսադրոյնով՝ «AC» եւ 3 ծաղիկ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 29.5x21: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (21.5x14). սահմանագծեր՝ վարդագոյնով, խորագրերը եւ սկզբնատաւերը՝ կարմրով (1ա-116ա): ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 235ա): ՏՈՂ՝ 26. գծումներ՝ ենշումով: ԿԱԶՄ՝ դրոյմագարդ բաց շագանակագոյն կաշի, միջուկը ստուարաթուղթ. աստաղը ձեռագրի թղթից, չգրուած: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա (սկ.)՝ ձեռագրի թղթից, չգրուած. յուսանցակողեր՝ կապոյտ ցայտկէն:



Նմուշ 235ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, փեծուած, տեղ-տեղ՝ առաւելապէս անկիւններ եւ Ա. փեղկը՝ մաշուած-թափուած. գործածութեան եւ խոնաւութեան հետեանմով զանազան բծեր, դեղին հետքեր. չգրուած էջեր սիւնակների սահմանագծեր ունեն. 116բ էջից սկսած խորագրերի եւ սկզբնատաւերի տեղը բաց թողած՝ կարմրագրելու եւ զարդագրելու համար, բայց յետոյ շլրացուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

1ա-338բ [Յակոբայ Նալեան, Մեկնութիւն եօթն խորհրդոց եկեղեցայ]

1. 1ա-82ա Գլուխ հինգերորդ. Յաղագս փակաւնացն եկեղեցայ յերիս խնդիրս առամատեալ

ա. 1ա-7ա [Խնդիր առաջին. Յաղագս փակաւնաց] – Նախ. Զփակաւնաց... (ունի 3 պրակ):

բ. 7բ-15բ Խնդիր երկրորդ. Յաղագս ներգործութեան փակաւնաց – Նախ. Արդեօ՞ք իշխանութիւն զինքն տարածէ... (ունի 4 պրակ):

գ. 16ա-25բ Խնդիր երրորդ. Յաղագս սպասատրացն փակաւնաց – Նախ. Արդեօ՞ք հնոյ օրինաց... (ունի 6 պրակ):

դ. 25բ-31բ Խնդիր չորրորդ. Յաղագս, թէ որո՞ կարէ իրակիլ կիրառումն փակաւնաց – Նախ. Արդեօ՞ք քահանայն կարիցէ... (ունի 4 պրակ):

ե. 32ա-8ա Խնդիր երկրորդ. Յաղագս սահման նգովից եւ պատշաճաւորութեան եւ պատճառաց – Նախ. զսահմանէ նգովից... (ունի 4 պրակ):

զ. 39ա-48ա Խնդիր երկրորդ. Յաղագս, թէ ո՞վ կարէ նգովել, եւ ո՞յ՞ կարեն նգովիլ. Ի վեց պրակս բաժանեալ – Նախ. Իւրաքանչիւր քահանայ կարիցէ՞ նգովել...

է. 48բ-53ա Խնդիր երրորդ. Յաղագս հաղորդութեան նգովեցելոց: Յերիս պրակս բաժանեալ – Նախ. Արդեօ՞ք պարտ է հաղորդիլ...

ը. 53բ-7բ Խնդիր չորրորդ. Յաղագս արձակման նգովից: Յերիս պրակս բաժանեալ – Նախ. Արդեօ՞ք ամենայն քահանայ կարէ...

թ. 58ա-69ա Խնդիր երրորդ. Յաղագս ներողութեան ըստիմեան: Յերիս խնդրակս բաժանեալ – Նախ. Ներողութիւն ըստիմեան...

ժ. 69բ-73բ Խնդիր երկրորդ. Յաղագս բաշխողաց ներողութեան: Ի չորս պրակս բաժանեալ – Նախ. Արդեօ՞ք իւրաքանչիւր տան էրէց քահանայ...

Ճա. 74ա-7ա Խնդիր երրորդ. Յաղագս, թէ որոց օգնեն ներողութիւն: Ի չորս պրակս բաժանեալ – Նախ. Արդեօ՞ք ներողութիւնքն օգնեն...

Ժբ. 77բ-82ա Խնդիր չորրորդ. Յաղագս հրապարակական ապաշխարութեանն արարողութեան. Յերիս պրակս բաժանեալ, շուրջ զորով խնդրին երեք – Նախ. Ապաշխարութիւն ինչ կարիցէ՞...

2. 83ա-103բ Գլուխ վեց: Յաղագս խորհրդոյ վերջնոյ օժման, շուրջ զորով խնդրին հինգ – Նախ՝ գէութենէ եւ զկացուցմանէ նորին...

ա. 83ա-92ա [Խնդիր առաջին. Յաղագս վերջին օժման] – Նախ. Արդեօ՞ք վերջին օժումն... (ունի 9 պրակ):

բ. 92ա-5ա Խնդիր երկրորդ. Յաղագս ներգործութեան այսորիկ խորհրդոյ: Յերիս պրակս բաժանեալ – Նախ. Արդեօ՞ք վերջին օժումն օգնէ...

գ. 95բ-7բ Խնդիր երրորդ. Յաղագս սպասատրի այսորիկ խորհրդոյ: Յերիս պրակս բաժանեալ – Նախ. Արդեօ՞ք աշխարականն կարիցէ՞ զայս խորհուրդս տալ...

դ. 98ա-102ա Խնդիր չորրորդ. Յաղագս, թէ որոյ խորհուրդս տրի եւ յորում մասին մարմնոյ: Յեօթն պրակս բաժանեալ – Նախ. Արդեօ՞ք աղողջաց պարտի տրիլ...

ե. 102բ-3բ Խնդիր հինգերորդ. Յաղագս կրկնման այսմիկ խորհրդոյ: Յերկուս պրակս բաժանեալ – Նախ. Արդեօ՞ք կրկնելի իցէ...

Յ. 105ա-170ա Գլուխ եօթն: Յաղագս խորհրդոյ կարգին, որքան առ էութիւնն եւ մասունս նորին – Շուրջ զգորով խնդրի հինգ...

ա. 105ա-112ա [Խնդիր առաջին] – Որքան առ էութիւնն եւ մասունս... (ունի 5 պրակ):

բ. 112բ-9բ Խնդիր երկրորդ. Յաղագս ներգործութեան այսորիկ խորհրդոյ: Ի հինգ պրակս բաժանեալ – Նախ. Արդեօ՞ք ի կարգին տրի...

գ. 102ա-6ա [Խնդիր երրորդ. Յ]աղագս որպիսութեան կարգ առողացն: Ի հինգ պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք ի յընդունօղն կարգին...

դ. 106բ-43ա [Խնդիր չորրորդ. Յ]աղագս բաժանմանց աստիճանաց եւ նոցին գործոց ներապման կրնոց: Ի հինգ պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք աստիճանքն պարտին...

ե. 143բ-9ա [Խնդիր հինգերորդ. Յ]աղագս տուղաց այսորիկ խորհրդոյ: Յերկուս պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք միայն եպիսկոպոսն...

զ. 149բ-56բ [Խնդիր վեցերորդ. Յ]աղագս արգելմանց այսորիկ խորհրդոյ: Ի վեց պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք իզական ցեղքն...

է. 156բ-70ա Խնդիր եօթերորդ. [Յ]աղագս առակցելոց խորհրդոց կարգին: Յեօթն պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք ձեռնադրեալքն պարտին ունել...

4. 171ա-338բ [Գլուխ Ուր: Յաղագս խորհրդոյ պսակին]

ա. 171ա-7ա [Խնդիր առաջին. Յաղագս պսակի:] Ի չորս պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք իցէ ի բնական իրաւանց...

բ. 177բ-82ա [Խնդիր երկրորդ. Յաղագս խորհրդոյ պսակի:] Ի չորս պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք պսակն իցէ խորհուրդ...

գ. 182բ-6ա [Խնդիր երրորդ. Յաղագս նշանադրութեան:] Յերիս պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք զինչ է նշանադրուն...

դ. 186բ-9բ [Խնդիր չորրորդ. Յաղագս պատկանաւորութեան պսակին:] Յերիս պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք ամուսնութիւն իցէ...

ե. 190ա-5ա [հնդիր հինգերորդ. Յաղագս հաւանութեան:] Ի հինգ պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք հաւանութիւնն իցէ արարողական պատճառ ամուսնութեան...

զ. 195բ-7բ [հնդիր վեցերորդ. Յաղագս եղման:] Յերկուս պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք երբու՞մն առակցեալ...

է. 197բ-203բ [հնդիր եօթերորդ. Յաղագս բռնադատութեան:] Ի վեց պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք հաւանութիւն ինչ...

ը. 204ա-6բ [հնդիր ութերորդ. Յաղագս հաւանութեան:] Յերկուս պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք հաւանութիւնն...

թ. 207ա-15ա [հնդիր իններորդ:] Յաղագս բարեացն ամուսնութեան: Ի վեց պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք պարտի առնել պսակն...

ժ. 215ա-20բ [հնդիր տասներորդ:] Յաղագս արգելմանն պսակին ի հասարակի, ի միտմ պրակի ներսերմեալ – [Նախ.] Արդեօ՞ք արգելմունքն պսակին...

ժա. 221ա-5բ [հնդիր մետասաներորդ. Յաղագս արգելման որպիսութեան:] Ի չորս պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք որպիսութեան ծառայութիւն արգելու...

ժբ. 225բ-33ա [հնդիր երկուսաներորդ. Յաղագս արգելման ուխտի եւ կարգի:] Ի չորս պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք պարզ ուխտն...

ժգ. 233բ-42ա [հնդիր երեքտասաներորդ. Յաղագս արգելման ազգականութեան:] Ի չորս պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք ազգականութիւնն պատկանաւորապէս սահմանիցի...

ժդ. 242բ-55ա [հնդիր չորեքտասաներորդ. Յաղագս արգելմանն խնամութեան:] Ի ժԱ. (11) պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք խնամութիւնն...

ժե. 256ա-60բ [Յաղագս արգելման հոգեւոր կնիքայությունն:] Ի հինգ պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք հոգեւոր կնիքայությունն արգելու զամուսնութիւնն...

ժզ. 261ա-5ա [Յաղագս օրինական որդեգրական:] Շուրջ զորով խնդրին պրակ երեք – [Նախ.] Արդեօ՞ք զինչ իցէ որդեգրութիւնն...

ժէ. 265բ-71բ [Յաղագս հնգից մնացելոց արգելմանն ամուսնութեան – Յրատութեան, / կախարհութեան... (ունի 5 պրակ):

ժը. 272բ-80բ [Յաղագս տարածայնութեան հատառոյ... Ի վեց պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք հատառոյցեալն կարէ դաշնադրել...

ժթ. 281ա-3բ [Յաղագս կնասպանութեան:] Յերկուս պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք ի պատահման...

ի. 284ա-6բ [Յաղագս արգելման ամուսնութեան

վասն Հունիսաւոր ուխտի:] Յերիս պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք մի ամուսինն թարց կամաց միւսոյն...

իա. 287ա-99ա [Յաղագս արգելման, որ զկնի կատարելոյ ամուսնութեան առ դեպի վասն պտոնկութեան:] Շուրջ զորով խնդրին պրակի վեց – [Նախ.] Արդեօ՞ք ճահ իցէ...

իբ. 299բ-302ա [Յաղագս երկրորդ ամուսնութեան – [Նախ.] Արդեօ՞ք օրինաւոր է երկրորդ ամուսնութիւնն...

իգ. 303ա-10բ [Յաղագս մնացելոց խնդրոց ամուսնութեան:] Ի հինգ գլխոց պարունակեալ – [Նախ.] Զհատուցմանէ պարտուց...

Թէեւ գրուած է «Ի հինգ գլխոց», բայց ունի 7 պրակ:

իդ. 311ա-20ա [Յաղագս բազմակնութեան:] Ի հինգ խնդրս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք ունել զբազում կանայս...

իե. 320բ-6ա [Յաղագս երկրորդ պսակի եւ թէ կարեն երկրորդապէս պսակեցեալն զկարգ առնուլ, շուրջ զորով խնդրին հինգ – [Նախ.] Արդեօ՞ք երկուցս ամուսնացեալք...

իզ. 326բ-36ա [Յաղագս ապահարազանի գրոյն արձակման:] Յեօթն պրակս բաժանեալ – [Նախ.] Արդեօ՞ք միթէ անբաժանելութիւն պսակին...

իէ. 336բ-8բ [Յաղագս պտոնկորդաց:] Յերիս պրակս որոշեալ – [Նախ.] Արդեօ՞ք, որք ծնանին...

Նմտ. ձեռ. 400, 292ա-497բ: Լուսանցներում (61ա, 72ա եւ այլուր) կան գրչի ձեռքով արուած սրբագրումներ եւ լրացումներ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԶԵՂԻՆԱԿԻ

82ա Փա՛ռք քեզ Աստուած, զերկունս իմ որ Վասն խորհրդոյ ապաշխարութեան ի տեղի ապաշխարութեան ինձ համարել արժան տեսցես:

103բ Եւ այսքան բաւ է ի փառս Աստուծոյ՝ Վասն խորհրդոյ վերջնոյ օժման:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

340ա [Գ]ՆՅութիւն, փառք եւ պատիւ մատուցուք ամենաբաղցր, յորդազեղուն եւ անչափելի բարերարութեան Տեառն, հանդերձ օրհնութեամբ եւ աստուածավայելուչ երկրպագութեամբ եռահիւսեակ տէրութեանն եւ միասնական, անբաժանելի աստուածութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, որ ըստ իւրում անչափ գթութեան եւ անհուն կարողութեան եւ առատ մարդասիրութեանն արժանացոյց զմեզ տեսանել զաւարտումն սրբոյ մատենիս ցանկալուց, զքնաղ գիրս աստուածաբանական զեօթանց խորհրդոյն եկեղեցւոյ, զոր գեղեցկահիւս եւ վայելչապէս յօրինեաց եւ շարամանեաց երջանկափառ, երանելի սրբազան պատրիարքն Կոստանդնուպօլսոյ Յակոբ մեծ վարդապետն աստուածաբան:


ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ Պհպ. Ան (սեւ թանաքով շրջան)
 «Печ. Ахалцыхской градской полиции»:
 ԳՐԶԱՓՈՐԶ՝ Պհպ. Ան (շղագիր) «Յաղագս»:
 ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած պիտակին՝
 (նոտրգիր) «Յակոբ արքեպիսկոպոսի / Նալեան/ Մեկ-

նութիւն / եօթն խորհրդոց եկեղեցւոյ/ (4.)», Ա. փեղկի
 կազմաստառին՝ «Հ^{մր} 156», պհպ. Ան «167/2685»,
 (կապոյտ թանաքով շղագիր) «ԺԹ. [ղար] / Մ[ետրոպ]
 եպ[իսկոպո]ս»:

2686

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ, ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ՄԱՏԹԷԻ

ԹԵՐԹ՝ 109. չգրուած՝ 1ա: ՊՐԱԿ՝ Ա-Ք12 (Ա՝ 13): ՆԻԻԹ՝
 թուրք: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 27x20: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (22x15): ԳԻՐ՝
 խոշոր բոլորգիր (նմուշ՝ 80ա): ՏՈՂ՝ տարբեր 21-37 (2աբ, 3ա-
 109բ), 43 (1աբ), 48 (3աբ): ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն
 կաշի, միջուկը տախտակ. աստաղը թուրք. լուսանցակողերը՝
 կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Ք, թուրք, սովորական, դեղնաւուն,
 չգրուած:



նմուշ 80ա

ՎԻՀԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, ֆերձուած, տեղ-
 տեղ թափուած, երկուական կապիչներն ու գամերն ընկած.
 մնում են Ա. փեղկին՝ գամերի անցները, Բ. փեղկի ներսի կող-
 մում՝ 2 կապիչների հիմքերը. նորոգուած. բորբոսի, իւրի խոնա-
 տրեան հետքեր, թ. 1-30՝ ցեցի անցի, խոնաւորինից թուրք
 խոնացած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1բ-109բ [Անանիայի Սանահնեցոյ Մեկնութիւն
 Աւետարանին Մատթէի]

– 2ա-3բ, 1բ* [Թուրք ընծայական՝ Անանիայի
 Սանահնեցոյ Թուրք առ Դիոսկորոս] – [Ա]նանիայի
 Հայոց վարդապետի ի խնդրոյ հար [Դիոսկոր]ոսի,
 զոր յետոյ իմ աղաչեալ զլուսաւորիչ վար[դապե]տն
 Սարկաազ ըստ մականութեան եւ երկ[ր]որդ լուսա-
 ւ[որիչ] հայ ազ[գ]ին եւ յաղագս սիրոյն, զոր էր առ իմ
 անպիտանութիւն, [բ]ազում ջանիւ եւ աշխատութիւն
 կրեաց յաղագս այսր տառի – [Ը]նկալա գհրաման
 տեառն իմոյ հար Դիոսկորոսի... զմոլորեալս
 յարդարութիւն առաջնորդել, զԱստուած մարդկան
 անզգամոց ցուցանել, դադարեցուցանել// (մնացած

ԺԲ. դար
 10 տողը դժուարընթեռնելի. կարդացուած են միայն
 բառակապակցութիւններ)... (10րդ տող) //նմբս միա-
 սին հաւաքելոյս ասասց//... (լուսանցում) արժան ան-
 բանից գովասանաց// (վերջը՝ թափուած):

* 1բ՝ կրկնուած է 3բ էջում առկայ շարադրանքը:

4ա-10ա [Նախադրութիւն] – Մեծն յիմաստասիրաց
 Փիղովն վասն անհաս իմաստից Աստուծոյ տեսութեան
 ոչ միայն յիւրոց մտաց, այլ եւ յայլոց հնագունից... զոր
 Մաթէոս գրեաց եբրա[յ]եցւոցն յաւել իւրում այսպէս:

10ա-109բ [Մեկնութիւն Մատթէի] Գիրք լինելոյ
 Յիսուսի Քրիստոսի՝ որդոյ Դաւթի – Այսու փոքր բա-
 նիւ փակեաց զբոլոր խնամս... այլ ինքն է աղբիւր
 բարութեան*// (վերջը՝ թափուած):

* Ձեռագիրս՝ որպէս հիմք օգտագործուած է հետեւեալ
 տպագրի մէջ. Անանիա Սանահնեցի, Մեկնութիւն Աւետարանին
 Մատթէի, աշխատասիրութեամբ՝ Յակոբ Քէոսէյեանի, Սուրբ
 էջմիածին, 2007: Տէս նաեւ Յ. Ա. Անասեան, Հայկական
 մատենագիտութիւն, հտ. Ա., Երեւան, 1959, էջ 776-7:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 2ա սեւով բոլորակ՝ «Печать Ахал-
 цыхской градской полиции»:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած պիտակին,
 նոտրգիր՝ «Անանիա// Սանահնեցի [մեկնութիւն]//
 11.//», Ա. փեղկի կազմաստառին՝ «178/2686, 171/
 75»: 1բ (ԺԹ դ. վջ., շղագիր) «Այս թուղթն աւելորդ է»,
 2ա՝ «ԺԲ. ԺԳ., Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս», 6ա՝ կարկա-
 տան թղթի վրայ՝ «Ճշգրտաբատակ նմանութեամբ», Բ.
 փեղկի կազմաստառին՝ (Բ. դար, շղագիր) «Եւ զարին
 դըրախտն, զոր կորուսաք ի ձեռն Ադամածին կողին,
 կուսածին Ադաման վերըստին առցուք: Պասքաքանց
 ծարաւեաց ի յարբումն»:

2687

ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐԶՆԿԱՅԻՈՅ -
 ԾՈՐԾՈՐԵՑԻՈՅ ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷԻ


ԱԻԱԳ վանք (Երզնկա)*

ԳՐԻԶ՝ Մովսէս արդյ.: ՍՏԱՅՈՂ՝ Յովհաննէս Համշէնեցի:
 ԹԵՐԹ՝ 394+1-1. (կրկն.՝ թ. 2, թոխ՝ թ. 263-5): ՊՐԱԿ՝ Ա-
 ԼԳ12 (Ա 10, ԺԳ, ԺԵ 11, ԼԳ 2): ՆԻԻԹ՝ թուրք: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 27x
 18: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (20x12.5). խորագրերի սկզբնատողե-
 րը՝ մուգ եւ բաց կարմիր: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 107ա): ՏՈՂ՝ Յ1:
 ԿԱԶՄ՝ շագանակագոյն դրոշմագարդ կաշի, դոնակով եւ 2 կա-

ՁԻԵ. – 1476

պիշով, միջուկը տախտակ, աստառը կապոյտ կտաւ. լուսանցա-
 կողերը կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա-Բ. (սկ.), թուրք, լուսագծերով եւ
 լուսադրոշմով՝ սրտաձև շրջանակ, մէջը՝ խաչ, չգրուած (Աբ, Բաբ):


* Գրչութեան վայրը՝ ըստ Լ. Խաչիկեանի՝ ԺԲ. դ. յիշ-բ, Բ., էջ
 410, 543-4:



Նմուշ 107ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Կ ի ս ա խ ո ռ ա ն՝ 1ա: ճ ա կ ա - տ ա զ ա ր ղ՝ 50ա: Լ ու ս ա ն ց ա զ ա ր ղ՝ բուսական (1ա, 3ա): 2 ա ր ղ ա զ ի ր՝ հանգուցազիր եւ կենդանագիր՝ 1ա, թոչնագիր՝ 3ա, Գ՝ մէջ մարդկային դեմք՝ 50ա: Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, կանաչ, նարնջի, բայագոյն:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան Յովհաննու, Զ. 32-46: Թ. դ.: 2 (Գ., Դ. վրջ.) ստացուած մէկ թերթի բնդայանակի ծայու- մով: Մագաղաթ, Գ+Գ՝ 27x26.5. սկզբնական ամբողջական թեր- թից 7 սմ-ով պակաս՝ ստորին մասը. գրադաշտը վնասուած 1 սողի չափով: Երկսին (24.5x22.5): Բոյրագիծ երկաթագիր (նմուշ՝ Գա), սող 16 (երկու էջը միասին): Կարդայ՝ Գա, Գբ, Գբ, Գա՝ Գա-Գբ (1-ին սինակ) «//յերկնից գեղմարիտ: Զի հաց յԱս- տուծոյ է... եւ ոչ հաւատայք: Զամենայն գոր» (Զ. 32-7), Գա-Գբ (2-րդ սինակ) «//եկեսցի, եւ որ գայ առ իս, ոչ հանից արտաք... յարուցից զնա յաւուրն յետնումն» (Զ. 37-40), Գբ-Գա (1ին սին- ակ) «Այս են կամք հար իմոյ, զի ամենայն... զիտեմք զՀայրն, իսկ արդ՝ զհարդ ասէ» (Զ. 40-2), Գբ-Գա (2րդ սինակ) «Եթէ ես յերկնից իջի: Պատասխանի ետ Յիսուս... իբր ոչ եթէ զՀայր՝ ուր[ով]» (Զ. 42-6):



Նմուշ Գա

ՎիճԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, ֆերձուած, տեղ- տեղ՝ առաւելապէս անկիւնները մաշուած-թափուած, երեւական կապիչներէից 1ն ընկած. մնում են Ա. փեղկին՝ 3 գամերը, Բ. փեղ- կի ներսի կողմում՝ 3 կապիչների հիմքերը, լուսանցակողերի կարմիրը թափուած. նորոգուած, գործածութեան հետեւանձով զանազան բծեր, մովի եւ իւրի հետեւ, մասնատրապէս վերին եւ ստորին լուսանցներում՝ խոնաւութեան հետեւ, վերին լուսանց- ներին՝ ցեցի անցներ (թ. 161-87, 246-51, 284-357). թ. 49-50՝ ստորին լուսանցները 3.5x18 չափով եզրահատուած, գրադաշտը անվնաս, էջ 143թ. 144ա՝ թանաքաբծեր, թ. 306՝ ստորին լուսան- ցը պատռուած, թ. 8՝ կարուած թ. 9ից յետոյ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

– 1ա-394բ [Ներսիսի Շնորհալոյ եւ Յովհաննու Երզնկացոյ Շորձորեցոյ Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի]

Տէ՛ս ձեռ. 1279, 12ա-339բ: Ընծայական/1ա-2դ: ա/3ա- 10ա: բ/10ա-7ա: գ/17ա-27ա: դ/27ա-37բ: ե/37բ-65բ: զ/65բ- 89բ: է/89բ-100ա: ը/100ա-11բ: թ/111բ-23ա: ժ/123ա-40բ: ժա/140բ-9բ: ժբ/149բ-66ա: ժգ/166ա-81բ: ժդ/181բ-90ա: ժե/190ա-7ա: ժզ/197ա-206ա: ժլ/206ա-22ա: ժր/222ա-34ա: ժբ/234ա-48բ: ի/248բ-61ա: իա/261ա-83բ: իբ/283բ-95բ: իգ/295բ-305բ: իդ/305բ-23բ: իե/323բ-38բ: իզ/338բ-65ա: իէ/365ա-82բ: իը/382բ-94բ «...անդամք նեխեալ եւ տիկ պա- տառատուն հնացեալ շարութեանն գործովք» (Վերջը՝ թա- փուած. ընկած 1 թ.):

Լուսանցներում կան սրբագրումներ եւ յաւելումներ: Տէ՛ս Ներսէս Շնորհալի, Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի, Կ. Պոլիս, 1825:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Տ1բ Զհեզահոգի եւ զանյաղթ փիլիսոփայն՝ զմեծ հեռետորն Յոհաննէս Շորձորեցի, որ զսուրբ մատեանս մեկնեալ շնորհեաց բանասիրաց մանկանց Սիօվնի, յի- շեաշիբ ի Տէր:

Ընդ նմին եւ զստացաւղ աստուածաշունդ սուրբ մատենիս՝ զարի եւ զքաջ հեռետորն՝ զհեզահոգի եւ ամենայն առաքինութեամբ զարդարեալն զՅովաննէս զարհի եւ զմեծ ռաբունին զՀամղէնեցին աղաչեմ յիշել ի Տէր: Եւ զգծող սմին զսիրասնունդ զաշակերտն իւր զՄովսէս աբեղայն առնել արժանի յիշման: Ի թվակա- նութեանն ԶԻԵ. (1476):

Տէ՛ս ԺԵ. դ. յիշ-ք, Բ., էջ 410:

146բ Զգծողս յիշեա՛, աղաչեմ (նման՝ 117ա, 181բ):

193ա Զմեղաւք մեռեալս յիշեա՛, աղաչեմ (նման՝ 149բ, 176ա, 224բ):

254ա Զմեղօք մեռեալս գծողս յիշեա՛, աղաչեմ, ո՛վ սուրբ ընթերցող եւ լսաւդ:

271ա Զգծողս յիշէ՛ (նման՝ 352բ):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1ա (1797 թ., նոտրգիր) Թվին ՌՄՆԶ.ին (1797), յունիսի ժԱ. (11), ի յաւուրն Ե.շաբաթի եղև նոր սկսեալ մահ ի քաղաքն Սալմայ Զորոյ, որ մակադրեալ Բաղէշ կոչի. եմք ծնեալ եւ սնեալ ի վանս Սրբոյն Յո- հաննու, որ մակադրեալ Ամբոյ յորջորջի: Սա անդ- րանիկ գոլո[վ] ի մէջ քաղաքին եւ բարձր, քան զԵրի- ցունց վանս, որք են ի գաւառի կրթարան եւ վարժա- րան: Այս մինն միայն գտանի շինեալ ձեռամբ Բասիլի քաջ ռաբունապետի, որ եւ եգիտ սա զարհեստն ար- տաքնոց: Եւ որ ոք հանդիպիք այսմ մատենի, յիշեցէ՛ք ի Քրիստոս զքաջ ռաբունապետքն զԲարսեւիս եւ զՎար- դան հանկուցեալ վարդապետք, որ եւ բազում երախ- տիս արարին սրբոյ տանս եւ հանգեան խաղաղու- թեամբ ի Տէր: Եւ ի յայսմ ժամանակիս՝ ի յաշորդու- թեանն սրբոյ տանս տէր Գրիգոր արքեպիսկոպոս եւ հոգեւոր ծնօղն իմ Գրիգոր վարդապետն այլ եւս լու- սաւորեաց զսուրբ տունս. եւ Աստուած լուսաւորեսցէ զիւր ննջեցելոց հոգին. ամէն: Զեռամբս մեղսամած Վարդանիս:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ պհպ. Բա՛ սեւով բոլորակ՝ «Печать Ахалцихской градской полиции»:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած պիտակին, նոտրգիր. «Ներսիսի Շնորհալոյ / Մեկնութիւն Մատ- թէոսի / Աւետարանին / (1.)», պհպ. Աա՝ «180/2687», «ԶԻԵ. - 1476, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս», պհպ. Բա՛ «- 171/12.», թ. 248ա-ին փակցուած էջանշան թերթիկին (նոտրգիր) «Սէխն Թէղուօցի է»:

2688


ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԵՐՈՒՍԱԳԵՄ (Սուրբ Փրկիչ վանք)

ՌՃԼԸ. – 1689

ԳՐԻԶ, ՄՏԱՅՈՂ Յակոբ արեղայ:

ԹԵՐԹ՝ 184 (գրչի կշակարում Ա-ՅԿԸ, որ է 1ա-184ա). չգրուած՝ 184բ: ՊՐԱԿ՝ 1-15x12 (15՝ 16): ՆԻԻԹ՝ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ բուսական զարդանախշ: ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 28.5x20: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսին (22.5x14.5): Խոտագերը՝ կարմիր եւ վարդագոյն: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 172ա): ՏՈՂ՝ 45: ԿԱԶՄ՝ ծաղկաթուղթ, միջուկը ստուարաթուղթ, մէջք մուգ շագանակագոյն կաշի. աստար թուղթ, լուսագծերով, չգրուած. լուսանցակողերը՝ դեղին: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1 (Ա)+1 (Բ)՝ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ «F F A», չգրուած, մաս կազմաստառի:



նմուշ 172ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Զ ա ռ դ ա գ ի բ՝ հանգուցագիր, թոչնագիր (78ա), Գ՝ մէջք մարդկային դէմք՝ 37ա, Զ՝ մէջք մարդկային դէմք՝ 54ա, 71ա, 108բ, 164բ, Օ՝ մէջք մարդկային դէմք՝ 156բ: Գ ո յ ն ե ռ՝ կարմիր, վարդագոյն:

ՎԻՃԱԿ՝ բարաւար. կազմի ծաղկաթուղթը բերձուած, տեղ-տեղ՝ առաւելապէս անկիւնները եւ Բ. փեղկը մաշուած-թափուած, մէջքի կաշին մաշուած, վերին եւ ստորին եզրերը մասամբ անջատուած. նորուցուած, գործածութեան եւ խոնաւութեան հետեւանով զանազան բծեր, դեղին հետեւեր, ձեւագրի համարեա բոլոր թերթերի ստորին լուսանցներում ցեցի անցեւեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1ա-182ա Սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի հայրապետի Մեկնութիւն Աւետարանին, որ է Յովհաննու

ՏԵՆ ԱՆՈՒ. 1347, 1ե-422բ: Յանկ/չիբ: Նախերգանք եւ Յորդորմունք/1ա-2բ: 1. 2բ-95բ [Գիրք առաջին] ա/2բ-5բ: բ/5բ-9ա: գ/9ա-12ա: դ/12ա-3ա: ե/16բ-19ա: զ/13ա-4ա: յ/14ա-6բ: լ/19ա-20բ (ձեռ. 1347ում միատրների համարների թիւիչը ը-ժ.): ժ/20բ-2ա: ժա/22ա-4ա: ժբ/24ա-5բ: ժգ/26ա-7բ: ժդ/27բ-9բ: ժե/29բ-31բ: ժզ/31բ-4ա: ժէ/34ա-7ա: ժը/37ա-8ա: ժր/38ա-40ա: ի/40ա-2ա: իա/42ա-4ա: իբ/44ա-6ա: իգ/46ա-8բ: իդ/48բ-50բ: իե/50բ-2ա: իզ/52ա-4ա: իէ/54ա-6ա: իը/56ա-8ա: իր/58ա-60ա: իւ/60ա-3ա: լա/63ա-5ա: լբ/65ա-7ա: լգ/67ա-9ա: լդ/69ա-71ա: լե/71ա-2բ: լզ/72բ-4բ: լէ/74բ-8ա: լը/78ա-81բ: լր/81բ-3բ: լա/83բ-5բ: լաա/85բ-8ա: լաբ/88ա-9բ: լազ/89բ-90բ: լադ/90բ-3ա: լաե/93ա-5բ: 2. 95բ-182ա [Գիրք երկրորդ] ա/95բ-9ա: բ/99ա-100բ: գ/100բ-2բ: դ/102բ-5ա: ե/105ա-6բ: զ/106բ-8բ: յ/108բ-10բ: լ/110բ-3ա: լա/113ա-4բ: լաբ/114բ-6բ: լազ/116բ-8բ: լադ/118բ-21բ: լաե/121բ-4ա: լազ/124ա-7բ: լաե/127բ-30ա: լազ/130ա-2բ: լաէ/132բ-4բ: լաը/134բ-7ա: լաը/137ա-9ա: լաի/139ա-41ա: լաա/141ա-3ա: լաբ/143ա-4բ: լազ/144բ-6ա: լադ/146ա-7ա: լաէ/147ա-9ա: լազ/149ա-51ա: լաէ/151ա-2բ: լաը/152բ-4ա: լաբ/154ա-6բ: լա/156բ-8ա: լաա/158ա-60ա: լաբ/160ա-2ա: լազ/162ա-4բ: լադ/164բ-6ա: լաե/166ա-7բ: լազ/167բ-9ա: լա/169ա-72ա: լա/172ա-4ա: լա/174ա-7ա: լա/177ա-8բ: լաա/178բ-80բ: լաբ/180բ-2ա:

ՏԵՆ ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ, Կ. Պօլիս, 1717:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԹԱՐԳՄԱՆԶԻ

95բ (1117 թ., նոտրգիր) Արդ, որք ընթեռնոյք կամ

գաղափար դնելով փարթամանայք ի ճոխ եւ յանպատու մեծութեանցս, յաստուածային գերունակ իմաստիցս, յիշեցցիք ի Քրիստոս Յիսուս զաշխատողք սուրբ կտակիս, նախ զսրբազան սուրբ Կիրակոս վարդապետն, որ բազում աշխատութեամբ եւ ըղձափափագ տենչմամբ ի յունականէն քերթողական արուեստի թարգմանեալ ի հոյ բարբառ եւ գիր:

182ա (1117 թ., նոտրգիր) Փառք անեղի եւ անմահի, անըսկիզբն եւ անվախճան արարչի եւ համագործողի միասնական եւ անբաժանելի սուրբ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. յաւիտեանս յաւիտենից. ամէն: Յիշատակարան գրոցս ըստ պատշաճի յանգման. զաստուածպետական բոլոր գոյութիւնն, թէ զի՞նչ երբէք իցէ առ ի յասացելոցն օրհնաբանի, գեր զբան եւ անհաս ի մտաց իմանալեացն եւ ի մարմնաւորացն, իսկ զնոյն բարերարութիւնն որոշեալ եւ յայտնեալ ըղձափափագ աղօթիւք ձեռնարկելի է մաքուր մտաց սրբոց ասելով: Երրորդութիւն գերագոյ, գերագոյնդ Աստուած, եւ գերագոյնդ բարութիւն, քրիստոնէից վերատեսուչ, յաստուածայնոյ իմաստութեանն ուղղեա՛ զմեզ, ի խորհրդականացն ասացելոց, գերածանօթ եւ գերաճաճանչ եւ ծայրագոյն գագաթն, ուրանօր պարզքն եւ արձակք եւ անփոփոխելիք աստուածաբանութեանն խորհուրդք՝ ըստ գերալուսութեան ծածկեալ թաքնախորհուրդ լուսութեանն մի գոյ, բայց մեզ ըստ իրիս առաջի կացելոյ ի զբաւ զօրեղիս՝ աստուածախօս տառիս՝ գոհութեամբ զամենալոյս աստուածպետական յառաջ ճանապարհացն զգործս արհնաբանելի է: Վասն զի լոյսն փառաց Հօր՝ էական ինքնաբուն է միութիւն, գերակատար ծայրալուսութեամբն, կատարողական տեսակ բարի, ի նիւթի ոչ տեսակ մերովս արարչապետութեամբ տեսակ, զմերս բացերեսաւորեալ, անխառն յամենից եւ մօտ առ ամենասին, եկեալ խոնարհութեամբ ի մարմնի միացեալ, որով կատարեալ զտնօրինականսն եւ վերստին արարչագործեալ զազգս մարդկան ի փառս արհնաբանութեան երրորդական դասուց, որով ընտրեալ զընտրեալսն ի սկզբանէ կենարար բանիւն եւ զօրութեամբ մեծապայծառ լուսազգեաց սարսեալ, փառակարգ է ի փառազնատեսակ կառուցման ի հոյլս ժողովրդոց զլուխս, որոց եւ զաստուածածանօթ զաստուածագործ անուն վերակոչեալ առաքեալս ինքեանն պարգեւատուի, առաքեցելոյ փոխանորդս կացուցանէ, խոստովանալով աւետօք զգալուստ ի նոցա աստուածպետական հոգւոյն:

Արդ, նորք զօրացեալք ի Բանէն աստուածագործ Հոգւովն լցեալք, տախտակք աստուածագիրք եւ ար-

ձանք բանաւորք, աստուածատեսակք եղեալ, լուսոյն ճշմարտի կայարան գտեալք եւ թագաւորեալք ի լոյս ընթացան՝ լուսով ընդ տիեզերս, արեգակունք արդարութեան եղեալ աստուածային կենարար Բանին |182բ| եւ աստուածագործ նորոգատուր Հոգւովն լըցին զընդհանուրս, հալածեցին զխաւար եւ բարձին զմոլութիւն յաշխարհէ, փախուցին զժանտն սատանայ ամենայն շարագործ դիւօքն, փշրեցին զպատկերսն սատանայի, զոր պաշտէին մարդիկ եւ զճենճերս շարաւահոտս՝ գարշելիս երեւցուցին, սրբեցին զամենայն տիեզերս ի մեղաց, ստացան մարդկան հոգի եւ միտս նորս եւ մարմինս ժուժկալ եւ անմեղ, եւ միանգամայն ասել՝ զերկիրս երկին արարին եւ զմարդիկ ընդ հրեշտակս խառնեցին՝ գործելով զմեծամեծս, քան զոր փրկիչն արար յաշխարհի ըստ նորուն խոստմանն:

Եւ եւս առաւելեալ անունակիրն անօթն ընտրութեան, քան զամենեսեան ի գործս եւ ի բանս, յարեւելս եւ յարեւմուտս, ի հիւսիս եւ ի հարաւ, ընդ ամենայն տեղիս ելից զԱւետարանն, վասն որոյ եւ երանելի աւետարանիչս աստուածաբան Յովհաննէս՝ մականուանեալ ի փրկչն Որդի Որոտման, գեր զբնաւս եւ զյաւիտեանս անցեալ որոտալիր հնշմամբ ի հայրականն սրտէ առեալ, Հոգւովն քննող զխորս Աստուծոյ զանձան իմանալեացն եւ զանգիտելին բոլոր սեռի բանականացն, ելից գոշմամբ զերկինս եւ զերկիր, զերեւելիս եւ զաներեւոյթս, որով ծանոց ամենայն ընդհանրական եկեղեցւոյ զսկիզբն եւ զպատճառ փրկութեան ամենեցուն: Զորոյ զհանգամանս ի սոյն սուրբ տառիս է գիտելի համօրէն աստուածասէր անձանց, որ կամին զկեանս իւրեանց գտանել, եւ հանդիպին սմա սիրով եւ աղօթիւք առ Տէր՝ բանալ զաշս սրտի: Ուստի եւ երանելին Յոհան Ոսկէբերան՝ հետեւօղն առաքելոց, զվարդապետական գործ ի ձեռն առեալ, որ համազօրցս ընդ բնաւ աստուածախօս տառս Աւետարանին խաղացեալ զայ: Ըստ որում եւ Տէրն ի վերջնում տնօրինական ժամանակիս զուսուցչապետականն առնլով յանձն մակարեալ անուն թէ եմ իսկ, զորոյ զձեւ բերեալ յինքեան սորա, լոյս ի լոյս յաւելեալ աղբիւրաբար բղխեալ, ընտ զընդհանուր եկեղեցիս ուղղադաւան հաւատացելոց, մաքրելով զոգիս ամենեցուն ի քրէական ծանունց ծառայականաց, որով աստուածայօրս ի զօրս աստուածատես արժանացաք, անձան դիմաց քատակիւ հասանել, գեղապատիւ գաղափարութեամբ առ սարսափելին ներմարդութեամբ, անզատ խառնութեամբ միաւորիլ, որում աստուածաբանս բանին աներեւակի կրական զմերս ցուցեալ փառօք փանաքիս այսմ, տաղտկալի եւ քակտելի տաղաւարիս, տարան եւ կենդանետղ գտեալ լիապատար հոգւով ոգեալ զերեքսրբեանն արհնաբանութիւն:

Վասն որոյ եւ ես՝ վերջացեալս ի գործառնութենէ երկասիրութեան ժամանելոցն ի գործս եւ ի բանս

աստուածատուրս, տարտամ հետեւողս աշակերտութեամբ քեզ, ո՛վ Տէր իմ, Տէր՝ աստուածակիր լուսափայլութեամբ լցեալ Յոհան եւ տեսեալ զքոյսդ աստուածունակ պայծառութիւն եւ ծիանածաւալ ծաղկազուարճ երանգախումբ իմաստայեղձ գիւտս բանի, զարթուցեալ եւ սթափեալ ի դանդաղմանէ եւ ջանիւ մեծաւ եւ անկիրթ արհեստիւ, բազում տաժանմամբ աշխատեալ, վերըստին ստացալ զքեզ զբաւորութեամբ, քանզի շնորհեալ շահատակունն ի խոյզս մանրորոն, սիրակարկաշ սաղապս իմաստութեան, խնդիր արանց աստուածարելոց, զի ի խնդիրս երկասիրաց ցանձ առկայեալ կա կուտակս գաղտակրականն մարգարիտ, որ է նոյն ինքն բան, բանատու բերան բացուողաց եւ ընկալողաց, զհոգի կենդանախարուկիչ, զի սա է պանծալի պատուականութիւն, յորմէ յորդորմամբ յառաջատածի բերկրական խրատ եւ բանալի ականջաց սրտի: Ասաց, որ ասացն. Ստացի՛ր զիմաստութիւն եւ զհանձար եւ զբեա՛ ի սեամս սրտի եւ արկեալ մանեակ սափերական, փառս փայլակիրս եւ գեր զմեծութիւն հանուրց, քան զհոսանս ոսկւոյ, որ եւ պատէ պետականան զշաւիղս, ուղեւորեալ անսայթաք զարքունականն անստերիւր հորդել պողոտայ եւ զականակիտն սրբամաք[ու] շափիղայի ի գոյն վճիտ սառնատես պետին պատուանդանին աննկուն կարկառէ տեսումն եւ ճրագ ճերտոտաց դիմաց դիմառնութիւն դնէ, սլացմամբ սարսափելեալ սօսինաթաք սաւառնելոցն, քառիցն հակակայից ընդ լրծակցութեամբն ներշքանապտոյտ պակուցմամբն ահեղասպա գնդին, երիւք եռանկեան թեւօքն պարածածկութիւ ի թնդմանէ առ նոսայն, թերաքամ գիտնականութեամբն եղեալ եւ լենդացեալ պարին պակչելեալ յորոտս ցանկասփիւռ տոփականութեամբն, բազմաբերձն ձօնիւք աշացն յանհունն, անշունչ շարսն շրտուցեալ, ջանան անջն[ջ]ելի զհայեցուածսն կացուցանել հանդէպ կանոնի վերտառութեանդ գիւտի, ուստի եւ զանգիտանալն խոստովանաբար բերէ բանն բարեբանական ասել՝ Աւրհնեալ են փառք Տեառն ի տեղւոջէ իւրմէ:

Զայսոսիկ գերագանց լրութիւն ընուս յայնցանէ յանտեսութենէ, ո՛վ աստուածաշարժ հայր մեր եւ ուսուցիչ հանուրցս Յոհան, քանզի դու |183ա| հոգիակորով կարեկցեալ մերումս ախմար արհեստականութեանս եւ տեսութեան սուրբ եւ փառագուարճ, նմանեալ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ նորին աշակերտացն, զորոց զգործս ի ձեռն առեալ եւ բացեալ՝ ետուր մեզ, եւ ամենայնիւ նորոգելով զբնութիւնս մեր՝ հրեշտակարօնս արարեալ վերաթոխչս կացուցեր, նոյնպէս տեսակաւորեալ գերահրաշափառ ունակութեամբ զբազմացն հանդիսացար կարգս, ուղղածեցար ի յաջորդումն նախաթոռոցն, ազգապետել քահանայապետութեամբ եւ սաւառնելոցն հնշմանց զկցորդութիւն արհնաբանութեանցն, առբերելով փողագոշ երգս, զի

զգո՞վեստականն քո առ աստուածութիւնն, ուղղափառ հաւատո՞ք եւ բանքդ քո վերառոյցէ ի հանդիպումն երեսացն Աստուծոյ, եւ քո բազկատարած աղօթաբուղիս պաղատանօքդ, զստորանկեալս յոտս քո վերամբարձեսցես ամենաթագաւորին Աստուծոյ:

Վասն որոյ աստանօր անդլակի յարկացոյց ի քարոզ ճշմարտութեանն, բան տեսողացն, ահա ժամանակ հաճելութեան, ահա օր պարագատօղ, ի հանդիսական մրցարանումս բերձաբերիլ ի ստորեւ կենացս, ընդ երկնաթռիչսն հանդիպիլ դաս սրբազանս կառուցանել իմոյ անձինս վարս, նմանել արքայազուն բանակացն գործակցօղ, յարատիպ գոլ ի լուսափայլն ճեմարանին ըստ սրբազան բանին, եթէ գիտակցեմ զիմսն եւ գիտեմ յիմոցն: Եւ ուր պաշտեցեալն, անդ եւ պաշտելին, ընդ նմին միահոմեսցի, ընդ որս եղիցի ինձ եւ ամենեցուն, որ սիրեն զքեզ եւ պահեն զբանս քո, բացաւ երեսօք փոխակերպիլ փառաց ի փառս, համարձակատես լինել փառաց մեծին Աստուծոյ եւ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ քեզ եւ ընդ ամենայն սուրբս:

Արդ եւ դուք, ո՞վ սուրբ մանկունք եկեղեցւոյ, հրեշտակերամ, լուսածիր դասք կրօնաւորաց, որ էք յընթհանուրս առկայացեալ եւ ունիք փոյթ աշխատաժիր կրօնից գտանել յառաջակաց եւ սիրով սրտի ծարաւեալ ոգւով դիմէք ի սուրբ պատուիրանս, ի գիտել եւ յառնել կամ առ դնել օրինակ ի նորակերտեալ ի խորոց սրտէ, մաքուր մտօք եւ բազկատարած պաղատանօք հայելով առ Աստուած, յիշեցէ՛ք զամենատրուպ եւ զբազմամեղս գԿԻՐԱԿՈՍ, որ բազում աշխատեցայ ի սայս, սակս անյարմար եւ խրթնի թարգմանութեան հոռետորին յունականի, որ եւ ջանացի յերիւրել միայն, ո՞չ յաւելուլ եւ ո՞չ պակասեցուցանել յաստուածաշունչ բանիցն: Իսկ եթէ ի վեր գոլով սորայս մակացութիւն, քան զմերս տեսութիւն, եւ պակաս ինչ կամ այլատարազ եւ աղաչեմ չիինել մեղադիր: Զայս գիտելով, թէ ոչ ի ծուլութենէ կամ յանփոյթ առնելոյ եղեւ, այլ յանհաւասարութենէ հատակոտոր թարգմանելոյն: Բայց ընդ իս ոչ ինչ պակասեցուցեալ ի ճշմարտութենէ, ուստի եւ զսղալանսն անտես առնել Աստուծոյ, եղբայրական սիրով զիջեալ ընդ իս աղօթեցէ՛ք ի վերայ վշտացելոյս եւ պաշարելոյս ներքին եւ արտաքին պատերազմօք:

Այլ եւ զանգիւտ հայկազանցս զլուսաւորս մարգարտիս զպատճառն գերանելի Լուսաւորչին մերոյ՝ զփոխանորդ գԳԻՐԳՈՐԻՍ զհոգեւոր հայր մեր եւ խնամածու յիշեցէ՛ք ի Տէր, վասն զի նա եղեւ սկիզբն սուրբ Աւետարանիս Մեկնութիւնս գրելոյ ի գիրս յայս, ի ձեռն բազում աղաչանաց իմոց զինքն գերանելին, որ եւ լուեալ ինձ ըստ աստուածասէր եւ պատուիրանասէր հոգւոյ իւրոյ, սկիզբն ետ առնել թարգմանութեան նախ յասորւոյն լեզվէ: Եւ քանզի շաղփաղփ այլատարազ

գայ լեզուն ասորի ի մերս Հայկազանցս արամեանս ազգ եւ լեզու, ըստ որում վերըստին իմ աղաչանս ի ձեռ առեալ վկայասէր ոգւոյն եւ յունականէն առնել զթարգմանութիւն գերահրաշ ճառիցս եւ աստուածախօս բանիցս աստուածաբան աւետարանչիս Յոհաննու Մեկնութեան, ի ձեռն հոմանուն երանելի պատրիարգին Կոստանդնուպօլսի՝ տիեզերակեցոյց, աշխարհալոյս վարդապետի՝ Ոսկէբերանն կոչեցելոյ մականունութեամբ, որպէս եւ վերագոյնդ առ նա արարեալ իմ Կիրակոսի զբանս մաղթանաց, վասն զի յարմար գոյ յունականն բարբառ ի մերս ըստ թարգմանութեան:

Արդ, ունկնդիր եղեալ ինձ, թողեալ զԱնդրէաս Էրէց ասորի զթարգմանիչ, յղէ ի Միսապօտամն գաւառ, առ յունականն հոռետոր Թէոպիստէ կոչեցեալ, որ էր քարտուղար եւ պատոյնօտար իշխանին Առօնն կոչեցելոյ: Եւ բազում ծախիւք առատատուր պարգեւօք նմա ետ թարգմանեալ զսուրբ գիրս:

Եւ արդ, նա ի Քրիստոս փոխեալ յերանելի կեանսն, բազում ճառք մնացին անթարգման, յոր ես ձեռն արկեալ նոյնպէս առատաբար ձրիւք, զմնացեալսն ետու աւարտել նմին առն: Եւ է ճառիցս թիւ, |183թ| զոր նորոգ ի յայտ ածաք, յիսուն եւ Ե. (55) ճառ, քանզի զերեսուն եւ զերիսն բազում յուղիւք առաջին մեր թարգմանչացն գտաք թարգմանեալ ի սկզբանն՝ տասնեւերեք ճառ յասորի լեզուէ, բանքն իսկ ցուցանեն, իսկ զբասնն՝ ի յունականէն, որ են երեսունեւերեք ճառ: Բովանդակն էր գիրքն լիեալ թարգմանած ի հայս, եւ ի ծուլութենէ եւ յանփոյթ առնելոյ այլքն կորուսեալ եղծեալ էին յօրինակս հինս, ուր եւ կայր: Եւ այս, զոր գտաք ի յախմար եւ ի տգէտ, խաւարած գրագրերոյ, այլայլած եւ թիրած էր բանքն եւ տունքն, եւ աւելի եւ պակաս, անօգուտ ի կարգալոյ եւ յիմանալոյ: Զոր իմ Կիրակոսի տրպի եւ անարժանի ի ձեռն առեալ՝ ուղիղ յօրինեցի ըստ կարի, այլ ըստ մտաց բանիցն եւ այլ ի կրկին օրինակաց: Եւ ըստ այսմ զնորոգ թարգմանեալս բազում ջանիւ եւ աշխատութեամբ յերիւրեցաք յուղիղն բառ եւ բանս ըստ մերումս գհատակոտոր եւ զխրթին բանսն եւ ըստ վերագոյն գրելոցն՝ ո՞չ աւելի եւ ո՞չ պակաս:

Արդ, այսպէս գրեցաք եւ տուաք վերջին աւուրց վերջին դարուս, յորում, ըստ կանխասացութեան փրկչին եւ առաքելոց նորա շար եւ դժնդակ են աւուրքս. սատանայ թագաւորեալ, եւ սէր եւ հաւատք եւ ճշմարտութիւն բարձեալ յամենայն մարդկանէ, քանզի բոլոր տիեզերք գնացին զհետ սատանայի, է՛ որ անհաւատութեամբ, եւ է՛ որ հերետիկոսութեամբ, եւ է՛ որ մեղօք, յոր թաւալեցան առ հասարակ. եւ մեր ազգ հաւատովք եւ կարգօք ուղիղ եւ գործօք ըստ բանսարկուին կամաց հետեւեալք եւ հեռացեալք յերկնաւոր կոչմանէն, նաեւ բարձրացեալ յերկրէ աշտիճանաւ կրօ-

նաւորք եւ քահանայք ընդ այլ շարահաւատ ազգս նախանձեալ, ի մարմին դարձան եւ ի կամս նորա օտարացեալք ի կոշմանէն Քրիստոսի: Այլ եւ յանիշխանութեանն գոլով տիեզերք, քանզի կարծեալքն իշխանք ի սուր եւ յաւեր դարձան յիրեարս, եւս եւ որ թագաւորք անուանէին:

Եւ մեք ի սոյն աւուրս աշխատեալք՝ նորոգեցաք զսա եւ տուաք ի յիշատակ աստուածասէր եղբարց սրբոց, թերեւս անձանց եւ բազմաց օգուտս գործեցեն, որ եւ հովացեալք եւ ցրտացեալք եղեն բնաւք ի պատուիրանացն Աստուծոյ եւ ի սիրոյ գրոց: Զայս գրեցաք, զի որք ընթեռնուցուք՝ իմացեալք զմերս եւ զսուրբ դիտապետին ջանս ըստ այսմ ի փրկչէն հայցեցէք զողորմութիւն նորա, ընդ որս եւ զսուրբ վարդապետն մեր զՔէռզ յիշեսջիք՝ զդիտապետն Հայոց, զհովիւն, բարի եւ զգաստ եւ զմարդասէր հոգին, որ վերստին ծնաւ զմեզ ի Տէր բանին կենաց, եւ զէրէց աւուրքք եւ խոհականութեամբ զեղբայրն մեր եւ զանդրանիկ մերոյն կրթավարժ եւ հրահանգայեցց աշակերտութեան զքրիստոսագգեացն զՔէռզ՝ մականուն Մեղր կորեցեալ, յիշեսջիք ի Քրիստոս: Եւ եւս զծնօղս իմ հանգուցեալ ի Քրիստոս յիշեսջիք աղօթիւք:

Եւ որ զգիրքս գրեցի, որ է երկրորդ զկնի թարգմանելոյն ի յունականէն ի հայկական գիր եւ լեզու, զՍտեփաննոս յոքնամեղ եւ զեղբարս իմ եւ զծնօղս զկենդանի եւ զհանգուցեալ ի Քրիստոս աղաչեմ յիշել ի սուրբ մաղթանս, որպէս զի աղօթիւք ձեր եւ ամենայն սրբոց հաճոյացելոց Տեառն ի սկզբանէ գտցուք միաբան արժանաւորք կենացն յաւիտենից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, ընդ որում Հօր եւ ամենասուրբ Հօգուոյն փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Էր թիւ ի սկզբանցն արարչութեանց ի մեզ 3ՇԼԶ. (1111)* ամ, իսկ ի կենարար գալստեանն ՌձԺԲ. (1112) ամ, իսկ ի Խոսրովայն Պարսից սկսեալ մերս թիւ ըստ ամաց ՇԿԶ. (1117), իսկ ըստ աւարտման առաջին շրջանին ՇԼԲ. (532), նորս սկսեալ շար ամաց ԼԳ. (34) ամ: Այլ եւ զաղաչանս իմ զվերջին ընկալչիք սիրովն Աստուծոյ, զկնի վախճանի իմոյ ում եւ տայ Աստուած ի ձեռն ի զսուրբ գիրս զայս, մի՛ արգելցէ տալ զսա օրինակ ով եւ կամեսցի գրել, զի տարածեցի, եւ մի՛ իմ ի փակեսցի խօսքս Աստուծոյ: Եւ որք գրել տացեն, գրեսցեն եւ զյիշատակարանս զայս բովանդակ ի նմին եւ մի՛ հատցեն ի նմանէ բան մի: Եւ որք զերկու խնդիրս զիմ կատարեսցեն, գրեսցէ զնոսա Աստուած ի դպրութեան կենաց, իսկ որք ստունգանենն, եղիցին ընդ դատաստանաւ Տեառն Աստուծոյ, որ է աւրհնեալ յանբաւ յաւիտեանս. ամէն:

* Թարգմանչի յիշատակարանի թուականի վերծանումը Համառոտ ցուցակում (Ա., 1965, էջ 855) վրիպակով է՝ 1663 թ., մինչդեռ յիշատակարանի բուն թուականը ՇԿԶ. (1117) է, ինչ թուականը արարչութեան թուականի Ալեքսանդրեան տարբե-

րակով է՝ 6536-5425=1111, այս յիշատակարանը մասամբ տե՛ս Գ. Զարբհալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, էջ 611-2, իսկ ամբողջութեամբ, որպէս այլ՝ շն՝ 1347 ձեռագրից առած՝ տե՛ս Յովս. Յիշ-ք, էջ 309-18 (1112 թ. ներքոյ), շն՝ 147, հմմտ. Ե-ԺԲ. դդ. յիշ-ք, էջ 145-50 (1117 թ.):

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

95բ Ընդ նմին յիշեսջիք զըստացօղ մատենիս զկուսակրօն Յակոբ արեղայս, եւ զծնօղսն իւր, եւ ամենայն զարմիւքն եւ ողորմեսցի Քրիստոս Աստուած յիշողացդ զմեզ:

183բ Ըստ պատճ[էն]ի յիշատակարանացս եւ ըստ պահանջելոյ հարկի սովորութեան սահմանի՝ պարտ վարկաք շարագրել եւ զանարժանութեանս մերոյ յիշատակ ի քարտիսի այսր, ընդ մշտնջենաւորութեան կտակիս աստուածայնոյ, յարակայեալ եւ մերս յեղում ըստ սմին ի յապա ժամանակս յոքունս ունելով մեր ակնկալութիւն յեղման սրբազանից ընթերցողաց զսոյն տառ, որք ոռոգեալ ի բանից ցօղոյ շնորհաց սորային անձրեաց, որոտընդոստ տեղացմանէ եւ պտղաբերեն |184ա| առաքինութիւնս աստուածահաճոյս, որոց վերամբարձ երկնաթռիչ սր[ը]նթաց սլացմամբ բարձրացեալ աստուածամերձ եղեալ մաղթանացն, աղերսանօք շնորհացն ողորմութիւն բարերարին Աստուծոյ ցօղեսցէ ի հոգիս թափուր եւ ի հողացեալ մարմինս մեր ի գետնախիշտ շիրմի պահարանի եւ դժոխամատն եղելոց պարտականաց բիրոց քանքարաց, եւս եւ թէ ոք ի շնորհագարդելոց վշտակցելով մեզ, ողորմաբար ի խորոց սրտէ հառաչաբողոք յիշմամբ յոգոց հանիցէ եւ զիջեալ առ մեզ ջերմագոյն կամօք, յարտասուս հարեալ ընդ մեր, խնդրելով ի Քրիստոսէ զթողութիւն մեղաց, աղօթաբան հայցմամբ ըստ առաքելոյ բանի հզօրապէս բաւականացեալ զօրէ ողնաբարձ բեռանց մերոց, մեղանաց ծանրացելոց թեթեւութեան տէր Յակոբ արեղայ՝* զծողի սորին տաժանելոցս սակաւ աշխատութեամբ ի մատեանս աստուածաբան, եւ զտրիտուր յիշողացդ զմեզ Քրիստոս հատուցէ:

Եւ արդ, վասն որոյ ցանկացօղ եղեալ հրաշապատում, քաղցրալուր բարբառ եւ յոքնապտուղ, համեղաճաշակ կտակիս եւ ետ գրել ի յընչից, յարդար վաստակոց իւրոց գանձեալ զինչս յերկինս աննենգ յամենայն կերչաց եւ ի վատնողաց ի լուսատուութիւն հոգւոյ իւրոյ եւ ամենայն զարմիցն եւ ընթերցողացն յագուտս հոգեւորականս ի գիտութիւնս երկնաւորականս, ի խնդրոյ բարեմիտ եւ հոգիասէր կրօնաւոր Յակոբ արեղայ՝*, ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնօղացն իւրոց, եւ եղբարցն եւ քորցն եւ ամենայն արեան մերձաւորացն, ի ժամանակս կաթողիկոսութեանն տեառն Նիխագարու երջանկի եւ յեպիսկոպոսութեան տեառն Սիմէոնի Երուսաղէմայ մեծի քաղաքի տէրունեան գահի, ընդ հովանեաւ սուրբ տնօրինականացն եւ Քրիստոսի լուսա-

բուխ գերեզմանին կափարիչ վիմի, որ է Սուրբ Փրկչի վանս, յաւարտ սոփերիս, ի թըւաբերութեանս հայոց զգրոյս սեփհական ՌՃԼԸ. (1689) ամին, ի վայելումն իւրոյ անձին: Աստուած եւ Տէրն մեր բարով վայելել տացէ նմա մինչեւ ի խորին ծերութիւնն. ամէն: Եւ յետ աստեացս ելանելոյ լսել տացէ զերանաւէտ բարբառն, որ ասէ. Եկա՛յք արհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէ՛ք զանսպառ ուրախութիւնն անզրաւ յաւիտենիս. ամէն:

Արդ, յերես անկեալ եւ յողոք դեգերեալ աղաչեմ զբարեմիտ հարբդ իմ եւ զեղբարբդ, ողորմելով մեզ հիքացելոցս եւ խնդրել մաքուր աղօթիւք թողութիւն պարտեաց յանձանաց տէր Յակոբ արեղայի* եւ ամենայն զարմիցն, եւ որք յիշէք զմեզ, լուեալ պաղատանաց մերոց, յիշեալ լիցիք եւ դուք ի Քրիստոսէ ողորմութեամբ յաւուրն մեծի՝ մեծի ատենին. ամէն:

Այլ եւս խնդրեմ ի ձէնջ՝ գծող սորա զիջանել՝ ըստիս եւ անպարսաւս ըստգտանաց թողուլ եւ ներել անհմտութեանս եւ անտարր գծոցս, զի կարի տագնապշտապ եղև գրեալ, եւ թէպէտ իմ ջանս ըստ կարի առեալ ի ձեռն կամաց պարզագրութեան եւ տրոհման տառից եւ բանից, սակայն շտապաճեպուցութիւնն ընդ մէջ մտեալ արգել, այլ եւ ոչ ունելով ձեռնտու գվերծանութիւն քերթութեանն, վասն որոյ ոչ եղև ըստ կամաց իմոց ընտրութիւն սորին, եւ զտկարութեանս որչափութիւն լուեցից: Զի լաւ եւ ընտիր գիր էր օրինակիս, պարզատեսակ եւ կէտորոշ, բայց ոչ զատուցեալ ըստ տեղւոյն գլխոց եւ բանագլխաց, եւ զի հուպ գրով գրելն

սորա թարգմանութեան ժամանակին, եւ ոչ է բացորոշ ի միմեանց բանքն եւ մեկնեալքն ոճագլխիւք եւ ճառագլխիւք գերալրութեամբ կարգաւորաբար, ըստ ասից Կիրակոս վարդապետի ի վերոյգրեալն յիշատակի սակս աղաւաղելոյն նախնականի: Եւ թէ ոչ էր հանդիպեալ յառաջագոյն ոմն վարժ եւ անշատեալ զբանսն նշանակաւ իմն սակաւու եւ շեշտիւ եւ պարուկաւ զամենայն, կարի իմն դանդաղէի զհատակոտր բանսն տրոհել ի մեկնութեանն եւ կամ աղաւաղիւր ի դիպմանէ, որ եւ յայտ իսկ է բազում տեղիս ի գրածացդ: Որոյ ըստ աշխատանաց նորա վարձս բարեաց հատուցէ Քրիստոս՝ Աստուածն ամենայնի. եւ ինքն օրհնեալ եղիցի ի յաւիտեանս ժամանակաց. ամէն:

* Զեռագրի գրիչը Յակոբ արեղան է, սակայն յետագայում անունը եղծել եւ «Յակոբ արեղայ» բառերը դարձրել են՝ առաջին տեղում՝ «Յերեմի վարդապետն», երկրորդ եւ երրորդ տեղերում՝ «Յերեմիայ վարդապետին»:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ պհպ. Աս՝ (սեւ թանաքով շրջան) «Печать Ахалцыхской градской полиции»:

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ Ա. եւ Բ. փեղկի կազմաստառին մատիտով առիւծ, պհպ. Աս «А»:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած պիտակին (նոտրգիր) «Յովհ. [ան] Ոսկեբերանի/ Մեկնութիւն Յոհ. Աւետարանին//», պհպ. Աս՝ «184/2688», «Հ^ր 192/22.», (կապույտ թանաքով շղագիր) «ՌՃԼԸ. - 1689/ Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2689

Ն Ա Ն Ա Ա Ս Ո Ր Ի , Մ Ե Կ Ն Ո Ի Թ Ի Ի Ն Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ո Ի

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՌՄԾԸ. – 1809


ԳՐԻԶ, ՍՍԱՅՈՂ՝ Ստեփաննոս վրդ. Տփիսեցի: ՄեհենԱՄՄ Մարտիրոս արեղայ. Կեսարացի:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

[Նանայի Ասորոյ Մեկնութիւն Յովհաննոս Աւետարանին]

Թերթ՝ 134 (գրչի կշակալում 1-251, որ է՝ 5ա-130ա). չգրում՝ 1ա-3բ, 4բ, 130բ-4բ: ՊՐԱԿ՝ Ա-ԺԳx10 (Ա 13, ԺԳ 11): Նիւթ՝ թուղթ լուսարոշումով. «MAL, Bertini», լուսակնիֆով եւ զինանշաններով: ՄեծՈՒԹԻԻՆ 28,5x20,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (22x15). սանմանագծեր՝ կարմրով: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 65ա): ՏՈՂ՝ 34: ԿԱԶՄ՝ դրոշմազարդ բաց շագանակագոյն կաշի, միջուկը ստուարաթուղթ. աստառը ծաղկազարդ թուղթ. լուսանցակուղերը՝ դեղին:

Տե՛ս ձեռ. 2520, 13ա-255բ: – Առջբնթ./5ա-7բ: ա/8ա-74ա: – [Յորդորակ] 72ա-4ա («...անմահական պտղովք առ ի բերելով մատուցից ի փառս ամենասուրբ Երրորդութեանն//») վերջը՝ թերի) ք/74բ-130ա: – [Յորդորակ] 129բ-30ա:



Նմուշ 65ա

Հմմտ. Նանայի Ասորոյ վարդապետի Մեկնութիւն Յովհաննոս Աւետարանին, Քանգարան Հպկական Հին եւ Նոր Դպրութեանց, է., Վենետիկ, 1920:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կ ի ս ա խ ո Ր ա ն ՝ 8ա: Զ ա Ր դ ա - գ ի Ր՝ թղնագիր (5ա, 8ա): Գ ո յ ն ե Ր՝ կարմիր, կապոյտ, դեղին, մանուշակագոյն:

4ա Շնչամաքուրն Յովհաննոս սրբազնասուրբ Աւետարանի բանիցն նրբից տեսութիւն, մեկնաբանեալ ի Նանայէ Ասորոյ պանծալի յիմաստասիրէ, որ ըղձակաթ սիրով ստացայ ի յարքայաճոխ մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, գաղափարեալ շնորհիւ Հոգւոյն յընտիր օրինակէ, ի վայելս նուաստ անձին իմոյ Ստեփաննոս ապարդիւն վարդապետիս Տփիսեցոյ, զոր եւ յետ իմ վայելողբդ յարգելիք արասջիք յիշման

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին վնասուած, փերծուած, տեղ-տեղ թափուած, եզրերը՝ մաշուած-թափուած. գործածութեան եւ խոնաւութեան հետեւանմով զանազան բծեր, խոնաւութիւնից գրադաշտը գունափոխուած, սկզբի եւ վերջի թերթերի արտաքին լուսանցները՝ խոնացած:

արժանիս արժանընդունակ ձեր սուրբ աղօթիւքն զմեզ սալիս ի խնդրուածս բարեաց, որ առ բազմագուլթ բարերար Բանն Հօր, որ եւ ձեզ եւ մեզ ողորմեսցի յաւուրն սոսկալի ի յաղբեր շնորհաց՝ իւրոց գոնէ իբրեւ զմի ի վարձկանաց զմեզ հանգուցանելով հանգոյն անառակին. ամէն:

Յամի Տեառն 1809, յամսոջն մայիսի, ի մեծն Պօլիս, ի շնորհաշատ հայրապետութեան Ամենայն Հայոց տեառն տեառն Եփրեմի աստուածազարդ կաթողիկոսին եւ ի պատրիարքութեան մեծին Պօլսոյ տեառն Յովհաննու աստուածաբան եպիսկոպոսին, եւ ի յառաջնորդութեան ծովածիծաղ բարելից քաղաքին մե-

ծին Զմիրունոյ տէրունի վիճակի լուսանկար մօրն պանծալոյ արամեանս ազգի ամենայն եկեղեցեաց Սուրբ էջմիածնի, որոյ եւ իսկ միաբանի տեառն Մարտիրոսի արքեպիսկոպոսի բազմաշնորհ իմս ծնողի երջանկի Կեսարացոյ ստացեալ գանձեցի ի փառս Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է յաւէտ օրհնաբանեալ. ամէն:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած պիտակին (նոտրգիր) «Նանայ վարդապետի Ասորոյ / Մեկնութիւն Յովհաննու աւետարանին», 1ա՝ «186/2689», (կապոյտ թանաքով շղագիր) «1809, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2690


Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Յ

ԵՂԻԱԶԱՐՈՒ ՎԱՆԹ


ՊԿԷ. – 1418

ԳՐԻԶ՝ Դագար (1ա-94ա), Բարսեղ վրդ. (95ա-114բ), Կարապետ եպս. (119ա-326ա): ՄԱՂԿՈՂ, ԿԱԶՄՈՂ՝ Յովհաննէ: ՍՍԱ-ՅՈՂ՝ Բարսեղ վրդ. (գրիչը):


ԹԵՐԹ՝ 333+2+1-1 (տե՛ս Վիճակ, կրկն.՝ թ. 73, թիւր՝ 233-5). չգրուած՝ 94բ, 115ա-8ա, 326բ-333բ: ՊՐԱԿ՝ Ա-Ըx12 (Ը 13) +12+9+Ա-ԺԸx12 (Ա 13): ՆԻԹ՝ թուրք (թ. 118՝ մագաղաթ): ՄԵ-ԾՈՒԹԻԻՆ՝ 26,8x18: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսին (21.5x14). սկզբնատողերը՝ կարմրով եւ մանուշակագոյնով: Գիր՝ նոտրգիր (1ա-94ա՝ նմուշ՝ 33ա, 95ա-114բ, նմուշ՝ 106ա), բոլորգիր (119ա-326ա՝ նմուշ 204ա): ՏՈՂ՝ 37 (1ա-114բ), 29 (119ա-326ա): ԿԱԶՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի, դոնակով, միջուկը տախտակ, աստուղը գարդախիս կարմիր մետաքս. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 (Բ-Գ՝ սկ.)՝ ձեռագրի թղթից, չգրուած (Բար):



Նմուշ 33ա



Նմուշ 106ա




Նմուշ 204ա

ՄԱՆԵՐԱՆԿԱԳՈՒԹԻՒՆ – Խաչելոփին*, շորս անկիւններում աւետարանիչների պատկերները, Քրիստոսի գլխավերեւում Հայր Աստուած եւ Սուրբ Հոգի («ՆԻ ՄՏԱՆԷ ԵԿԵՂԵՑԻՍ ՀԵԹՆՈՒՆՍԱՅ», «ԱՅՍՈՐ ԵԱՆԷ ՍԻՈՆ», «ՂՈՒԿԱՍ ԱՒԵՏԱՐԱՆԵԶ», «ՅՈՎ-ՀԱՆՆԷՍ»)՝ 118բ, Եփրեմ Ասորի եւ Յովհաննէ Ոսկերեան («ՍՈՒՐԲՆ ԵՓՐԵՄ», «ՍՈՒՐԲՆ ՅՈՂԱՆ ՈՍԿԵՔԵՐԱՆ»)՝ 120բ: Կ ի - ս ա խ ո ռ ա ն՝ 121ա: Ճ ա կ ա տ ա զ ա ղ՝ 1ա, 95ա, 119ա: Լ ո ս ա ն ց ա զ ա ղ՝ բուսական, թռչուն: Զ ա ռ դ ա զ ի ղ՝ թռչնագիր, հանգուցազիր, Զ՝ մէջը՝ մարդու դէմք՝ 177բ: Գ ո յ ն ե ղ՝ կապոյտ, կարմիր, դեղին, վարդագոյն, նարնջի, ոսկի, կանաչ, սպիտակ, մոխրագոյն, շագանակագոյն, սև:

* Թ. 118բ՝ մագաղաթ, հաւանաբար յետագայի մուծում, մանրանկարը այլ ձեռքի գործ է, արուած աւելի ուշ՝ մօտ ժէ. դարի սկզբներին, երրորդական ազդեցութեամբ:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան Յովհաննու Գ., 10-27, Մարկոսի Թ., 21-36: ԺԱ. դար: 1 (Ա) + 1 (Գ)՝ ստացուած մէկական թերթերի ընդերկայնակի հատումով: Մագաղաթ, 26.5x17.5, երկսին (22.5x15.5): Ուղղագիծ երկաթագիր (նմուշ՝ Աբ): Տող՝ 22. գծումներ՝ ննջումով: Կարդալ՝ Աս, Աբ. «//Բեզ գըուրն կենդանի: Ասէ ցնա կիմն... եւ գարմանային զի ընդ կն[ոջն խասիր]//» (Յովհ. Գ., 10-27), կարդալ՝ Դա, Դբ. «//Բազ[ոյն] անգամ ի հուր արկանէ... ընկալցի յանուն իմ զիս ընդունի[//]» (Մարկ. Թ., 21-36):



Նմուշ Աբ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, քերծուած, տեղ-տեղ՝ առուելապէս անկիւններ մաշուած-թափուած, երեւական կապիչներն ու գամերն ընկած. մնում են Ա. փեղկին՝ գամերի հետքերը, Բ. փեղկի ներսի կողմում 2 կապիչների հիւքերը, լուսանցակողերի կարմիրը թափուած. նորոգուած, գործածութեան եւ խնամարտեան հետեւանով զանազան բծեր, դեղին հետքեր, Ա. պրակի առաջին 2 թերթը համարակալուած ուղեւ պահպանակ Բ. եւ Գ., թ. 308-33 եւ պտոկ-պնայ. Գ՝ ցեցի անցքեր, պատառիկ-պահպանակ Ա-ի արտաքին լուսանցը եզրահատած՝ գրադաշտը մասամբ վնասուած:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. 1ա-94ա Մեկնութիւն Յօրայ հաւաքեալ համառատ Վանականի վարդապետի

Տե՛ս ձեռ. 1166, 1ա-99ա: Յառաջաբանութիւն/1աբ: 1/1բ-15ա: 2/15ա-8բ: 3/18բ-23ա: 4/23ա-4բ: 5/24բ-9բ: 6/29բ-31ա: 7/31ա-7ա: 8/37ա-9ա: 9/39ա-42ա: 10/42ա-3բ: 11/43բ-6ա: 12/46ա-7բ: 13/47բ-50ա: 14/50ա-1բ: 15/51բ-4բ: 16/54բ-5բ: 17/55բ-7ա: 18/57ա-62ա: 19/62ա-8ա: 20/68աբ: 21/68բ-71ա: 22/71ա-2բ: 23/72բ-3բ: 24/73բ-5բ: 25/75բ-82բ: 26/82բ-90ա: 27/90ա-94ա:

Բ. 95ա-114բ Մեկնութիւն համառօտ Դանիէլի մարգարէի, զոր հոգիապայծառ եւ իմաստախոհ

վարդապետին Վարդանայ շարադրեալ է ի հոգեկիր մեկնողացն ձայնից Եփրեմի, Հիպոդիտայ, Սաեփանոսի Սիւնեցոյ, ի խնորոյ ուսումնասէր մանկանց, առ ի դիւրահաս ընթերցողաց

1. 95ա-7ա [Տեսիլ առաջին] – Մերձատրք մեր եղբարք եւ որդեակք յօժարեցին զհեռաւորութիւնս... վասն որոյ ասէ մեծացաւ Դանիէլ առաջի ամենայն ժողովրդեանն:

2. 97ա-8ա Տեսիլ երկրորդ – Եւ զառաջինն եւս տեսիլ կոչէ... զի այս ամենայն տեսուածք կային աստ:

3. 98ա-100ա [Տեսիլ երրորդ] – Իսկ երրորդս յայտնի է թագաւորին զերազս տեսանել եւ մոռանալն... եւ ի պատրանաց մեծութեանց այսպիսի ինչ արար, որ ասէ:

4. 100ա-2բ Տեսիլ չորրորդ – Զոր սովոր է գիրս այս զպատմութիւն ինչ իրաց տեսիլ անուանել... ի գործութիւն քաւին եւ ողորմածին Աստուծոյ:

5. 102բ-9ա Տեսիլ Ե. երրորդ (5) – Անասելի եւ խորք մարդասիրութեանն Աստուծոյ... արհնելոյն ի Հայր եւ ի Հոգին Սուրբ յաւիտեանս:

6. 109ա-10բ Տեսիլ Զ. երրորդ (6) – Յամին երրորդի Կիրոսի պարսից արքայի... ունելով զհոգս թագաւորացն եւ զտեսս կռապաշտիցն:

7. 110բ-2բ [Գլուխ ԺԱ., Բան Ա.] – Եւ ես առաջնում ամի Կիրոսի կացի ի զօրութեան եւ ի հաստատութեան... զոր սուրբ լեան Սաբիրայ ասէ:

8. 112բ-4բ [Գլուխ ԺԲ., Բան Ա.] – Եւ ի ժամանակին յայնմիկ յարիցէ Միխայէլ հրեշտակ], յորժամ յաճախէ նեղութեանցն... ի վերայ գրոյն, մինչեւ զամենայն գէշ գէշ պատառեցին առաջի նորա:

9. 114բ [Յիշատակարան հեղինակի գրոյս] – Արհնելով եւ փառաւորելով զԱստուածն յաւիտենից Դանիէլիւ հանդերձ... եւ հրեշտակաց եւ սրբոց Աստուծոյ:

Միւտրների դասակարգումը՝ ըստ տպագրի. տէս Վարդան Արեւելցի, Յովհաննէս Մործորեցի, Թովմա Մեծփեցի, Մեկնութիւնք Մարգարէութեանն Դանիէլի, Էջմիածին, 2007, էջ 19-164. գրիչը 3, 7-9 միւտրները չի առանձնացրել:

Գ. 119ա-325ա [Գլխորդայ Սկեւոացոյ Մեկնութիւն Գործոց առաքելոց]

Տէս ձեռ. 1362, ք. 3ա-80ա: Դրութիւնք/119ա-20ա: Յառաջաբանութիւն/121ա-2ա: ա/122աբ: բ/122բ-4ա: գ/124ա-8բ: դ/128բ-31բ: ե/131բ-6ա: զ/136ա-9բ: ի/139բ-42ա: լ/142ա-5ա: թ/145ա-7բ: ժ/147բ-9բ: ժա/149բ-54ա: ժբ/154ա-7ա: ժգ/157ա-9բ: ժդ/159բ-62բ: ժե/163ա-5բ: ժզ/165բ-9բ: ժլ/169բ-73ա: ժր/173ա-7ա: ժր/177բ-80բ: ի/180բ-7ա: իա/187ա-91բ: իբ/191բ-6ա: իգ/196ա-9բ: իդ/199բ-203բ: իե/203բ-6բ: իզ/206բ-9բ: իլ/209բ-12բ: իր/212բ-7ա: իթ/217ա-9բ: յ/219բ-21բ: յա/221բ-5ա: յբ/225ա-8բ: յգ/228բ-32բ: յդ/232բ-6բ: յե/236բ-42բ: յզ/242բ-7բ: յլ/247բ-50բ: յր/250բ-3բ: յր/253բ-6բ: յս/256բ-61բ: յտա/261բ-5բ: յտբ/265բ-8ա: յտգ/268ա-72ա: յտդ/272ա-6ա: յտե/276ա-8բ: յտզ/278բ-83ա: յտլ/283ա-6բ: յտր/286բ-9բ: յտթ/289բ-93բ: ձ/293բ-7ա: ձա/297ա-300բ:

ժբ/300բ-4բ: ժգ/304բ-8ա: ժդ/308ա-14բ: ժե/314բ-9բ: ժզ/319բ-21բ: ժլ/321բ-5ա:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԶ. դար.

Պհպ. Գա Հմայագիր* – (սկ. անընթեռնելի, կարդացուած է մնացած 5 տողը) //ու ընդ իւն անկանի եւ բարով ազատի, սիրէ եւ ի մարդէ բաղթ չի ունի... ուխտի տուն հարսն մ///:

* Պհպ. Գբ, Թ. 93բ, 94աբ՝ նոյն գրով, խոնարհութիւնից անընթեռնելի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԹԱՐԳՄԱՆՁԻ

325բ (1076 թ., բոլորգիր) Աղերս նորոգ ստացողի եւ աշխատասիրաբար նորոգողի բուն Մեկնութեանն, յորմէ այս համառօտեցաւ:

Յամի վեց հազարերորդի հինգ հարիւրերորդի առաջներորդի արարածոց աշխարհի (1076) եւ ի հազարերորդի եւթանաներորդի եւթներորդի կենարարին մերոյ գալստեանն (1077) եւ ըստ Խոսրովային թուոյ հայկազանց հինգ հարիւր[եր]որդի քսաներորդի հինգերորդի (1076), ի թագաւորութեանն Միխայէլի որդւոյ Դուկծին եւ ի պատրիարգութեան Կոզմայի երկաբնակի՝ ես՝ Գրիգորիս՝ որդի Գրիգորի Պալիաւաւնոյ, ողորմութեամբ մեծին Աստուծոյ արժանացեալ աթոռոյ հաւուն իմոյ՝ սրբոյն Գրիգորի եւ ըստ յառաջատեսւեան սրբոյն Սահակայ, ի սաստկացեալ սրոյ սկիւթացոցն հալածանօք հասի ի պայծառն կայանս սրբոյն Կոստանդիանոսի եւ մեծաւ ըզձմամբ հայցեալ գտի զտենչալիս յորունց, զգերահրաշ Մեկնութիւն Գործոց առաքելոցն մեծին Յովհաննէս Ոսկեբերանի՝ լուսաւոր եւ ոգեշահ վարդապետութեամբ: Եւ հանդիպեալ հմտագոյն հռետորին Կիրակոսի՝ յունական եւ հայկական ուսմամբն պերճացեալ, եւ առատաձեռն արգասեալք ետու թարգմանել տենչալիս ոգւոյ իմոյ, եւ ընկալեալ սրտալիբ ուրախութեամբ իբրեւ զտախտակսն նախամարգարէին եւ մեծաւ տաժանմամբ հատեալ զհամատարածն Լիբիայ եւ Ասիական ծոցոյն, խնամօքն Հոգւոյն հասի ի բաժինս Սեւա ի ստորոտս Տորոսի, ի հրեշտակաբնակ կայարան սրբոցն, եւ գտի անդ զհոգեշնորհ գիտնականն Կիրակոս՝ որդի իմ ըստ հոգւոյ եւ աշակերտ մեծ գիտնականին Գեորգեայ՝ փոխանորդին մեր: Եւ սորա յօժարակամ մտօք աշխատութիւն զանձամբ առեալ՝ ըստ առատատուր Հոգւոյն պարգեւացն, վերստին արժարծեալ զխորթացեալ բանս հռետորին, յեղանակելով ի դիւրալուրս եւ յարմատականս մերոյ յինս ազին: Արդ, մաղթեմ զամենեւէ Յովհաննէս Յովհաննէս, որք հանդիպիք այսմ հոգիաբուրդիս պատգամացս, յիշել զիմս կաղկաղութիւնս ի Տէր սրտի մտօք, ընդ ինեւ եւ զաշխատողսն ի սմա, եւ գրել զփոքր յիշատակարանս ընդ սմին գրոց՝ յորժամ գրեսչիք, եւ մի՛ պակասեցուցանել, զի եւ զձեզ գրեսցէ Տէր ի գիրն կենաց՝ յաշխար-

հին կենդանեաց, որ է եւ եղիցի արհնեալ յաւիտեանս. ամէն:

6501 թուականը արարչութեան թուականի Ալեքսանդրեան տարբերակով է՝ 6501-5425=1076: Յիշ-ս 2^ր 1315 ձեռ-ից առել են՝ Յովս. Յիշ-ք, էջ 253-6, 2^ր 117. հմմտ. Ե-ԺԲ. դդ. յիշ-ք, էջ 108-9, 2^ր 129:

114բ (1267-8 թթ., նոտրգիր) եւ ինձ իսկ՝ անարժանիս, եղև բաղձալի փոքր-ինչ վաստակել ի բանս նորա՝ զարբոցն խօսս վասն գրոց նորա դնել առ իրեարս, յորոց շատ մնացեալ լինի ի յուով հոգւոց իմոց եւ ի ցնորից, եւ զոր չէին առեալ ի մեկնութիւն յայնց բանից, դնէաք լուծմունս, եւ շատս թողուաք՝ վասն ձանձրանալոյ զբնաբանն շարելով: Եւ յաղագս ամենեցունց երկնչիմ եւ խնդրեմ ներումն եւ թողութիւն եւ ողորմութիւն յԱստուծոյ եւ յիւրմէն եւ ի սուրբ հրեշտակաց եւ յեղբարց եւ յորդոցդ, որք պատահէք՝ չբարկանալ մերում համարձակութեանս, պատճառ ունելով զյոյսն եւ զսէրն ի սուրբն Աստուծոյ, որ միայն յԱստուած նայելով եւ ի մեզ բարի կամօք հաւատամք սրբիլ եւ հաճոյ երեւել Աստուծոյ եւ սուրբ եկեղեցւոյ, ամօթովս եւ անհաճոյս որ քան յինէնէ:

Այլ եւ եղբարքն՝ որ ընդ մեզ, շատ հարկեցին զմեզ եւ աճեցուցին զյոյսն իմ ի Քրիստոս եւ ի Դանիէլ, որ զնայն աստուածաբանեաց եւ կանխաւ գուշակեաց՝ կրելով զնա յանար[ատ] ոգւոջն: Եւ սկսաք ի ԶԺԶ. (1267) թուին, ի սուրբ Վիրապիւն եւ կատարեցաւ ի ԶԺԷ. (1268), առաջի սուրբ եւ փառաւոր նահատակիս Սուրբ Ստեփանոսիս, ի սուրբ ուխտս Աղջոց վանիցս, յառաջնորդութեանն Երեմիայ գովելի ասպնջականի եւ գոհանալի եղբարց:

Արդ, աղաչեմ զամենեսեան սիրովն Քրիստոսի զպատահեալսդ ներել սխալանացն մեր յամենայն իրս եւ զոր ի գիրքս յայս, եւ խնդրել յԱստուծոյ մեզ ողորմութիւն եւ թողութիւն մեղաց եւ ամենայն երախտաւոր պարոնացն Սաղունիւն, Սմբատայ, Քրթիւն, Պոռոյն եւ ամենայն բնակչաց երկրիս եւ եղբօր մերոյ Ներսէս վարդապետին, որ եւ զնա աշխատեցաք ի գիրս: Եւ արհնեալ է Քրիստոս Աստուած ի սուրբս իւր եւ յարարածս ի բոլոր եւ ի մասնաւոր, ընդ Հօր եւ ամենասուրբ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Այս յիշ-ը՝ որպէս այլ 2^ր 4834 ձեռագրի գրչութեան յիշ-տե՛ս ԺԳ. դ. յիշ-ք, էջ 365-6:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Պհպ. Գբ (կարմրով) Աւգնեայ՝ Հոգիա Սուրբ Աստուած ճշմարիտ: Զգործս ձեռաց մերոց ուղիղ արայ՝ ի մեզ, Տէ՛ր, զգործս ձեռաց մերոց աջողեայ՝ մեզ:

94ա Արդ, ես՝ կորուսեալ եղկելիս եւ թշուառականս Ղազար անպիտան, որ փոյթ յաւժարեմ ի զանազան շարիսն եւ ծոյլ ի բարիս, յերես անգեալ աղաչեմ զբարբունդ բարի եւ երանելի վարդապետ ճշմարտութեան եւ քանոն ուղղութեան, քաջ պալէտիկոս եւ իմաստուն

սովեստէս տէր Գրիգոր՝ Արթուն անուն, զքեզ քո սրբազան դասուց աշակերտաւքդ պաղատիմ եւ խնդրեմ, որ զաղտեղացեալ եւ զտգիտացեալ տիղմս տաղտկալի ոչ անտես առնես, այլ միոյ Ողորմոյ արժանի առնես զխոր խոցեալս, եւ սղալանացս եւ անարհեստ եւ խոշոր գրիս անմեղադիր առնես, քանզի կար տկարիս այս էր:

114բ Ընդ վերոյ յիշեցեալ անուանցս Վարդանա սուրբ վարդապետին՝ համառատողի գրոցս Դանիէլի եւ նորին յիշեցեալ աշխատաւորացն յիշեսչիք եւ զիս՝ զապիկարս ի բարեաց զԲարսեղս զփծուն գրիչս ի Քրիստոս՝ յոյսն ամենեցուն, որ զսա գրեցի աւժանդակութեամբ եւ աջողութեամբ Հոգւոյն Սրբոյ՝ խնդրելով թողութիւն բազում մեղացս եւ Աստուած ողորմի ասել իմոցն ամենիցն: Այլ եւ զշնորհօղ արինակիս սուրբ գրոցս տէր Արիստակէսին խնդրել մեղաց թողութիւն. ամէն:

120բ (ծաղկողի) Զանպիտան հողս, զապիկար ծրողս, ո՛ր պըւետիկոսս յիշեա՛ ի Քրիստոս: Նկարեցաւ ձեռամբ Յովհաննիսի ի ՊԿԸ. (1419) թուի:

187ա Ընդունողն Քրիստոս ապաշխարողացն ընդունի զստացող սուրբ գրոցս:

326ա (Ստացողի) Փառք համագոյ եւ միասնական, անբաժանելի սուրբ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Որ ետ կարողութիւն տկար անձինս Բարսեղ սոսկանուն բանի սպասաւորիս, որ ետու գրել զաստուածաշունչ տառս առաքելոց պրակիս, զոր մեկնեալ է սա Յովհաննոս Ոսկեբերանին եւ սուրբ հօրն Նիքիեմի եւ թարգմանեալ է ի յունաց ի հայս Գրիգորի Վկայասիի Պալիաւունոյ (վերջին բառը՝ լուսանցում, մանրագիր):

Արդ, գրեցաւ ի մեծ թուականին հայոց ՊԿԷ. (1418), ի դուռն Երկուտասան սուրբ Առաքելոցն Եղիազարու վանացն՝ յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց:

Այլ եւ ուսուցչին իմոյ՝ քաջ հռետորին Սրապիոն րաբունապետին եղիցի յիշատակ մատեանս այս:

Արդ, աղաչեմ զձեզ, ո՛վ րաբունիք եւ աշակերտեալ մանկունք, յորժամ ընթեռնուք եւ կամ արինակէք զՄեկնութիւն Գործոց առաքելոցս, յիշեցէ՛ք ի սուրբ յաղօթս ձեր զԲարսեղ վարդապետս եւ զամենայն ազգատոհմս իմ: Եւ որք յիշէք, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ:

326ա (ստ. լս.) Կատարեցաւ աստուածաշունչ տառս, որ է պրակք առաքելոց, փետրվար յԲ.:

326ա Գծագրեցաւ ձեռամբ Կարապետ եպիսկոպոսի եւ ծաղկեալ կազմեցաւ ձեռամբ մեղապարտ Յովհաննիսի: Ընթերցողք, ասէք Ողորմի:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ պհպ. Բա. սեւով բողոքակ՝ «Печать Ахалцыхской градской полиции», 326ա. սեւով բողոքակ՝ «ԲԱՐՍԵՂ ՎԱՐԳԱՊԵՏ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ»:

ԿԿԱՐՁԱՓՈՐՁ՝ 94բ՝ ձի, լուսանցազարդ, թռչուն: ԳՐՁԱՓՈՐՁ՝ պհպ. Գբ՝ (նոտրդիր) «առաքեց, աի»:


ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած պիտակին (նոտրդիր) «/// Վանական / վարդապետի / ///ածոյ Մեկնութիւն / [Յոբ]այ», պհպ. Բա՝ «193/2690», «Հ^մ 177/33», «ՊԿէ. - 1418 / Մ[ետառայ] եպ[իսկոպոս]»:

2691


ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ, ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ԹՂԹՈՅՆ ՊՕՂՈՍԻ

ՏԻԳՐԱՆԿԱԵՐՏ, ԵՂԻԱԶԱՐՈՒ ՎԱՆՔ (ՏԱՐՕՆ) ԳՐԻՁ՝ Կարապետ կրօնաւոր: ԾԱՂԿՈՂ, ԿԱԶՄՈՂ՝ Սահակ Բնյ. Բաղիշեցի: ՍՍԱՅՈՂ՝ Բարսեղ բարունապետ:

ԹԵՐԹ՝ 256. չգրուած՝ 254բ-6բ: ՊՐԱԿ՝ Ա.-ԻԲՄ12 (ԻԲ՝ 4): ՆԻԻԹ՝ բուլք: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 29,5x20,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսին (22,5x14,5). սկզբնատողեր՝ կարմրով եւ մանուշակագոյնով: Գիր՝ բոլորգիր (Յա-164բ. նմուշ՝ 45ա), նոտրգիր (164բ-254ա. նմուշ՝ 178ա): ՏՈՂ՝ 37: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ բաց շագանակագոյն կաշի, դնակով եւ 2 կապիշով, միջուկը տախտակ. աստաղը դրոշմագարդ կապոյտ կտաւ. վերին յուսանցակողերի հիմքի մօտ՝ զարդաշաւանակի մէջ խաչ, ստորին յուսանցակողերի հիմքի մօտ՝ զարդանախշ:




Նմուշ 45ա



Նմուշ 178ա

ՄԱՆԻԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Եփրեմ Ասորի եւ Յովհան Ոսկերեւան («ՍՈՒՐԲՆ ԵՓՐԵՄ», «ՍՈՒՐԲՆ ՅՈՂԱՆ ՈՍԿԵՐԵՎԱՆ») 2բ, Պօղոս առաքեալ եւ Անանիա Սանահնեցի («ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԱԼԻՆ ՊՕՂՈՍ»)՝ 11բ: Կ ի ս ա խ ո ռ ա ն Յ ա, 12ա: Ճ ա կ ա տ ա գ ա ռ դ՝ 49բ, 89ա, 114բ, 129բ, 146բ, 159բ, 171ա, 181բ, 192ա, 224ա, 236ա, 245ա, 251ա: Լ ո ռ ս ա ն գ ա ռ դ՝ բուսական, թռչուն, յուշկապարիկ՝ 168բ: Ղ ա ռ դ ա գ ի ռ՝ հանգուցագիր, թռչնագիր, կենդանագիր, Ծ՝ մէջը մարդու դէմք՝ 79բ: Գ ո յ ն ե ռ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, նարնջի, վարդագոյն, շագանակագոյն, սպիտակ, սեւ, ոսկի:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւետարան բառ Մատթէոսի, ԺԶ. 19-28, ԺԹ. 4-14: ԺԱ. դ.: 1 (Ա) + 1 (Բ), ստացուած մէկական թերթերի ընդերկայնակի հատումով: Մագաղաթ, 29x19,5, երկսին (25,5x17): Բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Աբ), տող՝ 18. գծումներ՝ ճշմամով: Կարդալ՝ Աա, Աբ. «///[կապե]լսցես յերկրի, [եղիցի] կապեալ [յերկ]իմս... գորդի մարդոյ եկեալ արեայութեամբ իւրով///» (ԺԶ. 19-28), կարդալ՝ Բա, Բբ «/// [Պատասխանի ետ նոցյա եւ ասէ. Չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ [թ]է որ հաստատեացն... թու[յլ տոմ] մանկտոյ[դ] եւ[լ] մի արգելու[լ]///» (ԺԹ. 4-14): Ունի ստորին յուսանցային համաբարբառ:



Նմուշ Աբ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, փեծուած, տեղ-տեղ՝ առաւելապէս անկիւնները մաշուած-թափուած, չորս կապիշներից 2ը եւ 4 գամերն ընկած. մնում են Ա. փեղկին՝ գամերի

անցները, Բ. փեղկի ներսի կողմում՝ 4 կապիշների հիմքերը. գործածութեան եւ խոնաւութեան հետեւանով գանազան բծեր, դեղին հետքեր, ք. 199-256՝ ստորին արտաքին անկիւններ անմահու ջրից խոնաւացած, մզացած, բորբոսի հետքերով, պատահիկ-պահպանակների ներքին յուսանցները 1,5 սմ լայնութեամբ մնացած կազմաստառի երուտի տակ:

ՌԿԷ.-ՌՆԶ. – 1618-1627

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

3ա-252բ [Անանիայ Սանահնեցոյ Մեկնութիւն թղթոցն Պօղոսի]

1. ա. 3ա-4ա [Պատճառք թղթոյն Հոովմայեցոց] – Բազումբ հաւատացին ի Քրիստոս... եւ ցածուցանէ զհակառակութիւն:

բ. 4ա-6բ Յաղագս թղթոց առաքելոյն այսպիսի իմանալի է – Չի ոչ առին հրաման... իշխանութիւն եւ պատիւ:

գ. 6բ-9բ Այլ պատճառք առաքելական թղթոյն: Վասն թղթոց առաքելոյ, թէ որպէս կարգեցան զկնի միմեանց. նախ թէ որ յառաջագոյն նորոգեցաւ կամ ուստի – ՁՀոովմայեցոց թուղթն յառաջագոյն եղեալ են... խորհրդոյս, որպէս եւ կամին:

դ. 9բ-10բ Յովհաննու Ոսկերեւանի Պատճառք թղթոյն Հոովմայ – Յանգ եւ հանապազ ընթեռնելով զգիրս... տեսանել առ Պօղոսի անձինն:

ե. 10բ-48ա Սրբոյն Եփրեմի Պատճառք թղթոյն Հոովմայ – [Գ]իտեմ, զի նոր կտակարանքս... աւզուտ լինել աշակերտելոցն:

2. ա. 48աբ Սրբոյն Եփրեմի Պատճառք Առաջին Կորնթացոց թղթին – Առ Կորնթացիս իբրեւ էհաս առ նոսա... առաքեալ գրեաց զայս:

բ. 48բ-88ա Յովհաննու Ոսկերեւանոյն Պատճառք Առաջին թղթոյն Կորնթացոց – Կորնթոս քաղաք է եւ լաղացոց... եւ մարմնականս, այլ հոգեւոր իմն է:

3. ա. 88ա Տեառն Եփրեմի Պատճառք Կորնթացոց – Հալածուամ մեծ եւ անհնարին յարեաւ... եւ աղաչէր զնոսա:

բ. 88ա Եթաղեալ – Ամենայն բանք թղթոյս այսորիկ... ամբարհաւաճութեանց եւ շարութեանց:

գ. 88բ-113բ Յովհաննու Ոսկերեւանի Պատճառք Բ. Կորնթացոց – Պարտ եւ պատշաճ է ինքնին մտանել... եւ լինել բնակարան սուրբ Երրորդութեանն:

4. ա. 113բ Սրբոյն Եփրեմի Պատնաոֆ Գաղատացոց թղթոյն – Գաղատացիքն աշակերտեցան ի Պաւղոսէ... ընդդէմ նոցա յասելն իւրում այսպէս Պաւղոս:

բ. 113բ-29ա Սրբոյն Յովհաննու Ոսկերեւանին Պատնաո Գաղատացոց թղթոյն – Բազում ցասմամբ լի է սկիզբն բանիս... մոլորութենէն հեռացուցանել զնոսա:

5. ա. 129ա Պատնաո Եփեսացոց թղթոյն Եփրեմի սուրբ հօրն ասա՛ – Եփեսացիքն աշակերտեալ էին յաւետարանչէն... որպէս ի վերուստ յաղագս Քրիստոսի:

բ. 129ա-45ա Պատնաո Յովհաննու Ոսկերեւանին առ Եփն՝ – Եփեսոս մայր քաղաքաց է ասիացուց... եւ արդարութիւնն անեղծ:

6. ա. 145ա Սուրբ հօրն Եփրեմի Պատնաոֆ թղթոյն Փիլիպեցոց – Հալածուան մեծ յարեան ի վերայ Պաւղոսի... այսպէս՝ Պաւղոս եւ Տիմոթէոս:

բ. 145բ-59ա Յովհաննու Ոսկերեւանի Պատնաոֆ թղթոյն Փիլիպեցոց – Փիլիպեցիքն ի քաղաքէն Մակեդոնացոց են... գործովք առաքինութեամբ, զի հանապազ ընդ մեզ եղիցին:

7. ա. 159ա Սրբոյն Եփրեմի Պատնաոֆ Կողոսացոց թղթոյն – Կողոսացիք աշակերտեալ էին... ի սկզբան թղթոյս իւրոյ այսպէս:

բ. 159ա-71ա Յովհաննու Ոսկերեւանի Պատնաոֆ Կողոսացոց թղթոյն – Ամենայն սուրբ թուղթքն Պաւղոսի... ի ձեռն Տիբրիկոսի եւ Ոնեսիմայ:

8. ա. 171ա Սրբոյն Եփրեմի Պատնաո Առաջին թղթոյն Թեսաղոնիկեցոց – Պաւղոս իբրեւ հալածեցաւ ի քաղաքէ անտի... առաքեալ յԱթենա յասելն իւրում այսպէս:

բ. 171ա-80բ Սրբոյն Յովհաննու Ոսկերեւանի Պատնաո Առաջին թղթոյն Թեսաղոնիկեցոց – Ընդէր յորժամ առ Փիլիպեցիսն գրէ... քանզի մեծ երկիւղէր նոցա յիրացն:

9. ա. 180բ-1ա Սրբոյն Եփրեմի Պատնաո Բ. թղթոյն Թեսաղոնիկեցոց – Թեսաղոնիկեցիք զկնի այսր... գրել նոցա յասելն իւրում այսպէս:

բ. 181ա-8ա Յովհաննու Ոսկերեւանի Պատնաո Բ. թղթոյն Թեսաղոնիկեցոց – Ասաց յառաջնում թղթին... եւ իմանալ զխոտելի բանս թղթոց նոցա:

10. ա. 188ա Սրբոյն Եփրեմի Պատնաո Եբրայեցոց թղթին – Եբրայեցոց թուղթս թուի թէ չիցէ Պաւղոսի... յառաջ մատուցեալ ցուցանէ:

բ. 188ա-9ա Սրբոյն Եփրեմի Պատնաո Եբրայեցոց թղթին – Ի սկզբան իսկ թղթոյս այս ծուփ եւ խնդիր... ասէ ի սկզբան թղթոյն իւրոյ այսպէս:

գ. 189ա-90ա Սրբոյն Կիւրղի Պատնաո [թղթոյն] Եբրայեցոց – Ել ի վերայ լերինն բարձու... սկիզբ արարի ասել:

դ. 190ա Որոգիմի յեկեղեցոյ պատմութենէ – Բայց ասաց նա դարձեալ... եւ թարգմանեաց Կղեմենտէս ի յոյն անդր:

ե. 190ա-223ա Յովհաննու Ոսկերեւանի Պատնաո Եբրայեցոց թղթին – Հոռովմայեցոցն գրէ երանելին Պաւղոս... ծառայի եւ տեսան, ծերոյ եւ տղայի. ամէն:

11. ա. 223աբ Սրբոյն Եփրեմի Պատնաո Առաջին թղթոյն Տիմոթեայ – Առաքեալ յղեաց զՏիմոթէոս առ Եփեսացիսն... նա ինքն է եկեղեցի Աստուծոյ յասել իւրում այսպէս:

բ. 223բ-35ա Յովհաննու Ոսկերեւանի Պատնաո Ա. թղթոյն Տիմոթեայ – Յեթնասանից առաքելոցն էր Տիմոթէոս... ամենայն ինչ բարուք լինի:

12. ա. 235աբ Սրբոյն Եփրեմի Պատնաո Երկրորդ թղթին Տիմոթեայ – Պաւղոս ծանեալ հոգւովն... ի Հոռով քաղաքէ առ Տիմոթէոս յասելն իւրում այսպէս:

բ. 235բ-44բ Սրբոյն Յովհաննու Ոսկերեւանի Պատնաո Բ. թղթոյն Տիմոթեայ – Զիարդ իցէ, զի երկրորդ թուղթ գրէ առ Տիմոթէոս... յորժամ այն լինիցի, չէ ինչ որ տրտմեցուցանէ:

13. ա. 244բ-5ա Սրբոյն Եփրեմի Պատնաո Տիտոսի թղթոյն – Պաւղոս եթող զՏիտոս ի Կրետէ... գրել առ Տիտոս յասելն իւրում այսպէս Պաւղոս:

բ. 245ա-50ա Յովհաննու Ոսկերեւանի Պատնաո Տիտոսի թղթոյն – Քան զամենեսին, որ ընդ Պաւղոսին էին... եւ ահա ամենայն ինչ ձեր սուրբ է:

14. 250ա-2բ Յովհաննու Ոսկերեւանի Պատնաո թղթոյն Փիլիմոնի – Նախ պատճառս թղթոյս կարեւոր համարիմ... որ եւ մեք աղօթիւք սրբոց փրկեսցուք յաւիտենից մահուանէն, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր եւ Հոգւոյն Սրբոյ փառք յաւիտեանս. ամէն:

Լուսանցներում (51ա, 83բ, 155ա եւ այլուր) կան աղբիւրների նշումներ եւ լրացումներ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

49բ եւ զեղկելի գրիչս՝ զսուտանուն Կարապետս, եւ զճնօղան իմ, որք ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ յիշեցէ՛ք ի Քրիստոս:

79բ եւ զստացող սուրբ կտակիս զտէր Բարսեղ բաբունապետն եւ զաստուածաբան վարդապետն, որ ետ գրել նուաստ գրչի՝ սուտանուն Կարապետի՝ յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց եւ եղբօրն՝ մահդասի Ապտովին: Եւ որ յիշէ, յիշեալ լիցի յահեղ ատե[նի]:

252բ Աւարտեցաւ սուրբ գիրքս Պաւղոսի, զոր մեկնեալ են աստուածաբան վարդապետքն սուրբն Եփրեմ եւ սուրբն Յովհանն Ոսկիաբան, ի թուականութեանն հայոց Ռ. եւ ՀԳ. (1625), ի հայոց ի ժԳ. (13) քաղոց, ի հոռովմայեցոց փետրվարի ԻԵ. (25), ի Բուն բարեկենդանի ուրբաթին, ձեռամբ նուաստ Կարապետի, զի ի ՌԿէ. (1618) թվին սկիզբն եղեւ եւ ի [Ռ]ՀԳ.ին

(1625) կատարումն, հրամանաւ վարդապետին իմոյ տէր Բարսէլի, որ հրամայեաց նա, եւ ես գրեցի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց, նա եւ եղբօրն իւրոյ մահադասի Ապտուլիմ, որ այս Լ. (30) ամ է հրաժարեալ յաշխարհէս եւ մրցեալ յերկա աշխատութեանց մշտամուռն շաղթիւք եւ խարազնագգեստ ճգնութեամբ լիցի ի սմա մասն եւ յիշատակի. ամէն:

253ա Փառք ամենակալ, ամենակարող, ամենաբարի, անբաժանելի սուրբ Երրորդութեանն եւ մի աստուածութեանն՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. արհնեալ յամենայնի. ամէն:

Արդ, ի ժամանակս յետինս եւ անբարի, դառն եւ դժուար ես՝ Բարսէլ վարդապետս, յետինս յորդիս Նոր Սիոփնի, ցանկացող եղէ սուրբ տառիս, վասն որոյ եւ փափագեալ իմ աստուածախօս վարդապետութեան սուրբ առաքելոյն Պօղոսի՝ բացայայտեալ սրբոյ հարցն Յովհաննու Ոսկեբերանի եւ Եփրեմի, զոր եւ յետոյ այլք՝ ի սրբոց վարդապետաց համառօտեալ՝ յԱմանիայ վարդապետէ Սամահնիմ, որ էր ի ժամանակս կաթողիկոսութեան տեսուն Պետրոսի, յաւուրս Դիոսկորոսի, առ ի պէտս սպասաւորաց բանի:

Եւ ես՝ Բարսէլ վարդապետս, ետու գրել զայս բուրաստան ամենայլի, գանձ անկողոպտելի՝ յիշատակ հոգւոյ իմոյ եւ մխիթարիչ մարմնոյ, սփոփիչ տրտմութեան եւ փարատիչ ձանձրութեան, եւ եդի ի դուռն վանացն Եղիազարու, զի մնասցէ անձին յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց՝ հարն (անուան տեղը բաց՝ չգրած) եւ մօրն, եւ եղբարցն իմոց մահադասի ծերունի Ապտուլիմ, որ ի բազում ժամանակէ ճգնի ի դուռն նոյն վանացն, որ երկոտասան առաքեալք վերածայնի, եւ այլ եղբարցն փոխեցելոցն առ Քրիստոս:

Արդ, ընկալ զսա ողորմութեամբ քով որպէս գերկուս լումայս այլւոյն յանկարօտ գանձանակ փառաց քոց, եւ տո՛ւր մանկանց եկեղեցւոյ ուրախութեամբ հանդիպիլ սմա եւ ընդունել զսա ըստ հաճոյից կամաց քոց եւ տո՛ւր նոցա լինել երկիր բարի եւ պարարտ եւ արա՛ զսա նոցա սերմն սրբութեան եւ արդարութեան՝ տալ քեզ զպտուղն Ճ.աւոր (100), Կ.աւոր (60) եւ Լ.աւոր (30): Եւ որք ընթեռնուն սիրով եւ լսեն եւ ընդունին, աղաչեմ զքեզ, տո՛ւր նոցա լուսաւորութիւն մտաց, սրբութիւն սրտի, ուղղափառութիւն հաւատոյ եւ հաստատութիւն սիրոյ եւ յուսոյ, եւ արա՛ զսա նոցա անբժութիւն հոգւոյ եւ զղջումն ապաշխարութեան եւ թողութիւն մեղաց, եւ քաղցրացոյ զսա ի լսելիս նոցա եւ ի միտս՝ քան զմեղր բերանոյ, եւ արա՛ զսա մեզ կտակ կենաց եւ առաջնորդ երկնաշու ճանապարհին եւ ի լսել զբանս զայսոսիկ, ընդ նմին լցո՛յ զնոսա հոգւով երկիւղի եւ հոգւով իմաստութեան, որպէս երբեմն յընթեռնուլն զթողթին Պօղոսի առնուին Հոգի Սուրբ եւ խօսէին յայլեալ լեզուս: Վասն որոյ եւ իմ աղաչանք

եւ առ ձեզ, եղբա՛րք սիրելի Աստուծոյ եւ սիրեցեալք ի Քրիստոսէ, զի եւ արտասուօք պաղատանօք խնդրեմ շառնել անտես գերկայն ժամանակաց աշխատութիւնս, որ եղեւ ի սմա յերկս վաստակոց: Այլ ընկալարուք ձեզ ի փշոց վարդ եւ ի տատակէ՛ թուզ, եւ ի մորենոյ՝ խաղող, եւ ի խորոց ծովու՝ զականս պատուականս եւ ի գաղտկրայէ՛ զմարգարիտս գեղեցիկս: Նա եւ ինձ ստացողիս վարձ բարեաց պարգեւեա՛, զարտասուս աչաց, զողբս հառաչանաց, զաղալթս պաղատանաց, զթողութիւն մեղաց եւ զքաւութիւն յանցանաց՝ հայցելով ինձ յարարչէն ամենեցուն, զի ոչ անլ՝ 253բ|տես առնէ զհայցուածս մեր:

Եւ արդ, աղաչեմ զամենեսեան առ հասարակ, որք աւկտիք ի սմանէ եւ կամ աւրինակէք, եւ որք յետ մեր ժառանգէք զսա, յիշման արժանի առնէք զիս՝ հանդերձ ծնօղօք իմովք:

Արդ, գրեցաւ աստուածախօս մեկնութիւնս Պօղոսի առաքելոյն ի թվին հայոց Ռ. եւ ՀԵ. (1626) ամին, յերկիրն Տարօնոյ, ի վանքն Եղիազարու, ի դուռն Սուրբ Աստուածածնիմ եւ երկոտասան Սուրբ Առաքելոցն եւ Սուրբ Ստեփանոս Նախավկային եւ Սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին եւ այլ սրբոցն, որ են աստ հաւաքեալ: Վասն որոյ եւ աստ եդի յիշատակ ինձ եւ ծնօղաց իմոց՝ հարն (անուան տեղը բաց՝ չգրած) եւ մօրն (անուան տեղը բաց՝ չգրած) եւ եղբարցն իմ՝ մահադասի Ապտուլիմ եւ Մեհերիմ՝ փոխեցելոյն առ Քրիստոս եւ Մախատաիմ՝ փոխեցելոյն, զոր տէր Աստուածն ողորմեսցի նոցա: Եւ որ յիշէ, յիշեալ լիցի առաջի ատենին Քրիստոսի: Եւ լաւ պահօղքն եւ խնամ տանօղքն պսակեալ լիցին ի Քրիստոսի Աստուծոյ:

Եւ արդ, սկիզբն եղեւ սուրբ գրոցս ՌԿ. եւ է. (1618) թվին, ի մայրաքաղաքն Տիգրանակերտ, որ Յամիթ ասի, ձեռամբ հոգեւոր որդւոյն իմոյ՝ Կարապետ բանի սպասաւորի եւ տարեալ ի նոյն վանքն Դազարու, գրեաց եւ աւարտեաց ի թուին ՌՀԳ. (1625) ամին, եւ [Ռ]ՀԶ. (1627) Բաղիշեցի տէր Սահակ գրագիրն եկն վասն ուխտի ի Սուրբ Կարապետն եւ ի Սուրբ Առաքեալն: Եւ ես՝ նուաստ Կարապետս արգելեցի եւ ետու ծաղկել եւ կազմելո՞ յիշատակ <յիշատակ> հոգեւոր հօրն իմոյ Բարսէլ վարդապետին եւ ծնօղաց նորին, նաեւ ուսուցչին իւրոյ՝ Մրապիմ վարդապետին՝ փոխեցելոյն առ Քրիստոս: Եւ որ յիշեն, յիշեալ լիցին առաջի անմահ Գառին Աստուծոյ: Նա եւ ինձ՝ եղկելի Կարապետիս ողորմեսցի Քրիստոս, որ հրամանաւ հոգեւոր հօրս մերոյ եւ առաջնորդի սուրբ ուխտիս գրեցի զսա բազում աշխատութեամբ ի յայս դառն եւ ի նեղ ժամանակիս, զի ի ձմերայնի սակաւ մի գրէաք եւ ի յամարայնի ոչ, վասն ահի անօրինաց եւ հարկապահանջութեան բռնաւորացն ոչ կարէաք, զի յամենայն կողմանց ի վտանգի կայաք: Վասն այն յերկարեաց ի

վերայ մեր գրել սորա: Եւ դուք, ո՛վ ընթերցողք, վասն Աստուծոյ անմեղադիր լինիք խոշորութեան եւ սխալանաց գրոյս, զի կարն մեր այս էր: Այլ վասն հարկի հոգեւոր հօրս մերոյ աթոռակալի սուրբ աթոռոյս եւ դիտապետի մայրաքաղաքին Համբա տէր Բարսեղ քաջ ռաբունապետի եւ աստուածաբան վարդապետի գրեցի զԳործոց մեկնիչն եւ զԱռակացն եւ զաստուածաբան սուրբ առաքելոյն Պողոսի՝ յիշատակ իւր եւ ծնաւդաց իւրոց, ի դուռն Սուրբ Առաքելոցն եւ այլ բազում գրեանք՝ զՄաթէոսի Մեկնիչն, զԻւր քաղովածոյն, զՂուկասու Մեկնիչն եւ զՅովհաննուսն եւ զԻւր քաղուածոյն, զԴանիելի Մեկնիչն եւ զՏումարի Մեկնիչն, զՄիխայել պատմագիրքն, զԳանձուցն եւ զՊարապմանցն ի մի տուփ, զՏոնապատճառն:

|254ա| Թ. եւ ԾԼ. (1609) ամին նորոգեաց վանքս եւ բարձրացոյց զպարիսպն եւ ձեռք մի լաւ սգեստ՝ եմփորոնաւ եւ թագիւ եդ յիշատակ ի դուռն Սուրբ Առաքելոցն, որոյ յիշատակն արհնութեամբ եղիցի. որք կարդան եւ աւգտին եւ Աստուած ողորմի ասեն. ամէն, եղիցի:

Եւ թէ՛ որ ի մերոց կամ յօտարաց, ի վարդապետաց կամ յեպիսկոպոսաց կամ ի կրօնաւորաց կամ յաշխարհականացն յանդգնի եւ հանէ զայս յիշատակներս ի դրանէ Սուրբ Առաքելոցն՝ ծախելով կամ գրաւ դնելով կամ վասն մարմնաւոր պատճառի, նա ի Քրիստոսի արդար դատաստանին անմասն ելցէ եւ ընդ Յուդայի եւ ընդ խաչահանուսն դասի, եւ բաժին նորա ընդ Դադանայ եւ ընդ Կոբխա լիցի: Այդ եւ լաւ պահողք եւ խնամ տանողք եւ հոգէբարձու ցաւակիցքն եւ ընթերցողք բանին լսեն զեկայք արհնեալքն. ամէն:

Դարձեալ յերես անկեալ կողկողագին պաղատանօր հայցել ի ձէնջ, ո՛վ ընթերցողք սուրբ գրիանացս, զոր յիշատակեցաք աստ, յորժամ ընթեռնոյք կամ արինակէք, Աստուած ողորմի ասացէ՛ք ըստացողի սոցա Բարսեղ վարդապետին եւ ծնողաց նորին եւ եղբարցն եւ քուերցն եւ հօրեղբարցն եւ ամենայն ազգականացն, նա եւ իւր անհնազանդ, անառակ որդւոյն՝ գրօղի սորա, փցուն, սուտանուն Կարապետ գրչի, որ եմ ի նոյն վանացն Եղիազարու եւ դեռ եւս սպասաւոր սուրբ աթոռոյս եմ, յիշեսչիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զիս եւ զծնողսն իմ, հանդերձ ամենայն ազգականօք: Նա եւ ծաղկողի սորա Սահակ քահանային եւ իւր արհնեալ աշակերտացն՝ Դանիել կրանաւորին եւ մանուկ Մուրատին, որ աշխատեցան ընդ իւր ի ծաղկելն եւ ի կազմելն: Աստուած ողորմի ասացէ՛ք նոցա, զի աշխատութեամբ հասոյց յաւարտ եւ ի կատար ի թվարկութեանն հայոց ՌՃ. եւ Զ. (1627), յուլիս ամսոյ ի ԻԱ. (21), որ էր շաբաթ զծաղկելն եւ զկազմելն: Եւ յետ սորա ծաղկեաց Յիսուս որդի մի, եւ Բ. Շարակնոց կապեաց ի դուռն Սուրբ Առաքելոցն: Նա եւ ինքն Քրիստոս ողորմեսցի ստացողի սուրբ գրոցս Բարսեղ վարդապետին, իւր

ծնողացն եւ եղբարցն եւ ամենայն ազգականացն իւր: Նոյն ողորմութեամբն եւ ինձ՝ գրողի սորա ողորմեսցի Քրիստոս Աստուած, յորժամ երկոտասան առաքելովքն նստի ի դատողական աթոռն ի նոյն տեսինն, լսել տայ զերանաւէտ ձայն, որ ասէ արդարոցն. Եկայք՝ Հ[օր]՝. ամէն, Հայր մեր, որ յերկինս՝: Զոր եւ խնդրեմք ի մարդասիրէն Աստուծոյ, զի զմիաբանք սուրբ ուխտիս անփորձ պահեսցէ զտէր Յովհաննէս վարդապետն, զլուսարար տէր Նահապետն, զտէր Կիրակոսն, զտէր Աւետիսն, զիւր քուրորդին զՅովհաննէս մալազն եւ զտէր Գրիգորն եւ զփոքր Մարգարա մալազն, որ այժմ հաստատ կան ի սուրբ ուխտս ի ժամ, ի սաղմոսերգութիւն, ի յաղօթս եւ յամենայն աստուածապաշտութիւնս եւ ի գործս բարիս:

Միայն այս՝ գլխաւոր յիշ-ս տե՛ս ժէ. դ-ի յիշ-ք, Բ., էջ 238-40, 2^ր 365:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳՈՅԻ

1. 17ա (փակցուած էջանշան թերթիկի վրայ, ժէ. դար, նոտրգիր) //էր Սարգիս վարդապետէ// //ու-թեամբ ծանիք մեր թէ// //նեալ քահանայք եւ ըռէ// //ր եւ այլ դուլաթաւորք. ա// // եղբայր Աբրահամ, պարոն// // [առ]աքեցի առ ձեզ, որ է դա եր// // Առաքելս վանից տէրն// // մաւոր ողորմութիւն կու խ// // ալ վարդապետէն, ի վեր ա//:

- 2. 1ա (1801 թ., նոտրգիր) Ղուրուշ 0840 հաճի Օսման աղային - Ըձն.
- 0600 Կէտուկ ալուն - Զձ.
- 0400 հաճի Հաշիմին - Դձ.
- 0100 Նանօշին - Ը.
- 0320 Միքայէլին - ԳձԻ. Ղուրուշ
- 0260 Խանուսին - ԲձԿ.

2550 Ղուրուշ Ֆախի Սուլէյման քրթուն ետու: Յերբ պարտք տան, հիսապ անենք:

Ջախ սինակի թուրք արաբական գծագրութեամբ են, վերջում հանրագումարի 2550 թիւը սխալ է, պէտք է լինէր՝ 2520:

1ա (1801 թ., նոտրգիր, նոյն ձեռքով) Արդ, զայս եւս ծանիք՝ Խազօղլի Ահմաթի որդի Մարտիրոս եւ կամ իւր հօրեղբօր պարտք, յերբ տրուի: Նոցին թէ՛մէսուկն եաղլիշ կայ գրած, եօթանասուն զօլաթայ մէկ, քսան Ղուրուշ մէկ, որ կանէ ՂԵ. (95) զօլաթայ: Նախ թէ՛մէսուկ տուած են եւ զփարան չէ առած: Հ. (10) զօլաթէն քուկմէ առեր Սաեփան վարդապետ եւ դարձուցեր յիւր վերայ: Եւ Ի. (20) զօլաթէն զկնի թէ՛մէսուկ գրելոյն մնացեր է մօտ հաճի Ահմաթ: Յերբ պարտք տրուի զայս ՀԵ. (75) եւ Ի. (20) զօլաթէն: 90* (95) զօլաթէն հանէք ի թէ՛մէսուկէն եւ տուէք: Տեղոյս միաբան Գրիգոր եւ Յարութիւն վարդապետք, Յակոբ վարդապետ, տէր Յոհանն վկայ են այս բանիս եւ տեղեակ:

* 90 թիւը արաբական գծագրութեամբ է:

1ա (նոտրգիր, նոյն ձևաբով) Ի Մուշ քաղաքէն կամ յայլ ուստեքէ, եթե սուտ ձեռագիր հանեն, եւ պարտուց դաւի անեն, սուտ է, մի՛ ոք ընդունիցի եւ մի՛ տայք: Շատ ոմանք, որ զպարտս իրեանց առեալ են եւ թէմէսուկն պահեալ, այսպէս գիտացէ՛ք, որ ես՝ սրբոյ ուխտիս առաջնորդ Յօհաննէս եպիսկոպոսս, գրեցի ի թուոյս մերոյ ՌՄԾ.ին (1801) եւ սեպտեմբերի ԺԳ.ին (13), հրամանաւ հաճի Շէխիպէլիին եւ գիտութեամբ նարդեհիս վարդապետաց եւ միաբանիցս եւ կնքեցի: Տեսողացն հաճոյ թւեսցի:

1բ (1801 թ., նոտրգիր, նոյն ձևաբով) Ի թուակա-նութեանս հայոց ՌՄԽԳ.ին (1794) եւ նոյեմբերի ԻԳ.ին (24) ես՝ Աւարանցի Յօհաննէս վարդապետս յաշողմամբն Աստուծոյ կարգեցայ դէտ ի վերայ Սրբոց երկոտասան Առաքելոց վանիցս, որ էր խանգարեալ եւ փրկեալ: Ուստի նախ լքեալ տարակուսեցայ եւ ապա մտեալ ի ջան, զամենայն փրկեալսն նոր ի նորոյ շինեալ եւ նոր զանկակատունն ի հիմանց կերտեալ եւ շինեալ, զՍուրբ Աստուածածնի սագերն եւս նորոգեցաք, եւ այլ բազում շէնքեր, եւ ի թաւլլան բերդակայ զամենայն շինուածսն նորոգեցաք բարեխօսութեամբ սրբոց առաքելոցն եւ օգնականութեամբն Աստուծոյ, որ միշտ տեսանէի զհրաշագործութիւնս սոցա: Նա եւ տեսի զաւերման պատճառս սրբոյ ուխտիս, որք էին լեռնական քուրթքն, զոր ինչ տեսանէին աչք նոցա, բռնաբար տանէին ասելով Մեր խաֆիրութիւն այսչափ է: Որ եւ շատ հարցուփորց արարեալ ի հին ծերոց եւ տեղեկացայ, նախ պահեր են սոցին մեծեր զվանքն եւ տուեալ պարտք վանուցն եւ չքմեղս եղեալ, այսպէս կապեալ են խաֆիրութիւն: Ապասցի քրթերուն հինկ քիլայ կորեկ տայ առաջնորդ վանացս, եւ մեր աւուրս այսպէս խօսեցաք հետ Ապասցի Ֆախի Սուլէյմանին՝ տարին Ե. (հինգ) քիլայ ցորեն եւ կորեկ: Ընդմիջեաց տան տարւոյն մէկ եզ եւ այլ ոչինչ: Խուչուրցի Բլնաօյի եւ իւր ընկերաց երեք քիլայ կորեկ տան, Ընդլիօացի Խօղօյի երեք շինիկ ցորեն տարւոյն: Եղեւ: Սասընցի Ուզէրին Ժ. (10) շինիկ ցորեն, թէպէտ յառաջ տաս զօլաթայ եղեր է:

Արդ, ի մեր աւուրս ահա այսպէս իմացեալ եւ տամբ: Եւ հրամանաւ հաճի Շէխիպէլիին գրեցի աստ, որ զկնի մեր մի՛ աւելուցուք եւ կրկին յաւեր փոխարկիցէք զսուրբ ուխտս: Տարւոյն Ա. եզ ըմբլկլանաց քրթերուն հինկ քիլայ Ապասցոց ցորեն, կորեկ, երեք քիլայ կորեկ Խուչուրցոց, Ժ. (10) շինիկ Սասընցոց, Գ. շինիկ Ընդլիօանցոց: Տապընցի քրթեր պարտուց դաւի կանեն: Սուտ է: Թէպէտ յառաջ տուեալ են, այլ ի Գասբար վարդապետէն առեր են ի Ընապատու բերդ եւ թէմէսուկն պահեր են: |Ձա| Սարի քեօշարի թէմէսուկներ սուտ են: Ոմանք նախ տուեալ են պարտք եւ առեալ եւ զթէմէսուկս պահեալ են եւ ոմանք ըստ նախ-

կին առաջնորդացն լեալ լաւամարդ, բան ինչ տալով առեր են թէմէսուկ այնու պայմանաւ, որ զպարտքն չառնուն, միայն խաֆիրութիւն ուտեն ի վանիցս, որպէս Ապասցի Ֆախի Ս[ուլ]էյմանին եւ Խուչուրցի Բլնաօյին: Այսպէս եղեր է: Եւ Զիլանցի Հէյաօյի պարտքն, որ Աստուածատուր վարդապետի ձեռամբն լեալ էր, ես ետու յիսուն զօլաթայ, այլ նա զթէմէսուկն ոչ ետ. երդուաւ, թէ կորուսեալ եմ եւ խլաս տուաւ: Թէ որ խլաս կորընչի եւս, նա Հէյաօն առեալ է զիւր պարտք եւ չունի բան ի վերայ վանիցն: Եւ ի մեր աւուրս ետու հաճի Խասըմեց Միխայէլին չորս հարիւր զօլաթայ սաղ եւ առի զթէմէսուկն, զոր Աստուածատուր վարդապետ տուեալ էր, թէ նա կամ իւր որդիք ուրիշ զթէմէսուկ հանեն, մի՛ ոք ընդունիցի, զերծեալ եմք ի նոցանէ, հաճի Օսման աղայի պարտքն ութ հարիւր քառասուն զուրուշ ետու, զոր յանցանեալ էր Բալվեցի Կարապետին: Ետու եւ առի զթէմէսուկն: Այլ Օսման աղային բան չի մնաց վանքի վերայ: Արգրուցի Ստեփան վարդապետի արարեալ պարտքն ձեռագրով մէկ հարիւր զուրուշ Նանօշին ետու եւ առի զձեռագիր: Ստեփան վարդապետի պարտք, զորոյ զձեռագիր նորոգեալ էր, Սարգիս վարդապետն վեց հարիւր զուրուշ, Կէտուկ Ալի աղային, զորոյ պարտքն ետու, Զձ. (600) զուրուշ եւ առի զթէմէսուկն: Ստեփան վարդապետի արարեալ պարտք եւ նորոգեալ զձեռագիր Սարգիս վարդապետն յԱրմն վանաց չորս հարիւր զուրուշ հաճի Հաշիմ էֆէնտուն ետու զնորին պարտքն Եձ. (500) զօլաթայ եւ առի զձեռագիր: Զսորա պարտքն եւ Կէտուկ Ալուն ի ՌՄԽԳ. (1795)ին ետու, զՆանօշին ի ՌՄԽԶ. (1797)ին, զՄիխայէլին ի ՌՄԽԶ.ին (1797) ետու: Եւ փաշայի մօր ԳձԻ. (320) զօլաթայ էր ձեռագրով Ստեփան վարդապետին եւ Մշու ջաղացն ընդհին սոյն պարտուցն: Ես գալս Խանուսի երեք հարիւր զօլաթէն եւ Ի. (20) զօլաթէն ետու, զթէմէսուկն եւ խլաս առի, այլ ջաղացն տակաւին ի ձեռս փաշային է: Այլ պարտատէր ի Մուշ շմնաց իմ օրովս:

Ի թուոյս ՌՄԾ.ին (1801) եւ սեպտեմբերի ԺԳ.ին (13) գրեցի: Եթէ ոք թէմէսուկ հանէ, սուտ է (Ղազալուն միայն մնաց զկնի գրելոյս, այլ մարդոյ չկայ):

254ա (1801 թ., նոտրգիր, նոյն ձևաբով) Ի թուոյս ՌՄԾ.ին (1801) ես՝ Յօհաննէս վարդապետս, առաջնորդ սրբոյ տեղուոյս, հաշուեցի զամս, որ թվականն ՌձՁ. (1627) ամ լեալ է աւարտ գրելոյ եւ կազմելոյ գրգոյս, որ մինչեւ ցայժմ լինին ամք հարիւր ՀԳ. (74): Բարսեղ վարդապետն լեալ է տեղուոյս, եւ Յամթայ քաղաքին առաջնորդ: Յամթա սրբոյ վանիցս թեմ եղեալ է յայնժամ: Այսպէս իմացէ՛ք, ընթերցողքդ:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա՝ սեւով շրջան՝ «Πεχ. Αχαλυβιχσκοῦ γραδσκοῦ πομπασ», 1ա, 1բ երկիցս՝ «ՔՐԻՍՏՈՍ Ի ԾՄԱՌԱՅ / ՅՈՎՀԱՆՆԵՅՍ ՎԱՐԳԱՊԵՏ / 1222 (1773 թ.)»:

17ա՝ փակցուած էջանշան թերթիկի վրայ, սեւ թա- նաքով բոլորակ՝ «ՍԱՐԳԻՍ / ՎԱՐԳԱՊԵՏ»:

ԳՐԶԱՓՈՐԶ՝ 39ա՝ (նոտրդիր) «այս բանքս Պողոսի», պտուկ-պհպ. Բք՝ «Աստուծոյս, աբ, աբգդե»:
ՆԿԱՐԱՓՈՐԶ՝ 39ա՝ զարդագիր՝ «Զ»:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած պիտակին, նոտրգիր. «[Անանիայ վարդապետի / Սանահնեցոյ / Մեկնութիւն / Պօղոսի Չորեքտասան / թղթոց / (1.)», 1ա՝ «198/2691», «Հ^մ 207/9.», «ՌՉԳ. - 1625 / Մ[Ես- րոյ] եպ[իսկոպո]ս»:

2692

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ, ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ԹՂԹՈՅՆ ՊՕՂՈՍԻ

ԳՂԱԿԱՅ վանք

ՌԿԲ. – 1613

ԳՐԻԶ՝ Փիլիպոս քիչ Մշեցի (Բագուեցի): ՍՍՅՈՂ՝ Մարտիրոս Բագուեցի:

332ա-4բ [Գրուխք եւ Վկայութիւնք ի թղթոցն Պօղոսի] – Գլուխս Գ. Ա., Բ., Գ.: Վկայութիւնս Ը. ... առ Կողոսացիսն անշարժ կալ ի նոյն եւ նմին լինել պտղաբեր եւ// (վերջը թափուած):

Լուսանցներում սրբագրութիւններ, աղբիւրների նշումներ:

Յաւելագրութիւն, ԺԸ. դար, շինծու բոլորգիր

329բ [Տաղ]

Ի քեզ դիմեմ, ո՛վ Տիրուհի,
մա՛յր եւ ծնօղ Տեառն Յիսուսի,
հայցեա՛ վասն իմ շնորհ բարի
մատչիլ ի գովեստ այս մատենի:
Գովել զսա ըստ իմ կարի,
քարոզական բանս պանծալի,
թէպէտ գրուատն, որ պատկանի,
մեղսամած անձս ոչ բերի:
Բամից սրբոց զքարոզչն արի,
սուրբ առաքեալն Տարսուսացի
անօթ ընտրեալն զարմանալի,
եւ տեսանօղն երրորդ երկնի:
Ի// (շարունակուած):

Մայրակապի ամբողջութիւնը պէտք է լինէր՝ «Ի Գրի[գորէ]»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

4ա ՈՎ Տէր Աստուած քաղցր եւ արդար, / բարեաց բաշխաւղ առատաբար, / զգործս, որ սկսա, տա՛ր ի կա- տար, / որ յոյժ բարեաց ես կամարար, / թէպէտ մե- ղաւքս եմ ես խաւար, / սակա մեղաց միտս է յիմար, / դու մի՛ հայիր յանձս իմ շար, / այլ տո՛ւր զպարգեւադ առա- տաբար, / զի արհեստիս իմ անյարմար / մեղաւք խոցեալ անձնս է տկար, / դու զարացո՛յ ամենակալ, / ան- հնարիս արա՛ հնար: Աւրհնեալ Աստուած իմ բարերար, / փառք եւ պատիւ քեզ անդադար, / զգործս ձեռաց ուղիղ արա՛, / զգործս ձեռաց դու աջողեա՛, / ձեռքս փտի եւ հող դառնա, / գիրս յաւիտեան երթա՛ մնա:
18ա Աւգնեա, Քրիստո՛ս Աստուած, քո ծառայիս:
66բ եւ զեղկելի գրիչս՝ զՓիլիպոս Բագուեցի երէցս եւ զճնաւղս իմ հանգուցեալ առ Քրիստոս՝ զԱզատն եւ զՄարթայն յիշեցէ՛ք ի Քրիստոս:
100ա եւ զիս՝ զանպիտանս եւ զամենայն մեղաւք ի լի թողութեան արժան արէ՛ք եւ զամենայն արեան մեր- ձաւորսն իմ:

Նմուշ 206ա

ՄԱՆԻԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ. գծանկարային – Կ ի ս ա խ ո ռ ա ն՝ 18ա, 27ա: Ճ ա կ ա տ ա զ ա ր դ՝ 67ա, 110ա, 137ա, 155ա, 174ա, 191բ, 207բ, 223ա, 239ա, 286բ, 304ա, 317ա, 325ա: Լ ո ս ա ն – ց ա զ ա ր դ՝ բուսական, թռչուն, խաչ, սերովքէ՛ 148ա: Զ ա ր – դ ա զ ի ր՝ հանգուցագիր, թռչնագիր, Ծ՝ մէջը մարդու դէմք՝ 100ա: Գ ո յ ն ե ր՝ սեւ:

ՎիձԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, ֆերձուած, տեղ- տեղ՝ առաւելապէս անկիւնները եւ Բ. փեղկը մաշուած-թա- փուած. երեսով է միջուկ-տախտակը, մէջի վերին մասի կաշին պոկուած-ընկած, յորսական կապիչներ եւ զամերն ընկած. մնում են Ա. փեղկին՝ զամերի անցները, Բ. փեղկի ներսի կող- մում՝ 4 կապիչների հիմները, դոնակի կաշին կծկուած, լուսան- ցակողերի կարմիրը թափուած. գործածութեան եւ խոնաւութեան հետեւանով զանազան բծեր, դեղին հետեր, ք. 1-96՝ արտաքին ստորին անկիւններ խոնաւութեանից փայլալուծ-թափուած, ք. 1-9՝ ցեցի անցներ, ք. 334՝ արտաքին լուսանցր 3.5 սմ չափով եզ- րահատուած, բոլոր թերթերի ստորին եւ ք. 155-335՝ վերին լու- սանցները խոնաւութիւն տեսած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

4ա-334բ [Անանիայ Սանահնեցոյ Մեկնութիւն թղթոցն Պօղոսի]

4ա-17ա Յառաջաբան Պաւղոսի առաքելոյ, նա- խակարգեալ ի գլուխ գրոյս – Ընդ ուսումնասէր եւ ընդ փոյթ քոյոյ սիրոյդ... եւ աղաչանք վասն նորին փրկելոյ ի ձեռն հաւատոց: Տունք Գ.:

Տէս ձեռ. 2691, Յա-252բ: 1/ա. 18ա-9ա: ք. 19ա-21բ: գ. 21բ-4ա: դ. 24ա-5բ: ե. 25բ-65ա: 2/ա. 65աբ: ք. 65բ-109ա: 3/ա. 109աբ: ք. 109բ: գ. 109բ-36ա: 4/ա. 136աբ: ք. 136բ-54ա: 5/ա. 154աբ: ք. 154բ-72բ: 6/ա. 172բ-3ա: ք. 173ա-90բ: 7/ա. 190բ-1ա: ք. 191ա-206բ: 8/ա. 207ա: ք. 207ա-21ա: 9/ա. 221աբ: ք. 221բ-32ա: 10/ա. 232աբ: ք. 232բ-4ա: գ. 234ա-5բ: դ. 235բ-6ա: ե. 236ա-85ա: 11/ա. 285աբ: ք. 285բ-303ա: 12/ա. 303աբ: ք. 303բ-16ա: 13/ա. 316ա: ք. 316ա-23բ: 14/323բ-8ա:

109ա Աւարտեցումն եղեւ գրոցս ի թվին հայոց Ռ. եւ ԿԱ. (1612), յաւուր հինգշաբթի, որ է սուրբ Աստուածածինն պահոց, ի գեաւղն ի Բագու, ի դուռն Սուրբ Աստուածածնին:

109ա Զգործս ձեռաց իմոց ուղիղ արա՛ ի մեզ, Տէ՛ր, գգործս ձեռաց մերոց աշողեա՛ ի մեզ (նման՝ 109բ):

123բ Եւ գեղկելի գրիչս յիշեա՛ ի Տէր (նման՝ 174ա, 221ա):

136բ-7ա (ստ. լս.) Ով հայր հոգեւոր եւ վարդապետ, աստուածաբան, յորժամ վերջ առնես թղթոյն Կորնթացոց եւ սկիզբն |137ա| թղթոյն Գաղատացոց, եւ զիս՝ գեղկելիս յիշեա՛, թերեւս ի ձէնջ գտից գողորմութիւն յԱստուծոյ:

155ա Տէր Աստուած իմ Յիսուս Քրիստոս, բարեխաւութեամբ քո սուրբ առաքելոյ Պօղոսի եւ սուրբ աստուածաբան վարդապետացդ Յոնաննու Ոսկիբերանի եւ Կիրողի եւ Եփրեմի եւ համառօտող վարդապետին Անանիայի, ողորմեա՛ ամենայն հաւատացեալ քրիստոնէից, մանաւանդ եւ ինձ՝ անարժան գրչիս եւ ամենայն մեղաւք ի ի Փիլիպոս երիցիս, որ չեմ ի կարգ նմանեաց իմոց, եւ ծնաւդացն իմոց եւ ամենայն արեան մերձաւորացն. ամէն: Եւ ով որ բերանով լի «Ողորմի» ասէ, ի միւսանգամ գալստեան ողորմութիւն ընկալցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն: Ծառա եմ:

222բ Զցանկ թղթիս գիր յառաջք գրոց (նման՝ 238բ):

285ա Եւ գեղկելի գրիչս Փիլիպոս Մշեցի եւ գհարեղբօր որդին իմ զՄարտիրոս երաժիշտն (վերջին բառը՝ այլ գրչով) եւ քաջ բաբունին եւ զայլ ամենայն արեան մերձաւորս իմ յիշեցէ՛ք ի Քրիստոս, ով վարդապետք աստուածաբանք, որ քննիչ էք բանին Աստուծոյ:

328ա Փառք ամենակալ, ամենակարող, ամենաբարի, անբաժանելի Սուրբ Երրորդութեանն, որ հասոյց զիս ի գիծս վերջի. եղիցի ինքն աւրհնեալ յամենայնիւ: Արդ եւ՝ ամենանուաստս եւ տառապեալս Մարտիրոս, յետինս յորդիս Նոր Սիոնի եւ առաջինս յանարգաց, փանաքի ըստ մարմնոյ եւ անարի ըստ հոգւոյ, ի գաւառէն Տարօնոյ, որ մականուամբ Մուշ կոչի, ի գեղջէ, որ կոչի Բագու, ցանկացող գոլով ի մանկութենէ սպասաւորութեան աստուածային բանի, հետեւեցա նմին, վասն որոյ եւ փափաքեալ իմ աստուածախօս վարդապետութեան սուրբ առաքելոյն Պօղոսի, բացայայտեալ սրբոց հարցն Ոսկիբերանի եւ Եփրեմի, գոր եւ յետոյ այլք ի սրբոց վարդապետաց համառօտեալ յԱնանիա վարդապետէ Սանահնին, որ էր ի ժամանակս կաթողիկոսութեան տեառն Պետրոսի, յաւուրս Դիոսկորոսի՝ առ ի պէտս սպասաւորաց բանի: Եւ ես ստացայ զսա՛ բուրաստան ամենալի եւ գանձ անկողողպտելի՝ յիշատակ հոգւոյ իմոյ եւ մխիթարիչ մարմնոյ, սփոփիչ տրտմութեան եւ փարատիչ ձանձրութեան: |328բ| Ով

Հայր գթութեանց եւ Աստուած մխիթարութեանց, եւ դու թողցես ինձ զամենայն անաւրէնութիւնս մեղաց իմոց՝ չմատնելով արգարութեամբ ընդ իս ի դատաստան, զի ինձէն զիս դատապարտեմ հարեալ ի խղճէ մտացս:

Արդ, ընկալ՛ զսա ողորմութեամբ քո ի ձեռաց իմոց, որպէս գերկուս լուծայս այրոյն՝ յանկարօտ գանձանակ փառաց քոց եւ տո՛ւր ամենեցուն մանկանց եկեղեցւոյ՝ ուրախութեամբ հանդիպիլ սմա եւ ընդունել զսա ըստ հաճոյից կամաց քոց եւ տո՛ւր նոցա լինել երկիր բարի եւ պարարտ եւ արա՛ զսա նոցա սերմն սրբութեան եւ արգարութեան՝ տալ քեզ զպտուղն Ճ.ր (100): Եւ որք ընթեռնուն գգիրքս սիրով եւ լսեն՝ տո՛ւր նոցա, աղաչեմ քեզ, լուսաւորութիւն մտաց, սրբութիւն սրտի, ուղղափառութիւն հաւատոյ եւ հաստատութիւն սիրոյ եւ յուսոյ եւ արա՛ զսա նոցա անբժութիւն հոգւոյ եւ զղջումն ապաշխարութեան եւ թողութիւն մեղաց, եւ քաղցրացո՛ զսա ի լսելիս նոցա եւ ի միտս՝ քան զմեղր բերանոյ, եւ արա՛ զսա մեզ կտակ կենաց եւ առաջնորդ երկնաշուճանապարհին, եւ ի լսել զբանս զայսոսիկ, ընդ նմին լցոյ զնոսա հոգւով երկիրի եւ հոգւով իմաստութեան, որպէս երբեմն յընթեռնուլն զթուղթն Պաւղոսի առնուին Հոգի Սուրբ եւ խաւսէին յայլ եւ այլ լեզուս: Վասն որոյ եւ իմ աղաչանք են առ ձեզ, եղբարք սիրելիք Աստուծոյ եւ սիրեցեալք ի Քրիստոսէ, եւ արտասուաւք պաղատանք շառնել անտես գերկայն ժամանակաց աշխատութիւնս իմ, յերկս վաստակոյ: Այլ ընկալարո՛ւք ձեզ ի փշոց վարդ եւ ի տատասկէ՛ թուզ, եւ ի մորենոյ՝ խաղող, եւ ի խորոց՝ զակունս պատուականս, եւ ի գաղտկրայէ՛ զմարգարիտս գեղեցիկս: Եւ ինձ՝ հիքոյս Փիլիպոս գրչիս տո՛ւք վարձս բարեաց զարտասուս, զողբս հառաչանաց, զաղաւթս պաղատանաց, զթողութիւնն մեղաց յանցանաց՝ հայցելով ինձ յեկեղեցւոյս յարարչն ամենեցուն:

Եւ արդ, աղաչեմ զամենեսեան առ հասարակ, որք աւգտիք ի սմանէ եւ կամ աւրինակէք, նախ չմեղադրէք խոշորութեան գրոյս եւ սղալման, զի թէպէտ եւ բազում ջանիւ աշխատեցա սակս ստուգութեան եւ լաւութեան, սակայն չարասէրն սատանա զանազան ածելով փորձանս ի վերայ ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ, ո՛չ տայր ըստ կամաց կատարել զգործն, վասն որոյ արտաքոյ թողեալ զմեզ մեղադրանաց անմոռաց, յիշեսջիք |329ա| ի Քրիստոս Յիսուս զաշխատեալս ի սմա զՓիլիպոս պատժապարտս եւ գհարեղբաւր որդին իմ զՄարտիրոս վարդապետն, եւ Աստուած ողորմի ասացէ՛ք: Եւ որք զմեզ գթածաբար յիշեն ի Քրիստոս, յիշեսցէ զնոսա Քրիստոս Աստուած մեր յերկնից արքայութեանն. ամէն:

Արդ, գրեցաւ աստուածախաւս Մեկնութիւն Պաւղոսի առաքելոյն ի թվին հայոց ՌԿԲ. (1613), ի յերկիրն Տարաւնոյ, ի վասն Գլախայ, ի դուռն Ս. Կարապետին,

ի յառաջնորդութեան Պաղոս վարդապետին, եւ յաթո՛ւսակալութեան Սրբոյն Գրիգորի՝ մեր Լուսաւորչին, տէր Մելիսէք կաթողիկոսի եւ տանն Կիլիկիոյ տէր Յովանէս կաթողիկոսի եւ ի բռնակալութեան տաճկաց սուլթան Ահմատին եւ ի թագաւորութեանն Պարսից շահ Աբասին: Եղև զրաւ եւ կատարումն գրոցս ձեռամբ անարհեստ գրչիս Փիլիպոսի, ի խնդրոյ տէր Մարտիրոս բանասիրի, յիշատակ բարի հոգւոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց՝ հարն Յոհաննին եւ մարն Կովվարդին եւ եղբարցն Ստեփանոսին եւ Առաքելին, եւ եղբարորդոցն՝ տէր Կիրակոս քահանային, Տաւնապետին եւ Սարգսին եւ քուերցն՝ փոխեցեղոցն առ Քրիստոս՝ Խումրզին, Մարգարտին եւ Եղիսին: Այլ եւ աղաչեմ յիշել ի Տէր զհարեղբարքն ստացողի սորին զԱստուածատու եպիսկոպոսն, որ յուր ժամանակ եկաց ի ծառայութիւն լուսաբուղիս սուրբ գերեզմանին Քրիստոսի եւ անդ փոխեցաւ առ Աստուած, եւ զԱզատն եւ զԿիրակոսն եւ զկողակիցս նոցա եւ զորդիս նոցա եւ զստերս նոցա զփոխեցեալսն առ Քրիստոս:

Դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս զխոր խոցեալս ի սատանայէ զանիմաստ գրչակս զՓիլիպոս քահանայ եւ զծնօղիս իմ եւ զորդիսն իմ՝ զՍիմէոն սարկաւազ եւ զՄիսիթաւ եւ զմայր նոցա՝ զՄարթայն՝ զհանգուցեալ առ Քրիստոս եւ զամենայն արեան մերձաւորսն մեր: Եւ որ յիշէ, յիշեալ լիցի ի Քրիստոսէ՛ Աստուծոյ մերոյ ամէն:

Տէս ժէ. դ. յիշ-ք. Ա., էջ 480-1:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 328ա (1684 թ., նոտրգիր) 2ի ըստ փափագման

եւ ըստ տենչանաց մարդկան ամենայն ոք ցանկայ եւ կարօտի հասանել սրտի իւրոյ բաղձանաց, զոր գտեալ զյղծալին իւր, այնուհետեւ դադարումն առցէ սրտին: Ընդ որս եւ ես՝ նուաստս ամենից Կիրակոս եւեթ անուամբ բանի Տեառն քարոզող գուրվ, յերկրէ Աղուանից, յոր եւ Շրուան յորջորջի եւ յատուկ եւ բնիկ գեղջէ Սաղիանցի, որ եւ ըստացա զմատեանս զայս, որ ըստ հասարակաց Մեկնիչ վերածայնի, յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց, եւ եղբարց, եւ քերց եւ ամենայն արեան առու մերձաւորաց, որ կարդայք կամ գաղափար դնէք, մաղթեմ յիշել զմեզ զամենեսեան առ Քրիստոս բարեյօժար կամօք, եւ դուք յիշեալ լիցիք: ԹՃԼԳ. (1684):

ԳՐՁԱՓՈՐՁ 1ա՝ «ԵՏԱՏՎՏՎՖ», 1բ՝ «Վասն գրչայ է», 26բ՝ «Յիսուսէ Քրիստոսի գանտալ սամալէլ ածես է, որ սղած է տրալ է քսան որթ գթաց», 27ա՝ «էջմիած», 329բ՝ «աբգդեզ»:

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ 3բ, 4ա, 60բ, 67ա, 79բ՝ բուսական լուսանցազարդեր, 117բ՝ թռչուն (լուսանցազարդ), 4ա՝ զարդագիր՝ «Լ», 54բ, 82ա՝ զարդագիր՝ «Ա», 137ա՝ զարդագիր՝ «Պ»:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 27ա՝ անրնթեռնելի: 328ա՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌՈՒՅ / ԿԻՐԱԿՈՍ / ՎԱՐԳԱՊԵՏ / ԹՎԻՆ ԹՃԷ. (1658):


ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած պիտակին, նոտրգիր՝ «Անանիա վարդապետի / Սանահնեցոյ / Մեկնութիւն / Պօղոսի Զորեքտասան / թղթոց / (22.)», 1ա՝ «199/2692», «ԹԿԲ. - 1613 / Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս», 2ա՝ ժթ. դ., շղագիր՝ «Մեկնութիւն Ծննդոց ի Վարդանայ Բարձրաբերդոյ», 4ա (ժթ դ., շղագիր) Ի տանէն կնեազ Վասի Երկայնաբազուկ Ար[ղուբեանց]:

2693

Ն Ե Ր Ս Է Ս Լ Ա Մ Բ Ր Ո Ն Ա Յ Ի, Մ Ե Կ Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ս Ա Ղ Մ Ո Ս Ա Յ

ժէ. դար (1659ից առաջ)

ԳՐԹ՝ Ալիքսան երէց: ՍՍԱՅՈՂ՝ Մարտիրոս վարդապետ: ՍՐԲԱԳՐՈՂ՝ Վարդան: Թերթ՝ 497+1-2 (կրկն.՝ ք. 5, քոնիք՝ ք. 44-6, 98-100). շգրուած՝ 5գղ: ՊՐԱԿ՝ 6+Ա-ԵԱ.Մ12 (ԻԼ 8, ԻԹ 16, ԼԱ 10): ՆԻԻԹ՝ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոյնով՝ գծային խաչ, վերելի թելը պատուած երեքնուկով, կողային թելերին՝ «С» եւ «В»: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 29x20,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն (21.5x13.5). խորագրերը՝ կարմիր, վարդագոյն եւ կապոյտ: ԳԻՐ՝ բոյրգիր (նմուշ՝ 418ա): ՏՈՂ՝ 41: ԿԱՁՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի, միջուկը տախտակ. աստաղթ թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր:



Նմուշ 418ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՆ – Կ ի ս ա խ ո ռ ա ն՝ 6ա: ճ ա կ ա - տ ա զ ա Ր ղ՝ 1ա, 84բ, 156բ, 210բ, 265բ, 316բ, 365բ, 442ա: Լ ու ս ա ն ց ա զ ա Ր ղ՝ բուսական, թռչուն: Զ ա Ր ղ ա զ ի Ր՝ թլնագիր: Գ ո յ ն ե Ր՝ կարմիր, կանաչ, ոսկի, կապոյտ, նարնջի, սեւ, սպիտակ:

ՊՍԱՌԻԿ-ՊԱՉՊԱՆԿ՝ – Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկեայց* (թուղթ՝ Պետրոսի եւ Յովհաննու): ԺԳ. դ.: 14 (Ա-ԺԳ) + 14 (ԺԵ-ԻԸ) ստացուած մէկական թերթերի ընդլայնակի ծալումով (Ի+ԻԱ, ԺԹ+ԻԲ, ԺԼ+ԻԿ, Է+Ի, Թ+Բ, Ժ+Ա, ԺԷ+ԻԳ, ԻԶ+ԺԵ, Լ+Գ, Զ+Ե, ԻԵ+ԺԶ), ընդլայնակի ծալումով եւ հատումով (ԺԱ, ԺԲ, ԺԳ, ԺԴ, ԻԷ, ԻԸ): Թուղթ, 40x29, երկսիւն (37x26.5). սկզբնաստղեր կարմիր թանաքով: Խոշոր բոյրգիր (նմուշ՝ էա): Լուսանցազարդ՝ ԻԶա, ԻԷբ (պարզունակ, գծագրական): Զարդագիր՝ Զ՝ մէջը մարդու դէմք (Զա, էա): Տող՝ 31: ԺԵբ՝ պրակահամար «ՖԳ»: Կարդայ՝

1. Իա+ԻԱբ, Իբ+ԻԱա, ԺԹա+ԻԲբ, ԺԹբ+ԻԲա, ԺԼա+ԻԿբ, ԺԼբ+ԻԿա «//[ա]ղագաւ ապականարար... եթէ այսպիսի զ[գուշ]ուրեամբ, կենցաղավարի[f]//» (Պետրոսի Բ. թուղթ, նաւ 1-2, էջ 407-11):

2. էա+Իբ, էբ+Իա, Թա+Բբ, Թբ+Բա, Ժա+Աբ, Ժբ+Աա, Ժէա+ԻԳբ, Ժէբ+ԻԳա, ԺԱա, ԺԱբ «Զայս ձեզ սիրելիք, երկրորդ թուղթ գրեմ... (ԺԱա, 1ին սիւնակ) ի սկզբանն խաւար էր ի վերս անդնորց, վասն//», (ԺԱա, 2րդ սիւնակ) «//[անեցուցան]ել եւ այն գերկուս միայն ստուր... աշխարհ ջրեղեղաւ կորեա: Եւ այժմ//», (ԺԱբ, 1ին սիւնակ) «//[այսպիսի ինչ է, եթէ Բանն Աստուծոյ... այլ միայն երկրին ասաց զապակ[անութիւն]//», (ԺԱբ, 2րդ սիւնակ) «//[ա]ղագաւ երկինք եւ երկիր ընդունեցոց են... ի

գիտություն յորդորէ գնտա եւ զայն» (Պետրոսի Բ. թուղթ, հատ 5, էջ 460-6):

3. ԻԶա+ժԵբ, ԻԶբ+ժԵա, Ըա+Գբ, Ըբ+Գա, Զա+Եբ, Զբ+Եա, «// ոչ խաբեաց եւ պիտակ որդի անուանեաց... ի տկարութեան կատարի: Տեսե՛ր զի[արդ]» (Յովհ. Ա. թուղթ, հատ 8-9, էջ 585-9):

4. ԺԲա, 1ին սիւնակ՝ «//[գիտեմ]ք, եթէ առնումք գնայ-ցուածսն... Զայս ասելով ապա աղաչանս» (ԺԲա, 2րդ սիւնակ) «//[մեղ]ուցեալ մեղս, որ ոչ առ ի մահ... թշնամեաց եւ հանդերձեալ մեռանել եւ ոչ գում» (ԺԲբ, 1ին սիւնակ) «//եւ վիրատրեալ եւ ի տոռունս... եւ խնդրուածս առնել: Վասն զի բազմ» (ԺԲբ, 2րդ սիւնակ) «//ի մարդկանէ ոչ ամաչեն. այնպիսեացն... եւ ապա հանաչիցէ զհիւանդն ի մահ[ուն] (շարունակութիւնը՝ ԺԳա)», ԺԳա+ԺԳբ, ԺԳբ+ԺԳա, ԻԵա+ԺԶբ, ԻԵբ+ԺԶա «...արհամարհիցեմք. զի ոչ գիտ[եմք]» (Յովհ. Ա. թուղթ, հատ 9, էջ 590-3):


5. ԻԷա, 1ին սիւնակ՝ «//ի կողմն ասէ զայստսիկ, եթէ յոր-ժամ... արարչին յարարածս: Վասն զի» (ԻԷա, 2րդ սիւնակ) «//Հանդերձ այսու, որ ասացաւ... եւ յաւժարութեամբ մամով-նային» (ԻԷբ, 1ին սիւնակ) «//[պա]տրեսցէ զձեզ սատանայ ազանութեամբն... զանձինս ձեր յերկրորդ» (ԻԷբ, 2րդ սիւնակ) «//[առ]այի եւ տագնապ անհնարին... արծաթասի-րութիւնն է՛ ըստ առաքելոյ» (Յովհ. Ա. թուղթ, հատ 9, էջ 595-6):

6. ԻԸա, 1ին սիւնակ՝ «//առեալ տարաւ եւ գրին պակասե-ցոյց... Բարանց եւ փայտից: Ուստի եւ մեռ[ելոսի]» (ԻԸա, 2րդ սիւնակ) «//ատելի գորով եւ թշնամի... Լուր առաքելոյ, լալով» (ԻԸբ, 1ին սիւնակ) «//աստղական պատկերի, այսինքն... Բան զամենայն ամբարտաւանութիւնն, որով առաջին» (ԻԸբ, 2րդ սիւնակ) «//[զկորու]տն մեր եւ զդատապարտութիւն... ստանալ երկրատրացս: Զի ոչ [եթէ կոա]պարտիչտ միայն է, որ» (Յովհ. Ա. թուղթ, հատ 9, էջ 596-7):

*ՏԵՆ Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կա-թողիկեայց, Կ. Պոլիս, 1998:

ԿԱԶՄԱՍՍԱՌ. Ա. եւ Բ. փեղկերի, 1667 թ. նոտագիր. Գիր օրհ-նութեան - աստառ Ա. (սկ. թերի) //զալ առ ինքն աղաղակ, յայնժամ հրամայեաց թագաւորն փութանակի տանել... եւ ըստ իւր չար խորհրդոցն ՏԵՐ Աստուած իցի վրէժխնդր» (աստառ Բ.) //զնա եւ մեծ խղճմտանք եւ տարտ, որ ի ձեր ժամանակէն մնայր չարեաց սերմն, փառք եւ գոհութիւն Աստուծոյ... ժառանգեցէք զանըստաւ որախտութիւն, որ է արհնեայ, յափտեանս. ամէն: Գրեցաւ արհնութեան նամակս թվին ՌՃԺ. եւ վեց (1667), մա-րտի ամսոյ ԻԲ. (22) ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս՝ ընդ հովանեաւ Սուրբ Լուսաւորչին եկեղեցոյ:

Ա. կազմաստառին յիշատակում է նաեւ երուսաղէմը եւ նշում, թէ այնտեղ հայերին ինչպիսի հալածանքների են են-թարկում անօրէնները:



Նմուշ էա

ՎԻՃԱԿ՝ բարարաւ. կազմի կաշին մաշուած, առաւելապէս Ա. փեղկի արտաքին եզրը հայնայնուած-թափուած, մէջի հիմքի վե-րին մասի կաշին մաշուած-թափուած, մասամբ անջատուած, մի-ջուկ-տախտակը կոտորուած, երեք կապիչներն ընկած. Ա. եւ Բ. փեղկերին մնում են Յակն մետաղէ վարդեակահիմք գամերը, յասանցակողերի կարմիրը թափուած: Նորոգուած, գործածու-թեան հետեանհով զանազան բծեր, մոմի եւ իղի հետքեր, հա-մարեա բոլոր թերթերին խոնասութեան հետքեր. խոնասութիւնից գրադաշտը խոնացած, յասանցագարդերի մեծ մասը արտա-տպուած հանդիպակաց էջին (189ա, 309ա եւ այլն), ք. 84ա եւ 316ա-ի յետագայի յիշատակարանները գրուած ձեռագրին փակ-ցուած թղթերի վրայ, որոնցով հասանաբար յետագայ տերը ծածկել է նախորդ տիրոջ յիշատակարանները. այդպիսի՝ փակ-ցուած, սակայն չգրուած թղթեր կան նաեւ 210բ, 265բ, 365բ եւ

442ա էջերին, ք. 442՝ ստորին յուսանցը պատռուած, պատառիկ-պահպանակների արտաքին յուսանցները մաշուած-թափուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

[Մեկնութիւն] Աստուածային երգոց Սաղմոսաց մարգարէ Դաւթի, արարեալ Ներսէսի եպիսկոպոսի Տարսնի Կիրիկեցոյ

ՏԵՆ ձեռ. 990, 2ա-730բ: Նխ. /1ա-5բ: ա/6ա-84բ: բ/84բ-156ա: գ/156բ-210բ: զ/210բ-65բ: է/265բ-316ա: զ/316բ-65բ: Կ/365բ-442ա: Վ/442ա-97բ «...եւ յետին քո որդի եւ քնար եղեալ իմով անարգ» (վերջը՝ թափուած):

ՅԻՇՍԱՍԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

292ա ԶԱլիքսան չերէցս յիշեցէ՛ք աղաչեմ, ո՛հ, Տէր: 317բ Անմեղադիր լերո՛ւք, օրինակն ծուռ էր:

442ա Ստացող տառիս յոյժ ցանկալի / Մարտիրոս գրիչս գրեցի, / գովեալ գնաին սուրբ Պետրոսի / ի բա-րեաց լի եւ անթերի, / որ ցանկացաւ հոգով ի լի / այս քաղցրահամ բուրաստանի / մեծին Դաւթի երգարանի՝ / մեկնեալ Ներսէս Լամբրոնացի: / Մաղթեմ յիշել ըզգեղ-կելիս / թարմատ զԱլիքսանոս գերիս, / եւ Տէր Աս-տուածն ամենիս / ողորմեսցի մեզ յիշողիս. ամէն. Հայր մեր՛:

471ա ՈՎ մարդասէր, արա՛ գմեզ փշրանաց վերին սեղանոյդ արժանի, որպէս ստորին սեղանոյս փշրա-նաց զկիրն քանանացի: Եւ առաւել զՄարտիրոս վար-դապետն՝ զստացող գրոցս, եւ զԱլիքսան գրչակ: Եւ քեզ փառք փառակից միածնօդ եւ էակից Սուրբ Հո-գովդ ի մի իշխանութիւնդ եւ աստուածութիւն արհ-նեալ յաւիտեանս. ամէն:

492ա (նոտագիր) եղբա՛րք իմ, աղաչեմ յիշել զսրբասնեալ քահանայս գտէր Վարդան, որ սրբաչքե-րեաց զգիրքս. թվին ՌՃԸ. (1659):

497բ Նյացած աչքունք, / թարշամեալ շրթունք, / անիմաստ մտկունք, / անարուեստ մատունք, / կորդա-ցեալ ձեռունք, / կոկացեալ մջկունք, / ծոկեալ ծնկունք, / գօսացեալ ոտունք, / ցնծա՛ եւ զոհացիր, / արհնէ՛ եւ գովէ՛, / եւ փառաւորէ զմարդասէրն Աստուած, / որ հա-սոյց զոչինչս եւ արժանացոյց ի յաւարտ տառիս* ///:

* Թափուած մասում գուցէ կարելի է թուական կարդալ, սակայն յստակ նշմարում է միմիայն պատուի նշանով «Ճ»:

ՅԻՇՍԱՍԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 345բ (1757 թ., նոտագիր) ՌՄԶ. (1757), յուլիսի մուտն Մինաս վարդապետ առաջնորդ վանիցն Թա-ղեոսի սրբազան առաքելոյն:

- 248բ Զկնի միոյ թղթոյ ընթերցի՛ր:
- 249ա Զայս զկնի չորից թղթոց ընթերցի՛ր:
- 253բ Աստի հինգ թուղթ յետ երթ եւ ընթերցի՛ր:
- 254ա Աստի հինգ թուղթ յառաջ երթ եւ ընթերցի՛ր:
- 257բ Աստի մին թուղթ յառաջ երթ եւ ընթերցի՛ր:
- 259ա Մին թուղթ յետ գնալի է աստի:
- 258բ Աստի հինգ թուղթ յետ երթ եւ ընթերցի՛ր:

335բ Այս թուղթիս ետն ժ. (10) թուղթ շրջէ: Ղալաթ է կազմած: Այս & նշանովս գիտ' եւ կարդա':

345բ (նոտրգիր, 1757 թ.) Յետ այս թղթոյս Դ. թուղթ շրջէ' եւ ապա կարդա': Միսլ է կազմած: Այս քեզ նշան:

2. 84բ (ժԼ. դարի վերջ, նոտրգիր) Պատճառ գրիս այս է, որ ես Քաֆայեցի Պապունենի օղլ Սիմէոնի որդի մահտեսի Ասվատուս, որ մականուամբ Նէմցէ կոչի, որ այս գիրքս Թ. (1000) հաւէսով է գնել ի Ըստամպուլ քաղաքին, որ է իւր հոգուն համար մինչեւ ցլմահ'//:

316ա Պատճառ գրիս այս է, որ ես՝ Քաֆայեցի Պապունենի օղլ Սիմէոնի որդին մահտեսի Ասվատուրըն, որ մականուամբ Նէմցէ կոչի, այս գիրքս գնել է եւ բան է ուսել է վերան'//:

Այս յիշատակարանները գրուած են ձեռագրին փակցուած թղթերի վրայ (տե՛ս Վիճակ):

3. 211ա (1878 թ., մատիտով, շղագիր) 1878, մուտն յունուարի իմաստ սորա, որ ի ամա յոյժ քան զմիտ գերակայ, թարգմանողիս մեծ գովութիւն, ընթերցողաց իսկ ցընծութիւն. Սիմէօն:

4. Պտոկ-պհպ. Աա (ժԹ. դար) «Аламдаровъ Иегорь ману// трупка»:

5. Պտոկ-պհպ. ԻԱբ (ժԹ. դար, նոտրգիր) Ունիմ

Տերամբ մերով Յիսուսի Քրիստոսի ելանել ի լեանն պարարտ ի լեանն մածեալ, ի լեանն երկնաբարձ, ուր զուարթունք բարձանց ի վերուստ յերկիր ելելէջս առնեն, գուն գործելով հաղորդիլ ընդ մարդկան գիտութեան եւ հանճարառատ իմաստութեան, որով գերագոյն դասին քան զինքեանց, եւ բանիցն իմոց ապացոյց է բան Հօր Բանին, զորոց նախաճառէ յԱւետարանի, թէ Որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են, քան զորդի լուսոյ:

Գրեցի Գեորգ Մանուկեան Այամդարովս, ի սենեկի ծնողի իմոյ, որպէս հոգւոյն տեառն Ստեփաննոսի գերիմաստ բաբունոյ, յեօթն եւ տասներորդ ամի կենաց իմոց, յԱստուխան քաղաքի, յորմէ հանդերձեալ եք փութապէս ելանել ի մայրն լուսանկար:

ԳՐԶԱՓՈՐԶ՝ 6ա՝ «շատ բար// հաշի», 110բ՝ տառեր, պտոկ-պհպ. ժԹա՝ «Աւաղ», «трупк, Аламдаровъ» պտոկ-պհպ. ժԼբ՝ «հ, բ», պտոկ-պհպ. ԻԲա՝ «Аламдаровъ»:


ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած պիտակին, նոտրգիր. «Ներսեսի Լամբրոնացոյ / Մեկնութիւն սաղմոսաց/ 1.», պտոկ-պհպ. Աա՝ «202/2693», (կապոյտ թանաքով շղագիր) «ժԶ., Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2694

Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ր Ե Ի Ե Լ Յ Ի , Մ Ե Կ Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ս Ա Ղ Մ Ո Ս Ա Յ

ժԶ. դար

ԹԵՐԹ՝ 294+1 (կրկն.՝ բ. 202): ՊՐԱԿ՝ Ա-ԻԵx12 (Ա 10, ԻԵ 9): ՆԻԻԹ՝ թուրք, լուսագծերով եւ լուսադրոշմներով՝ շրջանակ, մէջը խաչ՝ քեւերը կոր գծերով իւրս միացած, տակը՝ կոր գծերով զարդ եւ ռճատուած պայտաձեւ շրջանակի մէջ խաչ, որի տակ կիսալուսին եւ զարդանախշ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 29x19,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկարն (24x13,3). սահմանագծերը եւ խորագրերը կարմիր քանաւով: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 194ա): ՏՈՂ՝ 29: ԿԱԶՄ՝ ծաղկաթուղթ, միջուկը ստուարաթուղթ, մէջքի՝ կարմիր կաշի, աստառը թուրք, սպիտակ, չգրուած. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀ՝ ՊԱՆԱԿ՝ Ա+Բ, թուրք, սպիտակ, չգրուած, մաս կազմաստառի:



Նմուշ 194ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՆ – Ձ ա ր դ ա գ ի ր՝ թոյնագիր (գծանկարային): Գ ո յ ն ե ր՝ սեւ, կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի ծաղկաթուղթը ֆերձուած, տեղտեղ՝ առաւելապէս անկիւնները եւ Բ. փեղկը մաշուած-քափուած, լուսանցակողերի կարմիրը քափուած. նորոգուած, գործածութեան եւ խոնաւութեան հետեւանով զանազան բծեր, դեղին հետեւեր, 202-294 թերթերի գրադաշոր խոնաւութիւնից գունափոխուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

1ա-294բ [Վարդան Արեւելցի, Մեկնութիւն Սաղմոսաց]

ՏԵՍ ձԵՆ. 1119, 1ա-304ա: Մասն նխորդ./չիք: Յիշատ./չիք: Նխորդ./1ա-9ա: 1/9բ-46ա: Նխորդ./46աբ: 2/46բ-85բ: Նխորդ./86ա: 3/86ա-117ա: Նխորդ./117աբ: 4/117բ-43բ: Նխորդ./143բ: 5/143բ-72բ: Նխորդ./172բ: 6/173ա-202ա: Նխորդ./202բ: 7/202բ-34բ: Նխորդ./235աբ: 8/235բ-294բ (վերջը՝ թերի (292բ՝ լս-ուս «ժԾ») «...եւ աստ ամենայն լուսաք, զի հոգւոց եւ մարմնոց Արարչին պար//»): Յիշատ./չիք: 9/չիք:

Լուսանցներում կան աղբիւրների նշումներ, սրբագրութիւններ: ՏԵՍ Վարդան Բարձրաբերդցի, Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի, յԱժդարխան, 1797:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

9ա Փցուն գրիչ ըստ թարմատար, ունայնախորհ հոգիս յօժար, մրրկագործըս միշտ մոլար ուխտիւք անցեալ եւ անհամար յուսով մաղթեմ, որ նայեցար հոգա՛յ վասն իմ որպէս ուսար եւ ի նմանէ առցես հազար:

143բ Զփցուն գրիչս յիշել ի Տէր, եւ Աստուած գձեզ յիշէ, ո՛վ եղբայրք:


ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած պիտակին (նոտրգիր) «Վարդան / վանական վարդապետի / Մեկնութիւն / սաղմոսաց/ (1.)», պհպ. Աա՝ «206/2694», «ժԶ., Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս», 1ա՝ (մատիտով) «- 63»:

2695

Յ Ա Յ Ս Մ Ա Ի Ո Ի Բ Ք
(Անանուն Բ.1 խմբագր.)

ԺԳ. դար

ԳՐԻՉ, ՍՍՍՅՈՂ՝ Երեմիա Բնյ.:
ԹԵՐԹ՝ 382: ՊՐԱԿ՝ Բ-1Գx12 (ԺԹ, Ա՝ 11): ՆԻԻԹ՝ մագաղաթ:
ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 30x22: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսին (22.5x15): ԳԻՐ՝ բոլոր-
գիր (նմուշ՝ 296ա). սկզբնատողերը՝ կարմիր թանաֆով: ՏՈՂ՝ 33.
գծումները՝ ննշումով: ԿԱԶՄ՝ կապոյտ ծաղկաթուղթ, միջուկը
ստուարաթուղթ, մէջքը՝ կարմիր կաշի, աստաղը սպիտակ թուղթ.
լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ, թուղթ, չգրուած,
մասն կազմաստաղի:



Նմուշ 296ա

ՎԻՉԱԿ՝ բասարա. կազմը կիսամաշ, թեթևակի վնասուած,
բերծուած, եզրերը մաշուած, մէջքը հնամաշ, վերին եւ ստորին
մասերը վնասուած, պատռուած. Ա. պրակն ընկած, ք. 207-Տի,
356-7ի միջև ընկած մկկական թերթ, տեղ-տեղ աղտոտուած,
խոնաւութեան, ձեթի, այրուածի եւ մումի հետեւե, զանազան
բծեր, երբեմն ներկր դրոյմուած հանդիպակաց էջերին, գրաղաշ-
տը մասամբ դժգունած, 1ա՝ թանաֆը թափուած. գրաղաշտը գրե-
թէ անընթեռնելի, ցեցի անցեւ, առկայ են մեծ ու փոքր բնական
անցեւ (ք. 2, 11, 106, 128, 172, 173, 181, 186, 226, 242, 301,
324, 359, 365, 363), պատռուածներ (ք. 348), ք. 258ի ստորին
անկիւնը շեղակի կտրած. գրաղաշտն անվնաս, ք. 51ի ստորին
լուսանցը հոլով կտրած, ք. 149ի արտաքին լուսանցը հոլով
կտրած, յետագայում հոլոյն ընկած. մնում են կարեւի անցեւեր
(նոյնը՝ ք. 306, 376), ք. 212ի վերին մասը հիմքից անշատուած,
ք. 1-9ի արտաքին լուսանցերը խոնաւութիւնից կծկուած, գրա-
ղաշտը խոնացած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. 1ա-377բ [Յայսմատուրֆ]

1. 1ա [Արաց Դ. եւ Յունուար ԺԱ. Յայսմութեան
դարձեալ տօն եւ վկայութիւն արքայն Պետրոսի, որ
Աւաղեմոսն անանէր, եւ միւս այլ Պետրոսի եւ Աբի-
սաղովմա սարկաւագի: Յայսմ ատուր յիշատակ է
Թէոդոսի անապատականին, որ զմիաբանակեցաց
վանքս կարգաւորեաց յԵրուսաղէմ եւ յանապատս –
Մեծն Թէոդորոս ի կենդանութեան... ի ժամուն կատա-
րել զառաւօտուն. տե՛ս ձեռ. 4873, 21բ] (սկիզբը թա-
փուած) // պաշտօնն երկիր եպագ զամենեցուն... Քրիս-
տոսի փառք յաւիտեանս. ամէն (թանաքը թափուած.
գրեթէ անընթեռնելի):

2. 1ա Արաց Ե. եւ Յունուարի [ԺԲ. Նոյն Աստուած-
յայանութիւն է եւ վկայութիւն արքայն Մետրդեայ –
Ճշմարիտ վկայն Քրիստոսի Մետրդիոս էր ի ժամա-
նակս Դիոկղէտիանոսի... տե՛ս ձեռ. 4873, 22ա] (թա-
նաքը թափուած. գրեթէ անընթեռնելի):

3. 1աբ Արաց [Զ. եւ Յունուար ԺԳ. Ութարեա
Տաւն է Ծննդեան եւ Մկրտութեան Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի, եւ վկայութիւն արքայն Երմոդայոսի

եւ Ստրայտոնիկոսի վկայի եւ ինձ] – Այս բարէյաղթ
[վկայքս Քրիստոսի էին յամս անարէն թագաւորին կի-
կիանոսի... տե՛ս ձեռ. 4873, 22ա] (թանաքը թա-
փուած. գրեթէ անընթեռնելի):

4. 1բ-2ա Արաց է. եւ Յունուար ԺԳ. Վկայութիւն
արքոց արեղայիցն Սինէական եւ Ռուբայ լերինն –
Մարդակեր եւ պղծաչգո՛հ անարէն բարբարոսքն, որք
բնակեալ էին յԱրաբիայ... (2ա) – Յայսմ ատուր կա-
տարեցաւ յառիւծոյ սուրբ վկայն Քրիստոսի Բասիլոս
յուրացող արքայէն Յովիանոսէ ի Կապադովկեցոց
քաղաքին, ի փառս Աստուծոյ. ամէն (այսչափ):

5. 2ա-3բ Արաց Ը. եւ Յունուար ԺԵ. Վարբ երանե-
լոյն Յոհաննու, որ վասն Քրիստոսի աղատացաւ –
Այս Յոհաննէս որդի էր մեծատան իշխանի ի Կոստան-
դինուպոլիս... (3բ) – Յայսմ ատուր կատարեցաւ ի ծո-
վու սուրբ վկայն Քրիստոսի Թէոգինէ՛ս՝ եպիսկոպոսն
Իպորիոյ քաղաքին ի Զիլիկոյ դատաւորէն, եւ Քրիս-
տոսի փառք յաւիտեանս. ամէն (այսչափ):

6. 3բ Արաց Թ. եւ Յունուար ԺԶ. Եզրեան կուսին
եւ հաւր նորա Փիլիպոսի: Գի՛տ ի դեկտեմբեր ԻԴ.ն եւ
կարդայ՛, զի անդ է վկայութիւն նոցա: Յայսմ ատուր
տաւն է շրթայիցն Պետրոսի առաւելոյն – Առաքեալն
Քրիստոսի Պետրոս, որ գլուխ էր առաքելոցն...

7. 3բ-6ա Արաց Ժ. եւ Յունուար ԺԷ. Վարբ երանե-
լոյն Անդոնի մեծի սուրբ եզնատրի եւ անապատա-
կանին, զոր գրեաց սուրբն Աթանաս հայրապետն –
Մեծն Անդոնիոս եգիպտացի էր, մեծատուն...

8. 6աբ Արաց ԺԱ. եւ Յունուար ԺԸ. Յիշատակ է
երանելի եւ փառաւորեալ հայրապետացն Ադէֆ-
սանդի, Աթանասի, Կիրղի – Աստուածագգեաց եւ
սուրբ վարդապետք եկեղեցոյ Քրիստոսի եւ սին հաս-
տատութեան ուղղափառ հաւատոյ՝ Աթանասիոս եւ
Կիրղիոս...

9. 6բ-7բ Արաց ԺԲ. եւ Յունուար ԺԹ. Վկայութիւն
արքունոյ կուսին Եփրոսիմեա եւ Թէոդոսի թագա-
ւորին – Ի քաղաքին Նիկումիդեայ էր բնակեալ... (7ա)
Յայսմ ատուր սուրբն Թէոպոմպէ եպիսկոպոսն... (7ա)
Յայսմ ատուր տաւն է Թէոդոսի թագաւորին...

10. 7բ-8ա Արաց ԺԳ. եւ Յունուար Ի. Վկայութիւն
արքոց վկայիցն՝ Բասուսի, Եսեթի, Եսոիփեա եւ Բա-
սիլիդի – Սուրբ մարտիրոսքս այս մեծամեծ իշխանք
էին Դիոկղէտիանոսի... (8ա) Յայսմ ատուր յիշատակ է
մեծի անապատականին Եսիմոսի...

11. 8աբ Արաց ԺԴ. եւ Յունուար ԻԱ. Վկայութիւն
սուրբ առաւելոյն Տիմոթէոսի – Սա էր ի քաղաքէն
կիստորնի... (8բ) Յայսմ ատուր կատարեցաւ արքու-

նին Տատիանի ի յԱղէքսանդրիա արքայն – *Զերանելին Տատիանի այնչափ գանեցին...*

12. *Տբ-10ա* Արաց ժԵ. եւ Յունուար ԻԲ. Սահակայ եւ Յովսէփայ, որ վկայեցին ի Թէովդոսիպալիս, որ Կարնոյ փաղափ կոչեն – *Յամս թագաւորութեանն յունեաց Նիկիփոռա... (9ա)* Յայսմ ատուր վկայութիւն Անաստասիոսի պարսկին – *Յամս Հերակլի բարեպաշտ արքային... (10ա)* Յայսմ ատուր սուրբն Պանտփոս, որ թարգմանի ի մերս՝ ամենիմաստ, մարտիրոսացաւ – *էր այրս քրիստոնեա եւ մեծատուն յոյժ...*

13. *10ա-4ա* Արաց ժԶ. եւ Յունուար ԻԳ. Վկայութիւն արքայն Կղեմա Անկիւրիոյ եպիսկոպոսին եւ Ագադանկեղոսի: Եւ յիշատակ է արքայն Անդրոնիկոսի եւ Աթանասիայ՝ ամուսնոյն իւրոյ – *Յամս Դիոկղէտիանոսի կռապաշտ արքային... Կղեմէն հեթանոս հար գաւակ էր... (12բ)* Յայսմ ատուր յիշատակ է երանելոյն Անդրոնիկոսի եւ Աթանասիայ՝ ամուսնոյն իւրոյ – *երանելին Անդրոնիկոս էր ի քաղաքէն մեծ Անտիոքայ...*

14. *14ա-5ա* Արաց ժԷ. եւ Յունուար ԻԴ. Վկայութիւն երից սուրբ եղբարցն՝ Պաղոսի, Պաստերի եւ Թէոդոսիոսի եւ սուրբ վկայիցն Դանափոսի – *Յամս Դիոկղէտիանոսի եւ Մաքսիմիանոսի կռապաշտ արքայիցն... (14բ)* Յայսմ ատուր սուրբ վկայն Քրիստոսի Դանափոս՝ ընթերցալ եկեղեցոյն, ի փաղափն Ալանի, որ է յարեւմուտս մերձ ի Բուլխարս – *Ուսուցանէր ժողովրդեանն զբանս աստուածայինս...*

15. *15ա-7ա* Արաց ժԸ. եւ Յունուար ԻԵ. Պատմութիւն Գրիգորի Աստուածաբանի Անձիանձու – *Աստուածահաճոյ եւ մեծ վարդապետն քրիստոնէից Գրիգորիոս...*

16. *17ա-8ա* Արաց ժԹ. եւ Յունուար ԻԶ. Վարք երանելեացն Քսէնիփոնի եւ զուգակցին իւրոյ՝ Մարիամա եւ երկու որդոցն իւրոց՝ Արկաղիոսի եւ Յոհաննու, եւ արքոցն երից եղբարցն՝ Խեղեփանոյն, Սպետիպոսի, Նիխասիպոսի, Մելիսպոսի եւ այլոցն ամենեցուն – *երանելին Քսէնիփոն էր ի Կոստանդիանուպալիս... (18ա)* Յայսմ ատուր կատարեցան հրով եւեմ եղբարքն երկուրեակք, ի միում ժամու եւ ի միում արկանդէ ծնեալք՝ Սպետիպոս, Նիխասիպոս, Մելիսպոս: Նոյնպէս կատարեցաւ սրով եւ հանն իւրեանց՝ Նէոնիլա, վասն անուան Քրիստոսի – *Զեղբարս զերիս զայսոսիկ հանն իւրեանց Նէոնիլա...*

17. *18ա-9բ* Արաց Ի. եւ Յունուար ԻԷ. Վերադարձումս սուրբ մարմնոյն Յոհաննու Ոսկէբերանին յաթոն իւր ի Կոստանդիանուպալիս – *Յորժամ արքորեցին զՅոհաննէս...*

18. *19բ-20բ* Արաց ԻԱ. եւ Յունուար ԻԸ. Վարք երանելոյն Եփրեմի Ասորոյ: Եւ տան է արքայն Վաղերիանոսի, Կանդիտոսի, Ակիւղասայ, Եւգինիոսի – *երանելի հայրն մեր Եփրեմ... (20բ)* – *Յայսմ ատուր*

կատարեցան գանիւք եւ հրով... սուրբն Վաղերիանոս, Կանդիտոս, Ակիւղասայ, Եւգինիոս...

19. *20բ-1բ* Արաց ԻԲ. եւ Յունուար ԻԹ. Վկայութիւն արքայն Նէոփիտոսի, որ նորատունկ թարգմանի, եւ վերադարձումն նշխարաց սուրբ հայրապետին Իգնատիոսի – *Յամս ամբարիշտ արքային Դիոկղէտիանոսի ի քաղաքին Նիկիայ... (21բ)* – *Յայսմ ատուր վերադարձումն է պատուական նշխարաց սրբոյն Իգնատիոսի Աստուածագգեաց հայրապետին մեծի Անտիոքոս, զոր ի Հռոմա բերին աշակերտք իւր, եւ Քրիստոսի փառք (այսչափ):*

20. *21բ-2ա* Արաց ԻԳ. եւ Յունուար Լ. Վկայութիւն արքայն Թէոփիլոսի զարաւարի նոր մարտիրոսին, եւ Թէոդոլփաէ – *Յամս բարեպաշտ թագաւորին Կոստանդիանոսի... (22ա)* Յայսմ ատուր հրով դատեցաւ սրբուհի վկայն Քրիստոսի Թէոդոլփէ...
21. *22բ-4բ* Արաց ԻԴ. եւ Յունուար ԼԱ. Վկայութիւն արքայն Սարգսի զարաւարի եւ որդոյ նորա Մարտիրոսի – *Մեծ վկայն Քրիստոսի սուրբն Սարգիս... (23ա)* Յայսմ ատուր վկայութիւն սուրբ եւ սխանչելագործ բժշկացն՝ Կիրակոսի եւ Յովհաննու: Եւ Անանիայի եւ այլ Ը. վկայիցն, զոր գրեաց սուրբն Աթանաս Աղէքսանդրոս հայրապետն – *Սուրբն Կիրակոս էր ի քաղաքէն... (24ա)* Յայսմ ատուր կատարեցաւ ի ծովու Անանիա փահանայն, եւ այլ Ը. վկայք ընդ նմա, ի Մաքսիմիանէսէս դատաւորէն – *Յաւուրս Դիոկղէտիանոսի արքային...*

22. *24բ-5բ* Արաց ԻԵ. եւ Փետրուարի Ա. Վարք երանելոյն Պարսամոյի, որ ի Մելիտենէ փաղափն էր – *Սուրբն Պարսամա, որ թարգմանի որդի պահոց...*
23. *25բ-6ա* Արաց ԻԶ. եւ Փետրուարի Բ. Վկայութիւն արքայն Տրիփոնի – *Քրիստոսի մարտիրոսն Տրիփոն...*
24. *26ա-7ա* Արաց ԻԷ. եւ Փետրուարի Գ. Վարք երանելոյն Շաղիտաի եւ Եպիփանու՝ աշակերտացն Դանիէլի – *Սոքայ աշակերտք էին մեծին Դանիէլի... (26բ)* Յայսմ ատուր վկայութիւն Զուփթայ երիցու – *Ամբարիշտ արքայն Պարսից Շապուռ...*

25. *27ա* Արաց ԻԸ. եւ Փետրուարի Դ. Վկայութիւն արքայն Պապիա, Գրիգորի, Կղաղիանոսի Գ. վկայիցն – *Սոքայ էին յաւուրս Դեկոսի ամբարիշտ արքային...*

13. 14ա-5ա Թուղթ առ Փիլիպպոս արքեպիսկոպոսն Չմիտնոյ, վասն հոդեհի յինելոյ Ի նոյն Չմիտին մեծի քաղաքի – Առատագոյն սիրով... ողջ լե՛ր Գրիգորեան սուրբ հոտիւզ Ի շնորհս Քրիստոսի, յոյր վասն կամք եւ մեք աղօթկեր: Կաթուղիկոս ամենայն Հայոց՝ վշտալի Եփրեմ:

14. 15աբ Թուղթ առ քահանայ իշխանսն Չմիտնոյ մեծի – Շնորհառատութեամբն Աստուծոյ... եւ մեք մնամք ձեր ամենայնի աղօթկեր կամ աղօթաւոր: Կաթուղիկոս ամենայն Հայոց՝ վշտալի Եփրեմ:

15. 15բ-7ա Թուղթ օրհնութեան Ի խրխաղանն Չմիտնոյ – Հասցէ աստուածապարգեւ սուրբ ողջունի... եւ մեք բազմաւոր ձեր ամենայնի բարեգիպութեան, միշտ եմք առ Տէր: Կաթուղիկոս ամենայն Հայոց՝ վշտալի Եփրեմ:

16. 17ա-9բ [Գրիգոր Փեշտմայնեան առ, տե՛ս ձեռ. 3289, 37ա] Գերապատիւ եւ աստուածիմաստ սիրեցելոյ Ի Քրիստոս, տեան տեան Բարսեղ վարդապետի, հոգեշարք սիրոյ, շողկապալ՝ Ի միտս եւ Ի կամս միացեալ ընդ իս հարազատութեանն բազմալի, ողջոյն յաւերժական եւ յանմոռաց սիրոյ իմոյ բազմացի, ամօք բարեկենդանութեան – Դժնդակագոյն վշտաբեր անընդհատ հեղհեղեալ... մնամ խոստովանեալ զարժանաւորութիւնս իմ վսեմափալ տիրութեան քում ապարդիւնս ծառայ լուսահոգի Թէոդո-

րոս աւագ սարկաւագի աշակերտ անպիտան Գրիգոր Կարապետեան* : Յամի Տեառն 1809, յօգոստոսի 7 :

* Մատիտով աւելացրած «Փելտմալճեան» :

17. 19բ-23բ [Գրիգոր Փելտմալճեան, տե՛ս ձեռ. 3289, 66ա] Առ Յիսուսի Քրիստոսի ծառայ քաջատոնմիկ իշխանդ իմս բարեբար տէր սիրանուէր բարեմաղթութիւն – Ոչ սակաւ ինչ մխիթարութիւն... ի խնամս ամենակալին, օր քան զօր բարգաւաճեալ բարեմասնութեամբ :

18. 23բ-4ա [Գրիգոր Փելտմալճեան, տե՛ս ձեռ. 3289, 72ա] Ազնիւ տոհմական իշխան քաջալանջ... է եւ եղիցի քեզ հզօր պաշպան :

19. 24ա-7բ Ասացուածք ինչ իմաստալիցք – Յամենայնի վախճանն է գովելի... եւ երկրպագութիւն յանգրաւ յաւիտեանս. ամէն :

20. 27բ-8ա Աստուածային սիրոյն վառարան, գերամեծար ազնուական եղբօր մերոյ ընտրելոյ մատուցանեմք սէր առատ կարօտախառն ըղծի – Սեր սրտի քո եւ ջանք... կապէ զսիրտ սիրելեաց ընդ միմեանս եւ ոչ լուծանի :

21. 28աբ Մեծարաւ սիրելոյդ խնդալ - Եկն եհաս ինձ օր տրտմութեան... ի կատարումն պատասխանոյ բանից քոց գրել ցանկացայ, ողջ լե՛ր :

22. 28բ-9ա Սիրող Աստուծոյ սիրող ընկերին, ազնուագութ բարեբար, չելեպի՛, ողջ լե՛ր գօրացեալ Տերամբ ի մխիթարութիւն ազգիս – Ամենայն աղէտք թշուառութեան մերոյ... բարձրացուցանել յերկակի կեանս, շնորհօք եւ մարդասիրութեամբ Յիսուսի Քրիստոսի՛ Տեառն մերոյ. ամէն :

23. 29աբ Վսեմափառ պայազատ իմ յատկեղ բարեբար – Արդարեւ ոչ եմք բաւական... նուաստութեան որ եմ, մնամ աղօթարար վասն քո ապիկար ծառայ :

24. 29բ-30բ Բուրաստան բանաւոր շնորհարոյս ծաղկանց եւ գանձարան շնորհաւոր հոգեծիր ազանց Քրիստոսի Տեառն (անուան տեղը բաց՝ չգրած) առաքելագործ արեւալիսկոպոսի աստուածարեալ աշոյնն նուիրեմ համբոյր անսպառ սիրով – Ոչ սակաւ պարտաւոր օրինաց սիրելութեան... մնամ յարածամ քաջողջութեան Ձերում ի բոլոր սրտէ փափագօղ :

25. 30բ-1ա Վսեմափառ եւ առաքինագարդ բարեբարի իմոյ (անուան տեղը բաց՝ չգրած) մահտեսի աղայի յոգնեալիստ ձեռացն համբոյր ծառայական – Որպէս մոլորեալ ի բազմահետ շաւիղս... որ ունի ընդ ազնուականիդ բարեկամութիւն մեծ : Ողջ լե՛ր :

26. 31աբ Եղանակ մունայլէր գոյն Իզմիրին չօք (հայատառ թուրքերէն) – Գեղեցիկ ես դու գովելի, պարտեզ ծաղկեալ ի մէջ երկրի / վարդ մանուշակ ի քեզ բուրէ... երբ զարթիցեն տեսակ գեղամ, վրեժ-խնդիր լինիլ նոցին :

27. 31բ Եղանակ բաստ գոյն Ձիւֆիինին : Բոցանշոյլ արեգակունք եւ այլն : Եղանակ սուզինակ գոյն

պիր մէլիք սիմայ (հայատառ թուրքերէն) – Թագ փառաց մերոց, այր ցանկալի... դու զՎաղթանկ, մեծ նա՛ :

28. 31բ-2ա Եղանակ մունայլի գոյն պէն պիլմէտիմ (հայատառ թուրքերէն) – Տիպ տենչալի, արեգական, արեգական / երեւեցայ ի տես ական ցանկալի իմ Տէր... յամս վերջնոց, ծագեա՛, սէ՛ր իմ, սէ՛ր :

29. 32աբ Ես ի գոյն Պէն պիլմէտիմ (հայատառ թուրքերէն) – Առաւօտ լուսաբեր Հայաստան երկրի / բուրաստան ծաղկախիտ... զշնորհս անդ փառս երկնաւոր :

30. 32բ-3ա Եղանակ սապան միխալիք գոյն սահղայի (հայատառ թուրքերէն) – Արփագեղ կառք արեւուն... յայն սուրբ նուէր, ընդ Աստուծոյ միաւորէ :

31. 33ա Լու՛ր ձայնիս, սէ՛ր իմ... առշորի հոգիս, մո՛յժ ի հարսանիս :

32. 33աբ Սէր իմ սիրական (անուան տեղը բաց՝ չգրած) գովական պէտ հանդիսական – Ընկալայ եւ ընդունիմ, զի զիրաւունս ունիս արդարեւ... լրով յուրախութիւն սրտից իմոց : Ողջ լե՛ր :

33. 33բ Հարագատ գործունէի Մայր սրբոյ Աթոռոյս (անուան տեղը բաց՝ չգրած) արգոյ վարդապետի ի Տէր յարամնալ բախանօք – Յառաջնմէ յառաջացաք... զնորայն խոստացեալն եւս ի ձեռս բերցես եւ ողջ լե՛ր լի աւուրբք եւ յա՛ :

34. 34ա Խոհեմափայլութեամբ պանծաւոր հարագատի մերոյ եւ որդոյ սիրելոյ տեառն (անուան տեղը բաց՝ չգրած) պատուական բարունոյ ողջոյն սիրախառնեալ բարեմաղթութեամբ – Ձոր ի հոգտեմբեր 28 դրոշմեալ... ունիմ մխիթարել քեւ, քանզի եմ անմխիթար :

35. 34բ Առ լիագարդն շնորհ ըղձաւոր, որ Հոգոյն, նպաստահաւաքի մեծի գահոյս տեառն (անուան տեղը բաց՝ չգրած) սիրեցեալ բարունոյ, ի Տեառն ձիրս խնդալ յարապէս – Յանջատման նազելագունիդ որդոյ առ ի սիրունակ հօրէ... սիրագնութեանդ ցանկալի կարօտանօք յոյժ :

36. 34բ-5ա Մշտահարագատ գովելոյ ի փառս Սրբոյ Աթոռոյս, սիրելոյ մեր տեառն (անուան տեղը բաց՝ չգրած) լիաշնորհ վարդապետի ողջոյն եւ սէր աղօթիք ձօնեալ – Գրութիւնքդ մտերմական հասեալ են... սակս աղօթող լինիլ բարեգով յուրախութիւն :

37. 35աբ Զդարձ գրութեան մերոյ առ Ձեզ ընկալայ ի մարտի 22, ընդ որ եւ գերիս տեսարակս Բերթումեան, որք թէպէտ... առ իս հասեալ համարիմ – Գրես նկարելով առաջի աշաց մերոց... յուսամք բարուք լինիլ : Ողջ լե՛ր եւ ես եմ եւ մնամ հանապազօր ձեզ բարեացակամ :

38. 35բ-6ա Ըստ փիլիսոփայից՝ տարագրութիւնն է փոփոխութիւն իմն... եւ ներել խնդրեմ ի քէն, որ առաջինն էիր զամենեսին - Ապաքէն սկիզբն կալցուք արդէն իսկ... ի գալն իմ, ի մեծէն Պօլսոյ, ողջ լե՛ր ընդ երկայն աւուրս :

39. 36ա-7բ Ի լուսակառոյց եւ երկնաման մեծի

Մայր Աթոռոյս... եւ աստուածապարգեւ օրհնութիւն - ճնորհք ընդ ձեզ... սուրբ ժողովոյ բարձրագոյն խորհրդարանի, Սրբոյ կաթողիկէ էջմիածին]:

40. 37բ-8բ Օրինակ յանձնարարական կոնդակի – Քրիստոսակերտ եւ երկնանման մեծի Մայր Աթոռոյս... տուրս հատուցէ ձեր գործերուն, որպէս նորին աստուածութեանն անկ է: Ողջ լերո՛ւք. ամէն:

41. 39աբ Նուի[ր]մամբ յիսուսեան սուրբ ողջունի՝ ցանկամբ ողջ մնալ քեզ ի բազում ամս ամենայն բարօրութեամբ – Ամենայն գրութիւն առ իս, յորմէ հետէ... ո՛ղջ լէ՛ր ի Տէր իմ, եւ եղէց ես յարածամ բարեացակամ ի բոլոր սրտէ Ձեզ:

42. 40աբ Մեծագոյն ջերմեանդութեամբ հոգոյս առնմայեմք սիրով զխոնարհական համբոյր աստուածարեալ սուրբ դաստակացոյ ձերոց եւ ցանկամբ յանապագ յամենայն սրտէ ի տեսութիւն պատուական հայրութեանդ, յորմէ եւ վայելել լիով զվաղեմի կարօտեալս զօրհնութիւն սուրբ, ի մխիթարութիւն թախցելոյ սրտիս – Ապաքէն որ շնորհք մեզ... հորդ սրբութեան յետնագոյն ծառայ վարդապետ հայոց տրուի Զաւարիայ: 1823, ի յուլիս ամսոյս յօր երկուսասն, յանապատն մեր, որ ի յերեւան:

43. 40բ-1ա Ըստ երկուց տարփատր սիրելեաց նագելոյ, հանճարաւոր տեառնդ (անուան տեղը բաց՝ չգրած) արժանատր բարունոյ եւ եղբօր խնդալ բարօր – Որ ազդեացն ի խօսս գովանեացն ետ եւ ներգործականութիւն... եւ Սրբոյ Աթոռոյս տարակուսելի տենէ՛: Ողջ լէ՛ր ի Տէր Քրիստոս ի սէր մեր:

44. 41աբ Երջանկափայլ եւ առաքելաշունք (անուան տեղը բաց՝ չգրած) սրբազան արքեպիսկոպոս՝ մեծապէս եղբայր իմ սիրելի – Ի բազումս թեպէտ տեսանի սէր... երկարածգել զսրբութիւն Ձեր, որում մնամ մտերիմ բարեացակամ:

45. 41բ-2ա Յաստուծուստ ընտրեալ, տեսուչ բարեխնամ յայցելութիւն իւրոյ տառապեալ հոտին Տեառն եւ Տեառն (անուան տեղը բաց՝ չգրած) բարեկրօն վարդապետ սուրբ հօրդ իմոյ Աջոյն համբոյր յարատոյն անձկանօք – Ներփչեաց ի խանձողեալ... օրհնութեանդ յաւէտ մշտակարօտ:

46. 42ա-3ա Յորժամ յուշ ամեմ ինձ միանգամ զվեծդ առաքինեաց... պերճութեանդ յաւերժական եւ անմոռաց սիրոյ իմոյ:

47. 43բ-4ա Աստուածարեալ եւ սրբազնակատար հա՛յր հոգեւոր, ամենողորմած Տէր իմ եւ բարեբար – Երջանիկ աշոյղ սրբութեան խոնարհ համբուրի... ի վեր քան զեղանակ: Ողջ լէ՛ր փառագարդեալ փառօք ի պարծանս Ձերում գերափառ տերութեան նուաստ ծառայ Յօհաննէս դպիր, Սրբոյ էջմիածնայ միաբան: Ի 1822, մայիս 26, ի Սուրբ էջմիածին:

48. 44աբ Շնորհի Տեառն զօրացեալ ի հոգի տիրացու Յովսէփ աագ սարկաագ, հոգեկից եղբօր

սիրեցելոյ ընծայեմ ողջոյն անապատ սի[ր]ով – Եթէ ուրուք դիպեցի գտանել զգանձ մեծագին... յէտս կասեցուցանէին զիս ի նոյն փափագանացս:

49. 44բ-5ա Լապտեր անձնատր նրագին սիրոյ, սին լուսատր Տանն Աստուծոյ Տեառն Տեառն գերապատի (անուան տեղը բաց՝ չգրած) արհիպպանձ եպիսկոպոսի եւ ազգասէր...ի (անուան տեղը բաց՝ չգրած) Ամենայն Հայոց եւ բարեխնամ Հօր մերոյ նուիրի համբոյր որդիական սիրով – Որ ունի զվերս յանձին իւրոյ... լէ՛ր ողջ, պատուական հայր, անվրդով կենօք եւ երկար ամօք ի պարծանս Քորգոմեան ազինս:

50. 45աբ Ի սուրբ ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի գերագան Մայր Աթոռոյս Սրբոյ Կաթողիկէ էջմիածնի, մատուցի ողջոյն հանդերձ երկնանձի կատարեալ աստուածային սիրով լուսանունդ հարազատ որդոյդ մերոյ սրբոյ գահիս հանճարափայլ Բարսեղ եպիսկոպոս՝ վայելչաշունք առաջնորդիդ գերահոշակ վանից սրբազան առաքելոյն Քաղէտի ուրախ լինիլ ի Քրիստոս յարածամ - 2ի դու սիրեցեալ հարազատդ մեր... լուսակառոյց գերասքանչ Մայր Աթոռոյս Սրբոյ Կաթողիկէ էջմիածնի:

51. 45բ-6բ Ի Քրիստոս սիրեցեալ շնորհագարդ տեառն (անուան տեղը բաց՝ չգրած) արքեպիսկոպոսի յարգոյ եղբօր ողջոյն սիրոյ – Արդարեւ ըստ վկայելոյ աստուածաշունչ գրոց... ի սէր բոլոր սիւ[ն]հողական արքեպիսկոպոսաց Սրբոյ Աթոռոյս էջմիածնի:

52. 46բ-7ա Անձնադիր զաւակիդ մերոյ եւ մտերիմ հարազատի բարեւ<րե>բարոյ հեզանամբոյր եպիսկոպոսի ողջոյն սուրբ եւ օրհնութիւն բազում նուիրի – Արդարեւ այն, որ յանակնկալումս ժամու արուեստաւորէ... եւ ընդ թղթոյ մերոյ Յովհաննէս վարդապետի առաքեսջիբ, լէ՛ր ողջ յանասանելի կեանս:

53. 47աբ Առաքինութեանն փառամասնութեամբ զարդարեալ տեառն (անուան տեղը բաց՝ չգրած) փառխմաստ եպիսկոպոսի մերոյ որդոյ ընտրելոյ ողջունի սիրոյ խնդալ ի Տէր – Գոլով ի մարտի ելն յերեւան... ի բազում ամս բարգաւաճեալ շնորհի Տեառն:

54. 47բ-8ա Ի շնորհս Սուրբ Հոգոյն զարդարեալ պարկեշտակրօն (անուան տեղը բաց՝ չգրած) փառխմաստ աագ փահանայի, մերոյ յատուկ սիրեցելոյ օրհնութեամբ ողջոյն – Գրութիւն յարգարժան սիրեցելոյդ ընկալաք... զորս եւ յանձնեմք ի պահպանողութիւնս արարչին Տեառն՝ Աստուծոյ ամենակալի:

55. 48ա Շնորհապասկ տեառն (անուան տեղը բաց՝ չգրած) հոգեշնորհ բարունոյ՝ եղբօր իմոյ պատուականի, յողջոյն սիրոյ երջանիկ կենօք խնդալ ի Քրիստոս – Վաղնչոց առած է գեղեցիկ, թէ երանի հարկին... ողջ ցնծալից կենօք ըստ աւուրց երկնից ի պարծանս մեր:

56. 48բ Աստուածարեալ եւ երանաշնորհ տեառն (անուան տեղը բաց՝ չգրած) սրբազան արքեպիսկոպոսի՝ հայրապատի եղբօր խոնարհ սրտի համբոյր

սիրոյ ի կարօտութեան – Հուր բոցավառ յարգելոյդ սիրոյ կարօտանաց... սուրբ եղբայրութեան ըստ որում հաստեցաքս:

57. 48բ-9ա Շնորհազարդ եւ աստուածաբեալ մեծի տեառնդ երեւանեմ սրբոյ զարշապարացն խոնարհական համբոյր – Ի քսան յուլիս ամսոյ գրեալ... առ ի պարծանս սրբոյ միաբանութեան:

58. 49աբ Առատութիւն սիրոյ իմոյ, որ առ ձեզ ոչ կարէ պարփակիլ... Իսկ եւ իսկ առաքեալ էր գալթաֆայն իմ: Ողջ լէ՛ր, եմ եւ ես:

59. 49բ-50ա Ի 28 յուլիսի գգրեալդ առ իս ընկալայ յիրում ժամանակի եւ ծանեա զպարունակեալսն առ ի նմա լիագոյն տեղեկութեամբ – Նախապէս խնդացայ առ ողջութեանդ եւ գոհացեալ... շերմեռանդ աղօթաւոր, վասն ամենայն բարութեանց Ձերոց:

60. 50աբ Բագում կարօտութեամբ հայրական սիրոյ իմոյ ողջունելով... եւ եղեց միշտ սիրող յառաջագիմութեան եւ ամենայն բարութեանց եւ յաշողութեանց:

61. 50բ-1բ Բարձր եւ անստերիւր խորհրդարանի ընտրեալ անդամոյ ի Հոգւոյն Սրբոյ եւ մերո գերապատիւ արգոյն եղբարց ի սէրս սէր յարեղց, իսնդակաթ հոգավ ողջոյն յարգանաց – Որպէս ի խաւարչտին տեղուոջ ի ծագել... եւ անկասկած, զի ունիմք զկնի աւուրց չուել եւ գալ:

62. 51բ-2բ Աստուածաբեալ եւ գերապատիւ Աստուածատուր սրբագան արեպիսկոպոս ի Քրիստոս սիրեցեալ յարգի եղբօր ողջոյն յարգանաց – Ասաց փոխն Տարսնացի եւ բերանն Քրիստոսի... սոքիմբք շատացեալ լերո՛ւք ողջ ընդ ամս բագունս:

63. 52բ-3բ Հրաշակերտ Սրբոյ Աթոռոյն էջմիածնայ բովանդակ հարց սրբոց եւ եղբարց պատուականաց մաքուր ռոտիցն խոնարհ երկրպագութիւն – Աղաչեմ զձեզ արտոսրաթոր աջօք... իսկ շերմեռանդութենէն յորդորեալ զիմեաց եւ այլն: Ողջ լերո՛ւք ի Տէր:

64. 53բ-5ա Կոնդակ խրատու գրեալ ի մեծն Պօլիս վասն աղեալի անցից: Յիսուսի Քրիստոս եւ այլն, որպէս արժանն է – Ծանօթագոյն իսկ է հաւատացելոցդ ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր... անճառելի տերութեանն հանդերձ համայն ննջեցելովք ձերովք, որ եւ ողջ լերո՛ւք օրհնեալք յԱստուծոյ եւ յամենայն սրբոց նորա եւ ի մէնջ: Վշտալիր ցաւակիր կաթուղիկոս ամենայն Հայոց վշտալի եփրեմ: Յամի Տեառն ի 1821, յելն մար՛, ի Մայր Սուրբ Աթոռն էջմիածնի:

65. 55աբ Ուսանաւոր առ Կուսաւորիչն սուրբ – Հովիւ տածիչ՝ հօտին փոքու Յիսուսի... լուսաւորիչ Հայաստանեայց սուրբ Գրիգոր:

66. 55բ-6ա Առ սուրբ հայրապետսն յօրինեալ – Հոգւոյն Սրբոյ դու գրիչ, / տառից հայոց հնարիչ... Աստուծոյ, Աստուծոյ, Աստուծոյ, / սուլիչ քաղցր օրինաց:

67. 56աբ Աղերս առ Տէր Աստուած ոտանաւորաւ – Ստեղծիչ հոգւոց, բժիշկ դու ճարտար... ջամբեա՛ ինձ այժմիկ սովեալ ծառայի:

68. 56բ Առ սուրբ կոյսն Աստուածամայր – Հարսն մաքուր Հօրն անեղի... ամենօրհնեալ Տիրածին կոյս:

69. 56բ-7ա Առ Սուրբ Կարապետն Յօհաննէս – Լուսաբեր արուեսակ արեւուն Յիսուսի... Արդ, աղաչեմ զքեզ ո՛վ սուրբ:

70. 57աբ Ի վերայ մաքուր ծնողաց Սուրբ Աստուածածնայ – Տիրակերտ պաղպաղունք նկարեալ սուրբ վարուք... Յովակիմ եւ Աննայ, սիրելիք անեղին:

71. 57բ Առ սրբոց կուսանս գովեստից բան – Աստուածակերտ պարիսպ հօգօր... անապական պսակ կուսից:

72. 57բ-8ա Առ սուրբ Գրիգոր Նարեկացին – Արիագոյն ի վաստակս հոգեկան՝ սէր իմ սէր... հա՛յր հոգեւոր մեծ հոգետոր՝ սէր Գրիգոր:

73. 58աբ Աղերս առ Աստուած յօրինեալ – Ետուր զքանքար՝ յարգել վարուք բնութեան... ի գալ փառօք յիշեա՛ եւ զիս, Աստուած իմ:

74. 58բ Այլ իմն ոտանաւոր – Իմաստութեան Հօրն Յիսուսի աշակերտ... առ ի պահել իւր աւանդիցն անցըրդի:

75. 59աբ Բարձր արժանապատիւ (անուան տեղը բաց՝ չգրած) զիտնական եւ աստուածաբան վարդապետ, արգի սիրելի հայր իմ – Ողջունեմ զսուրբ հայրութիւնդ... եմ եւ եղէց ի կեանս խորին վերապատուութեամբ, ամէն:

76. 59բ Ամենասրբագան վեհափառ հովուապետ, ողորմածագոյն Տէր իմ սրբութեան աշոյղ համբոյր փափագելի տէնջանօֆ – Խնդիր մաղթանաց ծառայիդ զիջանելով... լիցիմ պատրաստական ինձապետական ծառայութեամբ: Ողջ լերո՛ւք յամերում կենօք:

77. 60ա Շնորհաց ժառանգաւորի մեզ՝ շնորհածրին տեառն (անուան տեղը բաց՝ չգրած) արեպիսկոպոսի նորուն: Ի Քրիստոս սիրեցելոյ ցանկ – Առ առաջին գեղեցկացաւ եւ որ ի քէն... օրհնեսցէ բարեյիշատակութեամբ: Ողջ լէ՛ր ցնծութեամբ:

78. 60ա-1ա Գիր Ձեր որպիսածանոյց ձեռամբ հաւատարմին Ձերոյ... եւ դուք յերկար ժամանակս ի Տէր ամենայն յաշողութեամբ:

79. 61աբ Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր եփրեմ կաթուղիկոս Ամենայն Հայոց եւ ծայրագոյն պատ[ր]իարզ առաքելական եկեղեցւոյն Քրիստոսի... եւ բոլոր օրհնեալ ժողովրդոց՝ մեծաց եւ փոքունց ի Տէր խնդալ – Շնորհք, սէր, ողորմութիւն... որք եւ այսպէս ըստ հրամանի մերում կատարելով, ո՛ղջ լերո՛ւք ի Տէր ամենայն բարօրութեամբ:

80. 61բ-2ա Յիսուսի Քրիստոսի ծառայ եւ այլն ըստ կարգի – Եւ ընդ ողջունի եւ օրհնութեան, զիտութիւն լիցի... եւ իրաւունքն միաբանութեամբ նմա հասուցանել: Ողջ լերո՛ւք ի Տէր:

81. 62ա-3ա Գրութիւն քո ի ձեռն հարազատաց քոց Գրիգոր եւ Յարութիւն վարդապետաց եհաս... ի

պարծանս եւ ի պարզերեսութիւն իւր յորդոր եղիցիս – Ահա ըստ բանի քում եւ մանաւանդ ըստ աղաչանաց նորին գրեցաք... յանձն արարեալ զձեզ՝ եմք եւ մնամք ի սրտէ Ձեզ միշտ բարեացակամ:

82. 63աբ Յառաջմէ ըստ չափու զամենայն զիարդութեանց... վասն որոյ եւ աստ շկամեցաք երկրաբեւ զբանն – Արդ, որ ինչ արժանն էր... վասն որոյ գրել այսքանեաց արժան համարեցաք: Կերո՛ւք քան զայս յաւել ողջ յերկար ամս ի Տէր:

83. 63բ-4ա Թէպէտ եւ աչք մարմնոյ վրէպ գտեալ ի տեսութենէ... շողկապաւ եղբայրութեան պահպանեալ առ եղբայրութիւն Ձեր, մնալով Ձերդ սրբազնութեան բարեացապարտ:

84. 64աբ Շնորհատեմ զառաքելական սուրբ աշտիմանդ ընդ նմին եւ զմեծ առաջնորդութիւնդ... եւ ինչ յայտնի են: Ողջ լէ՛ր շնորհո՞ք Հոգւոյն Սրբոյ ի սէր մեր – Ողջունիւ սիրոյ ծանիր, զի գրութիւն սիրելի... ի գրոյ նոյն Յակօբ վարդապետին գիտացեալ եւ ուրախ կեցեալ, լէ՛ր ողջ ի Տէր:

85. 65աբ Շնորհագարդ սրբազան արքեպիսկոպոս սրբազան առաջնորդ անդրանիկ որդեակ մեր եւ սիրելի հարազատ – Գրութիւնդ ընդ Գրիգոր եւ Յարութիւն վարդապետ սիրելեացն... Քան զայս յաւել ողջ լէ՛ր ի Տէր ի բարգաւաճեալ ժամանակս հարուստս:

86. 65բ Բարձր արժանապատիւ առաջնորդ սրբազան արքեպիսկոպոս հարազատ զաւակիդ Սրբոյ Աթոռոյն եւ մեր սիրելոյ ողջունի սիրեցեալ համառօտի յայտարարութիւն – Ահա, արգարեւ անցնումք աւուրց յովովականց... զորս ընկալեալ ի հաճոյս: Ողջ լէ՛ր եւ դուք՝ ի Տէր յամենայնի:

87. 65բ-6ա Յիսուսի Քրիստոսի ծառայ եւ այլն ըստ կարգի – Որում եւ ծանուցանեմք, զի ի գրութիւն Ձերմէ առ մեզ գրեցելոյ... եւ այսու ամենայնիւ ըզձամք ի սրտէ լինիլ ձեզ յաւելտ ողջ եւ առողջ:

88. 66ա-7ա Յիսուսի Քրիստոսի ծառայ եւ այլն ըստ կարգի – Գիր Ձեր առ եփրեմ եւ Ստեփաննոս եպիսկոպոսունս... եւ ընդ հոգւոյդ Ձերում միշտ եմք եւ մեք:

89. 67բ-8ա Թարգմանութիւն գրոյն ի պապական շահէ, որ առ Նայիպէ Սանթունի եւ միրգէ Ապպազ որդին իւր ի մասին Սրբոյ Աթոռոյ էջմիածնայ ի պարսից ֆարսի լեզուէ ի հայ բարբառ – Բարձրագահ որդի, արի եւ յաղթօղ անգին եւ այլն... անմիջաբար վերահասու լինելով, ամենայն որպիսութեան նոցին, ողջ լէ՛ր ընդ բազում ամս: Գրեցաւ գիրս յամսեանն Ռէբելլէ էվվէլ սէնէ 1237 (արաբական գծագրութեամբ):

90. 68աբ Առաքինապալ (անուան տեղը բաց՝ չգրած) ռակերտ հայր իմ սրբասնեալ – Ձթուղթ Ձեր ընկալայ եւ ուրախ եղէ... թէ բարի եկիր մաքուր աղանիդ՝ շիւղաբերդ ոստոյ ձիթենւոյ: Ողջ լէ՛ր եւ ես եմ:

91. 68բ Գրութիւն Ձեր ի ձեռն հարազատին Ձերոյ եհաս... եւ երբեմն ահացուցիչ բանիւ յուսամք լինի յայնժամ ի բարին, ո՛ղջ լէ՛ր:

92. 69ա Գրութիւն Ձերում սրբութեան ժամանեաց... ի բազում ժամանակս ի պարծանս սրբոյ գահիս եւ յուրախութիւն մեզ – Ձեռամբ հարազատին ձերոյ հինգ գլուխ պաճարեղէնս... յարածամ վասն մեր, եւ մեք եմք եւ մնամք միշտ բարեացակամ:

93. 69բ-70ա Գրութիւն Ձեր, որ ընդ հարազատ ծառային Ձերոյ ստացաք ողջամբ... լէ՛ր յաւել քան զայս ողջ եւ դու՛ ի բարեփառ ժամանակս ձիգս ի Տէր:

94. 70աբ Շարժեալ ի սիրոյ սիրոյս իմոյ գրեալ... գնշոյլ անխարդախ սիրոյդ ցուցանել – Արդ, որպէս ոչ կարէ ներգործել... աղաչեմ զսիրելութիւն Ձեր սերտ սիրով զիջանել ի խնդիր մեր:

95. 70բ-2բ Զխարդ հաւաստի էր մեզ կանխաւ, թէ Մարտիրոս եպիսկոպոսն Ստաթէի... ի շնորս ողորմութեան արքայորդոյն – Մինն ի բազմաց մեծ ողորմութեանց... զոր ստորագրեցաք ի պարբերութիւնսն առաջին եւ մնամ որպէս եւ եմ միշտ բարեացակամ Ձեզ:

96. 72բ-4ա Ոտանատր գեղեցիկ եւ յոյժ աղո՛ւ, շարարեալ ի Յակօբ վարդապետէ եւ ի խոր ծերունի պատրիարգէ Կոստանդինապօլսոյ՝ ի վերջին ժամանակս կենաց իւրոց՝ մերձ ի մահն – Մենացի՛ր, անձն իմ խղճալի... թէ հարցանես զգալստենէ քո գուշակ նշմար չի մնաց:

97. 74ա-6ա Յուսմանէ քահանայէ գրեալ (մատիտով յետագայի սրբագրում՝ «եկեղեցական Սոյզ վանից, զոր օրինակն առաքեաց») առ Բէշտեմալեան Գրիգոր գիտնական վարդապետն, որ ի Կոստանդինուպօլիս, վասն հաւատոյ եւ այլոց իրաց ըստ իւրոց մոլար կարծեաց (մատիտով յետագայի սրբագրում՝ «եւ խնդրին զպատասխանին տէս յԱրարատ ամսագրին, 1869 ամի*») – Ընդ վայր պարպատին ուրկանք որսորդաց... տրորել զոր Աստուած՝ մեզ վարդապետաց:

*Տէս «Արարատ» ամսագիր, 1870, փետրուար, թիւ Ժ, էջ 243:

98. Նանիր եւ խոտան՝ պարծանմ անարեաց... երկինք եւ երկիր՝ վկայք պատգամաց*:

*Տէս «Արարատ» ամսագիր, 1870, փետրուար, թիւ ԺԱ, էջ 265:

99. 76բ-8գ Ի նորին Գրիգոր վարժապետէ Փէշտեմալեանց յօրինեալ զպատասխանի յիւր վիմանն նոյն քահանայի (մատիտով յետագայի սրբագրում՝ «եւ առաքեաց ի տեսութիւն») – Չար է բնաւոր կուրութիւն մտաց... որպէս վայելէ ճշմարտասիրաց:

*Տէս «Արարատ» ամսագիր, 1870, փետրուար, թիւ ԺԱ, էջ 266:

100. 78դ-9բ Առազդեցութիւն ինչ պատմաբանօրէն առ բարեւէր ընթերցողդ ի Պօղոս դասասաց դպրէ Տիրիկեցոյ Թորոսեան, թէ յորոց իրաց իրականց շինելով հարկեցեալ ետ շարագրել հարազատին իւրոյ զայս գիրք ընդդեմ նեստորանէտ հերձելոյն Միսիթարայ եւ աշակերտաց նորին – Ըստ ասից

հրաշալի առաքելոյն Պողոսի... եւ անասելի խայտառակութեանցն յորդունան եւ այլն:

101. 79բ-81բ Ամենապատուելի հասարակութեան հայոց բնակեցելոց... զձեզ ամենեսին, եմ եւ մնամ միշտ բարեմաղթու վասն Ձեր:

102. 82ա-3բ Յօրինեալ ի Գրիգոր վարժապետէ Փեշտեմալնեան առ Երեմիայ վարդապետ թղթագրութիւն – Եկն ցայգ ինձ ցաւագին... յիշելով յաղօթս զմեզ, նուաստ ծառայ Տեառն փրկչին:

103. 83բ-4ա Նորին Գրիգոր վարժապետի արարեալ ոտանաւոր – Միրտ իմ վառի ի սէր քոյին... շուրբ արասցեն խորասոյգ, ազնիւ երգնակ քաղցրա՛:

104. 84ա Նորին ոտանաւոր ի վերայ կամբոնացւոյն – Նոր արշալոյս նորոյ երկնի... ի քէն բուրեաց հոտ նարգոսի, սուրբն ներսէս կամբօ՛:

105. 84աբ Նորին Գրիգորի վարժապետի արարեալ ոտանաւոր ի վերայ սրբոց իշխանացն մերոց – Ով գերարփի լոյս երկնաւոր անսահման... մի՛ տար զմեզ ի փորձութիւն շարութեան իշխանաց մեր:

106. 84բ Գերարժան եղբօր տեառն (անուան տեղը բաց՝ չգրած) ազնուափայլ թակերտի ողջոյն սիրածօնեալ – Մտերմութիւն սիրոյ սիրելութեան քում ի նամակի... լիջի՛ր տեղեակ ի յեկօղ հարազատաց ձերոց, ողջ լե՛ր ի Տէր, ի սէր մեր:

107. 85ա Անդրանիկ լուսատուին հոգւոց մերոց, սուրբ առաքելոյն Քաղաքի հրաշապատի վանիցն մեծափառ դէտ, ողորմաձագոյն տէր իմ – Քրիստոսընկալ սրբութեան աշոյղ համբոյր առ ձօնեմք... ողջ եմ եւ ես կնգրուկաբոյր ձեր աղօթից օժանդակութեամբ:

108. 85բ Գերաշնորհ պատուոյ արժանաւոր, սրբազան արեալիսկոպոսի եւ սիրելոյ եղբօր ի Քրիստոս – Ուրախակցութեան գիր սուրբ եղբայրութեան Ձերոյ... ոչք պարկեշտութեան են հետեւորդ:

109. 85բ Նորին Գրիգորի վարժապետի արարեալ – Հուր սիրոյ իմոյս ազգի... անկեղծ սիրոյ եմք ի խնդիր, օգնեա Յիսուս փրկ[իշ]:

110. 86ա-7ա Պատուելի հասարակութեանն հայոց բնակելոց յամենայն սահմանս Երեւանու եւ Նախիջեանու ի քաղաքս եւ ի գիւղս – Յայտ առնեմ հարազատութեամբ հոգւոյ համաձայն... գործ արժանաւոր հաւատարիմ հպատակութեան: Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու՝ Ներսէս: Ի 1827թ., ապրիլ 15, ի Սուրբ Էջմիածին:

111. 87աբ Երկնաւոր նագելի հանճարով լցեալ եւ կառուարիչ տանն Յիսուսի կարգեալ մտերմագոյն աթոռակալի մեծի աթոռոյն սրբոյ եղբօրդ մերոյ սիրելոյ, տեառն Սիմէօն հոգեպսակ եպիսկոպոսի, բազում սիրով ընծայեմ զաստուածայնն ողջոյն յարածամ – Միրապարարտ նամակ ընկալայ ամենայն սիրոյ... ողջ լիջիր կենդանական վիճակօք պատուազարդեալ ի հրճուանս իմ:

112. 87բ Ամենապատիւ եւ շնորհապանձ տեառն տեառն բարձրապատիւ Բարսեղ վարդապետի սիրամուկ ողջունին համբուրեալ զձեր վերընծայեմ յարգանս – Սիրանկար, տենչալի նամակ ի շնորհափայլ մատանց... անկեղծ յանձն եղեալ իմ յարժանահայց մաղթան: Ն[ուաստ] ծ[առայ] մեծապատիւ խոհականիդ՝ հ[այր] Մինաս Մխիթարեան վարդապետ Բժշկեան, ի Տրապիզոն, 5 հոկտեմբեր, 1818 թ.:

113. 88աբ [Բան չափաբերական] - Տիպ տիրական՝ վերափորեալ մատամբ էին արարչին / Ի մաքառուտ անմիաբան քառեակ նիւթոց անգամին... նրբազննին ընտրողութեամբ պատասխանել զարժանին, / զի մի՛ խոտան եւ անպիտան երեսեցիս հանդիսին:

114. 88բ-92ա Թղթագրութիւն հ[այր] Միխայէլ վարդապետի Չամչեանց առ երկուս վարդապետսն վերապատուելի վարդապետաց տեառն տեառն հայր հայր Մկրտիչ վարդապետի եւ հայր Իգնատիոսի վարդապետի՝ ի Տէր խնդալ – Զգիր վերապատուելեաց... այս ձերին սրբութեան, որոյ հայրագութ տեսչութեան կամ յամենայնի: Հնազանդ ծառայ՝ հայր Միխայէլ Չամչեանց:

115. 92ա Տաղ ի վերայ արքային Լեւոնի ի նորին Գրիգոր վարժապետէ Փեշտեմալչեան, որ ի Կոստանդինուպոլիս – Շարաւիղ ընտիր տոհմին Թուրքեան... ազգիս պսակ Լեւոն ար[քայ]:

116. 92աբ Ի վերայ թագաւորաց, ի նորին Գրիգոր վարժապետէ – Հսկայ, հզօր, գեղապատշաճ... կարօտ եմ քոյդ տեսութեան, / զրեմս քո ցոյց գերե՛:

117. 92բ Ի նորին Գրիգոր վարժապետէ ի վերայ Անի քաղաքին ոտանաւոր – Պարձանք քաղաքաց, քաղաք մեծ Անի... ջամբել մեզ զկաթն սիրով մայրէնի:

118. 93ա Նորին Գրիգոր վարժապետի ի վերայ Վաղարշապատ քաղաքի – Քաղցր տեսիլ արեւուն, մեզ հայեցաւ խստագոյն... ծով ծիրանի ծածանէր Վաղարշապատ գահ արքունի՛:

119. 93ա Տաղ ի վերայ Տրդատայ արքային, ի նոյն վարժապետէ յօրինեալ – Ծաղիկ պայծառ, վարդ թերաբաց... տո՛ւր զբաժակ քո քաղցրագոյն, Տրդատ արքայ Հայոց Մեծաց:

120. 93աբ Նորին Գրիգորի վարժապետի, յօրինեալ ի վերայ Գրիգորի Լուսաւորչի – Հայր հաւատոյ հովիւդ քաջ... վայելչանալ այս գրոյս այսմիկ սգակիր, ով սուրբ Գրիգոր Հայր՛:

121. 93բ Նորին Տաղ ի վերայ Գագիկ արքային – Առիւծ հզօր Բաքրատունի, զի՞ ննչեա յայգ անլոյս գրբի... լե՛ր Նեւեմեայ հուր ջրհորոյ, ո՞հ Գագիկ՛:

122. 93բ-4ա Նորին Տաղ ի վերայ Սմբաթայ թագաւորին – Փայլակնացայտ սուսեր ազգու, շանթ բոցահրատ շփոթ ամպոց... երկնատեղաց ջուրց ողողել, Սմբաթ արքայ Բագրատունի:

123. 94ա Տաղ նորին ի վերայ հայր Աբրահամու – Արմատ բարի, տունկ օրհնութեան... արքայն Աբգար եւ Տրդատէս, պետ պանծա՛ւ:

124. 94աբ նորին Տաղ ի վերայ թագաւորաց մերոց – Ոստ բարեգեղ, ճիւղ օրհնութեան... տարաշխարհիկ աղեկիզեմք, անաշխարհիկ բոցակիզեմք:

125. 94բ նորին ի վերայ Մամիկոնեան Գայլ Վահանայ – Նէտ թափանցիկ, սուսէր հաստու... քաջ զորաւար Մամիկոնեան Գայլ Վահան:

126. 95ա Զահարփ փառացն պայծառազարդ արտօնութեամբ իսկաֆանչ իմն հանդիսագոյն աստուածաբեալ երչանիկ տեառն տեառն արբազակերտ (անուան տեղը բաց՝ չգրած) ամենայն Հայոց ի բազմամեծար նուէր պատուոյ համակ ընծակաթիլ խոնարհական դիմօ՛ք արբահեր մաքուր գարշապարացն համբոյր ի բոլոր սրտէ յաւէտ մատուցանեմք – Կոչումն աստուածայինդ կենսապարգեւ... ի ցնծութիւն եւ մխիթարութիւն յետին մեր նուաստութեան:

127. 95բ Գերապայծառ փայլելոյ ի շնորհս մեծազարդս տեառն Յովհաննիսի արհիական եպիսկոպոսի եւ ծայրագոյն նուիրակին գահին լուայ մեր սիրոյն ի սիրաշատ սրտէ սիրացեալ յար – Զի՛նչ, որ մաշէ գերկաթ... ողջ ընդ ձիգ ամ ի սէր մեծի գահին:

128. 96աբ Փառազարդողին յամենայնի արբափայլ աշակերտի տեառն Յովհաննիսի արհիափառ եպիսկոպոսի, նագելի եղբօր նոյնաձօն աշոյն ի սէր յորդ – Գեղեցիկ վճռեցին, յոր հայեցին... ի համբոյր հպի տիրակիր սրբոյ քում աշոյ ժտեալ զմաղթանս:

129. 96բ-Ցա Իմաստնափայլ (անուան տեղը բաց՝ չգրած) բարունի շնորհազարդ հայր՝ ըստ Հոգւոյ – Թէպէտ անագան բայց կարի ցնծութեամբ... ո՛ղջ լերո՛ւք ի յամայր ամս բարօրութեամբ Տէր իմ եւ հարագատ:

130. 98ա Շարժեալ ի սիրոյ սիրոյդ իմոյ... սիրոյդ ցուցանել ի մխիթարութիւն մեզ – Արդ, որպէս ոչ կարէ ներգործել հողմ սաստիկ... խնդրանաց մերոց փոյթ յանձին կայ: Ողջ լէ՛ր յամս ձիգս՝ ի սէր մեր:

131. 98ա-Գա Յթէ թանձրութիւն օդոյ խոշընդոտն լինիլ... որ գերծայց զբարեպաշտ աղանին յորսողէ:

132. 99ա Լուսաբեր արուսեակ զձագումն զոսկեփունջ արեգականն... առ եղբարս խաղաղութիւնն – Արդ, վկայ եմ հաւաստի գիտութեամբ... թողուլ զուձումն խնդրոյս այսորիկ իմաստասիրութեանդ:

133. 99աբ Եւ թէ հատոր ինչ երկաթոյ մի անգամ... տապոյ հայրական սիրոյ սրբութեանդ, որ առ նուաստս:

134. 99բ-100ա Ծանի՛ր սէր իմ, խնդրեալ էիք զգիրքն... խննդրել իբրեւ գաւանդ – Արդարեւ, բարուոք ի դէպ գայ... այժմ զմեզ գիտացեալ ի խրախ ժամու, ողջ լէ՛ր յամս ձիգս, յիշելով զմեզ՝ ի մաքուր յաղօթս ձեր:

135. 100ա Ի գիտութիւնս յաւէտ պերհացեալ, տեառն Յովհաննու առաքելաշափոյ արհեպիսկոպոսի եւ հոգեկից եղբօր խնդալ – Իմաստնափայլ ան-

ձին քում ընդաբոյս բարութիւն... լինիլ Զեր գամ քան գամ բարօրութեամբ ի նոյն, ո՛ղջ լերո՛ւք:

136. 100բ Նախամեծար եղբօր սիրելոյ Յովհաննէս սրբազան արհիեպիսկոպոսի, սէր բազում ի կարօտ դիմաց – Հաստատեալ իմ՝ ի յոյս աներկբայ, մնայի աւետաւոր... ուրեմն պարտ իսկ է մեզ համբերել ի ժամ վշտաց ամենայն սիրով:

137. 100բ-Ձա Գերադրականդ սրբոյ գլխոյ հանուրց տեառն տեառն... ի (անուան տեղը բաց՝ չգրած) եւ արժանափառ յաջորդի ամենօրհնեալ հօր մերոյ լուսատուի շնորհաձիր աշոյն, համբոյր նշմարեալ – Բարձրելոյն բարույ բնութեան շնորհ է... քան թէ կորումն գլխոյ եւ շառագունութիւն դիմաց:

138. 102ա-Յբ Սիրելի իմ վեհիլ Յակօբ խոնմամիտ վարդապետ, ցանկալոյդ խնդալ ի Տէր – Յեւդոկիոյ քանի գրութիւնք եկեալ առ... ի քոյդ կոչմանէ, մինչեւ Աստուած յայց ելցէ եւ այլն: Ողջ լէ՛ր ի սէր վշտալի՛ Պօղոս պատրիարգիս Կոստանդնուպօլսոյ: Ի 1820, դեկտեմբերի 3, ի Կոստանդնուպօլիս ի պատրիարգարանն:

139. 104ա-Ցա Յաղագս Ծոպատկի բանք արտահանեալ ընդարձակ նորատիպ տումարէ Հայոց, որ յամի Տեառն 1818, ի լոյս ընծայեալ եղև ի հ[այր] Խաչատուր վարդապետէ ի միաբանութենէ ամենապատի մեծի արբայի – Ծոպատիկ լինի յորժամ հայք եւ յոյնք երկպառակին... որպէս տեսաք եւ ստուգեցաք ի տումարագիրս յունաց եւ որք ի նմին յամի Տեառն 1957, դնէն օր Զատիկի յայրիլի ութն:

140. 105բ-Յբ Աստուածագումար հանդիսի ընդհանուր ժողովոյ սրբազան արհեպիսկոպոսաց եւ եպիսկոպոսաց եւ իմաստուն վարդապետաց եւ ֆահանայից սրբակրօնից եւ առհասարակ գիտել լիցի – Այրն Աստուծոյ նախամարգարէն Մովսէս... եւ վճարեալ գայն, որպէս պարտն իցէ եւ արժան ի ձեր կոչմանէ:

141. 106բ-Յբ Սրբազան Սիւնհոդոսի սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, ի նուաստ Յովհաննէս վարդապետէ ամենախոնարհ խնդիր – Պաշտօն դատաւորաց է... ի վնաս Սինօթին եւ ի գայթակղութիւն բազմաց:

142. 108աբ Բարձր արժանապատի Գրիգոր զգօն վարդապետի սիրելոյ, ի Տէր խնդալ – Յառաջ քան զամենայն... վասն որոյ ամենեցուն յատկապէս մատուցես զմերս զողջոյն եւ օրհ՛:

143. 108բ-Գա Պայմանագրութիւնս հաստատէ – Թէ ես՝ ստորագրեալս... ի հաշի մտեալ ընկալայ եւ վերջացուցի:

144. 109աբ Վեհիմաստ սրբազան արհեպիսկոպոս, գերցանկալի մեծարու եղբայր ի Քրիստոս – Ի ժամանեկ Տեառն խնամօք... եւ գերագահ՝ Սուրբ Աթոռոյն Միածնախիլի եւ հուսկ ուրեմն իմ:

145. 109բ-10բ Բարձր արժանապատի եւ շնորհազարդ վարդապետ Կեսարացի Բարսեղ սրբազան

արհեստակարգաբան – Ըստ հոգույ հայր... որ է ակնկալութիւն եւ կետ նպատակի ամենայն մտեղեաց:

146. 110բ-11ա Պատուարժան, շնորհափայլ վարդապետ, սիրական հոգույ իմոյ արգոյ եղբայր – Զուարճարարն սրտի պարէտ քաղցրալուր... եւ առողջութեան Ձերոյ, միշտ եմ եւ մնամ բարեացակամ քո ի սրտէ:

147. 111ա Պայմանագրութիւն – Յամի Տեառն 1830, յամեսանն յուլիսի 28, մեք՝ ստորագրեալքս... բանալ ընդ նմա՝ ի մասին այնորիկ, որ ոք եւ իցէ ի մերոց ամենակցաց:

148. 111բ Պայմանագրութիւն – Սիւնհոգոսական կառավարութիւնս, համաձայնութեամբ սրբազնագոյն կաթողիկոսին... եւ ստորագրութեամբ իւրաքանչիւր անդամոց:

149. 111բ-2ա Ի Բանից Նօշրովանայ իմաստուն Պարսից արհայի, գորմէ ասեն, թէ ի կէտ վախճանի իւրոյ մկրտեցաւ ի Մարութայ եպիսկոպոսէ յումեմնէ եւ քրիստոնէայ ել ի կենցաղոյս – Ամենայն մարդ, որ գշափ անձին ճանաչէ... խորհուրդն մարդոց բնաւ մի՛ յայտնէք:

150. 112բ Յումեմնէ իմաստասիրէ ասացեալ – Զփորձ ասի, թէ՛ պարզմտութիւնն խոհեմութեամբ... իբրեւ գլխասակար խօսս ատեցի եւ փախեալ:

151. 112բ Թուղթ հայր Միքայել վարդապետի Չամչեան՝ առ եօթեսին արքայեան միաբան վարդապետսն, որք եկին ի սուրբ եկեղեցին Հայոց վասն միաբանութեան եւ սիրոյ – Վերապատուելի վարդապետաց եղբարց իմոց եւ տեարց ի Տէր խնդալ, իցէ թէ յաւելից հայել ի տաճարս Տեառն... եւ ես յօժարակամ կամօք յանձն առնում, ստորագրել եւ կնքել: Ողջ լեւոր՝ ի պարծանս համօրէն ազգիս եւ ի մխթարութիւն սրտիս իմ: Հոգելից միաբանութեան Ձերում նուաստ ծառայ Հայր Միքայել վարդապետ Չամչեան: 1820, յունվարի 18, յաւուր Կիրակէի ի Պէյօղլու:

152. 113աբ Թարգմանութիւն բանից ասացելոց ի պարսիկ լեզու՝ ի խոսրով միրգայէ, թոռանէ Ֆաթալի շահին, յատենի հրապարակական ունկնդրութեան, ի 20 օգոստոսի 1829 ամի, ի Ս[անկա] Պ[ետեր]բուրգ

– Գերագոր թագաւոր կայսր... ի փոխադարձ անտիւեղծ բարեկամութիւն:

153. 113բ-4ա Պատասխանական բան ասացեալ յայսմ ատենի ունկնդրութեան ի վիցէ գանգրէ՛ յանուն թագաւոր կայսերն – Կայսերական մեծութիւն նորա հրամայէ... զորս յայտնի ես անդէն անուամբ ամենողորմ կայսէր իմոյ:

154. 114ա-5ա Թուղթ շնորհատրութեան օժման տեառն Դանիէլի սրբագան վեհապետի ի լրութենէ Կոստանդնուպօլսոյ եկեղեցի ի ՌՄԾԱ. (1802) թուականի Հայոց, հոկտեմբերի Ի. (20) – Աստուածընտիր արքայակոչ եւ ազգահրաւէր... գետնամած երկրպագութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

155. 115աբ Թուղթ Ստեփաննոսի՝ արքայի Վէնէտիկոյ առ տիրացու Գէոր<ո>գն Պալատցի, վասն Քրոնիկոնն ճառիցն Եւսեբեայ – Ազնուամեծար եւ քրիստոսասէր սիրելոյդ ողջոյն եւ աստուածային օրհնութիւն. ի Վէնէտիկ, ի 24 ապրիլի, 1805. Մտերիմ սիրոյդ ախորժ ընտանութիւն յորդորէ... եւ ի սոյն իսկ արդեամբ ունիմք տեսանել, ողջ լէր: Մնամ քրիստոսասէր սիրելոյդ աղօթարար: Ստեփաննոս վարդապետ Ագոնց՝ Սիւնեաց եւ ընդհանրական աբբահայր:

156. 115բ-6ա Գիր շնորհատրութեան նոր տարւոյ – Գետնամած երկրպագութեամբ... եւ մնամ այժմ եւ յաւէտ միշտ ձեզ անձնանուեր եւ ճշմարիտ վերապատուութեամբ:

157. 116աբ Գիր շնորհատրութեան նոր տարւոյ – Հրաման ունիմք աստուածային խնդրել յինքենէ... օրհնաբան եւ աղօթարար վասն ամենեցուն Ձեր եւ իսկապէս վերյարգութեամբ միշտ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1բ Նամականի ընդօրինակեալ յԵփրեմ վարդապետէ Ալքնեան:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած թերթիկին նոտորգրով «Նամակա//», 1ա՝ «224/2696», մանուշակագոյն թանաքով շղագիր՝ «ԺԹ. - Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս»:

2697


Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի

ԿՐՈՒՆ


Թերթ՝ 89+3 (կրկն.՝ ք. 1, 32, 56). չգրուած՝ 1բ, 88ա-9բ: ՊՐԱԿ՝ 1-10x10 (1՝ 7, 4, 6, 9՝ 9, 10՝ 8): ՆԻԻԹ՝ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմներով՝ «IL GRAN MASSO» եւ թագապսակ բուսական շրջանակ, որի մէջ ետեմ վեցթեւ աստղ, շրջանակի ներքեւում՝ «TPOLO»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 31x21: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (28.5x17): ԳԻՐ՝ շղագիր՝ (նմուշ՝ 87ա), նոտորգիր (նմուշ՝ 32ա): ՏՈՂ՝ 30-40: ԿԱԶՄ՝ բաց շագանակագոյն կաշի, միջուկը ստուարաթուղթ. աստառը թուղթ, լուսագծերով, չգրուած:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, մասամբ փերձուած. գործածութեան եւ խոնաւութեան նետեանմով զանազան քծեր:

ՌՄՀԳ-ՌՄՀԳ. – 1824-1825



Նմուշ 32ա



Նմուշ 87ա

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

[Օրինակվ նամակաց]

Ի 1824 ամի Տեառն, յարժեպիսկոպոսարանս Կարնոյ մայրաբաղնիքի

1. 1դ Յունվար 2: Երանաշնորհ տէր Կարապետ աստուածարեալ սրբազան պատրիարք, պատուական հայր ի Քրիստոս – Որ ունի ի ձեռին... եւ Ձերին սրբութեան մնալով ըստ ամենայնի մտերիմ:

2. 1դ Յունվար 2: Երանաշնորհ տէր Կարապետ աստուածարեալ սրբազան, մեծարու պատուական հայր ի Քրիստոս – Թէպէտ իցէ թէ մինչ ցարդ... այս տառապեալ խաչկայ վանիցս:

3. 1դ Յունվար 2: Առ Պօղոսեան Կարնեցի Յակօբ ամիրայն – Աստուածատուր պերճութեամբ իշխանական փառաց... զոր վերըստին աստ կրկնել աւելորդ համարեցաք:

4. 1դ-2ա Յունվար 10: Առ Տիգրանակերտցի սառաֆ Կիրակոս աղայի եղբայր Յովսէփ աղայն, ի Մուշ – Աստուածասէր եւ բարեպաշտ... ի խաղաղ կեանս, բարութիւն, ի խնդութիւն սրտի:

5. 2ա Յունվար 2: Առ մահուտի Սուփաս Գօրօյեանց, որ ի Պօլիս – Մեծահաւատ եւ բարեպաշտ... եւ մեզ գրես, որ աստ վճարեմք: Ողջ լէ՛ր ի Տէր եւ ի սէր:

6. 2աբ Յունվար 2: Առ նախկին սրբազան Պօղոս պատրիարգի Պօլսոյ՝ վլէիլ Յակօբոս արժեպիսկոպոսն – Ի պէտս զանազան իրողութեանց... այժմիկ սոքօք բաւականացեալ, մնամ Ձերումդ սրբութեան ամենայնիւ յամենայնի:

7. 2բ Յունվար 2: Առ զմիոնեցի Ստեփաննոս վարդապետն, ի Պօլիս – Ի գրութիւն անդ... որում սպասեալ մնամ:

8. 2բ-3ա Յունվար 12: Առ Ներսէս արհին Տփիսիսոյ՝ ի նոյեմբեր 11ին գրեցեալ նամակի պատասխան է ստորագրեալս – Ի նոյեմբեր 11 գրեալ նամակ Ձեր... այժմ եւ յապայ միշտ սրբութեան Ձերում բարեացակամ եւ պատրաստական:

9. 3աբ Յունվար 13: Երիցս երանեալ սրբազանասուրբ Բանանայապետ, ամենապատուական ողորմած Տէր – Մեծի սրբութեանդ... սրբազնութեամբ Ձերում մնամ այժմ եւ միշտ ծառայական սիրով ամենապատրաստ:

10. 3բ Յունվար 14: Առ բարձրահայեաց Սուրբ Աստուածածնի վանից բնիկ միաբան Սեւորակցի Յօհաննէս վարդապետն եւ գործակալն գործոյ Տիգրանակերտոյ՝ նուիրակ Անտօն սրբազան արժեպիսկոպոսին, ի Տիգրանակերտ – Ի նոյեմբերի 12... մնալով եւ դուք յողջութեան ի սէր:

11. 4ա Յունվար 15: Առ վարդապետն արհին եւ առաջնորդն Բաղիշոյ վիճակին, ի վանս Ամբօլոս: Երանաշնորհ Վարդան սրբազան արժեպիսկոպոս, մեծարու եղբայր ի Քրիստոս – Ի 20 հոկտեմբեր գրե-

ցեալ մեծյարգութեան Ձեր... եւ ըստ յաջողելոյ առանց ինչ ընդդիմութեանց ըստ հաւատոց:

12. 4աբ Յունվար 25: Առ միաբանութիւն Բիստոսագօր պանծալի իշխանացն մեծին Կեսարիոյ, ի նոյն Կեսարիա քաղաք – Յուշ լիցի... եւ պանծացեալ ի շնորհս ամենից Տեառն եւ ի սէր:

13. 4բ Յունվար 24: Առ դերձակ Կարապետն Կարնեցի, որ ի Կեսարիա – Կամիմ գիտել որդեակ, թէ որ քրիստոնէից... եւ ընտանիքդ ուրախացուր մնալով յողջութեան:

14. 5ա Յունվար 31: Առ խանթարեի Խարազեօզն ի Կոստանդնուպօլիս – Սիրելութեանդ յայտ լիցի... եւ զօրացեալ Տէրամբ ողջ լէ՛ր ի շնորհս նորին եւ ի սէր:

15. 5ա Յունվար 31: Առ Արթուրինցի Գրիգոր արժեպիսկոպոսն, յԱրթուրին – Յայլ եւ այլ խորհուրդս... յերկաքանչիւր նպատակս: Ողջ լէ՛ր համայն բարօրութեամբ ի շնորհս Տեառն եւ ի սէր:

16. 5ա Փետրվար 1: Առ պայազիտցի Գեարգեառեան տէր Յօհաննէս Բայանայն եւ վլէիլն Սրբոյ էջմիածնի, ի Բայազիտ – Ընկալեալ զնամակ քո... ապա անհոգ լերո՛ւք զայսմանէ մնալով յողջութեան ի սէր:

17. 5բ Փետրվար 7: Առ աստուածասէր սիրելութիւն մեծի հարազատ բարեկամի մերոյ եւ յատկացեալ սիրելոյ Յակոբ գերապայծառ ամիրայի Պօղոսեան Կարնեցոյ, ի Պօլիս – Ամենամեծին Աստուծոյ... եւ վասն բարեկենդանութեամբ Ձեր աղօթարար:

18. 5բ Փետրվար 14: Առ վլէիլն Սրբոյ էջմիածնի աստուածասէր Կէտիկեանց մահուտի Յօհաննէս աղայ սիրելին մեր, յԵպոկիա – Սրբազան Ներսէս արհին... առ նոյն արհին ժամանեցուցանել:

19. 5բ-6ա Փետրվար 22: Առ աստուածաշնորհ սիրելութիւն բարձրապատիւ Աստուծատուր սրբազան արժեպիսկոպոսի եւ ծայրագոյն նուիրակի Սրբոյ Մայր Աթոռոյն էջմիածնի յարժանատու յարգանս, ի Կոստանդնուպօլիս – Ողջունիւ սիրոյ մեծարու... որում ամենայնիւ յամենայնի մնամ յամենայն սրտէ միշտ բարեացակամ:

20. 6ա Ի 1824 ամի Տեառն, ի փետրվար 22. յարժեպիսկոպոսարանս Կարնոյ մայրաբաղնիքի, առ մեծարու սիրելութիւն Պօլսոյ սրբազան պատրիարգի վլէիլ Եփրեմ աստուածաշնորհ բարունոյ, ի պատրիարգարանս ամենայն հայոց, ի Կոստանդնուպօլիս – Մեծ ունիմք ուրախութիւն... ի հրճուանս բերկրութեան սրտի:

21. 6ա Փետրվար 28: Առ սառաֆ Կիրակոս աղայի եղբայր յարգելի Յովսէփ աղայ սիրելին մեր, ի Մուշ... – Ձեր սիրելութեանը փետրվարի 8 գրած գրութիւնը... մեզ հասուցանել թէ զօք, մնալով յողջութեան ի սէր:

22. 6բ Փետրվարի 26: Առ յարգի սիրելութիւն աստուածատէր Կարնեցի մահտեսի Սուբիաս եւ Սարգիս աղայից, մտերիմ սիրելեաց մերոց ողջունիւ, ի Կոստանդնուպոլիս – *Ձեր սիրեցեալ հարազատութիւնը... ամենայն բարեօք լցեալ միշտ ի խնդութիւն սրտի:*

23. 6բ Փետրվար 26: Առ մեծահաաստ սիրելութիւն Կարնեցի Պօղոսեան ֆրիստոսագօր Յակօբ բարեւէր պանծալի ամիրայի եւ հարազատ սիրելոյ մեր ի Քրիստոս ամենայն սիրով յարագանաց, ի Կոստանդնուպոլիս – *Քրիստոսագօր սիրելոյդ մերում յայտ լիցի... մեծ յարգութեանդ բարեմաղթ առ Տէր:*

24. 6բ-7ա Փետրվար 26: Առ երանաշնորհ տէրութեան երջանկագարդ տեսուն Կարապետ սրբազան պատրիարքի ամենայն հայոց արժանաւոր յարգանօք, ի յամենից հայոց պատրիարգարանս, ի Կոստանդնուպոլիս – *Սրբութեան ձեր աստուածամերձ... որում մնամ յամենայնիւ յամենայնի միշտ ամենապատրաստ:*

25. 7ա Մարտի 4: Առ աստուածաշնորհ մեծյարգութեան տեսուն եփրեմ սրբազան արքեպիսկոպոսի տեղապահեան յարժանաւոր յարգանս սիրոյ, ի Մայր Աթոն Սուրբ Էջմիածին – *Մեծ ունիմք անձկութիւն... հոգածու լինել, մնալով յողջութեան, ի խնդութիւն սրտի:*

26. 7ա Մարտ 4: Առ շնորհագարդեալ արժանապատուութեան տեսուն Սահակայ սրբազան արքեպիսկոպոս յարժանաւոր յարգմամբ, ի Մայր Աթոն Սուրբ Էջմիածին – *Սիրարկան ողջունմամբ զմեծարու ձերումդ... ի մէնջ սիրեցեալ որդեակն ձեր Յօհաննէս վարդապետն:*

27. 7բ Մարտի 6: Առ սրբազան պատրիարգն Կոստանդնուպոլոյ (անուան տեղը բաց՝ չգրած), ի պատրիարգարանս ամենայն Հայոց – *Ձնախախայծ պտուղ արդիւնարար օրհնութեան... ստորակնքօղ անդամքս Կարնոյ խորհրդարանի:*

28. 7բ-8ա Մարտի 4: Առ մտերիմ սիրելութեան կարսեցի Յօհաննէսեանց մահտեսի Կարապետ աղայ յարգելոյ ամենայն սիրով, ի Բերիա, այն է՝ Հալէպ – *Ձեր սիրելութեան գրածները... լինիլ ներողամիտ, զի անկարացաք յատուկ գիր գրել:*

29. 8աբ Մարտի 6: Առ աստուածակարգ միաբանութիւն ողորմած ամիրապետաց ամենայն Հայոց ամենայն հարգանօք, ի Կոստանդնուպոլիս – *Ապաքէն անձնիր անձին... ստորակնքօղ անդամոցս Կարնոյ խորհրդարանի:*

30. 8բ Մարտի 4: Առ աստուածաշնորհ մեծութեան տեսուն Ներսէս սրբազան արքեպիսկոպոսի ամենայն արժանաւոր յարգանօք, ի մեծն Տփիսիս – *Ըշտապողական այսու գրութեամբ... անյապաղ տնօրինեալ մնաք միշտ ընդարձակեալ ի սէր:*

31. 8բ-9ա Մարտի 4: Առ բարձրապատի մեծութեան, բազմերախտ սահապի մերոյ եւ յատկացեալ

բարերարի գերապայծառ Յակօբ ամիրայի Կարնեցոյ Պօղոսեան ամենայն յարգանօք, ի Կոստանդնուպոլիս – *Գերամեծար ձեր մեծութիւնը... ստորակնքօղ նուաստ անդամքս Կարնոյ խորհրդարանի:*

32. 9աբ Մարտի 10: Առ... մահտեսի Պօղոս գերապայծառ ամիրայի Կելկէեան... Ի Կոստանդնուպոլիս – *Ապաքէն ըստ անհաս եւ անհուն իմաստից... եւ ի հրճուանս բերկրութիւն սրտի:*

33. 9բ Մարտի 10: Գրեցամ եւ այլ եւս միս նամակ... առ Բեհայ ամիրայ... Կարապետ աղայն... – *Արժան համարիմ բէյնի եւ խոստովանօրէն քումդ... մեծի աստուածատէր սիրելութեան, որում մնամ միշտ բարեացապարտ:*

34. 9բ-10ա Մարտի 10: Առ մեծահաաստ... մահտեսի Յարութիւն եւ Յօհաննէս... ամիրայից Բէնկանցոց... Ի Կոստանդնուպոլիս – *Թէպէտ ի հարուստ աւուրց... փառս եւ ի հրճուանս բերկրութիւն սրտի:*

35. 10ա Մարտի 12: Առ աստուածագօր յարգութեան Մայր Աթոնոյն Սրբոյ Էջմիածնի վէֆիլ մեծահաաստ Կէտիկեան մահտեսի Յօհաննէս... յետոկիս – *Յուշ լիցի սիրելութեան քում... այժմիկ բաւականացեալ սովին կայ յողջութեան ընդարձակեալ ի սէր:*

36. 10բ Մարտի 12: Առ... Սրբոյ Էջմիածնի ծայրագոյն նուիրակ երանաշնորհ տեսուն Յովհաննէս առաքելապատիւ սրբազան արքեպիսկոպոսի Կարբեցոյ... ի Նիկոմեդեայ – *Ունիմք արդարեւ տեղի... մեծի Ձերդ սրբութեան մնալով ամենայնիւ յամենայնի միշտ բարեացակամ ի սրտէ:*

Նկարագրութիւնը շանրաբեռնելու նպատակով հասցէատէրերին ուղղուած բազմաթիւ մակիր-ածականները գեղջում եւ փոխարէնը բազմակէտէր ենք դնում:

37. 10բ Մարտի 12: Առ... տեսուն Կարապետ պատրիարգ Կոստանդնուպոլոյ... ի Կոստանդնուպոլիս – *Յառաջ քան զայս ունիմք... ընդարձակեալ ի պարծանս սիրոյ:*

38. 11ա Մարտ 12: Առ... եփրեմ պատրիարգ... Ի Պօլիս – *Յիրաւի թէպէտ գրութեամբ... շնորհիւ լերով յողջութեան ընդ արձակեալ ի սէր:*

39. 11բ Մարտի 12: Առ... Սեբաստիոյ տէր... Յօհաննէս սրբազան արքեպիսկոպոսի... Ի Սեբաստիայ – *Յերեսաց թէութեան իրողութեանն... եւ միամտեալ կացչիք յողջութեան յամայր ամս բարութեան ամենայնիւ յամենայնի ընդ արձակեալ ի սէր:*

40. 11բ Մարտի 22: Առ արժանայարգ սիրելութեան ֆրիստոսագօր յարգելի Պետրոս աղայի Ղասապեան յարժանաւոր յարգանս – *Յուշ լիցի սիրելութեան... ողջ լէր ի Տէր համայն խաղաղութեամբ ի սէր:*

41. 11բ-2ա: Մարտի 17: Առ... տեսուն Սահակ սրբազան արքեպիսկոպոս... – *Թէպէտ վաղ իսկ լուեալ էաք զվշտակրութեան ձեր... այժմիկ բաւականացեալ սովին, ողջ լէր ի խնդութիւն սրտի:*

42. 12աբ Մարտի 25: Առ Ներսէս սրբազան արքեպիսկոպոսի հայոց Վրաստանու... Ի մեծն Տփիսիս – Թէպէտ ընկալաք գտեղեկութիւն իրաց... եւ մեք էաք եւ եմք նոյնպէս եւ միշտ եղիցուք:

43. 12բ Մարտի 25: Առ Եփրեմ մեծ ֆահանայապետ... – Նախկին գրութեանց մերոց... որ առ Ներսէս արհին, ըստ վերոյ գրելոյս:

44. 13ա Մարտի 28: Աստուածաշնորհ տէր Ներսէս սրբազան արքեպիսկոպոս մեծարու եղբայր ի Քրիստոս – Սրբազնութեան Ձերում յուշ լիցի... խնամեսջի հայրաբար: Սրբազնութեան Ձերում մնամ ամենայնիւ յամենայնի: Ի 1824 ի մարտի 28, յարքեպիսկոպոսարանս Կարնոյ:

45. 13ա Ապրիլի 8: Առ... Վարդան սրբազան արքեպիսկոպոսի ի Բաղէշ – Ձերում մեծի եղբայրութեան յուշ լիցի... զայս հաշիւ բարուոք թուի եւ մեզ, բաւականացեալ սովին առ այժմ ողջ լե՛ր ի Տէր եւ ի սէր:

46. 13աբ Ապրիլի 8: Առ... մահտեսի Աւետիս աղայ... Ի Բաղէշ... – Գիտութիւն լիցի սիրելութեան քում... ի շնորհն բարեաց Տեառն միշտ զարգանալով ողջ լե՛ր ի Տէր եւ ի սէր:

47. 13բ Ապրիլի 16: Աստուածաշնորհ յարգելի Յարութիւն բարունի, սիրեցեալ եղբայր ի Քրիստոս – Սիրելութեան Ձեր գրութիւն գրեցեալն... բայց անգիտանամք զչառնելոյն պատճառ, բաւականացեալ սովին կաց յողջութեան ընդ արձակեալ միշտ ի սէր:

48. 13բ Ապրիլի 16: Առ ֆրիստոսագօր Աստուածատուր եւ Յարութիւն իշխանս ֆաղաֆին Վանայ... ի Վան ֆաղաֆ – Հստ գրութեան սրբոյ Երուսաղէմի վէքիլ յարգելի Յարութիւն... ծանուցանելով միանգամայն եւ մեզ: Ի Վան քաղաք:

49. 13բ Ապրիլի 16: Առ սրբոյ Երուսաղէմի ծայրագոյն նուիրակ Յօհաննէս վարդապետն... – Խորհրդով առաջնորդիս եւ իշխանաց Վանայ... հասցնել մեզ եւ այլն: Ի վիճակն Վանայ ուր եւ իցէ:

50. 13բ Ապրիլի 16: Առ Սարգիս վարդապետն... ի վանս Վարագայ – Իւրոյ նամակի մեզ ժամանեալն... գրեցաք ըստ մտաց վերոյգրեցելոյն: Ի վանս Վարագայ:

51. 13բ Ապրիլի 16: Առ... Յովսէփ վարդապետ... ի Սուրբ Նշանի վանս Հաղբատու... – Ի 12 մարտի գրեցեալդ... յայնժամ ծանուցանեմք, բաւականացեալ սօքօք, ողջ լե՛ր ի սէր:

52. 14ա Ապրիլի 16: Առ... Եփրեմ սրբազան արքեպիսկոպոսն... Ի Ս. Էջմիածին... – Ի Քրիստոս սիրեցեալ... առ Յովսէփ վարդապետն նոյնպէս գրեցաք եւ սմա եւ այլն:

53. 14ա Ապրիլի 27: Առ... Յօհաննէս սրբազան արքեպիսկոպոսի Կարբեցոյ... յետոյկիս – Աստուածաշնորհ մեծութեան ձերում յայտ լիցի... յուսալով թէ

յերկոցունս աստի գմինն ընկալչեք, լինելով միշտ յողջութեան ի սէր:

54. 14բ Մայիս 8: Առ սրբոյ Երուսաղէմի ծայրագոյն նուիրակ Մկրտիչ վարդապետի... Ի Դարեժ... – Ի 17 մարտի գրեցեալդ նամակ... առաքեցաք առ Ձեզ, առ այժմիկ բաւականացեալ սովին, ողջ լե՛ր ի Տէր եւ ի սէր:

55. 14բ Ապրիլի 27: Առ Իշխիլիսեցի Խաչատուր վարդապետն... – Մեծ ունիմք յօժարութիւն... շնորհելոյ ի Տեառնէ, որով լերո՛ւք միշտ յողջութեան:

56. 14բ Ապրիլի 26: Առ ֆահանայս եւ հասարակ ժողովրդականս... – Յիսուս Քրիստոսի ծառայ եւ շնորհիւ նորին տէր Կարապետ արքեպիսկոպոս Կարնոյ... յաներեւոյթ թշնամեաց հրապուրմանէ այժմ եւ յաւիտեան:

57. 14բ Ապրիլի 26: Առ Ս. Կիրակոս եւ Ս. Աստուածածնի վանից առաջնորդ Յօհաննէս վարդապետն, ի Քղի... – Ընկալեալ զնամակ ձեր... ի փառս ահաւոր անուան նորին. բաւականացեալ սովին, ողջ լե՛ր ի Տէր եւ ի սէր:

58. 15ա Մայիսի 8: Առ... Ներսէս սրբազան արքեպիսկոպոս հայոց Վրաստանու... Ի Տփիսիս... – Յաղագս սոյն այս գրամատոյց Չօպանեան պարոն Յովսէփին... որում յամենայն սրտէ մնամ եւ մնացից բարեացակամ:

59. 15ա Մայիս 9: Քրիստոսագօր մահտեսի Յովսէփին... – Սիրելութեանդ յայտ լիցի... եւ թող իրանք Գիւղմիշխանայն արձակութիւնն. բաւականացեալ այժմիկ ողջ լե՛ր ի Տէր եւ ի սէր:

60. 15բ Մայիս 22: Առ Կարնեցի Պօղոսեան Յակօբ գերապայծառ ամիրայն – Յաղագս իրաց Չօպանեան պարոն Յովսէփին... հոգածու լինել Ներսէս սրբազան արհուոյն իրողութիւն նորին: Ի Կոստանդնուպոլիս:

61. 15բ Մայիս 12: Առ... մահտեսի Մարտիրոս... յետոյկիս – Յամբարձեալս ի գահ... զձերդ մեծյարգի սիրելութիւն, որում մնամ յամենայն սրտէ միշտ բարեացակամ ի Տէր:

62. 15բ Մայիս 24: Առ... Կարնեցի Յակօբ... ի Կոստանդնուպոլիս... – Ի 17 ապրիլ գրեցեալ նամակ... Ձերդ երկիւղած բարեպաշտութեան մնամ յամենայնի միշտ բարեացակամ:

63. 16ա Մայիս 27: Առ... ծայրագոյն նուիրակ Աստուածատուր սրբազան արքեպիսկոպոսի... – Պատգամբեր ձերդ աստուածարեալ անձին... ունիմք ժամանեցուցանել, ծանուցանել եւ զայս. ողջ լե՛ր ի սէր մեր:

64. 16ա Մայիս 30: Առ... Գրիգոր սրբազան արքեպիսկոպոս Արթուրնեցոյ... ի Մայր Աթոն ի Ս. Էջմիածին... – Կրկին գրութեամբ կրկնակի ծանօթացեալ... առ սիրելութիւն Եփրեմ աստուածաշնորհ ար-

քեպիսկոպոսի. բաւականացեալ սովին լէր յողջութեան ի սէր:

65. 16բ Յունիս 2: Առ աստուածարեալ տէր եփրեմ արբազան արեւայիսկոպոս, ի Քրիստոս Յիսուս սիրեցեալ յարգոյ եղբայր – Ընկալեալ զի 12 մայիս գրեցեալ... սպասաւոր Աբրահամին առաքեցաք. եւ մնամ:

66. 16բ Յունիս 4: Աստուածաշնորհ տէր եփրեմ արբազան արեւայիսկոպոս, մեծարու եղբայր սիրեցեալ ի Քրիստոս – Սուրբ եղբայրութեան ձերում... մնամ յամենայն սրտէ Ձերդ սրբութեան բարեացակամ:

67. 17ա Յելն Մայիսի: [Առ]... մահտեսի Ստեփաննոս, մահտեսի Յովակիմ, մահտեսի Կիրեղ, մահտեսի Գրիգոր եւ Գազար... – Ի ձեռն տիրացութիւն կացցէ յողջութեան ի խնդութիւն սրտի:

68. 17ա Յունիս 10: Առ արբազան Պօլսոյ պատրիարքի վեֆիլ Եբեմ աստուածաշնորհ[ի] բարունի... – Ունիմք յոյս աներկբայ... տնօրինութեան սորին իրաց. բաւականացեալ սովին մնամ:

69. 17ա Յունիս 10: Շնորհազարդեալ տէր Աբրահամ մաքրաւե քահանայի եւ աստուածաւե մահտեսի Պօղոսի, եւ մահտեսի Յօհաննէս բարեհամբաւ աղայից... – Թէպէտ ըստ մարմնոյ... մնամ յարգութեան Ձեր կենաց սակս բարեմաղթ առ Տէր:

70. 17ա Յունիս 12: Առ... Մկրտիչ պաշտօնաւե քահանայի եւ աստուածաւե Գինոս Բէնայ պարոն Վահան... ի Բայբերդ... – Ձեր միաբանութեան գրած գիրը... ողջութեամբ ողջ եղի՛ք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր:

71. 17բ Յունիս 12: Առ Եզնկացու վիճակի առաջնորդ Եղիայ վարդապետն եւ համայն իշխանս քաղաքի... Ի նոյն Եզնկայ քաղաքի – Ձի վաղուց իսկ տեղեկացեր գիտէք... եւ այս գրաբերիս հետ մեզ ծանուցէ՛ք:

72. 17բ-18ա Յունիս 15: Առ երանափայլ սրբութիւն (անուան տեղը բաց)... ի Հաղբատ... – Մեծի սրբութեանդ շնորհակատար աջոյ... մնամ ամենայնիւ յամենայնի հանապազ ամենապատրաստ:

73. 18աբ Յունիս 15: Առ յարգի... Յովսէփ վարդապետին ի վանս Հաղբատու – Ի մայիս 30 գրեցեալ նամակ... մնամ այսու ամենայնիւ յամենայնի միշտ սիրելութեանդ բարեացակամ:

74. 18բ Յունիս 15: Առ... նուիրակին Գաղատիոյ խոնարհամիտ Նիկողայոս վարդապետի... ի Ս. Նշանի վանս Հաղբատու... – Ողջ եղելոյդ ի հոգի եւ ի մարմին... յառաջադէմ գտեալ ի շնորհ Տեառն եւ ի խնդութիւն սրտի:

75. 18բ-19ա Ի Յունիս 15: Առ արբազան Ներսէս արեւայիսկոպոսն ի Տփլիս... – Չսուրբ եղբայրութիւն

ձեր... մատուցանել Ձերում սրբութեան, որում մնամ միշտ յամենայն սրտէ:

76. 19աբ Ի Յունիս 23: Առ երանաշնորհ մեծօրին տեառն Ներսէս արբազան արեւայիսկոպոսի Ամենայն հայոց Վրաստանու... Ի Տփլիս... – Յարժանաւոր յարգանս սիրոյ... սպասէ նորին պատուական եղբայրութիւն, շատացեալ սովին՝ սրբութեամբ Ձերում մնամ միշտ յամենայնի:

77. 19բ Յունիս 20: Առ... եփրեմ արբազանափայլ մեծ քահանայապետի... Ի Ս. Նշանի վանս Հաղբատու... – Յամենայն յարգանս ծառայական սիրոյ... սպասէ նորին պատուական եղբայրութիւն, շատացեալ սովին՝ սրբազանութեամբ Ձերում մնամ:

78. 19բ Յունիս 20: Աստուածարեալ... արբազանաւոր ամենապատիւ ողորմած տէր... /// (անուան տեղը բաց) – Սրբութեան Ձերում յայտ լիցի... զի այսպէս արասցուք. բաւականացեալ սովին, առ սոյն մնամ յամենայնի:

79. 19բ-20ա Առ երանաշնորհ տէր Ներսէս արբազան արեւայիսկոպոս... – Մեծի Ձերում եղբայրութեան յայտ լիցի... ձեռնադրելոցն այնոցիկ, սրբութեան Ձերում մնամ ամենայնիւ ի սերտ սիրոյ:

80. 20ա Յունիս 25: Առ... Սուրբ Կարապետի վանից վեֆիլ Մարտիրոս եպիսկոպոս... Ի Մշոյ Սրբոյ Կարապետի վանս... – Ձերում սիրելութեան յուշ լիցի... ընդ պատշաճաւոր ուղեկիցս: Առ այժմիկ բաւականացեալ սովինք կաց յողջութեան ամենայն խնդութեամբ ի սէր:

81. 20ա Յունիս 22: Առ... Յակօբ գերապայծառ ամիրայի Պօղոսեան Կարնեցոյ... – Գոհանամ զամենակալ Տեառն... հոգւոյ եւ մարմնոյ բարեմաղթ ի Տեառնէ:

82. 20աբ Յունիս 16: Ի դրանէ հրաշալի վանից Սրբոյ Լուսաւորչի, կառուցելոյ ի Կարին... արացէ խոստացելոցն բարեաց. ամէն:

83. 20բ Յունիս 16: Ըստ այսմ օրինակի գրեցամ եւ զայլ երիս օրհնութեան կոնդակս... եւ առ զանձապետ նոցին՝ պարոն Գէորգն:

84. 20բ Յունիս 22: Առ... մահտեսի Յարութիւն եւ Յօհաննէս... ամիրայից Բենկացոց... ի Կոստանդնուպօլիս – Հաստատութիւն յուսոյ մերոյ առ յոյսն բնաւից... վասն անգին կենաց ձերոց աղօթամատոյց առ Տէր:

85. 20բ-1ա Յունիս 22: Առ... տեառն (անուան տեղը բաց)... ի Կոստանդնուպօլսոյ... – Չսրբութիւն Ձեր զողջունաբեր... ըստ աւանդութեան սրբոյ եկեղեցւոյ հրամայեալիք այնպէս առնել:

86. 21ա Յուլիս 1: Առ... եփրեմ... քահանայապետ... – Ապաքէն հովանաւոր ամպ... խորհրդականին Կարնոյ մայրաքաղաքի:

87. 21աբ Յուլիս 1: Առ... Ներսէս արբազան արեւայիսկոպոս ամենայն հայոց Վրաստանու... – Ներ-

կուռ ջանիւք աշխատութեան... ստորակնքօղ խորհրդա-
կանքն Կարնոյ մայրաքաղաքի:

88. 21բ Յուլիս 6: Առ Անտօն արքեպիսկոպոս... Ի
Տիգրանակերտ... – Յարժանաւոր յարգանս ողջունե-
լով... շատացեալ այժմիկ մնամ միշտ բարեացակամ:

89. 21բ Յուլիս 7: Առ... Նէրսէս արքեպիսկոպոսի
ամենայն հայոց Վրաստանու... Ի Տփիսիս... – Որպէս
ամենայն իրիք... եւ եղէց յամենայն սրտէ միշտ զօրա-
վիգ ի բարիս:

90. 22ա Յուլիս 18: Առ... տեառն Յակոբոս սրբա-
զան արքեպիսկոպոսի... Ի Սուրբ Աստուածածնի
վանս Ի Մարգուան – Լցաւ անձուկ սրտի մերոյ... շա-
տացեալ այժմիկ յամենայն սրտէ մնամ սրբութեան Ձեր
միշտ բարեացակամ:

91. 22ա Յուլիս 24: Առ... Սրբոյ Երուսաղէմի
նուիրակ Մկրտիչ շնորհազարդ վարդապետի Կար-
նեցոյ... Ի Թէվրէշ... – Յուշ լիցի սիրելութեանդ... այժ-
միկ բաւականացեալ սովիմք կ'աց յողջութեան ի սէր:

92. 22բ Յուլիս 25: Առ սիրելոյսին Գիւմրիշխա-
նեցի աստուածաշնորհ Յօհաննէս վարդապետ... –
Սիրելութեան Ձերում յայտ լիցի... մնամ ամենայնիւ
յամենայնի յամենայն սրտէ միշտ բարեացակամ:

93. 22բ Յուլիս 25: Առ Կուրացի Պետրոս վարդա-
պետն... Ի Սուրբ Կարապետ – Ի Կոստանդնուպօլսոյ
անտի գրեցեալ... ի սէր մեր կաց յողջութեան միշտ:

94. 23ա Յուլիս 25: Առ մահտեսի Մանուկ
ամիրայն Ալփիարե[ա]նց... – Զառաջին գտիեգերա-
խնամ տեսչութեան... միշտ բարձրացեալ փառաց ի
փառս ի ինդութիւն սրտի:

95. 23աբ Յուլիս 27: Առ... տէր Եփրեմ... արքե-
պիսկոպոսի... Ի Ս. Կաթողիկէն յեջմիածին... – Ի 21
յունիսի եւ ի 7 յուլիսի գրեցեալ... զայլ ինչ կարեւոր
մնամ Ձերդ արժանապատուութեան ի սրտէ բարեացա-
կամ:

96. 23ա-4ա Օգոստոս 6: Առ... Ս. Կարապետի
հրաշալի վանից վերատեսուչ... Պետրոս րաբունոյ...
– Յառաջ քան զայս... մնամ յամենայն սրտէ միշտ
բարեացակամ եղբայրութեանդ:

97. 24աբ Օգոստոս 7: Առ... Եփրեմ... քահանայա-
պետ... Ի Սուրբ Նշանի վանս Հաղբ[ա]տու – Բարեր-
ջանիկ Տեառնդ մաքրագործ աշոյ... մինչ գտցուք
ունիմք յղել, շատացեալ այժմիկ մնամ ամենայնիւ
յամենայնի միշտ պատրաստական:

98. 24բ-5ա Օգոստոս 7: Առ... Նէրսէսի... ար-
քեպիսկոպոսի ամենայն հայոց Վրաստանու... Ի
Տփիսիս – Ի սուրբ եղբայրութենէ ձերմէ գրեցեալ... եւ
գոհացաք հայցելով անմեղադիր ունիլ զամենայնիւ
յամենայնի ամենայն սրտէ միշտ բարեացապարտ:

99. 25աբ Օգոստոս 9: Առ... Սրբոյ Կարապետի
հրաշալի վանից ծայրագոյն վերատեսուչ Պետրոս

րաբունապետն... – Յառաջ քան զայս... այլ ի գիշերա-
յին ժամու ընդ առաւօտս:

100. 25բ-6ա Օգոստոս 12: Առ... Յօհաննէս ար-
քեպիսկոպոսի... Ի Սեբաստիա – Ամրակապ հանգու-
ցիւք... յամենայն սրտէ միշտ բարեացակամ յամենայ-
նի:

101. 26ա Օգոստոս: Առ մահտեսի Մանուկ ամի-
րայապետն Ալփիարեանց, վասն իրաց բեռանց... եւ
զմնացելոցն փրկութեան հոգ ունիլ: Ի Կապան
Մատենն:

102. 26ա Օգոստոս 16: Առ... ճարտարապետ...
Գրիգոր... ամիրապետի ի Կոստանդնուպօլսոյ... –
Զգալի հրոյս զօրութիւն ի նիւթոց... եւ մնամ հանապազ
բարեմաղթ առ բարձրեալն Աստուած:

103. 26աբ Օգոստոս 16: Առ... Սարգիս... աղայի...
Ի Կոստանդնուպօլսոյ... – Յոյս մեծ ունիմք... որով
հանդերձ զօրացեալ սիրելոյդ մեր ի Տէր, ողջ լէր ի
սէր:

104. 26բ-7ա Օգոստոս 20: Առ... Ներսէս արքե-
պիսկոպոսն Տփիսիսոյ... Ի Տփիսիս – Ի սոյն ամսոյ Լ.
... առնել ըստ իւրում գրութեան, շատացեալ այժմիկ:
Սրբազնութեամբ Ձերում մնամ յամենայն սրտէ
բարեացակամ միշտ:

105. 27ա Սեպտեմբերն 3: Առ... Մկրտչեան տէր
Յարութիւն քահանայի եւ գործակալի Սրբոյ Էջմիած-
նի... Ի փոքր Դարափիլսէ – Ի 20 օգոստոս գրեցեալ...
բաւականացեալ սովին ողջ ի Տէր եւ ի սէր:

106. 27բ Սեպտեմբեր 3: Առ (անուան տեղը
բաց)... Ի Սուրբ Նիշանի վանս Հաղբապու... – Գերա-
շուք տեսնող մերոյ... ամենանուաստ եւ պատրաստա-
կան: Ի 1824, ի սեպ. 3, յարքեպիսկոպոսարանս Կար-
նոյ մայրաքաղաքի:

107. 27բ Ի սեպտեմբեր 3: Առ... Սառաֆն Կե-
սարիոյ օրհնեալ Համբարձում աղային ողջունիլ: Ի
Կեսարիա... – Աստուածասէր սիրելութեան քում... եւ
զօրացեալ շնորհօք Տեառն ողջ լէր:

108. 27բ Ի սեպտեմբեր 4: Առ Ներսէս սրբազան
արքեպիսկոպոսն Տփիսիսոյ: Ի Թիֆլիզ... – Սոյն այս
գրամատոյց Կեսարացի պարոն... յիշեալ արհոյն մնամ
յամենայնի ամենայն սրտէ:

109. 28ա Ի սեպտեմբեր 6: Առ... վերատեսչի
Եղովիոյ տեառն Գէորգայ սրբազան արքեպիսկո-
